489

Յ. ԳՈՐՈՅԵԱՆՑ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

ՏՊԱՐԱՆ «ՄՈԴԵՐՆ», ԹԵՀՐԱՆ
1968

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

ԳՐԵՑ

ՆԱԶԱՐ Յ. ԳՈՐՈՅԵԱՆՑ

ՆԱԶԱՐ Յ. ԳՈՐՈՅԵԱՆՑ

489

Библиотека Армении

9(47.925)+(55)
Գ - 84

ՆԱԶԱՐ Յ. ԳՈՐՈՅԵԱՆՑ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ, ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ՝
ԱՄԵՆԱՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷ ՄԻՆՉԵՒ 1898 Թ.

489

ՏՊԱՐԱՆ «ՄՈԴԵՐՆ», ԹԵՀՐԱՆ
1968

Սոյն գիրքը լոյս է տեսնում յարգարժան ազգային բարերար պր. ԱՐԶՈՒՄԱՆ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ նիւթական աջակցութեամբ։

Մեր ջերմ շնորհակալութիւնները յարգելի նուիրատուին։

Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
Յառաջաբան	9
Նազար Յ. Գորոյեանց *(կենսագրական)*	11
Երկու խօսք սոյն գրքի հրատարկթ. մասին	15
Ցուցակ հեղինակաց	21
Ներածութիւն	25
Ա. — ԱՏՐՊԱՏԱԿԱՆ	31
Ատրպատականի արդի սահմաններն և հայաբնակ գաւառները	44
Թաւրիզ	48
Արդի Թաւրիզը	102
Թաւրիզի Ներքին Թաղի հայոց դպրոցը	108
Թաւրիզի Ներքին Թաղի աղջկանց դպրոցը	117
Թաւրիզի Ներքին Թաղի ընթերցարան	118
Մանկական պարտէզ	119
Ս. Աստուածամայր եկեղեցի	119
Լիլաւա կամ Լէյլաբադ Թաղ	122
Լիլաւայի դպրոցները	123
Թաւրիզի Հայուհեաց Բարեգործ. Ընկ.	125
Հայոց եկեղեցիներ և ուրիշ հաստատութիւններ քաղաքի այլ և այլ թաղերի մէջ	126
Թաւրիզի Ամերիկեան Բողոքական Միսիոներաց հաստատութիւնք	128
Վաճառականութիւն և ձեռագործութիւն	129
Արուեստք	134
Թաւրիզի հնութիւնները	136
Ղալէյը Ռոշտիէ	137

Վիճակագրական տեղեկութիւններ 138
Կենսամթերքի արժէքները 143

Ատրպատականի գաւառները

1— Թաւրիզին մերձակայ քաղաքներ և գիւղեր (Դեհխարղան, Սոհրուլ, Մինավար, Մուժամբար, Ալչամուլք, Մարանդ, Օղուաշ) 146
Ս. Ստեփաննոս Նախավկայ վանքը 154
Ստորին Դարաշամբ և Վերին Դարաշամբ 162
2— Խոյ 163
3— Մակու 169
4— Սալմաստ 172
5— Ուրմիա 185
6— Բարանդուզ 194
7— Սուլդուզ 197
8— Սովուջբուլաղ 199
9— Միանդաբ 201
10— Մարաղա 203
11— Արդաբիլ 206
12— Ղարադաղ 208

Բ.— ՍՊԱՀԱՆԻ (ՊԱՐՍԿԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ) ԹԵՄ

Սպահան 219
Սպահանի թեմը 222
Հայոց առաջին գաղթն Սպահան 223
Հին Ջուղա 225
Հայոց երկրորդ մեծ գաղթը և այլ գաղթերը 227
Շահ Աբբասի յաջորդները 235
Սաֆաւեան հարստութեան անկումն և Պարսկաստանի խռովութիւնները 247

Համառօտ ակնարկ Ջուղայի անցեալի վերայ 264
Ջուղայեցւոց վաճառականութիւնը 268
Նոր Ջուղայի վարժարանները 283
Արհեստներ 285
Հայ գինուորութիւնը 286
Ազգային և կրօնական շէնքեր 287

Թեհրան 293

Նասրեդդին շահի մահը 299
Թեհրանին մերձակայ շրջաններ (Վանադ, Խորդուն, Դարուս, Բումէյին, Ղազին) 304

Մազանդարան եւ Գիլան նահանգները

(Ֆարահաբադ, Ռեշտ, Էնզելի, Բարֆրուշ, Աստարաբադ, Շահրուդ) 306

Սպահանի թեմին ենթակա այլ շրջաններ

(Զանջան, Սուլթանիէ, Համադան) 313

Անջաս գաւառներ

1— Ղարադան 325
2— Մալայեր 326
3— Քեազազ 326
4— Գեափլա 326
5— Քեամարա 328
6— Բուրվարի 329

Շիրազ 333

Խորասան 335

Սպահանի թեմին պատկանող Պարսկաստանի դուրս հայերը 341

ՅԱՒԵԼԻԱԾ

Յանկ Պարսկաստանի թեմական առաջնորդաց

Ա.— Յանկ Թաւրիզի թեմական առաջնորդաց 353

Բ.— Յանկ թեմական առաջնորդաց Սպահանի և Հնդկաստանի 361

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երկրի մը, ժողովրդի մը հարայարեալ ու մանրամասն պատմութիւնը գրելու համար անհրաժեշտ է, որ մէկը ձեռքի տակ ունենայ ամէն դէպքերի, եղելութիւնների յիշատակութիւնները ժամանակակից ու զանազան անձերէ յաջորդաբար գրի առուած։

Հայ գրիչները ընդհանրապէս Պարսկաստանի եւ մասնաւորապէս Ատրպատականի հայոց նկատմամբ շատ տեղեկութիւններ չեն թողած։ Եղածները հաս-կտոր, անորոշ ու վեր ի վերոյ կերպով են։

Ինձ հնարաւոր չէր ունենալ պարսկական ու եւրոպական այն ամէն հեղինակութիւնները, որ Պարսկաստանի պատմութիւնն կը պարունակեն եւ կամ այս երկրի վերայ կը խօսին։ Ձեռք բերածներիս մէջ եւս չէին կրնար գտնուիլ հայոց նկատմամբ եթէ ոչ հարեւանցի յիշատակութիւններ, բանզի այսպիսի հեղինակութիւններ ընդհանրապէս պարապելով աւելի երկրի իշխանների եւ իշխանութեան վերաբերեալ պատմութեամբ, անտես կառնեն մասնաւոր ժողովուրդներին, նամանաւանդ հայոց պէս փոքրաթիւ ազգին պատկանեալ խնդիրները։

Տեղական հայ գրածներ ամենեին չեմ կրցեր գտնել։ Աւանդութիւններն եւս ներկայ դարին սկիզբէն անդին չեն անցներ։

Պէտք է աւելցնել նաեւ, որ գտնուած ամէն գլխաւոր յիշատակութիւններէն եւ ստացած բերանացի պատմութիւններէն միայն ամէնէն հաւանականները գրի կառնուին։

Այս ամէն պատճառների համար, հակառակ բազմամեայ սպասման ու աշխատութեանցս, ինձ չէ յաջողուեր տալ այս գրքին այն լրութիւնը, որ կը ցանկայի։

Այսու հանդերձ, սոյն երկասիրութիւնս, իբր նախաբաւիղ, անվարան կը նուիրեմ ազգայնոցս, յուսալով որ կրնայ օգտակար լինել այն ամէնին, որ կը ցանկան Պարսկաստանի հայերի անցեալին ու ներկային վերայ համառօտ տեղեկութիւն ունենալ։

ՆԱԶԱՐ Յ. ԳՈՐՈՅԵԱՆՑ

Յունիս, 1898 թ.
Դարվէժ

ՆԱԶԱՐ Յ. ԳՈՐՈՅԵԱՆՑ

(1843—1901)

Սոյն աշխատութեան հեղինակը՝ իրանահայ հանրային գործիչ եւ բանաստեղծ Նազար Յ. Գորոյեանց, ծնեալ է 1843 թ. Սեպտեմբեր 7-ին, Թաւրիզում։

Բանաստեղծի հայրը՝ *Յարութիւն Գորոյեանց*, 1828 թ. ռուս-տաճկական պատերազմից յետոյ Կարինից Անդրկովկաս փոխադրուած գաղթականութեան հետ անցել էր Շիրակի շրջանը եւ հաստատուել Գիւմրի (Ալէքսանդրապոլ) քաղաքում։

Կարճ ժամանակ յետոյ, 1830-ական թուականներին, ինչ-ինչ պարագաներում, Յարութիւնը եւ իր երկու եղբորորդիները (Մատթէոս եւ Սիրական), թողնում են Գիւմրին, անցնում Թաւրիզ, եւ հաստատելով այնտեղ, ամուսնանում են եւ ընտանիք կազմում։

Յարութիւնն ամուսնանում է պարսից փոխարքայի հիւսնապետ Նազար Շահբազեանի դստեր՝ Մարթայի հետ եւ այդ ամուսնութիւնից ունենում է հինգ զաւակներ՝ Մարիամ, Նազար, Ալէքսան, Տիգրան եւ Առշակ։

Նազարը գրաճանաչ է դառնում Դանիել Շահբազեանի մօտ, իսկ երբ Թաւրիզի Ղալա թաղամասում հիմնւում է «Ներսիսեան» (հետագային «Սրամեան») դպրոցը, ուսանում է այդ դպրոցում եւ աւարտում է իբրեւ առաջնակարգ աշակերտ։ Այդ դպրոցում նա աշակերտում է վաստակաւոր

ուսուցիչներ Գրիգոր Սէքաղեանին, Տէր Յովսէփ աւագ քահանայ Տէր Յովսէփեանին եւ Սահակ Աբրահամեանին։

Վերջինս յորդորում է պատանի Նազարին, որ գնայ Մալբա եւ ուսումը շարունակի բողոքական միսիոնարների հիմնած նեմարանում։ Ծնողներն ընդդիմանում են, սակայն, ի վերջոյ, ուսումնասէր պատանին կարողանում է նրանց համաձայնութիւնն ստանալ։ Պոլսի վրայով մեկնում է Մալբա եւ 1862-ին մտնում է նեմարան, ուր ուսանում է չորս տարի եւ վերադառնում Թաւրիզ։

Մի կարճ ժամանակ Թաւրիզ մնալուց յետոյ մեկնում է Պոլիս եւ մտնում պետական ծառայութեան մէջ։ Ապա գործուղւում է Հալէպ եւ Բաղդադ։

Նազար Գորոյեանցը մի քանի տարի Բաղդադում պաշտօնավարելուց յետոյ վերադառնում է Թաւրիզ եւ պաշտօնավարում է նոյն քաղաքի հեռագրատանը, սակայն մի առ ժամանակ յետոյ հրաժարւում է այդ պաշտօնից, կրկին մեկնում է Պոլիս եւ ապա Բաղդադ, ուր մի քանի տարի մնալուց յետոյ վերադառնում է Թաւրիզ։ Այդտեղ պաշտօնավարում է հեռագրատանը, եւ միաժամանակ զբաղւում առեւտրով։ Հետագային, երբ իր մասնաւոր ձեռնարկների մէջ յաջողութիւն է գտնում, պարապում է միայն առեւտրով։

Նազար Գորոյեանցը, իր երիտասարդ տարիքից իսկ, բուռն հետաքրքրութեամբ հետեւում է Թաւրիզի ազգային կեանքին եւ նուիրւում հանրային գործունէութեան։

Տարբեր տարիների ընթացքին եղել է Թաւրիզի «Ս. Աննայեան» եւ «Արամեան» դպրոցների վերատեսուչ, հոգաբարձու եւ թեմական խորհրդի անդամ։ Իր մասնակցութիւնն է բերել նաեւ «Ս. Աննայեան» դպրոցի հիմնադրութեան գործին եւ կազմել է նոյն դպրոցի կանոնագիրը։

Սիմոն Թումանեանի, Աարի Միքայէլեանի, Խաչատուր Տէր Զաքարեանի, Յ. Նազարեանի եւ Աւագ խան Աֆթանդիլեանի հետ Թաւրիզում հիմնել է «Աւարայրեան», «Ուսումնասիրաց» եւ «Խնայողական» ընկերութիւնները։

Նազար Գորոյեանը, 1879-ին, Մարտիրոս Նազարբէգեանցի, Յովհաննէս Նազարեանի, Մարգար Հ. Նազարբէգեանի, Ալ. Տ. Օհանեանի, Յովհ. Տ. Յովսէփեանի եւ Եր. Մէդէմեանի հետ միասին, հիմնել են «Աւարայրեան» դպրոցը, որը 2 տարի յետոյ միացւում է «Արամեան» դպրոցին։

Իբրեւ պատգամաւոր Ատրպատականի թեմի, մասնակցել է Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական օծման։

Մայրենի լեզուից բացի գիտէր պարսկերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ մասամբ գերմաներէն։

Նազար Գորոյեանցն ունեցել է պրպտող միտք, լայն ինքնազարգացում եւ գրական աշխատանքի հանդէպ մասնաւոր հակում։

Միաժամանակ եղել է ջերմ թատերասէր, եւ դեռեւս 1880-ական թւականներին, բերել է իր գործօն մասնակցութիւնը թաւրիզահայ բեմին, որով իրանահայ թատերական կեանքի պատմութեան մէջ իր արժանի տեղն ունի՝ իբրեւ նախաձեռնող եւ կազմակերպող ոյժ։

Թաւրիզում նրա կազմակերպած ներկայացումներից յատկապէս յիշատակութեան են արժանի «Ներսէս Մեծ» ողբերգութիւնը (բեմադրութեամբ թատերական սիրող Աբրահամ Փանուէլեանի), «Շուշանիկ» ողբերգութիւնը (բեմադրուած 1880 թ. Դեկտ. 22-ին), «Բարեկենդանի կատակներ», «Վարդանանք», եւ այլն։ Այս ներկայացումներին իրենց մասնակցութիւնն են բերել նաեւ Նազար Գորոյեանցի եղբայրները՝ Տիգրան եւ Արշակ Գորոյեանցները։

Նազար Գորոյեանցը իր մահկանացուն կնքել է 1901 թ. Դեկտեմբեր 5-ին, Թաւրիզում, եւ հողին յանձնել Ղալա քաղամասի Ս. Աստուածածին եկեղեցու շրջափակում, արժանանալով փառաւոր յուղարկաւորութեան։

Մի քանի խօսք նաեւ Նազար Գորոյեանցի հրոջ եւ երեք եղբայրների մասին, իբրեւ յիշատակութեան արժանի անձանց։

1.— Մարիամ Գորոյեանց (հետագային՝ *տիկին Մասումեան*).— Անդամակցել է Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, եւ իբրեւ նոյն Ընկերութեան ներկայացուցիչ, 1896-ին գործուղուել է Սալմաս, 1895—96 թ. թ. Տանկահայաստանում տեղի ունեցած կոտորածների հետեւանքով այնտեղ ապաստանած գաղթականների խնամատարութեան աշխատանքներին աջակցելու համար։

2.— Ալէքսան խան Գորոյեանց (1848—1914).— Առեւտրական ծանօթ դէմք. շրջագայել է Եւրոպա ու Ամերիկա եւ կազմակերպել արեւելեան հին ձեռարուեստի ցուցահանդէսներ։ Առեւտրական ասպարէզ մտնելուց առաջ, երիտասարդ տարիքում, պաշտօնավարել է Թեհրանի «Հայկազեան» դպրոցում, իբրեւ Ֆրանսերէնի եւ բաբանութեան դասատու։ Պաշտօնավարել է նաեւ Բելգիայի իրանեան դեսպանատանը, իբրեւ թարգման։ Պարսկական շրջանակներում ծանօթ էր Միրզա Էսֆանդար խան անունով։

3.—Տիգրան խան Գորոյեանց (1852—1922).— Նշանաւոր հնագէտ էր։ Կազմակերպել է արեւելեան հին ձեռարուեստի ցուցահանդէսներ Ֆրանսիայում եւ Իտալիայում։ Մասնակցել է նաեւ Միլանի միջազգային ցուցահանդէսին, որպէս իրանեան ներկայացուցիչ եւ իրանեան տաղաւարի պատասխանատու կազմակերպիչ։ Անդամակցել է Ազատ Ոռմնադիրների կազմակերպութեան, հանդիսանալով նոյն կազմակերպութեան ականաւոր դէմքերից մէկը։ Իր մահկանացուն կնքել է Թաւրիզում, 1922-ին։

4.— Արշակ խան Գորոյեանց (1863—1948).— Ուսանել է Թաւրիզի «Արամեան» դպրոցում, աշակերտելով մեծանուն վիպասան Րաֆֆուն։ Եղել է իրանեան պետական բարձրաստիճան պաշտօնեայ։ Մուզաֆերէդդին Շահի՝ Եւրոպա կատարած նամբորդութեան ժամանակ եղել է նրա համհարզներից մէկը։ Իր մահկանացուն կնքել է Փարիզում, 1948-ին։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՍՈՑՆ ԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Պարսկաստանի Հայերը» աշխատութեան մասին տեղեակ էինք տուրջ տասն տարի առաջ, սակայն, առիթ չէինք ունեցել ձեռագիրը տեսնելու։

Հեղինակի դուստրը՝ տիկին Փառանձեմ Բէհրեան, տուրջ մէկ տարի առաջ, այդ աշխատութիւնը տրամադրեց մեզ՝ հրատարակելու առաջարկութեամբ։

Տպագրելիք աշխատութիւնը գրուած էր միջակ ծաւալով նուրբ թղթի վրայ, խիստ անընթեռնելի ձեռագրով։ Գրքին կցուած էր մի ծանօթագրութիւն, հեղինակի ձեռագրով, որից պարզուեց, թէ մեզ տրամադրուած օրինակը բնագրի պատճէնն է, արտագրուած ուրիշի ձեռագրով, հեղինակի յանձնարարութեամբ։

Բնագիրն ուղարկուած է եղել Պոլիս, *«Յովսէփ Իզմիրեանց» Գրական Ցանձնաժողովին*, եւ 1901-ին, նոյն Ցանձնաժողովի որոշումով, արժանացել է մրցանակի, 30 տանկական ոսկի յատկացումով։

Ստորեւ մի ամփոփ ծանօթութիւն՝ «Յ. Իզմիրեանց» Գրական Մրցանակի մասին, որ քաղում ենք Դր. Պասմաճեանի մի յօդուածից (տպագրուած «Յուսաբեր» օրաթերթի 1957 թ. Մարտ 13-ի թի մէջ)։

Ազգային բարերար Յովսէփ Իզմիրեանցը ծնել է Ղզլարում (Հիւս. Կովկաս), 1800-ական թուականներին։ Մահացել է 1883 թ. Նոյեմբեր 18-ին։ Յ. Իզմիրեանցը, 1874-ին, ազգին կտակած է եղել 25,000 ռուբլի, որից 10,000 ռուբլի,—իբրեւ հիմնադրամ,—յատկացրել է մրցանակներով վարձատրելու բանասիրական եւ ազգագրական բովանդակութիւն ունեցող յաջողագոյն աշխատութիւնների հեղինակներին։ Մրցանակաբաշխութեան գործը յանձնուած է ե-

ղել Պոլսոյ Պատրիարքարանին, որը կազմել է առանձին յանձնաժողով՝ այդ աշխատանքը վարելու համար։ Մրցանակի արժանացած մի շարք աշխատութիւններ հետագային հրատարակել են, իսկ շուրջ 15 անտիպ աշխատութիւններ,— ըստ Գր. Պատմանեանի ենթադրութեան,— Ա. համաշխարհ. պատերազմից յետոյ փոխադրել են Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը։

Յ. Իզմիրեանց Յանձնաժողովի 1901 թ. մրցանակաբաշխութեան մասին Պոլսոյ «Սուրհանդակ» թերթի 1901 թ. Յունիս 21-ի (Յուլիս 5, ն. տ., Գ. տարի, № 714) թի մէջ տպագրած է նոյն Յանձնաժողովի ընդարձակ տեղեկագիրը, ուր Ե. կէտով յիշատակուած է Նազար Յ. Գորոյեանցի *«Պարսկաստանի հայերը»* աշխատութիւնը։

Աշխատութեան այն օրինակը, որ յանձնուած էր մեզ՝ հրատարակելու համար, ունէր յաւելուածական երկու հատուածներ՝ *«Թաւրիզի քաղքառը»* եւ *«Յանկ Պարսկաստանի թեմական առաջնորդաց»* խորագրերով։ Վերջինս կազմուած է աշխատութիւնը մրցանակի արժանանալուց յետոյ, «Յ. Իզմիրեանց» Յանձաժողովի առաջարկով, 1901-ին, մինչդեռ աշխատութիւնը գրած է եղել 1898-ին։

Մեր տրամադրութեան տակ եղած ընդօրինակութեան մէջ հեղինակը կատարել է բերի, բառերի, անունների եւ նախադասութիւնների փոփոխութիւններ, ինչպէս եւ կրճատումներ ու յաւելումներ։ Պիտի ենթադրել, որ աշխատութիւնը մրցանակի արժանանալուց յետոյ հեղինակը վերանայել է իր մօտ եղած այդ օրինակը, տպագրելու նպատակով, սակայն, իր վերահաս մահուան պատճառով,— որ տեղի է ունեցել մրցանակաբաշխութեան պաշտօնական յայտարարութիւնից վեց ամիս յետոյ,— աշխատութիւնը մնացել է անտիպ վիճակում՝ ամբողջ 67 տարի, իսկ գրուած թուականից (1898) ճիշտ 70 տարի։

Մեզ յանձնուած օրինակը,— ինչպէս նկատեցինք դիշ վերը,— գրուած էր խիստ անընթեռնելի ձեռագրով։ Բազմաթիւ բառեր, մանաւանդ յատուկ անունները, պահանջում էին մեծ նիգ՝ վերծանելու համար։ Այլ աղբիւրներից առնուած մէջբերումները դրուած չէին չակերտների մէջ եւ միահիւսուած էին հեղինակի գրածին։ Բազմաթիւ յատուկ անուններ գրուած էին տարբեր տառադարձութեամբ եւ յանախ աղաւաղուած էին։

Ձիգ թափեցինք այս թերութիւնները վերացնելու համար, բայց տարակուսում ենք, թէ մեր կատարած աշխատանքն անթերի

489

լինի։

Գաւառների, քաղաքների, գիւղերի եւ մենաստանների վայրերի ստորաբաժանումներն ու թարգմանումները, որոնք կատարուած են ըստ երկու թեմերի եւ տեղ-տեղ անտեսուած են պետական-վարչական սահմանների բաժանումները, թողեցինք նոյնութեամբ, գրի կառոյցը փոփոխութեան չենթարկելու նկատումով։

Հեղինակի շարահիւսութիւնը,— արեւմտահայերէնին խառն արեւելահայերէն, ինչպէս եւ հոլովումներն ու խոնարհումները,— դարձեալ թողեցինք նոյնութեամբ։

Անհրաժեշտ նկատեցինք յապաւել հայ պատմագիրներից եւ այլ աղբիւրներից քաղուած մէջբերումների մեկ մասը, յատկապէս նիւթին անմիջականօրէն չառնչուող հատուածները, ինչպէս եւ նկատուած կրկնութիւնները եւ որոշ պարբերութիւններ, որոնք գործին որեւէ նպաստ չպիտի բերէին։ Չտպագրեցինք նաեւ յատուկ անունների ցանկը եւ Թաւրիզի բարբառին վերաբերող հատուածը, նկատի ունենալով որ այն ամբողջացուած չէր։

Էջերի ներքեւում եղած այն ծանօթութիւնները, որոնք գրուած են արեւմտահայերէն, պատկանում են հեղինակին։ Արեւելահայերէնով տրուած ծանօթութիւնները, մեծ մասամբ նշուած Ծ. Խ. տառերով (ծանօթագրութիւն խմբագրողի), գրուած են մեր կողմից։

Ն. Գորոյեանցի այս աշխատութիւնը մի կարեւոր նպաստ է մեր ժողովրդի պատմութեան համար, անկախ այն հանգամանքից, որ հնագոյն շրջանին վերաբերող հատուածները գրուած են աւանդական պատմութեան աղբիւրների հիմամբ եւ չեն համապատասխանում քննական պատմութեան նորագոյն տեսակէտներին, որոնք ձեռք են բերուած խնդրոյ առարկայ աշխատութիւնը գրի առնելուց յետոյ, վերջին 70 տարիների ընթացքին։

Աշխատութեան մէջ կան ազգագրական, վիճակագրական եւ այլ տեղեկութիւններ, որոնք կարելի է իրրեւ աղբիւր օգտագործել Իրանահայութեան ամբողջական պատմութիւնը գրելու համար։

Այդ նկատումով երախտագէտ պիտի լինել Արգելի տիկին Փառանձեմ Բէհրեանին, որ երկար տարիներ անկորուստ պահել է այս աշխատութիւնը։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Նազար Գորոյեանցը գրել է նաեւ հետեւեալ աշխատութիւնները.

1.— *«Դասախօսակութիւն Հայոց»*, որ տպագրուած է Պոլսում, 1880 թին. Այս գրքի մէկ օրինակը գտնւում է տիկին Փառանձեմ Բէհիրեանի մօտ.

2.— *«Բառգիրք արաբերէնէ— պարսկերէնէ ի հայերէն»*. Անտիպ է եւ մնում է տիկին Փ. Բէհիրեանի մօտ.

3.— *«Տեղեկութիւններ 1828 թ. Ռուս-Պարսկական պատերազմի մասին»* (անտիպ), գրուած Թաւրիզում, 1898 թ. Այս աշխատութիւնը կորուած է մեզ անյայտ պատճառներով. «Պարսկաստանի հայերը» աշխատութիւնը տպագրելու ընթացքին, միանգամայն պատահականօրէն, մենք տեսանք մի յիշատակութիւն վերոյիշեալ ձեռագրի մասին վաստակաւոր բանասէր հանգուցեալ Յ. Իրազեկի (Յակովբ Տէր Յակովբեան) «Հայ ազատագրական շարժումը» (1548—1828 թ.) ընդարձակաձաւալ եւ շատ արժէքաւոր անտիպ աշխատութեան աղբիւրների ցանկում, ուր յիշատակուած է նաեւ Ն. Գորոյեանցի այդ ձեռագրի բովանդակը (1898). Քանի որ Ն. Գորոյեանցի այս աշխատութիւնը գոյութիւն չունի Յ. Իրազեկի թողած գրքերի ու անտիպ գործերի մէջ, եւ քանի որ այդ ձեռագրի գոյութեան մասին անտեղեակ է տիկին Փ. Բէհիրեանը, ուստի պիտի ենթադրել, որ ձեռագիրը գտնելիս է եղել մի այլ անձնաւորութեան մօտ, որին եւ վերադարձրել է Յ. Իրազեկը.

Կարծում ենք, որ այդ աշխատութիւնը արժէքաւոր գործ պիտի լինի, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ն. Գորոյեանցը հնարաւորութիւն ունէր բազմաթիւ վկայութիւններ հաւաքելու 1827—28 թ. թ. իրադարձութիւններին ականատես թաւրիզեցիներից.

Ն. Գորոյեանցն ունեցել է նաեւ այլ գրութիւններ եւ պատմարժէք փաստաթղթեր,— ըստ իր հարազատների վկայութեան. Նրա գրքերի եւ թղթերի հաւաքածոն մինչեւ Ա. համաշխարհ. պատերազմը, պահւում էին հեղինակի երկու դուստրերի՝ տիկին Փ. Բէհիրեանի եւ օր. Աննիկ Գորոյեանցի մօտ. Պատերազմի տարիներին, երբ վերջիններս անցնում են Կովկաս, այդ հաւաքածոն թողնում են Թաւրիզ, եւ ինչ-ինչ պարագաներում կորստեան է մատնւում դրա մեծագոյն մասը.

Յիշատակենք նաեւ, որ Ն. Գորոյեանցը միաժամանակ եղել է թղթակից «Դէյլի Նիւզ» եւ «Ֆիգարո» թերթերի, ինչպէս եւ աշխատակցել է հայ մամուլին, մասնաւորապէս Էջմիածնի պաշտօնաթերթ «Արարատ» ամսագրին եւ պոլսահայ «Մասիս», «Սուրհանդակ» ու «Բիւզանդիոն» թերթերին. Ուշագրաւ յօդուածներ ունի Բիսուտունի բնեռագիր արձանագրութեանց եւ Մեծն Տիգրանի մասին, առաջինը տպագրուած «Արարատ» ամսագրում, երկրորդը՝ «Բիւզանդիոն» թերթում.

ՏԱՃԱՏ ՊՕՂՈՍԵԱՆ

28 Յուլիսի, 1968 թ.
Թեհրան

ՑՈՒՑԱԿ ՀԵՂԻՆԱԿԱՑ

ՈՐՈՆՑՄԷ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌՆԻԵՐ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԵՐԻԵՐ ԵՆ ՍՈՑՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1. *Աբրահամ կաթողիկոս.* Պատմութիւն անցից Տն. Աբրահամու Սբ. կաթողիկոսի հայոց թէ քիրստաղցւոյ առ Նասրտահ Արքային Պարսից։ Տպ. ի Կալկաթա, 1796 թ.

2. *Ագաթանգեղոս.* տպագրութիւն Յովհ. Մարտիրոսեանցի, Թիֆլիզ.

3. *Ալիշան.* «Այրարատ Բնաբխարհ Հայասանեայց Տնեղագրեաց. Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան Մխիթարեան. Վենետիկ Ս. Ղազար, 1890 թ.

4. *Ադեքսանդր.* (Jemes Ed. Alexsander) ճանապարհորդութիւն ի Պարսկաստան 1825—26 թ. անգլերէն. տպ. 1827 թ.

5. *Զինէթ Իլ Մեջալիս.* Պարսկերէն պատմութիւնք.

6. *Էլիզէ Ռէկլիւ.* Լազստան, Հայաստան եւ Քիւրդստան. տպ. Վաղարշապատ.

7. *Թադիադեանց Մեսրոպ Դաւթեան.* Պատմութիւն հին Հնդկաստանի. Կալկաթա, 1841 թ.

8. *Թադիադեանց Մեսրոպ Դաւթեան.* Պատմութիւն Պարսից. Կալկաթա, 1846 թ.

9. *Թավեռնիէ.* Հաւաքածոյ պատմութեանց. Ֆրանսերէն.

10. *Թարիխ մէօջէմ.* Պատմութիւն Պարսից բազաւո-

ռութեան սկզբէն մինչ Մեծն Աղէքսանդրի տիրապետութիւնը.

11. Թաբարի. Թարիխ. Պատմագրութիւն Աբուջաֆարէ. գրած արաբերէն, Հիջէրի 224-ին. թարգմանուած պարսկերէնի Աբու Ալի Մոհամմադ Ալդաղամիէն, Հիջրէրի 310 թ. (միայն քանի մը կտորներն տեսեր եմ. հակառակ ջանիցս, չեմ կրցեր ամբողջ գիրքը ձեռք բերել).

12. Ժօքէռ. Ճամբորդութիւն ի Հայաստան եւ ի Պարսկաստան, (Ֆրանսերէն, տպ. Փարիզ).

13. Լազարովիչ. Ստորագրութիւն Կալկաթա քաղաքի, զոր արար Պօղոս Պետրոս Լազարովիչ ի ճանապարհորդել իւրում Արեւելեան Հնդիկս, Տպ. ի Վենետիկ, 1832 թ.

14. Լայարդ Օսթին Հենրի. Արկածք ի Պարսկաստան եւ այլն. Տպ. Լոնդոն, անգլերէն, 1887 թ.

15. Մոբեն. Պատօնատար ռուսաց. տեղեկագրութիւն. Տպ. 1828 թ.

16. Խորենացի Մովսէս. Պատմութիւն Հայոց.

17. Մոհամմէդ Թաղի խան. Գեանջ Դանեշ. (պատմական աշխարհագրութիւն Պարսկաստանի). վիմատիպ, Թեհրան, Հիջրէրի 1305 թ.

18. Գիբբն. Խոնարհումն եւ անկումն հռովմէական կայսրութեան, Անգլերէն, տպ. Լոնդոն.

19. Հայր Յակոբոս. «Ճամբորդութիւն միսիոնարի մը», Ֆրանսերէն, տպ. Փարիզ, 1730 թ.

20. Հանվէյ. Ճամբորդութիւնք (անգլերէն), տպ. Լոնդոն, 1786 թ.

21. Հանքաբվիլ. Խուզարկութիւնք ի Պարսկաստան. տպ. 1785 թ.

22. Հերբերթ. Նկարագրութիւնք. տպ. 1839 թ.

23. Համդուլլահ. Աշխարհագրութիւն.

24. Հերին. Արեւց աշխարհակալութիւն. անգլերէն. տպ. 1826 թ.

25. Ղաղի Ռոքն Էդդին Ջիւլիի. Մաշմէի Արբաբ Մա-

մալէք, պարսկերէն.

26. Մալքոլմ. Պատմութիւն Պարսկաստանի, անգլերէն, տպ. 1817 թ.

27. Մէյնարդ. Օրագիր Ասիական. «Journal Asiatique» 1865 թ.

28. Նայման (գրագէս). Հայազգի Լազարեւ զօրավարին առաջնորդութեամբ Պարսկաստանէ Ռուսիա գաղթող հայոց պատմութիւն.

29. Շարդէն. Ճամբորդութիւնք. Ֆրանսերէն, տպ. Ամստերդամ, 1735 թ.

30. Ուզլի. Ճամբորդութիւնք (անգլերէն) 1819—21, տպ. Լոնդոն.

31. Զամչեանց Հայր Մ. Վարդապետ. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1784 թ.

32. Բոյլէ. Աշխարհագրական բառարան (Ֆրանսերէն).

33. Ռոլէն. Պատմութիւն հին ազգաց (անգլերէն).

34. Ռոլինսըն Հէնրի. Անգլիա եւ Ռուսիա յԱրեւելս. անգլերէն. տպ. 1885 թ.

35. Ռոլինսըն Ջորջ. Հինգ մեծ միապետութիւններն Հին Արեւելեան Աշխարհին. անգլերէն, տպ. Լոնդոն, 1862—7.

36. Սեքէոս. Պատմութիւն Հերակլի. տպ. Կ. Պոլիս, 1851 թ.

37. Սթիւարթ. Թէֆֆէ Թուրքմաններու երկիրն. անգլերէն, 1881 թ.

38. Սմիթ. Խուզարկութիւնք ի Հայաստան. անգլերէն, տպ. Լոնդոն, 1834 թ.

39. Սփէհր Միրզա Թաղի. Նասխ էլ Թավարիխ. պարսկերէն.

40. Վիկտոր Լանգլուա. Ընդհանուր դրամագիտութիւն, Արմենիայի. Ֆրանսերէն. տպ. Փարիզ, 1859 թ.

41. Տիւբրէ. Տիեզերք պատկերազարդ. պատմութիւն Պարսկաստանի, Ֆրանսերէն, տպ. Փարիզ, 1841 թ.

ռութեան սկզբէն մինչ Մեծն Աղէքսանդրի տիրապետութիւնը.

11. Թաբարի. Թարիխ. Պատմագրութիւն Աբուջաֆարէ. գրած արաբերէն, Հիջէրի 224-ին. թարգմանուած պարսկերէնի Աբու Ալի Մոհամմադ Ալդաղամիէն, Հիջրէրի 310 թ. (միայն քանի մը կտորներն տեսեր եմ. հակառակ ջանիցս, չեմ կրցեր ամբողջ գիրքը ձեռք բերել).

12. Ժօքէռ. Ճամբորդութիւն ի Հայաստան եւ ի Պարսկաստան, (Ֆրանսերէն, տպ. Փարիզ).

13. Լազարովիչ. Ստորագրութիւն Կալկաթա քաղաքի, զոր արար Պօղոս Պետրոս Լազարովիչ ի ճանապարհորդել իւրում Արեւելեան Հնդիկս, Տպ. ի Վենետիկ, 1832 թ.

14. Լայարդ Օսթին Հենրի. Արկածք ի Պարսկաստան եւ այլն. Տպ. Լոնդոն, անգլերէն, 1887 թ.

15. Մոբեն. Պատօնաստար ռուսաց. տեղեկագրութիւն. Տպ. 1828 թ.

16. Մոբենացի Մովսէս. Պատմութիւն Հայոց.

17. Մոհամմէդ Թաղի խան. Գեանջ Դանեա. (պատմական աշխարհագրութիւն Պարսկաստանի). վիմատիպ, Թեհրան, Հիջրէրի 1305 թ.

18. Գիբբն. Խնարհումն եւ անկումն Հռովմէական կայսրութեան, Անգլերէն, տպ. Լոնդոն.

19. Հայր Յակոբոս. «Ճամբորդութիւն միսիոնարի մը», Ֆրանսերէն, տպ. Փարիզ, 1730 թ.

20. Հանվէյ. Ճամբորդութիւնք (անգլերէն), տպ. Լոնդոն, 1786 թ.

21. Հանքարվիլ. Խուզարկութիւնք ի Պարսկաստան. տպ. 1785 թ.

22. Հերբերթ. Նկարագրութիւնք. տպ. 1839 թ.

23. Համդուլլահ. Աշխարհագրութիւն.

24. Հերին. Արեւաց աշխարհակալութիւն. անգլերէն. տպ. 1826 թ.

25. Ղաղի Ռոքն էդդին Ջիւլիի. Մաշմէի Արբաբ Մա-

մալէք, պարսկերէն.

26. Մալքոլմ. Պատմութիւն Պարսկաստանի, անգլերէն, տպ. 1817 թ.

27. Մէյնարդ. Օրագիր Ասիական. «Journal Asiatique» 1865 թ.

28. Նայման (գրագէս). Հայազգի Լազարիեւ զօրավարին առաջնորդութեամբ Պարսկաստանէ Ռուսիա գաղթող հայոց պատմութիւն.

29. Շարդէն. Ճամբորդութիւնք. Ֆրանսերէն, տպ. Ամբստերդամ, 1735 թ.

30. Ուզլի. Ճամբորդութիւնք (անգլերէն) 1819—21, տպ. Լոնդոն.

31. Զամչեանց Հայր Մ. Վարդապետ. Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1784 թ.

32. Բոյլէ. Աշխարհագրական բառարան (Ֆրանսերէն).

33. Ռոլէն. Պատմութիւն հին ազգաց (անգլերէն).

34. Ռոլինսըն Հէնրի. Անգլիա եւ Ռուսիա յԱրեւելս. անգլերէն. տպ. 1885 թ.

35. Ռոլինսըն Ջորջ. Հինգ մեծ միապետութիւններն Հին Արեւելեան Աշխարհին. անգլերէն, տպ. Լոնդոն, 1862—7.

36. Սեքէոս. Պատմութիւն Հերակլի. տպ. Կ. Պոլիս, 1851 թ.

37. Սթիւարթ. Թէֆէ Թուրքմաններու երկիրն. անգլերէն, 1881 թ.

38. Սմիթ. Խուզարկութիւնք ի Հայաստան. անգլերէն, տպ. Լոնդոն, 1834 թ.

39. Սպէհր Միրզա Թաղի. Նասխ էլ Թավարիխ. պարսկերէն.

40. Վիկտոր Լանգլուա. Ընդհանուր դրամագիտութիւն, Արմենիայի. Ֆրանսերէն. տպ. Փարիզ, 1859 թ.

41. Տիւբրէ. Տիեզերք պատկերազարդ. պատմութիւն Պարսկաստանի. Ֆրանսերէն, տպ. Փարիզ, 1841 թ.

42. *Փրայս.* Տեղեկագրութիւն Բրիտանական դեսպանութեան ի Պարսկաստան. անգլերէն, տպ. 1832 թ.

43. *Քեր Փորթր.* Ճամբորդութիւնք ի Պարսկաստան, Հայաստան, Բաբելոնիա, 1817—18 թ. եւ 1821 թ.

44 *Քէմֆէր.* Այցելութիւնք ի Պարսկաստան 1712 թուին *(անգլերէն).*

45. *Քեթաբ էլ Մէրրաթ էլ Բէլէդաթ.* Հիջրէթի 1294 թ. *(Աշխարհագրութիւն),* պարսկերէն.

46. *Քրուզինսկի.* Ցիշատակարան. Krusinskis Memoir Persia Revolution. 1705—1725, 1733.

47. *Օկիլվի.* Ստորագրութիւն Պարսկաստանի. անգլերէն, տպ. 1673 թ.

48. *Ֆրայըր.* Նոր պարմութիւն Արեւելեան Հնդկաստանի եւ Պարսկաստանի. անգլերէն, 1672 թ.

49. *Ֆրէյզր.* Պատմութիւն ճամբորդութեան ի Խորասան. 1821—1822 եւ 1825—1826 թ. թ. *(անգլերէն).*

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի հայերի մասին խօսելէ առաջ հարկաւոր կը համարեմ համառօտ ու հարեւանցի ակնարկ մը ձգել այս երկրի սահմաններին, տարածութեան ու բնակչութեան կազմի վերայ։

Պարսկաստանի սահմաններն են.—հիւսիսէն՝ Ռուսիա կամ Երասխ գետ, Կասպից ծով և Անդրկասպեան երկիրը։

Արևելքէն՝ Աֆղանստան և Բելուջիստան։

Արևմուտքէն՝ Թուրքիա։

Հարաւէն՝ Բելուջիստան և Պարսից Ծոց։

Կլոր հաշուով այս երկիրը մերձ մէկ միլիոն քառակուսի քիլոմեթր տարածութիւն ունի։ Ասոր մէկ մասը աղի և աւազուտ անապատներ են, մէկ մասը՝ քարային ու լեռնային և փոքրիկ մասը՝ անջրդի վայրեր են։ Այնպէս որ երկրի միայն կէսը կամ քիչ մը աւելին մշակութեան յարմար է։

Պարսկաստանի մէջ մեծ և դիւրանաւարկելի գետեր չը կան։ Գետերը երկրի տարածութեան հետ բաղդատելով՝ քիչ են, և ընդհանրապէս ջրի նաւազութիւն կայ։ Թէև այս պակասութիւնը մասամբ իւիք լեցնելու համար անհամար առերկրեայ ու ստորերկրեայ ջրանցքներ շինուած են, սակայն գետերի ջրերն առանց վատնելու՝ օգտակարութեան հասցնելու համար արուեստական նոր ջրանցքների ու ջրամբարների մեծ պէտք կայ։

Այս երկիրը այժմ) բաժանուած է 12 նահանգների, որոնց տարածութիւնն երբեմն փոփոխութեանց ենթակայ է։ Նա-*

*) Սոյն աշխատութեան մէջ եղած *այժմ* կամ *ներկայիս* բառերով պայմանաւորուած ժամանակաշրջանը պիտի նկատի ունենալ 1890-ական թուականները։ Ծ. խ.

հանգները, ըստ կարևորութեան, հետևեալներն են.— Արաղ, Ատրպատական, Խորասան, Սպահան, Ֆարս, Գիլան, Մազանդարան, Քիւրդիստան կամ Քերմանշահ, Համադան, Եազդ, Քերման և Լոռստան*)։

Պարսկաստանի մէջ մինչև սոյն թուականը երբեք վիճակագրութիւն եղած չլինելով, անհնար է ճշտիւ իմանալ բնակչաց թիւը։ Պարսիկ աղբիւրները բնակչութեան թիւը ինն միլիոն կը հաշուեն, ռուսական աղբիւրները եօթն ու կէս միլիոն կը հաշուեն, ոմանք ալ մինչ հինգ միլիոնի կիջեցնեն։ Սակայն, զանազան թիւերի բաղդատութիւններէն եզրակացնելով, ութ միլիոնը ներկայիս կրնայ մերձաւորագոյն թիւը համարուել։ Այս թիւի մերձ մէկ քառորդը կամ երկու միլիոնը վաչկատուն կամ վրանաբնակ են, իսկ երեք քառորդը կամ վեց միլիոնը՝ նստակեաց կամ հաստատուն բնակութիւն ունեցող։ Միայն թէ առաջինների թիւը հետզհետէ նուազելու և վերջիններինը աւելնալու վրայ է։

Որչափ որ դժուար է բնակչաց ստոյգ թիւն իմանալ, աւելի դժուար է ցեղերի կամ տարբեր ծագում ունեցող բնակչաց համեմատութիւնը ճշդրտել. բայց գաղափար մը տալու համար, հետևեալը կարծեմ լինելու է մերձաւոր համեմատութիւնը.

Պարսկական ցեղեր, ֆարսերէն խօսող (զանազան բարբառներով) և կրօնով ամենամեծ մասամբ շիէ	5,000,000
Թրքական ցեղեր (աղճատ թրքերէն խօսող), շիէ	1,500,000
Քրդական ցեղեր (քրդերէն խօսող, պարսկերէնի մօտ բարբառով մը) սիւննի	600,000
Արաբական ցեղեր, սիւննի	200,000
Թուրքմանական ցեղեր (թուրքերէն խօսող) սիւննի	100,000

*) Հետագային, տարբեր ժամանակներում, նահանգների բաժանումները փոփոխութիւններ են կրել։ Ծ. Խ.

Զրադաշտական փարսիներ (ֆարսերէն խօսող)	50,000
Հայ, շուրջ	80,000
Քաղդէացի-ասորիներ	46,400
Հրեայ	30,000
Զանազան բարբառներ խօսող և տարբեր աղանդ ունեցողներ, որոնց ցեղային ծագումն ու դաւանութիւնները ստուգել դժուար է.—	394,600
Գումար՝	8,000,000

Ամերիկացի միսիոնարաց ըրած վիճակագրութեան համեմատ նշանակած ենք քաղդէացի-ասորիների թիւը, որը մօտաւորապէս ստոյգ կը թուի։ Ասոնց ամենամեծ մասը մօտիկ անցեալի մէջ նեստորական էր, իսկ մնացեալը կաթոլիկ ու բողոքական։ Սակայն, 1898-ին, երբ երկու ռուս քահանաներ Ուրմիա*) հասան, այս երեք դաւանութեանց պատկանողների մեծ մասը ռուսական պաշտպանութիւնը ձեռք բերելու յուսով, յունադաւանութիւն ընդունեց։

Ժողեռը, որ 1806-ին եկած է Պարսկաստան, վիճակագրական երկու ցուցակ կը տայ նահանգների բնակչաց և ցեղերի համար։ Նա իր տեղեկութիւնները գլխաւորապէս պարսկական աղբիւրներէ առած է և իրարմէ մասամբ կը տարբերին։ Նոյնը անփոփոխ ասա կօրինակեմ.—

*) Այս ուխտաւորութիւնը գրուած ժամանակ Ուրմիան Ատրպատականի մեծագոյն գաւառներից մէկն էր, նոյնանուն քաղաքով։ 1920-ական թուականներից թէ գաւառը եւ թէ քաղաքը կոչուեցին *Ռեզայիէ*, Փահլաւի հարստութեան հիմնադիր Մեծն Ռեզա Շահ Փահլաւիի անունով։ Վերջին երջանում, երբ Ատրպատականի ընդարձակածաւալ նահանգը բաժանուեց երկու մասի՝ *Արևելեան Ատրպատական* և *Արևմտեան Ատրպատական*, Ռեզայիէ քաղաքը դարձաւ Արեւմտեան Ատրպատականի կենտրոնական քաղաքը։ Ծ. Խ.

Նահանգք.	թիւ բնակչաց
Երևան[1])	120,000
Ատրպատական	1,400,000
Գիլան	250,000
Մազանդարան	750,000
Աբաղ	1,500,000
Ֆարս	700,000
Քիւրդիստան	400,000
Քերման	300,000
Խուզեստան	300,000
Խորասան	700,000
Գումար՝	6,420,000

Նոյն ժոբեռը հաստատուն (նստակեաց) բնակչաց թիւը կը հաշուէ 5,720,000, վաչկատուն բնակչաց թիւը՝ 752,000։ Փոքրամասնութիւն ներկայացնող ժողովուրդների թիւը կը ներկայացնէ ըստ հետևեալի.— հայ՝ 70,000, զրադաշտական՝ 20,000, հրեայ կամ սաբէականք՝ 30,000, ծագումն անծանօթ ցեղեր՝ 300 կամ 400 հազար[2])։

1) Նկատի պիտի ունենալ, որ այս վիճակագրութիւնը կազմուած է 1806 թիւն, երբ Երևանի նահանգը գտնուում էր Իրանի սահմաններում։ Ծ. խ.

2) Պաշտօնական վիճակագրութիւն չլինելու պատճառով ներկայացուած բոլոր թուերը կասկածելի են։ Ինչ վերաբերում է Իրանում բնակող հայերի թիւն, բազմաթիւ աղբիւրներով կարելի է հաստատել, որ միանգամայն սխալ է։ Նկատի պիտի ունենալ, որ վիճակագրական այս տեղեկները, ժոբեռի կողմից գրի առնուած ժամանակ, 1806-ին, Երևանի եւ Նախիջևանի խանութիւնները գտնուում էին Իրանի տիրապետութեան ներքոյ։ Հոծ թով հայեր հաստատուած էին Ատրպատական նահանգի Ղարադաղ, Մաքու, Խոյ, Սալմաստ, Ուրմի, Մարաղա, Միանդուաբ գաւառներում, Սալմասի եւ Ուրմիոյ լեռ-

Պարսկական ցեղերն երկրի հարաւային, արևելեան, հիւսիսային և մէջի կողմերը կը գտնուին։

Թրքական ցեղերը՝ հիւսիսային արևմտեան կողմերը։

Քրդական ցեղերը՝ Թուրք և պարսկական սահմանների վերայ, սկսեալ Բայազիդէ մինչև Խանեղին, աւելի կենտրոնացած լինելով Սովուջբուլաղի ու Քերմանշահի մօտաւորութեանց մէջ։

Թուրքմանական ցեղերը հիւսիս-արևելեան, ռուս և պարսկական սահմանների վերայ։

Արաբները հարաւային շրջանին մէջ։

Զրադաշտականները՝ կապրին գլխաւորապէս Եազդ նահանդին մէջ, իսկ մաս մըն ալ այլ և այլ քաղաքների մէջ։

Հայերը՝ գլխաւորապէս Ատրպատականի, Սպահանի և Աբաղի նահանդներու մէջ։

Քաղդէ-ասորիները՝ Ատրպատականի արևմտեան կողմը։ Հրեաները՝ առաւելապէս Սինա, Սաքզ, Համադան, Քերմանշահ, Թեհրան, Քաշան և Մեշեդ։

Զանազան բարբառով խօսողները կապրին երկրի ամէն կողմերը, բայց առաւելապէս Ատրպատականի մէջ։

Պարսկերէն խօսողների մէջ ամենագլխաւոր ցեղերն են՝ Ֆարսերը, լոռները, զէնդերը, բախթիարիները և ֆէյլիները։

նային շրջաններում եւ Թաւրիզ քաղաքում (իբրեւ բնիկներ, շատ վաղ ժամանակներից)։ Վերջապէս, Շահ Աբբասից առաջ եւ Շահ Աբբասի օրօք Սպահան էր բերուած հսկայաթիւ գաղթականութիւն, որ հաստատուած էր Նոր-Ջուղայում եւ Իրանի այլ եւ այլ գաւառներում։ Հետեւաբար, հայ բնակչութեան համար նշանակուած 70 հազարի համրանքը մի կոտորակն է այդ թւականին Իրանի սահմաններում գտնուող հայ ժողովրդի իրական համրանքի։

Կասկածելի է նաեւ զրադաշտականների համար տրուած համրանքը։ Այլ աղբիւրների համաձայն, զրադաշտականների թիւը, 19-րդ դարում, Իրանում հաշուել են շուրջ 10,000, իսկ Հնդկաստանում՝ հաստատուած զրադաշտականների թիւը՝ 100—120 հազար։ Ծ. խ.

Թուրքերէն խօսողների մէջ երևելիներն են՝ դաշարները, աֆշարները, շահսեվանները, Թուրքմանները, Թալիշի ցեղերը, դարագեոզլուները և դարաչօրլուները։

Քրդական ցեղերի մէջ կարևորներն են՝ ռեշվէնդները, շաղաղիները, բէնիարդելանները և դէհբուքրիները։

*

* *

Պարսկաստանի հայերը շատ ժամանակէ ի վեր երկու առաջնորդական վիճակի բաժնուած են, այն է՝ Ատրպատականի և Սպահանի*)։

Ընթերցողներին մատչելի ըլլալու համար, սոյն բաժանումը պահելով աշխատութեանս մէջ, նախ Ատրպատականի և ապա Սպահանի թեմի վրայ պիտի խօսեմ։

Որպէսզի Պարսկաստան բնակող ազգայինների անցեալն ու ներկան յստակ տեսնուին, յարմար դտայ իւրաքանչիւր նահանգի ու դաւառի վերայ համառօտապէս, և ամէն մի քաղաքի ու գիւղի վրայ ըստ կարևորութեան առանձին-առանձին խօսել։

*) *Սպահանի թեմ* ասելով պիտի հասկանալ ո՛չ միայն Ատրպատականի սահմաններից դուրս՝ բովանդակ Իրանում հաստատուած հայ համայնքները, այլ եւ Հնդկաստանում եւ հեռաւոր Արեւելքում հաստատուած հայ գաղթօջախները։ Այդ պատճառով Սպահանի թեմը կոչւում է *Իրանա-Հնդկաստանի Թեմ* (նախապէս՝ Պարսկա-Հնդկաստանի թեմ)։ Ծ. Խ.

Ա.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Ըստ պարսից աղբիւրների՝ Ատրպատական, Ազրաբատական, Ազրփայկան, Ազրպատկան, Ազրպայկան, ըստ եւրոպական աղբիւրների՝ Ազրբեջան, Ազրբայջան, ըստ յունաց՝ Ատրոպատէնէ, ըստ հռովմայեցւոց՝ Ատրոպատիա, որ կը կարծուի Վենդիդայի մէջ յիշուած Վառինան լինել, որ կոչւեր է իւր գլխաւոր քաղաքի Վառա կամ Վիրա անունէն։

Ըստ Ստրաբոնի՝ Ատրոպատէնէ անունը ծագեր է Ատրոպատէս-է, որ Արբելլայի պատերազմի ժամանակ այս երկրի կուսակալն էր։ Մեծն Աղէքսանդրի հետ դաշնակցած ըլլալու համար իրեն թոյլ տուեցաւ պահել այս նահանգը, ուր քիչ ժամանակի մէջ ինքզինքն անկախ ըրաւ։

Սակայն, եթէ բառի ստուգաբանութեանը դիմենք, վերի մեկնութիւնն անհաւանական կը թուի և կարելի է ասել, որ Ատրոպատէս իւր անունն աւելի Ատրոպատէնէ անունէն ստացեր է, քան թէ անոր տւեր է, և աւելի առաջ երթալով, հաւանականութեան սահմանէն դուրս չենք ելլեր, եթէ ըսենք յոյն պատմագիրներն այն ատենուան իշխանի անունը ճշտիւ չիմանալով, Ատրոպատէս անունով կնքեր են զայն, քանզի ատր, ազէր, ազր, սանսկրիտերէն և հին պարսկերէն կը նշանակեն հուր, կրակ, աշխարհը բաղկացնող չորս տարրերէն*) մին և

*) Հին պարսիկները կը կարծէին, թէ աշխարհը կամ ամէն բան չորս տարրերէ կը բաղկանայ՝ հողէ, ջրէ, կրակէ եւ քամիէ։

պայկան կամ պատկան, տեղ կամ երկիր մը պահող, պահպանող կը նշանակեն, որով Ազրպայկան կամ Ատրպատական կը նշանակէ երկիր, տեղ հրոյ և կամ կրակ պահող։

Հին ժամանակ այս երկրի մէջ կրակի մեծ տաճար կամ հռչակաւոր ատրուշան մը ևս կար, որ Ազրապատկան[1]) Ազրբիջանի կամ Ատրպատական կը կոչէր։ Ուստի ամէն հաւանականութեամբ կարելի է ըսել, որ Ատրպատական իւր անունն ստացեր է ատրուշանի կամ կրակի երկիր կոչումէն։ Ոմանք Զրադաշտին կը վերագրեն կրակապաշտութեան հիմնադրութիւնը, և Ուրմիա կը համարեն Զրադաշտին ծննդավայրը և Քրիստոսի ծնունդէն քսան դար առաջ կը հաշուեն անոր ծննդեան թուականը[2])։ Ուրիշներ, թերևս աւելի զոհացուցիչ պատճառներով, անկէ շատ ետքը եղող մոգերին կը տան այս կրօնի հաստատութիւնը։ Որ մէկն ալ որ լինի, ստոյգ է, որ առնուազն Քրիստոսի ծնունդէն վեց դար առաջ հաստատուած է Ատրպատականին մէջ այն հռչակաւոր ատրուշանը, որմէ երկիրն ստացեր է Ատրպատական անունը։

Ատրպատական հիւսիս-արևմտեան և մասամբ մը հիւսիսային կողմէն անմիջապէս և երկար տարածութեամբ սահմանակից լինելով Հայաստանին, իր յարաբերութիւններն այս վերջինին հետ սկսած են ամենահին ատեններէ։ Այս նահանգի սահմաններն անդադար մեծ փոփոխութիւններ կրեր են։ Քաղաքական դէպքերի ազդեցութեան տակ երբեմն կը տարածուէին, կը մեծնային, Հայաստանին և ինչպէս զինքը շրջապատող ուրիշ դաւառներին պատկանեալ երկիրներն իր մէջ կը մտնէին, և երբեմն սեղմուելով և փոքրանալով, իր բուն հողերէն կը միացուէին Հայաստանին և կամ ուրիշ նահանգների հետ։ Նախկին սահմանները ճշտիւ որոշելը շատ դժուարին և գրեթէ անկարելի է։ Ատրպատականի հայերը և մանաւանդ Հայաստանի սահմանների մօտ եղողները նորեկ գաղթականներ չեն, այլ բնիկներ են, համաբնակակից եւ ժամանակակից Հայասանի մէջ հայոց հաստատելուն։

Ի հաստատութիւն այս իմ ըսածի, հարկ կը համարեմ յառաջ բերել Ջորջ Ռոլինսընի՝ Վանայ լճի կոնադաշտի և Ատրրպատականի նկատմամբ յայտնած կարծիքը՝ զայն վերցնելով իր «Հինգ մեծ միապետութիւններն արևելեան աշխարհի» գրքէն։

Վանայ լճի կոնադաշտին վերայ խօսած ատեն Ջ. Ռոլինսըն կը յաւելու. «Հետևապէս աստ է և աստ միայն բովանդակ Հայաստանէն, որ մենք կը գտնենք ասորական և մարական շրջանների ժամանակ կազմակերպուած մեծ միապետութեան գոյութեան նշանները։ Վանի արձանագրութիւնները մեզ կը ցուցնեն շատ մը թագաւորներ, որք Արևելեան Հայաստանին, ճշմարիտ Արարատին մէջ իշխանութիւն վարեցին, և որք քաղաքակրթութեամբ ևս և զինուորական զօրութեամբ շատ աւելի առաջնակարգ էին քան այն ամէն ուրիշ իշխանները՝ որք իրենց մէջ կը բաժնէին հայ երկիրը։

«Վանի միապետներն երբեմն մարաց համար ահաւոր թշնամիներ եղեր են։ Նոքա իրենց տիրապետութեան հետքերը թողեր են ո՛չ միայն լեռանցքների և դաղաթների վերայ, որ կը տանին Ուրմիոյ լճի կոնադաշտը, այլ մինչև անգամ Միանդուաբի համեմատաբար ստորին դաշտավայրին վերայ։ Ասորմէ հաւանական կը թուի, որ նոքա մի ժամանակ մարական Ատրպատականի մէկ մեծ մասի տէրերն էին և նոյնիսկ Ուրմիա անունը, որ տակաւին լճին կցած է, գուցէ անոր տուեր է իրենց (հայերի) մէկ ցեղէն»։

1) Ֆարհանգ Անջոման Արա կրսէ, որ ի սկզբան Թաւրիզ քաղաքի մէջ ատրուշան մը կար Ազերապատկան անունով, եւ այս պատճառով այդ երկիրն Ազրապատկան կոչեցին եւ Ազերպաս եւս կը կոչեն։

2) Ըստ ուսուցչապետ A. V. Williams Jackson-ի՝ Զորոատր կամ Զրադաշտ ծներ է 660—583 թ. Ք. առաջ, ազնուական կամ իշխանական ծնողներէ։

Ատրպատականի անթերի պատմութիւնը գրելու դիտաւորութիւնը չունենալով և այդ ընելու անհրաժեշտ կարևորութիւնը չտեսնելով, պիտի բաւականանամ յիշելով միայն այն դէպքերը, որք անմիջական կապ ու վերաբերումն ունեցեր են հայերի և հայ պատմութեան հետ։

Տիգրան Երանդեան Աժդահակին վերայ տարած յաղթութեամբն, ի միջի այլոց, Ատրպատականին ևս տիրած պիտի լինի իբր սահմանակից նահանգի։ Ինչպէս յիշեցաւ, Դարեհի Աղէքսանդրէն յաղթելովն այդ նահանգն անցաւ Ասրոպատէս անունով կուսակալին, որ ետքէն ինքզինք թագաւոր հրատարակեց։ Սակայն, ուշադրութեան արժանի է, որ մինչ Հայաստան Մեծն Աղէքսանդրի յաջորդների իշխանութեան տակ մերթ օտար, մերթ հայազգի կուսակալներէ կը կառավարուէր, ասոնց շարքին մէջ կը յիշուի ևս Արտաւազդ կամ Արտաւազան իշխան մը, որ ըստ Պողիբիոսի յառաջագոյն Ատրպատականի թագաւորն էր։ Այս բացատրելու համար պէտք է կարծել, որ Արտաւազդ նախ Ատրպատականի հայ դաւառներէն մէկի իշխանը պիտ եղած լինի և ետքէն զօրանալով, Ատրպատականի մեծագոյն մասին և կամ ամբողջին տիրեր է և թագաւոր դարձեր։ Հուսկ յետոյ հայերէն հրաւէր ընդունելով, Հայաստան գնացեր, անդ թագաւորեր է և շատ հաւանականաբար Ատրրպատականը, որ իր նախկին տէրութիւնն էր, կցեր է Արմենիոյ։

Սոյն նահանգը*) կամ լաւ ևս սոյն երկրի իշխանը կերևի որ Վաղարշակ Ա-ի իշխանութեան տակ էր, քանզի այս թագաւորն, ըստ Խորենացւոյ, Մորփիւղիկէսի վրայ քալած ատեն, ի միջի այլոց, Ատրպատականէ ևս զօրք հաւաքեց։

Վիկտոր Լանկլուա կը կարծէ, որ այս թագաւորն Մի-

*) Եւ արտաքոյ սոցա (Հայոց 15 ազգարհս) ես Արեակ Վաղարշակայ նաեւ զազգարհն Ասրպատականի յարեւելից կողմանէ Մեծին Հայոց։

ջագետքի և Ադիաբէնի հետ Ատրպատականն ևս գրաւեց։

Ջորջ Ռոլինսըն իր «Պատմութիւն Պարթևաց» աշխատութեան մէջ Ստրաբոնէն և Պլուտարքոսէն առնելով, կըսէ.— «Անստոյգ է արդեօք մարական Ատրպատականը, որ նոյնպէս տիրապետուած էր Տիգրանէն, մինչ այդ ժամանակ Պարթևաց տէրութեան մասը կազմած լինի»։

Ուրիշ տեղ մը ևս Մեծն Տիգրանի վերայ խօսած ատեն կաւելցնէ. «Ի՞նչ միջոցներով, որք չեն յիշուած, նա (Տիգրան Բ.) իր հպատակութեան տակ բերեր էր Մարաստանը, Ատրպատականի մեծ թագաւորն, որ Աղէքսանդրի ժամանակէն ի վեր անկախ էր»։

Մեծն Տիգրանի այս տիրապետութիւնը հաստատութիւն կը գտնէ ևս Իզիտորի հետևեալ խօսքերէն Ատրաբանի վերայ խօսած ատեն. «Ատրաբան Եկբատանին պատկանող մի հին պալատի դիրքն էր, զոր հայազն Տիգրան (Բ.) աւերեց»։

Հռչակաւոր արևելագէտ Սըր Հէնրի Ռոլինսըն, կը համարի Ատրաբան արդի Արթէման գիւղը լինել։ Կըսէ. «Ատրաբան, արդի Արթէման գիւղը, որ Ալանդ լեռան հարաւային ստորոտին մօտ կիյնայ, աղէկ կը պատշաճի արքայական բնակատեղի մը։ Արթէման (Թույի, Սիրքան և Արթէման) երեք գիւղերէն մէկն է, որք իրարու կից կիյնան և ընդհանրապէս Թույիսիրքան*) անունին տակ կը ճանաչուին։ Աստ ամենախիստ ձմեռուան ատեն, երբ Համադանն ու շրջակաները ձիւնի մէջ թաղուած են, ջերմ ու արև, լաւ եղանակ կը տիրէ, իսկ ամառը հազարաւոր առուակներ իջնելով, Որոնտէսին շուրջ կը տարածին բերրիութիւն ու անուշահոտութիւն»։

*) Թույի Սիրքան գիւղը Համադանի հարաւային արեւմտեան դին եւ անորմէ իբր 45 հազարամեթր հեռու է։ Այս գիւղը Թաւրիզէն մեծ 460 հազարամեթր է։ Ուստի ես կը կարծեմ, որ Տիգրան առանց կանխաւ Ասրպատականին տիրելու, իր արշաւանքները մինչ Ասրաբան չէր կրնար առանց վտանգի մղել։

Խոսրով Պարսկաստան բրած իւր տասնամեայ արշաւանքների ժամանակ, որք մինչ Տիգրոն կը տարածուէին, անհաւանական չէ, որ Ատրպատականին տիրած լինի, քանի որ իւր արշաւանքներէն դարձած ատեն երբեմն Ատրպատական կանցնէր ձմեռը։

Մեծն Տրդատ իւր հօր պէս Պարսկաստան բրած արշաւանքների ժամանակ, որք անընդհատ 13 տարի տեւեցին և որ մինչ Տիգրոնի հարաւային կողմերը կը մղէին, Ատրպատական դրաւած կերևի։

Սակայն, այս տիրապետութիւնն օրինաւորապէս հաստատուեցաւ միայն այն ատեն, երբ Ներսեհ (ըստ ոմանց Շապուհ, ըստ այլոց՝ Վարահրամ Ա.ի կամ Բ.ի որդին և յաջորդը) Դիոկղետիանոս կայսեր փեսայ և Գալերիոս Կեսարէն*) և Տրդատէն յաղթուելով, պարտաւորուեցաւ հաշտութիւն կնքել և դաշնադրութեան պայմանների երրորդ յօդուածովն Ատրպատականը Տրդատին թողուլ։

Ըստ Ջ. Ռոլինսընի, դաշնադրութեան Գ. կէտը կը ճշտէ Հայաստանի սահմանների տարածումը մինչև Զինթա բերդը Մարաստանի մէջ։

Ոմանք այս յօդուածով կըմբռնեն ամբողջ Ատրպատականի թողումը։ Այս կարծիքը հաւանական կը թուի, երբ աչքի առջև ունենանք, որ Տրդատի ժամանակ Փայտակարան ամբողջապէս այդ սահմաններուն մէջ կիյնար, պարունակելով նաև Ուրմիոյ լճի հարաւային կողմը գտնուող Տամբեր գաւառն, որ թերևս այժմեան Սուլդուզ գաւառակը պիտի լինի։ Իսկ Վասպուրական կը տարածուէր մինչև Մարանդի կողմերը։

Բայց ո՞ւր էր Զինթա կամ Սինթա բերդը։ Ասոր նկատմամբ ոչ մի տեղեկութիւն կամ ցուցում չկայ, որով կարելի լինէր ըսել, թէ հաւանականօրէն այս ինչն էր։ Սակայն՝ պէտք է

*) Խորենացին Ներսեհի պարտութիւնը Շապուհին եւ Գալերիոս Կեսարի յաղթութիւնը Կոստանդիանոսին կը վերագրէ։

կարծել, որ այս բերդն Ատրպատականէ դէպի Պարսկաստան, նամանաւանդ Մարաստան տանող գլխաւոր ճամբաներէն մէկին վերայ եղած լինի։ Այժմեան, ինչպէս և շատ հաւանականաբար հին ատենեան ճամբաների մէջ գլխաւորներն ի սկզբանէ երկուք են։

Նախ, Թաւրիզէն Միանէ գիւղաքաղաքի և Ղափլանքուհ լեռան վրայով Զանջան, ուրկէ մէկ ճամբայ կը տանէ Համադան, իսկ միւսը Ղազվինի վրայով՝ Թեհրան, Ղում, Քաշան ու Սպահան։

Երկրորդը Թաւրիզէ, ինչպէս և Ուրմիայէ, Սայինղալէ գիւղաքաղաքը, և այս տեղէն երկու ճիւղ կը բաժնուի. մէկը Սաֆարխանէի և Սինէի վրայով, իսկ միւսը, որ ամենէն աւելի սովորական ու բանուկն է՝ Թիքան Թափա գիւղի և Բիջար քաղաքի վրայով՝ Համադան, Քերմանշահ և Բաղդադ կամ Տիգրոն։

Արդ, առաջին ճամբան հին ժամանակները այնքան բանուկ չէր, որչափ երկրորդը, քանզի Պարթև և նամանաւանդ Սասանեան թագաւորներն ընդհանրապէս ձմեռը Տիգրոն, իսկ ամառը Համադան ու Քերմանշահ կանցնէին և իրենց զօրաց մեծագոյն մասը շատ անգամ այս տեղերն կը ժողովէին ու կը պահէին։

Հայաստան արշաւած ժամանակ և առաւելապէս այս տեղեր զօրաժողով լինելով, երկրորդ ճամբայով կը յառաջանային դէպի Վասպուրական և Հայաստանի միւս նահանգները։ Նոյնպէս և հայերը երկրորդ ճամբայով արշաւելով կանցնէին Մարաստան կամ Պարսկաստան, որպիսին պէտք է համարել Տիգրանի արշաւանքը մինչ Ադրբարան։

Հերակլ մինչև Տիգրոն արշաւելէ ետքը, Սիազուրոսի (Շէհրիզոր) և Բարզանի (Բանէ) վրայով դարձաւ Գանզաքա (Թախթը Սուլէյման), անդ ձմերելու*)։

*) Այս կը հաստատի նաև Քէրենքու այրի խուցերէն մէկի պատին վերայ քանդակուած յունարէն արձանագրութեան մէջ Հերակլ անունը գտնելէն։

Արաբներն ևս, Տիգրոնն առնելէ ետքը, սոյն երկրորդ ճամբայով մտան Մարաստան ու Ատրպատական։

Այս ամէնը նկատողութեան առնելով, նամանաւանդ ի միտ ածելով որ յատկապէս յիշուած էր թէ Զինթա Մարաստանի մէջ էր, պէտք է խորհել, որ այս բերդն ամէն հաւանականութեամբ երկրորդ ճամբային վրայ կամ մօտերն և Սային Ղալէ գաւառակի սահմանների և Համադանի մէջերն եղած լինի, որ թէ Ատրպատականի սահմանը որոշէր և թէ իբր բերդ արգելք դառնար պարսից դիւրաւ Ատրպատական մտնելուն։

Այս վերջին կարծիքը հաւանականութեան սահմանին կը մօտենայ։

Իսկ Կիբրն հետևեալ շարքով կը յիշէ նահանգների անունները.— Ինթիլէն, Զաբդիկէն, Արզանէն, Մոքսօէն և Քարդուզիա*)։ Իսկ դաշնագրի Գ. յօդուածի նկատմամբ կաւելցնէ.— «Արմենիոյ տէրութեան այս աճուն աւելի արդարութեան, քան առատաձեռնութեան գործ մըն էր, քանզի վերը յիշուած յայնկոյս Տիգրիսի 5 նահանգներէն առաջին չորսը պարթևները Արմենիայէ գրաւեր էին։ Եւ երբ հռովմայեցիք անոնց ժառանգութիւնն ստացան, պայմանագրեցին ի վնաս գրաւողների, իբրև լիուլի փոխարինութիւն իրենց դաշնակցի համար, անոր (Արմենիոյ) տալով Ատրպատականի ընդարձակ ու բերրի երկիրն»։

*) Հայոց նահանգներն ու գաւառներն շատերի նախկին բաժանումներն ու սահմանները ճշտապէս ու որոշակի յայտնի չեն եւ միայն հաւանօրէն ու մեծաւորապէս կրնան գծիլ։ Այսպէս եւս վերը յիշուած նահանգների կամ գաւառների սահմանների գծման, դիրքի ու տարածութեան եւս որոշման նկատմամբ կարծիքները մեծապէս կը տարբերին։ Շատերը կը կարծեն, թէ անոնք Տիգրիսի արեւելեան կամ ձախ կողմն են, ոմանք ալ աջ կողմը կը դնեն զանոնք։ Հ. Ղ. Ալիշան վերջիններին համակարծիք է։

Անունների որոշմանը գալով, մէկինը (Քորդուէն կամ Քարտուզիա) կարելի է հաստատապէս ընել, նոյնը լինել Կորնէք կամ Կոր-

Սըր Ռոբերթ Քերփորթը կը կարծէ այս պատմական ուրոշումի կամ դէպքի քանդակագործած լիշատակը գտած ըլլալ և իր 1817—1820 թուականներուն «Վրաստան, Պարսկաստան, Հայաստան և Բաբելոնան ճամբորդութեան պատմութիւն» աշխատութեան մէջ հետևեալ կերպով կընէ իւր գտած քանդակեալ արձանագրութեան նկարագրութիւնը, զոր ամբողջապէս կը թարգմանեմ ստորև.

«Մերձ երկու մղոն հեռու Կուրշին Ղալէ*) գիւղէն և Սալմաստի մեծ դաշտավայրի երկայնութեամբը կը բարձրանան շատ մը անջատուած ապառաժոտ լեռներ։ Ասոնցմէ մէկի հարաւային երեսի վերայ և բաւականին միջոց դէպի գահավէժն ի վեր ժայռը 16 ոտք երկայնութեամբ հարթացուած է։

«Աստ ես գտայ շատ հասարակ նմոյշ մը ձեռագործութեան, որ կը ներկայացնէ չորս պատկերներ, որոնցմէ երկու-

*) Այս վայրը գտնուում է Սալմասից դէպի Ուրմիա ձգող ճամբի վրայ եւ ներկայիս պարզապէս կոչւում է Կուշչի կամ Ղուշչի։

Ցիշատակուած արձանագրութիւնը գտնուում է ներկայիս Փիրչաուլ կոչուած լեռան ժայռերի վրայ։ Ծ. խ.

քը ձիաւորներ են։ Որչափ որ կոպիտ է ճարտարապետական ոճը, այսուամենայնիւ նման է Սասանեան տէրութեան ժամանակին, ինչպէս որ յիշեցաւ իմ օրագրութեանս առաջին մասի մէջ։

«Այս բարձրաքանդակը (bas reliëf) կը կայանայ, կարելի է ըսել, երկու խմբերէ, թէպէտ և իսկապէս պատմութեան մէկ կէտով շարայարուած։ Մեր աջ կողմից խումբը (երբ դիմացը կանգնենք) կը կազմի հեծեալ անձէ մը, որի ձիու զարդածածկոյթը և իր հագած զարդազգեստը, ինչպէս նկարագրեցաւ, կը ցուցնեն Սասանեան ձևը։ Իր մազերն կը ծածանեն առատ գանգուրներով. մի գնդակակերպ բան կը բարձրանայ սաղաւարտին վերայ, որ այստեղ ուրիշ զարդ չունի, ի բաց առեալ արքայական դրօշներն։ Իր ձախ ձեռքը, որ սանձը կը բռնէ, կը թուի միևնոյն ատենը հանգչել երկար ու շիտակ սուրին բռնակին վերայ։ Բացի իր գլխէն ու վիզէն առկախեալ տատանող շերտածայրերէն, ուրիշներն ևս կը ծածանեն իր մէջքին, որպէս թէ կցուած լինէին զգեստին, որ կուրծքին վերայ կը կոճկուի։

«Նոյնանման յաւելուածներ կը սաւառնեն դաբշապարներէն։ Իր երկնցուցած աջ բազկովը նա կը բռնէ օղ կամ պըսակ մը և զայն կը տայ ձիու գլխին մօտ կեցող հետիոտն անձի մը և կամ կերևի զայն անորմէ ընդունել։

«Վերջին պատկերս բաց գլխով է, իր մազերը ճակատին մէջէն բաժնելով իւրաքանչիւր կողմը կիյնան լի և յորդառատ գանգուրներով։ Նա հագեր է կարճ պատմուճան մը, որ մինչ ծունկը կը հասնէ, մէջքը գօտիով ու սուրի ժապաւէնով մը պնդեր է, լայն ու թոյլ անդրավարտիքն, որ ըստ երևոյթին ծայրն ոտքի կոճին կապուեր է, կը լրացնէ ամէնը, որ ինչ այժմ նշմարելի է իր զգեստի նկատմամբ։

«Երկրորդ խումբն, որ ընթացքի կարգով անկէ առաջ է, կը ներկայացնէ նմանօրինակ գործողութիւն մը, և յիրաւի անոր մանրամասնութեանց գլխաւոր տարբերութիւնն կը կա-

յանայ միւսին հետ հեծեալ անձի հանդերձին, ինչպէս և իր ձիու զարդերին մէջ։ Այս կենդանու ծածկոյթը կերևի աւելի շքեղաշուք քան թէ միւսինը և հեծնողի գլուխն առանց Սասանեան սովորական մագի լրմանն, որ եզակի մի պարագայ է այդ թւականի խորաքանդակներին մէջ, և որ կը թուի ցուցնել իշխան մը, յաւէտ դաշնակից այն վեհապետներին, քան թէ անոնցմէ մէկը։ Նկարագրեստն, որ կը պատէ իւր սրունքն և ծունկը, ճշտապէս նման է անոր, որ ի Նախշը Ռոստամ գտնուած պատկերներին վրայ կը տեսնուի, մինչդեռ միւս ձիաւորի ոտքը ծածկուած է Շապուհի զգեստի ձևով, ինչպէս մեր տեսած այս արձանագրութեան մէջ քաշուեր է։

«Այս գործը բովանդակապէս շատ աղքատիկ կերպով մը կատարուած է, և պէտք է խիստ ծանծաղ խորաքանդակ համարուի, քանի որ հազիւ չորս մատնաչափ կը բարձրանայ ժայռի երեսէն. անոր վրայի կերպարանքների մանրամասնութիւնները ցուցադրուեր են քանդակագրչի պարզ գծովն այն կերպով, ինչպէս որ փորագրող մը կը գծէ պղնձի վերայ. ուստի ինձ զարմանալի է, ինչպէս այսչափ թեթևաբար բարձրացած մակերևոյթի մը որևէ մասն կրցեր է դիմանալ այնքան դարերի մաշումին, ի միտ ածեալ եղանակների փոփոխութիւններն և ուրիշ խստութիւններն, որոնք պէտք է անոր վրայէն անցած լինէին։

«Շատ ծայրատում տեղի ունեցեր է, բայց տակաւին բաւականին կը մնայ ցուցնելու համար այն նախնական կոպիտ կատարումն, որն հաւաստեաւ հետաքրքրական մի օրինակ է այն օրւայ Հայաստանի մէջ գտնուող քանդակագործութեան վիճակին, վասնզի ես հակամէտ եմ անոր թւականը համարել մեր թւականութեան 4-րդ դարի սկիզբներն, և որը թշուառ գաղափար մը կուտայ այն ատենուան ճաշակին վերայ այսպիսի գործերի նկատմամբ։

«Ցիրաւի արհամարհանք մը դէպի գեղարուեստների սոյն նմանողական ճիւղերն յայտնապէս կը տեսնուի նաև այդ երկրի

դրամների մէջ, այն ամենն, որ ես տեսեր եմ, մասնաւորապէս բարբարոսական լինելով։ Արհամարհութիւն ըսի, վասնզի անոնց արուեստագէտներն պէտք է ծանօթ լինէին լաւագոյն նախագաղափարներու, այն յարակայ հաղորդակցութեան պատճառով, որ այդ երկրի, Յունաստանի և Հռոմի մէջ կար։

«Այս է հնութեան միակ նշխարն, որ ես կրցայ տեսնել այդ դաշտավայրին մէջ։

«Ես կը համարձակիմ անոր մեկնութիւն մը տալ պատմութեան հետևեալ ծանօթութիւնէն.

«Ներսեհ, պարսիկ թագաւորն, Գալերիոս կայսրէն պարտուելէն ետքը իւր յաղթողին թողուց Միջագետքը և Տիգրիսի արևելեան կողմը գտնուող հինգ գաւառներն, զորս կը պարունակէին Քարդուզիայի (Կորդուիք) մէկ մասն։

«Այս հինգ գաւառները յառաջագոյն Արմենիոյ տէրութեանը կը պատկանէին և քանի որ Գալերիոս ձեռնարկած էր պատերազմն ի պաշտպանութիւն հայոց թագաւոր Տրդատին, Ատրպատական զեղեցիկ նահանգը նոյնպէս կորզուեցաւ Ներսեհէն, իբր փոխարինութիւն արմենական միապետին, իր նախնական ժառանգութեան այն մասին համար, որ տրուեր էր կայսրին և այն կայսրն ընտրեց պահել իբր յատուկ իրենն։ Ուստի ես կը կարծեմ, որ այս քանդակագործութեան միջի երկու խմբերն կրնան վերաբերիլ սոյն առանձին յանձնարարութեանց։

«Առաջնակարգ երկու անձերն, հետիոտն մարդն և առանց Սասանեան կամ ասիական դանդուրների արքայական անձնաւորութիւններն կրնան նշանակել Գալերիոս կայսրը ձիու վրայ նստած Արմենիոյ իշխանէն, որ ոտքի վերայ լինելով, կը ցուցնէ իր խոնարհ աստիճանն, ընդունելով ամէն իրաւունքների հրաժարումն, որ նա ունէր Ներսէհի թողած հինգ գաւառների վերայ։

«Միւս երկուքի խումբը, որ ասրմէն ետքը կը դայ, կրնայ ներկայացնել Պարսկաստանի Ներսէհը, նոյնպէս հեծեալ,

ի պատիւ իր գերագոյն կարգին, իբր Մեծն թագաւոր, մատուցանելով հայկական իշխանին, որ դարձեալ հետիոտն է, Ատրպատական նահանգի իշխանութիւնը, կորզուած իրմէն, վերը յայտնուած պատճառի համար»։

Տրդատի մահէն ետքը Ատրպատականի մեծագոյն մասը, կամ լաւ է ըսել այն գաւառները, որ ի սկզբանէ անտի հայոց չէին պատկաներ, անցան պարսից։

Այս կարելի է հետևցնել Խորենացւոյ հետևեալ խօսքերէն.—«... Յոգնականութենէն նորին (Կոստանդեայ) թագաւորեաց Խոսրով, ոչինչ արիութիւն քաջութեան ցուցեալ, որպէս զհայրն, այլ ոչ վասն հատուածելոց կողմանցն հակառակեցաւ ինչ յետ միոյ նուագին, զոր ի յունականացն կրեցին զօրացն, այլ ի կամս թողեալ արքայն պարսից խաղաղութիւն առնէ ընդ նմա բովանդակ վարկուցեալ ճնացելոց սահմանացն տիրել...»։

Եւ յիրաւի, որչափ որ արի և պատերազմասէր էր Տրդատ, անոր հակառակ, անարի ու մեղկ էր Խոսրով, որ իւր անձի դիւրութիւնն ուզելով, կամաւ Շապուհին թողուց Ատրպատական, ու խոստացաւ անոր հարկ տալ։ (Տես Գիբբն)։

Նահաւանդի մարտէն ետքը (Քսի. 641-ին), ուր արաբները յաղթելով վերջ տուին Սասանեան տէրութեան, Ատրպատական (ինչպէս և Պարսկաստանի ուրիշ նահանդները) ընկաւ արաբների իշխանութեան տակ և սկսաւ կառավարուել ամիրապետներէ զրկուած ոստիկաններէ, որոնք «Ոստիկան Ատրպատականի» կը կոչէին։

Այդ ժամանակէն սկսեալ այս նահանդի ճակատագիրը բոլորովին Թաւրիզի բախտին ու դրութեան ենթարկուած լինելով, առաջնի պատմութիւնն երկրորդի հետ խառն պիտի դրուի, կրկնութեան մէջ չիյնալու համար։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԿԼԻՄԱՆ, ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ԵՒ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱՒԱՌՆԵՐԸ

Այս նահանգի սահմաններն ընդհանուր գիծերով և ոչ մանրամասն կերպով կը ներկայացնեն հետեւեալը.

Հիւսիսէն Ռուսաստան, որ Երասխ գետով կը բաժանուի Պարսկաստանէն։

Արեւմուտքէն Թուրքիա, որ Քոթուր (կամ Ղոթուր) լեռներով կանջատուի։

Հարաւէն պարսկական Քիւրդիստան կամ Սակրզ գաւառը և Խամսա նահանգն։

Արեւելքէն Գիլան նահանգը։

Ատրպատականի ամենամեծ երկայնութիւնը մերձ 420 հազարամեթր է, որ կը ձգուի հիւսիսէն հարաւ և ամենամեծ լայնութիւնը 370 հազարամեթր, որ կը տարածուի արեւելքէն արեւմուտք և ամբողջ տարածութիւնը, մօտաւոր հաշուով շուրջ 100,000 քառակուսի հազարամեթր է։ Այս նահանգը, որ կը պարունակէ Ուրմիոյ լճի ամբողջ աւազանը, խիստ լեռնային մի երկիր է։ Լեռներէն ոմանք շատ բարձր են և մշտական ձիւնը երբեմն չի պակսեր, ինչպէս են Սաւալան լեռը, որ մերձ 14,814 ոտք բարձրութիւն ունի և Թաւրիզի արեւելեան, հիւսիսային արեւելեան կողմը և սոյն քաղաքէն Արդաբիլ տանող ճամբին վերայ է։ Յիշատակենք Սոհուն լեռներն, որք Թաւրիզի հարաւային արեւելեան, հարաւային կողմն են։ Կարելի է սոնց վրայ աւելցնել նաև Փոքր և Մեծ Մասիսները, որք սոյն նահանգի արեւմտեան հիւսիսային ծայրը կիյնան և դայն մասամբ իւիք կը բաժնեն Թուրքիայէն ու Ռուսիայէն։

Երկրի մէկ մեծ մասը թէև անբերրի, անապատ, սակայն բոլորովին անյարմար չէ մշակութեան, աշխատութեամբ ու խնամքով կրնայ փոխուիլ, մշակելի դառնալ։ Մնացորդ մասին մէջ բաւական տարածութեամբ խիստ բերրի հողեր կան, ի մասնաւորի Ուրմիոյ դաշտին մէջ և Արաքսի բերանին մօտերն ևս և Կզլէօզանի նախավտակների և Ղզաթի ու Թաթաքլի գետերի եզրերի վերայ։

Բերքերը բազմաթիւ են և բազմատեսակ, որոնց մէջ գլխաւորներն են՝ ցորեն, գարի, բրինձ և այլ ընդեղէններ։

Ուրմիոյ լիճը (նախնեաց Կապուտան ծով), կը գտնուի նահանգի արեւմտեան հիւսիսային կողմը և Թաւրիզի արեւմտեան և արեւմտեան հարաւային կողմը, անկանոն ձեւով հիւսիսէ հարաւ կերկարի. ամենամեծ երկայնութիւնը մերձ 130 և ամենամեծ լայնութիւնը 38 հազարամեթր է։ Այս լիճը ծովի մակերեւոյթէն 4100 ոտք բարձր դիրք ունի և հաւանաբար երկրի երեսը գտնուած աղի ջրերի մէջ ամենաադին է։ Ջուրն մերձ 100-ին 22 աղ կը պարունակէ և ամենևին ձուկ չի գտնուեր մէջը։ Լճեզրն ընդհանրապէս զառիվար լինելով, միայն երեք կամ չորս տեղ կան, ուր նաւեր կրնան ցամաքին մօտենալ։ Այս նաւահանգիստներին մէջ, եթէ այսպէս հնարաւոր է կոչել, գլխաւորներն են Ղորմէխանէ, որ Ուրմիոյ արեւելեան կողմը, Ուրմիա քաղաքէն 18 կիլոմեթրի վրայ է և Ռահմանլու, որ լճի արեւելեան կողմն է։ Լճի վերայ միայն չորս փոքր նաւեր կան, տափակ յատակով։

Ատրպատականի կլիման ընդհանրապէս բարեխառն ու հաճելի է, թէև տեղ-տեղ ամառը խիստ տաք և ձմեռը դառնապէս ցուրտ է, սակայն ամէնքը միատեղ առնելով, կլիման առողջաբար կը համարուի։

Նահանգի բնիկների վերայ հետագայ ներազգութիւնների և արտազգութիւնների պատճառով ուրիշ ազգութիւններ ևս աւելցան։

Արդի բնակիչներն են գլխաւորաբար Թուրքերն կամ Թրքական ցեղերն), քիւրդերն և փոքր թիւով հայերն ու ա-*

*) Թուրք ցեղերի առաջին երեւումն ի Պարսկաստան կը թի եօթներորդ դարի սկիզբներն տեղի ունեցած է։ Խազար կոչուած ցեղ մը իր Զուբիլ անունով գլխաւորի հրամանի տակ Վոլգայի դաւտերէն ելնելով, Վր-

սորիներն։

Ինչպէս աշխատութեանս սկիզբն ըսեցաւ, Պարսկաստանի մէջ վիճակագրութիւն չլինելով, անկարելի է բնակչութիւնը ճիշտ կամ մերձաւորագոյն կեպով իմանալ։ Սակայն, առած տեղեկութեանց վերայ հիմնելով, որչափ որ ինձ կարելի է եղեր գաղափար մը կազմել, Ատրպատականի բնակչութեան թիւը մէկ միլիոնէ աւելի է, հաւանական համեմատութեամբ.—

Թուրք (Թրքական ցեղեր)	900,000
Քիւրդ	250,000
Հայ	40,000
Քաղդէա-ասորիներ (Սիրիանի, Քելդանի, Նեստորականք և Եաղուբիք)	46,400
Ուրիշ ցեղեր, անորոշ բարբառով և անյայտ ծագումով, մերձ	138,600
Հրեայ	5,000
Գումար՝	1,380,000

Այս նահանգի, որ մերձաւորապէս 4,000 դիւղ ունի, քաղաքներն ու քաղաքագիւղերն հետևեալներն են իւրեանց բնակչութեամբ.

Թաւրիզ	250,000
Ուրմիա	50,000
Խոյ	35,000
Մարաղա	30,000
Արդաբիլ	22,000
Բինաբ	10,000
Սովուջբուլաղ	9,000
Ահար	7,000
Դիլման	4,000
Մակու	4,000
Մարանդ	6,000
Դուխարղան	3,000
Քեօհնաշհար (Սալմաստի մէջ)	3,000
Գովդան	2,600
Միանդուաբ	3,000
Միանէ	2,000
Սարաբ	2,500
Սուլդուզ	2,500
Սարդաշթ	2,000
Սայինղալէ	1,500
Բարի	1,500
Աստարա	1,500

ռասանի մէջ Հերակլ թագաւորին միացաւ եւ անոր հետ Պարսկաստան, Ատրպատական մտնելով, մշական ոտնատեղ մը ձեռք բերաւ։ Այդ ժամանակներէ ի վեր զանազան ցեղեր, իբր ընտանիքներ, զօրքեր, Ռուսոսի անապատներէն եւ Վոլգայի եզրերէն երջանաբար երկիրն թափուեցան։ Եսէն Ղազնիի, Սամանի եւ Սելջուկ ցեղերն, որոնցմէ ետքը մոնղոլներն Չենգիզի, թուրքերն՝ Թէյմուրի գլխաւորութեամբ, եւ ի վերջոյ էօզբէքներն մտնելով, հաստատեցան այս երկրի մէջ։ Ատրպատականի արդի թուրքերը այս զանազան ու տարբեր ծագումով ցեղերի խառնուրդներն ու սերունդներն են, որոնց համեմատութիւնը կարելի չէ ստուգել։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ, ԳԱՒԱՌՆԵՐԸ, ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ԳԻՒՂԵՐԸ

ԹԱՒՐԻԶ

Քաղաքի մը պատմութիւնը նոյն քաղաքն ու շրջականերն բնակող ժողովուրդի պատմութիւնն է։

Քաղաքի աճումն ու զարգացումը, բնակիչների զարգացման ու յառաջադիմութեան ստոյգ նշաններն են, և անկումն ու աւերումն՝ անոնց նւազման ու թշւառութեան հետեւանքն։ Հայաբնակ քաղաքների և ըստ պահանջման ու կարեւորութեան գիւղերի պատմութիւնն և նկարագրութիւնն ընելով, ըստ իս, անոնց բնակիչների հաւաքական պատմութիւնն անել կը նշանակէ։ Անոնց վիճակը քաղաքական դէպքերի ազդեցութեան տակ, ստէպ-ստէպ մեծ փոփոխութիւնների ենթակայ եղեր է, երբեմն ամէն կողմերէ հաւաքելով՝ շատցեր, բազմացեր է, երբեմն ամէն դի ցրւելով՝ նւազեր, քիչցեր են։ Մերթ անդորը ու ապահով վիճակ ունենալով՝ յառաջադիմեր, հարստացեր, մերթ տառապանաց ու հարստահարութեանց ենթարկւելով՝ յետադիմեր ու աղքատացեր են։

Քիչ քաղաքներ կան, որ ասոր չափ քաղաքական մեծ փոփոխութեանց և աւելի քչեր, որ ասոր չափ փոփոխակի յաջողութեանց ու ձախորդութեանց ենթակայ եղած լինեն։ Թաւրիզ կամ Թարվէզ ըստ արդի հասարակ գործածութեան, Թօրի՝ ըստ Ֆրանսիացւոց, Թարբիզ՝ ըստ տեղացի աղճատախօս թուրքաց, Թաբրիզ՝ ըստ պարսկաց, որ կը նշանակէ ջերմ թափող, ջերմնափարատ, կամ ըստ այլոց քիչ մը ուղղագրութեան փոփոխմամբ՝ թաբ կամ թաբրիզ— տապ, ջերմ տարածող*) արդի Ատրպատական նահանգի գլխաւոր քաղաքն է և նոյնը եղեր է խիստ քիչ բացառութեամբ, շատ դարերէ ի վեր։

*) Աւելի առաջ երթալով կարելի է ըսել՝ որ Թաբրիզ՝ Դավրէժի տառադարձն է։ Արդի պարսկերէնը շատ անգամ հինի Ի եւ Վ գրերն Բ-ի փոխեր է։

Սրբ Հէնրի Ռոլինսըն կը կարծէ, որ այս քաղաքը հին ժամանակները Վառա կամ Վիռա կը կոչէր, որմէ և Վառինա, որ Վենդիդայի մէջ յիշւած է, հաւանաբար Ատրպատականի նախկին անունը եղած լինի։ Կը կարծւի ևս, որ սա նոյնը եղած լինի Պտղոմէոսէ յիշւած Թավրեսի հետ[1])։

Թաւրիզ մնաց պարսկաց ձեռքը մինչև արաբացւոց Պարսկաստանին և Ատրպատականին տիրելը եօթներորդ դարի կէսին մօտերը։

Մերձաւորապէս 170 տարիէ ետքը՝ Հիջրէթի 199-ին (814 թ. Ք. ծ. յ.) Թաւրիզ գլխովին մի նորոգութիւն ունեցաւ Հարուն էլ Ռաշիդ ամիրապետի Զուբէյդա կնոջ ձեռամբ։

Այս նորոգութիւնը պարսիկ աշխարհագիրներէն ու պատմագիրներէն ոմանք նորոգ շինութեան և նախնական հիմնարկութեան կը փոխեն։ «Զինեթ իլ Մէջալիս»ի մէջ կը կարդանք հետեւեալը. «Զուբէյդա Ատրպատականին մէջ ճամբորդած ատեն սաստիկ կը ջերմէր. օր մը աղբիւրի մը քով հասնելով, իջևանեցաւ այնտեղ։ Այդ վայրի օդն խիստ առողջարար և ջուրն խիստ բարեհամ գտնելով, քանի մը օր մնաց. ջերմը հետզհետէ նւազելով՝ քիչ օրեր ետքը բոլորովին փարատեցաւ։ Անմիջապէս իջևանած տեղը քաղաք մը շինել տուաւ և անունը Թաբրիզ[2])», այսինքն ջերմաթափ դրաւ։

1) Հեղինակն օգտւելով Չամչեանի պատմութիւնից, այս էջերում ներկայացրել է նաեւ հայ մատենագիրներից քաղւածքներ եւ Թաւրիզ քաղաքի անւանն (Դավրէժ) առնչւող հայկական աւանդական բացատրութիւնը։ Այդ հատւածը յապաւեցինք, նկատի ունենալով, որ այն լաւածանօթ է ընթերցողներին, մեր աւանդական պատմութեան գծով։ Ծ. խ.

2) Եւրոպայի ճամբորդներէն ու աշխարհագիրներէն ոմանք անտեղեակ հայոց պատմութեանը, պարսիկ աշխարհագիրներէ առնելով Թաւրիզի հիմնարկութիւնը, սոյն դէպքին կը տան։ Սակայն, այս յայտնի մի սխալ է, քանզի, ինչպէս յայտնի է, Թաւրիզ Զուբէյդայէն առաջ երեւելի մի քաղաք էր։

Վաթսուն և եօթը տարի ետքը Թաւրիզի մէկ մասը երկրաշարժէ կործանեցաւ և բաւականին շատ մարդիկ զոհւեցան։ Ասոր պատմութիւնն հետեւեալ կերպով կը տրւի «Զինէթ իւլ Մաջալիսի մէջ, որն Ղազի Թօքն էդ Դին Զուլֆի Մէջմէէ Աբբաս Մէմալիք գրքէն առնւած է, ուր կրսէ, թէ հիջրէթի 268 (881 Ք. յ.) Թաւականին և Աբբասեանների փոխանորդութեան ժամանակ, Թաւրիզ մեծ երկրաշարժ մը եղաւ։ Աբութահէր շիրազցի աստղագէտն, որ այն ատեն կը գտնւէր Թաւրիզ, կանխաւ ըսաւ, թէ այդ իրիկուն քաղաքն երկրաշարժէն պիտի կործանի և տեղի կառավարիչները կարելի եղածին չափ բռնի ժողովուրդը դաշտ հանեցին, որ փլատակների տակ չը մնայ*)։

Իրօք, զուշակած իրիկունը շարժ եղաւ և քաղաքը մնացողներէն 4000 հոգի սպանւեցան։

Քիչ մը ետքը, նոյն աղբիւրը կը յաւելու, թէ «Եզդի ցեղի գլխաւորներէն մէկն, որ Աբբասեանների հաստատւելէն առաջ Թաւրիզի կառավարիչն էր, վերը յիշած աստղագէտի ընտրութեամբ Կարիճ աստղատան բախտին տակ Թաւրիզի հիմնարկութեան սկսաւ, որպէսզի այնուհետև ալ երկրաշարժէ այս քաղաքին ձախորդութիւն չհասնէ, բացի հեղեղէ»։

Դարձեալ, ըստ նոյն աղբիւրի, Թաւրիզի պարսպի շուրջը վեց հազար քայլ է եղեր և 10 դարպաս ունեցեր է։

Այս պատմութեան նայելով, այն ատենւան բնակիչների թիւը 100,000-ի մօտ համրանք մը եղած պէտք է համարել, որպէսզի ժողովրդի մեծագոյն մասը քաղաքէն ելլելէ ետքը մնացողներէն դարձեալ 4000 հոգի սպանւի։

Շարժէ սպանւողների թիւն ուրիշ ապացոյց մը կրնայ լինել, որ Թաւրիզ Զուբէյդայէ առաջ երեւելի քաղաք մը եղած է, այլապէս խիստ անհաւանական է, որ հարիւր կամ երկու հարիւր տարւան մէջ նորոգ հիմնւած քաղաք մը այնչափ մեծանայ, որ իր բնակիչներէ մեծագոյն մասն դուրս ելլելէ ետքը մնացողներէն այնչափ մեծ թիւ ևս փլատակների տակ մնալով սպանւի։ Նամանաւանդ երբ յիշւի, որ այն ատենւան տներն առհասարակ միայարկ էին, մեծ պարտէզներով։

Մերձ երկու դար ետքը, հիջրէթի 434 թ. (1042 թ. Ք. յ.) Սաֆար ամսի 14-ին, ուրիշ երկրաշարժ մը, աւելի սաստիկ քան առաջինը, մէկ գիշերւան մէջ ամբողջ քաղաքը կործանեց, և կրսւի թէ մինչև 40,000 հոգիք իրենց կեանքը կորսընցուցին։

Սէլջուկեանների զօրանալով, անոնց մէջէն Տուղրիլ բէկ հետզհետէ Պարսկաստանի մասերը գրաւելով, Ատրպատականին ևս տիրեց հիջրէթի 446-ին, (1053 թ. Ք. յ.) և տարի մը ետքը նախ իր զօրքը և ապա ինքն անձամբ Հայաստան արշաւեց և մինչև եօթն տարի այս երկիրն ոտնակոխ ընելով, բիւրաւոր հայեր գերեց և Պարսկաստան քշեց, և հաւանաբար, անոնց մեծագոյն մասն Ատրպատական թողեցաւ։

Ալփասլան, Տուղրիլի յաջորդը, Պարսկաստան շատ տեղեր նորոգութիւն ըրաւ և Թաւրիզը մեծցուց։ 1064-ին Հայաստան մտաւ, Անին առաւ, կործանեց և բազմաթիւ գերիներ տարաւ հիւսիսային Պարսկաստան (Ատրպատական) բնակեցուց։

Ասոր յաջորդեց Մելիքշահ, 1072-ին, և հօր նման 1086—1093 թ. թ. անդադար Հայաստան արշաւելով՝ հազարաւոր գերիներ Պարսկաստան տարաւ։ Մելիքշահէն ետքը Սելջուկեան տէրութիւնն սկսաւ նւազիլ, սակայն Ատրպատական մինչ կէս դար ևս անոր յաջորդների ձեռքի տակ մնաց։

Ասոնցմէ ետքը Ատրպատականին տիրեցին Աթաբէկներն կամ Էօզբէկ Թաթարներն, մինչ հիջրէթի 590 թ. (1193 թ. Ք. յ.)։ Զինէթ իւլ Մաջալիսին մէջ պատմւածին նայելով, սելջուկեանների և Աթաբէկների ատեն Ատրպատականի տւած հարկը տէրութեան՝ 680,000 թումանի մօտ գումար մը եղեր է։ Այս գումարն, ի նկատի առնելով այն ժամանակւայ թումանի ու-

*) Համդուլլահ այս երկրաշարժի թւականը Հիջրէթի 244-ին (858—9 Ք. ծ. յ.) կը դնէ։

նեցած արժէքը, խիստ մեծ դումար է, որով չափազանցութեան կասկած կը տայ։ Այսուհանդերձ, ասկէ կրնանք հետեւցնել, որ այն ատեններն Ատրպատական այժմէն խիստ աւելի բազմամարդ ու ծաղկեալ վիճակի մէջ եղեր է։

Այն ատեններն այս նահանգին և ի մասնաւորի Թաւրիզի մէջ բազմաթիւ հայեր եղած պիտի լինեն։ 13-րդ դարի սկիզբներն մոնղոլեան ցեղը Զենգիզ խան հետզհետէ զօրանալով, շատ երկրների տիրելէ ետքը, Ատրպատականն ևս առաւ, հաւանաբար, 1219—1220 թ. թ. ատեններն և իր կատաղի ու արիւնռուշտ բնաւորութեան համեմատ սարսափելի կոտորածներ արաւ։ Բայց ըստ «Գեանջ Դանէշ»ի հեղինակին, Թաւրիզեցիք շատ ապրանք և ոսկի տալով, իրենց քաղաքը կոտորածէ ու կողոպուտէ ազատեցին։ Անոր յաջորդեց 1226 թ. իր որդին Ուխաթա խան, որ աւելի քիչ արիւնռուշտ ու կատաղի լինելով, հօր ըրած աւերներն քիչ-շատ նորոգեց և իր Զարմաղան զօրավարն Ատրպատական ղրկեց Սուլթան Ջալալէդդին Խարազմ շահին դէմ, որ Զենգիզի մահէն ետքը Ատրպատական դարձեր ու անոր տիրեր էր։

Զարմաղան եկաւ, Ջալալէդդինին չարաչար պարտութեան մատնեց և 1233 թ. Հայաստան արշաւեց։

Ուխաթա խանին յաջորդեց 4 տարի ետքը Կիսակ խան, որ նէսթորանի (այսինքն քրիստոնէական) կրօնքը կը դաւանէր և որի թագաւորութիւնը միայն մէկ տարի տևեց։

Անոր յաջորդեց Մանգու խանն։ Ասիկա իր եղբայրն՝ Հուլաքու խան Պարսկաստանին ու Հայաստանին թագաւոր անուանելով, Ատրպատական ղրկեց։

Մանգու խանէն ետքը Հուլաքու խանը*) հիջրէթի 656 թ.

*) Հուլաքու բոլոր ամանց քրիստոնեայ էր կրօնքով։ Այս տարակուսելի է, բայց քրիստոնէաբար լինելուն վերայ տարակոյս չկայ։ Սակայն իր թագուհին, Դողուշ խաթուն քրիստոնեայ էր եւ սոյն կրօնին մէջ ալ մեռաւ։

մոնղոլեան տէրութեան գահը նստաւ և մեր թուականի 1254-ին, բոլոր Հայաստանը նուաճեց և Թաւրիզի մէջ շատ նորոգութիւններ ըրաւ։

Անոր յաջորդեցին Աբաղա խանը, Հուլաքու խանի որդին, որ մահմեդականութիւն ընդունելով, կոչեցաւ Սուլթան Ահմատ։ Արղուն՝ Աբաղա խանի որդին, Քէյխաթու՝ 1291-ին, և ի վերջոյ Ղազան խան՝ 1295-ին[1])։ Վերջինս իր աթոռը Թաւրիզ փոխադրեց և քաղաքի արևմտեան կողմը տեղ մը, որ Շամ կը կոչէր, շատ մը հոյակապ շինութիւններ կանգնեցուց իր բնակութեան համար, որոնք մէկ տեղ գալով, քաղաք մը կը կազմէին։ Այս Շաբ, Շանբ կամ Շամ Ղազան կոչեցաւ և այժմ միայն վերջին անունը մնացեր է առանց շինութեանց։

Ղազան խան Թաւրիզի մէջ ևս շատ շինութիւններ ըրաւ, և քաղաքի չորս դին պատնէշ մը սկսաւ քաշել տալ, որ բոլոր քաղաքն իր ամէն այգիներով պարսպի մէջ լինէին, ասոր շուրջը 25,000 քայլ էր, սակայն իր մահով այս գործը կիսակատար մնաց։

Թաւրիզ, որ Սելջուկեանների և Աթաբէկների ատենը շատ երևելի քաղաք էր, մոնղոլների ժամանակ, Հուլաքու խանի թագաւորութիւնէն սկսեալ, աւելի մեծ կարևորութիւն ըստացաւ և Ատրպատականին մէջ Մարաղայէն ետքը գլխաւոր քաղաքն եղաւ։ Ղազան խանի աթոռը հոն փոխադրելով մոնղոլական իշխանութեան տակ եղող բոլոր երկրների մայրաքաղաքը դարձաւ։

Այս ատեններն Թաւրիզ վերին աստիճանի պայծառութեան հասեր և իր կարևորութեամբ զարգացման և վաճառականութեան գենիթին էր։ Բազմամարդութեան կողմանէ գուցէ կէս միլիոնը կանցնէր[2])։ Կը հաւատան, որ այս ժամանակ իր

1) Ըստ Մալքոլմի՝ 1294-ին։

2) Շարդէն կրսէ, որ Միրզա Թահիրէն լսած է, թէ Ղազան խանի ժամանակ ետ աւելի բազմամարդ ու ծաղկած եղեր է, քան իր ակնարկած ժամանակը (1665—77-ի մէջերը)։

տարածութիւնն կը ձգէր Այնալի կամ Էյնալ-Զէյնալ լեռնէն մինչև Զուրանդաղ կոչուած լեռն, որ առաջինի դէմ առ դէմը կիյնայ և Աջի կոչուած գետէն մինչ Բարենջ գիւղն։

Ղազան խան Խորասան գնացած ատենը Ղազինի մօտ Ֆիսկիլդարային մէջ մեռաւ. դիակը Թաւրիզ բերելով, թաղուեցաւ Շամ Ղազան 1302-ին (Ք. ծ. յ.)։Ըստ Զինէթ իլ Մաջալիսի՝ այս միապետի ատենը Թաւրիզի արքունի տուրքն 870 թումանն հինգ հարիւր դինար խաֆի էր*)։

Ղազան խանին յաջորդեց Էլջայթու Սուլթան Խոդաբանդէ Մահմմադ իբն Արղունխան և 1303-ին Թաւրիզ թագաւորութեան գահը նստաւ։Երկու տարի ետքը Սուլթանիէ քաղաքը նորոգեց, արքունիքը հոն փոխադրեց և մեռաւ 1319-ին։

Մինչև Խոդաբանդէի թագաւորելը մոնղոլեան թագաւորներէն ոմանք մահմեդական չլինելով, ոմանք այդ կրօնին անտարբեր գտնուելով, և ոմանք հակամէտ լինելով առհասարակ դէպի քրիստոնեաները, մանաւանդ հայերը, որք Հայաստանի մէջ աւելի բռնութեան ենթակայ լինելով կը մօտենային թագաւորութեան կենտրոնին, ուր բռնութիւնք և հարբստահարութիւնք այնչափ սաստիկ չէին կրնար լինել, և այսպէս, Ատրպատականի մէջ հայերը շատ բազմացեր էին։

Ասոնք ոչ միայն բաղդատմամբ ուրիշ տեղերին շատ հանգիստ կապրէին, այլ և յաջողակ էին և օրէ օր կը յառաջդիմէին։ Սակայն, Խոդաբանդէ գահ բարձրանալէ քիչ ետքը սաստիկ հալածանք բարձրացուց թէ քրիստոնէից և թէ հրեաների դէմ։ Բռնի կրօնափոխութիւն հրամայեց, հազարաւոր մարդիկ կրօնքի պատճառով սպանել տուաւ, քրիստոնեաների և հրեաների վերայ ծանր տուրք դրաւ, և գրեթէ Պարսկաստանին մէջ քրիստոնէութիւն ու հրէութիւն ջնջեց։ Հայերն ասոր ա-

*) Ըստ Մ. Դասբիէ դը Մեյնասի եւ գնդապետ Փրայսի՝ մէկ դինարն արժէ 7 եւ կէս—9 Ֆրանկ, որով 870 թումանը 65,250,000 է մինչեւ 78,300,000 Ֆրանկ կը լինի։

տեն սկսան ցրիլ ու նուազիլ։ Թաւրիզ, որ արքունիքի Սուլթանիէ փոխադրուելովը մեծ անշքութիւն ու փոփոխութիւն կրեր էր, քրիստոնեաների ցրումովն սկսաւ իյնալ ու աւերուիլ։

Խոդաբանդէի յաջորդը՝ Սուլթան Աբու Սէէդ խան, որ Բրհադուր կոչուեցաւ, ձմեռը Բաղդադ կը նստէր, իսկ ամառը՝ Սուլթանիէ։ Սա իր աղջիկն իր հրամանատարներէն մէկին տալով, Ատրպատականին կուսակալ անուանեց ու Թաւրիզ ղրկեց։

Աբու Սէյէդէ ետքը մոնղոլական տէրութիւնը խիստ տրկարացաւ։ Էմիրներն իրենց կառավարած երկրներին սկսան ինքնագլուխ տիրել և ուզած թագաւորազնը գահի վերայ նստեցնել և չուզած ատենը վար առնելով՝ ուրիշ մէկն անոր տեղ թագաւորեցնել։

Այսպէս, մոնղոլեան միապետութիւնը շատ մը թագաւորութիւնների ու հրամանատարութիւնների բաժանուեցաւ, որով և երկրին մէջ մեծ շփոթութիւն ընկաւ։ Քիչ ատենի մէջ Թաւրիզ շատ մը թագաւորների ու հրամանատարների ձեռքէն անցաւ։

Կը պատմի, որ Հիջրէթի 771-ին (1368 թ. Ք. յ.) Իլխանեան էմիր Շէյխ Օվէյսի որդի Սուլթան Հիւսէյն Ատրպատականի թագաւորն էր։ Ժանդախտը Թաւրիզ երեան ելաւ և երեք հարիւր հազար հոգի սպանեց*)։

Սուլթան Ահմադ, որ Ղփչաղի կողմերը կը տիրէր, 100,000 հոգով Ատրպատականի վերայ յարձակեցաւ, Թաւրիզի մէջ վրէժն առաւ և ըստ Զինէթ իլ Մաջալիսի՝ 8 օր, գիշեր-ցերեկ, կոտորած ըրաւ և քաղաքը կողոպտեց։

Բնակչաց կրածները գրիչ անկարող է նկարագրել։ Սա հիջրէթի 784 թ. (1381 թ. Ք. յ.) իր եղբայր Սուլթան Հիւսէյնը բռնելով, սպանեց և ինքն անոր տեղ թագաւորեց Ատրբպատականի վերայ։ Այս ատենները Լէնկ Թէմուր հետզհե-

*) Այս թիւն որչափ չափազանց ալ լինի, կը ցուցնէ որ այս հիւանդութեան բրած կոտորածը սարսափելի է եղեր։

տէ զօրանալով և իր դրացի պետերին ու թագաւորներին յաղթելով՝ 1384-ին (հիջրէթի 788 թ.) Ատրպատական մտաւ։ Սուլթան Ահմադ յաղթելով Լէնկթէմուրի հրամանատարներէն, փախաւ Բաղդադ։

Լէնկթէմուր եկաւ Շամ Ղազան, որն դեռ կանգուն էր, ի-ջևանեցաւ, ամառն հոն և Թաւրիզի շրջականերն անցուց, ի վերջոյ իր երրորդ որդին Զէլալէդդին էմիրան Շահն Ատրպատականի և ուրիշ երկրների վերայ կուսակալ դնելով, ինքը Ղիշլաղի կողմերը գնաց։

Լէնկթէմուրի մահէն ետքը, 1405-ին, Իսուֆ կամ Ղարա Իսուֆ Թուրքման, որ Լէնկթէմուրի վախէն Եգիպտոս փախեր և հոն բանտարկուած էր, բանտէն փախաւ և իր կողմնակիցներն հաւաքելով, շատ մը յաջողութիւններէ ետքը Ատրպատականին մօտեցաւ։ Նախ Նախիջևանի քով և երկրորդ անգամ Թաւրիզի մօտերն 1408-ին (Հիջրէթի 813 թ.) էմիրան Շահին չարաչար յաղթելով, զայն բռնեց, սպանեց, իր որդին Փիրբուղաղն Ատրպատականին թագաւոր անուանելով, Թաւրիզի դահը նստեցուց և ինքը Բաղդադի կողմերը գնաց։

Շահրուխը (Լէնկթէմուրի որդին և յաջորդը) 1418-ի (հիջրէթի 823 թ.) ատենները Ղարա Իսուֆի վերայ եկաւ։ Մարտը տեղի ունեցաւ Սուլթանիէի մօտ, ուր վերջինս յաղթուելով՝ սպանուեցաւ։

Իսքանդար, Ղարա Իսուֆի որդին ևս, որ Շահրուխէն յաղթուելով, Ասորեստան*) փախեր էր, վերջինիս մեկնելէն ետքը Ատրպատական մտաւ և տիրեց Թաւրիզին։ Շահրուխ երկրորդ անգամ Ատրպատական մտաւ, Իսքանդարին յաղթեց և զայն փախցուց, սակայն իր մեկնելէն ետքը Իսքանդար նորէն դարձաւ և Թաւրիզն առաւ։ Շահրուխ երրորդ անգամ Ատրպատական եկաւ, Իսքանդարին փախցուց և որովհետև ասոր եղբայրը՝ Միրզա Զըհանշահ, իրեն հնազանդութիւն կը ցուցնէր, զայն

*) Պիտի հասկանալ՝ Միջագետք։ Ծ. խ.

1433-ին Ատրպատականին թագաւոր ըրաւ և ինքն նորէն Խորասան վերադարձաւ։

Իսքանդար դարձեալ յարձակեցաւ Ատրպատականի վերայ, բայց այս անգամ Զհանշահէն յաղթուելով՝ փախաւ Ալընջաղ բերդը, ուր իր որդու ձեռքով սպանուեցաւ։ Զհանշահ 1438-ին Հայաստան և Վրաստան արշաւեց և բազմաթիւ գերիներ բերաւ Ատրպատական։

1460—61-ի ատեններն Աղթամարի Զաքարիա կաթողիկոսն այս միապետի մօտ եկաւ և լաւ ընդունելութիւն գտնելով, Էջմիածնի կաթողիկոսութիւնը խնդրեց և ստացաւ։ Այս թագաւորը Թաւրիզի մէջ երևելի մզկիթ մը շինեց, որ իր անուամբ Զհանշահ կոչուեցաւ և այժմ միայն աւերակ մնացորդներն կան, որ Գէօյ մէջիդ կանուանի։

Զհանշահ 1463-ին (870 հիջրեթի) Ուզուն Հասանից սպանուելով, որդին Հիւսէյն Ալի հօր տեղը նստաւ Ուզուն Հասանի օգնութեամբ, բայց երբ սա երեք տարիէ ետքը մեռաւ, Ուզուն Հասան յարձակեցաւ Ատրպատականի վերայ և տիրեց անոր։ Այս թագաւորն ևս Վրաստան արշաւելով, այնտեղէն շատ գերիներ բերաւ։

Ասոր յաջորդն՝ Եաղուբ ևս Տփղիսի շրջանէն շատ քրիստոնեաներ գերի բերաւ Ատրպատական։

Հայր Ղ. Ալիշանի «Այրարատ»ին*) մէջ բերուած յիշատակագիր մը կըսէ. «Այս Եաղուբի ժամանակ Սոֆի կոչուած ցե-

*) Հ. Ղ. Ալիշանի «Այրարատ» աշխատութիւնը տեղումս գտնել չկարողանալու պատճառով դժուարացանք նշել, թէ այս մէջբերումը որտեղ է լրանում։ Սկզբում չակերտ դրուած է, իսկ որևէ պարբերութեան վերջում չակերտ նշանակուած չէ։ Ուստի բնագրի 2—3 էջը բողնցինք նոյնութեամբ, միայն փոփոխութեան ենթարկելով յատուկ անունների տառադարձութիւնը, նախորդ էջերում յիշատակուած նոյն անունների գրութեանց ձևին համապատասխանեցնելու նկատումով։

Ծ. խ.

ղէն Իսմայիլ իշխանը հետզհետէ զօրանալով, Շիրվանին տիրեց։ Ատրպատականի թագաւորն այս լսելով՝ անոր դէմ պատերազմի ելաւ և Նախիջևանի մօտ Իսմայիլէն շարաշար յաղթուելով, փախաւ։

Այս պարտութեամբ Ուզուն Հիւսէյնի հիմնած Ադ-ղոյինլու թագաւորութիւնը վերջացաւ։ Իսմայէլ եկաւ Թաւրիզ, 1500-ին թագաւորական գահը ելնելով, Շահ Իսմայիլ անունն առաւ, և Շիէ դաւանանքն որ մինչ այն ատեն գաղտնի էր, իր տէրութեան կրօնն ըրաւ։ Ասկէ ետքը աւելի զօրանալով, գրեթէ ամբողջ Պարսկաստանին տիրեց։

Սուլթան Սէլիմ օսմանեան միապետը 1513-ին Պարսկաստանի վերայ յարձակեցաւ։ Խոյի և Բայազէդի մէջ տեղը եղող Չալդիրան կոչուած դաշտը սոսկալի մարտէ մը ետքը Շահ Իսմայիլին յաղթելով, եկաւ Թաւրիզն առաւ. քաղաքի արհեստագէտներէն ընտրելով մերձ 3,000 ընտանիք, որոնց մեծագոյն մասը հայեր էին, Կ. Պոլիս ղրկեց և քանի մը օր միայն մընալով, փութով իր մայրաքաղաքը վերադարձաւ։

Սէլիմի մեկնելէն ետքը Շահ Իսմայիլ եկաւ քաղաքին տիրեց։ Սուլթան Սուլէյման 1534-ին Շահ Թահմազի ձեռքէն Թաւրիզն առաւ և պահապան զօրք դնելով՝ դարձաւ Կ. Պոլիս։

Իւր մեկնելէն քիչ ետքը Թաւրիզի ժողովուրդն ոտքի ելաւ և յանկարծակի օսմանցիներու վերայ իյնալով, սարսափելի կոտորած մը ըրաւ և քաղաքին տիրեց։ Իբրահիմ փաշան Մեծն Սուլէյմանէ ղրկուելով, Թաւրիզն երկրորդ անգամ առաւ, մեծ բերդ մը շինել տուաւ, զայն 350 թնդանօթով և չորս հազար պահապան զինուորներով ամրացուց։

Սակայն, այս չարդիլեց ժողովուրդը նորէն ապստամբելէ։ Իբրահիմ նորէն օսմանեան զօրքով ղրկուեցաւ և 1548 ին քանի մը արիւնալից յարձակումներէ ետքը Թաւրիզը առաւ և իր կատաղի զօրաց կամայն թողաւ, որք բոլորովին թալանելէն ետքը, անպատմելի անգթութիւններ և ապիրատութիւններ գործեցին, Թահմազ թագաւորի պալատներն և ամենա-

երևելի շէնքերն հիմնայատակ կործանեցին և քաղաքն արիւնով, դիակով ու աւերակով լցուցին։

Այսուամենայնիւ 1546—1553 թուականներին շատ մը հայեր ջալալիներու ուած նեղութիւններէն և սովի պատճառով հետզհետէ փախչելով, եկան Ատրպատական և Թաւրիզ բնակեցան։ Շահ Թահմազ զօրք ժողովելով և 1550-ին Թաւրիզն առնելէն ետքը Վրաստան և Օսմանեան Հայաստան արշաւեց և ամբողջ տարի մը ամէն տեղ հրով և սրով աւերեց և հայերէն ու ուրիշ քրիստոնեաներէ գերի տարաւ Պարսկաստան։

Սուլթան Սուլէյման երրորդ անգամ Շահ Թահմազի վերայ եկաւ, բայց հաշտութիւն ընելով, վերադարձաւ։

Այս ատենները Շահ Թահմազ իր աթոռը Թաւրիզէն Ղազուին փոխադրեց։ Այսուամենայնիւ Թաւրիզ, հակառակ իր ձախորդութեանցն ու կրած թշուառութեանցը, քիչ ատենէ սկսաւ իր աւերակներէն բարձրանալ ու ծաղկիլ, այնպէս որ Սուլթան Մուրադի թագաւորութեան սկիզբներն այնչափ յառաջադիմեր էր, որ իր վերայ գրգռեց այս վեհապետի ցանկութիւնը։ Սուլթան Մուրադ, ըստ այլոց Մուսթաֆա փաշա, 1577-ին մեծ զօրքով Պարսկաստան մտաւ, Թաւրիզն առաւ և Ատրպատականէն 60,000ի չափ գլխաւորապէս հայ գերելով, Յունաստանի կողմերը ղրկեց։

Կերևի, որ քիչ ետքը պարսիկներն նորէն ետ առին Թաւրիզը, քանզի 1585-ին Օսման փաշան բազմաթիւ զօրքով, որոնց թիւն ըստ ոմանց 600,000ի կը բարձրանայ, Սուլթան Մուրադէն Թաւրիզ ղրկուեցաւ. սոյն հրամանատարն եկաւ քաղաքն առաւ և սկսաւ բերդ մը շինել տալ, որ մահին պատճառով կիսատ մնաց։ Զաֆար փաշա Օսմանին յաջորդեց, որի զօրքերն անպատմելի նեղութիւններ տուին բնակչաց։

Շահ Աբբասի թագաւորելովը 1585-ի (հիջրէթի 995 թ.) Պարսկաստան յառաջադիմութեան ու բարօրութեան շրջանին մէջ մտաւ։

Այս հանճարեղ միապետ իւր տէրութիւնն ամէն խոհե-

մութեամբ և ճարտարութեամբ կարգի դնելէ ետքը, 1600 թուականին աթոռը Ղազինէն Սպահան փոխադրեց։ 1603-ին Ալի փաշային՝ օսմանցւոց կողմէ դրուած կուսակալին յաղթելով, Թաւրիզն առաւ և օսմանցիներէն շատերին կոտորեց։ Նախարարներն ամէն տեղ սփռելով, պանդուխտներն, այսինքն վերջին տարիներն Ատրպատական եկած բնակողներն թէ հայ, թէ հրեայ և թէ ուրիշ զանազան ազգերն, ամէնքն հանել տալով, ղրկեց կէսն ի Ֆարահաբադ և կէսն Սպահան քաղաքն և շրջականերն։

Այս հայոց առաջին բռնի գաղթումն եղաւ Սպահան։ Նոյն տարին Հին Ջուղայէ և Հայաստանի ուրիշ գաւառներէ բռնի գաղթել տուած հայերի հետ Շահ Աբբաս Թաւրիզէն ևս հայեր հանել տալով՝ քշեց Նոր Ջուղա, ուր Թաւրիզեցիք միասին բնակելով, առանձին թաղ մը կազմեցին որ այժմ ևս կը կոչի «Թարվիզցւոց թաղ»։

Խալիլ Քափտան փաշան, — Սուլթան Ահմէդի հրամանով, — 1616-ին Շահ Աբբասի վրայ եկաւ, Թաւրիզն առաւ, քաղաքն աւերելէ, պարսիկներն թալլելէ և 30,000 հոգի այլ և այլ ազգերէ, առաւելապէս հայերէ, գերելէ ետքը, դարձաւ։

Շահ Աբբաս 1617-ին և 1618-ին դարձեալ օսմանցւոց երկիրն մտնելով, տեղերնից փախած, դարձած հայերն կրկին անգամ հանել կը տայ և Պարսկաստան կը ղրկէ, նաև Մակուէ, Խոյէ, Սալմաստ, Ուրմիայէ և ուրիշ կողմերէ Թաւրիզ եկած բնակած հայերն և Թաւրիզցիներէն շատերն բռնի հանել տալով և միացնելով Արդաբիլէ և Ատրպատականի զանազան կողմերէ գաղթել տուած հայերի հետ, ամէնքն ալ քշեց Սպահան։ Այս վեհապետ մինչ իր մահ (1629), 7—8 անգամ Թաւրիզէ և թէ Ատրպատականէ հայեր բռնի հանել տալով, գաղթեցուց Սպահան և անոր շրջականերն։

Այսպէս, հայերը, որք 13-րդ դարի առաջին քառորդէն ի վեր ներգաղթութեամբ կամ բռնի բերելով սկսեր էին հետզհետէ բազմանալ Ատրպատականի, նամանաւանդ Թաւրի-

զի մէջ, որպէս որ 15-րդ դարի մէջերն բաւականին մեծ բազմութիւն մը կը կազմէին։ Նահանգին մէջ, և որք Թաւրիզի մէջ, միայն 7000 տնէ աւելի կը հաշուէին, այնուհետև հետզհետէ բռնի արտագաղթութեամբ և զանազան պատճառների համար ցրուելով, Շահ Աբբասի ժամանակ բոլորովին նուազեցան և անկէ ետքը ևս շարունակ պակասեցան։

1641 թուականի Փետրուարի ուրբաթ օրը Թաւրիզ և շրջականերն մեծ դեղնաշարժ մը եղաւ։ Առաքել պատմագրի խօսքին նայելով՝ որ ժամանակակից էր և Թաւրիզեցի, մինչ երկու ամիս շարունակ, օրը 5—6 անգամ գետինը կը շարժէր։ Այս երերումն ընդհատաբար 6 ամիս տևեց և երբեմն-երբեմն գետինը կը դղրդէր։ Այս շարժէն 1200 հոգի մեռան, հին ատենէ կանգուն մնացած շինութիւններն, որոնց մէջ ևս հայոց և պարսկաց կանգնուածներն կործանուեցան, որոնց հետ ևս Շամ Ղազան, որմէ միայն պատերն մնացին։

Շրջականերն ալ աւելի վնաս կրեցին, ինչպէս Խոսրով Շահ, ամբողջ Իւսկի գաւառակն և Գուխարդան գիւղը։

Շարդէն առաջին անգամ 1665-ին Պարսկաստան հասաւ և 1677-ի վերջին այս երկրէն մեկնեցաւ։ Նա Թաւրիզ իջեւանեցաւ Ֆրանկիսկեան (քափուսին) կրօնաւորների վանատունը։ Այս անձի պատմածներն վստահելի ու ճշմարտանման պէտք է համարել, քանզի սա պարսկաց արքունեաց հետ յարաբերութիւն ունենալով, յաճախ անոնց հետ և մերթ առանձին Պարսկաստանի զանազան կողմերն ու շատ քաղաքներն այցելելով, շատ տարիներ անդ բնակելով, մանաւանդ իր հետաքրքիր բնաւորութեամբ ամէն բան քննելով, ամէն ինչի հետամուտ լինելով, երկրի դրութեանն ու վիճակին և բնակչաց սովորութեանց ու կենցաղավարութեանց վերայ խիստ ճիշտ տեղեկութիւններ ստացաւ։ Շարդէն հետևեալը կը պատմէ այն ատենուան Թաւրիզի վերայ.

«Ես կարծեմ, կարելի է ապահովապէս ըսել, որ Թաւ-

բիզի ժողովրդի թիւը 550,000-ի կը հասնէ[1]։ Քաղաքը բաժանուած է 9 թաղի և ժողովուրդը Հէյդար Նէմմէթուլլահի։ 15,000 տուն[2]) և 15,000 խանութ կայ։

Պարսկաստանի մէջ տներն անջատուած են կրպակներէ, որք մեծագոյն մասամբ երկար ու լայն փողոցների մէջ են և ծածկուած 40—50 ոտք բարձր կամարներով։ Այս շուկաները կամ բազարները քաղաքի սիրտը կը կազմեն. տները գրեթէ ամէնքն պարտէզ ունին։

Ես Թաւրիզի մէջ շատ պալատներ կամ հոյակապ տներ չեմ տեսեր, բայց պալատներն անչափ գեղեցիկ են։ Ասիոյ մէջ ոչ մէկ տեղ նմաններ չկան։ Աքանչելապէս գեղեցիկ է տեսնել անոնց լայնութիւնն ու ընդարձակ տարածութիւնը, զանոնք ծածկող սիրուն գմբէթներն ու կամարները, այն մեծ բազմութիւնը, որ ցերեկ ատեն անդ կը գտնուի, և ապրանաց այն մեծ քանակութիւնը, որոնցմով քաղաքը լեցուեր է։

Ամէնէն գեղեցիկն, ուր կը վաճառուին զոհարեղէններ, և ամէնէն թանկագին ապրանքներ, ութ անկիւնի է և խիստ ընդարձակ, այն Ղէյսարիէ կը կոչուի, այսինքն արքայական վաճառանոց։ Այն շինուեր է մերձ հիջրէթի 850-ին[3]) Հիւսէյն թագաւորէն, որ իր բնակութիւնը Թաւրիզ հաստատեր էր։ Հաստատակութեան համար սահմանուած տեղերն ոչ սակաւ գեղեցիկ են և ոչ ալ պակաս լեցուած։ 300 իշխանատուն (քարվանսարայ) կը հաշուեն, որոնց մէջ այնպիսի ընդարձակները կան, որ իւրա-

1) «Normant»ի հրատարակութիւնը (Փարիզ) 50,000 տպագրած է։

2) Այս թիւը տպագրական սխալ կերեւի, գուցէ 51,000 է, քանզի 15,000 տունով քաղաք մը, ոչ 55,000 բնակիչ եւ ոչ 15,000 խանութ եւ ոչ այնչափ մեծ տարածութիւն, ինչպէս նա յիշեր է, կրնայ ունենալ։

3) Շարդէն «Ղէյսարիէ»ի շինութեան թւականին մէջ կը սխալի, քանզի Ուզուն Հիւսէյն հիջրէթի 822-ին միայն յաջորդեց իր եղբօրը՝ Ջեհանգիրին։

քանչիւրի մէջ կրնան 300 անձ բնակիլ։ Ծխախոտի, սուրճի և մեկոնէ շինուած զօրեղ ըմպելիքների պանդոկներն ևս, և բաղնիքներն ու մզկիթները լաւ կը համապատասխանեն ուրիշ շինութիւնների մեծութեան ու շքեղութեան։ Մզկիթները թուով 250 են։ Երեք հիւանդանոց կայ[1]), որոնք բաւականին մաքուր և լաւ պահուած են։ Այժմ անդ չեն բնակիր, բայց օրն երկու անգամ այն ամէն անձանց, որք այնտեղ կերթան, կերակուր կը տան։

Քաղաքի հարաւակողմը, դուրսերը կը գտնուին այն վայրերը, որոնց մէջ կերևին պարսից վերջին թագաւորների պալատների աւերակները և արևելեան կողմը այն բերդինը, ուր, ըստ հայոց ըսածին, Խոսրով կը բնակէր և ուր նա կը պահէր Երուսաղէմէն բերած աւարը։ Թաւրիզի հրապարակն ամէնէն մեծ հրապարակն է, որ ես տեսեր եմ աշխարհի մէջ. այն մեծապէս կը գերազանցէ Սպահանինը։

Թուրքերն (օսմանցիները) շատ անգամ մարտի ձեւով անդ 30,000 մարդ շարեր են։ Իրիկունները այս հրապարակը կը լեցուի ստուար ժողովուրդով, որ կը գայ զուարճանալ տեսակ-տեսակ զբօսանքներով, ինչպէս ձեռնածութիւն, գոտեմարտութիւն և ուրիշ խաղեր։ Ցերեկն այն մի շուկայ է ամէն տեսակ պարէնի։ Քաղաքը լեցուեր է ոսկիի, մետաքսի և բամբակի արուեստագործութիւնով։ Պարսկաստանի ամենագեղեցիկ փակեղներն ու ապարօշներն ասոր կը հիւսուին։ Գլխաւոր վաճառականներէն շատերն ինձ վստահացուցեր են, որ տարին 6,000 հակ մետաքս կը ձեռագործեն։ Ամէն բան ժան է։ Հացի լիպրան սովորաբար միայն երկու լիառ[2]), իսկ մսինը 18 դնի

1) Այժմ Պարսկաստան միայն մէկ հիւանդանոց կայ եւ այն Թեհրանի մէջ է։

2) Մէկ լիառ = մօտաւորապէս 2 սանթիմի եւ մէկ դնի = 1/12 սուի կամ 5/12 սանթիմի, որով հացի այժմեան լիտրն արդի դրամով կարժէր մօտ 40 սանթիմ եւ միսինը 15 սու կամ 75 սանթիմ։

է։ Կը հաւաստեն, որ այս քաղաքի շրջականներն 60 տեսակ խաղող կաճի։ Պարսկաստանի մէջ տեղ մը չկայ, ուր մէկը կարենայ լաւագոյն կամ աւելի փափկութեամբ և աւելի ուժան կերպով ապրիլ, քան թէ ի Թաւրիզ»։

Այնուհետև, մինչ կէս դար, Թաւրիզ մեծ արկածների ենթակայ չեղաւ, սակայն այս միջոցին աւելի յետադիմեց, քան թէ յառաջադիմութիւն ըրաւ։

1721-ին գրեթէ բոլորովին կործանուեցաւ երկրաշարժէ մը, որով բնակչաց մէկ մեծ մասն իրենց կեանքը կորսնցուց։ Քրուչինկի սպանուողների թիւն 80,000ի կը հասցնէ, իսկ Բոյլէ՝ 25,000ի կիջեցնէ։

Երբ աֆղան Մահմուդը Սպահանն առաւ և Շահ Հիւսէյնը բռնեց, վերջինի որդին՝ Շահ Թահմազը Մազանդարանէ Թաւրիզ եկաւ։

Ոմանք հայերի վերայ զրպարտութիւն ըրին, թէ ասոնք Թշնամիները կը գրգռեն։ Շահը կուզէր իր բարկութիւնը հայոց վերայ թափել, բայց Յովհաննէս անունով հայ մը, որ Շահին շատ սիրելի էր, ընծաներով մեծամեծներին դիմելով, անոնց միջնորդութեամբ Շահի բարկութիւնն իջեցուց։

Դժբախտ քաղաքը հազիւ իր աւերակներէ սկսեր էր բարձրանալ, երբ Սուլթան Ահմադ Պարսկաստանի խառնակութենէն օգուտ քաղելով, զօրք ղրկեց, որք շատ տեղեր գրաւելէ ետքը, եկան Թաւրիզը պաշարեցին։ Պաշարումն երկարեցաւ, սաստիկ կռիւներ տեղի ունեցան, պաշարուողներէ 30,000 և պաշարողներէ 20,000 հոգի ինկան։ Ի վերջոյ, 1725 թ. Օգոստոս 3-ին քաղաքն առնուեցաւ։ Բնակչաց մէկ մեծ մասը փախուստով իր կեանքը ազատեց, մնացողներէն շատերն կոտորուեցան և շատերն ալ գերի տարուեցան, այնպէս որ քաղաքը գրեթէ առանց բնակչի մնաց։ Այս ատեններն է, Աֆշար Նադեր կամ Թահմազ Ղուլի, որ ետքէն դարձաւ Նադեր Շահ, հետզհետէ զօրանալով ու Պարսկաստան շատ տեղեր տիրելէ ետքը, 1731 թ.ին այս քաղաքն առաւ, որով սա յաղթողի քմաց ենթակայ եղաւ և մեծ վնասներ կրեց։

Նադեր շահի մահէն ետքը, 1747-ին, Պարսկաստան սարսափելի վրդովմանց մէջ իյնալով, Թաւրիզ հետզհետէ տիրացան Թագաւորութեան Թեկնածու իշխաններ, և ամէն նոր իշխան նորանոր տուրքեր կամ հարկեր կը պահանջէր թէ իր Թագաւորութիւնն սկսելու ծախուց և թէ զօրք պատրաստելու համար։ Ատրպատականի, նամանաւանդ Թաւրիզի հայերի կրածներն շատ ծանր էին։ Ծանր հարկեր, տուգանքներ անընդհատ իրար կը յաջորդէին, խժդուժական չարչարանքների կը մատնուէին։ Ոչ ոք չէր ազատուեր, մինչև չվճարէր, կամ ուրիշէ փոխ առնելու խոստում չընէր։ Այս բոլորի վերայ աւելցաւ նոր հնար մը ևս, որ կը կոչուէր «Կրզեազդի» (աղջիկ դրել)։ Ամէն տարի չափահաս աղջիկների անունները գրի կառնուէին, ապա անոնց գեղանիներէն քանի մը հատ, ըստ պահանջման թւոյ, կընտրուէր երկրակալի կանանոցին համար, իսկ մնացածին համար դրամական տուրք կամ փրկանք առնելով, բաց կը թողնէին։

Ծերեր կը պատմէին, որ երբ «կրզեազդի»ի ժամանակը կը մօտենար, ծնողք իրենց չափահաս դուստրերը ստորերկրեայ դաղտնի տեղի մը մէջ փակելով, շաբաթներով անդ կը պահէին, մինչև որ աղջիկ գրողների այցելութիւնը վերջանար։ Շատ անգամ, ըստ հնարաւորութեան, այցելու պաշտօնեաներն մեծաքանակ կաշառներով գոհացնելով, կազատէին իրենց դաւակներն այդ դժոխային վիճակէն։ Այս պատճառով Ատրպատականի հայերն յետին աղքատութեան ու թշուառութեան մէջ ինկան։

Այս վիճակը շարունակուեցաւ մինչև Քեարիմ խան Զանդի միապետութիւնը, որի ժամանակ Պարսկաստան քիչ մը շունչ առաւ, բայց ասոր մահէն ետքը, 1778-ին, նորէն մեծ ալեկոծութեանց մէջ ինկաւ, որին հայերն ամէնէն շատ ենթակայ էին։

Այս ատեններն Սալմաստի իշխանաւորն Ատրպատակա-

նի ամէն տեղեր ասպատակելով, բնակիչներն անխնայ կը ջարդէր, Թաւրիզն ևս ընդհանուրի ճակատագրէն ազատ չմնաց։

Մինչ այս չարիքներն դեռ չէին նուազած, Թաւրիզ դարձեալ մեծ երկրաշարժէ մը աւերուեցաւ 1780-ի Դեկտեմբերի վերջին կամ 1781-ի Յունուարի սկզբին*)։

Շահբազեան Մահտեսի Գասպար, որ երեք տարեկան ժամանակ այս աղէտին ենթակայ լինելով, երկու օր փլատակների տակ մնացեր էր, ծնողներն ու բարեկամները մարմինը փնտռած ատեն բահով զարկեր, ճակատը վիրաւորեր էին, և որմէ ետքը հանուելով, մերձ 80 տարի նոր կեանք ունեցաւ, կը պատմէր թէ շատ անգամ ծնողներէն և ուրիշ ականատեսներէ լսեր էր, որ շարժը Մնդեան տօնէն առաջ տեղի ունեցաւ, քաղաքի մեծագոյն մասը կործանեցաւ։ Բարեբախտաբար այն ատենի տներն խիստ քիչ բացառութեամբ միայարկ և նամանաւանդ հում աղիւսով շինուած լինելով, աւերակների տակ մնացողներէ շատերն ազատուեցան։

Մշակների թիւն այնչափ նուազ էր փլատակների տակ եղողներին բաղդատմամբ և ընդհանուր տարաբախտութեան միջոցին մարդիկ այնչափ խստասիրտ էին դարձեր, որ հողի տակ եղողներէ հարցնելով կը ստուգէին, և եթէ իրենցներէ չէր, առանց հանելու կանցնէին ուրիշ տեղ փորել՝ իրենցներէն գտնելու համար։ Երկրի երերումը մէկ ամսէ աւելի տեւեց։ Անպատսպար բնակիչներ ցրտի սաստկութեան պատճառով մեծ նեղութիւն կը կրէին։ Մեծ էր պաշարաց նուազութիւնը ու թանգութիւնը։ Սակայն, ջրի համար կրած զրկանքն ու տառապանքն ամէն բան կանցնէին։ Երկրաշարժէ ջրի համբաներն ու ադուգաններն աւրուեր, տների ջրամբարներն ևս քայքայ-

*) Թաւրիզի հայ ժողովրդին Ղուկաս կաթողիկոսն ուղղած էր մխիթարական մի կոնդակ, որ Հայոց ՌՄԼ Յունուար Ժ թւականը կը կրէ։ Հետևապէս երկրաշարժը 1781 թ. Յունուար 10-է առաջ տեղի ունեցած պիտի լինի։

ւելով իրենց պարունակած ջրերն հոսեր, փչացեր էին։ Անոնք որ հեռու տեղերէ ջուր բերելու համար միջոց չունէին, ձիւնի մնացորդներն կամ սառոյցի կտորներն հաւաքելով ու կաթսայի մէջ լցնելով կը հալէին, խմելու ջուր ունենալու համար։

Գարնան գալուստը միայն դժբախտ բնակիչների թշուառութիւնները թեթևցուց։ 19-րդ դարի սկիզբը Քայնէր անունով եւրոպացի ճամբորդ մը, որ Թաւրիզէն անցնելով, դայն դիտեր էր, կը գրէ, թէ այն ատեն այս քաղաք դեռ իր աւերակներէն չէր բարձրացած, միայն վեց հազարի չափ տուն կը պարունակէր, որոնց մեծագոյն մասը խարխուլ ու կիսաւեր վիճակի մէջ էր։ Ժոբեռ, որ 1806-ին Պարսկաստան հասաւ, այն ժամանակի բնակչաց թիւը 50,000 կը համարէ։

Աղա Մահմադ խան Ղաջարի թափառելովը 1784-ին Պարսկաստանի խռովութիւններն հետզհետէ դադրեր էին, սակայն Ատրպատականի ընդհանուր ժողովրդեան և առաւել հայոց թշուառութիւնները բոլորովին չէին վերջացած, քանզի Ատրպատականի ժողովուրդն ընդհանրապէս և Թաւրիզի բնակչութիւնը մասնաւորապէս մեծ դիմադրութիւն ցոյց տալով Աղա Մահմադ խանի տիրապետութեանը, այս բռնաւոր երկրակալը շատ խստիւ վարուեցաւ ժողովրդեան հետ, անորմէ շատերը դերի վարելով Պարսկաստանի այլ և այլ կողմերն և հայերէն առանց հասակի և սեռի խտրութեան, բաւականին խողխողել տուաւ*)։ Աղա Մահմադ խան 1795-ին Վրաստանի վերայ յարձակեցաւ և Հերակլ թագաւորին յաղթելէ ետքը Տրփ-

*) Ղուկաս կաթողիկոս ՌՄԼԶ (1787) Հոկտեմբեր 11-ին Թաւրիզի հայոց ուղղած կոնդակին մէջ կրսէ. «Յաւիտմ վասն խղճալի ժողովրդեանդ մերոյ, բայց մեր ևս նոյնպիսի դառն դիպուածոյ պատահելով քանիցս անգամ, թէ ի յառաջ շարժեցմանէ կովկասականացն խստաբարոյից եւ թէ տեղւոյս բնակչացն բազմիցս զմիմեանսբ անկանելոցն եւ գրեթէ միշտ ի վրդովմունս եւ ի զբաղմունս գոլով, ոչ կարեմ օրհնութեանդ՝ թղթով զձեզ մխիթարել...».

խիստ առաւ, սոսկալի կոտորած ըրաւ և 15,000, ըստ այլոց՝ 25,000 հայ և վրացի գերի վարեց ի Պարսկաստան։

Ոմանք գերիներուն թիւը 16000 կը հաշուեն, որոնցմէ 12000 հայ, 4000 վրացի։ Վրացիներէն մերձ 70 տուն դեռևս ներկայիս Ղումի շրջակայքը կը տեսնուին, որք կրօնափոխ լինելով հանդերձ, իրենց լեզուն ու սովորութիւնները մեծաւ մասամբ պահեր են։

Ռուսերն Մահմատ շահի ետևէն Արաքսն անցան և մինչև Ահար յառաջացան, սակայն, Եկատերինէ կայսրուհւոյ մահը վերայ հասնելով, 1796 Նոյեմբեր ամսին մէջ, արշաւող զօրքը ետ դարձաւ և այպէս Պարսկաստան մեծ վտանգէ մը ազատեցաւ։

Մահմատ շահ նորէն Վրաստան մտնելու նպատակով հետեւեալ գարնան յառաջացաւ մինչ Շուշւայ բերդը, բայց ատ իր երկու ծառաներէ գիշեր մը սպանուելով, իր զօրքը ամէն ինչ թողուց ու դարձաւ երկիր։

Մահմատ շահին յաջորդեց իր եղբօր որդին, որ 1798-ի սկիզբներն նստեց Պարսկաստանի գահը, Ֆաթալի շահ տիտղոսով։ Այս ժամանակները Վրաստանի մէջ քաղաքական փոփոխութիւն մը տեղի ունեցաւ, որի հետևանքն հայոց ապագային վերայ մեծ ազդեցութիւն պիտի ունենար։

Ռուսիոյ գործակատարն անարդարանալի միջոցներով կայսրութեան բոլոր ազդեցութիւնն ի գործ դնելով Վրաստանի վերջին գահակալ Գէորգ ԺԳ-րդ թագաւորի վերայ, յաջողեցաւ 1800 Սեպտեմբեր 28 ին թուղթ մը ստորագրել տալ, որով թագաւորը Վրաստանի թագը, իր անունով և իր յաջորդների անունովը, կը թողուր Ռուսիոյ կայսեր։

Այս չարաղէտ գործը Գէորգի թագաւորի դէմ գրգռեց վրացւոց ատելութիւնն ու արհամարհանքը։ Այս ատեններն քանի մը վրացի ազնուականներ չուզելով ռուսաց իշխանութեան տակ մնալ, փախան Պարսկաստան և պարսից ծառայութեան մէջ մտան։ Ռուսերն Վրաստան հաստատելէ քիչ ետ-

քը սկսան յառաջանալ և պատրաստուել պարսից ձեռքէն հանելու Անդրկովկասի մնացեալ մասը։ Ֆաթալի շահ դահ բարձրանալէ քիչ ետքը, իր որդին՝ Աբբաս Միրզան, Ատրպատականի կուսակալ կարգելով՝ Թաւրիզ դրկեց։

Այս արքայազնը Պարսկաստանի լուսաւորեալ և հանճարեղ անձերէն մէկը լինելով, մեծ ջանքով ու աշխատութեամբ սկսաւ իր նահանգը բարեկարգել, Թաւրիզը ծաղկեցնել և ժամանակի ներածին չափ քրիստոնեաների, նամանաւանդ հայերի վիճակը բարւոքել։ «Կրգեազդին», որ Մահմատ շահի թագաւորութեան վերջին տարիները դրամական տուրքի փոխուեր էր, Աբբաս Միրզայի կուսակալութեան ատեն բոլորովին վերջացաւ։

Հետաքրքրական պարագայ մը ևս։ Անտաշ տարրերի համար սովորութիւն էր եղեր քրիստոնեաների հետ վէճ կամ կռիւ ունեցած ատեն շուտով վազել դանդատ ընել իրենց կառավարչական պաշտօնատարներին, թէ հաւատս հայհոյեց։ Այս երկու բառ այժմ առածի տեղ անցնելով, առանց առիթի կռիւ փնտռելու կամ լոկ գրպարտութեան նշանակութիւն ստացեր է։ Շահնազարեան կը պատմէ, թէ Աբբաս Միրզայի մերձաւոր ծառաներէն մէկը, օր մը, 1807 թուականին, հայ վաճառականի մը պատահելով, ամենաչնչին առիթով կը սկսի անոր անարգանք ընել։ Հայն կը փոխարինէ։ Ծառան կը համարձակի յայնժամ հայհոյել վաճառականի կրօնը։ Վաճառականն ալ չդիմանալով, սաստիկ կը ծեծէ ծառան։ Այս վերջինը կը փութայ ուղղակի իշխանին երթալ և վաճառականն ամբաստանել «զիս ծեծեց առանց պատճառի և հաւատս հայհոյեց» ըսելով։

Փոխարքան իր ներկայութեան բերել կը տայ վաճառականն և ուրիշ վկաներ, անձամբ հարց ու փորձ ու քննութիւն ընելով, ստոյգ եղելութեանը վերահասու կը լինի և կը համոզուի, որ յանցանքն իր ծառայինն է և խստօրէն կը պատժէ։

Արքայազնի այս խոհական ընթացքով հաւատքի անունով եղած գրպարտութեան ձևը շատ անդործածութեան մէջ

ինկաւ և քրիստոնեաներն այդ փորձանքէն ազատեցան։

Անգլիացի զինուորական մարդիչներէն, որք յաջորդեր էին Նապոլէոնէ ղրկուած ֆրանսիացիներին, ոմանք այս ատեններս Ատրպատական եկան պարսից զօրքը կրթելու համար։ Ասոնց ի Թաւրիզ ներկայութիւնը բաւական օգտակար եղաւ մերազնեայ բնակչաց, որք դժաբութեանց մէջ անոնց միջնորդութեանը կամ պաշտպանութեանը կը դիմէին։

Մ. Ուիլիէմ Փրայս, որ իբր քարտուղար կրնկերանար անգլիական արտակարգ դեսպանութեան ի Պարսկաստան, 1810—1811 թուականներին հետեւեալ տեղեկութիւնները կը տայ Թաւրիզի հայերի նկատմամբ։

«1811 թ. Յունիս 7/19-ին, երբ Սըր Ուզլի Թաւրիզ հասաւ, տարուեցաւ այն տունն, ուր Սըր Հ. Ճօնս յառաջագոյն բնակեր էր. բայց այս տունը խիստ փոքր լինելով հետևորդների բնակութեան համար, բաւականին ատեն տևեց մինչև որ ուրիշ տներ հայթայթուեցան։ Օրուան ընթացքին քանի մը հայ ընտանիքներ իրենց տներէն դուրս հանուեցան, մեզ տեղ ընելու համար։ Տուն մը, որ հայ քահանայի մը կը պատկանէր, ինձ վիճակ ընկաւ, և տեսնելով որ ընտանիքն իրենց անկողինները տունէն դուրս կը հանէին, ես անոնցմէ խնդրեցի վերադառնալ, միայն երկու սենեակ բաւական համարելով իմ գործածութեան համար։ Անոնք ջերմ շնորհակալութիւն յայտնեցին ինձ և ես երեկոյեան զանոնք իրենց տան մէջ տեսնելու հաճոյքն ունեցայ։

«Տան դուռը խիստ փոքր լինելով, ես պատճառը տանուտէրին հարցուցի։ Նա ինձ իմացուց, որ դիտմամբ փոքր ըրեր էին, որպէսզի ձիերը չկրնային իրենց ախոռը բերել, քանզի հայ մը որ ախոռ ունենար, իր տէրը կենթարկուէր ձրիապէս ուրիշի ձիերն պահելու։ Այս բարի մարդը հաճելի կին մը և քանի մը զաւակ ունէր, որոնցմէ ամենագեղեցիկը մի աղջիկ էր տասնեօթն տարեկան։ Բացի իր պաշտօնէն, իբր քահանայ, նա դասատու էր նաև, և քանի որ նրա դասարանն իմ սենեակին

կից էր, ես շարունակ կրնայի լսել աշակերտների հայերէն լեզուի դասը և երեխաների բեն—այր—բա—գիմ—այր—դա հեգելը»։

1812—13-ին պարսից զօրքերը յարձակելով ռուսաց նորոգ տիրած երկրների վերայ, բաւականին մեծ վնաս հասցուցին անոնց, սակայն ետքէն պարտաւորուեցան ետ քաշուել։ 1813 թ. Հոկտեմբերին ռուսաց և պարսից մէջ խաղաղութեան դաշնադրութիւն մը կնքուեցաւ ի Գիւլիստան։ Սակայն, սահմանները որոշող գծերի ճշգրիտ տեղադրութիւնների պակասութեան պատճառով, քիչ ատեն ետքը, երկու տէրութեանց միջև անհամաձայնութիւն ծագեց, վէճի ենթակայ եղող կէտն Գեղամայ ծովի հիւսիսային և հիւսիսային արևելեան կողմը գտնուող երկիրն էր։ 1826 թ. դարնանը իշխան Մենշիկով Պարսկաստան հասաւ թէ Նիկոլա կայսեր դահակալութիւնը ծանուցանելու և թէ անհամաձայնութեան առիթ տուող կէտերն կարգադրելու համար։

Ֆաթալի շահ բանակցութիւններն ընդհատել տուաւ։ Մենշիկով Յուլիսին Սուլթանիէէ մեկնեցաւ և Երևան հասած ատեն Երևանի սարդարը կալանաւորեց նրան. 25 օր պահուեցաւ, և միայն գնդապետ Մաքդոնալդի ըրած միջնորդութեանց շնորհիւ ազատ արձակուեցաւ։

Աբբաս Միրզա անմիջապէս 45—50,000 հետևակով և և քանի մը խումբ թնդանօթաձիգ զինուորներով մտաւ վերջին տարիները ռուսաց տիրած երկիրները, սրով սկսուեցաւ ռուս-պարսկական պատերազմը*)։

---

*) Այստեղ, մի քանի էջերի մէջ, հեղինակը նկարագրում է 1826—27 թ. թ. ռուս-պարսկական պատերազմը, նկատի ունենալով, որ այդ էջերի մէջ ուշագրաւ ոչ մէկ տեղեկութիւն տրած չէ Ատրպատականի հայ բնակչութեան մասին, յարմար նկատեցինք այդ հատուածն ամբողջութեամբ յապաւել։ Ծ. խ.

Այդ իրադարձութեանց նկարագրութեան մէջ հայերին առընչ-

Պատերազմի ընթացքին Պարսկաստան կը գտնուէր վրաց Հերակլ թագաւորի որդին՝ Աղէքսանդրը, որ պատերազմէն առաջ Թաւրիզ հաստատուած էր, իբրև ռուսաց դէմ ապստամբ։ Ռուսերը Ատրպատական մտելէն ետքը Աղէքսանդր աքայազնը Վան փախաւ և իր ընտանիքը Թաւրիզ թողուց։ Ռուսերը այս ընտանիքը քանի մը ուրիշ վրացի տղաների ու աղջիկների հետ, որք իրենց երկրէն գողցուած*) կը համարէին, առնելով, Երևան ու Տփխիս ղրկեցին։

«Արձագանք» թերթի մէջ տպագրուած մէկ յօդուածէ կը տեղեկանանք, որ աքայազն Աղէքսանդրի կինը՝ Մարիամ, 23 տարեկան, գարմանալի գեղեցկութեան տէր մի հայուհի էր։ Նա Երևանի յայտնի Մելիք Սահակ Աղամալեանցի դուստրն էր և ունէր մի փոքրիկ զաւակ՝ Հերակլ անունով։ Ինքն աքայազն Աղէքսանդր այդ ժամանակ կը գտնուէր Վան, ուր հրոսակներ կը կազմէր սպասուած ռուս-տաճկական պատերազմի պարագային ռուսաց դէմ գործելու համար։ Գիտնալով որ Մա-

---

ւող միակ հնեաfrfrական տեղեկութիւնը հնեւեալն է, որ պատմում է հեղինակը պատերազմի վերջաւորութեան կապակցութեամբ, ըստ երեւոյթին լսած լինելով թաւրիզեցի տարեց քաղաքացիներից։—

«Աբբաս Միրզա ռուսաց Թաւրիզին մօտենալը տեսնելով, Թաւրիզէն ելաւ եւ մեկնեցաւ Սօուջբուլաղ՝ Չկրնալով պալատի պարունակութիւնն իր հետ տանել, մեկնած ատենը կը կանչէ Նազար Շահբազեանը, որի հաւատարմութեան վերայ մեծ վստահութիւն ունէր, եւ անոր կը յանձնարարէ իւր երկու հաւատարիմ ծառաների հետ պալատի թանկագին ու արժէքաւոր իրերը տեղ մը պահել մինչեւ իր վերադարձը՝ Ն. Շահբազեանը իւր մէկ ծառային եւ արքայազնի երկու ծառաների հետ նոյն օր, կէս գիշերին, երբ ամէն ոք կը քնանար, պալատի այդ իրերը, կրցածին չափ կը կրէ, կը լեցնէ սնորներկրեայ, չգործածուած ամբար մը եւ դուռն քար ու ցեխով պատ դնելով՝ կը գոցէ եւ առջեւն հնոտիք լեցնելով, անտեսանելի կը դարձնէ»։

*) Վրաստանէն եւ Իմերէթէն երեխայ գողնալու եւ այլուր վաճառելու սովորութիւնը մինչ վերջին ժամանակներս կը շարու-

բիամ ազդեցութիւն ունի Ատրպատականի հայոց վերայ, նրան և որդուն ղրկեց Երևան, հօր՝ Մելիք Սահակի մօտ։

Քէր Փորթը, 1819-ին, Աղէքսանդր աքայազնին Թաւրիզ հանդիպած և հետը բաւականին մտերմացած լինելով, հետեւեալ տեղեկութիւնը կը տայ անոր վերայ։

«Վրաստանի հանգուցեալ Հերակլ թագաւորի չորրորդ որդւոյ՝ Աղէքսանդր Միրզայի ներկայութիւնն (Թաւրիզի մէջ) մասնաւոր շահագրգռութեան առարկայ էր։ Այս աքայազնը, որի աքայական ոգւոյ անկախութիւնը տակաւին կը դիմադրէ ռուսաց հետ բարեկամութիւն ընելու ամէն պայմաններին, ոչ միայն մերժելով իրեն մատուցած կայսերական ամէն պատիւ, բայց յայտնապէս ինքզինքը հրատարակելով անհաշտ հակառակորդ այդ տէրութեան, իր հայրենի երկիրն գրաւելու համար։ «Աքայազնը նախ քաշուեցաւ Դաղստան։ Վանի վայրենի խումբերին պէս լեզգիները հուղկահար մի ժողովուրդ են։ Այս անհնազանդասէր ազգաց մէջն էր, որ Հերակլի որդին փնտռեց ո՛չ միայն ապաստանարան, այլ և վրէժխնդրութիւն, և նիզակակցելով անոնց գլխաւոր Շէյխ Ալիխանին հետ, իր անհանդարտ ոգին գրգռեց ամէն տեսակ անիրաւի յարձակում անոնց կողմէն այն երկրին մէջ, վերջին պատերազմի սոսկալի դէպքերի ժամանակ։ Նա ամենևին չհաշտուեցաւ այն խաղաղութեան հետ, որ անոնց (լեզգիներին) անդորրութիւն տուաւ, իսկ այն մի քանի շաբաթներին մէջ, ունեցած իր անդիջա-

---

նակուէր՝ 1870 թւականին, երբ Բաղդադէն կուզէի մեկնիլ, ինձ յանձնեցին 12 տարեկան վրացի տղայ մը, զոր չերեզները գողանալով, բերեր այս քաղաքը վաճառեր էին։ Հայերէն ոմանք այս իմանալով, յաջողեր էին,—ի՞նչ միջոցներով ինձ յայտնի չէ,— զայն ազատել եւ բերել ինձ տալ, որ Պարսկաստան տանելով, այնտեղէն Վրաստան կամ Ռուսիա ղրկեմ՝ ձամբան բաւականին երկիւղ կրելով, որ մի գուցէ տղան խլէն ձեռքէս, զայն բերի Թաւրիզ, ուր յանձնեցի ռուսաց ընդհանուր հիւպատոս պր. Բեզաբրազովին, որ ղրկեց Տփխիս։

նելի ատելութիւնը ռուսաց դէմ, ջանաց վերստին արծարծել ծխող կրակն, որ երբեք բոլորովին չէր մարած այն օրինաղանց ցեղերի և կայսերականների մէջ։ Բայց երբ այս ցեղերի ազատութեան վերայ յարձակում չգործուի, անոնք իրենց զէնքն ու բարեկամութիւնը կը վաճառեն առաւելագոյնը տուողին...

«Երբ արքայազն Աղէքսանդր ամենամեծ դժուարութեամբ, քաջութեամբ ու հնարքով անոնցմէ հեռացաւ, ան իրեն համբայ բացաւ այդ անմատչելի երկրի ամրութիւնների մէջէն և երբ իւր համբան կը պատահէր Շիրվանի մէջ արգիլուած կէտի մը, ան իսկապէս իւր սրով, իրեն համբայ կը բանար, մինչև որ հասաւ Պարսկաստանի սահմանն և ինքզինքն յանձնեց Աբբաս Միրզայի ազնուական ապաւինութեան։ Անկարելի էր նայել այս անվեհեր արքայազնի վերայ, որչափ ալ ամեհի ու յամառ, առանց շահագրգռութեան, առանց այն տեսակ գութեան ու սքանչացման, որով մարդ մը կրնայ նայիլ արքայական առիւծին, որ հալածուած իւր ժառանգական անապատէն, բայց դարձեալ դառնալով, մօտերը շուրջ կը թափառէ և կը մռնչէ իւր սպառնալիքներն ընդդէմ մարդկային օտարականների, որք վրդովեր էին իւր տիրապետութիւնը»։

Պատերազմէն ետքը որոշուեց հաշտութեան պայմանագրութիւնը կնքել Դէհխարղան աւանի մէջ, բայց Ֆաթալի շահ, ռուսաց առաջարկած պայմանները չընդունելով, վերջինները յառաջացան մէկ կողմէ մինչ Սային Ղալէ և միւս կողմէ՝ մինչ Արդաբիլ, ուր գտած ամէն ձեռագիր մատեաններն ու հնութիւններն Պետերբուրգ փոխադրեցին և երկրորդ կողմէ ալ հասան մինչ Ղափլանքուհ լեռան ստորոտը, որ Միանէի մօտերն է։ Այսպիսով հաշտութեան պայմանագիրն կնքուեցաւ 1828 թ. Փետրուար 10-ին, Թուրքմանչայ կոչուած գիւղին մէջ։ Հաշտութեան դաշնագրութեան գլխաւոր պայմաններն հետևեալներն էին.

Ա. Ռուսիոյ և Պարսկաստանի միջև հաշտութիւն ու մշտնջենաւոր բարեկամութիւն պիտի լինի։

Բ. Գիւլիստանի պայմանագրութիւնը կը ջնջուի։

Գ. Պարսկաստան Ռուսիոյ կը թողու Երևանի և Նախիջևանի խանութիւնները։

Դ. Պարսկաստան պիտի վճարէ Ռուսիոյ 80 միլիոն ռուբլի՝ իբր պատերազմական տուգանք։

Ե. Աբբաս Միրզա Ռուսիայէն կը ճանաչուի իբր ժառանգ Պարսկաստանի գահին։

Զ. Ռուսերն ազատօրէն պիտի նաւարկեն Կասպից ծովի մէջ և միայն իրենք իրաւունք պիտի ունենան անդ զինեալ մարտանաւեր պահելու։

Է. Հայերն մինչև մի ամբողջ տարի պիտի կրնան անարգել իրենց ընտանիքովն և շարժական գոյքովն անցնիլ Պարսկաստանէ Ռուսիա և մինչև 5 տարի վաճառել իրենց անշարժ կալուածները։

Ը. Շահը կատարեալ ու լիուլի ներում կը շնորհէ Ատրպատականի ամէն բնակչաց՝ իրենց բռնած ընթացքի համար։

Այս պայմանագրութենէն անմիջապէս ետքը ռուսերն սկսան ամէն կողմէ Արաքս դառնալ։

Նիկողայոս կայսրը դաշնագիրը վաւերացուց 1828 թ. Մարտ 2-ին, և անմիջապէս հրամանագրեց, որ Երևանի ու Նախիջևանի խանութիւններն այնուհետև կոչել «Ազխարհ Հայոց» և կայսեր բազմաթիւ տիտղոսների վերայ աւելացնել ևս «Թագաւոր Հայոց Աշխարհի» տիտղոսը։

Ասով ռուսերը նպատակ ունէին յուսադրել դիւրախաբ հայերը, բայց երբ հաստատեցան և ալ հայերի օգնութեան մասնաւոր պէտք մը չզգացին, յայնժամ, 1840-ին, այն կոչումն վերցրին և պարզապէս «Երևանի նահանգ» անուանեցին։

Հայազգի գնդապետ Լազարև, որ 1827-ին նշանակուած էր Թաւրիզի քաղաքապետ՝ ռուսական գրաւումի ժամանակ, սկզբի օրէն ամէն ջանք ի գործ դրաւ հայերը ռուսաց նոր տիրած երկիրն գաղթել տալու համար։

Սա իրեն օգնական ընտրեց հայերը դաղթեցնելու գործի համար իշխան Մովսէս Զաքարեան Երկայնաբազուկ Արղութեանին, Իսահակ Տէր Առաքելեան Ղայթմազեանցին, Էնակոլոփեան ու Շարոյեան փոխգնդապետներն և Դաւիթ ու Աղէքսանդը Ղորղանեան, Շաղաբաթեան Մելիք Շահնազարեան, Մելիք Իւսուֆեան սպաներն և ուրիշ վրացի ու ռուս սպաներ, ամէնքն ալ հայագէտք և զանոնք ղրկեց Ատրպատականի գաւառներն։

Ասոնք միանալով Ներսէս Աշտարակեցիի առաքած ըՍտեփաննոս եպիսկոպոսի և Նիկողայոս վարդապետի հետ, ցրուեցան Ատրպատականի մէջ։ Քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ շրջելով, կը քարոզէին, կը յորդորէին, որ քրիստոնեաներն դաղթեն։

Հայերը կը հաւատային, որ քրիստոնեայ կայսրն և կառավարութիւնը Քրիստոսի աշակերտներէն և հետևապէս այնպէս կը վարուէին հպատակների հետ, ինչպէս հայր մը իւր որդիների հետ, և երբեք չկասկածեցին, թէ քրիստոնեայ կայսրութեանց քաղաքական նպատակների դիմաց շամանդաղի մը չափ ծանրութիւն չի ներկայացներ մարդասիրութեան գործը, այլ իրենց նպատակին, իրենց շահին առանց վարանելու կը զոհեն ոչ միայն օտարազգի հպատակներ, ոչ միայն համազգի, համակրօն ժողովուրդներ, այլ մինչ անգամ մերձաւոր արիւնակիցներ։

Այն ժամանակ ծերունի Եփրեմ կաթողիկոս Տփխիսի մէջ անկողնուն կը ծառայէր և կաթողիկոսութեան հոգսն ու էջմիածնի կառավարութիւնը Ներսէս արքեպիսկոպոսին թողեր էր, որն հայ հոգևորականութեան մէջ ամէնէն երևելի, գուցէ արժանաւորն էր։

Ներսէս շլացած խաբուսիկ յոյսերէ, առաւել ևս ոգևորուած ռուս կառավարութեան ըրած մեծամեծ խոստումներէն, սկսեր էր նամակներով և կոնդակներով Ատրպատականի քահանաներին համոզել, որ ամէն միջոց՝ յորդոր, խրատ, ըսպառնալիք ի գործ դնեն հայերն Ռուսիա չուցնելու համար։ Քահանաներն իրենք անկարող այսպիսի մեծ խնդրի մը հետևանքները չափելու, կշռելու ու վերլուծելու, իրենց ամէն վստահութիւնը դնելով Ներսէսի դատողութեան և աչալրջութեան վերայ և իրենց միայն պարտք համարելով եկեղեցական գլխի պատուէրներին անսալ, ամէն ջանք թափեցին անոր ցանկութիւնն ու հրամանը կատարելու։

Այսպէս, հրամայուած կաթողիկոսէն, յորդորուած եպիսկոպոսէ, վարդապետներէ ու քահանաներէ, հրապուրուած ռուսաց ըրած մեծամեծ խոստումներէ, վստահացած հայազգի Լազարեան և ուրիշ հայ և վրացի զօրապետաց ու սպայից խօսքերէն, նամանաւանդ ահաբեկուած տեղացիների ապագայ վրէժխնդրութենէն— իբր հաւատակից ռուսաց,—հայերն յուսացին իրենց փրկութիւնը գտնել Ռուսաստանի մէջ և կարծեցին որ անգամ մը ոտքերնին դնէին այն երկիրն, ամէն դժուարութիւն ու նեղութիւն պիտի վերջանային և այնուհետև ազատ պիտի կարենային աշխատիլ ու հանգիստ ապրիլ։

Ինչպէս շատ մը անձեր, նոյնպէս տէրութիւններ որևէ բանի արժէքն այն ատեն միայն կը հասկանան, երբ զայն կը կորսնցնեն։ Այսպէս և տեղական կառավարութիւնը երբ տեսաւ որ ռուսերն այնչափ ջանք կընէին հայերն իրենց երկիրն դաղթել տալու համար, արթնցաւ, բայց ուշ, և սկսաւ զանոնք սիրաշահել և մեծ խոստումներ ընել անոնց։

Թագաժառանգ Աբբաս Միրզան, իւր ժամանակի հանճարեղ գլուխներէն մէկը, երբ զգաց այս դաղթման դէշ հետևանքները, իրեն աջակից ու խորհրդակից ունենալով Անգլիոյ դեսպան՝ գնդապետ Մաքդոնալդն, սկսաւ դաղթականութեան առաջն առնելու համար ջանքեր ընել։ Անգլիացի Մ. Վելլոք և Ֆրանսիացի Մ. Սեմենոյ ուրիշ անգլիացի սպաների և պարսիկ պաշտօնեաների հետ գաւառներն ղրկեցան, որպէսզի համոզեն հայերն ու նեստորականներն (ասորիները), որ չդաղթեն։

Ասոնք կը նկարագրէին Ռուսիա իբր երկիր աքսորանաց։ Սակայն դաղթող գաւառացի հայերէն շատերը Վելլօքին, Սեմենօյին և այլոց կը մերժէին անսալ։

Թադաժառանգ Աբբաս Միրզա իւր կողմն շահեց Ս. Բարդուղիմէոս վանքի վանահայր Իսրայէլ եպիսկոպոսն, որ այս ատեններն Սալմաստ կը գտնուէր։ Այս եպիսկոպոսն համոզմամբ թէ առանց համոզման հակառակեցաւ դաղթմանն և հոգւով ու սրտով գործին մէջ մտնելով սկսաւ ամէն տեղ շրջել, քարոզել, յորդորել ո՛չ միայն հայերն այլ և ասորիներն, որ չը դաղթեն և մինչև անգամ բռնի արգիլեց շատերին։

«Արձագանք»ի 1893 թ. Հոկտեմբեր 15-ի թիւի մէջ գրուած է, թէ Ներսէս Աշտարակեցի արքեպիսկոպոսն գայրանալով Իսրայէլի արարքին վերայ, ուզեց դայն պատժել և մի նամակ գրեց Պասկևիչին, հետևեալ բովանդակութեամբ.

«Այն անձինք, որոնց ուղարկել էի համոզելու ու ճանապարհ դցելու Ատրպատականից դէպի ռուսաց սահմաններն դաղթող հայերին, տեղեկացնում են ինձ, թէ Իսրայէլ եպիսկոպոսն, որին Էջմիածնի հոգևորականութիւնը նշանակել է Սալմաստի Ս. Բարդուղիմէոս վանքում*), մոռանալով իւր քրիստոնէական պարտականութիւնը, դաղտնի, նենդութեամբ և բացարձակ սպառնալիքներով արգիլում է հայոց այս կողմ դաղ-

*) Սալմաս գաւառում ոչ 1827—28 թ. թ., եւ ոչ էլ դրանից առաջ, Ս. Բարդուղիմէոս անունով որեւէ վանք, եկեղեցի կամ ուխտատեղի գոյութիւն չի ունեցել։ Սալասի Հաճիվան գիւղի մերձակայքում գտնւում էր Ս. Թադէոս անունով մի ուխտատեղի, որ հաւանաբար ժամանակին եղել էր վանք եւ ունեցել իր վանահայրը։ Մեր կարծիքով, Ներսէս Արքեպ. Աշտարակեցու ակնարկած վանքը Տանկահայասանի Աղբակ գաւառի պատմական Ս. Բարդուղիմէոս վանքն է։ Պիտի ենթադրել, որ Աղբակին սահմանամերձ Ատրպատականի գաւառների հայ համայնքները վարչականօրէն երբեմն ենթակայ են եղել Ս. Բարդուղիմէոս վանքի եպիսկոպոսներին կամ հաճախել նրանց հոգեւոր հեղինակութիւնը։

թելու և ուրիշ անկարգութիւններ է անում։ Վասն որոյ, համաձայն պատրիարքի ինձի տուած իշխանութեան, հայոց բոլոր հոգևոր գործերը կառավարելու համար, ես խնդրեցի այնտեղի զօրավար գեներալ մայեօր իշխան Զավշավաձէին, որ գրէ Խոյի բերդապետին, յիշեալ եպիսկոպոսին զինուորների խիստ հսկողութեամբ ուղարկել Էջմիածնի վանքը՝ հոգևոր դատի ենթարկելու, և այս դէպքում չքաշուել նորա աստիճանը անպատուելուց, որովհետև մինչև որ նա չի արդարացնիլ այստեղի հոգևորականութեան առաջ իւր գնացքը, մինչև այն ժամանակ արժանի չէ իւր աստիճանին վայել պատուի։

Այժմ ես տեղեկանում եմ, թէ Խոյի բերդապետը պատասխանել է, որ առանց Ձերդ պայծառափայլութեան հրամանի՝ չէ կարող կատարել իմ պահանջմունքը։ Վասն որոյ խոնարհաբար խնդրում եմ հրամանագրել ում հարկ է, որ շուտափոյթ ուղարկեն Իսրայէլ եպիսկոպոսին։

Այս գրութեանը Պասկևիչ պատասխանեց.

«Ես ցաւում եմ, որ դուք տեղեկանալով Սալմաստի Իսրայէլ եպիսկոպոսի անբարեմիտ վարմունքի մասին, չէք բարեհաճել ուղղակի ինձ դիմելու։ Այն միջոցին ես Թաւրիզ լինելով, ամենայն յարմարութեամբ կարող էի կատարել Ձեր ցանկութիւնը։ Բայց այժմ ես շատ դժուարանում եմ Ձեր պահանջմունքը Իսրայէլ եպ.ի մասին լրացուցանել, վասնզի թէև Խոյի գաւառը մի առ ժամանակ դրաւ է թողնուած մեզ մօտ, մինչև որ պարսիկներն կը վճարեն իւրեանց պարտքը, այնուամենայնիւ առանց Աբբաս Միրզայի համաձայնութեան, չէ՞ կարելի ոչ ոքի դուրս քշել, որովհետև դորանով պարսից տէրութիւնը իրաւացի կերպով կարող է բողոքել, որ մենք խախտում ենք դաշնադրութիւնը։

Այդ պատճառով ներկայ հանդամանքներում ես աւելի ոչինչ չկարողացայ անել, բացի այն, որ հրամանագրեցի Պանկրատևին, աշխատել համոզել Իսրայէլ եպիսկոպոսին, որ նա դայ, ներկայանայ Ձերդ Սրբազնութեան, իւր արարմունքներով արդ-

դարանալու կամ դատաքննելու։

Հրամանագրեցի նաև յայտնել նրան, որ եթէ չշտապի գալ, այն ժամանակ նա կը զրկուի իւր աստիճանից և ես ստիպողական կերպով կը պնդեմ Աբբաս Միրզային, որ հարկադրէ նրան գալ Էջմիածին։ Սակայն կարծելով՝ որ Ձեր ստորադրեալ հոգևորականաց շրջանում, սորանից առաջ էլ երբեմնապէս պատահած լինեն պարտաւորութեանց այդպիսի օրինազանցութիւնք, ես կը ցանկայի դիտնալ, թէ ի՞նչ եղանակով էին դատի հրաւիրւում այդպիսի անբարեմիտ անձինք և թէ հայոց հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը ի՞նչ միջոցներ էր գործ դնում ըմբոստների դէմ»։

Գեներալ Պանկրատևիչն չկարողանալով համոզել Իսրայէլ եպիսկոպոսին յօժարութեամբ գալու Էջմիածին, աշխատեցաւ ձեռք բերել և Պասկևիչին ներկայացնել եպիսկոպոսի մի նամակը առ Սալմաստի պարսիկ կառավարիչ Մուստաֆա բէկը, որով համոզում էր սորան չանց կենալ ռուսաց կողմը և չթողնել հայերին դաղթելու։

Զայրացած Պասկևիչը նկարագրելով Իսրայէլ եպիսկոպոսի բոլոր արարքները, իւր գրութեան մէջ, 1828 թւի Մայիսի 31-ին, առ Եփրեմ կաթողիկոսն, ասում է. «Իսրայէլ եպիսկոպոսի այդպիսի անբարեմիտ ակնյայտնի վարմունքը դէպի մեզ և վնասակար ազդեցութիւնը հայոց վերայ, ստիպում է ինձ ամենախոնարհաբար խնդրել Ձերդ Վեհափառութեան, քննութեան ենթարկել այս հոգևորականի արարքները և արդեօք չէ՞ք բարեհաճիլ պատշաճաւոր համարել կարգալոյծ անել նորան եպիսկոպոսական աստիճանից, որն ի չարն է գործ դնում, կամ թէ մի ուրիշ պատժի ենթարկել»։

Այսպէս, երկու կառավարութիւններն ջանքեր կը թափէին և զոհողութիւններ յանձն կառնէին հայերն իրենց կողմը շահելու համար. բայց քանի որ դաւառների հայերն մասամբ իւիք Թաւրիզին կը նայէին և այս քաղաքի բնակչաց ընթացքին կուզէին հետևիլ, թագաժառանգ Աբբաս Միրզան ամէն ջանք ի գործ կը դնէ Թաւրիզի հայերն դաղթելէ արգիլելու համար։ Նա կը կանչէ արքունի հիւսնապետ Նազար Շահբազեանն) և անոր կը յանձնէ մի հրովարտակ, որով կը յայտարարէր, թէ հայերէն ոմանց բռնած հակառակ ընթացքին պատճառով, համայն հպատակներն, որք միտք չունէին դաղթելու, պատժելու վախէն կը դաղթեն, ուստի ապահովութիւն կը տրուի, որ ոչ ոքի նկատմամբ բռնութիւն ու անարդարութիւն չպիտի լինի և մնացողներին մեր կողմէ գթութիւն պիտի շնորհուի։

Ստորև թարգմանաբար կը ներկայացնենք սոյն հրովարտակն։

Դորրը Դարիայի Խոսրաւի Աբբաս[2])

Բարձրագոյն հրաման եղաւ, որ Թաւրիզի հայոց բաղապետն ու ալեւորներն իմանան, թէ այս ժամանակ Նորին Բարձրութեան արդարադատութեան առաջ կեցողներին խոնարհաբար տեղեկացնեն, որ մի քանի հայերի ունեցած սխալ ընթացքի պատճառով համայն հպատակներն մեր հատուցումներէն ու պատժաւորներէն երկիւղ կրելով, հայրենիքը լքանելու ցանկութիւնը չունենալով հանդերձ, հատուցման վախէն յօժարեր են հայրենիքը թողնել։ Ուստի այս շնորհազեղ հասցէով, որ պատսպանութեան, ապահովութեան ու անդորրութեան փառաց աղբիւրէն ելեր է, կը կարգադրենք որ ոչ մէկ կողմէ եւ ոչ ոքէ որեւէ հարստահարութիւն եւ որեւէ բռնութիւն հայերէն որեւէ մէկի վերաբերմամբ տեղի չպիտի ունենայ եւ ով որ իւր հայրենիքը մնալու ու հաստատելու յօժարի, մեր կողմէն կատարեալ գթութիւն ու քաղցրահայեցութիւն

1) Նազար Շահբազեանն աւխատութեանս հեղինակի մօր հայրն է։ Հրովարտակը կը գտնուի մեր մօտ։

2) Արքայական ծովի մարզարիտ Աբբաս։

ցուրիւն անոր նկատմամբ ի գործ պիտի դրի, եւ ով որ ցանկանայ մեր ներկայութեան սեամբը պատրնկալ լինելով բարձրագոյնին դեմ յանդիման խօսիլ եւ մեր կողմէն խրախոյս ու անդորրութիւն ձեռք բերել, մենք հատարակաց մուտք տալով, մեր ներկայութեան շնորհրնկալութիւնը տուր ենք»։

Տեղալ
Օրհնեալ Ռամազան ամսին մէջ,
Հիջրէթի 1243 ին։

Բացի այս հրամանագրէն, թագաժառանգը հարիւր թուման (մերձ 1600 ֆրանկ) տալով Նազար Շահբազեանին, կը պատուիրէ տանել իւր սենեկապետին հետ և յանձնել Թաւրիզի աւագ քահանայ Տէր Յովհաննէս Տէր Յովսէփեանին, և իւր կողմէ ըսել, որ այս գումարը դահաժառանգը ձեզ պարգև կը դրկէ և այսուհետև ևս տարին հարիւր թուման ռոճիկ պիտի տայ քեզ այն պայմանով, որ չդաղթես, այլ մնաս։

Տէր Յովհաննէս կը մերժէ և իւր դաղթման որոշումն կը յայտնէ։

Նազար Շահբազեան կէս դիշերին երկրորդ անգամ կերթայ քահանայի մօտ և ամէն միջոցով կը ջանայ համոզել, որ չմեկնի։ Բայց սա քիչ մը ակնածելով Ներսէս արքեպիսկոպոսէն, որ հրամայեր էր դաղթել և ուրիշներն ևս իւր հետ դաղթեցնել, քիչ մը ձանձրացած տիրող ծանր վարչակարգէն և քիչ մը հրապուրուած անծանօթ դալիքէն, քանզի այդ ատեն թէ ռուսերը և թէ իրենց տիրած երկիրները պարսկահայոց բոլորովին անծանօթ էին, անդրդուելի կը մնայ իւր որոշման մէջ։ Նազար, ճարահատեալ, պարգևն դահաժառանգին կը վերադարձնէ։ Այսուհանդերձ, չյուսահատելով, շատ ջանքերէ ետքը, կը յաջողի մէկ քանին համոզելով, միւսներն կապած բեռներնին ստիպմամբ քակելով, պահել, որ չդաղթեն։

Այսպէս, Նազարի ջանքերի, Անդլիոյ դրծակատարի յորդորների և թագաժառանգի տուած հրովարտակի հետևանքով քաղաքի հայերէն մերձ տասն և հինգ տուն չդաղթեցին։

«Արձագանք» թերթը մնացողների թիւը վեց տուն կը հաշուէ, ուրիշներն՝ 26 կամ 56, բայց ես ծեր մարդոց բերանէ լսածներիս վերայ 15 տունը աւելի ճիշտ կը համարեմ։

Քանի որ Տէր Յովհաննէս չհամոզուեցաւ մնալ, Աբբաս Միրզան յատուկ սուրհանդակով մը հրամանագիր դրկեց Համադան։ և այն տեղի աւագ քահանային, որ նոյնպէս Տէր Յովհաննէս անունը կը կրէր, հրամայեց անմիջապէս («չափարի») դալ Թաւրիզ և հովուել հայ ժողովուրդն։

Երբ սա Թաւրիզ հասաւ, թագաժառանգն զարմանալի սութեամբ ըսեր է՝ այն Տէր Յովհաննէս չլինի, այս Տէր Յովհաննէս լինի, և Թաւրիզին տալիք Թոշակը շնորհեց Համադանին։ Եւ իրօք, այս Թոշակը մինչև օրս կը շարունակի տրուիլ Տէր Յովհաննէսի սերնդին, ի Համադան։

Գաւառացի հայերէն ոմանք ևս, Թաւրիզ մնացողների օրինակին հետևելով, ոմանք Մ. Վելլօքի և Սեմենոի յորդորներին ու խորհուրդներին անսալով, այլք, նամանաւանդ Սալմաստի բնակիչների մէկ մասը, Իսրայէլ եպիսկոպոսի ջանքերովն ու ստիպումներովն արդելքի տակ ըլլալով, մնացին իրենց տեղերը։

Այսօր Թաւրիզ և դուցէ գաւառներն այսքան հայ գտնուելն մասամբ իւիք Նազար Շահբազեանին կը պարտինք, քանզի այն քանի մը ընտանիք եթէ մեկնած լինէին ուրիշների հետ, ալ այն ատեն որևէ ապաւէն, վստահութեան յոյս չունենալով, ռուսաց կողմը դաղթողներէն ոչ ոք կը վերադառնար և այսպիսով այժմ Ատրպատականի մէջ շատ աննշան թիւով հայ պիտի գտնէր։ Այսուամենայնիւ, Ատրպատականի հայոց մեծագոյն մասն, իսկ նեստորական ասորիներէն մերձ հարիւր տուն միայն դաղթեցին։

Հայերի այս դաղթի հետևանքով, ըստ պարսիկ կառավարիչների և Լազարեանի վկայութեան, պարսից տէրութիւ-

նը տարեկան մերձ հարիւր հազար թուման (մերձ 600,000 ֆրանք) ուղղակի եկամուտ կորսնցուց, բացի անուղղակի կերպով ստացուող եկամուտներէն։

Հաշտութիւնը կնքելէն անմիջապէս յետոյ հայերն սկսան Ղազինէ, Միանէէ, Սալմաստէ, Ուրմիայէ և Մարաղայի, Քիւրդիստանի ու Խոյի շրջաններէն և Թաւրիզէն ու իր շրջաններէն, գոյքերնին կրցածնին չափ վաճառել որևէ գնով, իսկ չկրցածնին ասոր-անոր ընծայել, տներնին և ուրիշ անշարժ կալուածներն այսպէս թողուլ և խումբ-խումբ դէպի Երասխ յառաջանալ։

Թէև դաշնադրութեան 12-րդ յօդուածին համեմատ գաղթողները կրնային իրենց կալուածները մինչ 5 տարի վաճառել, սակայն գաղտնի ցուցմունքով գաղթողների կալուածները գնողներ չեղան։

Գաղթողների ճամբորդութիւնը առանց դժուարութեան ու վտանգի չեղաւ, քանզի գաղթականք ոչ միայն ուտելիք դժուարաւ կը գտնէին, կամ մերթ երբեք չէին գտներ, այլ անոնք, որ վերադարձող զօրքի անմիջական պահպանութեան ներքոյ չէին, ճամբին կը կողոպտուէին։ Քիւրդիստանէ գաղթող հայերը մեծաւ մասամբ դարանակալ քիւրդերէ կողոպտուեցան և սպանուեցան ճամբի վերայ։

Ըստ ռուսական վիճակագրութեան, երկուք ու կէս ամսի մէջ 8,000 ընտանիքէ կամ 40,000 հոգիէ աւելի Արաքսէն ռուսաց հողն անցան։ Ոմանք գաղթողների թիւն 80,000 կը հասցնեն, բայց այս յայտնի չափազանցութիւն է։

Էլի Սմիթը գրում է, թէ Թաւրիզի հայոց եպիսկոպոսի (հաւանաբար Իսրայէլ եպիսկոպոսը լինի) բերնից լսել է, որ ամբողջ Ատրպատականի նահանգէն գաղթողների թիւը 9,000 ընտանիք պիտի լինի։ Երիցեանը, հաւանաբար ռուսական աղբիւրներէ առնելով, գաղթողների թիւը կը հաշուէ 8249 տուն, կամ մօտաւորապէս 45,000 հոգի («Արձագանք», 1893 թ. Հոկտ. 20, թիւ 122)։ Ռուս պաշտօնատար մը՝ Խոպէն, գաղթողնե-

րի թիւը կը հաշուէ 8036 ընտանիք (35,560 հոգի), ըստ երևոյթին ճամբան մեռածների թիւը հաշուի չառնելով։

Գաղթողներն կը յուսային, որ անգամ մը ճամբայ դուրս գան, ամէն դժուարութիւն պիտի դադրէր, բայց հակառակ իրողութեանց հանդիպեցան։ Ռուսաց նորոգ տիրած երկիրներն վերջին պատերազմի, տեղացի տարրի քիչ-շատ ցրուելուն և ուրիշ հանգամանքների պատճառով, մասամբ անմշակ մնացեր էին և պարսկաց ու ռուսաց զօրքերի անց ու դարձով ուտելիքներն նուազեր ու թանգացեր էին։

Երևան կազմուած «Գաղթականութեան յանձնաժողով»ը կը տեղեկացնէր Լազարեանին, որ հաց չգտնելու պատճառաւ, ոչինչ օգնութիւն չէր կրնար տալ թշուառներին և թէ անոնք ռուսաց սահմանները սովամահ կը լինեն, ուստի կը խնդրէր զանոնք ետ պահել մինչ նոր հունձքը, բայց արդէն ուշ էր, ժողովրդի մեծ մասը Արաքսն անցեր էր, միւս մասն ալ անցնելու վրայ էր («Արձագանք», թիւ 122, Հոկտ. 20, 1893)։

Հայերը «Արաքս» դետն անցածին պէս (Ապրիլ, 1828) տեսակ մը սով սկսաւ ռուս բանակին մէջ. զինուորներն անկարգութիւնը երբեմն մինչ այն աստիճան հասցրին, որ պատեհ միջոց գտած ատեն, գաղթականների ունեցած գոյքն գոյքն կը խլէին։ Ռուսաց շնորհած դրամական նպաստը և անակնկալ ծախուց համար տուածը չնչին բաներ էին, համեմատելով գաղթողների թիւին։

Ընդամենը տրուեր էր 14,000 ոսկի դուքաթ և 400 արծաթ բուբլի (որ բոլորը 141,600 ֆրանկ կընէր և որ մարդ գլուխ երեք ու կէս ֆրանկ կը լինէր), և այն ևս տասն տարուան մէջ վերադարձնելու պայմանաւ...

«Արձագանք» այս մասին այսպէս կը գրէ. «Քաջ գիտնալով որ որքան օգտակար պիտ լինի Ռուսիոյ համար հայոց նման աշխատասէր և համեստ ժողովրդի ձեռք բերելը, Պասկևիչ 1828 Ապրիլ 3-ին գրեց կայսեր, թէ Պարսկաստանից գաղթող հայք, ստիպուած են թողնել այնտեղ իրենց կալուած-

ները և ամենայն ինչ և չքաւոր են։ Նոցա թէ գաղթելու ժամանակ և թէ սկզբնական բնակութիւն հաստատելու համար կարևոր է տալ դրամական օգնութիւն, վերադարձնելու պայմանաւ։ Այս առաջին նպաստում ես որոշեցի այդ բանի համար 50,000 բուբլի այն գումարից (200,000), որ ստանում ենք պարսից տէրութիւնից, բայց կարծում եմ որ առ հասարակ գործ դնելի այդ նպատակի համար մօտ 200,000 բուբլի»։

Ապա «Արձագանք»ը գրում է.«Սակայն նախապաշարուած լինելով հայերի դէմ, Պասկևիչը կարծում էր, թէ նոքա ռուսաց ոսկւոյ համար են գաղթում։ Զծածկելով իւր այս կարծիքը Լազարեանից, Պասկևիչը յիշեալ 50,000 բուբլուց տուեց նորան միայն մէկ մասը և այն էլ կտոր-կտոր։ Այս դրամը պէտք էր բաժանուէր չքաւոր գերդաստաններին, բայց ամէն մի տանը ոչ աւելի քանց 5—6 բուբլի։ Լազարեանի հաշուից երևում էր, որ նպաստ տրուած էր ընդամենը 14,000 ոսկի, մօտ 44,000 բուբլի։ Լազարեանը գրում է Պասկևիչին, որ «Հայք ռուսաց ոսկւոյ համար չեն գաղթում, այլ նոքա զոհում են իրենց բոլոր ունեցածը, և այն կարծիքը որ ունէիք դուք նոցա մասին, նոցա չէ կարող վերաբերիլ»։ Երևանում եղած գաղթականութեան յանձնաժողովին էլ մի գումար էր յանձնուած օգնելու չքաւոր գաղթականներին, բնակարան չունենալու համար, բայց ոչ ոքի 20 բուբլուց աւելի չտալով։ Յանձնաժողովը ծախսեց մօտ 40,000 բուբլի։

«Ականատես Գրեբօեդովը այս մասին գրում է. «Դրամական օգնութիւնը շատ անկարգ ու անճոռնի է բաժանւում։ Տալիս են մի-մի կամ երկու-երկու բուբլի իբրև աղքատների, առանց ճիշտ տեղեկանալու, թէ ումը ի՞նչ և ո՞րքան է հարկաւոր։ Միանւագ 25 բուբլի տալը աւելի նպատակայարմար է քան թէ քիչ-քիչ և զանազան ժամանակ տալը։ Պէտք է ասեմ, որ այս գաղթականներն աւելի օգտաւէտ են քան թէ Վրաստանի հայք, որոնք մանրավաճառներ են, ոչինչ օգուտ չեն բերում արքունի գանձարանին։ Իսկ Պարսկաստանից ե-

կողներն մեծ մասամբ արհեստաւորներ են և երկրագործներ։

Այսպէս թէ այնպէս, տէրութեան ըրած ծախսը պարսկահայոց գաղթականութեան վերայ հազիւ հասնում էր 20,000 բուբլու կամ մօտ 2 բուբլի մարդագլուխ և այն տասը տարւայ մէջ վերադարձնելու պայմանաւ»։

Ոչինչ պատրաստութիւն չէր տեսնւած նորոգ գաղթականներն ընդունելու համար և ռուս կառավարութիւնը դեռ ժամանակ չէր ունեցեր նորոգ տիրած երկիրներն կարգաւորելու։

Պասկևիչ 1827 թ. Հոկտեմբեր 6-ին Երևանում սահմանեց մի ժամանակաւոր վարչութիւն, որին յանձնեց Երևանի և Նախիջևանի վարչական գործերը։ Գեներալ Կրասովսկին նախագահ, Ներսէս արքեպիսկոպոս և Երևանի բերդապետ Բորոդին փոխգնդապետ՝ անդամք։ Պասկևիչ ծանր պարտաւորութիւն դրեց անոնց վերայ։ Պէտք է ասել, որ չիմանալով Պասկևիչի կարգադրութեանց մասին, ռուսաց կայսրը երբ հրամայեց նոր գրաւուած երկիրները կոչել «Հայոց աշխարհ», միևնոյն ժամանակ կարգադրեր էր, որ մասնաժողով կազմի մի կանոնադրութիւն սահմանելու, թէ ինչպէս պիտի կառավարի հայոց աշխարհը։ Մասնաժողովի անդամներն էին Կոմս Դեբիչ, արտաքին և ներքին ելևմտից նախարարները, գեներալ Վելիամինով։ Տեղացի հայերն, որք նախքան պատերազմը հարստահարութեանց և վերջին պատերազմին վնասներ կրած ըլլալու պատճառով աղքատ վիճակի մէջ կը գտնուէին, չկրցան և չէին կրնար նորեկ ազգակիցներին օգնել։ Այսպէս, գաղթողներն դրեթէ իրենց ճակատագրին թողնուեցան և կառավարութեան կողմանէ խիստ նւազ օգնութիւն գտան։ Գաղթող հայերն, որ Ատրպատականի մաքուր, զով, առողջարար և աղէկ ջուրին սովորեր էին, իրենց նոր բնակավայրերն հասած ատենին, օդի սաստիկ տաքութեան, պատպարանաց պակասութեան, ուտելեաց անբաւականութեան և քանի մը տեղերի կլիմայի անառողջութեան և ուրիշ աննպաստ հանգամանքների պատճա-

ռով շատ գոհեր տին և գաղթականութեան մէկ կարևոր մասը մեռաւ։

«Արձագանք» մեռնողների թիւը 3000ի չափ կը դնէ, բայց հաւանական է այս թիւն իւր մէջ չունէ ճամբան մեռնողներն, այլ միայն այն գաղթականներն, որք իրենց տեղերը հաստատուելէ ետքը 4,000ի չափ պակսեցան մէկ տարուան միջոցին։

Ռուս կառավարութեան 1829—31 թուականներին կազմած վիճակագրութիւնը կը ցուցնէ, որ Պարսկաստանէ գաղթող հայերն բնակեցան հետևեալ վայրերը.

	դերդաստանք	հոգիք
Երևան քաղաքի մէջ	366	1,715
Երևանի 10 մահալների	4,193	21,853
Նախիջևան քաղաքի մէջ	265	1,110
Նախիջևանի մահալների մէջ	1,872	9,542
Օրդուբադ քաղաքի մէջ	36	182
» շրջակայքը	214	1158

Բացի ասոնցմէ, քանի մը հարիւր դերդաստանք անցան Ղարաբաղի կողմերն և ոմանք ալ մինչ Տփխիս ցրուեցան։

Սոյն գաղթական հայերն, որ մեծաւ մասամբ Ատրպատականի ամենաբերրի գետիններն ունէին, դիւրակեաց ապրուստ մը թողնելով, այնչափ նեղութիւնով, տառապանքով ու վնասով գաղթելէն ետքը, յուսացած ազատութիւնն ու հանգըստութիւնը չգտան, շատ տարիներ աղքատութեան մէջ մնացին, անարդարութեան ու բռնութեան ենթակայ եղած և իւրեանց վիճակի համեմատ ծանր տուրքերի տակ չարչարուեցան։

Դարձեալ «Արձագանք»էն կը տեղեկանանք հետևեալը.

Ռուս աստիճանաւոր Զուբարէվը, որ պաշտօնով Ղարաբաղ ղրկուած էր, 1830 թ. Ապրիլ 20-ին կը գրէ Պասկևիչին.

«Անցեալ պատերազմի անմահ քաջագործութեան կարգում անշուշտ շատ նշանաւոր տեղ է բռնում հայոց մեր երկիր գաղթելը։ Հայք, մի ժողովուրդ են որ այս երկրում ամենից շատ են հաւատարիմ մեր տէրութեանը և կարելի է ասել, որ նոքա ամենաազնիւն են գոնէ հասարակ ժողովրդի մէջ։

Պարսկաստանից գաղթած հայք նշանաւոր են օրինակելի աշխատասիրութեամբ. նոցա մեծ մասը արհեստաւոր են, շատ օգտաւէտ և շատ հազուագիւտ Կովկասում։ Դժբախտաբար օգտաւէտ ժողովուրդն չափից դուրս ճնշւում է Ղարաբաղում, մի կողմ թողնելով քնիկ հայերին, որոնք կեղեքւում են թուրք բէկերից, կը յիշենք միայն գաղթականների մասին։ Ղարաբաղի տեղական (ռուս) իշխանութիւնը հայոց դէմ մի ինչ որ նախապաշարմունք ունենալով՝ աններելի կերպիւ նեղացնում է նոցա և մինչև հիմա նրանք չունեն հաստատ բնակութիւն։ Նոցա տուել են շատ անբերրի հողեր, իսկ Մեղրիի, Գիւնէի կողմերում (մահալում) տուած հողերն էլ շատ քիչ են։ Տեղական իշխանութեան կարգադրութեամբ Մարաղայի հայք սկզբում բնակութիւն ստացան հին, այժմ աւերակ Բերդա (Պարտաւ) քաղաքում։ Այս տեղը որ մի դաշտ է Կուր գետի մօտ, ամառը սաստիկ շոգ է և անտառներում եղած զանազան թունաւոր սողունները դարձնում են այս տեղը մահւան բնակարան։ Մարաղեցիք, սովոր լինելով զով և առողջ կլիմայի, չէին կարողանում տանել արեգակի խանձող տապը և հիւանդանում էին։ Գիւղի տանուտէրը իզուր էր աղաչում, թոյլ տալ նոցա տեղափոխուել լեռնային կողմերը. նոցա թախանձանքները առանց հետևանքի մնացին։

Զուներնալով ոչ ջուր, ոչ կերակուր, բնակելով բաց երկընքի տակ և ենթարկուելով արեգակի կիզիչ տօթին, չարաբախտ հայք մահւան զոհ գնացին։ Երեք ամսւան մէջ նոցանից 1,012 հոգիք մեռան։ Բաւական չէր այդ, շրջակայ քոչող թուրքերը օգուտ քաղելով նոցա հիւանդութիւնից, թալանեցին նոցա գոյքը և տաւարը։ Իզուր էին հայք դիմում արդարադատութեան. նոցա ծեծով էին բաւականութիւն տալիս։ Մինչ Պետերբուրգում Վելիամինով պնդում էր որ հայք նայիքնե-

րի ձեռքով կառավարեն»։

Ահա ինչ էր գրում Պասկևիչի կողմից ուղարկված ռուս աստիճանաւոր Զուպարեվը. «Առհասարակ Ղարաբաղում, մահալներում նայիբները ճնշում են ժողովրդին և Մելիք Խուդադադը գերազանցեց ամենքին։ Ինքն լինելով անբարոյական և արբեցող, նա պտտում է գիւղ գիւղ, շրջապատված արբեցող ու յանդուգն ծառաներով, գանակոծում, կեղեքում, տուգանք, կաշառք առնում։ Այս նայիբը համարձակւում էր մինչ անգամ եկեղեցի մտնել, յիշոց տալ քահանային»։

Իրաւ է, որ ռուս կառավարութիւնը վեց տարի հարկերէ և երեք տարի դատաստանական մեղապարտութիւններէ ազատութիւն շնորհեր էր, սակայն ասոնք աննշան բաներ էին բաղդատմամբ այն վնասներին, զորս գաղթողները կրեր էին և այն զոհողութեանց, զորս հայերը ըրեր էին։ Ռուս կառավարութիւնն ազատ էր իր նորոգ տիրած երկիրներն, որք գանազան պատճառներով գրեթէ ամայի դարձեր էին, լեցնել հայերով, որք բացի ճարտար, խաղաղասէր ու արդիւնաբեր ժողովուրդ ու հպատակ լինելէ, մի սանձ էին նոյն երկրի մէջ ապրող անհնազանդ տարրերի համար։

Սակայն, ինչ որ պարսաւելի կը դարձնէ կառավարութեան և պաշտօնատարաց ընթացքն, այն է, որ ոչինչ չըրին նոր հպատակներն կարօտութենէ, սովէ ու թշուառութենէ պահպանելու համար։ Տեսանք իւր դրամական չնչին նպաստն, տեսանք իւր անտարբերութիւնը գաղթականաց Պարսկաստանէն չելու ատեն և թէ սոցա կրածներուն նկատմամբ։

Ռուսերն հայերէն ամէն բան սպասեցին, ընդունեցին, բայց փոխարինութիւն չըրին։

Թաւրիզի ժողովուրդի մէկ մեծ մասը Նախիջևան ծնացեր էր, ամէնէն մօտ քաղաքը լինելու պատճառաւ։ Այս քաղաքն, որ մինչ այժմ աննշան մի տեղ է, այն ատեններն ալ աւելի աննշան էր և ոչ մի կերպով գաղթողներին պարապմունք կամ ապրուստի աղբիւր չէր կրնար հայթայթել։ Թաւ-

րիզեցիք սկիզբէն զգալով որ մեծ դժւարութեանց ու նեղութեանց պիտի հանդիպէին, սկսան բարձրաձայն տրտնջալ։ Ներսէս արքեպիսկոպոսը զանոնք հանդարտացնելու նպատակաւ մը խիթարական ու յուսադրական նամակ մը ուղղեց անոնց։

Նամակը (1828 Ապրիլ 29 թւակիր) ուղղուած էր Նախիջևան վերաբնակուած Թաւրիզեցիներին՝ «հայոց հոգեւորականաց, մարմնաւորականաց, Տէր Յովհաննէս և Տէր Կարապետ քահանայից, մեծարոյ առաջաւոր անձանց, իշխանաւորաց, վաճառականաց, արհեստաւորաց, առհասարակ Աստուածասէր ամենայն ժողովրդոյ, արանց և կանանց, մեծաց և փոքունց»։

Բերելով օրինակներ Ս. Գրքից, Աւետեաց երկրի մասին, ուրախութիւն կը յայտնէ հայոց Արարատեան դաւառն հաստատուելու մասին, և այլն։

Ստորագրուած է՝ «Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանի՝ Ներսէս, յԵրևան քաղաք»։

Այսուամենայնիւ գաղթողներէն մի քանիսն ծածուկ խոյս տալով, Պարսկաստան վերադարձան, միւսներն ատեն մը համբերութեամբ տարան նեղութիւններն, բայց տեսնելով որ իրենց վիճակը փոփոխութիւն մը չէր ստանար, իրենց աւագ քահանայի՝ Տէր Յովհաննէս Տէր Յովսէփեանի միջոցով դիմեցին Եփրեմ կաթողիկոսին, իրենց դժւարութեանց դարման խնդրելու համար։

Եփրեմ պատասխանեց, որ շատ կը ցաւէր ժողովուրդի կրած տառապանաց համար, այլ կը յուսար որ Պասկևիչ շուտով անոնց ամէն պիտոյից համար ևս հոգացողութիւն կընէ։ Նամակը գրուած է 1828 թ. Օգոստոս 22-ին, ի Ս. Էջմիածին և ուղղուած է Տէր Յովհաննէս քահանային։

Այս խոստումը մինչ երկու-երեք ամիս չիրականանալով, Թաւրիզեցիք մի խնդրագիր ղրկեցին Տէր Յովհաննէս քահանայի և քանի մը անձանց հետ Եփրեմին, Էջմիածին, Թախանձանօք օգնութիւն հայցելով։

Եփրեմ ոչինչ կրցաւ ընել իրեն դիմողների տառապանք-

ներն նուազեցնելու համար, միայն յենուած կայսերական «անսուտ խոստման» վերայ, և յուսադրական կոնդակով մը յորդորեց դանոնք սպասել։

Կոնդակը գրուած է 1828 թ. Նոյեմբեր 14-ին, ի Ս. Էջմիածին։ Այս կոնդակով կաթողիկոսը կը տեղեկացնէ Տէր Յովհաննէս քահանայի, Ամիրզադա Մահտեսի Յարութիւն Մինասեանի, Մելիք Նազար Մելիք Յարութիւնեանի և պր. Կարապետ Աւագեան Մայիլեանցի այցելութիւնը ի Ս. Աթոռ, ապա կը յայտնէ իր վշտակցութիւնը գաղթողներու կրած ձախորդութեանց համար։ Այնուհետ կը յորդորէ համբերել, և յոյս կը յայտնէ, որ շուտով, կայսերական հոգածութեան շնորհիւ, բոլոր նեղութիւններէն կազատին։

Թաւրիզեցիներէն ոմանք այլ ևս չկարենալով սպասել, սկսան վերադառնալ իրենց նախկին քաղաքը։

Աբբաս Միրզա ուզելով հայոց վերադարձը քաջալերել, գնդապետ Մաքդոնալդի միջնորդութեամբ ու երաշխաւորութեամբ երկրորդ հրովարտակ մը յանձնեց հայերին։

Ահա սոյն հրովարտակի թարգմանութիւնը.

Դորրը
Դարիայի
Խոսրաւի
Աբբաս

Բարձրագոյն հրաման եղաւ, որ ռուսների յանդուգն գործերի ու խառնակութեան ժամանակ Թաւրիզի հայ ժողովուրդը, որ բարձրագոյն տէրութեան հին հպատակներն են, անիմաս մոլորմամբ իրենց ընտել հայրենիքէն ու նախկին բնակութենէն երես դարձուցած լինելով, անոր ամբողջութիւնը ցրի։ Մինչ այն, որ բարձրապատիւ, գերասքանչ, ազնիւազարմ, վեհանձն եւ պատուով ու անմատչելիութեամբ շրջապատուած անուանի քրիստոնեայ գնդապետ Մաքդոնալդը՝ անգլիական գեղեցիկ տէրութեան դեսպանը, որ մեր բարձրագոյն տէրութեան համար անհուն բարեկամութիւն ու բարեացակամութիւն ունի, զանոնք (հայերն) խրախուսելով ու

ապահովեցնելով, վերադարձուց ու ետ բերաւ։

Այս ժողովրդի վերադարձէն ու ժողովումէն ետքը այն բարձրապատիւ անձը (*Մաքդոնալդ*) ի նպաստ անոնց մեր պայծառափայլ Նաւարէն (*Նահանգապետի փոխանորդ*) խնդրեց գրութիւն մը ու շնորհաց բաշխում մը։

Ուստի սոյն բարեբախտ տարիէն եւ այսուհետեւ յիշեալ հայերն բացի վեց հարիւր թուման ընթացիկ գումարէն, որ գինեսանց վարձագինն է, ամէն պարտաւորութիւններէ, արքունի հարկերէ, վերադիր եւ արտակարգ տուրքերէ ցայսիսեան բոլորովին ազատուած կը յայտարարենք եւ հրամայեցինք այս որոշումը արձանագրել։ Ուստի կը կարգադրի, որ Թաւրիզի արդի ու ապագայ կառավարիչներն, քաղաքապետներն, գործակատարներն ու վերատեսուչները բացի 600 թուման ամէն տարեայ գումարէն, որ գինեսանց վարձագնի պատճառով գինեվաճառներէն պիտի առնուի, ուրիշ ամէն արքունի գումարներէ, հարկերէ ու արտակարգ տուրքերէ (հայերն) ազատ ճանաչենք։ Գրիչն ու քայլը այս մասին կարենցենն եւ որեւէ կերպով հատիկ մը տրան (*զրանի 1/1,000*) ոչ մէկ անունով ու եղանակով չպահանջեն։ Օրինեալ դիւանատան բարեբախտ ընդունակութեամբ օժտուած քարտուղարներն այս արքայական շնորհալի գրի բացատրութիւնն օրինակեն, պահեն եւ իրենց պատասխանատուութեան տակ ճանաչեն։

Գրուած է Մոհարրամ արքազան ամսի մէջ,
Հիջրէի 1244 թ.

Ռուսիայէն վերադարձան քանի մը ուրիշ հայ ընտանիքներ ևս, որոնց մէջ էին նաև Տէր Յովհաննէս Տէր Յովսէփեան և Տէր Կարապետ։ Եւ Թագաժառանգը ներողամտութեամբ թոյլ տուաւ այս քահանաներին, որ իրենց ժողովուրդն առաջնան պէս դարձեալ հովուեն։ Միւս Տէր Յովսաննէսը վերադարձաւ Համադան։

Եփրեմ կաթողիկոսն ուզելով Իսրայէլ եպիսկոպոսի ազդե-

ցութիւնը նուազեցնել, Նախիջևանի և Ագուլիսի հոգևոր գործոց ընդհանուր կառավարիչ Բարսեղ արքեպիսկոպոսն Թաւրիզ կը ղրկէ, ձեռքը տալով Տէր Յովհաննէսին ուղղուած յանձնարարական նամակ մը (գրուած 1828 Դեկտ. 16)։ Կերևի որ սա ոչ մէկ իշխանութիւն չկրնալով բանեցնել Թաւրիզի հայոց վերայ, շուտով իւր տեղը կը դառնայ։

Այնքան ժամանակ, որ Թագաժառանգ Աբբաս Միրզան կուսակալ էր ի Թաւրիզ, Ատրպատականի հայերն ընդհանրապէս և Թաւրիզեցի հայերն մասնաւորապէս, բաւականին անդորր ու յաջող վիճակ մը ունեցան, միայն 1830 թուականին տարափոխիկ հիւանդութիւն մը (քոլերա կամ ասոր նման ախտ մը) Թաւրիզի մէջ երևան ելաւ և շատ կոտորած ըրաւ։

Աբբաս Միրզա ցանկալով վարձատրել Իսրայէլ եպիսկոպոսն իր մատուցած ծառայութեանց համար, զայն Թաւրիզ հրաւիրեց, և առանց Էջմիածնի հաւանութեան, Ատրպատականի առաջնորդ ճանաչելով, շատ անգամ իւր ներկայութեան կընդունէր, կը պատուէր և անոր ամէն խնդիրներն կը կատարէր։

Ի միջի այլոց, կը պատմեն, թէ Աբբաս Միրզա կը սիրէր երբեմն կրօնական բանակռիւների ունկնդիր լինել։ Մեր մարդերէ, նաև Հայր Այվատեանէ լսեր եմ, որ անգամ մը քանի մը երևելի մահմեդական հոգեւորականներ և Իսրայէլ եպիսկոպոսը կը հրաւիրէ, որ իւր ներկայութեամբ կրօնի վերայ վիճաբանին։ Պարսիկ հոգեւորականներն ընդհանրապէս կընդունին, որ Աստուած շնորհեր է չորս սրբազան գիրք, որք են՝ Աստուածաշունչ, Սազմոս, Աւետարան և Ղորան։ Այս չորսէն որ մէկի նախամեծարութեան վերայ վիճաբանութեան ատեն Իսրայէլ կըսէ. «Դուք մեծապէս կը սխալիք, 5-րդ գիրք մը ևս կայ, որ ամենէն զօրաւորն է։ Հոգևորականներն խոր զարմանքի կը մատնուին այս նոր վարդապետութեան վերայ և իրարու երես կը նային, հուսկ յետոյ կը հարցնեն, թէ որն է այն հինգերորդն։ Իսրայէլ եպիսկոպոս, որ միշտ ձեռքը մտրակ մը կը կրէր, զայն ցոյց տալով, կը պատասխանէ. «Սա է, առանց պ-

սոր միւս չորս գիրքերն զօրութիւն չեն ունենար»։ Աբբաս Միրզա բարձրաձայն քրքջալով, կըսէ Իսրայէլ եպիսկոպոսին. «Կեցցե՛ս, կեցցե՛ս, շատ ճիշտ է»։

Աբբաս Միրզա, որ արդէն շատ շնորհ ունեցեր էր Թաւրիզի հայոց վերայ այն քանի մը տան չդաղթելէն, ուրիշ քանի մը ընտանեաց վերադարձէն ետքը աւելի հոգատարութիւն ցոյց տուեց անոնց։ Որպէսզի անոնք բոլորովին ազատ լիենեն պաշտօնատարաց ճնշումներէն, անոնց դատավարութիւնը ուղղակի Անգլիոյ գործակալութեան յանձնեց։ Քանի մը տարի քաղաքի հայերը ուրիշ անմիջական իշխանութիւն չճանաչեցին բացի անգլիական հիւպատոսարանէն և իրենց ամէն դատերն ու տարակարծութիւններն անդ կը ներկայացնէին։ Թաւրիզի հայերն անհեռատեսութեամբ, նամանաւանդ կրթութեան ու բանգէտ գլխաւորի պակասութեան պատճառով, իրենց փոքրիկ դատերով ու չնչին վէճերով այնքան զբաղում ու յոգնութիւն պատճառեցին հիւպատոսարանին, որ սա ի վերջոյ ձանձրանալով, հայերի կառավարութիւնը դարձուց տեղական պետական իշխանութեանց։

Քանի որ Աբբաս Միրզա կը գտնուէր Թաւրիզ, Ներսէս արքեպիսկոպոսը կամ Եփրեմ կաթողիկոսը չկրցան բան մը ընել Իսրայէլ եպիսկոպոսին. բայց վերջինիս պաշտպանի Ատրպատականէ մեկնելէն անմիջապէս ետքը, Եփրեմ Հին Նախիջևանի Նիկողայոս վարդապետն եպիսկոպոս ձեռնադրելով՝ Ս. Թադէոս և Բարդուղիմէոս վանքերի առաջնորդութիւններն, որք մինչ այն ժամանակ առանձին վիճակներ կը կազմէին, միացնելով և Նիկողայոսը բոլոր Ատրպատականի հայոց առաջնորդ կարգելով, ղրկեց Թաւրիզ, յատուկ կոնդակով մը և Իսրայէլ եպիսկոպոսը հրաժարացնելով Ս. Բարդուղիմէոս վանքի վանահայրութենէն, հրաւիրեց դալ պատուով Էջմիածին և մըխիթարել իւր ծերութիւնը։ Այս հրահանգի ստուգութիւնը կերևի կաթողիկոսի կողմէ Տէր Յովհաննէս քահանային ուղղուած 1834 թ. Մայիս 7-ի և 18-ի նամակներէն։

Իսրայէլ հնազանդեցաւ այս հրամանին կամ ի՞նչ եղաւ այնուհետև, մենք չենք կրցեր իմանալ։

Աբբաս Միրզա Խորասան նահանգին կուսակալ կարգուելով, գնաց անդ և քիչ ժամանակէ ետքը մեռաւ։ Ֆաթալի շահ նորա (Աբբաս Միրզայի) որդին՝ Մահմադ Միրզան թագաժառանգ անուանելով, Թաւրիզ ղրկեց։

Ասոր կուսակալութեան ժամանակ հայերը այնքան լաւ չինամուեցան, ինչպէս իւր հօր՝ Աբբաս Միրզայի ատեն։

Ֆաթալի շահ 1834 Հոկտ. 9-ին Սպահան երթալով, անդ մեռաւ։ Թագաւորի մահուան լուրը տարածուելով, իւրաքանչիւր կուսակալ գլուխ կը բարձրացնէ և անկախութեան պատրաստութիւններ կը տեսնէ։ Այսպէս, Ալիշահ, Թեհրանի մէջ թագաւորի տիտղոս կառնէ և դանձարանը բանալով, արքունի դանձը շռայլաբար ու անընտրողաբար ասոր-անոր կը բաշխէ, կուսակիցներ շահելու համար։

Հասան Ալի Միրզայի Շիրազ և Ռամազան անունով մէկն Սպահանի մէջ ինքզինքին թագաւոր կը յայտարարեն և կսկսեն շրջականերն ու դաւառներն հրամանագրեր ղրկել։

Ֆաթալի շահի մահուան գոյժը կը հասնէ Թաւրիզ թագաժառանգին։ Ռուսիոյ դեսպան Կոմս Սիմենովիչ և Բրիտանիոյ դեսպան Սըր Ջոն Բեմբիլ, միասին թագաժառանգին կերթան, նախ իւր պապի մահուան լուրը կը հաղորդեն և մխիթարութիւն կը յայտնեն, ապա թագաւորելը կը շնորհաւորեն և հուսկ յետոյ կառաջարկեն, որ փութով Թեհրան երթայ։

Թագաժառանգ Մահմադ Միրզա տեսնելով որ թագաւորութեան տիտղոս առնողներն իրմէն աւելի բազմաթիւ զօրք և մեծ պատրաստութիւններ ու դանձ ունէին, կը վարանի սկիզբներն առանց դրամի ու պատրաստութեան համբայ իյնալ և Ռուսիոյ դեսպանի աջակցութիւնը կուզէ։ Վերջինս կը խոստանայ Հայաստանէն 7,000 զօրք թագաժառանգին օգնութիւն բերել տալ։ Սակայն, Բրիտանիոյ դեսպանը վախնալով այն վտանգէն, որ գուցէ առաջ պիտի դար Ռուսիոյ զօրքը

Պարսկաստան ընդունելէ, փութով կերթայ թագաժառանգին և կը խոստանայ զօրաց Թաւրիզէ Թեհրան ծախքը վճարել, եթէ անոնց հրամանատարութիւնը իրեն յանձնուի։

Մահմադ Միրզա այս առաջարկութիւնն ընդունելով, նախ Սըր Հէնրի Ռաթըր (որ Լինչի կը կոչուէր), 1,500 հետեւակով և 16 թնդանօթով կը ղրկէ և ինքը մնացորդ զօրաց, ուրիշ մեծամեծաց ու երկու դեսպանաց հետ Նոյեմբեր 9-ին Թաւրիզէն ճամբայ կիյնայ։

Թագաժառանգին ընդառաջ և օգնութեան եկողների մէջ առաջիններն եղան Ղայթմազեանց Սամուէլի որդի Խոսրով խան, բազմաթիւ հետեւորդներով և Ռաշտի մարզպան Էնակոլոփեան Մանուչար խան, 70,000 ոսկի (թուման) ընծայով և դունդ մը հեծելազօրով*)։

Ալիշահ, որ Թեհրանի մէջ իրեն թագաւոր յայտարարեր էր, քսան հազար զօրք տալով իւր եղբօրը, ղրկեց Մահմադ Միրզային դէմ, բայց զինուորներն փոխանակ մարտնչելու, թագաժառանգի կողմն անցան։ Մահմադ Միրզա առանց դիմադրութեան Թեհրան մտաւ և Ալիշահ իրեն անձնատուր եղաւ։ Լինչի զօրքով Շիրազ ղրկուեցաւ. նա գնաց, Հասան Ալի Միրզան բռնեց, ղրկեց Թեհրան և այն նահանգը հպատակութեան տակ բերեց։ Թագաժառանգը 1835 թ. Մարտ 19-ին գահը նստաւ, Մահմադ շահ կոչուեցաւ առաւ և երկրի վրդովումներն սկսան քիչ-քիչ վերանալ։

---

*) Ղաջարական տէրութեան սկիզբները Պարսկասան գտնուող երեւելի վրացիներէն եւ հայերէն շատերը Վրասան էին։ Ասոնցմէ ոմանք Աղա Մահմադ շահէն գերի բերուեր էին, իսկ ոմանք ուրացող Վրասանին տիրած ատեն Պարսկասան գաղթեր էին, եւ ոմանք եւս վրացւոց ապստամբութիւնը չյաջողելու ժամանակ Պարսկասան ապաստաներ էին։ Ասոնց մէջ յիշելու է Խոսրով խան, Ս. Ղայթմազեանց, Մանուչար խան Էնակոլոփեան, Միրզա Գորգին խան, Ռուստամ խան Էնակոլոփեան, Աղալար խան, Սամսոն խան, Դաւիթ խան Սագինեանց, Իւսուֆ բէկ, եւ այլն։

Ասոր թագաւորութեան ժամանակն Ատրպատականի հայերը միջակ կերպով կառավարուեցան. ոչ բոլորովին անդորրութիւն ու արդարութիւն վայելեցին և ոչ ալ ծայրայեղ անարդարութեանց ենթակայ եղան։

Մահմադ շահ 1848-ին մեռնելով, Նասրէդդին Միրզա թագաժառանգն, որ իբր Ատրպատականի կուսակալ Թաւրիզ էր, անմիջապէս մեկնեցաւ ու Թեհրան հասնելով, թագաւորութեան գահը բարձրացաւ։

Ինչպէս Մահմադ շահին օգտակար ծառայութիւններ մատուցեր էին Խոսրով խան և Մանուչար խան և ուրիշ հայ պաշտօնեաներ, Նասրեդդին շահին ևս մեծ ծառայութիւններ մատուցին, գլխաւորապէս Սոլոմոն խան Էնակոլոփեան, Ռուստամ խանի որդին և Սամսոն խան զօրավարները։

Նասրեդդին շահի գահակալութեան սկիզբները ոչ սակաւ վտանգ կսպառնային թագաւորութեանը Լոռստանի և Խուզեստանի ապստամբութիւններն։ Այս ապստամբութեանց շուտով զսպելուն և ուրիշ նահանգների մէջ չտարածելուն կառավարութիւնը մեծապէս պարտական է վերը յիշած վրացահայ զօրավարներին։

Սամսոն խան ղրկեցաւ Խուզեստան։ Այս զօրավարն իւր հմտութեամբը, հնարագիտութեամբն և յաճախ ստոյգ վրտանգների ենթարկելովը, յաջողեցաւ այն նահանգը հնազանդութեան մէջ բերել, այն երկրի ցեղապետներէն մի քանիսն անձնական առատ պարգևներով իւր կողմը շահելով, ուրիշները քաղցրութեամբ ու հնարքով համոզելով, զինաթափ ընելով և ուրիշներին ևս մարտով յաղթելով։

Սակայն Սոլոմոն խան*) (կը կոչէ Սհամը Դովլէ), որ Լոռստան ղրկուեր էր, աւելի դժուար պարագաների մէջ կը գտնուէր։ Իւր զօրքը, բաղդատմամբ ապստամբ լոռերին, շատ սակաւաթիւ էր, և որ ինչ գլխաւորն էր, զօրականներն իրենց օրապահիկը ու ռոճիկը թերի ու զեղչով ստացած լինելով, խիստ դժգոհ էին կառավարութենէն և դժկամութեամբ ու անսիրտ կերպով կերթային թշնամու դէմ։ Լոռերը յաջողեր էին ձեռք բերել ամուր բերդ մը, ուրկէ շրջականները մօտ ու հեռու ապատակելով, կը կողոպտէին և աւարի կառնէին։

Սոլոմոն խան գնաց այն բերդին վերայ։ Լոռերը կանխելով, մեծ բազմութեամբ անդ հաւաքուեցան։ Երբ հայ զօրավարն փոքրաթիւ զօրքով մօտեցաւ բերդին, մէջիններն սկսան կարկուտի պէս գնդակ տեղացնել զօրքի վերայ։ Զօրականները վարանեցան, կանգ առին. վայրկեանը յուսահատական էր. եթէ մէկ գինուոր միայն մէկ քայլ նահանջէր, ընդհանուր փախուստ մը տեղի պիտի ունենար, և ո՞վ կրնար երևակայել ինչ մեծ ու դէշ հետևանք առաջ պիտի գար։

Էնակոլոփեան այս զգալով, մէկ ձեռքով սուրը, միւսով իւր տասնևհինգ տարեկան Նարիման որդին բռնած, կը յառաջանայ գոչելով՝ «Անոնք որ կանացի սաւան (չադրա) կուզեն ծածկել*), թող ետ դառնան փախչեն, իսկ անոնք որ արիութիւն ունեն, թող ինձ հետևեն»։

Նոյն րոպէին գնդակ մը Նարիմանի աջ ուսը քերել խանձելով կանցնէ. պատանին կը ցնցուի, հայրը դառնալով որդւոյն, խստիւ կը յանդիմանէ, ըսելով «Անարժան զաւակ, ինչո՞ւ կը վախնաս, զինուորը մարտի մէջ պէտք է մեռնէ»։

Թնդանօթաձիգները զօրավարի սոյն խօսքերէն ու օրինակէն զգաստանալով, թնդանօթները յառաջ կը մղեն և դէպի բերդն ուղղելով, կսկսեն ռմբակոծել։ Զինուորներն ևս ա-

*) Սոլոմոն խան երկու որդի ունեցաւ· սրանք էին՝ հանգուցեալ Զհանգիր խան, որ գեղարեսից նախարար էր եւ Վիեննայի արդի դեսպան Նարիման խան, որ Ղաւամ-էս-Սալթանէ տիտղոսն ունի։

*) Այս արտայայտութիւնը պարսկերէնին մէջ անչափ նախատական է, եւ Ֆրանսերէն lâche-էն (վաս) շատ աւելի զօրաւոր նշանակութիւն ունի։

մութահար իրենց թուլասրտութեան համար, թնդանոթաձիգների օրինակին կը հետևին։

Լոռերը թնդանոթների գործած աւերէն ահաբեկած, աւելի ևս զօրավարի անվեհերութենէն պարտուած, հրացանաձգութիւնը կը դադրեցնեն և պայմանով անձնատուութիւն կառաջարկեն։ Շուտով համաձայնութիւնը կը գոյացի և զօրքը կը մտնէ բերդը։ Սակայն, մնացեր էր աւելի դժուարինը, այն, որ զինուորը յաղթութենէ ետքը կողոպուտն իւր իրաւունքը կը համարէ։ Սոլոմոն խան նոր ապստամբութեանց տեղի չտալու համար կարգիլէ աւարառութիւնը։ Զինուորներն, որք արդէն դժգոհ էին իրենց օրապահիկէն ու ռոճիկը լրիւ չստացած լինելու պատճառով, կը խռովին, կը գայրանան և անհնազանդութեան կը պատրաստին։ Էնակոլոփեան իւր գրպանէն դրամ ու պարգևներ բաշխելով, զօրականները կը հնազանդեցնէ։

Հայ զօրավարը երկու տարի Լոռիստան կը մնայ և բոլորովին կը խաղաղացնէ ու հպատակութեան մէջ կը բերէ։ Քանի որ Թեհրանէ երբեք դրամ չղրկուեցաւ զօրքի ծախսը հոգալու համար մի քանի նախանձոտ անձանց խարդաւանքի պատճառով, հայ զօրավարն ամենայն զոհաբերութեամբ իւր սեփական գոյքերն ու կալուածներն հետզհետէ վաճառել տալով և յաճախ ասորմէ անորմէ պարտք ընելով, զօրաց վճարեց և միշտ զանոնք գոհ վիճակի մէջ պահելով, չթողուց որ ցրուին։ Իւր զոհաբերութիւնն այն աստիճան եղաւ, որ երբ Թեհրան վերադարձաւ ու ժամանակէ մը ետքը վախճանուեց, յուղարկաւորութեան ծախքը դժուարաւ կրցան հայթայթել իւր թողուցած գոյքէն։

Քոլերան, այս տարափոխիկ ախտը, վերջին երեք քառորդ դարի մէջ զուցէ ամէն տեղէ աւելի Պարսկաստան երեւացեր է և ամէն անգամ, բաղդատմամբ ուրիշ երկիրների, աւելի շատ կոտորած ըրեր է։ Այս դարի մէջ Թաւրիզ քոլերա մտեր է հետևեալ թուականներին՝ 1822, 1830, 1833, 1846,

1847, 1851, 1858, 1861, 1866, 1871, 1892 և միշտ Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր ամիսների մէջ սկսեր և մէկ ու կէսէ մինչև երկուք ու կէս ամիս տևեր է։ Վերջին քոլերան Մեշեդի մէջ երևան ելնելով, մէկ կողմէ յառաջացաւ մինչ Սաբզուար, միւս կողմէ մտաւ Անդրկասպեան երկիրը, և այն տեղէ ևս յառաջացաւ Բաքու, ուրկէ Կովկասի և բուն Ռուսիոյ ուրիշ քաղաքներն տարածուեցաւ։ Բաքուէ անցաւ Արդաբիլ և այս քաղաքէն ու Տփխիսէն անցաւ Թաւրիզ։ Այս քաղաքի մէջ երևան ելաւ Յուլիս 11-ին կամ 12-ին։ Թաւրիզի մէջ բնակուող հայերի մէկ մասն արդէն քաղաքէն մեկներ էր Մուժումբար ու Ալչամուլք գիւղերն, և ուրիշ մասն ալ քոլերան սկսած ու սաստկացած ատեն հետզհետէ մեկնեցաւ։ Այսպէս, ներքին Թաղի (Ղալա) մէջ մերձ 40, իսկ Էիլաւա Թաղի մէջ մերձ 200 ընտանիքներ մնացին։ Ներքին Թաղէն ուշ մեկնողներէն ու մնացողներէն 58 և դրսի Թաղէն (Էիլաւա) միայն 30 հոգի զոհ դարձան այս տարափոխիկ ախտին։ Երկու Թաղի տուած զոհերի Թիւին մէջ եղած այս մեծ տարբերութիւնն ուրիշ կերպ չենք կրնար բացատրել, եթէ ոչ ջրերի մաքրութեան տարբերութեամբը։ Դրսի Թաղի ջուրն անհամեմատ աւելի քիչ անմաքուր էր քան թէ ներքին Թաղինը։

Մեռնողների մէջ յիշելու է Ատրպատականի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեանն, որ քոլերայէ բռնուելէ ետքը թէև շատ յոյս կար որ ազատուէր, սակայն յանկարծ վիճակը փոխուելով, Օգոստոս 2-ին վախճանուեց։

Մուժումբար փախչող քաղաքացի հայերէն միայն 8, իսկ եւրոպացիներէն այստեղ կամ ուրիշ տեղեր փախչողներէն և թէ քաղաքը մնացողներէն 12 հոգի մեռան։

Դիտելու արժանի է, որ Մոհարրամ ամսի 9, 10 և 11-ին ամենասաստիկ օրերն եղեր են, երբ կրսի օրը մինչ 1500ի չափ մեռնող եղեր է։ Այս արտակարգ սաստկութիւնը տալու է աւելի այն օրերի կրօնական սղատօնի առթիւ մեծ բազմութեամբ մէկտեղ խմբուած լինելուն։

Ըստ պաշտօնական տեղեկութեանց, Թաւրիզի բնակիչներէն մերձ 8,000 հոգի մեռան քաղաքին մէջ, բայց հաւանական է, որ մեռնողների թիւը 10,000-ը անցած լինի։

ԱՐԴԻ ԹԱՒՐԻԶԸ

Կը գտնուի Էյնալ-Զէյնալ լերանց հարաւային արևմուտեան դին։ Քաղաքն այժմ կը բաժանուի 8 մեծ թաղերի, որք իրենց ստորաբաժանումներն ևս ունեն։ Այս թաղերն, որք իրենց անուններն տուեր են նաև քաղաքի դարբասներին, հետևեալներն են. արևելեան կողմը՝ Բաղմէշէ, հարաւային արևելեան՝ Խիաբան, հարաւային՝ Նովբար, հարաւային արևմուտեան՝ Ահրաբ, արևմտեան՝ Գեաջիլ կամ Վարջի, հիւսիսային արևմտեան՝ Սորխաբ։ Թէև քաղաքը պատող պարսպի մէկ մասն անհետացեր ու տներին խառնուեր է և մնացորդն ևս հետզհետէ անհետանալու վրայ է, սակայն այն մասի շուրջն որ պարսպի մէջ կը համարուի, մերձ մէկ ֆարսախ է։ Տներն առ հասարակ շինուած են երկյարկ, որ կը բաղկանայ գետնափորէ և վրայի ծածկոցէ մը, և համարեա բոլորն պարտիզակ կամ պարտէզ մը ունեն, նամանաւանդ պարիսպէ դուրս գտնուածներն մեծ պարտէզ մը կամ ընդարձակ այգի մը ունեն և համեմատութեամբ բնակչաց թիւին, խիստ մեծ տարածութիւն մը կը գրաւեն։

Ամբողջ քաղաքը, պարիսպէ դուրս եղած տներով, այգիներով ու պարտէզներով հանդերձ, մերձ 2 ֆարսախ երկայնութիւն և մէկ և մէկ չորրորդ ֆարսախ լայնութիւն ունի, և կը տարածուի արևելքէ արևմուտք։ Աջի գետի մէկ մասը քաղաքի մէջէն կանցնի և կերթայ Թափիլ Ուրմիոյ լիճը։ Թաւրիզ ուրիշ գետ չունի. ոռոգման ու գործածութեան ջրերն ամէնքն ալ կը գան աղբիւրներէ (քեհրիզ), որոնց թիւը 800-ը կանցնէ։ Այս ջրերը ստորերկրեայ ջրանցքներով քաղաքի ամէն կողմերը կը տարուին, սակայն այս ջրանցքներէ շատերն չմաքրելու պատճառով ջրերն կը գէշանան ու անմաքուր կը դառնան։ Այ-

դիների ու բանջարանոցների շատնալովը ջրի պէտքը օրէ օր կաւելնայ և բաղդատմամբ Ատրպատականի ուրիշ քաղաքներին, Թաւրիզ ջրի մեծ պակասութիւն ունի։

Թաւրիզի օդը խիստ առողջարար է ու մաքուր, կլիման բարեխառն։ Ձմեռը ցրտութեան աստիճանը շատ քիչ անգամ — 24 սանթիգրադի կիջնէ, իսկ ամառն ամենատաք ժամանակն արևին մէջ + 46°-ը չանցներ։ Ամենացուրտ ժամանակը Յունուարի կէսին մինչ Փետրուարի կէսն է, և ամենատաք ժամանակը՝ Յուլիսի կէսէն մինչ Օգոստոսի կէսն։ 1870, 71 և 72 տարիների մէջ ամենօրեայ առաւօտեան ժամը 9-ին առնուած դիտողութիւններէն կերևի, որ Յունուար և Փետրուար ամիսների միջին ցրտութիւնն է օդին մէջ — 8½, իսկ Յուլիս ու Օգոստոս ամիսների միջին տաքութիւնն է արևին մէջ + 30 սանթիգրադ։

Ամառն երեկոներն քիչ բացառութեամբ զով են և արշալոյսի դէմ աւելի ցուրտ, քան թէ տաք։ Տաքէ ցուրտ և ցրտէ տաք փոփոխութիւնն ընդհանրապէս աստիճանաբար և կանոնաւոր եղանակով, նամանաւանդ օդը խոնաւ չլինելով, բնակչաց ամենամեծ մասը տանիքի վերայ կամ բակին մէջ բացութեայ կը քնանայ։

Թաւրիզ ամէն տեսակ ուտելեաց մեծ առատութիւն կայ և բաղդատմամբ այլ տեղաց՝ գները մատչելի են։ Պտուղներն զանազան են առհասարակ, աղէկ ու անուշահամ, որոնց մէջ յատկապէս յիշելու է խաղողն (որի տեսակներն ոմանք մինչ երեսուն կը հաշուեն), դեղձը, ծիրանը և տանձը։ Ընդեղէնները, բանջարեղէնները, դալարեղէնները բազմաթիւ և բազմազան են և առհասարակ Ատրպատական բուսած ուտելեղէնների ամենամեծ մասը աստ կը գտնուի։

1869-ին, Թաղապետների ցուցակագրած թուահամարին համեմատ, որ ճշտութեան մօտ կը կարծուի, Թաւրիզ քաղաքն ունէր 32,000 տուն կամ ընտանիք։ Այն թուականէն ի վեր եղած աճումն ու յաւելումն հաշուի առնելով և ասոնց վրայ ա-

ելցնելով քաբանսարանների մէջ ապրող պանդուխտներն, որք Թեահամարի մէջ չէին մտած, պէտք է որ այժմ բնակչաց Թիւը մօտենայ 250,000-ի։

Տեղացիք կրԹութեան կողմէ շատ ետ են. քաղաքին մէջ հաւանաբար հարիւրին չորս մինչ վեց լինի դրագէտների կամ դրաճանաչների համեմատութիւնը։

Բացի միայն մէկ դպրոցէ, որ կառավարութեան հաշուով կը պահի և ուր պաշտօնեաների զաւակները միայն կը յաճախեն, ժողովուրդն իր համար առանձին դպրոց մը, — որ քիչ-շատ արդի դաղափարների կամ մեթոդների համեմատ կազմուած լինի, — չունի։ Բարձրագոյն դասակարգին պատկանողներն հոդեւորական ուսուցիչ մը վարձելով, տան մէջ իրենց զաւակները կրԹել կը տան, իսկ ուրիշներն ընդհանրապէս զաւակներն կը դրկեն հոգեւորական ուսուցչի մը մօտ, որ 20—30 աշակերտ, երբեմն տղայ ու աղջիկ խառն, գլխին հաւաքելով, մզկիթի մէկ անկիւնն անոնց լոկ կարդալ ու գրել կը սովրեցնէ։ Առաջներն աշակերտուհիների Թիւն աշակերտներէն շատ վար չէր, բայց քանի տարիէ ի վեր հետզհետէ առաջինները կը նուազին ու վերջինները կաւելնան. գուցէ այս առաջ կը դայ իգական սեռն արական սեռին ոչ ընտանի լինելու դաղափարին օրէ օր զօրանալէն։

Թաւրիզի բնակիչներն առ հասարակ աշխատասէր, չարքաշ, քչով գոհ եղող ու խնայող են։ Մեծ մասամբ անդրադէտ լինելով հանդերձ, խիստ ճարպիկ են վաճառականութեան մէջ. ամենաչնչին դրամագլխով կրնան գործել ու շատ անգամ յաջողիլ։

Թէև հազարէ մէկը Թաւրանութեան չորս գործողութեան տեղեակ է, սակայն ամէնքը վաճառականական ամէնէն իրԹին հաշիւները համարիչի (չոԹք) վրայ կամ բերանացի շատ արագութեամբ կրնան ընել։

Արհեստից մէջ Թէև ստեղծիչ ոգի չունեն, սակայն նմանողութեան ու ընդօրինակութեան ձիրքէն զուրկ չեն։ Ամբելն առուտուրի մէջ աւելի ճարպիկութիւն (գրանդի) կը համարուի քան Թէ Թերութիւն, և «դաբբա» ընելն, այսինքն ապրանքը գնելէ ետքը «խաբեր եմ» ըսելով նոր գեղջ մը ևս պահանջելը խիստ սովորական բան է։

Տեղացի բնակիչները հային հետ բաղդատած ժամանակ՝ աչքի զարնող տարբերութիւններէն մէկն ալ այն է, որ մինչ առաջինը անշարժ կը մնայ կամ անդգալի փոփոխութիւն կը մտցնէ իւր կենցաղավարութեան և գործելու եղանակին մէջ, հայը յար և անդադար ամէն բան կը փոխէ կամ կը բարեփոխէ։

Այսպէս, տեղացին կէս կամ երեք քառորդ դար առաջ ինչ եղանակաւ, ինչ ձև զգեստ կը հագնէր, ինչպէս կը ճաշէր ու կընթրէր, իւր տունը ինչ կերպ կը շինէր, ինչպէս կը կահաւորէր, ինչպէս կը գործէր ամէն բանի մէջ, աւելի ևս ինչպէս կը խորհէր, գրեթէ նոյնպէս կամ խիստ աննշան տարբերութեամբ նոյնը կընէ և այսօր։ Սակայն, հայ մարդերն որ դարիս սկիզբը տեղացիների պէս կը հագնուէին, 1827—28 թ. պատերազմից ետքը քիչ-քիչ իրենց զգեստի ձևը «գիւրջի» կոչուածին կամ տփխիսեցւոց հագած ձևին նմանցուցին, և երբ սկսան Ռուսիա ու Եւրոպա երթևեկութիւն ընել, յայնժամ «գիւրջի» ձևը եւրոպականին տեղի տուաւ։ Հայ կանայք ևս, որ առաջներն անթարի և քիւլեջէ կը հագնէին, գլուխներն ու ծնօտնին նախնեաց ձևով կը կապէին և ոտերնին «չախշուր» կը քաշէին, հետզհետէ տփխիսեցւոց նման սկսան հագնուիլ, իսկ վերջին ժամանակներս դպրոցէ ելլող աշակերտուհիներն ընդհանրապէս եւրոպական ձև կը հագնուին և առանց սաւանի (չադրա) կը շրջին։

Հայ բնակչաց նիստն ու կացն և ուրիշ սովորութիւններն ևս օրէ օր աւելի եւրոպականին կը մօտենան քան Թէ տեղականին։

Մինչ այժմ տեղացին կամայ Թէ ակամայ, ինքնաբերաբար Թէ պարտաւորեալ, իւր շահածէն կամ գոյքէն մէկ մեծ բաժին կը հանէ կրօնական նպատակի համար և գրեթէ ոչինչ

կը գոհէ մարդասիրութեան կամ կրթութեան համար, հայն, ընդհակառակն, օրէ օր իւր կրօնական նուէրները կը նուազեցնէ, բայց առատաձեռնութեամբ կընծայէ մարդասիրական ու կրթական նպատակաց համար։

Պէտք է աւելցնել ի նպաստ տեղացիների, որ ասոնք տնտես են և իրենց շահէն միշտ կը ջանան մեծ մաս մը խնայել ու պահել, մինչ դեռ հայն անտնտեսաբար և երբեմն շռայլաբար ամբողջ շահածը կը ծախսէ։ Ի վերջոյ, յիշենք ևս, որ տեղացին իւր գործառնութիւններն կը սահմանափակէ իւր երկրին, կամ առ առաւելն Թուրքիոյ դրկից կամ Ռուսիոյ սահմաններին մէջ, իսկ հայն աւելի ձեռնարկող ոգիով, ի խնդիր ուսման, արհեստի կամ շահի, ամէն երկիր համարձակաբար կը դիմէ։

Թաւրիզ գտնուող եւրոպացիներն՝ այր, կին, երեխայ, ամէնքը հաշուելով, 70-ի չափ են և հայոց հետ խառը կը բնակին։ Հինգ հիւպատոսարաններ կան, և ըստ հնութեան կարգի հետևեալներն են՝ Անգլիոյ, Ռուսիոյ, Թուրքիոյ, Ֆրանսիոյ և Աւստրօ-Հունգարիոյ։

Հայերն, որք այժմ (1897) 581 տուն կամ ընտանեաց չափ են, երկու թաղի մէջ խմբուած են. առաջինը կը կոչի Ներքին կամ Ս. Աստուածամայր եկեղեցւոյ թաղ, որի ամբողջութիւնը պարսկերէն «Մհար Մէհին» (աղճատ թրքերէնով՝ «Միար-միար») կը կոչի. երկրորդը՝ Դրսի կամ Լիլաւայի թաղ կը կոչի։ Աւանդութեամբ կըսուի, որ հայերը Մհար Մէհին գալէն առաջ «Դավաչի» թաղամասին մէջ կը բնակէին։

Դավաչիի մէջ, որն հայոց արդի բնակած թաղի հիւսիսային դին և անորմէ մերձաւորապէս մէկ հազարամեթր հեռու է, հայերը մի գերեզմանատուն ունէին, ուր ըստ շատերի ասութեան՝ հին տապանագրեր կային, շատ հին թւականով։ Այս գերեզմանատունը 1853-ին Սահակ եպիսկոպոս Սաթունեանը վաճառեց տեղացւոյ։

Այս նոյն թաղամասի մէջ հայերն ունեցած են եղեր

նաև եկեղեցի մը՝ Ս. Յովհաննէս անունով, որը շատ աւելի առաջ, ինչ-ինչ պատճառներով անցած է տեղացւոյ ձեռքը, թերևս այն ժամանակ, երբ դադրեր է հայաբնակ լինելէ։

Թաւրիզի արդի հայ ժողովուրդը բաղկացած է դարադաղցիներէ, որոնք Փայտակարանի գիւղերէն հետզհետէ գաղթելով, եկեր, այս քաղաքը հաստատուեր են և այժմ համեմատաբար ժողովուրդի ամենամեծ մասը կը կազմեն։ Հայ բընակչաց մէջ կան նաև Պարսկաստանի միւս նահանգներէն և օտար երկիրներէ ու այլ և այլ տեղերէ հաստատուողներ։ Բուն Թաւրիզեցի հայերը այժմ ժողովուրդի ամենափոքր մասը կը կազմեն։

Ներքին թաղի հայ ընտանիքների թիւն է 219 և ունեն հետևեալ զբաղումները.

Վաճառական, գործակատար ու գրագիր	74
Ոսկերիչ	18
Գինեվաճառ	14
Դերձակ	13
Պաշտօնեայ	6
Հիւսն	5
Ուսուցիչ	5
Վիրաբոյժ բժիշկ (3 այր, 1 կին, տեղական իմաստով ինքնուս բուժողներ)	4
Լուսանկարիչ	4
Աչաբոյժ (կին)	3
Ապակեհատ ու ներկարար	3
Բժիշկ	1
Քահանայ	1
Ջանազանք (ծառայող և փոփոխական գործերով պարապողներ)	68
Գումար՝	219

Պէտք է աւելացնել, որ համեմատաբար, օրէ օր, վա-

ճառականաց և արհեստաւորաց թիւը կը բազմանայ, իսկ ձեռագործ արհեստաւորացը կը քիչնայ։

ՆԵՐՔԻՆ ԹԱՂԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅԸ

Դաստիարակութիւնը տեսակ մը ջերմաչափ է, որով խիստ դիւրին է ազգի մը յառաջադիմութիւնը կամ յետամնացութիւնը դատել։

Վարժարանների բազմացումն և դպրոցական կրթութեան զարգացումն ու տարածումը, ժողովուրդի մը յառաջադիմութեան ստոյգ ապացոյցներն են։ Ուստի հարկ կը համարիմ Թաւրիզի վարժարանի հաստատութեան համառօտ պատմութիւնն ընել։

1833 թուականէ առաջ այս քաղաքին մէջ հայոց յատուկ վարժարան չկար, այլ քահանաներ և մերթ աշխարհական անձինք, իրենց տունը տղայք հաւաքելով, ընթերցանութիւն և քերականութեան տարերքը կը սորվեցնէին։ Այս կերպի Ուիլիէմ Փրայսի 1810-ին Թաւրիզ ըրած ճամբորդութենէն։ Ինչպէս տեսանք, նա քահանայի մը տուն իջևանած լինելով, կըսէ որ երէցը բացի քահանայութենէ, ուսուցչի պաշտօն ևս կը կատարէր, իւր տան մէջ ժողոված աշակերտաց դասատուութիւն ընելով։

Թաւրիզի մէջ հայոց յատուկ վարժարան մը շինուեցաւ 1833 թուին, Մատեոսի Գասպար Շահբազեանի ջանքովը, ժողովուրդի ձեռնտուութեամբն և եկեղեցւոյ դրամովն։

Այս շէնքը եկեղեցւոյ բակին մէջ էր և կը բաղկանար մէկ մեծ սրահէ և մէկ փոքր սենեակէ։ Առաջինն դասարանի և երկրորդը վարժապետի գործածութեան կամ բնակութեան համար էին։ Նորակառոյց վարժարանը յանձնուեցաւ բաղդադցի Մանուէլ անունով ուսուցչի մը։ Այս անձը թէև ուսեալ վարժապետ մը չէր և Թաւրիզեցւոց բացատրութեամբ քերականութիւն ու ճարտասանութիւն չգիտէր, սակայն, այն

ժամանակի համար խիստ պիտանի մի առաւելութիւն ունէր, որ էր իր շատ դեղեցիկ և դիւրընթեռնելի ձեռագիրը, որով անոր մօտ աշակերտողները քիչ բացառութեամբ խիստ վայելչագիր եղան։

1832-ին Մեսրովբ Թաղիադեանց Թաւրիզ գալով, առանձին մի տան մէջ սկսաւ քանի մը աշակերտների ևս դասատուութիւն ընել։ Բայց Թաւրիզեցիք այս բարձր վարժապետի յարգն ու արժանիքը չկրցան գնահատել և կարողութիւն չունէին բաւարար ռոճիկով զայն գոհացնել։ Աւելցնենք ասոնց վերայ, որ Թաղիադեանցի կինը սոյն միջոցներին մեռաւ Թաւրիզի մէջ, և այս պատճառով Թաղիադեանց մեկնեցաւ Թաւրիզէն, ալ չվերադառնալու համար։

Թաղիադեանցի կնոջ դերեզմանը կը գտնուի Ս. Աստուածածին եկեղեցւոյ աջ կողմը եղող դրան մօտերն և տապանաքարին վերայ սոյն հակիրճ բայց իմաստալից տապանագիրը կայ.

Թանգ Մեսրոպայ Թաղիադեանց,
Օտար յիմոց հայրենեաց,
Ի ծնանիլ զմարդ յաւխարհ,
Ծնաւ ինքնին առ Ա.Ծ։ 1832

Ասկէ ժամանակ մը ետքը Թաւրիզ հասաւ բաղէշցի Ղազար Մարտիրոսեան վարդապետն, որ տուն մը վարձելով, սկսաւ աշակերտներ հաւաքել և ուսուցչութիւն ընել։ Սակայն, Ղազար խարդաւանութեամբ Պօղոսի ուսուցչութիւնը խափանեց, որով վերջինս պարտաւորուեցաւ մեկնիլ։ Կարապետ բաղէշցի վարժապետ մը ևս Պօղոսի բախտին ենթարկուեցաւ և Ղազար մնաց միակ տէր վարժարանին։

Այս վարժապետն այն ատենները տիրող դաղափարին համեմատ դրոց աշակերտ էր, այսինքն քերականութիւն, ճարտասանութիւն գիտէր։ Ասոր աշակերտներէն շատերն իրենց ուսուցչի իմացածին չափ բան սորվեցան, որի վերայ ոմանք

ետքէն աւելցուցին եւ պարսկերէն լեզուի մասնաւոր գիտութիւնը։ Ղազար յընթացս իւր ուսուցչութեան յօրիներ է քանի մը տաղեր ու ոտանաւորներ, որոնց տներուն սկզբնագրերը տաղերը նուիրուած անձանց, աշակերտաց և կամ իւր անունը կը կազմեն։ Ասոնք տպագրութեան արժանացած չլինելով, իբր օրինակ, մէկ-երկուքի սկիզբներն ասա կը բերեմ.

Ի գնալ գարնան ես քեզ կարոս մնացի,
Արագ ելեալ ի գլուխ լերանց գնացի,
Զքեզ ոչ տեսեալ, ես սուգ առեալ յոյժ լացի,
Հեծեծանօք յոգւոց հանեալ ասացի.
Բացիր, բացիր, իմ կարմիր վարդ, անմման,
Գեղդ նման արեգական շողշողման,
Աչխարհ՝ զուր աչխարհ, քեզ վա՜յ միշտ եւ յար
Տայ անարգանօք խեղճ բաբուն Ղազար,
Խաբանօք խաբես, չտաս, բայց թէ չար
Ի յուսադրութենէդ բազմօք անյարմար։

Ղազարի մեկնմանէ ետքը անոր աշակերտներէն ոմանք և մասնաւորապէս Տէր Յովսէփ Տէր Յովսէփեան ստանձնեցին ուսուցչութեան պաշտօնն։ Իրաց այս վիճակը տեւեց մինչ Սահակ եպիսկոպոս Սաթունեանցի Ատրպատականի թեմին առաջնորդ կարգուիլը (1850 թ.)։

Յիշատակաց արժանի սոյն անձը, Թաւրիզ հասնելով, գտաւ որ ոչ միայն վարժարանի սրահն անբաւական և անյարմար մի տեղ էր, այլ նաև Առաջնորդարանն իսկ, որ միայն երկու փոքր սենեակէ կամ խուցէ կը բաղկանար, խղճուկ և անշուք մի շէնք էր, անբաւական մինչ անգամ վարդապետի մը բնակութեան, ուր մնաց թեմական առաջնորդի մը, ուստի ձեռն ի գործ մխեց յարմար վարժարան մը և վայելուչ առաջնորդարան մը շինելու։

Սահակ մեծամեծ դժուարութեանց և խոչընդոտներու հանդիպեցաւ։ սակաւաթիւ, տգէտ ու շահասէր անձանց կողմէ, մասնաւորապէս մէկէ մը, որին գրիչ մը Վասակ մականունը տուեր է։ Սակայն նա ամէն հաստատամտութեամբ շարունակեց իւր ձեռնարկած գործն, առատաձեռնութեամբ ծախսեց ոչ միայն առաջնորդութեան ամբողջ հասոյթն, այլ և իւր հետ բերած սեփական գումարն, որ մօտ 3,000 ռուբլի էր։ Նա հայրենասիրաբար ամէն աշխատութիւն, վիշտ և նեղութիւն տարաւ և համբերութեամբ ու խոհեմութեամբ հետզհետէ հանդանակեց տեղացի ժողովուրդէն և օտարաքաղաքացի անձերէ փոքրիկ գումարներ, և այսպէս յաջողեցաւ ի վերջոյ կանգնել, աւարտել առաջնորդարան մը երկյարկ շէնքով, ունենալով սրահներ, սենեակներ և պիտոյական ծածկոցներ ու դեղեցիկ միայարկ վարժարան մը, որ կը բաղկանար երկու սրահներէ և ուրիշ շէնքերէ։ Թաւրիզեցիք պարտ են ընդ միշտ երախտագէտ մընալ այս հայրենասէր անձին և անոր յիշատակն անմոռաց պահել իրենց սրտին մէջ։

Նոր վարժարանը Ներսէսեան անունը ստացաւ և 1852-ին բացուելով, մօտ 100-ի չափ աշակերտներ սկսան յաճախել։ Ուսանելի առարկաներն էին՝ հայերէն ընթերցանութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, վայելչագրութիւն, սրբազան պատմութիւն, թուաբանութիւն, երգեցողութիւն և պարսկերէն լեզու։

Այս վիճակն անհամեմատ բարձր ու բարեկարգ էր առաջուանէ և հետզհետէ յառաջադիմելու յոյս կը տար։ Սակայն, Սահակի մահուամբ, 1856-ին, վարժարանի դրութիւնը վատթարացաւ գլխաւորապէս եկամուտի պակասութեան պատճառով։ Առաջնորդական փոխանորդ Յակովբ վարդապետ Շահբազեանի ատեն անտարբեր վիճակի ենթարկուեցաւ։ Աբել եպիսկոպոս իւր առաջնորդութեան ժամանակ ջանաց քիչ-շատ կանոնաւորել վարժարանը, և 1860 թուականին, ֆրանսերէն լեզուի ուսումն ևս մտցուց ուսանելի առարկաներու շարքը, բայց քիչ ատեն ետքը էջմիածին կանչուելով, վարժարանն նախկին դրութեան մէջ ինկաւ։

1862-ին, Յովսէփ խան Մոյսէեան և քանի մը անձինք միաբանելով, առանձին տան մէջ ուրիշ վարժարան մը ևս բացին, ուր կը պաշտօնավարէին պր. պր. Սահակ Տէր Աբրահամեան և Սամուէլ Գիւլզադեան և հայերէն, անգլիերէն, ֆրանսերէն և պարսկերէն դասատուութիւններ միանդամայն սկսեցան։ Սակայն, այս առանձին վարժարանն քանի մը ամսէ ետքը դոցելով, մասնաւոր արդիւնք առաջ չբերաւ։

Գէորգ եպիսկոպոս Վեհապետեան 1861-ին Ատրպատականի վիճակաւոր առաջնորդ կարգուելով, ուզեց քիչ-շատ վարժարանը բարեկարգել, բայց տնտեսական պակասութեան պատճառով մեծ փոփոխութիւն չկրցաւ տալ։

Վեհապետեան 1865-ին Թեհրան երթալով, յաջողեցաւ վեհափառ Շահէն տարեկան 200 թումանի թոշակ ձեռք բերել Ներսէսեան վարժարանի համար։ Այս նոր եկամտի աւելնալովը, վարժարանի վիճակը մի քիչ աւելի ապահով դարձաւ, սակայն այն դեռ շատ հեռի էր յառաջադէմ ու արդիւնաւէտ կրթարան մը լինելէ։ Մինչ 1868-ի ատենները վարժարանը գրեթէ բոլորովին առաջնորդների կամ անոնցմէ կարգուած փոխանորդների իրաւասութեան տակ էր. ամէն ինչ անոնք կը տնօրինէին, ինչպէս ուզէին, այնպէս կը պահէին և ժողովուրդին որևէ հաշիւ ու համար չէին տար։ Սակայն, այս թուականին ժողովուրդը շարժեցաւ, ուզեց իւր վարժարանը ինքն կառավարել և այս առթիւ վարժարանի տնտեսութեան համար առաջին անգամ ընտրական միջոցով հոգաբարձութիւն մը հաստատեց, որին նախագահն եղաւ ի պաշտօնէ Ատրպատականի առաջնորդը։

Սոյն հոգաբարձութիւնն սկսաւ աւելի հոգ տանիլ վարժարանին, բայց մեծ բան չկրցաւ ընել, դարձեալ մուտքի նուազութեան պատճառով։ Արդ մեծ քայլ մը առնուեր էր և եթէ ժողովուրդն շարունակէր զբաղուիլ վարժարանի խնդրով և հոգս ունենար անոր բարելաւութեան համար, անտարակոյս, այս հպատատութիւնն հետզհետէ կը բարեկարգուէր ու կը յառաջադիմէր, սակայն ինչպէս միշտ, այս անգամ ևս ժողովուրդի եռանդը պաղեցաւ և դպրոցն անտես առնուեցաւ և անտարբեր վիճակի մէջ ինկաւ։

Անդրէաս եպիսկոպոսի օրով, 1873-ին, վարժարանը դրամական խիստ նեղ վիճակի մէջ գտնուելով, քանի մը անձինք աւելի ինքնաբերաբար քան թէ ուրիշներէ թելադրուած, հանդանակութիւն մը բացին, որին ժողովուրդը, բնիկ թէ օտարաքաղաքացի, առատաձեռնաբար մասնակցելով, մերձ 3,500 թումանի չափ գումար մը հանդանակուեցաւ, և այս առթիւ Ներսէսեան վարժարանի անունը Աբրամեան դպրոցի փոխուեցաւ։ Այս ատեններն ևս ռուսաց կառավարութիւնը Կովկասի փոխարքայի միջոցով տարեկան 100 տուկատի թոշակ մը շնորհեց։

Այս հանդանակութեան և նոր թոշակի աւելնալովն դպրոցի տարեկան մուտքը մերձ 1000 թուման եղաւ, որով նոր ուսուցիչներ վարձուեցան և դպրոցն սկսաւ քիչ մը բարեկարգուիլ ու զարգացման շաւղին մէջ մտնիլ։

Երկու տարիի չափ այսպէս շարունակելէ յետոյ ուսուցիչ Յակոբ Մելիք Յակոբեանի (Բաֆֆի) հրատարակած յօդուածներին սխալ մեկնութիւն տալով, վէճ մը ծագեցաւ ժողովուրդին մէջ. Բաֆֆի պարտաւորուեցաւ մեկնիլ Պարսկաստանէ, դպրոցի բարեկարգութիւնն անտես առնուեցաւ, որով և խանգարուեցաւ։

Դպրոցական գործն այսպէս կաղէ կաղ շարունակուեցաւ մինչ 1879-ի մէջերն, երբ բոլորովին երեսի վրայ ձգուած ու գրեթէ դոցուած վիճակի մէջ կը գտնուէր։ Սոյն ատեններն ժողովուրդն Աւարայրեան Ընկերութեան օրիորդաց դպրոցի բացումէն գրգռուելով, քանի մը անգամ ժողովներ ընելէ ետքը, նոր հոգաբարձութիւն մը ընտրեց և նոր կանոնագրութիւն*)

*) Այս կանոնագիրը ևս խմբագրեցի, որն եղաւ առաջին եւ գլխաւոր կանոնագրութիւնը, որ Առաջնորդի, հոգաբարձութեան եւ ժողովուրդի իրաւունքներն ու պարտաւորութիւններն կը սահմանէր։

խմբագրել տալ Արամեան դպրոցի գործերն ըստ կարգին վարելու և բարեկարգ վիճակի մէջ դնելու համար։

Արամեան դպրոցն քիչ մը բարեկարգուեցաւ, բայց շատ յառաջադիմութիւն չկրցաւ ընել։ Մուշեղեանց եպիսկոպոսի առաջնորդութեան օրով միջակ վիճակ մը ունեցաւ։ Մեսրովբ վարդապետ Ճերմակեանի ատեն հոգաբարձութեան և այս առաջնորդական փոխանորդի միջև ծագած անհամաձայնութեան պատճառով դպրոցն նորէն անտարբերութեան մատնուեցաւ։

Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեանի առաջնորդութեան ժամանակ (1887—1892) դպրոցն ոչ միայն յառաջադիմութիւն չբրաւ, այլ յաճախ, երկար միջոցներ խիստ անբարեկարգ ու խանդարեալ վիճակի մէջ գտնուեցաւ։ Այս կղերիկոսը շատ խորամանկ, հնարագէտ ու դիւրաթեք մէկն էր, լեզուն ըստ յարմարութեան գործածելու դիւրութիւնը կը ժառանգէր, խիստ յանդուգն ու հրամայող բնաւորութիւն մը ունէր և դեռ երիտասարդ լինելով (Թաւրիզ եկած ատեն 40-ը նոր կը բոլորէր), ծանր աշխատութիւն, կարողութիւն և մեծ տրամադրութիւն կը ժառանգէր։ Այս անձը շատ յարմար և գուցէ յատկապէս Ատրպատականի համար ստեղծուած առաջնորդ մը կը լինէր և մեծ բարիք կրնար ընել հայոց, եթէ վերի առաւելութեանց հետ անտանելի և աններելի պակասութիւններ ևս չունենար։ Իւր ընչաքաղցութիւնն չափ ու սահման չունէր և զայն յագեցնելու համար ոչինչէ քաշուել չունէր։ Խիղճ ըսուած բանը չէր գիտեր։ Փառասիրութիւնը, սնապարծութիւնը և եսականութիւնը վերին աստիճանի մեծ էին և զինքն ուրիշներին անսիրելի ու անյարգելի կը դարձնէին։ Ամէն բանի մէջ իւր կիրքն երևան կելնէր և այս այնչափ աճած էր, որ զինքը գրկելով ուղիղ դատողութենէ ու խոհականութենէ, յաճախ իրեն անդարմանելի սխալներ գործել կը տար և իւր անհամեստութիւնը կը դարձնէր այս պակասութեանց լրումն տալու։

Դպրոցին գալով՝ ինչպէս ուրիշ ամէն գործերի մէջ, ասոր մէջ ևս բացարձակ տէր և տնօրէն կուզէր դառնալ և իւր կամքն օրէնք համարել տալ։

Ամէն կանոն ոտնատակ տալով և լոկ անուանական ու կեղծ ընտրութիւն կատարել տալով, այնպիսի անձեր հոգաբարձու ընտրել կը տար, որք բացի «Սրբազան, դու ամէնէն լաւ գիտես» ըսելէ, ուրիշ բան չէին կրնար խորհել ու ընել, և կամ այնպիսիներն հոգաբարձութեան մէջ կը բերէր, որ իւր բարեխօսութեան ու օգնութեան կարօտութիւն ունենալով, կամայ ակամայ իրեն չկրնային հակառակել, այլ կամակից ու հաճոյակատար լինէին։ Բայց երբ իր ուզած ընտրութիւնն իրեն չյաջողէր և ընտրուած հոգաբարձուներէն ամէնքը կամ մէկ մասն անկախ անձեր լինէին, յայնժամ ամէն ջանք, ամէն հնարք ի գործ դնելով, ուսուցչաց մէջ հակառակութիւն և հոգաբարձուների մէջ անհամաձայնութիւն ու երկպառակութիւն կը սերմանէր, որով այս ամէն անձանց մէջ ինքն միայն իրաւախոհ ու դատաւոր լինելով, դարձեալ ըստ իւր քմաց ամէն բան տնօրինել կը տար։

Այս բռնապետութիւնն ու մաքիավելութիւնն տանելի, գուցէ ներելի ևս լինէին, եթէ բաւականին ազդասիրութիւն ունենալով՝ ուզէր իւր կամքը յառաջ տանելով հանդերձ, դպրոցը յառաջադէմ ու բարեկարգ վիճակի մէջ դնել։ Սակայն իւր բարք ու կիրք արդելք էին ամէն բարեկարգութեան։ Իւր կրթութիւնն վանական էր ու խիստ թերի, որով ոչ կարողութիւն և ոչ տրամադրութիւն ունէր արդի ուսումնական դաղափարներն ու փափուկ խնդիրներն դնահատելու և ըմբռնելու, և ուրիշների միջամտութիւնը չկրնալով տանել, աւելի կընտրէր դպրոցը և ամէն բան անկարգութեան ու յետադիմութեան մէջ թողնել, քան թէ մէկն իւր բացարձակ իշխանութեան մասնակից տեսնել։

Մխիթարեան 1892 թ. Օգոստոս 2-ին քոլերայէն վախճանուեցաւ Թաւրիզի մէջ, և իւր փառասիրութեան հակառակ, խիստ անշուք կերպով թաղուեցաւ։ Իւր անչափ ագահութեամբ

դիզած դրամներն, որք կը կարծէին պատկառելի գումարի մը կը հասնէին, ոչ կրցաւ և ոչ ալ ժամանակ ունեցաւ իբր տէր իւր ցանկութեան ու կամաց համեմատ գործածել և կամ ապագայի համար յիշատակ թողուլ։

Մխիթարեանի մահէն մինչ այժմ (1897) ևս Արամեան դպրոցը սովորական ելևէջի, այսինքն երբեմն անտարբեր, երբեմն քիչ մը բարեկարգ և երբեմն ևս յետադէմ վիճակի մէջ եղեր է։

Այժմեան Արամեան դպրոցն ունի ընդամենը եօթը դասարան, նախակրթարան, կրթարան, պատրաստական, Ա. Բ. Գ. և Դ. դասարան. աշակերտաց թիւը մերձ հարիւր է և ուսանելի առարկաներն են՝ հայերէն, գրութիւն, գծագրութիւն, երգեցողութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, կրօն, հայոց պատմութիւն, բնական պատմութիւն, պարսկերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ։

Արդ, եթէ Արամեան դպրոցի ներկայ վիճակը բաղդատուի Սաթունեանի ժամանակ եղածի հետ, կարելի է ըսել, որ ներկայի աստիճանն աւելի բարձր է։ Սակայն, երբ նկատի առնուի որ այն ժամանակ Ներսէսեան դպրոցի մուտքն անապահով ու անորոշ վիճակի մէջ էր և տարեկան ծախքը հազիւ երկու հարիւր թումանի կը բարձրանար, իսկ ներկայիս Արամեան դպրոցի եկամուտն ապահով է և ծախքն 2,500 թումանը կանցնէ, նամանաւանդ երբ նկատողութեան առնուի, որ ասկէ կէս դար առաջ հայոց մէջ կրթութիւնը դեռ հին դրութեամբ էր և անկէ ի վեր է, որ ուսման և ուսուցանելու եղանակը մեծ փոփոխութիւն կրեր է և ամէն տեղ դպրոցներն արտակարգ յառաջադիմութիւն ըրեր են, երբ այս ամէնն ի նկատի առնուի, յայնժամ պէտք է ըսել, որ արդի Արամեան դպրոցը Սաթունեանի ժամանակեայ դպրոցին հետ բաղդատելով, շատ յառաջադէմ վիճակի մէջ չէ, և ձեռք բերուած արդիւնքն անհամեմատ նւազ է և ոչ մէկ կերպով կը համապատասխանէ եղած ծախքին։

Շատ բաներ կան, որք պատճառ կը դառնան Արամեան դպրոցի այս անյառաջդիմութեանը, բայց ըստ իս անոնց մէջ ամենագլխաւորն ժողովուրդի անտարբերութիւնն է։

Ժողովուրդին կիյնայ անհատաբար և հաւաքաբար դպրոցի յառաջադիմութիւնը ի մտի ունենալ։ Ժողովուրդն բարոյական պարտաւորութիւն պիտի զգայ խղճի մտօք ընտրել այնպիսի հոգաբարձուներ, որք այդ գործին ընդունակութիւն ու յարմարութիւն ունին։ Նա պարտաւոր է ուշադիր հոգատարութեամբ հսկել դպրոցի վիճակին և զայն կառավարողների ընթացքին վերայ, այլ և իբր տէր, հաշիւ պահանջել թէ առաջնորդներէն և թէ հոգաբարձուներէն և զանոնք պատասխանատու ընել ամէն անկարգութեանց համար։ Մինչ ժողովուրդն չարթննայ և դպրոցի ու ազգային գործոց նկատմամբ ունեցած անտարբերութիւնը ջերմ ու սրտագին հոգատարութեան չփոխէ, դպրոցը պիտի մնայ այն, ինչ որ եղեր է մինչ այժմ։

ՆԵՐՔԻՆ ԹԱՂԻ*) ԱՂՋԿԱՆՑ ԴՊՐՈՑ

Մինչ 1868 թուականը Թաւրիզի մէջ իգական սեռի համար որևէ դպրոց չէ եղեր։ Բնակիչներէն շատ քիչերն առանձին ուսուցիչ ապահովելով, իրենց տան մէջ ընթերցանութիւն ու վայելչագրութիւն սորվեցնել կրնային։ Այս թուականին մի քանի անձինք միաբանելով, միայն իրենց աղջիկները տիկին Ս. Գիւլզադեանին յանձնեցին, որ առանձին տան մը մէջ սկըսաւ կարդալ-գրել և ասեղնագործութիւն սորվեցնել։

Պր. և տիկին Գիւլզադեանների մեկնումէն ետքը այս դպրոցը դադարեցաւ։ Քանի մը տարի ետքը նորէն սկսաւ նոյն տիկնոջ ուսուցչութեամբ և երկու տարի շարունակելէ ետքը կրկին դոցուեցաւ։

---

*) «Ներքին թաղ»ը Թաւրիզում աւելի յայտնի է «Ղալա» անունով։ կոչւում էր նաեւ «Բնդաբաղ»։ Ծ. Խ.

1879 թ. պարոնայք Ն. Գորոյեանց, Մարտ. Ա. Նազարբէգեանց, Յովհաննէս Նազարեան, Մար. Հ. Նազարբէգեան, Ալ. Տ. Օհանեան, Յովհաննէս Տ. Յովսէփեան և Եր. Մէդէմեան միաբանելով, շատ աշխատութենէ և քանի մը անձանց կողմէ յարուցած դժուարութիւններն ու խոչընդոտները յաղթելէ ետքը յաջողեցան դպրոց մը բանալ «Աւարայրեան» անունով։

Այս հաստատութիւնը, ուր 10 ձրիավարժ և 12 թոշակաւոր աշակերտուհիներ կը կրթուէին, մերձ երկու տարի շարունակուեցաւ, որմէ ետքը միացուեցաւ «Արամեան» դպրոցին։ Թումանեան եղբարք, ի յիշատակ իրենց հանգուցեալ Աննա մօրն, առատաձեռնաբար գեղեցիկ շինութիւն մը կառուցանելով, 1886-ին, աղջկանց դպրոցին յատկացուցին, ուր և փոխադրուեցան աշակերտուհիք և այս առթիւ Ս. Աննայեան դպրոց անունն սկսաւ կրել։ Արդի (1897) աշակերտուհիների թիւը 70-ը կանցնի։ Այս հաստատութիւնն չորս դասարան ունի. նախակրթարան, կրթարան, պատրաստական և ա. դասարան։ Ուսանելի առարկաներն են՝ հայերէն, գրութիւն, գծագրութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, կրօն, հայոց պատմութիւն և ասեղնագործութիւն։ Պէտք է աւելցնել, որ աղջկանց դպրոցը համեմատաբար աւելի արդիւնաւոր է քան տղայոցը։

ՆԵՐՔԻՆ ԹԱՂԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Այս հաստատուեցաւ 1874-ին մի քանի անձանց միաբանութեամբ ու ջանքերով և քիչ ատենի մէջ ժողովուրդի և օտարական ու հեռաւոր հայերի օժանդակութեամբ 500 կտորէ աւելի գրքեր ժողովուեցան։

Սկզբի առաջին և երկրորդ տարին ամէնէն մեծ համակրութեան արժանանալով, օրէ օր ճոխացաւ ու բարեկարգուեցաւ, սակայն ետքէն այս համակրութեանն յաջորդեց անտարբերութիւն, որով և այս հաստատութիւնն բախտակից եղաւ Արամեան դպրոցի վիճակին, լինելով մերթ բարեկարգ,

ու օգտակար, մերթ անբարեկարգ ու անօգուտ։ Այժմ անդ կան մերձ 2000 հատորք, որք կը բաղկանան հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, անգլերէն ու պարսկերէն գրքերէ։

Տարեկան մուտքն, որ բաժանորդներէ կը հաւաքուի, հազիւ հազ կը բաւականանայ լրագրերի ու պարբերաթերթերի վճարմանն, որք գլխաւորապէս Կովկասէ կստացուին. այնպէս որ ընթերցարանն պիտանի ու օգտակար համարուած գրքերով ճոխացնելու համար շատ դրամ չի մնար։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Տիկին Փ. Ս. Յունանեացի և տիկին Հեղինէ Ա. Ժորժի նախաձեռնութեամբ և ուրիշ տիկնանց աջակցութեամբ կազմուեցաւ Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը։

Սա յաջողեցաւ բանալ Մանկական պարտէզ մը, ուր 30-ի չափ երեխայք, երկու սեռէ, նախնական գիտելիք կը սովորին։

Ետքէն ասոր աւելցաւ ևս արհեստանոց մը, ուր քսանի չափ աշակերտուհիք կար ու ձև կը սովորէին։

Այս հաստատութիւնները խիստ օգտակար ծառայութիւն կը մատուցանեն թէ երեխայոց ուսանելի նախնական քայլերն դիւրացնելով և թէ իգական սեռին անհրաժեշտ արհեստ մը սովորեցնելով։

Ս. ԱՍՏԻԱԾԱՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Այս եկեղեցւոյ տեղն առաջ ուրիշ մը եղեր է։ Այս կը հաստատեն թէ աւանդութիւնք և թէ արդի եկեղեցւոյ գլխաւոր դրան աջ կողմի պատին մէջ դրուած մարմարիոնէ յիշատակարանն, որ հետեւեալ արձանագրութիւնն ունի.

«Շնորհիւն Այ տիեզեցաւ Սբ եկեղեցիս ի հայրապետու-

թեան Ղազար ակիրբնտիր Ածայբան կաթուղիկոսն (ար՝) Հայոց առանձնորդութն... Տն Զաքարիա վարդապետ. արդեամբ օրհնեալ վանառականաց եւ տեղականց քաղաքիս ի թվ. Ռ Ճ Ղ Է։

Ամէն հաւանականութեամբ այս գրութեան մէջ յիշուածն, որի համար Ղուկաս կաթողիկոս զեղեցկաշէն և չքնաղատես կը գրէ իւր կոնդակին մէջ, 18-րդ դարին մէջ տեղի ունեցած երկրաշարժներէն խախտելով, 1781-ի երկրաշարժէն բոլորովին աւրուեցաւ։ Ներկայի եկեղեցին անոր տեղի վերայ կամ անմիջական մօտերն հիմնարկուած կերևի 1782-ին։ Թէպէտ իւր գլխաւոր դրան վերն եղող յիշատակարանին մէջ, որ վերջերս հաստատուեր է, կըսի. «Շինեցաւ Ս. Ածամայր եկեղեցիս ի 1 Ապրիլ 1782 ամի և ի Թ. Հայոց ՌՄԼԱ, ի հայրապետութեան Տն Ղուկասու և աշխատութեամբ Յովսէփ աւագ քահանայի Տ. Յովհաննէսեան, արդեամբ հայ ազգի բարեպաշտ ժողովրդականաց», սակայն, շինեցաւ բառի տեղը հիմնարկեցաւ աւելի ճիշտ կը լինէր, քանզի Ղուկաս կաթողիկոսէն նոյն Տէր Յովսէփին տրուած շրջաբերական կոնդակ մը, որով քանի մը գաւառների ժողովուրդը կը հրաւիրի կամաւոր տուրք տալ աւերուած եկեղեցւոյ շինութեան համար, Հայոց Ռ Մ Լ Ա (1782) Ապրիլ 1 թւականը կը կրէ։ Ուստի եկեղեցւոյ շինութիւնն ու լրումն հանդանակութենէ ետքը համարելու է, և աւանդութիւն մը, որ մինչ մեզ հասեր է, կըսէ «Մեծ Տէր Յովսէփ մաղերով դրամ բերաւ և եկեղեցին շինեց»։

Այս կոնդակն, ինչպէս և 18-րդ դարի վերջերէն սկսեալ հայոց կաթողիկոսներէ ղրկուած շատ կոնդակներ և նամակներ պահուած են Տէր Յովսէփեանց ընտանիքի մօտ։

Ղուկաս կաթողիկոսի այս կոնդակն կոչ կընէ Կարսի, Կարնոյ, Տիգրանակերտի, Վանի, Բայազիդի, Խոյի, Սալմաստի, Ուրմիոյ և այլ շրջանների կրօնական և աշխարհական ազգայնոց, և կը տեղեկացնէ. «Լեալ էք ահա, թէ որպէս ահագին, մեծ և երկարաձիգ շարժմամբ զմեծագոյն աւերութիւնս և զվնասս կրեաց քաղաքն Թաւրէզ։ Եւ յայնմ շարժմանէ խրոխուկ և սակաւոր ժողովուրդքն մեր և որք գոն անդ, ոչ սակաւ վնասուց են դիպեալք։ Որք թող զմարմնաւորս վնասակարութեան, կրեալ են ևս զհոգևոր վնասս մեծագոյնս։ Վասն զի Ս. եկեղեցին նոցա, զեղեցկաշէն և չքնաղազարդս (զորոյ զգեղեցկութիւն գիտեն տեսօղք) ի նոյն ահագին շարժմանէն, փլեալ է ի հիմանէ և մեծ տրտմութիւն և վիշտ սրտից եղեալ խղճալի այն այնորիկ, քան զայլ վնասուց մարմնականս, զորս կրեալ են ի շարժմանէ»։

Այնուհետև, կոնդակի մէջ կը նկարագրէ, թէ եկեղեցին պեղելու ատեն այլոց (օտարաց) կողմանէ յափշտակուած են եկեղեցական գոյքերն ու անօթներն, և այսպէս ժողովուրդն մընացած է առանց եկեղեցւոյ և կարօտ հոգևոր որևէ մխիթարութեան։ Ապա կոչ կընէ օժանդակել կամաւոր տուրքով Տէր Յովսէփ քահանային, որ պիտի շրջագայէ այդ գործին յաջողութեան համար։

Կոնդակի վերջաւորութեանը գրուած է. «Գրեցաւ գիրս Շրջաբերական ի ՌՄԼԱ թուոջս մերում, ի յԱպրիլի 1 և ի Շնորհածաւալ Աթոռս Ս. Էջմիածին»։

Ս. Ածածամայր եկեղեցին շինուած է անտաշ քարէ և կիրէ. դրսէն չափելով երկայնութիւնը մերձ 23 և լայնութիւնը 15 մեթրէ մի քիչ աւելի է։ Ունի վեց քառակուսի սիւներ, որոնց վերայ կը կենայ մեծաւ մասամբ կամարակապ ծածկոցը, զորս տարբեր տարածութեամբ մասերի կը բաժանեն ներսն։ Առաջին մասը գրաւուած է մի միջին մեծ և երկու կողմի փոքր սեղաններէ, երկրորդը դասէ, իսկ երրորդն ու չորրորդը ժողովրդատեղէ։ Երրորդ մասի մէջտեղը չորս սիւնների վրայ կը բարձրանայ գմբէթն, որի ներսի բարձրութիւնը յատակէ հաշուելով, մերձ 8 մեթր պէտք է լինի և սիւների միջի հեռաւորութիւնը 5 մեթրի չափ է։

Հետագային, Ստեփաննոս եպիսկոպոսը կողերի երկու փոքր սեղաններն վերցնել տալով, միջի տարածութիւնքն խո-

բանների փոխեց։

Եկեղեցւոյ մէջ գտնուող պատկերներին մէջ յիշատակութեան արժանի է Քրիստոսի խաչէն իջեցումն, որն թէև ոչ յիշատակարան, ոչ նկարչի անունը և ոչ ևս թուական ունի, սակայն տարակոյս չկայ, որ երևելի մի նկարչի գործ է։ Ներկայացումը մեծապէս կենդանի ու բնական է և Պարսկաստանի եկեղեցիների մէջ ասոր չափ արուեստաւոր ու գեղեցիկ նկար չկայ կարծեմ։ Եկեղեցւոյ պատերի մէջ գտնուած թուականակիր քարերէն ամենահինը մի մարմարիոն է, հետևեալ արձանագրութեամբ. «Սբ. խաչս յշոկ է այ ի պաշին կղցին Թուումին որդցն Գրիգոր Նադրի անդրեան ամիրբիշ պղս թվ ռՃժէ*)։ Բակին մէջ եղող տապանաքարերին մէջ ամենահինը զոր ես կրցեր եմ գտնել, ՌՃԺ թուականը կը կրէր։

Այս քարն այժմ անհետացեր է։ Այս թուականներէ այնպէս կարելի է մակաբերել, որ 17-րդ դարի սկիզբէն քիչ առաջ արդի Ներքին Թաղի (Ղալա) մէջ հայ բնակչութիւն չէ եղեր։

Եկեղեցւոյ արևմտեան հիւսիսային կողմը և առաջնորդարանի պատէն քիչ մը հեռու, տապանաքար մը կար, որի համար աւանդաբար կըսուի որ քաջ մարտիկ Ռուստամ Բէգինն է, զոր բռնելով, գլխատել տուեր են։

ԼԻԼԱՒԱ ԿԱՄ ԼԷՅԼԱԲԱԴ ԹԱՂ

Այս թաղի եկեղեցին, որ Ս. Սարգիս կը կոչուի և որն ամէն կերպով Ս. Աստուածամայր եկեղեցւոյն կը նմանի, բացի միայն մեծութեամբ, որ անորմէ փոքր է, շինուեր է 1845 թուին, նախկին եկեղեցւոյ տեղին վերայ, Տէր Զաքար Տէր Զաքարեանի աշխատութեամբ և հայ ժողովուրդի ձեռնտութեամբ ու դրամական նպաստով։ Ասոր աջ կողմի դրան վերայ յիշատակարան մը կայ, որ 1821 թուականը կը կրէ։ Ասորմէ կարելի է հետևցնել, որ այն թուականէ առաջ այստեղ հայեր եղեր են։ Կերևի, որ ռուս-պարսկական պատերազմէ ետքը Լիլաւայի հայերն ևս, Ներքին Թաղեցիների հետ մեկներ են այնպէս, որ կամ ամենևին այնտեղ հայ չէ մնացեր և կամ միայն 3—4 ընտանիք մնացեր են։

Քանի որ այս թաղին մէջ գետինը բաղդատմամբ Ներքին Թաղինէն աւելի աժան է, Ատրպատականի գիւղերէն, Պարսկաստանի այլ և այլ նահանգներէն և ուրիշ երկիրներէ Թաւրիզ գաղթողներն ընդհանրապէս առաջ Լիլաւա բնակութիւն կը հաստատեն և միայն ետքէն ոմանք Ներքին Թաղ կը փոխադրուին։ Այս պատճառաւ Գրսի Թաղն (Լիլաւա) աւելի շատ բազմամարդ կը դառնայ, քան թէ Ներքինը։ Լիլաւա եթէ առաւելութիւն մը ունի, այն է, որ շուկայէն քառորդ ժամի չափ աւելի հեռու է քան թէ Ներքին Թաղը, այլապէս թէ օդն և թէ ջուրն աւելի լաւ են, քան թէ վերջինինը։ Լիլաւայի մէջ գտնուող հայ տների թիւը այժմ (1897 թ.) 362 է։

ԼԻԼԱՒԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Սկիզբներն Լիլաւայի մէջ ուսումնական որևէ հաստատութիւն չկար։ Նոր սկսողները Նանէ անունով կնոջ մը քով պարզ ընթերցանութիւն կը սովորէին, որմէ ետքը Ներքին Թաղի վարժարանը կը գնային շարունակելու համար։

1850-ին եկեղեցւոյ բակին մէջ երկու սրահներ շինուեցան, ուր ընթերցանութեան և թուաբանութեան դասաւորութիւն սկսուեցաւ և աշակերտներն յառաջադիմած ատեն դարձեալ Ներքին Թաղի դպրոցը կը յաճախէին։

1887-ին Թումանեան եղբարք, ի յիշատակ իրենց հօր, դարձեալ եկեղեցւոյ բակին մէջ, կառուցին մի նոր երկյարկա-

*) Ս. Խաչս յիշատակ է Այիպաւեն (եւ իր) կողակցին Խոռոմին եւ որդւոյն Գրիգորի, Նադրի, Անդրէի, Ամիրբիշի, Պողոսին. բին ՌՃԺԵ։

նի շէնք, չորս մեծ սրահով, և աստ փոխադրեցան աշակերտներն։ Այս թեականին աղջկանց ընթերցանութիւն ու ասեղնագործութիւն սովորեցնելու համար դպրոցի սկզբնաւորութիւնն եղաւ, որ հետզհետէ կանոնաւոր ընթացք ստացաւ։ 1895-ին պ. Գրիգոր Թումանեան, ի յիշատակ իւր հանգուցեալ մօրն, առանձին ծախքով կառուցանել տուաւ մի հոյակապ շէնք, որ կը բաղկանայ 15 սրահներէ, բացի նախասենեակներէ և ուրիշ ծածկոցներէ։

Ամբողջ Թաւրիզի մէջ այսպիսի մի գեղեցիկ ու մեծ շէնք չկայ։

Այս դպրոցը, որ Թումանեան*) անունը կը կրէ, եթէ պակասութիւն մը ունի, այն է, որ լինելով եկեղեցւոյ բակին մէջ, զուրկ է չորս կողմը պէտք եղած դատինէ և այսպէս ըսած սեղմւեր է եկեղեցւոյ և ուրիշ առանձին տների միջավայրին մէջ։ Պէտք է ցաւօք ու ափսոսալով աւելցնել, որ չգտնւելով կենտրոնական տեղի վրայ, չի կրնար օգտակար լինել ևս ներքին Թաղի ժողովրդեանը։ Լիլաւացւոց պէտքն ևս այնչափ չէ, որ կարենան անթերի կերպով զայն գործածել։ Թէև ի բացակայութեան պր. Գրիգորի՝ դիտողութիւններ ուղղեցան անոր, կամ անոնց՝ որոնց յանձնւեր էր շինութեան գործը, բայց ինքնահաւանութենէ թէ այլ պատճառէ դրդւած, ամէն խորհուրդ, ամէն թելադրութիւն անլսելի մնաց։ Ոչ միայն այս, այլ և ասոր անյարմար տեղի վրայ կառուցումն անանցանելի պատնէշ կը դառնայ երկու Թաղի ապագայ միացմանն կրթական գործին մէջ։ Ներկայիս Հայկազեան դպրոցի աշակերտաց թիւը 135-ի կը հասնէ։ Ասոնք կուսանին հայոց լեզու, վայելչագրութիւն, գծագրութիւն, երգեցողութիւն, կրօնագիտութիւն, թուաբանութիւն, հայոց պատմութիւն, աշխարհագիտութիւն, բնագիտութիւն, պարսկերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ։

Իսկ Թամարեան դպրոցի աշակերտուհեաց թիւն է 110 և կը սովորին հայոց լեզու, վայելչագրութիւն, գծագրութիւն, կրօնագիտութիւն, թուաբանութիւն, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, առտնին տնտեսութիւն, ձեռագործ և երգեցողութիւն։

*) Այստեղ յիշատակուած զոյգ դպրոցները յայտնի են եղել *Հայկազեան և Թամարեան* անունով, եւ տասնամեակներ շարունակ, անգնահատելի դեր են ունեցել թաւրիզահայ կրթական կեանքում։ Ներկայիս, այս զոյգ դպրոցներից բացի, որոնք այժմ կոչւում են «Ա. սադի» անունով, նոյն երջափակում կառուցւած է մի նոր եւ հոյակապ շէնք՝ իբրեւ աղջկանց միջնակարգ դպրոց, ազգային բարեւար հանգուցեալ Միքայէլ Սահակեանի անւամբ։ Այս նոր դպրոցի կառուցումն սկսել էր բարեւարն ինքը, որի ցաւալի մահից (1963 թ. Յունիս 23) յետոյ աշխատանքները լրացան 1963 թ. Նոյեմբերին, իր կնոջ՝ տիկ. Աշխէն Սահակեանի եւ զաւակների՝ Ռոբերտ, Բաֆֆի եւ Քրիստափոր Սահակեանների առատաձեռն նուիրատուութեամբ եւ անխոնջ ջանքերով։

Հանգուցեալ Միքայէլ Սահակեանը ծնւել է Սալմասի Խոտրովա գիւղում, 1902 թ.։

Նրա միւս եղբայրներն են ազգային բարեւարներ Իսրայէլ եւ Զիբրայէլ Սահակեանները։

Հանգուցեալ Իսրայէլ Սահակեանի յիշատակին, Թեհրանի Հեմարիէ հայաբնակ թաղամասում, 1958 թ. կառուցւեց *Իսրայէլ Սահակեան* ազգային հոյակապ դպրոցը, հանգուցեալի կնոջ՝ տիկ. Արմենուհի Սահակեանի, զաւակների՝ պր. պր. Դանիէլ (Դոդիկ), Հենրիկ ու Անահիտ Սահակեանների եւ պր. Զիբրայէլ Սահակեանի առատաձեռն նուիրատուութեամբ ու մեծ ջանքերով։

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս ընկերութիւնն կազմւեցաւ 1891 թուին, Ներքին Թաղի (Ղալա) և Լիլաւա Թաղի տիկինների միաբանութեամբ։

ի սկզբան նպատակ ունէր օժանդակել քաղաքիս չքաւոր աշակերտուհիների կրթութեան։ Սակայն, անդամուհիների ջանքերի և ուրիշ բարերար անձանց շնորհիւ Ընկերութեան դրամական վիճակն հետզհետէ բարելաւելով և հաստատ հիմքերի վերայ դրւելով, գործունէութեան ծրագիրն ևս ընդարձակւեցաւ։

1892-ին կարուձևի արհեստանոց մը և 1896-ին մանկապարտէզ մը բացւեցան Լիլաւա թաղին մէջ։

Այս վերջին թւականին Ընկերութիւնը կը նպաստէր Լիլաւայի դպրոցին մէջ 33 աշակերտի, Արհեստանոցին մէջ 10 աշակերտուհիների և մանկապարտէզին մէջ 12 մանկանց, ասոնց ուսման և ուրիշ պիտոյքների ծախքերն հոգալով։ Բացի ասոնցմէ, վերջին երեք տարւան (1894—97) միջոցին Ընկերութիւնը ոչ մի ջանք չխնայեց օգտակար լինել Հայաստանի տառապելոց և Պարսկաստան ապաւինող դաղթականներին, անոնց դրամական նպաստներ և զգեստներ հասցնելով։

Ուստի, այս Ընկերութեան Վարչութիւնն և անդամուհիներն յատուկ շնորհակալութեան և մեծ քաջալերութեան արժանի են։

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՔԱՂԱՔԻ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԹԱՂԵՐԻ ՄԷՋ

Ս. Աստուածածին

Այս սրբավայրը կը գտնուի Մարալան կոչուած թաղին մէջ, որ Ներքին թաղէն մերձ 1½ հազարամեթր հեռու է և անոր արևելեան և հարաւ-արևելեան կողմն է։ Կերևի որ Մարալան թաղին մէջ առաջներն շատ հայեր կը բնակէին և Ս. Աստուածածին*) անունով եկեղեցի մը ունէին. ետքէն հայ ժողովուրդը նւազելով, ցրւելով (և ի վերջոյ որևէ պատճառով ու կերպով յայտնի չէ), անհետանալով, եկեղեցին միայն մնացեր է, բայց որին ևս խնամք չտարւելով, աւրւեր է, իսկ տեղն իբրև ուխտատեղի պահւեր է։ Հուսկ յետոյ փոքրիկ մատուռ մը շինւեր է եկեղեցւոյ տեղն և հայերն շարունակեր են անդ ուխտի երթալ։

Նազար Շահբազեանն այս մատուռի չորս կողմի գետինները, որ տեղացի օտար բնակչաց ձեռքն անցեր էին, 1828 թւականէ սկսեալ հետզհետէ գնելով, մեծ աշխատութեամբ ու ծախքով այգւոյ մը կը վերածէ և ուխտաւորներն, մանաւանդ իգական սեռն, օտարականաց անկարգ ընթացքէն ազատ կացուցանելու համար, այդին պատով կը շրջապատէ և այգւոյ ամենամեծ մասը Ներքին թաղի եկեղեցւոյն կը հրիտակէ, որով այս այդին ազգային կալւած կը դառնայ։

Նազար Շահբազեան մատուռի ետևի ձախ կողմը թաղւելով, այնուհետև սովորութիւն եղաւ հայերէն ու օտարազգի քրիստոնեաներէն այս այգւոյ մէջ թաղել։

* * *

Աւանդաբար կը յիշւի Տէրտէրի այգի անունով մէկն ևս, ուր ժամանակին եկեղեցի մը եղեր է, բայց վերջերս ամէն հետք անհետացեր է։

Լիլաւայի արևելեան հարաւային կողմը կը գտնուի Հայոց հանգստարանն, ուր այժմ ընդհանրապէս կը թաղւին հայերի մեռեալներն։

Ըստ պր. Գալուստ Շերմազանեանի, Թիարան թաղի մէջ, Գէօյմէչիդէ քիչ մը վեր, այգւոյ մը մէջ տապանաքարեր գտնւեր են հայ դիրերով, և կը կարծւի, թէ այդտեղ հայոց գերեզմանատուն մը եղեր է, բայց անտէր մնալով, օտարականաց ձեռքն անցեր է ու այգւոյ վերածւեր է և տապանաքարերն հետզհետէ անհետացւեր են։

*) Քանի մը տարի առաջ ջրամբարի մը տեղը փորած ատեն ոսկորներ եւ պղնձէ խաչ մը գտնւեցան։ Այս առանց տարակոյսի կը հաստատէ, որ անդ առաջներն եկեղեցի եւ շուրջը գերեզմանատուն մը եղեր է։

ԹԱՒՐԻԶԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԱՐԱՅ
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Թաւրիզի մէջ ասոնց ունեցածներն երկուք են՝ տղայոց դպրոց, որ հինգ կարգի բաժանուած է.—

Մանկական պարտէզ—	2	տարեշրջանով։
Ծաղկոց	2	»
Տարրական դպրոց	3	»
Բարձր դպրոց	2	»
Աստուածաբանական դպրոց	2	»

Ասոնց մէջ 115 աշակերտ կուսանին (1897—98 թ.)։

Ուսանելի առարկաներն են՝ հայերէն, թուաբանութիւն, գծագրութիւն, աշխարհագրութիւն, երգեցողութիւն, կրօնագիտութիւն, հայոց պատմութիւն, հին և նոր ազգային պատմութիւն, մարդակազմութիւն, անգլիերէն, պարսկերէն, ռուսերէն, ալգեբրա, երկրաչափութիւն, տոմարակալութիւն, եկեղեցական պատմութիւն և աստուածաբանութիւն։

Աղջկանց դպրոց, ուր կան 110 աշակերտուհիներ. ուսանելի առարկաներն են՝ հայերէն, թուաբանութիւն, գծագրութիւն, աշխարհագրութիւն, կրօնագիտութիւն, հայոց պատմութիւն, պատմութիւն հին ազգաց, մարդակազմութիւն, առտընին տնտեսութիւն և ասեղնագործութիւն։

Ըստ վերատեսուչ պր. Ս. Ճ. Ուիլսընի, ամերիկեան միսիոնարք Պարսկաստանին մէջ կրթական 129 հաստատութիւնք ունին, 3510 հայ և քաղդէ-ասորի ուսանողներով, որոնցմէ 360-ը գիշերօթիկ են։

Ասոնց ծախքէն տարին 6,831 թուման կը տայ տեղացի ժողովուրդն, իսկ մնացեալն ամերիկեան ընկերութիւնն։

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ե Ի
ՁԵՌԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Այս երկու զբաղումները ժողովուրդի մը կեանքի բարգաւաճման ու յառաջադիմութեան հետ սերտ կապ ունենալով, աւելորդ չեմ համարեր համառօտ տեղեկութիւն մը տալ Ատրբպատականի և գլխաւորաբար Թաւրիզի վաճառականութեան վերայ։

Թաւրիզն ի սկզբանէ անտի ճանաչուեր է Պարսկաստանի ամենավաճառաշահ քաղաքներէն մէկն։ Իւր ընդարձակ վաճառականութեան շնորհիւ է միայն, որ կրցեր է բազմատեսակ աղէտներէն ետքը, քիչ ժամանակի մը մէջ, վեր ելլել ու ծաղկիլ։

Թողնելով նախկին վաճառականական վիճակն, սկսինք միայն ներկայ դարի երկրորդ քառորդի սկիզբէն։

Ռուս-պարսկական պատերազմին (1827 թ.), ռուսաց այս քաղաքն մտած ատեն Թաւրիզ դեռ բոլորովին վերականգնած չլինելով վերջին երկրաշարժէն կրած ահագին վնասներէն, վաճառականութիւնն ևս անկեալ վիճակի մէջ էր։ Դարիս սկիզբներն, ինչպէս և նախընթաց դարի վերջերն Պարսկաստանի առևտրական յարաբերութիւնները Եւրոպայի հետ կը կատարուէին Պարսից ծոցի Բուշիր նաւահանգստի միջոցով։ Առագաստանաւեր Եւրոպայէն, ամենամեծ մասամբ Անգլիայէն, բեռնաւորուած, Բարեյուսոյ գլխի վրայով և Պարսից ծոցով ճամբորդելով, կը հասնէին այս նաւահանգիստն և փոխադարձաբար ներքին բերքեր առնելով, Եւրոպա կը փոխադրէին։

Սակայն, երբ դարիս երկրորդ քառորդին շոգենաւերի կանոնաւոր երթևեկութիւն հաստատուեցաւ Կ. Պոլսոյ և Տրապիզոնի միջև, Բարեյուսոյ գլխի ճամբան հետզհետէ թողուեցաւ։ Եւրոպական վաճառքներ շոգենաւով Տրապիզոն հասնելով, այնտեղէ կարաւանով Թաւրիզ կը դային։ Այսպէս աւելի կարճ

ժամանակի մէջ Պարսկաստան կը հասնէին, քան թէ Բարեյուսոյ գլխով և Պարսից ծոցով։ Քիչ միջոցի մէջ Թաւրիզ պարսից ամբողջ թագաւորութեան գլխաւոր վաճառանոցն եղաւ։ Երկրի ամէն կողմերէն վաճառականներն անդ սկսան յաճախել ու հաստատիլ, կամ եւրոպական վաճառք գնելու և ներքին կողմերն փոխադրելու և կամ բնիկ ապրանքներ զանազան կողմերէ բերելով, այդ տեղէն արտասահման ղրկելու համար։

Ներածումի վաճառականութեան մէջ նախ կարևոր տեղը կը բռնէին Թիւրքիոյ և ի մասնաւորի Կարինի հայերն։ Ասոնք, ինչպէս կը տեսնուի 1809-ին գրուած ու անվճար մնացած մուրհակներէն, այս թւականէ առաջ Թաւրիզ հաստատուեր էին և վաճառականութեամբ կզբաղուէին, որը և շարունակեցին մինչ 1848-ը։

Սակայն պարսիկների Կ. Պոլիս յաճախելովն և անդ առևտրական տներ հաստատելովն և քանի մը երևելի յոյն տների Թաւրիզ հաստատուելովը, հայերը պարտաւորուեցան վերջիններին տեղի տալ ու քաշուիլ։

Պարսկաստանէ ի Թուրքիա և Եւրոպա արտածութիւնքը գլխաւորապէս ատրպատականցի Թուրքերի ձեռքն եղած է և է ևս։ Ռուսիոյ հետ եղած վաճառականութեան գլխաւոր գործողներն եղան նախ տփխիսեցի հայերն, ապա շուշեցի հայերը և Թուրքերն։ Բայց հետզհետէ վերջիններս քաշուելով, տեղացի հայերն անոնց յաջորդեցին։ Թաւրիզի առևտրի աճումը պակասեց Գիլան նահանգի մետաքսի նւազումով. այդ նահանգի մետաքսը մեծ քանակութեամբ Թաւրիզէ անցնելով, Եւրոպա կուղարկուէր։ Սակայն, ներածութիւնք Ատրպատական զգալի հարուած մը ստացան Սուէզի ջրանցքի բացուելովը, քանզի Եւրոպայէն, գլխաւորաբար Անգլիայէն, շոգենաւեր ուղղակի Պարսից ծոցը երթևեկելով՝ սկսան վաճառքների մէկ մասն Բուշիր հանել, ուրկէ ղրկել երկրի հարաւային և միջին նահանգներն. ուրիշ մի մաս Բասրա հանելով, այնտեղէ փոքր շոգենաւերով Բաղդադ փոխադրել, ուրկէ ալ կարաւանով Պարսկաստանի հարաւային արևմտեան կողմերն ղրկել։

Ուրիշ նւազում մը ևս ունեցաւ Կասպից ծովի վերայ շոգենաւերի կանոնաւոր երթևեկութեան հաստատումով և ռուսաց Թուրքմանստանին տիրելովն, որով այդ ծովի վերայ գտնուող քաղաքների և Պարսկաստանի արևելեան հիւսիսային նահանգների յարաբերութիւններն Թաւրիզի հետ պակասեցան։

Արդի եւրոպական ներածութիւններն գլխաւորաբար Ատրպատականի սպառման համար են. փոքրիկ մաս մը միայն այս նահանգէ շրջականներն կը ղրկուին։

Վերջին տարիներ, որչափ որ ներածութիւնք եւրոպայէ Ատրպատական նւազեցան, անոր հակառակ արտածութիւնք Ատրպատականէ ի Ռուսիա աճեցան։

Այս նահանգի առևտրական դրութիւնը, սկսած 1888-ից, մօտաւորապէս հետևեալն է.

	Ֆրանք
Ներածութիւնք Եւրոպայէ Թուրքիոյ վրայով Ատրպատական	31,000,000
Արտածութիւնք Ատրպատականէ ի Թուրքիա և Եւրոպա	7,500,000
Ներածութիւնք Ռուսիայէ Ատրպատական	4,000,000
Արտածութիւնք Ատրպատականէ ի Ռուսիա	19,000,000

Ներածութեանց մէջ գլխաւոր տեղը կը բռնեն Անգլիոյ բամբակեղէնք՝ որք Մանչեստրի ապրանք ևս կը կոչուին, և զորս տեղացիք «մալիֆաթուրա» կանուանեն։

Անգլիայէ ետքը կը գան Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսա, Զուիցերիա։

Հետաքրքրական է ասա յիշատակել 1886—1890-ի ներածութեանց տարեկան համառօտ հաշուեցոյցները, հակերի քանակութեան վերաբերմամբ, որով կը տեսնուի իւրաքանչիւր ազգէ վաճառականք մերձաւորապէս ինչ համեմատութեամբ կը մասնակցին ներածուած ապրանաց առուտուրին։

1886 թ. Մանչեստրի ապրանք ներածած են (մալիֆթուրա), հակով,

Յոյնք	(ծrարով)	12185
Հայք		7738
Եւրոպացիք		5305
Զանազան ազգեր, բայց գլխաւորապէս պարսիկներ		6918

Զանազան ազգեր, բայց գլխաւորապէս պարսիկներ ներածած են սնդուկով.

Զանազան ապրանք	2365
Ապակեղէն	345
Լուցկիք	3684
Թէյ	3447
Շաքար	25,434
Զանազան ապրանք (ծրարներով)	11,915

1890 թ. Մանչեստրի ապրանք

Յոյնք	(ծrարով)	10,583
Հայք		7,306
Եւրոպացիք		3771
Զանազան ազգեր, գլխաւորապէս պարսիկներ		9619
Զանազան ապրանք		1387
Ապակեղէնք		1564
Լուցկիք		1574
Թէյ		3663
Շաքար		16850
Զանազան (ծրարներով)		7455

Ատրպատականէ արտածութիւնք ի Ռուսիա ճշտելու համար պէտք է երկուքի բաժանել Անդրկովկաս և բուն Ռուսիա։ Անդրկովկաս դրկուած ապրանքներն են՝ բամբակ, մետաքս, միրգ, գորգեղէն և այլն. ասոնց առուտուրի փոքրագոյն մասը ռուսիացի հայոց ձեռքն է, իսկ մեծագոյնը ռուսիացի և ատրպատականցի թուրքերի։ Բացի սոյն բերքերը, շուշեցի և երևանցի թուրքերն պարսկական նահանգէն Անդրկովկաս կը տանին մաքսանենգութեամբ բամբակէ, բրդէ, մետաքսէ հիւսածներ, թէյ, ռոմ, ծխախոտ և այլն։

Այս բոլորի գումարն տարին 4,000,000 ֆրանկի կը մօտենայ։

Ատրպատականէ բուն Ռուսիա դրկուած մթերքերն են՝ չոր պտուղք, գլխաւորապէս տեսակ մը չամիչ (սաքզա), ծիրան, բամբակ, դայլի ուղէսի մորթի, մեղրամոմ, և այլն։ Այս արտածութիւնք, որ Աստարայի և Կասպից ծովի վրայով կը փոխադրուին, 14,000,000 ֆրանկը կանցնին։ Ասոնց առուտուրի մեծագոյն մասը ատրպատականցի հայերի, իսկ փոքրագոյնը թուրքերի ձեռքն է։ Ներածութիւնք Ռուսիայէ դէպի Ատրպատական, որ 3,500,000 ֆրանկէ աւելի է, մեծաւ մասամբ թուրքերի ձեռքն է, թէև հայերն ևս այս առուտուրի մէջ բաժին ունին։ Բացի օտար երկիրների հետ ունեցած առուտուրէն, Ատրպատական նահանգը Պարսկաստանի ուրիշ նահանգների հետ ևս մեծ առուտուր ունի։ Ասոր գրական գումարն իմանալ հնարաւոր չլինելով, փոխանակած հակերի քանակութիւնը մերձաւորապէս հետևեալն է.

Ատրպատականէ ուրիշ նահանգներ՝	30,000 հակ.
Ուրիշ նահանգներէ՝ Ատրպատական	28,000 »

Պէտք է աւելցնել, որ Ատրպատականի և ի մասնաւորի Թաւրիզի վաճառականութիւնը օրէ օր նուազելու, քան թէ աճելու վրայ է։ Վաճառականութեան աճման ամենամեծ խոչընդոտներն փոխադրութեան դժուարութիւններն են, որք առաջ կը գան երկաթուղու և խճուղու պակասութենէն։ Այս պակասութիւնն աւելի արգելք կը դառնայ արտածութեան քան թէ

ներածութեան, քանզի ներածական ապրանքներն ընդհանրապէս աւելի թանկագին լինելով, ծախքերի բարդումն այնչափ ծանր ազդեցութիւն չունէ նրանց գների վերայ, սակայն, արտածող ապրանքներն սովորաբար ժամանակին լինելով, փոխադրութեան ծախքերն և դժուարութիւններն մեծապէս կը բարձրացնեն անոնց նախնական արժէքն, որով և արտածութեան ճմանը մեծ արգելք կը դառնան։

Ուրիշ մի մեծ արգելք է իւրաքանչիւր գաւառէ ներս հաստատուած «ռահդարի» (ճանապարհակալութիւն) կոչուած արքունի տուրքերն, որ զգալի կերպով ապրանքի ծախքերն կաճեցնեն և այդպիսով կը դժուարացնեն ներքին ապրանքի տեղէ տեղ փոխադրութիւնը։ Պարսից կառավարութիւնը, որ մինչ այժմ անտարբեր մնացեր է վաճառականական խնդիրներին, եթէ չփութայ ասոնք իւր հոգածութեան նիւթ ընել, նամանաւանդ արտածութեան զարկ տալ, խճուղիներ և յարակից ուղիներ շինելով ու քիչ-շատ յարդարելով, պիտի տեսնէ մօտ ապագայի մէջ ներածութիւններն անչափ աճած և արտածութիւններն ընդհակառակն նուազած այն աստիճան, որ ասոնց մէջ որևէ համեմատութիւն հաստատելն անհնար պիտի լինի, որով և երկրի տնտեսութեան քայքայումի մեծ պատճառ կը դառնայ։

ԱՐԻԵՍՏՔ

Թաւրիզի հայերն ոչ նուազ յառաջադէմ եղեր են արուեստից մէջ։ Պատմութիւնը կաւանդէ, որ Սուլթան Սէլիմ, 1513-ին, Թաւրիզն առնելէ ետքը երևելի արհեստաւորներն հաւաքելով, Կ. Պոլիս ղրկեց, բայց չի բացատրեր ի՞նչ կարգի արհեստաւորներ են սոքա։ Սակայն, այս յայտնի է, որ Պարսկաստանի ամենաճարտար ոսկերիչներն միշտ հայերն են եղեր, ուստի անհաւանական չէ կարծել, որ Կ. Պոլսի արդի ոսկերիչներն Թաւրիզեցի արհեստաւորների սերունդներն են։

Վերն յիշած արտադաղթութեամբ հանդերձ, Սաֆաւեան

տէրութեան բոլոր ժամանակ հմուտ արհեստաւորներն ընդհանրապէս հայերն էին։ Մեր ժամանակին ևս հայ ոսկերիչներն, դերձակներն, հիւսներն, հրազէնի վերաբերեալ գործիքներ շինողներն անհամեմատաբար կը գերազանցեն տեղացի բնակիչներն։

Թաւրիզի մէջ, առաջներն, արհեստներն բաւականին ծաղկած են եղեր։ Մետաքսագործութիւնն առաջին տեղը կը բռնէր. հիւսուածներն, որք գլխաւորաբար երեք տեսակ էին՝ սանաիզ, ալաջա և խասա, մեծ քանակութեամբ Թուրքիա և Ռուսիա կը ղրկէին, բայց հետզհետէ արտածութիւնը պակսեցաւ, այժմ միայն խիստ փոքրիկ քանակութեամբ կը պատրաստեն, գլխաւորապէս տեղական պիտոյից համար։

Յիշելու է նաև թաղիքագործութիւնը. թաղիքը «ֆէչա» կըսուի տեղական բարբառով. բրդէ անհիւս կապերտներ են, որոնք Քերմանի և Եազդի թաղիքներէն շատ ստոր լինելով, միայն Ատրպատականի մէջ կը գործածուին։

Բամբակէ և բրդէ ուրիշ գործուածքներ ևս կը հիւսուին, որք միջակ բաներ են։ Բացի ասոնցմէ, կան ուրիշ արհեստներ ևս, որք պիտի յիշուին գործարանաց և արհեստաւորաց թուահամարին մէջ։ Ատրպատականի գաւառների մէջ կը պատրաստուին տեսակ-տեսակ կապերտներ ու գորգեր։ Վերջինների մէջ Հերիզ և Բախտայիւ հիւսուածներն թէև արթիսթիք և Ֆարահանի չափ գեղեցիկ չեն, սակայն իրենց հաստութեամբ և շատ անգամ բոլորովին բուրդ լինելուն պատճառով Ֆարահանի գորգերէն աւելի շատ կարտածուին։ Եւրոպա և մանաւանդ Ամերիկա գորգեղէնի գործածութիւնը հետզհետէ ընդհանրանալով, 5—6 տարիէ ի վեր Թաւրիզի մէջ ևս սկսեցին գորգեր հիւսել։

Ասոնք, թէ մետաքսէ և թէ բուրդէ հիւսուածներն, շատ արուեստական և ազնիւ լինելով, մեծ գնով կը վաճառուին Եւրոպա և Ամերիկա։ Այս պատճառով այս արհեստը քիչ միջոցի մէջ խիստ շատ ծաղկեցաւ։ Այժմ, 1898-ին, մօտ 2,000ի չափ կազմած կայ այս քաղաքի մէջ, և իւրաքանչիւր կազմած մէկ

գլխաւոր վարպետի և երկուքէ վեց փոքր երեխայի գործ կը տայ։

ԹԱՒՐԻԶԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կանգուն մնացած հին շինութեանց մէջ ամէնէն երևելին է Ալիշահի միջնաբերդը, որ Արգ կը կոչուի և որ շինուեր է 1300 թուականներին, Խոջա Ալիշահի ձեռքով, որ Ղազան խանի մեծ իշխանն էր։ Այս պարսպաւոր քաղաքի արևելեան հարաւային ու Խրամի ներսի կողմը կը գտնուի։ Գլխաւոր մասն, որ 30—32 մեթր բարձրութիւն ունի, թրծուն աղիւսէ ու գաճէ, հաստ պատերով մի հաստատուն շէնք է, որի վերի մասը սրահ մը կայ, որ կերևի ետքէն աւելցուած է։

Երկրորդ տեղը կը բռնէ Ուստա Շադերդ կոչուած մզկիթը։ Այս Թաւրիզի ամենագեղեցիկ և ամենամեծ գմբէթն ունեցող մզկիթն է, որ շինուեր է Էմիր Շէյխ Հիւսէյնի հրամանով, 1350 թուականի (Ք. ծ. յ.) ատենները։ Այժմ գմբէթն դեռ կանգուն է ու անխախտ, սակայն միւս մասերն, թէև նորոգուած, բայց դարձեալ կիսաւեր են։

Աւերակ մնացած հնութիւնների մէջ ամենաերևելին ու հոյակապը Գէօյ Մէչիդ կոչուած մզկիթն է։ Այս շինուեր է հիջրէթի 878-ին, Ջրհան Շահի ձեռքով, որ «Ղարաղոյունլու» ցեղի պետն էր և Թաւրիզում իշխեց 1410—1467 թ. (Ք. ծ. յ)։ Թէև այժմ բոլորովին աւերակ է, սակայն կանգուն մնացած բեկորներն տակաւին ամէն այցելուի հետաքրքրութիւնը կը շարժեն և անոր հիացում կը պատճառեն։ Բեկորների մէջ ամէնէն աւելի աչքի զարնողն և հետևապէս ամէնէն աւելի ուշադրութիւն գրաւողն շէնքի ճակատն է, որ կը բաղկանայ մի սրածայր ձևով մեծ կամարէ, որի բարձրութիւնը դուցէ 7 մեթրէ աւելի է։ Սոյն կամարը շրջապատուած է խխունջաձև ոլորած ու պարզ մասերէ, որոնք ներքին կամարի հետ մի ամբողջութիւն կազմելով, կը բարձրանան մինչ ծայրը։

Ճակատի, ինչպէս և ուրիշ կանգուն սիւների դռնակամարների ու պատերի երեսներն զարդարուած են յախճապակեայ հիանալի մոզայիքով, որն կարծես մկրատով կտրած և ամենանուրբ ճշտութեամբ իրարու յարմարցուցած են. նկարներն, եթէ այսպէս կարելի է կոչել, մի պարզ խմբուն չեն ներկայացներ, այլ ծաղկեայ փունջեր, պսակներ ու ոլոր-մոլոր կապեր, կազմուած երկրաչափական գծերէ ու ձևերէ, տեղ տեղ իրենց մէջ առնելով քուֆի ու արաբական նախկին գրերով, զուրանէ գրուած տներ կամ տողեր։ Ասոնց զանազան երանգներին մէջ, որք բաց կապոյտ են, ճերմակ, բաց դեղին, կարմրագեղին, սև, մութ, կանանչ ու մութ կապոյտ։ Իշխող գոյնը կապոյտն է, որի առաւելութեան պատճառով կոչւեր է կապոյտ մզկիթ։ Սակայն այս բոլոր գոյների մէջ ներդաշնակութիւն մը կայ, որ կատարեալ սքանչացում կը պատճառէ։ Ասոնց վրայի ջնարակին գալով, ոչինչ կարելի է գտնել աւելի թափանցիկ, ջինջ ու պայծառ, քան սա։

ՂԱԼԷՅԸ ՌՈՇՏԻԷ

Այս բերդը, որ արդի Թաւրիզի արևելեան կողմը, Էյնալ Զէյնալ լեռան ստորոտի մօտ և Լիանքուհ կոչուած բլրակին վրայ է, շինուած է Խոջա Ռաշիդ-Էդդին-Վէզիրէ, 13-դ դարի վերջերն։

Մեծն Աբբաս, որի ժամանակ բերդը բոլորովին աւրուեր էր, գտնելով որ ան խիստ լաւ դիրք ունէր, թէ քաղաքը պաշտպանելու և թէ անոր իշխելու համար, զայն նորէն շինել տուաւ։ Սորա յաջորդներն անտես առնելով, նորէն աւերակ դարձաւ։ Այժմ միայն աւերակ մնացորդներն կը տեսնուին։

Քաղաքի արևելեան-արևելեան հիւսիսային կողմը և Էյնալ Զէյնալի մէկ ծայրին վրայ գեղեցիկ մենաստան մը կայ, որ Էյնալի, Ալիի աչքն կը կոչուի։ Այս մենաստանը Շարդէնէ ևս յիշեր է։ Հայկական աւանդութեանց նայելով, այստեղ ա-

ռաջներն հայոց ուխտատեղի եղեր է, բայց ես որևէ հաստատութիւն չեմ կրցեր գտնել այս մասին։

Քաղաքի հարաւային արևելեան կողմը, մերձ 7 քիլոմեթր հեռաւորութեան վրայ, կը գտնուի շէնք մը և խիստ մեծ աւազան մը, որ «Շահգէօլի» (արքայի լիճ) անունը կը կրէ։

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս թուահամարը կազմուեր է 1869 թուականին, քաղաքապետութեան միջոցով, և լրացումներով ամբողջացած է 1892-ին։ Սակայն թիւերը միշտ փոփոխութեանց ենթակայ լինելով, ասոնք մերձաւորագոյնը պէտք է համարել։

Շինութիւնք

Բաղնիք	270
Մզկիթ (մեծ և փոքր)	270
Քարվանսարա, հանդերձ թեմչէների (ծածկուած վաճառանոցներ), մերձ 1500 խանութով	40
Քարվանսարա (կարաւանի համար)	37

Շինդլէր հազարապետն 1886-ին խանութների թիւը կը ներկայացնէ 3922 և քարուանսարաներինը՝ 166։ Թէև այժմ վերը տրուած թիւերէն աւելի պէտք է լինին, բայց այսչափ բաղմանալն տարակուսելի է։

Գործարանք

Աղիւսի գործարան (քուրէ)	10
Աբա հիւսելու գործարան	60
Գաճի փուռ	22
Կաշեգործարան (դաբբախանա)	4
Կիրի փուռ	8
Ճրագուի արհեստանոց	4
Մետաքս հիւսելու արհեստանոց	80

Սառցատուն	30
Տպարան (վիմագրական)	6
Քաթան հիւսելու գործարան	15
Օճառի գործարան	21
Գորգ հիւսելու գործատուն մերձ 1000 կազմած	

Առուտուրով զբաղողք

Ածխավաճառ և յարդավաճառ (ալլաֆ)	160
Բրդավաճառ	12
Գերան ու տախտակ վաճառող (աղաչէի)	47
Գոհարավաճառ	5
Գորգավաճառ	165
Գուլպայ վաճառող (ջօրաբչի)	100
Գրավաճառ	22
Երկաթէ նիւթեր վաճառող	20
Խեցեղէն վաճառող	10
Ծխախոտ վաճառող (թիւթիւնչի)	350
Կապերտ և ցնցոտի վաճառող (քէօհնէ ֆրուշ)	104
Կերպասավաճառ (բազազ)	285
Կուժ վաճառող (գէովդուշչի)	150
Հանքային նիւթեր վաճառող (թոխմէ ֆրուշ)	30
Համեմավաճառ և քաղցրեղէն վաճառող (աթթար և զանանաթի)	120
Հնավաճառ (սըմսար)	35
Մանրավաճառ (խարազի)	75
Միջնորդ	200
Յախճապակի և ապակեղէն վաճառող (չինի ֆրուշ)	14
Շաքար և թէյ վաճառող (զանդֆրուշ)	50
Սեղանաւոր (սարրաֆ)	60
Սերմնավաճառ	10
Վաճառական հակով և կտորով վաճառող (թաջէր)	2,000

Ցփսիավաճառ (շալֆբուշի) 10

Զանազան զբաղում ունեցողներ

Աշաբոյժ 6
Աստղագէտ (մոնաջամ) 7
Բժիշկ 50
Գիր ընող (աղօթք գրող) 50
Գուսանք, երաժիշտք, երգող ու պարող (մէսխա-
խան և մոթրէբ) 225
Դիաթաղ (մորդէշուրչի) 100
Կոյր և կաղ մուրացկաններ 300
Հմայողներ և բախտագուշակներ 20
Զիաբոյժ 20
Մոլլա 2,000
Վիպասան (Նաղլ, հէքայէթ ըսող) 30
Վիրաբոյժ 4
Վհուկ (ֆալչի, ջադուքոն) 50
Դերվիշ 150

Արհեստաւորք

Աղիւսագործ 100
Անագագործ (կըլայչի) 15
Այգեպան և այգեմշակութեան բանւորներ (բաղ-
բան և բէլդար) 5,000
Աբա կարող 50
Ապակեհատ (ջամբուռ) 16
Բեռնակիր 1020
Գզբար (բամբակի) 33
Գլխարկ կարող 214
Գորգագործ (1892 թ. ի վեր, վարպետ և բան-
ւոր) 6,000

Դարբին 50
Դերձակ 70
Երիզագործ (ժապաւէն հիւսող) 19
Թաղիքագործ (քէչաչի) 21
Թամբագործ (սարբաջ) 40
Թիթեղագործ 40
Ժամագործ 12
Լապտերագործ (ֆանուսագ) 4
Լարագործ 10
Կաշեգործ (դաբաղ) 60
Մարազնագործ 9
Մոզայիքի վարպետ (խաթամսազ) 1
Կազմարար (սահաֆ) 20
Կապիչ (կոտրած ամաններ փակցնող) 15
Կողպէք շինող և նորոգող 25
Կշռող (պետական) դափանդար 50
Կօշկակար (կանացի 105, ռուսի 70, եամա-
նի 35) 224
Հակ կարող (թալիսչի) 30
Համեստագործ 43
Հայելագործ (այինէսազ) 5
Հիւսն 252
Հնակարկատ (կօշիկի. փինաչի) 200
Հրացանի բուն շինող (զոնդաղսազ) 20
» հրահան շինող (չախմախսազ) 24
Կտաւ ներկող (զաղաքսազ) 85
Ճախարակագործ 20
Մելանագործ (թանաք պատրաստող) 4
Մետաքսագործ 123
Մշակ (բանւոր, փորող, ֆահլա, քանքան) 5000
Մոմագործ և մոմավաճառ (ճրագուի. շամչի) 50
Մուշտակագործ 3

Ներկաբար	100
Նկարիչ	60
Նովաքէշ մշակ	250
Շիշ պատրաստող	1
Ոսկեթել երիզ հիւսող	6
Ոսկենկարիչ (մուզէհիբ)	3
Ոսկերիչ	51
Որմնադիր	550
Զեան շինող (իփաքսազ)	20
Զուխայ կարող	15
Զիբուխ շինող (չիբուխչի)	5
Զրկիր	250
Պայտառ (նալբանդ)	100
Պղնձագործ (միսկար)	45
Սուր շինող (ղէմէսազ)	30
Վրանագործ	150
Քարհատ և քարտաշ	150
Փորագրիչ (հաքքաք)	3
Փսիաթ շինող (հասիրչի)	50

Ուտելիք պատրաստող եւ վաճառող

Արգանակ պատրաստող (ղիզի եփող)	6
Բանջարավաճառ (սովզչի)	40
Խաշնեփ (քալլադիզ)	25
Խորտկարար (քաբաբփազ)	25
Հացագործ	125
Ճակնդեղ եփող և վաճառող	100
Մսավաճառ	73
Մրգավաճառ (խոշքէքար)	35

Նպարավաճառ և պղտավաճառ (բաղկալ)	250
» » շրջուն (թաբաղչի, նիմ-դաղ)	500
Փլաւ և չլով եփող (չլովփազ)	14
Քաղցու շինող և վաճառող (դօշաբչի)	42
Քաղցր » » (հալուաչի)	70

ԿԵՆՍԱՄԹԵՐՔԻ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Թաւրիզի վրայ ըսածներն վերջացնելէ առաջ աւելորդ չենք համարեր նշանակել անհրաժեշտ պիտոյից գները։ Բայց քանի որ թումանի իրական արժէքը յարաժամ փոփոխման մէջ է և իյնալու վրայ է, որով և շատ մթերքների արժէքը հետզհետէ կը թանդանայ, հարկ համարեցինք պարսկական դրամի դիմաց նշանակել ևս ֆրանսականը, որ աւելի հաստատուն ու որոշ վիճակ ունի և բաղդատութեանց համար դիւրին դաղափար տալու համար աւեցնել մթերքների համեմատական արժէքը։

Պարսկաստանի դրամական դրութիւնն տասնորդականի վերայ է. թումանն, որ 10,000 դինար կը նշանակէ, կը բաղկանայ 10,000 դինարէ։ Ղռանը թումանի 1/10 է։ Սակայն թումանը ճիշտ որոշ արժէք չի ներկայացներ։ Քաղաքական փոփոխութեանց տակ թումանի արժէքը կամ այս անունը կրող ոսկեդրամի կշիռը անդադար փոփոխութիւններ կրեր է։ Ոսկեդրամի հետզհետէ բարձրացումով դրամական գործողութիւններն ևս անդադարաբար արծաթի վերածուեցան։ Արծաթի արժէքի հետզհետէ իյնալով, թումանի արժէքն ևս պակասեցաւ։

Շարդէնի ատեն թումանը արժէր 2½ սթերլին կամ 62½ ֆրանք։ 1721-ին 2 սթերլինը կամ 50 ֆրանք։ 18-րդ դարի վերջերը 25 ֆրանք։ 1822-ին՝ 13¾ ֆրանք։ 1850-ին՝ 11¾ ֆ. 1873-ին՝ 10 ֆ.։ 1892-ին՝ 6½ ֆ. 1894-ին՝ միայն 5 ֆրանք։

Թաւրիզի մէջ երեք տեսակ լիդը կայ.—«բասրա» 1000 մսխալ կը կշռէ, «փոնզալու»ն 1062½ մսխալ է և «սաղար»-ը 640 մսխալ է։ 217—218 մսխալը մէկ քիլոգրամ է։

1855 թ. արժէքները

	Ղրան	Շահի	Ֆրանք	Սնթմ.
Յորեն (միջակ, լիդը 1062½ մսխալ	—	4	—	23
Գարի » » » »	—	3	—	17
Հաց » 1000 մսխալ	4	2/3	—	26
Միս (ոչխարի, ամբանը)	—	20	1	15
» » ձմբանը	2	8	2	75
» (կովի »)	1	8	1	60
Իւղ (հալած, զտած) ամբանը	4	—	4	60
Կարագ (լիդը 1062½ մսխալ)	3	4	3	70
Զուռ (գարնանը, 5 հատը)	—	1	—	5¾
» (ձմեռը, 10 հատը)	—	4	—	23
Կաթ (ոչխարի, լիդը 1000 մսխալ)	—	6½	—	37½
Մեղր (լիդը 1000 մսխալ)	4	—	4	60
Սեր » »	2	—	2	30
Խաղող » »	—	6	—	35
Գինի, շիշը (մէկ լիթը)	—	6	—	35
Օղի » »	—	9	—	52
Զամիչ օղու, լիդը 1000 մսխալ	—	14	—	80
Աձուխ (ամբանը) լիդը 1000 մսխալ	—	4	—	23
Փայտ (գարնանը) 100 լիդը	11	—	12	65
Յարդ » »	4	—	4	60
Շաքար, լիդը 640 մսխալ	5	—	5	75
Թէյ (հասարակ) ֆունթը (88 մսխալը)	3½	—	4	2½
Աշխատավարձ				
Մշակ (հասարակ), օրականն, գարնանը	—	8	—	46
» » ամբան վերջերքին	—	12	—	69
Որմնադիր (միջակ)	1	5	1	44
Հիւսն »	1	5	1	44

1897-ի արժէքները

	Ղրան	Շահի	Ֆրանք	Սնթմ.
Կաթ (ոչխարի), լիդը 1000 մսխալ, ամբանը	—	14	—	35
» (կովի) » » ձմբանը	1	12	—	80
Մեղր (լիդը, 1000 մսխալ), ձմբանը	12	—	6	—
Սեր » » » ամբանը	6	8	3	20
Խաղող » » » »	1	—	—	50
Զամիչ (հասարակ) 1000 մսխալ	3	—	1	50
Գինի (շիշը) մէկ լիթը	1	5	—	62½
Օղի » » »	1	8	—	70
Աձուխ, ամբանը 1 լիդը (1000 մսխ.)	—	16	—	40
Փայտ, աշնանը 100 »	24	—	16	—
Յարդ » » »	2	—	1	80
Շաքար 1 լիդը (640 մսխալ)	3	12	1	80
Թէյ (հասարակ) ֆունթը (88 մսխալ)	3	—	1	50
Աշխատավարձ				
Մշակ (հասարակ) ամբանը, օրավարձ	1½	—	—	75
» » գարնանը »	1	—	—	50
Որմնադիր (միջակ)	2	5	1	12½
Հիւսն	2	10	1	25

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԳԱՒԱՌՆԵՐԸ

1.— ԹԱՒՐԻԶԻՆ ՄԵՐՁԱԿԱՑ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ

ԴԷՀԽԱՐՂԱՆ

Դէհխարղան կամ Դուխարղան, Թաւրիզի հարաւային կողմը, եօթը ֆարսախ հեռաւորութեամբ խիստ ծառաշատ ու գեղեցիկ մի գիւղաքաղաք է։

Աստ ժամանակով հարիւր տան չափ հայեր եղեր են, սակայն 1827-ին միայն քանի մը տուն մնացեր էին, որոնք ևս յետոյ Ռուսիա գաղթեցին։ Վերջին տարիներս միայն մէկ հայ ընտանիք կար, սա ևս մեկնելով, ոչ մէկ հաստատուն հայ բնակիչ չմնաց։ Միայն Թաւրիզէ վաճառականներ միրգ առնելու համար կերթան, տարեայ քանի ամիսն կը մնան այնտեղ։

Աստ էջմիածնապատկան կալուած մը կայ. թէև շահախնդիր ոմանք քանիցս առաջարկեցին զայն վաճառել, սակայն էջմիածին խոհեմութեամբ առաջարկը մերժեց, բաւականանալով չնչին հասոյթովն, որ ամէն տարի կատանայ կալուածի վարձատուութենէն։

Այս կալուածքը 1821-ին մինչ ութսուն թուման արդիւնք տուեր է, այժմ միայն 30—40 թուման հաշիւ կը տայ։

Եկեղեցին, որ Ս. Սարգիս կը կոչի և այն տեսայ 1889 թ., երկու մասէ կը կազմուի. մէկն, որի մէջ է սեղանը, աւելի հին կերևի և կաւէ պատով (մոհրէ) է, իսկ միւսն որ դրան կողմն է ու ետքէն շինուած կերևի, անտաշ քարէ է։ Շէնքը փայտով ծածկուած է։ Սեղանը բարձրացած ատեն յատակը քար մը կայ, որի վերայ հետևեալը գրուած է. «Ած ողորմի Տուխարկանցի Ամիրի որդի Տէր Յովսէփ. թվ 1200 (գուցէ Հայոց Ռ. Մ. ըսել կուզէ)։ Խորանի մէջ քարի մը վրայ կայ. «Յիշատակ է խաչս Տէր Ներսէսի. թվ. ՌՁ»։ Սեղանի դրսի պատին վերայ ևս մարմարիոն մը կայ, գէշ քանդակով, որ հնար չեղաւ կարդալ. միայն կրցայ որոշել Թուականն, որ է ՌԽԱ։

Այս Թուականներէն կերևի, որ եկեղեցւոյ մէկ մասն երեք դարի հնութիւն ունի։

ՍՈՀՐՈՒԼ

Թաւրիզի հիւսիսային կողմը և անորմէ 4 ֆարսախ հեռաւորութեամբ, մի փոքրիկ գիւղ է, 25 տնով (85 արական և 70 իգական բնակչով)։ Քանի մը այգիներ ունի զանազան պտուղներով։ Գիւղին կից բարձրադագաթ բլրի մը վերայ, յանուն Ս. Յովհաննու, Թրծուն աղիւսով գեղեցկաշէն փոքրիկ մատուռ մը կայ, զորն Զօրավար Սամսոն խան շիներ է 1840 Թուականին, որին և յայնժամ սոյն գիւղը կը պատկանէր։ Վարժարան չունի, քահանայ ևս չկայ, այլ պէտք եղած ժամանակ Մուժումբար գիւղէն բերել կը տան։

ՄԻՆԱՎԱՐ

Սոհրուլի արևելեան կողմը և անորմէ երեք քառորդ ֆարսախ հեռու կը գտնուի Միճավար անունով Թրքական գիւղ մը։ Ասոր հիւսիսային կողմը և 300 քայլ հեռաւորութեամբ կայ դմբէթածածկ խուց մը, որի մէջտեղը կայ երկու մեթր երկայնութեամբ, մէկուկէս լայնութեամբ և կէս մեթր բարձրութեամբ գերեզման մը։ Այս գերեզմանը կամ շէնքը «Փիր» անունը կը կրէ։ Հետաքրքրականն այն է, որ սա մի ուխտատեղի է թէ քրիստոնէից և թէ մահմեդականաց համար հաւասարապէս։

Շրջակայ Թրքական գիւղերի բնակիչներն աստ կայցելեն «նազր»ի համար և գերեզմանին կը կախեն Թաշկինակներ, հիւսուածքի կտորներ և մանաւանդ տէրողորմեաներ, որոնցմէ մի քանիսը պատէն կախած գտանք։ Կը բերեն հայերն, մեր-

ձակայ գիւղերէն, տօն օրերին և յատկապէս Համբարձման տօնին, կաղօթեն ու զոհ կը մատուցանեն։ Այս տեղի երկու տարբեր կրօնների պատկանող ժողովուրդներէն հաւասարապէս յարգուիլն ու պաշտուիլն ենթադրել կը տայ, որ ժամանակով Մինավարի ժողովուրդը քրիստոնեայ է եղեր և բնիկներն պարագայից բերմամբ կրօնափոխ դառնալով հանդերձ, շարունակեր են յարգել ու պաշտել իրենց սրբավայրը և այսպէս ուրիշ քրիստոնեայք ևս չեն արգիլուած այցելելէ ու պաշտելէ։

ՄՈՒԺՈՒՄԲԱՐ

Սոհրուլի հիւսիսային կողմը և անորմէ մէկ ու մէկ քառորդ ֆարսախ, իսկ Թաւրիզէ հինգ ու մէկ քառորդ ֆարսախ է։ Ըստ աւանդութեան, այս գիւղը, առաջներն մերձ ութն հարիւր բնակիչ ունեցեր է։ Սա որչափ ճիշտ է, յայտնի չէ, սակայն սա ստոյգ է, որ վարելահողերն ու սահմաններն խիստ ընդարձակ են և 450 տան ապրուստի միջոց կրնան հայթայթել։

Ըստ առաջնորդական վիճակագրութեան՝ 120 տուն բընակիչք կան եղեր, որոնցմէ 400-ը արական և 350-ը իգական։ Իսկ 1892-ին, ըստ առած տեղեկութեանցս, միայն 100-ի մօտ տուն կար. բայց 1898-ին, նոյնքան ժողովուրդէն բարեկեցիկ դասը հետզհետէ Թաւրիզ գաղթելով, և ուրիշներն Ռուսաստան և Կովկաս աշխատելու երթալով և ոմանք անդ հաստատուելով, գիւղի բնակչաց թիւը տարիէ տարի փոխարէն աւելնալու, կը պակսի։

Աստ Ս. Հռիփսիմէ անունով եկեղեցի մը կայ, որի կամարներն սրբատաշ սև քարէ, իսկ պատերն ու կամարանման ծածկոցն անտաշ քարէ են։ Եկեղեցւոյ արևմտեան պատին վերայ այսպիսի յիշատակարան մը կայ.«Շինեցաւ տունն.... Ռ Ճ Խ է-ին, ես Իսայ խան գրեցի, ուստա Օխան շինեց», բայց ես կը կարծեմ, որ այս յիշատակարանը կը վերաբերի միայն նոյն

պատի նորոգութեանը կամ շինութեանը, որն և միւս պատերի կազմութենէն կը տարբերի։

Ի նկատի առնելով եկեղեցւոյ մեծութիւնն ու գեղեցկութիւնն, աւելի հաւանական կը դտնեմ, որ եկեղեցին սոյն թուականէ առաջ և գիւղի բազմամարդ եղած ատենը շինուած լինի։ Առաջ երկու քահանայ կար, բայց 1892-ին միայն մէկը կար։ Փոքրիկ մի վարժարան ունին, ուր տղայք ժողովուելով, ընթերցանութիւն կը սովորին։

Եկեղեցւոյ արևելեան կողմը լեռնածայրերին վերայ կայ փոքրիկ մատուռ մը՝ Անեռեւոյթ անունով, որ մի ուխտատեղի է։ Ասոր դրան վերը եղած յիշատակարանին նայելով, շինուեր է Թաւրիզեցի ոսկերիչ Հայրապետեան Կարապետէ, 1810 թուականին, անտարակոյս գրաւելով հնագոյն շէնքի մը դիրքն։ Ասորմէ քիչ մը հեռու, լեռնաձորակի մը մէջ, կայ և խիստ փոքրիկ գմբէթ մը՝ Կոյս Վարվառէ անունով։ Գիւղի արևմըտեան և հիւսիսային կողմը եղող լեռներին վերայ քարակոյտ ուխտատեղիներ կան, որոնք ևս Երեւման խաչ և Ս. Յովհաննէս անունը կը կրեն։

Մուժումբարի օդը գերազանցօրէն առողջարար և ջուրն խիստ աղէկ ու մարսեցուցիչ են։

Թաւրիզի հայոց սովորական ամառանոցն է, ուր հայ ընտանիքներ կերթան ամառուան տօթ օրերն անցնելու։ Տարափոխիկ հիւանդութեանց ատեն ևս մէկ մեծ մասն աստ կապաստանէ։

Ձմեռը սաստիկ ցուրտ է և շատ կը ձիւնէ։

Բնակիչներուն մեծ մասն երկրագործութեամբ կը պարապի, սակաւաթիւ անձինք Ռուսիա կամ Կովկաս կերթան աշխատելու, ոմանք ևս ձիապանութեամբ կզբաղին։ Ամենահին տապանաքարն, զոր ես կրցայ դտնել, մուժումբարցի Տէր Մինասի որդի Տէր Յովսէփինն է, ՌՄԼ թուականով։

ԱԼՉԱՄՈՒԼՔ

Այս գիւղն Մուժումբարի հիւսիսային կողմը և անորմէ մերձ մէկ երրորդ ֆարսախ հեռու է։

Ունի եօթանասուն հինգ տուն բնակիչ, որոնցմէ 240-ը արական և 195-ը իգական։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունով փայտաշէն եկեղեցի մը կայ, մէկ քահանայով։ Սոյն երեք գիւղերը Թաւրիզին մօտ լինելու պատճառով համեմատաբար Ատրպատականի ուրիշ գիւղերէն աւելի անդորը և կամայականութիւններէ զերծ վիճակ մը ունին։

Ալչամուլքի արևմտեան կողմը և Աղդաշ լերան բարձր գագաթին մօտ կը գտնուի ուրիշ բարձր գագաթ մը՝ Էշկիբէսէր անունով։ Այս գագաթին վերայ քարակոյտ մը կայ, որ ուխտատեղի է և Ս. Նշան անունը կը կրէ։ Կը յիշեմ, 1851-ին, այս ուխտատեղին հօրս հետ այցելած ատեն աչքով մինչ Թաւրիզ կրնայի տեսնել։ Ըստ այլոց Օրդուբադ ևս այս երկու լեռան գագաթներէն կերևի։

Այս ուխտատեղիներէ կարելի է հետևցնել, որ այս գիւղեր ու տեղեր խիստ հին ատեններէ ի վեր հայեր եղեր են և շատ աւելի թիւով, քանզի նոր գաղթականներէ կազմուած վայրերի մէջ ընդհանրապէս ուխտատեղիներ չկան։

Գիւղացիք կըսեն, որ ներկայիս (1897 թ.) Ալչամուլք միայն 50 տուն բնակիչ ունի։

ՄԱՐԱՆԴ

Արդի Մարանդ գաւառակը Թաւրիզի հիւսիսային արևմտեան կողմը կիյնայ։ Այս գաւառակը միւսներէ կը բաժնուի հարաւային կողմէ Աղ-դաղ և Մշով-դաղ լեռներով և Մեշուղ լերան մէկ մասովն. արևելեան կողմէ Քոփանդաղով, հիւսիսային կողմէ անորոշ գծով մը, որի նշանները Նիշան լերան դագաթներն են։

Արդի Մարանդ գաւառակը վաթսուն գիւղ ունի։ Ստրաբոն և Պտղոմէոս Մարաստանի քաղաքները յիշած ատեն, Մարանդա անունով մէկ քաղաք կը յիշեն, որ հաւանականաբար հայոց մատենագրութեան մէջ յիշած Մարանդն է, որ այժմ աւերակ է և արդի քաղաքի արևմտեան կողմը և անորմէ մերձ երեք ֆարսախ հեռու է։

Ըստ հայոց աւանդութեան՝ Նոյեմզար կամ Նիմզար ի Մարանդ թաղուեցաւ։

Խորենացւոյ պատմութեան մէջ այս քաղաքի նկատմամբ միայն այս յիշատակութիւնը կայ. «Յետ յաղթութեան, Տրդատ դարձ արարեալ ի Հայս, ձմերեաց ի Մարանդ»։

Շարդէն կըսէ, թէ Միրզա Իբրահիմի որդին՝ Միրզա Թահէր, որ ուսեալ ու գիտնական անձ մը և արքունի տուրքերի գանձապետն էր, ինձ կը պատմէր, որ Մարանդի աւերակների մէջ գանձ մը գտնուեցաւ, որ տպած շատ ոսկի ու արծաթ կը պարունակէր. ասոնք ամէնքը ղրկուեցան թագաւորին՝ Սպահան։ Այս դրամները տպուած էին Դաղիանոսի անունով և կը հարցնէր, թէ ո՞վ էր Դաղիանոս ու ո՞ր ազգի թագաւորներէն։ Ես պատասխանեցի. «Յունական և եւրոպական պատմութեանց մէջ Դաղիանոս անունով մէկը չկայ, որ Պարսկաստանի վերայ թագաւորած լինի. գուցէ Դարեհն եղած լինի, որ արաբացիք արաբացնելով, Դաղիանոս եղեր է»։

Շարդէնի այս ենթադրութիւնը շատ հաւանական չերևիր, քանզի պարսկական հին դրամներու մէջ միայն մէկ տեսակը Դարեհին վերագրուած է։ Այս տեսակն, որմէ մինչ այժմ քանի մը հատ գտնուեր է, ոսկի է և վրան կը կրէ մարդի մը պատկերը՝ ձեռքն ունենալով աղեղ ու նետ մը։ Այս դրամին «Դարիֆ» անունը տրուեր է։

Ասորմէ հատ մը տեսած եմ Մանչեստրի թանգարանին մէջ, բայց եթէ յիշողութիւնս չի վրիպէ, այս դրամի վերայ որևէ գիր չկայ, սակայն, եթէ գրուածք մը ևս լինի, ոչ Միր-

գա Թահէր և ոչ Շահ Աբբաս երկրորդի ժամանակն որևէ մէկն կրնար կարդալ և իմանալ որ Դաղիանոս անունը կը կրէ։

Ուստի կենթադրելի, որ գտնուած դրամներուն վրայի գրուածքն (եթէ երբեք գրուած էր) Տիդրան (Տիգրան) եղած լինի, ինչպէս կը կարդացուի սոյն արքայի դրամներուն վերայ եղած յունարէնը։

Աշխատութեանս հեղինակի մօտ գտնուած Տիգրան երկրորդի արծաթ դրամի երեսին վերայ Տիգրանի պատկերն է, գլուխը կրելով թագն, որի վերի կողմը կայ երկու արծիւ։ Ընդդիմակողմը կայ Հայաստան՝ թագուհւոյ մը պատկերով, ձեռին բռնած հասկ մը, առատութեան նշան, իսկ ոտքի տակը կայ մարդ մը պառկած և ձեռքն երկնցուցած, որ գթութիւն հայցելու դիրք ունի։ ասոր վերն կայ խորհրդաւոր նշան մը, որ թերևս փողերանոցին յատուկ նշանն է։ Դրամի երկու եզրին վերայ կայ յունարէն «Վասիլիոս Տիդրանոս» մակագրութիւնը։

Սակայն, այս դրամի վերաբերմամբ մեզ համար ամէնէն աւելի ուշագրաւ երևոյթն իր տիպն է։ Սա բաղդատելով նոյն ժամանակուան հարևան երկիրներուն դրամներուն տպուածքին հետ, կը տեսնենք որ Տիդրան երկրորդի դրամն աւելի գեղարուեստական է։ Ասկէ կրնանք հետևցնել, որ այն ատենները Հայաստան արուեստի կողմանէ աւելի ծաղկեալ վիճակի մէջ էր, քան թէ հարևան երկիրները։

Ըստ Զինէթ-իւլ-Մէջալիսի, Մարանդ ժամանակով խիստ մեծ քաղաք է եղեր, 8000 քայլաչափ շրջապատով. արևմտեան դաշտին մէջ, որդան կարմիր կայ, և մինչ մէկ շաբաթ, այսինքն յոթութեան եղանակին մէջ, կարելի է հաւաքել. իսկ այդ ժամանակը անցնելէ ետքը հողին մէջ կը ծածկուին եղեր։

Հայերն այստեղէ ե՛րբ անհետացան, չի գիտցուիր։ Կիրակոս Գանձակեցւոյ պատմածը, թէ «Յետ բազում քաջութեանց և յաղթութեանց զոր արարին մեծամեծ իշխանքն Զաքարէ և Իւանէ, չոգան զօրօք բազմօք ի քաղաքն Մարանդ, և ա-

ռին գնա...», և այլն, խիստ հակիրճ ու անորոշ է և դժուար է գիտնալ, թէ այդ ատենը (ԺԳ. դար) աստ հայեր կայի՞ն, թէ ոչ։

Արդի Մարանդը միայն 1000 տուն բնակչով գիւղաքաղաք կամ փոքրիկ մի քաղաք է Թաւրիզէն 10 ֆարսախ հեռաւորութեամբ։ Պր. Համբարձում Առաքելեանց 1500 տուն կը նշանակէ, բայց կարծեմ այդ թիւն սխալ է։ Ընդարձակ արտեր ու արօտատեղիներ ունի։ Ջրերն առատ են և լաւ։ Օդը բարեխառն է։

Պտուղներուն մէջ յոյժ ընտիր են՝ սեխը, «շաֆթալու» անով ատորին տեսակի դեղձը և ծիրանը։ Ընտիր են և առատ նաև պանիրը, սերն ու կաթը։

Այժմ ամենևին հայ բնակչութիւն չկայ, միայն ըստ ոմանց ասութեան՝ աւերուած եկեղեցւոյ մնացորդներն տակաւին թաղի մը մէջ կը տեսնուին։

Մարանդի արևելեան կողմերն, 3—4 ֆարսախ հեռաւորութեամբ, կիյնայ հայկական աւանդութեանց մէջ յիշուած Բակուրակերs բերդն, ուր մեռաւ մեր Արտաշէս թագաւորը, Պարսկաստանէ Հայաստան իր վերադարձին։

ՕԶՈՒԱՇ

Այս գաւառը Մարանդի հիւսիսային կողմը կիյնայ և կը բաժանուի վերջինէս ցածր լեռների անկանոն շարքով մը, որ այժմ Քուհ Նիւտան կը կոչուի։

Օշուաշի մէջ կը գտնուին Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը և վերին ու ստորին Դարաշամբ գիւղերն։ Նախապէս այս գաւառին մէջ գտնուեր են ուրիշ բազմաթիւ հայաբնակ գիւղեր ու աւաններ, որոնց հետքն անգամ այժմ չկայ։

Օշուաշ այժմ Խոյի խանութեան մէջ կը գտնուի, առանց մասնաւոր բաժանումի մը ներկայացնելու։

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԸ

Թէև քանի անգամ Ջուլֆայէն անցեր էի, սակայն ժամանակի պակասութեան պատճառով չէի կրցեր այցելել սոյն բազմադարեան ուխտատեղին։

Այս ինձ յաջողեցաւ 1897 թ. սկիզբն, երբ Եւրոպայէ դարձած ատեն հասայ պարսկաց Ջուլֆա, որ նախկին հռչակաւոր Ջուղայի արևելեան կողմն և Արաքս գետի աջ կողմը կիյնայ։ Փոստի կայանապետ Երեմիա խան Մէղէմեան առաջարկեց վանքն այցելել, և ես հաւանութիւն տալով, կէսօրէ մէկ ու կէս ժամ առաջ «չափարի» ձիեր հեծնելով, ճամբայ ինկանք դէպի վանք, ընկերակցութեամբ «չափար զաբիթէի», որ իբր ուղեցոյց մեզ կառաջնորդէր։ Կէս ժամ արագ քշելէ ետքը փոքրիկ պտոյտով մը հասանք Արաքսի վերայ եղող աւերակ կամուրջի մը։ Այս կամուրջն առաջներն Հին Ջուղայէ Պարսկաստան անցնելու ճամբան էր, սակայն օսմանցիների անցքն արգիլելու նպատակով Շահ Աբբաս քանդել տուած էր և այն ատենէ ի վեր աւերակ մնացեր է։ Այս կամուրջի քովէն անցնող հային միտքը կը ձգէ իւր համազգիների գաղթականութեան տխուր յիշատակը։

Այս տեղէ մի քիչ անդին մօտեցանք Արաքսի աջ ափին, որի գրեթէ անմիջական քովէն կը ձգուէր մեր ճամբան, խիստ խորտ ու բորտ և առապար տեղերէ։ Մեր ձախ կողմը կը բարձրանային անջրդի ժայռակազմ մերկ լեռներ, իսկ աջ կողմը Արաքսը՝ լռիկ մնջիկ կը հոսէր դէպի իւր անբուսոյթատեղին։

Նախընթաց իրիկուան յորդառատ անձրևի պատճառով միշտ պղտոր Արաքս այժմ յոյժ աւելի պղտոր էր։ Հայոց սիրելի այս գետը, որի համար 16 դար առաջ Ագաթանգեղոս կըսէր. «Զի գետն երանի յարուցեալ դայր դարիւ և դարիւ, սառնահալ, շրջակուտակ, ձեռնասոյզ ձեռնախաղաղ բազմութեամբն յաւուր իւր պղտորութեամբն», գրեթէ երբեք ոչինչ չէ եղեր և կարծես համակիր նմանութիւն մը կը բերէ մեզ՝ հայոց ճակատագրին, որ միշտ լռիկ-մնջիկ ողբալով մեր տարաբախտ վիճակը, կը հոսենք, կերթանք թափուիլ յաւիտենականութեան անհուն ովկիանոսին մէջ։

Միջօրէն անցնելու վերայ էր։ Այս տեղեր, որ ընդհանրապէս տաք է, արեգակի ճառագայթներն զարնուելով ժայռային լեռներին, անդրէն կը ցոլանային մեր ճամբի և մեզ վերայ։ Մեր ձիերն նախընթաց գիշերէն յոգնած լինելով ու ճամբի դէշութեան պատճառով չէին կրնար արագ քայլել, և սաստիկ տաքէն թուլանալով, հետզհետէ կը յամրացնէին իրենց քայլափոխումներն, որով արևի ջերմութիւնն աւելի սաստկապէս կը ներգործէր մեզ վերայ։ Թէև ես տաքի դէմ մասնաւոր տոկունութիւն չունիմ, սակայն ընկերս իւր խիստ գէրութեան պատճառով ինձնէ աւելի կը նեղուէր և մինչ անգամ ուղեցոյցնիս, հակառակ իւր ամէն օրուան բացօթեայ վարժութեանը, թուլացեր էր, կը նեղուէր և բարձրաձայն կը խորհէր արքայութեան ճամբի մասին, որը նոյնչափ դժուար ըլլալու է։

Կէսօրը կէս ժամ անցած, հասանք տեղ մը, ուր լեռը քիչ մը դէպի ներս քաշուելով կամ ռամկական բացատրութեամբ՝ փորն իրեն քաշելով, եռանկիւն մը կը ձևացնէր, և աստ ուղղաձիգ ու ստորոտը դէպի ներս փորուածի պէս լինելով, փոքրիկ տեղ մը արևէն զերծ ու շուքի մէջ էր։ Ձիէն իջնելով, այս փոսերի մէջ երկնցանք, քանի մը վայրկեան հանդչելով շունչ առինք և քիչ-շատ կազդուրուեցինք։

Հեծանք ձիերն և շարունակեցինք մեր ճամբան դանդաղ ընթացքով։ Սակայն, երթալով մեր ոյժերն կը պակսէին, մենք աւելի կը թուլանայինք։ Հեղնական մի պատկեր էր։ Մեծ գետը մեզ մօտիկ կանցնէր, սակայն մեր ծարաւն չէինք կրնար շիջեցնել, քանզի շատ տեղ գետեզրն դահավէժ լինելով, կարելի չէր մերձենալ, իսկ դիւրամատչելի տեղերն ևս խիստ

աղի ջրեր ափի մօտէն ելնելով, Արաքսին կը խառնէին։ Պապակեալ շուրթերով, թոյլ ու խոնջ անդամներով կը շարունակէինք մեր երթը, աչքերնիս յառած համբի ամէն դարձող պըտոյտին, անհամբեր անձկութեամբ կը ցանկայինք անցնել այն միջոցն և տեսնել մեր ամենացանկալի վանքը։ Հուսկ յետոյ հասանք տեղ մը, ուր Արաքսի ափն թողնելով, ուղղանկիւնով մը դարձանք դէպի ձախ, և քիչ մը ետքը վանքի գմբէթի ու ծառերի ծայրերն երևեցան։ Քանի վայրկեան ևս, հասանք ծառատունկ ձորը։

Ասիական ու եւրոպական շատ սքանչելի վայրեր ու պարտէզներ տեսեր էի, սակայն ոչ մէկի տեսքն իմ վերայ այն հաճելի և յիրաւի երջանիկ տպաւորութիւնը չէր ըրեր, որչափ այս խառնիխուռն աճած ծառերինը։

Հասանք վանքի դրան դիմացն, ուր բարձրէն զով ջուր մը առատօրէն հոսելով և քարէ խողովակէ մը վար իջնելով, կերթար քիչ մը հեռու լցուիլ աւազանի մը մէջ։ Պապակեալ շուրթներնիս, այրուած կոկորդնիս այն զով ջրով քանի անգամ թրջեցինք։

Քիչ մը ետքը վանքի երկաթապատ դուռը բացուեցաւ և սպասաւոր մը իջնելով, մեզ ներս հրաւիրեց։

Այն ժամանակի վանահայրը՝ Պօղոս վարդապետ Նաթանեանն էր, որ իւր գաղափարների պատճառով հալածուելով տաճկաց կառավարութենէն, Ռուսիա փախեր էր և էջմիածինն ալ գինքը այս հռչակաւոր վանքին վանահայր կարգած էր։

Ըստ աւանդութեան, որ մինչ օրս մեզ հասեր է, բայց որի համար գրաւոր հաստատութիւն մը չեմ գիտեր, սոյն մենաստանի տեղն առաջներն մեհեան մը եղեր է, ուր շրջակայ հայերն բազմութեամբ ուխտի կերթային։ Քրիստոնէութիւնն Հայաստան մտնելով ու հաստատուելով, մեհեանը՝ վանքի և ատրուշանը տաճարի փոխարինելով, բարեպաշտ ժողովուրդն ըստ նախնի սովորութեան շարունակեր է անդ ուխտի երթալ։

Աբէլ արքեպիսկոպոս, 1860-ի սկիզբները, երբ իբր Ա-

տրրպատականի առաջնորդ Թաւրիզ կերթայ, այս մենաստանն այցելելով, իր Համբորդութեան պատմութեան մէջ («Կռունկ հայոց Աշխարհի», Բ. տարի, Օգոստոս, 1861, Տփխիս), կը յիշէ Աշոտ Թագաւորէն տրուած երկու հրովարտակներ, զոր վանքին մէջ տեսած է եղեր։

Կերևի, որ այս հրովարտակներն էջմիածին տարուեր էին, քանզի ես այսպիսի գրուածքներ չտեսայ։

Այս հրովարտակներէ այնպէս կերևի, որ Աշոտէն առաջ եկեղեցի և դուցէ վանք ալ կային Մազարդի վանք կամ Ս. Ստեփաննոս Նախավկայ անունով. ետքէն Աշոտ Թագաւոր վանքը հիմէն նորոգել կամ շինել տուեր է և կալուածներ ևս գնելով, մենաստանին նուիրեր է։

Հաւանականութենէ հեռու չէ կարծել, որ արդի Դարաշամբ գիւղը նոյն Թագաւորի նուիրածներէն է, որ մինչ այսօր իբր վանքապատկան պահուեր է, մինչ ուրիշ կալուածները խըլուեր են։ Այս եկեղեցին ու վանքը կերևի որ տեսեր են մինչ 17-րդ դարի կէսն, երբ Յակոբ վարդապետ զանոնք անշուք ու խարխուլ վիճակի մէջ գտնելով, քանդեր և նորէն շիներ է, որի համար այսպէս կը պատմէ Հայր Զամչեան.

«Բնակէր յայնժամ ի նոյն վանս Նախավկային Յակոբ Զուղայեցի, որ էր ի ժամանակին յայն մէկ երևելի ի մէջ վարդապետացն Հայոց, որոյ էին ստացուածք բազում ի ժառանգութենէ հայրենեաց. և զի այն վանք Նախավկային չէր շինեալ ըստ պատշաճի, և չունէր պարիսպ, նոյնպէս և եկեղեցի նորուն էր անշուք, սա ինքն Յակոբ վարդապետ կամեցեալ նորոգել, զնոյն քակեաց զամենայն կերտուածս վանիցն, նաև զեկեղեցւոյն, և շինեաց զամենայն ի հիմանց կոփածոյ վիմօք (1654)*) զեկեղեցին կառոյց խաչաձև գմբեթայարկ վայելուչ

*) Այս թուականը եկեղեցւոյ շինութեան աւարտումը կը ներկայացնէ, իսկ սկզբնաւորութիւնը ինչպէս պիտի տեսնուի, 1646-ին եղեր է։

դրիւք, և զվանսն յօրինեաց գեղեցիկ և յարմար ձևով. ծախեալ ի նոսին դրամս բազումս, և աշխատեալ ամս տասն, կրելով միանգամայն զանհնարին տառապանս ի պատրաստել զնիւթ շինուածոյն զի զքարինսն և զկղմինտրն ետ բերել յԱստապատայ ընդ Երասխ գետ, և մասն ինչ ձիովք գեղջէ. նոյնպէս և կիրս և զփայտս հեռաւոր վայրաց տայր բերել. նաև զցորեանն, իսկ վասն կերակրելոց զաշխատաւորսն, զի բազում էին նոքա, և ոչ բաւեր նոցա, որ ինչ գտաներ ի գիւղն Դարաշամբ։

Յաւարտիլ այսր շինուածոյ մեծի յօրինեաց Շմաւոն եպիսկոպոս վասն նշխարաց Ս. Կարապետին՝ արծաթի տապանակ ոսկեզօծ աղիւսաձև ընդելուզեալ պատուական ակամբք, և եդ ի նմա զնշխարսն, և գրեաց ի վերայ պահարանին՝ որ ինչ անցք անցեալ էին ընդ այն և զետեղեաց զայն ի գանձս նշխարաց և սպասուց այնր եկեղեցւոյ. և այս եղաւ ի թուականութեան հայոց Ռ Ճ Գ (1654), ի վերջին ամի կաթողիկոսութեան Փիլիպպոսի, իսկ գիւտն եղաւ փոքր մի առաջ»։

Վանքն ինկած է լեռի մը լանջքին վերայ գտնուած փոքրիկ, տափարակ տեղ մը, որ կիսաձոր մը կը ներկայացնէ և շրջապատուած է 3½-է մինչ 6 մեթր բարձրութեամբ քարաշար պատնիշէ, որն ևս ամբացուած է կիսաշտարակներին։ Ամբողջ պարսպապատի տարածութիւնը մերձ 100 մեթր երկայնութիւն և յիսուն մեթր լայնութիւն ունի։

Գլխաւոր դուռն, որ մերձ երեք ու մէկ քառորդ մեթր բարձրութիւն և երկուք ու կէս մեթր լայնք ունի, պատած է երկաթէ հաստ թերթերէ, որք մեծ գամերով պնդացուած են հաստ տախտակների ու բազուկների վերայ։ Դրան աջ ու ձախ կողմը կիսաբոլոր աշտարակներ կան։

Այս կերպով վանքը պաշտպանողական դրութիւն ունի, և կրնայ աւազակների և ուրիշ անակնկալ յարձակումների դէմ դնել։

Դռնէն ներս կը մտնէք նախասենեակի պէս տեղ մը, որի աջ կողմը քանի մը սանդուխ բարձր դռնակ մը կայ, ուր-

կէ կանցնէք հիւրանոցն, ուր և կը բնակի վանահայրն։ Այս մի մեծ բակ է պարտէզով, որի երեք կողմը շարուած են գանազան մեծութեամբ սենեակներ, որք ուխտաւորաց համար շինուած են իբր իջևան, բայց քիչ բացառութեամբ այս ամէն սենեակները խախուտ ու անբնակելի վիճակի մէջ կը գտնուին։

Եկեղեցւոյ բակին կից կայ ուրիշ փոքրիկ բակ մը և ուր չորս նորոգ շինուած սենեակներ կան, որք յատկացուած են պատուաւոր հիւրերի համար իբր իջևան։

Եկեղեցին 24 քայլ երկայնութեամբ և 16 քայլ լայնութեամբ սրբատաշ քարերով միակամար գեղեցիկ շէնք է։ Ինչպէս յիշեցաւ և գտնուած յիշատակներէն կը տեսնուի, 17-րդ դարին մէջ կառուցեր է նախկին հիմանց վերայ։ Գմբէթն որ բաւականին բարձր է, աւելի գլանաձև է քան թէ բրգաձև։ Այս գլանի դրսի վերի կողմի չորս բոլորքը կայ քառակուսի քարերի շարք մը, որի վերայ քանդակուած են տասներկու առաքելոց և Ս. Գրիգոր Լուսաւորչի պատկերներն։ Ասոնք քարերին վերայ ցցուած կամ բարձրաքանդակ դուրս բերուած են և արուեստէ ու հարտարութենէ զուրկ չէն։

Եկեղեցին մտած ատեն գմբէթի ներքևին մօտ և սեղանի աջ կողմը, փոքրիկ խորանի մը մէջ, խիստ հաստ և ընտիր մարմարիոնէ տապանաքար մը կայ, որ հետևեալ յիշատակարանը կը կրէ. «Թուին ՌՂԵ արկի հիմնարկութիւն այս տաճարիս Ս. հազարաց Նշխարքս յայտնի ձեռամբ Յակոբ վարդապետի, որ յետ իննեակ եռակամի կաթողիկոս Հայոց լինի դարձեալ ի տեղւոջս նա ամփոփի թուին ՌՃԷ ամի»։

Եկեղեցին շատ զարդ ու սպաս չունէր. քանի մը տասնեակ գրքեր կային, որոնցմէ ոմանք ձեռագիր և մագաղաթի վերայ էին։ Որ ինչ կրցայ տեսնել, ամէնքն ալ կը բաղկանային աւետարաններէ, մաշտոցներէ և եկեղեցական ուրիշ գրքերէ։ Ըստ վանահօր ասութեան՝ քանի մը տարի առաջ կաթողիկոսի հրամանով արժէք ու յարգ ունեցող բոլոր իրերն էջմիածին փոխադրուեր էին, վանքին անապահովութիւնը պատ-

ճառ բերելով։

Սեղանի ետի կողմը, մատուռի մը մէջ, միապաղաղ քարէ մեծ սեղան մը կայ։ Աստ տարին անգամ մը պատարագ կը մատուցուի ի յիշատակ այս սեղանը տուողին, որ աստապատցի մի երէցփոխ է եղեր և Ռաձի թեւականին նուիրեր է այն։

Եկեղեցւոյ հարաւային կողմն է զանգակատունն։ Այս կը բաղկանայ երեք դատ մասերէ։ Առաջինը սրբատաշ քարերով կամարակապ մի սրահիկ է. ասոր վերայ շինուած է չորս քառակուսի սիւներով ուրիշ կամարակապ ծածկոց մը, որն առաջնի պէս սրբատաշ քարերով է. սոյն երկրորդի վերայ կանգնեցուած են վեց քարէ կլոր սիւներ, որք իրարու հետ կապւեր են նոյնպէս կամարներով։ Այս կամարների վերայ բարձրացած է բրգաձև գմբէթը։ Ասոնց ամբողջութիւնը մեծ ճարտարարուեստ ու հոյակապ շէնք մը կազմէ։

Վանքին մէջ քանի մը ոտք երկայնութեամբ մաղաղաթէ տոմար մը տեսայ, որի թէ գրուածն և թէ շարադրութիւնն հետաքրքրական լինելով, մէկ մասն աստ կօրինակեմ, առանց փոփոխութեան։

«Շահ Սէֆու երկրորդ առաջի ամի, և ի հայրապետութեան Տեառն Յակոբայ Սրբազան կաթողիկոսի յերեքտասան ամի և յեպիսկոպոսութեան աթոռոյ Ս. Նախավկայիս Միքայէլ Աստուածաբան վարդապետի յերկրորդ ամի։ Առ որով գումարեալ հաւաքեցան ամենայն հին կոնդակաց եղծեալ և խառնեալ յիշատակարան և գրեցան աստ առանձին-առանձին իւրաքանչիւր բարեյօժար կամօք տուողք և երանելի տեարք յիշատակաց և անօթաց յատուկ անւամբ, թէ ընծայողքն և թէ ընծայք թէ ով ոք իցեն կամ զինչ ընծայեցին սուրբ ուխտիս յիշատակ յաւիտենական յետ իւրեանց»։

ՏՈՒՄԱՐ

Ռ Ճ Մ Զ ՀՈԳՈՍՏՈՍ

Շնորհօք Տն Այ և ողորմութեամբ ամենասուրբ երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Որոնց կամօք և աջողմամբ եղև սկիզբն գծագրութեան մեծի յիշատակարանիս և կոնդակիս սրբ եկեղեցւոյն Նախավկային յամի մարդեղութեան Քի հազարերորդի վեց հարիւրորդի վաթսուն երկրորդի և եօթներորդի և ի հայկական թւականի հազարերորդի հարիւրերորդի վեստասաներորդի և ի թագաւորութեան պարսից Շահսէֆու։

Ած ահէ (orհնէ °) պարոն Թահմազն որ պատճառ եղաւ այսմ կոնդակիս և շնորհեց սա ի դուռն Ս. Նախավկային ընդ սմին և շինեաց այվանն յորդանան ու բազում ծախիւք և քսան շիրլու (չնարակած) թապախ (պնակ) ետ, որ և շինեաց դանանու չարտագեն (°) իւր յիշատակ։

Ած անէ շամբայ վաճառականքը, որք բնակեալ կան ի Թոզաթ*) քաղաքի, ետուն Ս. Նախավկային յիշատակ և վախմն (հրիտակ) մէկ դեղին գառ շուռջառ բ. ջահ և մէկ եփիփորան և շապիք մէկ ժամարարի լաքան իբրաղ (կոնք) և մէկ կապուտ խալիչայ (փոnr գnrգ)։

Ասկէ ետքը շատ յիշատակներ ևս կան, որք աստապատցի, շամբեցի, թաւրիզեցի, տաշրեցի, ջուղայեցի, սալմաստեցի, ի մասնաւորի նոյն այդ գաւառի հաֆթվանցի, խոյեցի, տփխսեցի և ադուլեցի նուիրատուների անունները և անոնց նուէրները կը յիշատակէ։

---

*) Շամբ գիւղի վաճառականների Թողաթ (Եւդոկիա) երբալ բնակիլը շաs հնեաmrrրական մի տեղեկութիւն է· աւելի օգտակար կը լինեr իմանալ, թէ ասոնք ե՞րբ գաղթեr են Եւդոկիա։

ՍՏՈՐԻՆ ԴԱՐԱՇԱՄԲ

Վանքէն մերձ կէս ֆարսախ հեռու և Երասխի աջ կողմը հայ գիւղ է, 25 տուն բնակչով. այս կալուածն Ս. Նախավըկայի վանքի սեփականութիւնն է։

ՎԵՐԻՆ ԴԱՐԱՇԱՄԲ

Վանքի հարաւային արևմտեան կողմը, մերձ 3 ֆարսախ հեռու, Կրզբլ չայ գետի ձախ կողմը, կը գտնուի։ Այս գիւղն առաջ հայաբնակ էր և վանքին սեփականութիւնը։ Բայց հայերի հետզհետէ ցրուելովը և Թուրք բնակչաց յաջորդելովը վանքը չկրցաւ զայն պահել։

Այս գիւղերն իրենց անուններն հաւանաբար ստացեր են եղեգնուտ վայրերէն, որք Շամբf կամ Շամբից Ձոr կը կոչէին։

2.— ԽՈՅ

Այս գաւառն, որ անունն ստացեր է իւր գլխաւոր քաղաքէն, շատ անկանոն տարածութիւն մը ունի, որով և սահմաններն ճշտիւ որոշել դժուար է։

Արևմուտքէն նրա սահմաններն են՝ Մուր, Էրլան, Ղոթուր և Փասլանքուհ լեռներն. հիւսիսէն՝ Փոքր Մասիս և գիծ մը որ մինչ Բորոլան կոչուած ժայռերն կը ձգուի։ Արևելքէն՝ Արաքս գետը, Քումքի և Ջուննուզ լեռներն, Մարանդ գաւառակն և Ուրմիոյ լճի հիւսիսային արևմտեան մասն. հարաւէն՝ Բայդաղ և ուրիշ լեռներ։ Արդի Խոյ գաւառին մէջ կիյնան Հեր, Արտազ, Ակէ, Թոռնաւան, Ճուաշ պատմական վայրերն։

Խոյ քաղաքը կը գտնուի Թաւրիզէն 22 ֆարսախ հեռու և Մարանդի արևմտեան կողմը և անորմէ մերձ 13 ֆարսախ հեռաւորութեամբ ընդարձակ դաշտի մը մէջ և Ղոթուր գետի կամ մեր նախնեաց Կարմիր գետի մէկ ճիւղին վերայ, պատած խոր խրամով՝ ամուր ու լայն պարիսպով և քանի մը աշտարակներով, որոնց մէջ աչքի կը զարնեն «Շամսը Թաբրիզի» (Թաւրիզի արեգակը) երկու աշտարակներն։

Թաւրիզէն Խոյ կերթան երկու որոշ ճանապարհներով. մէկը Մարանդի վրայով, որ փոստի ճամբան է, և միւսը Դիզա-Խալիլ գիւղաքաղաքի մէջէն, Ուրմիոյ լճի եզրի մօտէն և Թասուջ գիւղի վրայով, որ կարաւանի սովորական ճանապարհն է։

Խոյ քաղաքը 35,000-ի չափ բնակիչ ունի. փողոցները բաւականին կանոնաւոր և ծառերով հովանաւորուած են։ Շի-

նութիւններն առհասարակ գեղեցիկ և սենեակների առաստաղներն սովորաբար ճաշակաւոր նկարներով զարդարւած են։

Խոյ քաղաքն գտնւելով Տրապիզոն—Թաւրիզ— Կարին ճանապարհին վերայ, փոխադրական վաճառականութիւն մը ունի, բաւականին ընդարձակ։ Արտածւող բերքերի մէջ գլխաւոր տեղը կը բռնեն չոր ծիրանն և թութն, որք Կովկաս և Թուրքիա կը դրկւին։ Անւանի է նաև սեխն, որ ուրիշ քաղաքներ կը փոխադրւի։

Այս քաղաքին մէջ, հին ատեններն, խիստ շատ հայեր եղեր են։ Սուլթան Սուլէյման Թաւրիզի վերայ գնացած ատեն, Խոյի հայերն իւր կողմը շահելու համար, շատ խոստումներ է ըրած անոնց և մասամբ իւիք հայերի բարեկամութեան վերայ վստահանալով, խիստ քիչ պահապան զօրք է թողած Խոյի մէջ։

1805-ին կամ 1809-ին բազմաթիւ ընտանիքներ այս տեղէ Գանձակ և շրջակաները դաղթեցին. իսկ վերջին մեծ դաղթը տեղի ունեցաւ 1828 թւին, երբ այս տեղէն, ինչպէս և շրջակայ գիւղերէն հայերը խմբովին ելան և համբան շատ նեղութիւններ կրելէն ետքը յաջողեցան միւս դաղթականաց միանալ և Արաքսն անցնիլ։ Այժմ քաղաքին մէջ, այսինքն քաղաքի ներսը ամենևին հայ բնակութիւն չկայ, սակայն կանդուն մնացած եկեղեցիէն դատելով պէտք է ըսել, որ Խոյի հայերն ճոխ դրութիւն մը ունեցեր են և ինչպէս վերը յիշեցաւ, խիստ բազմաթիւ եղեր են*)։

*) Խոյ քաղաքը եւ գաւառը մեր մատենագրութեան մէջ յիշատակւած են Հեր անունով։ Այս երջանը հայոց պատմութեան մէջ ունեցել է շատ նշանակալից դեր եւ այդ մասին բազմաթիւ յիշատակութիւններ կան։

Ունեցել է սւտար թւով հայ բնակչութիւն, մինչեւ 1827—28 թ. ռուս-պարսկական պատերազմը եւ 1828-ի ներգաղթը։ Սոյն աւխատութեան մէջ յիշատակւած հայ բնակչութիւնը իր համրանքը կարողացաւ պահել մինչեւ Համաշխարհային առաջին պատերազ-

Խոյ քաղաքի եկեղեցին կը կոչւի Ս. Սարգիս, որ կը գտնւի պարիսպներէն դուրս։ Այս հոյակապ եկեղեցին, որ մերձ 30 մեթր երկայնութիւն և 14 մեթր լայնութիւն և 11 մեթր բարձրութիւն ունի, կը թւի կառուցւած է հայոց ՊՁԹ կամ փրկչական 1430 թ.։ Պատերը մինչ կէսը մութ կապոյտ քարով, կէսէն վեր, ներսի կողմը, թրծուն աղիւսով, իսկ դուրը դարձեալ քարով են։

Վեց սրբատաշ քարէ սիւների վերայ կը բարձրանան կամարներն, որք եթէ չեմ սխալեր, նոյնպէս տաշած քարով են։ Թէև մեր այցելած ժամանակ, 1862-ին, եկեղեցին գրեթէ զուրկ էր զարդերէ, սակայն և այնպէս այցելողների վերայ վեհութեան տպաւորութիւն մը ըրաւ։ Ատրպատականի մէջ գտնւած եկեղեցիներէն ամէնէն գեղեցիկն, ինչպէս և մեծն է։ Տարին մի անգամ, Ս. Սարգսի տօնին, ժամասացութիւն կը լինի և պատարագ կը մատուցւի։

Քաղաքէն դուրս, մանաւանդ հիւսիսային արևմտեան կողմը, կան գեղեցիկ ծառուղիներ, ընդարձակ այգիներ, պարտէզներ ու բանջարանոցներ։ Անոնց գրաւած գետինը տեսակ մը ամփիթատրոնի ձև ունի և մէջէն կը կը հոսին բազմաթիւ առուներ, անհամար ջրվէժներով։ Այս ամէնքը սքանչելի տեսարան մը կը ներկայացնեն։ Քաղաքէն կէս ժամի չափ հեռու և արևմտեան կողմը եղող արուարձանի՝ Քուշաբաղ, Փոս և Աղայի թաղերի մէջ կը բնակին հայերն, որք 100 տան չափ են (249 արական և 220 իգական)։

Քուշաբաղ թաղին մէջ մատուռ մը կայ՝ Ս. Աստուածամ-

մը, 1918 թ. գարնանը, երբ տանկական բանակները ներխուժեցին Ատրպատական, Խոյի հայ բնակիչներն ենթարկւեցին անաւոր կոտորածի, Աղէտից փրկւեցին անհնարաւոր թւով հայեր, մեծ մասամբ կանայք եւ անչափահաս որբեր, որոնք փոխադրւեցին Թաւրիզ, երջանկայիշատակ Ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեանի անխոնջ ջանքերի շնորհիւ։

Ծ. Խ.

ծին անունով, ուր ամէն օր ժամասացութիւն կը լինի։ Մատուռին կից է խեղճ շէնք մը, ուր 30-ի չափ աշակերտք քահանայէն կարդալ ու գրել կը սորվէին մեր տեսած ժամանակ։ Ժողովուրդը աղքատիկ դրութիւն ունէր մեր տեսած ժամանակ. մեծագոյն մասը հիւսնութեամբ և պայտառութեամբ և փոքրագոյնը զանազան գործերով կը պարապէին։

1867 թ. կազմուած շնչագրական տոմարէ, 1872-ին արտագրուած տետրակի մը մէջ, որ Թաւրիզի Առաջնորդարանին կը պատկանի, Խոյի հայ տների թիւը նշանակուած է 74, հետեւեալ երեք բաժանմամբ.—Փոս թաղ 31 տուն, Աղայի թաղ 28, Էյվաչի թաղ՝ 15 և ամէն տանուտէրների անուններն ևս առանձին-առանձին նշանակուած են։ Հաւանաբար Առաջնորդարանին պտղի դրամ տալու անկարողների անուններն այդ շընչագրութեան ատեն չեն նշանակուած, որով բնակիչների թիւը ներկայացուած է 74 տուն։

Խոյի մօտերն և հաւանաբար քաղաքի արևմտեան հիւսիսային կողմը պիտի լինի հռչակաւոր Հոգւոց վանքը կամ Հոգեվանքը, զորն ըստ աւանդութեան Բարդուղիմէոս առաքեալ կառուցեց 50 թուականին (Ք. ծ. յ.) և ուր ժողովեց շատ մը կոյսեր, կանայք, որոնց գլխաւոր կարգեց Մարիամը, որ Յուսիկ իշխանին քոյրն էր։ Այս վանքը մինչ Արծրունեաց տիրապետութեան վերջը կանգուն էր, բայց Վասպուրականը Թուրքերէ գրաւելէ ետքը այդ անունը կը դադրէ յիշուելէ։

Շատերը կը հաստատեն, որ այս քաղաքի մօտերը, Սալմաստ տանող ճամբին, բարձր բլրի մը վերայ կայ գերեզման մը, զոր ոմանք կը համարեն Վարդան Զօրավարի գերեզմանը։

ԴԻՉԱ

Խոյի հարաւային կողմը, մերձ մէկ ֆարսախ հեռաւորութեամբ կը գտնուի այս գիւղը, 63 արական և 48 իգական բնակչով։ Ասա կար մի քարաշէն եկեղեցի՝ Ս. Աստուածածին անունով։

ՎԱՌ

Խոյի արևմտեան կողմը և անորմէ մերձ 2 ֆարսախ հեռու կը գտնուի Վառ գիւղը, 103 արական և 86 իգական հայ բնակչով։ Գիւղի մէջ կայ քարէ կամարակապ եկեղեցի մը՝ Ս. Գէորգ Զօրավարի անունով։ 1897-ին քիւրդերը յարձակուելով այս գիւղի վերայ, բնակիչներէն մէկ մասը կոտորեցին և գիւղն սուրի տուին ու աւերեցին։

ՓԵՐԱ

Վառ գիւղի հիւսիսային արևմտեան կողմը և անորմէ 2½ ֆարսախ հեռու կը գտնուի այս գիւղը՝ 61 արական և 48 իգական բնակչով։ Փայտածածկ եկեղեցի մը ունի՝ Ս. Սարգիս Զօրավարի անունով, բայց քահանայ չունի։

Գիւղին մէջ կապրին նաև Թուրք բնակիչներ։

ՍԷՅԴԱՎԱՐ

Այս գիւղն ունի մի փայտածածկ եկեղեցի, Ս. Յակովբ Մծբնայ հայրապետի անունով։ Ունի մի քահանայ։ Հայ բնակչաց թիւն է 187 արական և 189 իգական։ Նոյն գիւղի մէջ կապրին նաև Թուրք բնակիչներ։

ՄԱՀԼԱԶԱՆ

Խոյէ 2 ֆարսախ հեռու գիւղ է, ուր կայ քարաշէն գմբէթաւոր եկեղեցի մը, Ս. Կենսատու Խաչ Քրիստոսի անունով։ Ունի 24 տուն՝ 65 արական և 66 իգական բնակչով։

Այս գիւղի բնակչաց մէկ մասն Վենետիկի Մխիթարեան

վարդապետների թելադրութեամբ ու դրամական նպաստների խոստումներով կաթոլիկութեան յարեցաւ, սակայն քիչ ետքը ոմանք իրենց նախնի դաւանութեան դարձան։ Այս պատճառով կաթոլիկների և լուսաւորչականաց միջև եկեղեցւոյ և գերեզմանատան ժառանգութեան առթիւ ծագեցաւ մեծ վէճ մը, որն ևս ծնունդ տուաւ ուրիշ շատ մը անհամ ու անտեղի գրժտութեանց։

ԿՈԹՈՒՐ

Խոյի խանութեան մէջ կը գտնուի Կոթուր գաւառակը, որի հայ բնակչաց մասին Ատրպատականի Առաջնորդաջանին շնչագրութեան մէջ յիշատակութիւն չկայ։ Ասոր պատճառն այն է, որ Կոթուրի մէկ մասն օսմանցիք առեր էին, և միայն 1876-էն ետքը դարձուցին պարսկաց։

Ըստ գնդապետ Սթուարթի, Կոթուրի մէջ 120 տուն հայ կայ։

3— ՄԱԿՈՒ

Մակու գաւառը արդի Ատրպատականի հիւսիսային արևմըտեան և Փոքր Մասսի հարաւային կողմը կիյնայ։ Արևելքէն սահման ունի Երասխ գետը, որ զայն Կովկասեան Հայաստանէն կը բաժանէ։ Հիւսիսէն կը ձգի սահմանագիծ մը, որ կը հասնի Փոքր Մասիսի գագաթէն մինչ Բորոլան կոչուած ժայռերն և կամ մինչ Երասխ գետը։ Արևմուտքէն Թուրքիայէ կը բաժանուի Փոքր Մասիսով, «Խէզմէ» գագաթով և Բաթլանքուհ լերանց ճիւղերովն, իսկ հարաւէն շատ որոշ սահման չունի։ Այս գաւառը մերձաւորապէս կը ներկայացնէ մեր մատենագիրների յիշատակած Շաւարշան գաւառն, որն Ա. դարում Արտաշէս Բ.ի ժամանակ Արտազ անունն ստացաւ։

Այս գաւառին մէջ էր նաև Շաւարշան քաղաքը, Հայկազանց Շաւարշ նահապետէն շինուած։ Այս գաւառի գլխաւոր գետերն են՝ Սարի-սու և Մակու-չայ, որք գլխաւորապէս դէպի արևելք կընթանան, միանալէ ետքը կը հոսին Երասխի մէջ։ Առաջնի նախավտակը Ղաշ կամ Ղաշլու գետն է, որ նախնեաց Շամինէ գետը լինելու է, իսկ երկրորդն՝ Մակու-չայը, ամենայն հաւանականութեամբ մեր Տղմուտ գետն է, որի ափին էր Աւարայր գիւղն, որմէ և կառաջանայ Աւարայրեան դաշտը, Վարդանանց նահատակութեան սրբավայրն։

Գաւառի միակ քաղաքն է Մակուն, որ Մակու-չայի հիւսիսային կամ ձախ կողմը, լեռան ստորոտին մօտ, մի խեղճ տեղ է։ Ըստ ոմանց, 700 տուն, ըստ այլոց՝ 1000 տուն բնակիչներ

ունի, որոնցմէ 35 տունը հայեր են։

Աստ Ս. Վարդան անունով քարաշէն եկեղեցի մը կայ։ Քաղաքէն դուրս, թաղի մը մէջ ևս կան 45 տան չափ հայեր (206 արական և 164 իգական)։ Ասոնց մի փոքր մասը առուտուրով, իսկ մեծագոյնը արհեստով կը պարապեն։ Աղքատիկ և ոչ զարգացեալ վիճակ մը ունին։ Միայն 1890 թուականին սկսան վարժարան մը ունենալ։

Մակու գաւառին մէջ կը գտնուի Թադէոս առաքեալի վանքն, իւր հրաշակերտ եկեղեցիովն, ուր ամփոփուած են Հայաստանի առաջին առաքեալ քարոզչի նշխարներն։

Ի հնումն Ատրպատական այս վանքի թեմն էր և ասոր առաջնորդը Հայաստանի գլխաւոր չորս արքեպիսկոպոսներէն մէկը կը համարուէր, որի ներկայութիւնն ու հաւանութիւնն անհրաժեշտ էր կաթողիկոսի ընտրութեան համար։ Բայց այժմ անդ միայն մի վանահայր և մի քահանայ կան։ Վանքին մօտ է և անոր կը պատկանի փոքրիկ գիւղ մը՝ 84 արական և 58 իգական հայ բնակչով, որք իրենց յատուկ մատուռ չունին և վանքի եկեղեցին կերթան աղօթելու համար։

Կայ նաև Քիշմիշ Թափա հայ գիւղն՝ 148 արական և 116 իգական բնակչով, և ուր կայ մի եկեղեցի։

Արտազի հայոց այս թիւերն ներկայացուցի 1875-ին եղած առաջնորդական շնչագրութեան համեմատ, որն թերի կը թուի, քանզի ըստ դնդապետ Սթուարտի՝ Մակուի գաւառի մէջ մերձ 300 տուն կամ 1500 հոգի հայ կայ։

Մակու քաղաքի արևմտեան հիւսիսային կողմը կը գտնուի Աւաջուղ գիւղն, որ գրեթէ Խոյ—Կարինի համբուն վերայ է և պարսկաց վերջին գիւղն է։ Այս տեղէ հայերն դարիս սկզբներն Վրաստան գաղթեցին և Էյրանլու կոչուած թուրք ցեղն եկաւ անոնց տեղը գրաւեց և այնտեղ բնակութիւն հաստատեց։ Հոն կը մնան երկու կիսաւեր եկեղեցիներ։

Խոյէն Մակու տանող համբուն վերայ, Մակու դետի մօտ, կը գտնուի Ղարէին գիւղը։ 1862-ին, երբ Մալթա ու-

սանելու կերթայի, գիշեր մը աստ անցուցի։ Թուրքերն կը պատմէին, որ ժամանակին այդ գիւղին մէջ 200 տուն հայ բնակիչ բնակուեր է, բայց մերձ մէկ դար առաջ հետզհետէ ցրուելով, գիւղը մնաց թուրքերին։ Քիչ մը հեռու զերեզմանատուն մը ցոյց տուին, որ հայոցն եղած էր։ Այս գիւղէն Մասիս պարզ աչքով կերևէր։

4— ՍԱԼՄԱՍՏ

Այս գաւառն այժմ Խոյի խանութեան մէկ բաժանումն է և անոր իրաւասութեան ներքոյ կը գտնուի։ Ուրմիոյ լճի հիւսիսային արևմտեան կողմը կիյնայ։ Հիւսիսային կողմն են Իլան լեռների մէկ մասն, որով Սալմաստ գաւառն կը բաժանուի Խոյ գաւառէն և աննշան բլուրների շարք մը, որով և կանջատուի արդի Գիւնէյ գաւառակէն, որ Ուրմիոյ լճի հիւսիսային դին կիյնայ։ Արևմտեան կողմը կը բարձրանան լեռներն, իսկ հարաւային կողմը կայ լեռների շարք մը, որ դէպի արևելք երթալով, կը միանայ Բէյ լեռան։ Այս վերջիններով Սալմաստ կը բաժանուի Ուրմիոյ գաւառէն։ Արևելեան կողմը կը գտնուին Ուրմիոյ լիճը և ասոր հիւսիսային կողմը գտնուող դաշտ մը, որի հիւսիսային կողմն ևս և մասամբ իւիք արևելեան կողմը կան բլրակներ, որք կը զատեն Սալմաստը Ալմասարա գիւղի արտերէն, որք Գիւնէյ գաւառակի մասն կը կազմեն։

Այս բլրակներին կից կայ մի ռահդարխանէ կամ բաժատուն, ուր Գիւնէյէ Սալմաստ և վերջինէս Գիւնէյ փոխադրուած ապրանքներէն փոքրիկ հարկ մը կառնուի։

Սալմաստ մերձաւորապէս կը ներկայացնէ հայոց Զարևանդ գաւառն, որ պատմական կարևորութիւն մը ունի մեզ համար։ Աստ և Հեր եկան սասանեան զօրքերն և բանակեցին Վարդանանց հետ պատերազմելէ առաջ։ Այս գաւառին մէջ Վահան Մամիկոնեան փառաւոր յաղթութիւն մը տարաւ Ատրներսեհ իշխանին վերայ։

Ի հնումն Սալմաստ մի առանձին թեմ էր։ Այստեղէն Յակովբ եպիսկոպոս, Օշին թագաւորի հրամանով, 1316-ին, Ադանա քաղաքի ժողովին ներկայ գտնուեցաւ։

Հայ մատենագիրներ Հեր և Զարևանդ գաւառներն ընդհանրապէս միասին կը յիշատակեն։

Ագաթանգեղոս հայոց 16 գլխաւոր իշխանների մէջ, որք դումարուեցան Մեծն Տրդատի հրաւէրով, Ս. Գրիգոր Լուսաւորիչն Կեսարիա դրկելու և անդ եպիսկոպոս ձեռնադրել տալու համար, 14-րդ կարգը կը տայ Զարևանդ և Հեր գաւառների Շահապն իշխանին և զայն ուրիշ տեղ Շահապն Շահապիւանի կը կոչէ, նոյնպէս և Տրդատին ընկերացող երևելի նախարարների մէջ էր Շահապիւանի Շահապն։

Սալմաստ 200 գիւղ ունի, որոնց բնակչաց մեծագոյն մասը թուրքերն են, ետքը հայերը և ապա ասորիներն։

Ըստ Ֆրէյզրի և այլոց, Սալմաստի ասորիներէն շատերն Ռուսիոյ և Եւրոպայի երկիրներն կերթան և ինքզինքնին կրօնական ձեւացնելով, դրամ կը հաւաքեն։ Երկրագնդիս վերայ գուցէ տեղ մը չկայ, որի բնիկներն այնչափ տարբեր տարազներով զգեստներ հագնեն, որչափ այս գաւառի ասորիներն։ Միևնոյն գիւղի մէջ կը տեսնուի մէկը պարսկական, մէկը քրդական, միւսը վրացական, ուրիշ մը ռուսական, մէկ ուրիշը՝ թրքական և մէկ ուրիշն ալ եւրոպական զգեստով։ Ոչ միայն այս, այլ և կը նշմարուի, որ մէկը հագեր է ընտիր ու վերջին տարուան ձևով (մոդայով) անգլիական ազնուականի ժաքեթի ու բաճկոնի հետ մալթեզական ջիովանների անդրավարտիքը, գլուխն ունի ամերիկեան եանքիի գլխարկը, ոտքերը ռուսական երկայն կօշիկներ։ Մէկ ուրիշը ռուսական լայն շինելի հետ վրացական արխալուղ, բարձր ու անծայր օձիքով շապիկ, խիստ նեղ ֆրանսական անդրավարտիք և պարսկական կօշիկներ։

Սալմաստ գաւառն Ատրպատականի բերրի ու լաւ մշակեալ շրջաններէն մէկն է։

Արդի Սալմաստի վարչական կենտրոնը Դիլման քա-

ղաքն է, որ 4000 թուրք բնակիչ ունի։ Աստ միայն քանի մը դրսեկ հայեր կան, որք մրդի առուտուրով կը զբաղին։

Այժմ կը ներկայացնենք Սալմաստի հայաբնակ գիւղերն։

ՀԱՖԹՎԱՆ

Դիլմանէն արևմուտք, մերձ երեք քիլոմեթր հեռու, կը գտնուի Հաֆթվան հայաբնակ գիւղը։ Տներն ամրաշէն են և շինութեան ձևերն աւելի քաղաքի, քան թէ գիւղի կը նմանին։ Բնակիչներն ընդհանրապէս բաւականին լաւ վիճակ ունին։

1872-ին գրուած տետրակը տների թիւը 184-ի կը հասցընէ, տանուտէրների անուններն առանձին նշանակելով։ Սակայն, մեր առած զանազան տեղեկութեանց համեմատ 300—350 տուն կայ։ Հաֆթվան Սալմաստի զուտ հայաբնակ ամէնէն մեծ գիւղն է։ Թէև 1890-ին այս գիւղի մէջէն անցայ, սակայն ժամանակի սղութեան պատճառաւ չկրցայ բնակչաց թիւը ստուգել[1]։ Ունին տաշած քարէ և կամարակապ մի եկեղեցի՝ Ս. Գէորգ անունով, 3 քահանայ և մի դպրոց, որ վերջերս հաստատուեր է։[2]

ԴՐԻՇԿ

Հաֆթվանի արևելեան կողմը և անորմէ մերձ մէկ ֆարսախ հեռու, ընդարձակ դաշտի մը մէջ ծառաւէտ մի մեծ գիւղ է, 100—150 տուն թուրք բնակչով։ Աստ բաւականին մեծ տարածութեամբ արօտավայր մը կայ, ուր արքունի թնդանօթաքարշ ձիերն դարնան կը բերուին արածելու համար։ Միայն տասն տուն հայ կայ. կիր ու քարէ 4 սիւնի վերայ հաստատուած կամարներով մի եկեղեցի կայ, Ս. Սարգիս Զօրավարի անունով։

ԽՈՍՐԱՒԱ

Դիլմանի հարաւային արևմտեան կողմը կը գտնուի Խոսրաւա կամ Խոսրովա գիւղը։ Այս աւանը ջրառատ ու գեղեցիկ տեղ է, բնակչաց թիւը 2000-է աւելի է, որոնց ամենամեծ մասն կաթոլիկ ասորիներ են, որք գլխաւորապէս այգեգործութիւն կընեն։

Ֆրանսացի Լազարիստներն 1836-է ի վեր աստ հաստատուեր են և Սալմաստի ասորիներէն մէկ մեծ մասը կաթոլիկութեան դարձուցեր։ Լազարիստներն ունին կոփածոյ քարէ մի փոքրիկ, բայց գեղեցիկ եկեղեցի. ասոր կից կայ մի դիշերօթիկ վարժարան, ուր կը պատրաստուին քահանայացու կաթոլիկ ասորիներն։ Կան և ուրիշ շէնքեր միսիոնարաց և ուսանողաց բնակութեան համար և ընդարձակ ու լաւ խնամուած պարտէզ մը։

Այս շէնքերին մօտ կայ ևս մի կուսանոց, ընդ տեսչութեամբ ֆրանսացի քոյրերի։

Խոսրաւա գիւղի մէջ, հայերը, ըստ առաջնորդական վիճակագրութեան՝ 13 տուն են (34 արական և 26 իգական), բայց 1890-ին, երբ այս գիւղը հանդիպեցայ, ինձ ըսին որ 18 տուն հայ կայ։ Մի փայտաշէն մատուռ ունեն Ս. Սարգիս զո-

---

1) Ատրպատականի գաւառների հայ բնակչութեան բական տեսակները, սոյն ափսատութեան մէջ, մեծ մասամբ առնուած են Առաջնորդարանին ուղարկուած ընչագրական ցուցակներից, որոնք կազմրուած են եղել Առաջնորդարանին պաշի տուրֆ վճարելու համար, ուստի եւ տների կամ «ծուխեր»ի հաշիւը պակաս է ներկայացուած։ Ըստ երեւոյթին ընչագրութեան ժամանակ հաւուի չեն առնել տուրֆ վճարելու կարողութիւնից զուրկ ընտանիքները, ինչպէս մատնանշել է հեղինակը մի քանի էջ առաջ, այլ առիթով։ Ծ. Խ.

2) Հաֆթվանի դպրոցը հիմնուել է 1890 թ. առաջ։ Սկզբում պաշտօնավարել են ազգանուէր երկու գործիչներ՝ Գոլոշեանն ու Ագ-

---

ռիպասեանը, ապա ազգային եւ կրթական անուանի գործիչ Մկրտիչ Աւետիսեանը, որի օրոք դպրոցը բոլորում է իր գործունէութեան ամենափայլուն շրջանը, տալով ազգային ընչով տոգորուած մի սերունդ։

բավարի անունով։

ՍԱԻՐԱ

Խոսրաւայի արևմտեան, հիւսիսային արևմտեան կողմը և անորմէն մերձ 1/3 ֆարսախ հեռու կը գտնուի Սաւրա աւանը, որ մօտաւորապէս 300 տուն բնակիչ ունի. 200-ի չափ Թուրք են, մնացեալն հայ։ Հայերն ունին յանուն Ս. Գէորգ զօրավարի կաթուղիկէով մի կամարակապ եկեղեցի, շինուած կիրով ու տաշած քարով։ Ունին երկու քահանայ։ Հայերն, ինչպէս և Թուրքերն աւելի շատ այգեգործութիւն կընեն քան Թէ երկրագործութիւն։

Ֆրանսացի Լազարիստները տեսնելով որ իրը օտարական դիւրաւ չեն կրնար մուտք գործել հայերի մէջ, իրենց գլխաւորի՝ Գիւլիզար եպիսկոպոսի միջոցով կը դիմեն Հռովմ, խնդրելով որ հայ կղերականներ դրկեն Ատրպատականի հայերի մէջ գործելու համար։ Հ. Սրապիոն Պարոնեան (Կ. Պոլսեցի) և Հ. Կիւրեղ, Վենետիկի Մխիթարեան ուխտէն, 1882-ին Ատրպատական կը դրկուին։ Ասոնք Սաւրա գիւղին մէջ կը հաստատեն իրենց բնակութիւնն։ 1890-ին, երբ Սաւրա այցելեցի, ասոնք յաջողեր էին բաւականին մեծ կալուած մը գնել, գեղեցիկ եկեղեցի մը, քանի մը սենեակ, և իր ննջարանով ու երեք դասարանով վարժարան մը շինել, ուր հաւաքեր էին 27 աշակերտք, որոնց ընթերցանութիւն և այլն կը սովորեցնէին։ Հ. Սրապիոն Թաւրիզ գնացած էր, տեղապահ թողնելով Հ. Մովսէսը։ Այս կղերականը մոլեռանդ մի երիտասարդ էր, որ ոչ կաթոլիկ քրիստոնեաները հաւատացեալ չէր համարեր։ Այս կէտերէ առաջանալով, մեծ աննեղողութիւն ու անհամակրութիւն և մինչ անգամ բուռն ատելութիւն կը տածէր այն ամէն քրիստոնէից դէմ, որ կաթոլիկ չէին։

Ոչ ոք կրնայ իրաւամբ պախարակել Մխիթարեան հայերն իրենց դաւանութիւնն տարածելու համար, բայց աւելի

լաւ կը լինի Սալմաստի պէս հեռաւոր անկիւնները չդրկել այսպիսի անփորձ ու կամապաշտ երիտասարդներ, որք բացի դժուութեան, վէճերի և անշահ ծախքերի պատճառ լինելէ, ուրիշ որևէ արդիւնք չեն կրնար տալ այն միաբանութեան, որ աւելի կուզէ գործել ազատամտաբար, քան թէ աննեղողամտաբար*)։

ՔԷՕՀՆԱՇԸՀԱՐ

Այս աւանը, որ այժմ Քէօհնաշրհար (Հին քաղաք) անունը կը կրէ, կը գտնուի Սաւրայի արևմտեան, հիւսիսային արևմտեան կողմը և անորմէ մերձ մէկ և կէս ֆարսախ հեռու է։ Նախապէս եղած է Սալմաստ գաւառի կենտրոնական քաղաքը։ Թուրք բնակչաց թիւը, ըստ իմ առած տեղեկութեանց, մերձ 2600 է, իսկ հայերն 48 տուն են։ Երկու եկեղեցի ունին. մէկը Ս. Յակոբը և միւսը Ս. Սարգիս անունով, երկու քահանայով։

Հին ժամանակները Քէօհնաշրհարը կոչուեր է Սալմաստ, և լինելով գաւառի կենտրոնական քաղաքը, ըստ երևոյթին ամբողջ գաւառն եւս կոչուեր է նոյն անունով։

Քէօհնաշրհարի մօտերէն կսկի «Դիւշման դարաշի երկայն, նեղ ու անանցանելի ճամբան, որ կը տանի դէպի արևմ-

---

*) Լազարիստ միաբանների եւ լուսաւորչականների միջեւ Սալմաստում սկսուած պայքարը իր ծայրագոյն կէտին հասաւ Ատրպատականի Հայոց Առաջնորդ Ստեփանոս եպ. Մխիթարեանի օրօք, խլելով երկու կողմից զոհեր։

Այդ պայքարի հետեւանքով, իբրեւ փոխվրէժ, Սալմասի Հաճիվան գիւղում, դաւադրութեամբ սպանուեցին Մեսրոպ վարդպ. Փափազեանը (1891 թ. Մայիսի 2-ին) եւ Հաճիվանցի Տէր Կիրակոս աւագ քահանայ Աղայեանը, նոյն թի աճեանը։

Մեսրոպ վրդպ. Փափազեանը հայրն էր յայտնի վիպագիր Վրթանէս Փափազեանի եւ ազգային ականաւոր գործիչ Կոմսի (Վա-

մուտք՝ Թուրքիոյ Աղբակ գաւառն։

Այս ճամբայի հարաւային կողմը, բարձրաւանդակների վերայ, կը գտնուին հետեւեալ 4 գիւղերն։

ՀԱԽՎԵՐԱՆ

Այս գիւղն ունի 15 տուն հայ բնակիչ և Ս. Սարգիս անուամբ մի փայտաձակ եկեղեցի։

ԱՍԼԱՆԻԿ

Այս գիւղն ունի 8 տուն հայ բնակիչ և Ս. Յակովբ անունով փայտաձակ եկեղեցի մը։ Հայերն քիւրդերի հետ խառն կը բնակին։*)

հան Փափազեան)։ Նա 1880-ական թւականներին հասատւած էր Թաւրիզում, իբրեւ քահանայ եւ ուսուցիչ։ հետագային ձեռնադրուեց վարդապետ եւ 1891 թին, նիւթական հանգամանքով, գտնւում էր Աստրպատականի առաջնորդական փոխանորդանիստ Հաշթվան գիւղում։ Մեր խաղաղ տեղեկութեանց համաձայն՝ Մեսրոպ վարդապետը որեւէ մասնակցութիւն չի ունեցել վերոյիշեալ պայքարին, Սալմաստ է եկած եղել կարճատեւ ժամանակով, Երուսաղէմի պատրիարքութեան կողմից, իբրեւ նիւթական։

Լազարիստների քարոզչութիւնը Սալմաստի հայ ժողովրդի մէջ բացառակապէս որեւէ յաջողութիւն չունեցաւ եւ նրանք իրենց գործունէութիւնը սահմանափակեցին ասորի համայնքի մէջ, առանձնագրելով մեծ յաջողութիւններ։ Ծ. Խ.

*) Մինչեւ 1828 թի ներգաղթը, Սալմաստի լեռնային շրջանի՝ Հախվերան, Ասլանիկ, Քաբիկ, Համբանաւա, Նըզարաւա, Դերիկ, Շիդան, Զէյվաջուկ, Աշվաջ, Հովադար, Ըռկաւա եւ այլ գիւղերում, ինչպէս եւ ձարա աւանում, բնակւելիս են եղել մեծ թըւով հայեր։

Լեռնային շրջանի հայերը, որոնք ապրում էին խիտ բնա-

ՔԱԲԻԿ

Այս գիւղն ունի 20 տուն հայ բնակիչ։

ՀԱՄԲԱՆԱԻ

Այս գիւղը 15 տուն հայ բնակիչ ունի։

ԴԵՐԻԿ

Քէօհնաշրհարի արեւմտեան կողմը, մերձ երկու ֆարսախ հեռու, կը գտնւի Դերիկ լեռնային գիւղը (այժմ քրդաբնակ), որի մերձակայքը, լեռան մը լանջին վերայ, կառուցուած է Ս. Աստուածածին մենաստանը, որ սովորաբար կը կոչւի Դերիկի վանք։

Այս մենաստանը այժմ գրեթէ կիսաւեր է։

կիչների հետ միասին կամ վերջիններիս հարեւանութեամբ, 1828-ին զանգուածային կերպով մասնակցեցին ներգաղթին։ Փոքրաթիւ հայեր մնացին այդ երջանիներում, իսկ բազմաթիւ գիւղեր միանգամայն դատարկեցին հայ բնակիչներից եւ նրանց տեղը գրաւեցին հարեւան գիւղերի քրդերը եւ 1927—28 թ. ռուս-պարսկական պատերազմից յետոյ Անդրկովկասից Պարսկաստան անցած թուրք գաղթականները։

Սուար թով հայեր բնակւելիս են եղել նաեւ Սալմաստին մերձակայ Սոմա լեռնային գաւառում, որ ենթադրւում է պիտի լինի Զարեհաւան գաւառը։ Այստեղի հայերն եւս, ամբողջութեամբ, մասնակցում են 1828 թ. ներգաղթին։

Սալմաստի վերը յիշուած լեռնային գիւղերում եւ Սոմա գաւառում մինչեւ այժմ մնում են հայկական եկեղեցիների աւերակները եւ այլ յիշատակարաններ։

Սալմաստի լեռնային գիւղերի այն հայ բնակիչները, որոնք չեն մասնակցում ներգաղթին, իջնում են դաշտավայր եւ հաստատւում Սալմաստի հայաբնակ գիւղերում։ Ծ. Խ.

1894 թուին մենաստանի շուրջը պատ մը քաշուեցաւ, դայն անակնկալ աւարառութեանց դէմ պահպանելու համար, բայց չար մարդոց կողմէ բանսարկութիւն եղաւ քաշուած պատի նկատմամբ և ետքէն քանդուեցաւ։ Աստ տօն օրերն միայն ժամասացութիւն կը լինի։ Երբեմն վարդապետ մը կը բնակի։ 1893-ին Բագրատ վարդապետ Թաւաքալեանն վանահայր էր այս մենաստանի մէջ*)։

ՈՒԼԱ

Ուլա գիւղը կը գտնուի Խոսրովայի հարաւային, արևմըտեան հարաւային կողմը և անորմէ մերձ մէկ ֆարսախ հեռաւորութեան վերայ։ Աստ միայն 5 տուն հայ կայ. մի փայտածածկ մատուռ ունին, Ս. Սարգիս անունով։ Հայերի հետ նոյն գիւղն հաստատուած են ասորի և թուրք բնակիչներ։

ՔԵԱԼԱՇԱՆ

Կը գտնուի Ուլայի հարաւային արևելեան կողմը և անորմէ մէկ ֆարսախ հեռու։ Աստ 22 տուն հայ կայ. ունին փայտածածկ մի եկեղեցի՝ Ս. Յովհաննէս Կարապետ անունով։ Գիւղն ունի նաև թուրք բնակիչներ։

---

*) Դերիկի պատմական վանքը եւ համանուն գիւղը գտնուում են Դուսմանայ ձորի բարձունքներում։ Գիւղը նախքան 1828 թ. եղել է հայաբնակ։ Այդ թւականի քաղաքական իրադարձութիւնների եւ ներգաղթի հետեւանքով հայերի փոխարէն հաստատուել են քուրդ բնակիչներ։

Դերիկի վանքը, որ Բաֆֆու հերոսների արձանագրոյնն է, խոշոր դեր է ունեցել հայ ազատագրական նորագոյն շրջանի պատմութեան մէջ, մասնաւորապէս 1890-ական թւականներին։ Առաջին առաքելը եղել է դարաբաղցի Մովսէս Իշխանեանը, որ Աւետեաց երկիրը տանող այդ ամրոցը վերակենդանացրել է 1880-ական թուականների վերջերին։ Այնուհետեւ Դերիկում գործել են Վարդան Մեհրաբեանը (ապագային խանասորի արշաւանքի հրամանատար), իշխան Յովսէփ Արղութեանը, Սեւքարեցի Սաֆօն եւ այլ ուխտեալներ։

Վանքի ներքեւում գտնուում են Մովսէս Իշխանեանի եւ յեղափոխական այլ գործիչների գերեզմանները։

Դերիկ գիւղը, Մովսէս Իշխանեանի նախաձեռնութեամբ, գնուում է Հաֆբվանքի հայ համայնքի կողմից, որպէս ազգային կալուածք, եւ իբրեւ այդպիսին մնաց մինչեւ 1928 թւականը, երբ Ատրպատականի Առաջնորդարանի կարգադրութեամբ վանաւոյց մի քուրդ ցեղապետի։

Վանքի պարիսպները քանդելու մասին իշ վերը արուած ակնարկը վերաբերում է տանիկ գործակալներին եւ հիւպատոսին, որոնք բոլոր էին բարձրացրել Տանկասանին սահմանամերձ վանքը ամրացնելու մասին։ Ծ. Խ.

ՓԱՅԱՋՈՒԿ

Դիլմանի հիւսիսային կողմը և անորմէ կէս ֆարսախ հեռու, ծառաշատ, հայաբնակ մի մեծ գիւղ է։ Տների թիւն է մերձ 230։ Ունին մի դպրոց և կոփածոյ քարէ շինուած մի եկեղեցի՝ Ս. Գէորգ անունով։ Այս գիւղը Բաֆֆիի ծննդավայրն է։

ՂԱԼԱՍԱՐ

Կը գտնուի Փայաջուկի մօտերքը. 30 տուն հայ կայ և ունին յղկուած քարով մի կամարակապ եկեղեցի՝ Ս. Սարգիս անունով։ Զուտ հայաբնակ, շէն ու գեղեցիկ մի գիւղ է։

ՇԻԴԱՆ

Դիլմանի արևմտեան, հիւսիսային-արևմտեան կողմը մի փոքրիկ գիւղ է, ուր 8 տուն հայ կայ. ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ։ Գիւղն առաւելաբար քուրդ բնակիչներ ունի։

ՂԶԼՋԱ

Կը գտնուի Դիլմանի հիւսիսային արևելեան և անորմէ մերձ 3 ֆարսախ հեռու։ 22 տուն հայ բնակիչ ունի և կամաքակաղ ու քար ու կիրէ կառուցած մի եկեղեցի՝ Ս. Յովհաննէս Մկրտչի անունով։ Հայերն Թուրքերի հետ խառն կը բնակին։

ԶԻՅՎԱԶՈՒԿ

Ներկայիս քրդաբնակ մի գիւղ է, ուր միայն 6 տուն հայ կայ. ոչ քահանայ ունին և ոչ եկեղեցի*)։ Կը գտնուի Մահլամ և Սառնա գիւղերի միջև։

ՄԱՀԼԱՄ

80 տուն հայ բնակիչ ունի և քար ու կիրէ մի եկեղեցի՝ Ս. Զօրավար անունով։ Գիւղն ունի 4 քահանայ։

ՍԱՌՆԱ

40 տուն հայ բնակիչ ունի և մի քար ու կիրէ եկեղեցի՝ Ս. Աստուածածին անունով։ Գիւղն ունի նաև մի ուխտավայր՝ Մար Իւխաննա անունով։

ՍԱՐԱՄԵՐԻԿ

41 տուն հայ կայ. ունի Ս. Սարգիս անունով փայտաածակ մի եկեղեցի։ Թուրքաց հետ խառն կը բնակին։

*) Գիւղն ունի հնադարեան մի մատուռ-ուխտավայր, որ ժողովուրդը կոչում է Փրիշաս։ Համբարձման տօնին մեծահանդէս ուխտագնացութիւն է կատարւում։ Ծ. Խ.

ՀՈՎԱԴԱՐ

7 տուն հայ կայ. ունին Ս. Սարգիս անունով փայտաածակ մի եկեղեցի։ Քիւրդերի հետ խառն կը բնակին։

ԸՌԿԱԻԱ

6 տուն հայ կայ. ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ։ Քիւրդերի հետ խառն կը բնակին։

ՃԱՐԱ

Քրդաբնակ մի գիւղաքաղաք է, ուր միայն 12 տուն հայ կայ և մի եկեղեցի՝ Ս. Գէորգ անունով։

ՂԱՐԱԲԱՂ

16 տուն հայ կայ. քար ու կիրէ մի եկեղեցի ունին, Ս. Սարգիս անունով։ Հայերն խառն կը բնակին Թուրքերի հետ։ Այս աւանը կը գտնուի Սալմաստէն Ուրմիա ձգող ճամբի վերայ, Ուրմիոյ լճի մերձակայքը։

ՇԷՅԹԱՆԱԻԱ

Տասն և հինգ տուն հայ կայ և ունին մի փայտաածակ եկեղեցի։ Հայերն Թուրքերի հետ խառն կը բնակին։

ԱՅԱՆ

Դիլմանի արևմտեան կողմը և անորմէ մէկ ֆարսախ հեռու է։ Աստ միայն 5 տուն հայ կայ. ունին փայտաածակ մի

մատուռ։ Հայերն քիւրդերի հետ խառն կը բնակին։

ՎԱՐԴԱՆ

Այս գիւղը կը կոչուի Վարդան կամ Վէրդան։ Կը գտնուի Դիլմանի արևմտեան, հիւսիսային արևմտեան կողմը և անորմէ մէկ և կէս ֆարսախ հեռու։ Ներկայիս Թրքաբնակ գիւղ է, ուր կապրին նաև 20 տուն հայեր։ Ունին փայտաձակ մի մատուռ՝ Ս. Գէորգ անունով. գիւղն ունի մի քահանայ։

5. — ՈՒՐՄԻԱ

Այս գաւառը նոյն անունը կրող լճի արևմտեան կողմը կիյնայ։ Հիւսիսային կողմէն լեռներով կը գատուի Սալմաստ գաւառէն, արևմտեան կողմը կը բարձրանայ լեռանց շարքը, որով կը բաժանուի Թուրքիայէն։ Իսկ հարաւային կողմը կան փոքրիկ բլուրներ, որոնցմով կանջատուի Սովուջբուլաղ գաւառէն և Սուլդուզ գաւառակէն։

Ուրմիոյ գաւառը, որ մերձ 70 գիւղ կը պարունակէ իւր մէջ, Ատրպատականի, ինչպէս և ամբողջ Պարսկաստանի մէջ շատ բերրի ու լաւագոյնս մշակուած մի երկրամաս է և ունի զանազան բերքեր, որոնց մէջ գլխաւորներն են՝ խաղող, ծըխախոտ, բամբակ, բրինձ, ծիրան, նուշ, ցորեն, գարի, ընկոյզ, աղ, բուրդ, մեղրամոմ, կաշեղէն և այլն։

Խաղողէ պատրաստելով սաքզա և չամիչ, մեծ քանակութեամբ կարտածեն Ռուսիա և Թուրքիա. իսկ բամբակն, որմէ փոքր քանակութեամբ մը կարտածեն Վան, մանած կընեն ամենանախնական ճախարակով։ Այս մանածի փոքրագոյն մասն ևս Թուրքիա կը փոխադրեն, իսկ մեծագոյն մասը կտաւ կը գործեն։

Հայերն կտաւը Սալմաստ տանելով, անդ կարմիր ու ծիրանագոյն կը ներկեն, կստանան գունաւոր կտաւ, որ տեղական բառով շիլա կը կոչուի։ Շիլան Կովկաս տանելով, անդ կը վաճառեն. զայն իւր տոկունութեան համար աւելի կը գընահատեն, քան թէ եւրոպական կտաւն։

Առաջներն Սալմաստի հայերն թէ այս կտաւը ներկե-

լու գործէն և թէ կտաւի առուտուրէն բաւականին մեծ օգուտ կը քաղէին, սակայն վերջին տարիներս շահն ու առուտուրն զգալի կերպով նուազեր են։

Ուրմիոյ գաւառի բնակչաց ամենամեծ մասը Թուրքեր են։ Քրիստոնեաները բաղկացած են քաղդէ-ասորիներէ և հայերէ։ Ըստ գնդապետ Սթուարթի, որ ամերիկացի միսիոնարների 1889-ի շնչագրութեան վերայ կը հիմնէ իւր տեղեկագրութիւնը, Ուրմիոյ, Սալմաստի և Ատրպատականի ուրիշ տեղերի քաղդէ-ասորիների թիւն կը հաշուէ 46,400։ Ասոնց ամենամեծ մասը նեստորական են, փոքրագոյնը կաթոլիկ, ամենափոքր մասը՝ բողոքական։

ՈՒՐՄԻԱ ՔԱՂԱՔԸ

Այս քաղաքն Ստրաբոնէ յիշած է Թեբառնա անունով։ Կը գտնուի գաւառի գրեթէ կենտրոնին մօտերն։ Լճի արևմտեան եզրէն միայն երկու ֆարսախ հեռու է։ Շատերն Ուրմիան կը համարեն Զրադաշտի ծննդավայրն։ Սա Ատրպատականի ամենահին քաղաքներէն մէկն է, և ըստ Ջորջ Ռոլինսընի՝ իւր անունն ստացեր է զայն տիրող հայ ցեղերէն մէկի անունէն։

Մեր նախնի հեղինակաց մէջ ասոր վերայ որևէ տեղեկութիւն չկայ։ Միայն Յայսմաւուրքի մէջ կը յիշուի «Եկն ի Հայս և Յուդա առաքեալ, այն է Թադէոս մին յերկոտասանից և կատարեցաւ յՈրմի քաղաք և Թաղեցաւ անդ»։

Կարևոր է Գանձակեցւոյ տեղեկութիւնն, որով կըսէ. «Որմի քաղաք, որոյ բնակիչք ընդ կիսոյն և առաւել ևս հայք էին, առեալ նորա զքաղաք, կոտորեաց 700 հոգիս ի Թուրքաց, այլ ի հայոց ապրեցոյց միայն զմանկունս և զաղջկունս և զմնացեալսն առհասարակ ի սուր եհան և ոչ եթող անդ և ոչ հայ մի»։ Այսպիսով կերևի, որ մինչ 15-րդ դարի սկիզբը բնակիչների մեծագոյն մասը հայեր էին։

Արդի քաղաքը խրամով և կիսաւեր պատնէշով շրջապատուած մի տեղ է։ Ըստ ոմանց 50,000, ըստ այլոց՝ աւելի քիչ բնակիչ ունի։ Քաղաքի մէջ պարտէզներ շատ կան և իւրաքանչիւր տուն իւր մեծութեան համեմատ պարտէզ մը ունի։ Քաղաքի մէջ 500 տան չափ քաղդէա-ասորի կայ, բաժանուած երեք դաւանութեանց՝ նեստորական, կաթոլիկ և բողոքական։ Աստ երեք առաքելութիւն կայ՝ ամերիկեան բողոքականք, որք 1834 թուականէ ի վեր հաստատուեր են. ֆրանսացի կաթոլիկ լազարիստներ, որք առաջիններէ երկու տարի ետքը եկեր են և անգլիքաններ, որք 1886-էն ի վեր եկեր են։ Իւրաքանչիւր առաքելութիւն ամէն ջանք ի գործ կը դնէ նեստորականներն իւր դաւանութեան դարձնել։ Ինչո՞ւ էջմիածին ևս մինչ այսօր առաքելութիւն մը չղրկեց, գէթ փորձ մը չըրաւ նեստորականներն ու եաղուբիներն, որք մեզ աւելի դիւրաւ կը յարեն քան թէ եւրոպացւոց, լուսաւորչականութեան դարձնելու։

Անգլիքաններն կը բնակին Նանա Մարիամ թաղը, ուր գետին մը գնելով, մեծ տուն մը և վարժարան մը շիներ են։ Ասոնք աւելի Թուրքիոյ նեստորականներն և մանաւանդ Դիարբի նահանգի գաւակներն կրթելու մտադիր են։ Նորոգ տպարան մը բերել տուեր են և հրատարակութիւններ ու գրքեր տպելու վրայ են։

Լազարիստները կը բնակին Ֆաթալիխան կոչուած թաղը։ Ընդարձակ պարտիզով տուն մը ունին, որի բակին մէջ կը գտնուին ևս բաւականին զարդարուն եկեղեցի մը և քանի մը սրահներ՝ աշակերտաց համար։

Ասոնք ունին մի տպարան, ուր ասորերէն լեզուով կրօնական գրքեր կը տպեն։ Առանձին տան մէջ կը բնակին ֆրանսացի վեց քոյրեր (կոյսեր)։ Ասոնք մի որբանոց ունին, ուր 40-ի չափ տեղացի և 30-ի չափ գրսէն բերուած աշակերտուհիներ ասորերէն ու կար կը սովորին։

Ամերիկացիք ևս Նանա Մարիամ թաղը կը բնակին. ունին ընդարձակ շէնքեր՝ բնակութեան, վարժարանի և տպարանի համար։ Բացի կրօնական գրքերէ, ասորերէն լեզուով կը-

ղօնական մի թերթ ևս կը հրատարակեն։ Ասոնց աւելի մեծ հաստատութիւնն այժմ կը գտնուի Ղալա կոչուած արուարձանին մէջ, որ քաղաքի արևելեան կողմը և անորմէ մերձ 3 քիլոմեթր հեռու է։

Ղալան ընդարձակ պարտէզներով մի գեղին է, շրջապատուած հաստ պարիսպով։ Աստ կառուցուած են զանազան շէնքեր։ Քառակուսի տուն մը գլխաւոր բնակութեան համար, ուրիշ մը ևս բժշկի համար և երկու մեծ, քառակուսի շէնք, որք կը ծառայեն իբր հիւանդանոց։

Իմ տեսած ատեն (1890 Հոկտեմբեր) այս վերջին երկուքը դեռ բոլորովին լրացած չէին։ Բացի ասոնցմէ, կան տարբեր մեծութեամբ վեց սրահներ։ Ասոնցմէ առաջինի մէջ քսանի չափ փոքր երեխայք ասորերէն ընթերցանութիւն կը սովորէին, երկրորդին մէջ, որ պատրաստական պիտի լինէր, 40-ի չափ աշակերտք կային, երրորդի մէջ 60-ի չափ աւելի՛ յառաջադէմ ուսանողք կը պարապէին, իսկ չորրորդին մէջ 9 աշակերտք աստուածաբանութիւն և 6 ուսանողք բժշկական գիտութիւն կը սովորէին։ Այս սրահներին մերձ կային ևս երկու մեծ սրահք, որոնց վարինը ճաշարան էր և վերինը ննջարան. կար ևս մի գրադարան, ուր բացի անգլիերէն ու նորատիպ ասորերէն գրքերէ, կար հին ասորերէն գրչագրերի փոքրիկ հաւաքածոյ մը ևս։ Վերջերս սկսեր էին թանգարան մը կազմել, ուր կը հաւաքէին Դիգալա կոչուած գիւղի մը մօտ գտնուող թումբէ մը ելած խեցեղէններ, աղիւսներ և այլն, որք պատմական շրջանին կը պատկանին։

Աշակերտներին բացի ասորերէնէ, կուսուցանէին ևս անգլիերէն ու պարսկերէն։ Ըստ գլխաւորի ասութեան, այս հաստատութեան ծախքերն ընդամենը 10,000 դոլարի կը բարձրանան տարին։ Ուրմիոյ ամերիկեան հաստատութեանց գլխաւորն և դոքտոր Շէդ (վարժարանների տեսուչն), որոնց առաջինը 20 տարիէ և երկրորդը 32 տարիէ ի վեր այս երկիրը կը բնակին, կը գտնէին, որ ամենամեծ տարբերութիւնը հայոց և ասորիների միջև այն է, որ հայերը փոքրիկ դրամագրլուխ մը ձեռք բերելէ ետքը գործի մը սկիզբ կը դնեն և ընդհանրապէս հետզհետէ վիճակնին կը բարւոքեն, իսկ ասորիներն աշխատութեամբ կամ բախտի բերմամբ մեծ կամ փոքր դրամագլխի տէր դառնալէ ետքը ինքզինքնին զարգացութեան և կերուխումի կը տան և դրամագլուխն սպառելով, նորէն բահ ու բրիչ ձեռք կառնեն և մշակութեան կը դիմեն։

Ուրմիա քաղաքին մէջ ընդամենը 22 տուն հայ կայ, որք Ֆաթալիխան թաղը կը բնակին ասորիների և թուրքերի հետ խառն։ Հայերն քաղաքի մէջ եկեղեցի չունենալով, մօտակայ Զարբաշ գիւղի (քաղաքէն կէս ժամ հեռու) եկեղեցին կերթան աղօթելու։

1889-ին, Ուրմիա քաղաքի մէջ բնակութիւն ունեցող սալմաստեցի ու թաւրիզեցի հայ վաճառականների նախաձեռնութեամբ սկսեր էին եկեղեցւոյ մը հիմնարկութիւնն ընել։ Սոյն ժամանակներն Ատրպատականի առաջնորդ Ստեփաննոս եպիսկ. Մխիթարեանն իւր թեմին այցելութեան գացած լինելով, Ուրմիա կերթայ։ Ժողովուրդն իրեն կը դիմէ թէ նպաստ խնդրելու եկեղեցւոյ շինութիւնն առաջ տանելու համար և թէ իւր աջակցութիւնն՝ Թաւրիզ և այլուր հանգանակութիւն բանալու համար։ Մխիթարեան եպիսկոպոս այդ խնդիրն անուշադիր կը թողու և կը մեկնի։ Տեղացի հայերն ընդհանրապէս արհեստներով կը պարապին։ Դպրոց չունենալով, իրենց զաւակները բողքականաց դպրոցը կը ղրկէին։ Վերջերս դպրոց մը բացեր են։

Ստորև կը ներկայացնենք Ուրմիոյ գաւառին հայաբնակ գիւղերը։

ՋԱՄԱԼԱԻԱ

Մի մեծ գիւղ*) է, ուր թուրքերն, հայերն, նեստորա-

*) Հեղինակը Զամալաւա գիւղը նշանակել է Սալմաստ գա-

կան ու բողոքական ասորիներն խառն կը բնակին։ Հայերը միայն 5 տուն են և Ս. Նշան անունով փայտաձակ մի եկեղեցի ունին։

ՁԱՐԲԱՇ

Քաղաքի արևմտեան կողմը և անորմէ մէկ և կէս քիլոմեթր հեռու, ասորաբնակ մի գիւղ է։ Աստ 16 տուն հայ կը բնակին և մի եկեղեցի ունին Ս. Աստուածածին անունով։ Գիւղին մօտերն կայ մի մեծ գերեզմանատուն, ուր հայերն ու նեստորական, կաթոլիկ և բողոքական ասորիներն կը թաղուին։

ՌԱՀԻԱ

Այս գիւղը 85 տուն բնակիչք ունի, որոնցմէ 55 տուն հայ, իսկ մնացեալն նեստորական ու բողոքական ասորիներ։ Հայերն ունին թրծուն աղիւսէ շինուած մի եկեղեցի, մի քահանայով։ Ըստ «Արմենիա» լրագրի տուած տեղեկութեան՝ այս գիւղն ունի հարիւր տուն հայ, որոնք ունեն մէկ դպրոց նաև։

ԻՔԻ ԱՂԱՋ

Աստ կան 40 տուն հայեր, որք նեստորական ու բողոքական ասորիների հետ խառն կը բնակին։ Հայերն ունին Ս. Սարգիս անունով մի եկեղեցի։

ւառի գիւղերի շարքում՝ ձիշտ է, գտնւում է Սալմասին մօտիկ, Ուրմի տանող խճուղու վրայ, սակայն վարչական բաժանումով միշտ պատկանել է Ուրմիոյ գաւառին։ Մենք յարմար գտանք այս տեղափոխութիւնը կատարել, Ուրմիոյ գաւառի հայաբնակ գիւղերի ցանկն ամբողջացնելու նկատումով՝ Ծ. Խ.

ՇԻՐԱԲԱԴ

Աստ 17 տուն հայ կայ. ոչ քահանայ ունին և ոչ եկեղեցի։ Համաբնակ են նեստորական, բողոքական ու կաթոլիկ ասորիների հետ։

ՂԱՐԱՋԱԼՈՒ

Աստ 9 տուն հայ կայ, որք Ս. Սարգիս անունով փայտաձակ մի եկեղեցի ունին։ Կը բնակին նեստորական, բողոքական ու կաթոլիկ ասորիների հետ խառն։

ՍՈՒՓՈՒՐՂԱՆ

Աստ 9 տուն հայ կայ, որք Ս. Սարգիս անունով փայտաձակ մի եկեղեցի ունին. նեստորական, բողոքական և կաթոլիկ ասորիների հետ խառն կը բնակին։

ԱԴԱ

Աստ 19 տուն հայ կայ. փայտաձակ մի եկեղեցի ունին և համաբնակ են կաթոլիկ, բողոքական ու նեստորական ասորիների հետ։

ՆԱԽՃԻԱՆ ԹԱՓԱ

Աստ 44 տուն հայ կայ և կամարակապ մի եկեղեցի ունին. ըստ «Արմենիա» լրագրի՝ աստ 160 տուն հայ կայ, որք մի եկեղեցի և 4 քահանայ ունին։ Այս տեղեկութիւնն աւելի հաւանական կը կարծենք։

ԻՍԱԼՈՒ

Աստ 20 տուն հայ կայ. փայտաձակ մի եկեղեցի ունին. ըստ «Արմենիա» լրագրի՝ 40 տուն կայ։

ԽԱՆԲԱԲԱԽԱՆ

Աստ 15 տուն հայ կայ. ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ. համաբնակ են Թուրքերի ու ասորիների հետ։

ԳԵԱՐԴԱԲԱԴ

Ուրմիոյ հիւսիսային կողմը և անորմէ մերձ մէկ ֆարսախ հեռու մի մեծ գիւղ է։ Աստ 150 տուն հայ կայ և մի եկեղեցի ունին։ Ըստ ոմանց 100 տուն, ըստ «Արմենիա» լրագրի՝ 150 տուն հայ կայ, մի եկեղեցի ունին, 4 քահանայ և մի դպրոց։

ՂԸՋԼԱՇՈՒՂ

Կը գտնուի Ուրմիոյ հիւսիսային կողմը և անորմէ 3/4 ֆարսախ հեռու. ծառաւէտ մեծ գիւղ է։ Աստ միայն 9 տուն հայ կայ. ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ. խառն կը բնակին նեստորական ու կաթոլիկ ասորիների հետ։

ԲԱՂԲԱՅԼՈՒ

Աստ 11 տուն հայ կայ. մի փայտաձակ եկեղեցի ունին. համաբնակ են ասորի նեստորականների հետ։

ԴԻԳԵԱԼԱ

Աստ 7 տուն հայ կայ. մի եկեղեցի ունին և համաբնակ են բողոքական, նեստորական ու կաթոլիկ ասորիների հետ։ Ինչպէս

յիշեցաւ, այս գիւղին մօտ բլրակ մը կայ, ուր պեղումներ ընելով, աղիւսներ ու խեցեղէն ամաններ կը գտնեն։

ԱՂՋԱՂԱԼԱ

Աստ 9 տուն հայ կայ. մի փայտաձակ եկեղեցի ունին. համաբնակ են Թուրքերի հետ։

*
* *

Ուրմիոյ գաւառի հայոց վիճակագրութիւնը լրացնելու համար յիշատակենք, որ Առաջնորդարանի շնչագրական տետրակին մէջ գրուած է, թէ նոյն գաւառին մէջ կապրին որոշ թիւով հայեր, որոնք ցրուած են հետևեալ թրքաբնակ և ասորաբնակ գիւղերի մէջ։ Ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ։

Ղարաղրզ 4 տուն, Ենգիջա 3 տուն, Խանիշան 4 տուն, Ղարաղեոզ 2 տուն, Զէյնալու 4 տուն, Զամաքի 1 տուն, Իսալու 1 տուն, Զիչաքլու 2 տուն, Ղարաղաջ 4 տուն, Սանդեաւ 1 տուն, Ալղիան 3 տուն և այլն։

6.—ԲԱՐԱՆԴՈՒԶ

Այս գաւառակն կը գտնուի Ուրմիա քաղաքի հարաւային արևմտեան կողմը և անորմէ 1 օրուան կարաւանի ճամբայ հեռու է. իւր մէջ կը գտնուին հետևեալ հայաբնակ գիւղերն.—

ԴԻԶԱԹԱՔԱ

Աստ 22 տուն հայ կայ. ունին փայտաձաձկ մի եկեղեցի։ Համաբնակ են Թուրքերի ու բողոքական ասորիների հետ. ըստ «Մշակ» թերթի, աստ 40 տուն հայ կայ։

ՍԱՀԱԹԼՈՒ

Աստ 9 տուն հայ կայ։ Եկեղեցի չունին և Թուրքերի ու ասորիների հետ խառն կը բնակին։ Ըստ «Մշակ»ի՝ 15 տուն հայ կայ։

ԲԱԼԱՆԻՇ

Աստ 18 տուն հայ կայ. ոչ եկեղեցի ունին, ոչ քահանայ. համաբնակ են Թուրքերի, քիւրդերի ու ասորիների հետ։

ԹՈՒՄԱԹԱՐ

Աստ 23 տուն հայ կայ։ Ս. Յովհաննէս Կարապետ անունով փայտաձաձկ մի եկեղեցի ունին և համաբնակ են քիւրդերի ու Թուրքերի հետ։

ՔԻՒՔԻԱ

Եօթը տուն հայ կայ։ Ս. Սարգիս Զօրավար անունով ստորերկրեայ մի եկեղեցի ունին։ Այս եկեղեցին ի ներքուստ շինուած է Թրծեալ աղիւսէ և խաչաձև ու կամարակտոպ շատ հին շինութիւն մը կերևի։ Քահանայ չունին։ Համաբնակ են Թուրքերի և քիւրդերի հետ։

ԲԱԲԱՌՈՒ

Աստ 38 տուն հայ կայ։ Ս. Աստուածածին անունով փայտաձաձկ մի եկեղեցի ունին, առանց քահանայի։ Համաբնակ են ասորիների հետ։ Ըստ «Արմենիա» լրագրի՝ այս հայաբնակ գիւղն 150 տուն ժողովուրդ ունի. հայերէն չեն գիտեր և քիւրդերէն ու Թուրքերէն կը խօսին։

ԴԱՐԲԱՌՈՒ

Աստ 24 տուն հայ կայ ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ։ Համաբնակ են ասորիների և Թուրքերի հետ։ Ըստ «Մշակ»ի՝ հայոց Թիւն է 32 տուն։

ՍԱՐԴԱՐՈՒԴ

Աստ 18 տուն հայ կայ. եկեղեցի չունին և համաբնակ

են ասորիների հետ։

*
* *

Ըստ «Մշակ» լրագրի, Բարանդուղ գաւառակի մէջ հայերը կը բնակին այլ ազգաց հետ նաև հետևեալ գիւղերի մէջ.— Ղասըմլու 10 տուն, Թազադիւղ 25 տուն, Թոռմալու 10 տուն։ Ասոնք հայերէն չգիտեն. Թրքախօս են։

7.—ՍՈՒԼԴՈՒԶ

Այս գաւառակը կը գտնուի Ուրմիոյ լճի հարաւային, արևմտեան հարաւային կողմը։ Շատ բարեբեր հող ունի։ Այս գաւառակի մէջ կը գտնուին հետևեալ հայաբնակ գիւղերն.—

ՆԱՂԱԴԷՅ

Այս գիւղաքաղաքին մէջ 36 տուն հայ կայ. ունին Ս. Սարգիս անունով փայտաձակ մի եկեղեցի։ Միւս բնակիչներն են Ղարափափախ կոչուած Թուրքեր, քիւրդեր և հրեաներ։

ԳԵՕՐՆԱԻԱ

Աստ 7 տուն հայ կայ. ունին մի եկեղեցի, առանց քահանայի. համաբնակ են քիւրդերի և ասորիների հետ։

ՔԱՐԻԱՆՍԱՐԱ

Աստ 8 տուն հայ կայ և քիւրդերի ու ասորիների հետ խառն կը բնակին։

ՌԱՀԴԱՆԱ

Աստ 8 տուն հայ կայ և ղարափափախների, քիւրդերի ու ասորիների հետ խառն կը բնակին։

ԱՂԲԷԳԼՈՒ

Աստ 5 տուն հայ կայ. մի մատուռ ունին, առանց քահանայի։ Ղարափափախների, քիւրդերի ու ասորիների հետ խառն կը բնակին։

ԲՈՐԱՆԻ

Աստ 7 տուն հայ կայ. կը բնակին քիւրդերի ու ղարափափախների հետ խառն։

ՄԱՄԱԴԵԱՐ

Աստ 21 տուն հայ կայ. ունին մի եկեղեցի. քիւրդերի ու ասորիների հետ խառն կը բնակին։

8. — ՍՈՎՈՒՋԲՈՒԼԱՂ

Այս գաւառը Սուլդուզի հարաւային, արևելեան հարաւային, իսկ Ուրմիոյ լճի հարաւային կողմը կը գտնուի։ Ունի բազմազան բերքեր, որոնց մէջ գլխաւորներն են՝ ցորեն, որ շատ առատութեամբ կայ, գարի, բրինձ, ծխախոտ, բուրդ, քեթիբա, գիտոր, արջառ, ոչխար, այծ, ջրշունի, գայլի և աղուէսի մորթի, գորգ և կարպետ։

Այս գաւառի բոլոր բնակիչներն, ամենաչնչին բացառութեամբ, կը կազմեն քիւրդերը։

Գլխաւոր քաղաքը, որի անունով գաւառը կոչւեր է, Ուրմիոյ լճի եզրէն մերձ ութ ֆարսախ հեռու է։ Այս քաղաքը ձորակերպ գետնի վերայ է և մասամբ իւիք լեռներով պատած է։

Ամռանը խիստ տաք է. կլիման կարելի է ըսել անառողջ է. քաղաքի մէջէն կանցնի գետակ մը, որի մէջ շատ ձկներ կան։ Բնակչաց թիւն կը հասնէ 9000-ի։ Անոնց ամենամեծ մասը քիւրդ է, իսկ փոքրագոյնը՝ թուրք և հրեայ։ Աստ կը բնակին տասն տուն հայեր, որք գլխաւորապէս Թաւրիզէն գացեր և այնտեղ հաստատւեր են. ասոնք վաճառականներ ու արհեստաւորներ են, որոնց թիւը յար փոփոխման մէջ է։ Ունին Ս. Յովհաննէս Կարապետ անունով փայտածածկ մի եկեղեցի, մերթ քահանայով և մերթ առանց քահանայի։

Այս գաւառին մէջ հայեր կապրին նաև հետևեալ գիւղերն. —

ԴԱՐԱՇԷՔ

Աստ 20—25 տուն հայ կայ. ունին Ս. Սարգիս Զօրա-

վար անունով մի եկեղեցի և համաբնակ են քիւրդերի և բողոքական ու նեստորական ասորիների հետ։

ՂԸԶԸԼՂՕԲԻ

Աստ 10 տուն հայ կայ. ունին փայտաձակ եկեղեցի մը։ Քիւրդերի հետ խառն կը բնակին։

ԿԱՖԻՍ

Աստ 10 տուն հայ կայ։

Վերի 3 գիւղերն իրարմէ միայն ½ ժամ հեռու են, բացի երկրագործութենէ, կզբաղին նաև ջուլհակութեամբ։ Ամէնքն ալ քրդական տարազով զգեստ կը հագնին։

9— ՄԻԱՆԴԱԲ

Միանդաբ կամ Միանդուաբ (երկու ջրի միջև), փոքր քաղաք է, որ Ուրմիոյ լճի արևելեան հարաւային կողմը և Զղաթա գետի ձախ կողմը կը գտնուի և Սովուջբուլաղէն մերձ 7 ֆարսախ հեռու է։ 1880 թ-ին, քիւրդերի ապստամբութեան ժամանակ, այս քաղաքը գրաւեց Շէյխ Աբդոլլայի որդին՝ Աբդիւլ Ղադրը. ընդհանուր կոտորածի ատեն, բազմաթիւ տեղացի թուրքերի հետ, հայեր ևս սպանուեցան։

Միանդաբ քաղաքի բնակչաց թիւը այժմ մերձ 3000 է, որոնցմէ մօտ 400-ը հրեայ և 120-ը հայ, իսկ մնացեալը քերմանցի դաղթական պարսիկներ են։

Հայերն արհեստով ու երկրագործութեամբ կը պարապին։ Ունին Ս. Աստուածածին անունով փայտաձակ մի մատուռ։

Աստ խաղողի շատ ընդարձակ այգիներ կան։

Այս քաղաքէն մերձ 3 ֆարսախ դէպի Ուրմիոյ լիճը կը գտնուին հին Միանդաբի աւերակներն։ Ըստ Ռոլինսընի՝ աստ բևեռագիր արձանագրութիւն մը կայ, որ փորագրուած կը համարի 6—8-րդ դարին (Ք. ծ. ա.) Վանի միապետներէ, ի յիշատակ մարաց վրայ իրենց տարած յաղթութեան։ Վերջերս տեղեկացայ, որ գերմանացի հնախոյզ Լեհման և Բէլք այստեղ այցելելով, արձանագրութեան ամենամեծ մասը կոտրելով՝ տարեր են։ Խաչիկ Ծ. Վարդպ. Տատեան, 1899-ին, ասոր միայն մի փոքրիկ մասը տեսեր էր, որ աւերուած է բոլորովին։ Վերջինս աստ գտեր է մի քահանայի կնոջ տապանաքարը, որ Ռ.Ճ.Ա թուականը (1652) կը կրէ։

ՍՈՀՐՈՒԼ ԹԱՓԱ

Աստ 10 տուն հայ կայ. ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ. կը բնակին Թուրքերի ու քիւրդերի հետ խառն։

ՂԱՐԱՎԵՐԱՆ

Ղաթա գետի աջ կողմը և Միանդաբէ 1/4 ֆարսախի վերայ է։

Աստ 40 տուն հայ կայ. ունին փայտաձակ մի եկեղեցի. կը բնակին Թուրքերի հետ խառն։

ԹՈՎԼԱ

Այս գիւղն վերջերս հիմնուեր է։ Վերը յիշատակուած մերձակայ երեք տեղերէն հայերն սկսեր են աստ բնակիլ, այնպէս որ այժմ մերձ 40 տուն հայեր կապրին այս գիւղն։

10. — ՄԱՐԱՂԱ

Այս գաւառն Ուրմիոյ լճի արևելեան, հարաւային արևելեան և Թաւրիզի հարաւային կողմը կը գտնուի։ Գլխաւոր քաղաքը, որ նոյնպէս Մարաղա կը կոչուի, Թաւրիզէն 18 ֆարսախ հեռու է։ Քաղաքը կը գտնուի Սօֆի գետի ափին։

Մարաղան Ատրպատականի ամենահին քաղաքներէն մէկն է։ 14-րդ դարին մէջ, մոնղոլեան տիրապետութեան ժամանակ, շատ բարգաւաճ ու ծաղկեալ վիճակի մէջ էր, և Թաթարաց միապետներէն Հուլաղու խան իւր մայրաքաղաքը ըրաւ։ Տակաւին կանգուն մնացեր է այն հոյակապ դիտարանը, որն Հուլաղու խանի հրամանով շինուեցաւ և ուրկէ Նասրէդդինը աստղերը կը դիտէր և իր նկատողութիւններն կարձանագրէր։ Այս դիտարանը մի կլոր աշտարակ է, թրծուն աղիւսով շինուած։ Ներսի կողմը քուֆի գրերով արաբերէն գրուածքներ կան։ Որքան կը յիշեմ, մէջէն 11—13 մեթր բարձրութիւն և 6—8 մեթր լայնութիւն ունի։

1828 թուի սկիզբներն այստեղէ ևս շատ հայ ընտանիքներ, իրենց տուն-տեղը թողնելով, ուրիշ հայերի հետ կովկասեան Հայաստան գաղթեցին։

Քաղաքի արդի բնակչաց թիւը մերձ 30,000 է։ Ճշտիւ չեն գիտեր, թէ հայերն երբ սկսեր են այստեղ բնակութիւն հաստատել։ Արդեօք մարաց շրջանի ժամանա՞կ, թէ՞ ետքերը։ Սակայն, այս ստոյգ է, որ 14-րդ դարի սկիզբներն բազմաթիւ հայեր կային և հաւանաբար ալ աւելի շատցան, երբ Մարաղա մոնղոլեան տէրութեան մայրաքաղաքն եղաւ։

Առաջին անգամ ասա հաստատեցաւ, նոյն դարին մէջ, Յովհաննէս ԻԲ պապէն ղրկուած Դոմինիկեան կարգէն Բարդուղիմէոս լատին վարդապետն, որի յաջորդներն և մանաւանդ աշակերտողներէն ոմանք, որք յայտնի են Միաբանասէր անուամբ, այնչափ կրօնական վէճեր յարուցին և գժտութիւններ ձգեցին հայ ազգի մէջ։

Քաղաքի օդն բարեխառն է, շատ ընդարձակ այգիներ ու մրգաստաններ ունի. պտուղներն առատ են ու գանազան, որոնց մէջ յիշելու է խաղողն, որմէ կը շինեն սաբզա ու չամիչ, զորս մեծ քանակութեամբ Ռուսիա կը տանին։ Ասա 1878-ին 63 տուն հայեր կային։ Տեղիս հայերն, գրեթէ ամէնքն ալ արհեստով, գլխաւորապէս հիւսնութեամբ կը պարապին։ Թրքախառն, տգեղ ու աղքատ մի բարբառ ունին։

Մինչ այս թուականը, իմ այնտեղէ անցած ատեն, վարժարան չունէին։ Այնուհետև բողոքական միսիոնարներն վարժարան մը բացին, որմէ հայերն ևս դրդուելով՝ առանձին դրպրոց մը հաստատեցին. յուսալի է, որ այս հաստատութիւնը մեծապէս օգտաւէտ լինի ժողովրդեան։ Ըստ առածս վերջին տեղեկութեանց, Մարաղայի հայ տների թիւը այժմ 120-էն աւելի է և օրէ օր աւելնալու վերայ է։ Բացի բնիկներէ, շուրջ 30 դրսեկներ կան, մեծ մասամբ Թաւրիզեցի հայեր, որք մրգեղէնի առուտուրով կը պարապեն։

ՓԵՀՐԱԻԱ

Մարաղայէ ½ ֆարսախ հեռու մի մեծ գիւղ է, ուր 30 տուն հայ կար, բայց հետզհետէ Մարաղա գաղթելով, այժմ միայն 6 տուն մնացեր է։ Այս տեղի հայերն արհեստով մեծ մասամբ հիւսնութեամբ կը պարապեն։ Մի եկեղեցի ունին։ Թուրքերի հետ խառն կը բնակին։

ԱՂԱՋԱՐԻ

Այս գիւղը 2 տուն հայ կայ։ Ս. Սարգիս անունով մի եկեղեցի ունին և Թուրքերի հետ խառն կը բնակին։

ԽՈՋԱՄԻՐ

Այս գիւղը 3 տուն հայ կայ. ոչ եկեղեցի ունին և ոչ քահանայ։

ՂԱԼԱՋՈՒՂ

Այս գիւղը 10 տուն հայ կայ։ Փայտաձակ մի եկեղեցի ունին։ Համաբնակ են Թուրքերի հետ։

11.— ԱՐԴԱԲԻԼ

Սոյն անունով գաւառի գլխաւոր քաղաքն է, Թաւրիզի արևմտեան կողմը և անորմէ մերձ 32 ֆարսախ հեռու։

Այս քաղաքը հաւանաբար Փայտակարան նահանգին մէջ պարունակուած էր։ Դեռևս Դ. դարի մէջ այստեղ հայեր կային, քանզի ըստ Զամչեանի՝ Ս. Գր. Լուսաւորիչն այս քաղաքի վերայ ձեռնադրած էր Աբրահամ անունով մի եպիսկոպոս, որն սպանուեց այլ քրիստոնեաների հետ, Շապուհի հրամանով։

Ըստ Հ. Ալիշանի՝ Արդաբիլ Զ. դարի մէջ յիշուած է Պրոկոպիոսէ իբր գլխաւոր վաճառականատեղիներէ մէկն, ուրկէ վաճառք անցնելով կը տարուէին Վարդանակերտ, Փայտակարան և Կասպից ծով։

Մեր հեղինակաց մօտ մասնաւոր տեղեկութիւնք չենք գտներ. միայն Կիրակոս Գանձակեցի կը պատմէ, թէ՝ «Զաքարէ և Իւանէ չորան (ԺԳ դար) զօրօք բազմօք ի քաղաքն Մարանդ, և առին զնա և աւերեցին զգաւառն, որ շուրջ զնոքօք, և ապա գնացին յԱրտաւիլ քաղաք, նմանապէս առին զնա» և այլն*)...

Արդաբիլի մէջ է Սաֆաֆեան թագաւորաց նախահօր՝ Շէյխ Սէֆիի գերեզմանը։

Ռուսներ 1827-ին առին այս քաղաքը։ Գրաւած ուրիշ իրերին մէջ պէտք է յիշել հռչակաւոր գրատունն, որի հազուագիւտ ձեռագիրներն փոխադրուեցան Պետերբուրգի կայսերական գրատունն։

Դարիս սկիզբներն Արդաբիլ թէև Տփխիսէ, Դերբենդէ և Բաքուէ դէպի Թեհրան և Սպահան տանող տեղ մը չէր, սակայն Կասպից ծովին վերայ նաւերի և մանաւանդ շոգենաւերի երթևեկութիւն հաստատելէ ետքը սկսաւ ծաղկիլ և վաճառականական կենտրոն մը դառնալ։ Ատրպատականէ Ռուսիա (Բաքու, Աստրախան) և Ռուսիայէ Ատրպատական փոխադրելիք ապրանաց համար։

Արդի հայ բնակիչք, որք մերձ քսան տուն են, ամենքն ալ նորեկ են. գլխաւորապէս Թաւրիզէն եկած և առհասարակ վաճառականութեամբ կը պարապին։ Մի փայտածածկ մատուռ և մի փոքրիկ դպրոց ունին*)։

---

*) Կիրակոս Գանձակեցի, էջ 107, տպեալ Մոսկուա, 1858 թ.

*) Ըստ Զամարէ սարգաւագի պատմութեան, Շահ Աբբաս Հայասանէ հանած երիտասարդներէ մի շաս փոքր թիւ Արդաբիլ բնակեցուց, Ասոնք փոքրիկ, փայտակերտ եկեղեցի մը շինեցին։ Հետզհետէ բազմանալով՝ եկեղեցին անբաւական դարձաւ ժողովուրդին համար։ Երբ ուզեցին անոր մէկ կողմը քանդել, մեծցնել, ամբոխն գրոհ տալով, զայն ի հիմանց տապալեց։ Հայոց գանգատի վերայ, Շահի հրամանով, գրգռողները պարտաւորեցան իրենց ծախքովը նոր եկեղեցի շինել տալ հայոց համար։

12.— ՂԱՐԱԴԱՂ

Այս շրջանն կը մտնէ հին Փայտակարան նահանգին մէջ։ Ամէն հաւանականութեամբ, Փայտակարանն իւր անունն ստացեր է անտառների և ընդարձակ ծառաստանների շատութենէն։ Ըստ հայ մատենագիրների, պատմական 15 նահանգներէն մէկը կը գտնուէր Հայաստանի արևելեան հիւսիսային կողմն, ունենալով արևելեան կողմէ Կասպից ծովը, հիւսիսային կողմէ Աղուանից երկիրը, արևմտեան կողմէ Ուտիացւոց, Սիւնեաց ու Վասպուրական նահանգներն և հարաւային կողմէ՝ պարսկական Ատրպատականը և կը կոչուէր Փայտակարան։*)

Սակայն, որո՞նք էին այն գծերն, որք Փայտակարանը կը բաժնէին պարսկական Ատրպատականէն, խիստ որոշ չէին. հաւանաբար այս կողմի սահմաններն, ըստ հանգամանաց բերման, փոփոխութիւն կստանային։

Փայտակարան պատմական նահանգի մասին մանրամասն տեղեկութիւններ կը տայ Հ. Ալիշանը։

Հայոց այս նահանգն այժմ բաժանուած է ռուսաց և պարսկաց մէջ։ Պարսկաց ձեռքը մնացած Փայտակարանին մէջ կը գտնուին Ղարադաղ գաւառն՝ իւր Ահար քաղաքով և Մուղանի կամ Դարանդաշտի մէկ մասն, որք Արաքսի հարաւային

*) 1963 թ. Երևանում լոյս տեսած Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի» ուխտատուքեան համաձայն՝ Ղարադաղ գաւառը չի գտնուել Փայտակարան նահանգի մէջ, այլ եղել է Վասպուրական նահանգի 26-րդ գաւառը եւ կոչուել է Պարապատուն։ Ծ. Խ.

կողմը կիյնան։ Մուղանի դաշտն ընդարձակ մի տափաստան է, որ տարեայ մէկ մասն առատ խոտով ծածկուած է։ Այս դաշտադեղինն թափառական ցեղերի, գլխաւորապէս Շահսուվան կոչուած ցեղի արօտատեղին է, ուր կերթան ձմերելու։

Ղարադաղ, ինչպէս իւր թուրքերէն անունն ևս կը ցուցնէ, խիստ լեռնային մի երկիր է, շատ խոր ձորերով, բազմաթիւ վտակներով ու գետակներով, սակայն բաղդատմամբ այնքան ցուրտ չէ, այլ յաւէտ խոնաւ ու միդապատ։ Լերանց գագաթներն ու բարձրութիւններն կը գտնուին աւելի երկրի արևմտեան և հարաւային կողմը, և քանի հիւսիս ու արևելք կը յառաջանան, այնչափ կը ցածրանան և Երասխի հարաւային ափերի մօտերն փոքրիկ դաշտեր ու հարթութիւններ կը դառնան, իսկ որչափ արևելք կը յառաջանան, աւելի ընդարձակութիւն կստանան, թէև այս ընդարձակ հարթադաշտերը տեղ-տեղ փոքրիկ լեռներով ու բլուրներով կընդհատուին։ Այս երկրի մէջ կան անտառներ և ընդարձակ ծառաստաններ ու թփաստաններ, որոնց մէջ կը բուսնին վայրի կաղնի, բոխի, հացենի, թթենի, կեռասենի, տանձենի, ընկուզենի, նռնենի, խնձորենի, ալոճ, շլոր, զկեռ կամ զղեար, մոշ, մորի, և այլն։ Կը բուսնին նաև բազմատեսակ թուփեր, բանջարեղէններ ու ծաղիկներ, որոնց յատկութեանց քննութիւնը, տեսակների դասաւորութիւնը և տեղական անունների ուսումնասիրութիւնը շատ հետաքրքրական նիւթ կրնան մատակարարել։

Այս գաւառին մէջ առաջները շատ մեծ թիւով հայեր կային։

Ղարադաղն Զանգեզուրէն և Ղարաբաղէն (Սիւնիքից և Արցախից) միայն Երասխ գետով բաժանուած լինելով, դարադացիք ներկայ դարի երկրորդ քառորդէն սկսեր են հետզհետէ անցնիլ Ղարաբաղ, Շուշի, և այդ տեղերէն՝ Տփխիս, Բագու և Կովկասի ուրիշ կողմերն՝ գործ, բախտ որոնելու կամ արհեստով, մշակութեամբ ու մանրավաճառութեամբ պարապելու համար։ Ասոնցմէ շատերը կը հաստատուին գնացած տեղերնին։

Մէկ մեծ մաս ալ խաների կամայականութիւններէն խոյս տալու կամ գործ գտնելու նպատակաւ կերթան Թաւրիզ, և այնտեղ կը բնակին։ Այնպէս որ Թաւրիզի ժողովուրդի մեծագոյն մասը այժմ ղարադաղցիներէ կը բաղկանայ։

Ղարադաղի հայերն ընդհանրապէս պնդակազմ, տոկուն, աշխատասէր ու խիստ խնայող են. գլխաւորապէս կը պարապեն երկրագործութեամբ, սակայն կան նաև արհեստաւորներ՝ դարբին, պայտառ, ոսկերիչ, գինագործ։ Ամէն ոք, քիչ բացառութեամբ, քիչ-շատ հիւսնութիւն գիտէ։

Կանայք ընդհանրապէս աշխատասէր են ու չարքաշ. բացի տնական ու դաշտային ծանր աշխատութիւններէ, կզբաղուին նաև կտաւագործութեամբ ու ասեղագործութեամբ. գիտեն հիւսել կարպետ և ոմանք՝ նաև գորգ։

Ղարադաղցւոց բարբառը չի կրեր ոչ գրական և ոչ օտար լեզուների ազդեցութիւններ, ինչպէս ուրիշ հայ գաւառներինը։ Ուստի դարերէ ի վեր մնացեր է կոշտ, անտաշ, բայց բնական վիճակի մէջ։

Ինձ մինչ այժմ յաջողած չլինելով այս գաւառն այցելել, հնարաւոր չեղաւ տեղին վերայ բնիկներէ տեղեկանալ իրենց բարբառի առանձին յատկութիւններին։

Հայերն այժմ կը բնակին Ղարադաղի միայն Դրզմար, Մեսափարա, Մընջլան ու Քեյվան գաւառամասերի կամ «մըհալ»ների մէջ։

ԴՐԶՄԱՐ ԳԱՒԱՌԱՄԱՍ

Դրզմար կը գտնուի Երասխի անմիջական հարաւային կողմը։ Այս գաւառամասի մէջ կը գտնուին հայաբնակ հետևեալ գիւղերն.

ԱՂԱՂԱՆ

Լեռան մը ստորոտին վերայ հաստատուած և Արաքսէ մերձաւորապէս 2 ֆարսախ հեռաւորութեամբ մի գիւղ է։ Ունի 40 տուն հայ բնակիչ, մի եկեղեցի՝ մի քահանայով։ Վերջին տարիներս մի դպրոց ևս շինուեցաւ։

ՈՒՐԳԻԻԹԻՆ

Առաջինէն ½ ֆարսախի չափ հեռու է. ասոր կը բնակին 45 տուն հայեր. ունին մէկ եկեղեցի և մի քահանայ։

ՂՇԼԱՂ

Ուրգիւթինէն մերձ 1½ ֆարսախ հեռու է. ունի 30 տուն, մի եկեղեցի և մի քահանայ։

ՍԱՐԴՈՒ

Ղշլաղէն մերձ 2½ ֆարսախ դէպի արևելք, քարքարոտ լեռան մը լանջին վերայ ինկած մի գիւղ է. ունի 40 տուն հայ բնակիչք, խիստ հին մի եկեղեցի և մի քահանայ։

ԽԱՆԱԳԱՀ

Սարդուէն մերձ 3 ֆարսախ հեռու, դժուարամատչելի դիրքով լեռնաձորի մը մէջ ինկած մի գիւղ է։ Ասոր մելիքները նախապէս եղեր են խիստ նշանաւոր, որոնց երբեմն կը պատկանէր Դրզմարի իշխանութիւնը։ Ունի մերձ 100 տուն բնակիչք, մի քահանայ, և գեղեցիկ, քարաշէն եկեղեցի մը։ Մօտը շինուած է փոքրիկ դպրոց մը, ուր աշակերտք կը սովորին ընթերցանութիւն, վայելչագրութիւն և մասամբ թուաբանութիւն։

ՂՈՒԼՈՒԴԻ

Խանագահէ մերձ 2 ֆարսախ հեռու, փոքրիկ ձորակի մը

մէջ ինկած է. ունի 20 տուն բնակիչք և փայտածածկ մատուռ մը։

ՇԱՒԼԻ

Ղուլուղիէ 1½ ֆարսախ հեռու, Արաքսի ափի մօտակայքը, խիստ խոր ձորի մը մէջ կը գտնուի։ Ունի 15 տուն բնակիչք և մի փոքրիկ եկեղեցի։

ՆՈՐԱՇԷՆ

Շաւլիէ մերձ 1 ֆարսախ հեռու, բարձր լեռան մը լանջին վերայ կը գտնուի. ունի 35 տուն բնակիչք և նորաշէն եկեղեցի մը։ Այս գիւղն այժմ Թաւրիզի Արամեան դպրոցի սեփականութիւնն է։

ՕՂԱ

Զորակի մը մէջ ինկած, 35 տունով ու փայտածածկ եկեղեցիով մի գիւղ է. այս ևս Արամեան դպրոցի սեփականութիւնն է։

Օղա գիւղէն 3 ժամի չափ հեռու է Ս. Գէորգ եկեղեցին*), որ ընդհանրապէս կոչուած է Յոյժի զօրաւոր և հռչակաւոր մի ուխտատեղի է։ Եկեղեցւոյ մէջ եղած քարերէն մէկը

*) Ղարադաղի տեղագրութեանը լաւածանօր, ուսուցիչ պր. Վահան Միրզայեանից տեղեկացանք, որ Ս. Գէորգ եկեղեցին գտնւում է Ներքին Յոյժ գիւղում, որը հնագային կոչել է Նորաշէն գիւղ։ Միաժամանակ, այդ թւականներին գոյութիւն են ունեցել Յոյժ անունով երկու գիւղեր՝ *Ներքին Յոյժ* եւ *Վերին Յոյժ*, որոնց մասին այս աշխատութեան մէջ յիշատակութիւն չկայ։

Այս գաւառամասի մէջ են գտնւում նաեւ Ռաշլու, Զիազու եւ Լիւմա գիւղերը, որոնք նոյնպէս յիշատակուած չեն սոյն աշխատութեան մէջ, Ծ. Խ.

Ի Ճ թւականը կը կրէ։ Նոյնպիսի մի ուխտատեղի կը գտնուի գիւղին ներքևը։ Ասոնց շրջակայ կալւածները նոյնպէս կը պատկանին Արամեան դպրոցին։

ՄԵՇԱՓԱՐԱ ԳԱՒԱՌԱՄԱՍ

Այս գաւառամասը կը գտնուի նոյնպէս Երասխի անմիջական հարաւային կողմը և Դրզմարի արևելեան կողմը, որմէ կը բաժանուի Սալ դժուարամատչելի լեռնով, որը Արաքսի ափի մօտերէն սկսելով և ուղղակի դէպի հարաւ յառաջանալով, կը միանայ Ուսքուհ կոչուած լեռնաշղթային, որի մէկ ճիւղը կը բնայ համաբելի։

Այս գաւառամասին մէջ կը գտնուին հայաբնակ հետեւեալ գիւղերն.

ՄՂԿԻԹ

Երբեմն երևելի այս գիւղի բնակիչներն հետզհետէ ցրուելով, վերջերս անբնակ դարձեր էր, բայց քանի տարի առաջ Թումանեան եղբարք գնելով այս գիւղը, մերձ 24 տուն հայ բնակեցուցած են այնտեղ։

ՈՂԱՆ

Մղկիթէ երկու ֆարսախ հեռու, 50 տնով անտառապատ մի գիւղ է։ Ունի քարաշէն եկեղեցի մը, զոր մի քանի տարի առաջ Թումանեան եղբարք կառուցեցին։

ՔԼԱԼԱ

Ողանէ մերձ մէկ ֆարսախ հեռու է. ունի 20 տուն բնակիչք, եկեղեցի մը և քահանայ մը։

ԳԵՐՄԱՆԱՒ

Քարքարոտ ձորի մը մէջ ինկած է Գերմանաւ կամ Գարմանաք գիւղը։ Ունի 25 տուն բնակիչք, եկեղեցի մը և քահանայ մը։

ՄԻՔԻԴԻ

Գերմանաւէ 2½ ֆարսախ հեռու է. ունի 4 տուն բնակիչք և եկեղեցի մը։

ՆԵՓԵՇՏ

Միքիդի գիւղէն մերձ 4 ֆարսախ հեռու է. ունի 20 տուն բնակիչք և եկեղեցի մը։*)

ՄՆՋԻԱՆԻ ԳԱՒԱՌԱՄԱՍ

Այս գաւառամասում գտնւում են հայաբնակ հետևեալ գիւղերը.

ՎԻՆԱՆ

Նեփեշտէ 2½ ֆարսախ հեռու է. ունի 24 տուն բնակիչք և քարաշէն եկեղեցի մը։

Սոյն գիւղէն ½ ֆարսախ հեռու, լեռան մը լանջին, կայ ուրիշ եկեղեցի մը՝ Ս. Յովհաննէս անունով, որ Ղարագաղի յայտնի ուխտատեղիներէն մէկն է։

*) Պր. Վահան Միրզայեանի բացատրութեան համաձայն՝ սոյն գաւառամասում գտնել են նաեւ Ջարու, Շիրվան եւ Մինիդառուն հայաբնակ գիւղերը։ Իսկ Ողանի մօտ, անտառում, գտնւում է մի եկեղեցի, որը նորոգած է 1896 թիւն, Թումանեան եղբայրների ծախսով։ Ծ. խ.

ՍԵԻԱՀՈՂ

Վինանէ 3 ֆարսախի չափ հեռու է. ունի 30 տուն բնակիչք և եկեղեցի մը։

ՔԱՐԱԳԼՈՒԽ*)

Ունի 20 տուն բնակիչք, եկեղեցի մը և քահանայ մը։

ԱՄՐԱԴՈՒԼ

Ունի 20 տուն բնակիչք և փոքրիկ եկեղեցի մը։

ՔԷՅՎԱՆԻ ԳԱՒԱՌԱՄԱՍ

Այս գաւառամասն ունի հայաբնակ հետևեալ գիւղերը.

ՍՈՒՐՈՒՆ

Այս գիւղը կը կոչւի Սուրուն կամ Սիրուն։ Ունի 20 տուն և փայտաձակ փոքրիկ եկեղեցի մը։

ԲԵՐԴԻԵՏՔ

Այս գիւղն, որ կոչւում է նաև Բերդ, ունի 26 տուն բնակիչք։

ԱՍՐԱՆ

Գեղեցիկ դիրքով, ընդարձակ արտերով և առատ ջրերով մի գիւղ է. ունի 20 տուն բնակիչք։

*) Այս գաւառամասում, հնագային, Քարագլուխի մերձակայքում, հիմնել է մէկ նոր գիւղ՝ Վարդանաւէն անունով, որը տեղացիք կոչում են նաեւ Գեանդումնա։ Ծ. խ.

ՄԱՆԴԱՒՈՒ

Այս գիւղն ունի 14 տուն բնակիչք։

ՆՈՐԱՇԻՆՔ

Աստ կը բնակին 14 տուն հայք։

ԱՇՐԱՖ

Աստ կը բնակին 17 տուն հայք։

ԴՈՒԳԷԳԴԱՐԱՆ

Այս գիւղն ունի 20 տուն բնակիչք։

ՂԱՍՈՒՄԱՇԷՆ

Այս գիւղն, որ կը կոչի նաև Մելիք Ղասում, ունի 25 տուն բնակիչք և եկեղեցի մը։

ՍՂԸՆ

Քէյվան գաւառամասի գլխաւոր գիւղն է. ունի 120 տուն բնակչութիւն։

Աւելորդ չեմ դներ սոյն գիւղի վերաբերմամբ յիշատակել դէպք մը, որ տեղի ունեցաւ 1884 թուականին։

Զէլէբիան Ահմադ խան, որ Ղարադաղի մէջ ընդարձակ կալուածներ ունի, որոնց մէջ կը գտնուին նաև քանի մը հայաբնակ գիւղեր, ուզելով մի պատրուակով դրամ կորզել հայերէն, ուրիշ տեղ սպանուած իր մարդոցմէ մէկը Սղըն գիւղի արտերէն մէկին մէջ ձգել կը տայ դիշերով, և հետևեալ առտուն ձիաւորները ղրկելով, գիւղացիներն կամբաստանէ իբր այս սպանութեան հեղինակ և անոնցմէ սպանուածի արեան գինը կամ մարդասպանը կը պահանջէ։

Գիւղացիք վստահ իրենց անմեղութեան վերայ, կը մերժեն ձիաւորների պահանջը, որով կռիւ մը կը ծագի և ուրիշ ձիաւորներ առաջիններին օգնութեան հասնելով, կռիւը կը մեծնայ, և երկուստեք քանի մը անձինք կը վիրաւորուին։ Հայոց կողմէն մի աղջիկ ևս կսպանուի և 4—5 տներ կը կողոպտուին Ահմադ խանի մարդերէն։

Այս տխուր լուրը Թաւրիզ կը հասնէ։ Քանի մը զարադաղցի հայեր կը խնդրեն Բարդուղիմէոս վարդապետին, որ այն ժամանակ Ատրպատականի առաջնորդութեան փոխանորդն էր, դիմէ կառավարութեան և ոճրագործներն պատժել տայ։

Առաջնորդական փոխանորդը կը դիմէ արտաքին գործոց պաշտօնատան Թաւրիզի փոխանորդին, որին յանձնուած էր Ղարադաղի հայոց կառավարելու պաշտօնը։ Սա չուզելով այդ լուրը տարածուի, Բարդուղիմէոս վարդապետին կը հաւաստիացնէ, որ անմիջապէս ոստիկաններ ղրկելով, յանցաւորները պատժել կը տայ։

Բարդուղիմէոս վարդապետ այս խոստումէն ապահովուած, ուրիշ քայլեր չառներ։ Ամէն հաւանականութեամբ այդ խոսումը գործադրութեան սահմանին մէջ չպիտի մտնէր։ Սակայն, Քէյվանի հայերէն ոմանք, որ այն ժամանակ Շուշի կը գտնուէին, այնտեղէն ուղղակի, առանց միջնորդի, հեռագիր մը կը ղրկեն Վեհափառ Շահին, խնդրելով որ գործը արդարութեամբ քննուի և յանցաւորներն պատժուին։ Վեհափառ Շահն անմիջապէս հեռագրով իւր դժգոհութիւնը յայտնելով Ատրպատականի կառավարութեանը տեղի ունեցած անկարգութեանց համար, կը հրամայէ որ անաչառ քննութենէ ետքը յանցաւորներին ծանր պատիժ տրուի։

Թէև շատերն աշխատեցին իրողութիւնը փոփոխելով

խնդրին ուրիշ կերպարանք տալ, սակայն անոնց ջանքերն դուր անցան։ Ի վերջոյ Ահմադ խան շղթայակապ Թաւրիզ բերուեցաւ և բանտը ձգուեցաւ։ Ժամանակ մը անդ մնալէ ետքը Ահմադ խան Թէհրան տարուեցաւ։

Քէյվանի հայերէն մի քանի անձինք իրենց գլուխ ունենալով Սարգիս Ջհանեանը, գնացին մայրաքաղաք։ Մանրամասն քննութենէ ետքը, թագաւորի հրամանով, կարգադրուեցաւ, որ Ահմադ խանն այնուհետև որևէ կերպով Քէյվանի հայոց վերայ իշխանութիւն չունենայ, անոնց գործերին չմիջամտէ և իրեն պատկանեալ որոշեալ տասանորդը մելիքի միջոցով ստանայ։

Սարգիս Ջհանեան մի հրովարտակով մելիք կարգուեցաւ, որին յանձնուեցաւ Քէյվանի հայերի կառավարութիւնն։ Այսպիսով այդ գաւառամասի հայերն ընդմիշտ ազատուեցան խաների կամայականութիւններէն և ապահով վիճակ մը ունեցան։

Սակայն, ժամանակէ մը ի վեր այս անդորրութիւնն սկսեր է վրդովուել։ Քէյվանցիք նախանձէ դրդուած, երկու կուսակցութեան բաժնուեր են։ Այժմ մէկը հաւատարիմ մնալով Մելիք Սարգսին, կուզեն միշտ անոր մելիքական կառավարութեան տակ մնալ, միւս կուսակցութիւնն իրենց գլուխ ունենալով Մելիքի եղբօրորդի Ջհանգիրը, կը ջանայ վերջինիս մելիքութիւնը յաջողեցնել։

Երկուստեք ևս պաշտօնական անձանց դռներն դեղերելով, կը վատնեն թէ իրենց ժամանակը և թէ դրամները։ Նիւթապաշտ պաշտօնեաներն ևս անոնց անխոհեմութենէն օգուտ քաղելով, կը կթեն այս անփորձ ու յամառ կողմերը, մերթ մէկը, մերթ միւսը մելիք անուանելով։

Բ.

ՍՊԱՀԱՆԻ (ՊԱՐՍԿԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ) ԹԵՄ

1.— ՍՊԱՀԱՆ

Սպահան կամ Էսֆահան՝ պարսից ամենահին քաղաքներէն մէկն է։

Մեր հին հեղինակներէն ոմանք Սպահանը Շօշ կոչեր են, որ սխալ է, քանզի պարսիկները այս քաղաքը երբեք Շօշ չեն կոչած։

Սպահանը կը գտնուի արդի Պարսկաստանի մօտաւորապէս կեդրոնը, Զայանդերուդ գետին հիւսիսային կողմն։

Ըստ պարսիկ աշխարհագրաց՝ ի սկզբան Թէյմուրաս «Դիւակապ» մականուանեալն, աստ 4 գիւղ հիմնեց. ետքէն Քէյղոբադ, Քիեանեան հարստութեան առաջին թագաւորը, այդ գիւղերը միացնելով, իւր բնակատեղին ըրաւ։ Սրա յաջորդների, ինչպէս և Պարթև ու Սասանեան թագաւորների ժամանակները միայն երկրորդական քաղաքի դիրք ունեցաւ։ Սպահանի մասին յիշատակութիւն ունի մեր պատմիչներէն Սեբէոսը։

Բաղդադի խալիֆաների իշխանութեան տակ Սպահան շատ ծաղկեցաւ։ Լէնկթէյմուրը այն գրաւեց 1387 թուին, բնակիչները անխնայ ջարդել հրամայեց և քաղաքին մէջ 70,000 գլուխներից բուրգ մը կանգնել տուաւ։

Սաֆաֆեան տէրութեան օրով սկսաւ դարձեալ նորոգուիլ ու ծաղկիլ։ Մեծն Շահ Աբբաս Ղազինէն Սպահան փոխադրեց իւր դահն և ամէն կողմերէ արուեստագէտներ, վաճառականներ, արհեստաւորներ և գործաւորներ անդ հաստատեց։ Սպահան տարաւ նաև Հայաստանէն հանած հայերը։ Շատ հոյակապ շինութիւններով զարդարեց, և այսպէս, Սպահան ամբողջ Պարսկաստանի մայրաքաղաքն և Ասիոյ վաճառականութեան առաջին կեդրոններէն ու շտեմարաններէն մէկը դարձաւ։

17-րդ դարի մէջերն Սպահան իւր ծաղկման ու փառքի գէնիթը հասաւ։

Շարդեն, որ 1663 թուականին այս քաղաքը եկաւ և երկար տեն անդ բնակեցաւ, խիստ մանրամասնօրէն զայն կը նկարագրէ։

Նա կըսէ. «Թէև շատերը մինչ 1,100,000-ի կը բարձրացնեն Սպահանի բնակիչների թիւը, սակայն հաւաստեաւ 600,000 կը լինի։ 38,200 շէնք կայ, որոնց 29,400-ը քաղաքի շրջապատին մէջ, իսկ 8,800-ը՝ դուրսը*)։

«Սպահան այնչափ բազմամարդ է, որչափ Լոնդոն, որ Եւրոպայի ամէնէն բազմամարդ քաղաքն է։ Քաղաքի պատերի շուրջբոլորը 20,000 քայլ է։ Այն թուականէն ի վեր սկսաւ իյնալ, ինչպէս որ պիտի տեսնուի պատմութեանս ընթացքին մէջ։ Այժմեան բնակչաց թիւը հազիւ 70,000-ի կը հասնէ։

«Օդն ու ջուրը բաւականին աղէկ են, պտուղներն առատ ու զանազան, որոնց մէջ անուանի են սեխը, ձմերուկը, դեղձը, տանձն և խաղողը և «դեազ» կոչուած քաղցրաւենին, որ տեսակ մը մանանայէ կը շինուի։

«Տակաւին մետաքսի, բամբակի և դալամքար կոչուած տպածոյի գործարանները կան։ Արոյր, պղինձ, երկաթ ու պողպատ կը գործեն բաւական դեղեցիկ ու ճարտար քանդակագործութեամբ, անկեալ ու վատթարացեալ ժառանգք և հետեւողք երբեմն ծաղկեալ և սքանչելի ձեռագործութեանց։

«Կանգուն մնացած նախկին շինութեանց մէջ երևելին «Չէհել Սըթուն» պալատի մնացորդն է, որի դեղեցիկ ճակատին կան 18 բարձր սիւներ, որք իրենց վերայ կը կրեն շքեղ ու զարդարեալ առաստաղ մը։ Յայտնի է «Չհար բաղ» պողոտան՝ իւր հնադարեան չինարի ծառերով... Այս պողոտան, որի իւրաքանչիւր կողմը չորս մեծ պարտէզներ կան, «Հաշթ բեհեշթ» (ութ դրախտ) անուանով, հազար մեթրէ աւելի երկայնութիւն մը ունի և կը կցէ քաղաքը Զուղա արուարձանին հետ՝ Ալլահվերդի դեղեցիկ կամուրջի միջոցով, որ 33 կամարներէ բաղկացած է։

«Մասչէդ Շահ» մզկիթն, որ արտակարգ մեծութեամբ գմբէթով մը ծածկուած է։ «Մադրասէյը Մադէր Շահ» (արքայամօր վարժարանը), «Մէյդանը Շահ» (արքայական հրապարակ), մերձ 200 մեթր երկայնութեամբ և 80 մեթր լայնութեամբ, և հինգ կամուրջները, որոնցմէ մէկը շինուեր է հայէ մը։

«Քաղաքի արևմտեան կողմը կը գտնուի հռչակաւոր «Մինարէյը Ջոմ-Ջոմ» (շարժուն մինարէ) կոչուած շէնքը։ Այս քառակուսի, փոքրիկ մի մզկիթ է, մօտ 16 մեթր երկայնութեամբ, տասնեւերկու մեթր լայնութեամբ և 7 մեթր բարձրութեամբ։ Շէնքի առջևի աջ ու ձախ կողմերին կցուած են երկու մինարէթներ, դետնէն 22, իսկ շէնքի տանիքն 7 մեթր բարձրութեամբ։ Երբ մինարէի մէկի միջի սանդուխէն վեր ելլելով, զայն կը շարժեն, միւս մինարէն և ամբողջ շէնքն ևս կը շարժին։ Սակայն, ամէն կէտերն միևնոյն հաւասարութեամբ չեն շարժուեր, հեռու տեղերն աւելի նուազ կերերան քան մօ-

*) Ուրիշ տեղ կաւելցնէ. «Իմ յիշատակարանիս մէջ գրած է, որ քաղաքի շրջապատին մէջ 162 մզկիթ, 48 վարժարան, 1802 քարուանսարա, 273 բաղնիք եւ 12 գերեզմանատուն կը գտնուին։ Քաղաքին մէջ օրական 2000, իսկ արուարձանի մէջ 1500 ոչխար կը մորթեն»։

տիկ եղողները, այն նմանութեամբ, որ երբ լճացեալ ջրի մէջ քար մը ձգես, շրջանակ մը կը կազմուի, և որչափ շրջանակն մերձենալով քարի ինկած տեղէն կը հեռանայ, այնչափ նւազ զգալի կը լինի, մինչև որ անհետանայ։ Այսպէս ալ, որչափ առաջին շարժող մինարէէն կը հեռացուի, այնչափ այնտեղի երերումը աւելի կը նւազի։ Պարսիկները կը կարծեն, որ այս շարժումը մի հրաշք է, որ կը կատարուի մզկիթի մէջ եղած դամբարանի տիրող կողմէն։ Բայց օտարականներէն շատերը այս շարժումը պատահական դիպուածի մը կը վերագրեն։

ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄԸ

Սպահանի (կամ Պարսկա-Հնդկաստանի) առաջնորդութիւնը կսկսի 17-րդ դարի սկիզբէն, երբ Շահ Աբբաս Ա. Ատրպատականէ ու Հայաստանէ հանած հայերն չեցնելով, այս քաղաքին և անոր շրջակայ գաւառներին մէջ բնակեցնել տրուաւ։ Սոյն վեհապետի և իւր յաջորդների ատեն, Սպահանի առաջնորդութիւնն Ատրպատականէն նախամեծար էր։ Ատրպատականի առաջնորդութեան ներքոյ կը գտնուէին միայն Ատրպատականի հայերը, ինչպէս է և այժմ, իսկ Պարսկաստանի մնացեալ բոլոր վայրերն եղած հայերն Սպահանի առաջնորդի իրաւասութեան ներքոյ էին, ինչպէս և այժմ։ Այսպիսով, այս թեմը Էջմիածնի առաջնորդութեանց մէջ ամենակարևորն էր և կաթողիկոսներէն շատերն իրենց ժամանակի մէկ մասն ատ կանցնէին։ Երբ որոշ թիւով հայեր Պարսկաստանէն Հնդկաստան հաստատուեցան և իրենց ըրած յառաջադիմութեան ու ձեռք բերած հարստութեան շնորհիւ կարևորութիւն ստացան, այն ժամանակ այս թեմը իւր վերայ աւելցուց Հնդկաստանն ևս, որով կոչուեցաւ Առաջնորդութիւն Սպահանի եւ Հնդկաստանի, կամ Պարսկա-Հնդկաստանի թեմ։ Սպահանի հայոց հետզհետէ ցրուելովն ու աղքատանալովն և Հնդկաստանի հայոց նւազելովն ու տկարանալովն այս թեմի կարևորութիւնը շատ պակսեցաւ։

Այժմ եթէ Ատրպատականէն նւազ կարևոր չէ, անորմէ ալ աւելին չէ։

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԳԱՂԹՆ ՍՊԱՀԱՆ

16-րդ դարի վերջերն, երբ Ջալալիներն Օսմանեան տէրութեան դէմ ապստամբելով տեսակ մը աւազակապետութիւն կազմեցին, գրեթէ ամբողջ ասիական Թուրքիան կը վրդովէին և ամենուրեք, մանաւանդ Հայաստան սարսափելի խժդժութիւններ կը գործէին։ Հայերէն ոմանք ասոնց բարբարոսութիւններէն և այս պատճառով առաջ եկած սովէն ազատուելու համար սկսան այլ և այլ երկիրներ գաղթել։

Արցախի (Ղարաբաղ) Ուտէացւոց երկրէն, Շամախիի և Գանձակի կողմերէն փոքրաթիւ հայեր, գլխաւորութեամբ Սարուխան բէկ, Նազար բէկ, Ջալալ բէկ, Մելիք Սուջում, Մելիք Հայկազն և այլ մելիքների, չեցին Պարսկաստան։ Ասոնց միացան Դիզակ և Դաշտ գաւառների չորս գիւղի բոլոր բնակիչները։ Շահ Աբբաս զանոնք ընդունելով, Սպահան քաղաքին մէջ և անոր շրջակաները բնակեցուց։

Ասոնց հետևեցան նաև ուրիշ հայեր։ Քիչ ատեն ետքը Դաւիթ և Մելիքսէթ կաթողիկոսները խորհուրդ ըրին դիմել պարսից թագաւորին, որ հայերն այս նեղ վիճակէն ազատէ։

Մելիքսէթ իւր հետ առնելով Մանուէլ և Աստուածատուր եպիսկոպոսները, գնաց Սպահան, ուր մեծ պատուով ընդունեցաւ տեղի հայերէն։ Կաթողիկոսը մի քանի օր ետքը Շահին ներկայանալով, իւր խնդիրը մատոյց անոր։ Թագաւորը հաճութեամբ ունկնդրեց կաթողիկոսին և մեծամեծ խոստումներ ըրաւ։ Ամէն հաւանականութեամբ Շահն այս ատենները յղացաւ Հայաստանի հայերը Պարսկաստան փոխադրելու խորհուրդը։ Շահ Աբբաս, որ այդ դարի առաջին աշխարհակալներէն մէկն էր, մէկէն ըմբռնեց այսպիսի փոխադրութենէն ա-

ռաջ գալիք բոլոր օգուտները։ Նա կը յուսար, որ հայերը Պարսկաստան դաղթեցնելով, Հայաստան աւերակ պիտի դառնար, որով օսմանցւոց եթէ ոչ անկարելի, գէթ խիստ դժուար պիտի լինէր մեծ բանակներ պահել այն երկրին մէջ և բազմաթիւ զօրքով ամէն տարի Պարսկաստան արշաւել։

Այսպիսով իւր տէրութիւնը պիտի ազատէր անոնց տարեկան արշաւանքներէն։ Երկրորդ, հայերն յաջողակ վաճառական ու հմուտ արուեստագէտ լինելով, կրնային Պարսկաստանի վաճառականութիւնն ու արուեստները ծաղկեցնել։

Շահ Աբբասի սոյն երկու յոյսերն, ինչպէս պիտի տեսնուի, մեծաւ մասամբ իրագործուեցան։ Նա իւր դահն Սպահան հաստատելէն և տէրութիւնը կարելի եղածին չափ բարեկարգ ու ապահով վիճակի մէջ դնելէ ետքը, բազմաթիւ զօրքով Ատրպատականէն օսմանցւոց վերայ յարձակեցաւ, կուսակալ Ալի փաշային յաղթեց և Թաւրիզը գրաւեց 1603-ին։

Ամէնէն առաջ հրամայեց, որ այս քաղաքը և շրջականներն եղող պանդուխտներն, այսինքն վերջին ատեններն այն տեղերը բնակած հայերն և ուրիշ ժողովուրդներ հանեն, չուեցնեն Սպահան։ Այս հրամանի գործադրութեան համար նշանակեց պաշտօնեաներ, որք ամէն տեղ ցրուելով, նորեկ հայերն իրենց բնակած տեղերէն ստիպողութեամբ հանեցին և Շահի հրամանին համեմատ՝ կէսն Սպահան և կէսն Ֆարահաբադ տարան. քաղաքացիները՝ քաղաքների, և շինականները՝ գիւղերի մէջ բնակեցուցին։ Այս եղաւ հայոց առաջին ստիպումով գաղթումն։ Շահ Աբբաս Թաւրիզէն մեկնելով, սկսաւ դէպի Երասխ յառաջանալ։

Հին Զուղայի հայոց ի Պարսկաստան գաղթման հանգամանքները պատմելէն առաջ, տեսնենք ի՞նչ կը ներկայացնէին այդ քաղաքն ու անոր բնակիչներն։

ՀԻՆ ԶՈՒՂԱ

Պէտք է նախ ըսել, որ այժմ հինգ տեղեր կան, որ Զուղա կամ ըստ պարսկաց ու օտարազգաց՝ Ջուլֆա անունը կը կրեն։

Առաջին՝ Հին Զուղա, որ ներկայիս աւերակ է։

Երկրորդ՝ Զուղա գիւղ, որ վերջերս հաստատուեր է, հինի հիւսիսային կողմը և անորմէ քիչ հեռու է։

Երրորդ՝ Ռուսաց Զուղա կամ Ջուլֆա, որ Ռուսիայէ Պարսկաստան անցնելու մի կէտ է, և որ Երասխի ձախ կողմը կիյնայ, ուր կան միայն փոստի հեռագրատան, քարանթինայի կայաններ և մաքսատուն մը։

Չորրորդ՝ Պարսկաց Զուղա կամ Ջուլֆա, որ վերջինի դիմաց, գետի աջ կողմն է և ուր կը դտնուին պարսկաց հեռագրատունն, փոստի կայանը, անցագրատունն և պանդոկ մը, քանի մը քարվանսարաների հետ։

Հինգերորդ՝ Նոր Զուղա, որ Սպահանի կից հայերի բնակած արուարձանն է։

Արդ, Հին Զուղա՝ Գողթն գաւառի մէջ և Երասխի անմիջական ձախ ափին վերայ, արդի Նախիջևանի գաւառին մէջ կիյնայ։

Հին Զուղան ի հնումն մեծաճոխ քաղաք էր, որի միայն աւերակներն ու բազմաթիւ դերեզմաններն ու տապանաքարերն*) մնացեր են այժմ։ Հարաւային կողմը շրջապատուած է Արաքս գետով. հիւսիսային կողմն անմիջապէս կը բարձրանան գրեթէ ուղղաձիգ, բարձրաբերձ լեռներ, արևելեան կողմէ քարէ պատ մը, որ մասամբ իւիք կանգուն է, սկսելով լեռան կուրծքէն, կիջնէ և կը յառաջանայ քանի մը մեթր ևս գետի մէջ, իսկ արևմտեան կողմէ թէև ի սկզբան պաշտպանուած չի թուեր, սակայն քիչ մը հեռուն՝ քարքարոտ բլրակներ շղթայուած հիւսիսային դին եղող լեռներին, կը մօտենան մինչ գետն

*) Գտնուած ամենահին տապանաքարն կը կրէ 1113 թուականը։

և այսպէս կը գոցեն այն կողմի մուտքը։

Այս սահմանների մէջ պարունակուած գետինը ժայռուտ ու քարալից մի վայր է, և բացի Արաքսէն, որ քաղաքատեղւոյն մակերևոյթէն քանի մը մեթր ցածը է, ուրիշ ջրի կամ աղբիւրի հետք չերևիր. ուստի կը կարծուի, որ այն գետինը միշտ անբերրի և բուսականութենէ զուրկ եղած է։ Ամառն ընդհանրապէս այս կողմերը խիստ տաք է։ Սակայն, Հին Զուղա տաքն աւելի սաստիկ պէտք է եղած լինի, ի նկատի առնելով, որ օրեան մեծ մասն արեգակի ճառագայթներն զարնուելով անոր հիւսիսային կողմը եղող մերկ ու ժայռուտ լեռան, կանդրացուլանան քարէ շինուածոց վերայ, որք անծեփ լինելով, բնական տաքութիւնն չափազանց կը բարձրացնեն։ Միևնոյն ատեն նոյն լեռները կարգիլեն հիւսիսի պաղ քամին քաղաքը զովացնելու։ Ասոր անմիջական մերձականերն, որչափ որ այժմեան վիճակէն կարելի է դատել, այնպիսի վայրեր չեն տեսնուիր, որ պարտէզների, այգիների և կամ ամբանոցների շինութեան յարմարութիւն ունենան. մինչև անդամ անջրդի վարելահողերն այնչափ մեծ տարածութիւն չեն կազմեր։

Բնականաբար, ամէն ոք կը մտածէ, թէ ի՞նչ էր պատճառն, որ Հին Զուղա ամէն թերութիւններով հանդերձ, այնպիսի հարուստ մարդերէ բնակութեան վայր ընտրեր էր և կամ անոնց այն մեծ հարստութիւններն ուրկէ՞ առաջ կը դային։

Ցիրաւի, Հին Զուղա բնական ամրութիւններէ զերծ լինելով, կրնար ենթակայ լինել ապստամբ անիշխանականների և կամ աւազակութեամբ ապրող ցեղախմբերի յարձակումներին։

Այս քաղաքը մէկ կողմէ գտնուելով Թուրքիոյ իշխանութեան տակ, թէև պետութեան հեռու մի ծայրն, անոր բնակիչների համար խիստ դժուար չէր երկրի այլ և այլ քաղաքների, ինչպէս և Ռուսիայի ու Եւրոպայի հետ յարաբերութիւն հաստատել։ Միւս կողմէ լինելով սահմանակից Պարսկաստանի, ջուղայեցիք դիւրաւ կրնային գնալ այդ երկիրն և անոր վրայով Հնդկաստան, և մինչև անդամ Չինաստան յառաջանալով իրենց վաճառքներն այն տեղերը փոխադրել և փոխարէնը այդ երկրների ապրանքները բերել։

Այսպէս, Հին Զուղան իւր ապահովութեան և ապա վաճառականութեան յարմարութեան պատճառով առ ինքն կը ձգէր հայոց հարուստ, կամ ոչ հարուստ, բայց ձեռնարկող ու ճարպիկ վաճառականներն, որք անդ հաստատելով իրենց գործունէութեան կենտրոնն, այնտեղէն կսկսէին գործել և առևտուր ընել աշխարհի բոլոր մեծ կեդրոնների հետ։

Արդարև, եթէ Հին Զուղայի հայոց վաճառականութիւնը հեռաւոր երկիրների հետ այդքան շատ տարածուած չլինէր, ինչպէ՞ս հնարաւոր պիտի դառնար կեանքը անոնց համար, նկատի առնելով որ իրենց քաղաքն մասնաւոր բերք, հանք և կամ ուրիշ արդիւնքների աղբիւրներ չունէր։ Կամ ի՞նչպէս կրնային դիզել անբաւ հարստութիւններ, որ մինչև անդամ Շահ Աբբասի պէս վեհապետի մը հրապուրէին և անոր ցանկութեան սաստիկ դրդիռ մը տային՝ հայերը մշտապէս իրեն հպատակ ունենալու համար։ Շահի ոտքին տակ փռուած կերպասներն անտարակոյս Հնդկաստանի դիպակներ եղած պիտի լինէին, քանզի այդ թուականին դեռևս Պարսկաստան ծաղկած չէր, և միայն այս վեհապետի օրով արուեստները մուտք դտան և սկսան զարգանալ Հնդկաստանի ու Չինաստանի արուեստների նմանողութեամբ։

ՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՄԵԾ ԳԱՂԹԸ
ԵՒ ԱՅԼ ԳԱՂԹԵՐԸ

Շահ Աբբաս, 1603 թուին, երբ Հին Զուղային մօտեցաւ, բնակիչներն զարդարուած ու մեծ պատրաստութեամբ անոր

առջևն ելան և հին սովորութեան համեմատ Երասխի ափէն մինչև Խոջա Խաչիկի ապարանքն, ուր Թագաւորը պիտի իջևանէր, անցնելիք ճամբային վերայ ընտիր կերպասներ փռեր էին, որոնց վրայէն Շահը քայլելով գնաց իւր հիւրընկալի բնակարանը։ Հոն հասածին պէս Խոջա Խաչիկն ոսկիով լի ոսկիէ սկուտեղ մը իւր որդու ձեռքով մատուցանեց Շահին։ Ջուղայի ուրիշ երևելիներն ու հարուստներն, որոնց մէջ յատկապէս կը յիշուին Շաֆրազ կամ Սաֆրազ ու Նազար իշխաններն, Յովհաննէս անունով երէց մը՝ «Աղա տէրտէր» կոչուած, իւրաքանչիւրն ըստ իւր կարեաց, թանկագին և արքայավայել ընծաներով պատուեցին Շահն։

Ժամանակակից գրիչներն ըսեր են, թէ Շահ Աբբաս որքան կը տեսնէր հայոց հարստութիւններն, այնքան անոր մէջ կը զօրեղանար անոնց իւր երկիրը գաղթեցնելու գաղափարն, զի հայոց այս հարստութիւններն անոր նախանձը կը շարժէին։

Ըստ իս, սա սխալ մի գաղափար է, քանզի հակառակ կը դառնայ անոր հետագայ արարքներին. և ի՞նչ աւելի դիւրին գործ անոր համար, եթէ ուզենար Ջուղայեցիներն գրկել իրենց բոլոր գոյքերէն և անոնց դարձնել դառն աղքատ։ Շահ Աբբաս չէր նախանձեր հայոց ճոխութեանն, այլ կը նախանձէր անոնց այն յատկութեանց վերայ, որ անտէրունչ, անօգնական և հարբստահարեալ լինելով հանդերձ, լոկ իրենց վաճառականական հմտութեամբ կարող կը լինէին մեծամեծ հարստութիւններ դիզել ու իրենց ապառաժուտ և անբերրի քաղաքը շքեղութիւններ լեցնել, մինչդեռ տիրող ու իշխող ազգն ամէն առաւելութիւն ու պաշտպանութիւն վայելելով հանդերձ, չունէր ոչ այն վաճառականութիւնն և ոչ ալ այն հարստութիւնը։

Որպէսզի հայերը ապահովապէս տեղերնին մնային և որպէսզի իւր կանխամտածութիւնը կարենար առանց դժուարութեան կատարելապէս յաջողցնել, Շահ Աբբասն սկսաւ արտաքոյ կարգի քաղցրութեամբ ու սիրով լինել Ջուղայեցւոց հետ։

Նա ոչ միայն չէր խորշեր քրիստոնեաներէ, այլ յաճախ Ջուղայեցի երևելիների տները կերթար և կը հիւրասիրուէր։

Շահ Աբբաս Հին Ջուղայէն ելլելով, գնաց Նախիջևանը գրաւեց։ Անկէ անցաւ Երևանը պաշարեց, ուրկէ ամէն կողմ ասպատակներ ղրկեց։ Ալլահվերդի խան, — պարսկաց զօրապետներէն մէկը, — Վանի վերայ գնաց, քաղաքը չկրցաւ առնել, բայց շրջակաները ասպատակեց։ Բգնունեաց, Առբերանւոյ, Քաջբերունւոյ և Տոսպայ գաւառներն ոտնակոխ ընելով՝ ամէն տեղ քանդեց, այրեց, կոտորած ըրաւ ու աւերակ դարձուց, և ուրիշ ազգերէ, միայն հայերէն 23,000 հոգի, իրենց գրաստներովը, կենդանիներովը ու փոխադրելի գոյքերովը բերաւ Շահին։ Շահ Աբբաս հրամայեց անոնց մէկ մասը այն կողմերը բնակեցնել, իսկ մէկ մասն տանել Պարսկաստան։ Ասոնցմէ շատերը տարան Քաշան ու Սպահան բնակեցուցին։ Այս կը համարի երկրորդ գաղթականութիւնը, որով Շահ Աբբաս կուզէր ամայի ու անմարդաբնակ դարձնել Թուրքաց տիրապետութեան ներքոյ գտնուող երկիրները, որպէսզի անկարող լինեն այդ վայրերը զօրք պահել։

Շահ Աբբաս տեսնելով որ Երևանի պաշարումը կերկարի, այդ քաղաքը թողուց, գնաց Ղարսի վերայ և օսմանցւոց իշխանութեան տակ եղող Հայաստանի գաւառներն ասպատակներ ղրկեց, որք շատ աւեր ըրին և ժողովուրդը տեղահան ըրին։ Բայց երբ տեղեկացաւ որ Սինան փաշան օսմանցւոց զօրքով իւր դէմ կը գայ (1604 թ.), դարձաւ Երևանդակերտ (Աղջաղալա), ուր սկսաւ երկար ժամանակէ ի վեր յղացած խորհուրդը գործադրել, այն է, հայ ժողովուրդը Պարսկաստան չտեղեցնել։

Նախ ժողովեց հայոց գլխաւորներն և ըսաւ, թէ օսմանցիներն ահա կը գան, և դուք դիտէք, որ պատերազմ սկսած ատենը ձեզ վնաս կը հասնէ. ուստի բարւոք կը համարեմ մի քանի օրուան ճամբայ երթաք և պատերազմէն ետքը նորէն ձեր տե-

ղը վերադառնաք։ Շահը երբ տեսաւ աւազանին չի ընդառաջեր, հրամայեց իր զօրականներին՝ ամէն կողմ գնալ և բոլոր քաղաքների, գիւղերի ու շէնների բնակիչները իրենց բնակութիւններէն հանելով, ծայրայեղ շտապողականութեամբ, Պարսկաստան տանել։

Շահ Աբբաս լսելով որ օսմանցիք կը մօտենան, փութով հայերը գէպի Երասխի ափը բերել տուաւ։ Երբ անոնք Արաքսի ափին մօտեցան, օսմանցիք հասան Նախիջևան, որ Երասխէն միայն 47 քիլոմեթր հեռու է, Շահը կասկածելով, որ մի գուցէ թշնամին հասնելով՝ իր ծրագիրը կը խանգարէ, հրամայեց որ Հին Ջուղայի բնակիչներն ևս իրենց բնակավայրէն հանելով, ամէնքն Երասխէն անցուցեն, միայն իւր զօրականներին պատուիրեց, որ մասնաւոր խնամք տանեն ջուղայեցւոց և ուղտերն ու լաստերը նախ անոնց փոխադրման համար գործածեն։

Այս միջոցները բոլորովին անբաւական էին այնչափ բազմութիւն երեք-չորս օրէն Արաքս գետէն փոխադրելու համար։

Շահի հրամանը գործադրելու համար զինուորները ամէն միջոց ի գործ դրին և ժողովուրդն անպատմելի զարհուրանքով գետն անցուցին*)։

Ամենայն հաւանականութեամբ գետէն անցնող և Պարսկաստան տարուողների թիւը հարիւր հազարէն աւելի էր, ի բաց առեալ Հայաստանի մէջ, Ճամբու վրայ և Երասխի ափին եղած զոհերն, գետին մէջ խեղդուողները և Արաքսն անցնելէն ետքը յափշտակուողները, որոնց թիւն ևս առ սակաւ հարիւր

*) Այստեղ հեղինակը մանրամասնօրէն նկարագրում է այն զարհուրելի միջոցառումները, որոնք ծանօթ են ընթերցողներին հայոց պատմութեան բազմաթիւ աղբիւրների շնորհիւ։ Այս նկատումով այդ էջերը յապաւեցինք։ Ծ. Խ.

հազար հաշուելու է*)։

Գետէն անցնելէ ետքը երեք մասի բաժնեցին գաղթականները։ Մէկ մասն նախ գետեզրի մօտէն և ապա լեռնային դժուարին ճամբաներով տարագրեցին Ահար, Մեշկին, Խալխալ և Թարում գաւառներն, ուր ձմեռը, մերձ չորս ամիս բնակեցուցին, իսկ միւս մասն, որ գլխաւորապէս ջուղայեցիներէ ու քաղաքացիներէ կը բաղկանար, տարուեցաւ Թաւրիզ, ուր մնացին ձմեռը։ Գարունը բացուելուն պէս ամէնքը Սպահան ու Համադան չուեցուցին (1605 թ.)։

Ժամանակակից գրիչներ ճշտիւ չեն յիշեր ոչ գաղթականաց ճամբորդութեան մանրամասնութիւններն և ոչ ալ անոնց ընտրած ճամբաները։ Սակայն, հայոց այն ժամանակ բնակած քաղաքների ու գիւղերի դիրքերէն կարելի է հետևցնել, որ Թաւրիզ բերուողները Զանջանի ու Ղազբինի վրայով տարուեցան Սպահան քաղաքն և անոր կից գաւառներն։ Իսկ Ահար, Մեշկին, Խալխալ ու Թարում ձմերողները Զանջանի վրայով ճամբորդել տալով, բնակեցուցին Համադան ու շրջականներն, ևս այս քաղաքի արևելեան հարաւային գաւառները, մինչև Սպահան։

Ասոնցմէ 500 տուն ևս, Ալլահվերդի խանի խնդրանօք, Շիրազի շրջանն ղրկուեցան։

Գաղթականները մինչդեռ Թաւրիզ էին, Թահմազ Ղուլի բէկ անունով վերակացուներէն մէկը, լսելով որ Հին Ջուղայի բնակիչներէն ոմանք փախչելով իրենց տեղը դարձեր էին, անոնց ետևէն զօրք ղրկեց, փախչողները հաւաքեց, և մերձակայ տեղերն եղողները ևս, որոնց մէջ էր Դաւիթ կաթողիկոսն, չուեցուց տարաւ Ղազբին և միացուց մեծ խումբին։

Երեք տարի ետքը, 1608-ին, դարձեալ զօրք ղրկուեց

*) Անբուան դը Կուվօ միայն յափշտակուողների թիւը հարիւր հազար կը համարէ, որով բոլոր գաղթականաց գումարն կը բարձրանայ երեք հարիւր հազարի։

Հայաստան, և մօտ հազար տուն աղքատ հայերէն ժողովելով, Սպահան դրկեց։ Շահ Աբբաս այս գաղթականներն երկու դասի բաժանելով, հատատեց քաղաքն, երկու քարւանսարանների մէջ բնակեցուց և ասոնց վերայ պետական երկու վերակացուների իշխանութեան տակ, երկու հայեր՝ Յովսէփ Ղարաբաշ և Մուրադ Ղըրխեալան մականունով անձերն, որք մելիք կը կոչէին, խնամատար կարգեց։

Քանի տարի ետքը, երբ Սուլթան Ահմադի հրամանով Խալիլ փաշան Պարսկաստան արշաւեց և Թաւրիզն առաւ, ժողովրդի մէկ մասը գերելէն ետքը դարձաւ։ Շահ Աբբաս 1617-ին, անոր ետևէն Հայաստան մտաւ։ Տեսնելով որ այլ և այլ կողմերէ, նաև Սպահանէ վերադարձողներ այս տեղ կը բնակին, հրամայեց որ բոլոր նոր եկողները չեւեցնեն Սպահան։ Այս նոյն ժամանակն Հայաստանի զանազան կողմերն և Ատրպատականի գաւառները զօրք դրկեց, որք ամէն կողմ ցրւելով, ժողովուդն իր բնակավայրերէն հանեցին ու դէպի Պարսկաստանի խորքերը քշեցին։ Ասոնց մէջէն քարահատներն և ուրիշ արհեստաւորներն, Թագաւորի հրամանի համաձայն, Սպահանի հարաւային կողմը, Զայնդերուդի ափին գտնւող Գաւրաբաղ կամ Գաբրաբաղ արուարձանի մէջ տեղացիների հետ խառն բնակեցուցին, իսկ միւս մասն տարան Մազանդարան, Ֆարահաբաղ քաղաքն և անոր մերձակայ գիւղերի մէջ տեղաւորեցին։

Այս անդամ տարագրւածների թիւն Առաքել Դաւրիժեցի պատմագիրն տասն հազար տուն կը հաշուէ։ Սոյն պատմագրի գրածին համաձայն, բացի վերը յիշւած գաղթականութիւններէն, երեք-չորս անդամ ևս, զատ-զատ, Հայաստանէն հայերը հանելով, Սպահան և անոր հարաւային գաւառները տարուեցան։

Շահ Աբբաս հայերը Սպահան տանել տալէ ետքը, ուզելով որ անոնք վերջնապէս հաստատուին ու իրենց երկիրը չվերադառնան, սկսաւ ի սկզբան անոնց մեծ խնամք տանել, բնակավայր յատկացնել, հայերն ամէն տեսակ տարապարհակ ծա-

ռայութիւններէ ու աշխատանքներէ ազատ կացուցել։ Սակայն, Շահ Աբբասն Ջուղայեցիների կամ Նոր Ջուղա բնակողների հետ աւելի քան լաւ կը վարուէր։ Անոնց վերայ արտաքոյ կարգի շնորհ ունէր և ամէն կերպով մեծ խնամք կը տանէր անոնց հանգստութեան ու բարօրութեան համար։ Շատ անգամ անոնց գլխաւորների (Խոջա Սաֆար, եղբայրը՝ Խոջա Նազար և իրենց որդիները, Մելիք Ազա Սուլթանում և Սաֆրազ), տունը կերթար, առանց խորութեան, անոնց հետ կուտէր, կը խմէր, յաճախ անգամ զանոնք իւր պալատը հրաւիրելով, ամէն կերպով կը պատուէր։ Խոջա Նազարն, Խոջա Սաֆրազն և ուրիշ երևելիները կը համարուէին համախոհ ու խորհրդակից թագաւորի, քանզի անոնք պարսկաց նախարարների հետ Շահի խորհուրդներին կը մասնակցէին, անոր քով կը գտնուէին և թագաւորն ուրիշ նահանգ կամ քաղաք գնացած ատեն անոր հետ միասին կերթային։

Շահ Աբբաս Նոր Ջուղայի հայոց իրաւունք տուեց իրենց մէջէն ընտրել քալանթար կամ քաղաքապետ մը, գիրենք կառավարելու համար։ Նոր Ջուղայեցիք, որ հակառակ ամէն տեսակ անյաջող ու աննպաստ պարագաներու, միայն իրենց ընական ձերքերով Հին-Ջուղան վաճառականական մեծ կենտրոն դարձուցած էին, Շահ Աբբասի այս մասնաւոր հոգածութեան ու պաշտպանութեան տակ աւելի մեծ յաջողութիւն ունեցան։ Իրենց առևտրական ոգին աւելի ազատ ու անարգել թռիչքներ ունեցաւ, վաճառականութիւնն այնքան ընդարձակեցին և անբաւ հարստութիւններ դիզեցին, որ ոչ միայն Նոր-Ջուղան, որ առաջ մի չոր դաշտ էր, շքեղ շինութիւններով, գեղեցիկ պարտէզներով ծածկեցին և հոյակապ եկեղեցիներով ճոխացուցին, այլ և Սպահան քաղաքը մէկ կողմէ Հնդկաստանի, միւս կողմէ Թուրքիոյ, Ռուսիոյ և Եւրոպայի միջև եղող գլխաւոր կայանն և վաճառանոցն ըրին։ Սպահան, որ Շահ Աբբասի ջանքերովն Պարսկաստանի և գրեթէ Ասիոյ ամենագեղեցիկ ու բազմամարդ քաղաքներէն մէկն եղեր էր, հայոց վա-

ճառականական գործունէութեան շնորհիւ ամենավաճառաշահ քաղաքը դարձաւ և այնքան պայծառութեան ու ծաղկման հասաւ, որ տեղացիներին ըսել տուաւ. «Էսֆահան նեսֆը ջըհան», այսինքն՝ «Սպահան աշխարհիս կէսը»։

Սակայն, հայերի մէկ մեծ մասն ալ ունեցաւ շատ դժուարութիւններ և ենթարկուեցաւ աղքատ կեանքի։ Ունեցաւ զրկանքներ և տառապեցաւ աստ ու անդ, թէ Սպահանի և թէ Սպահանին մօտակայ գաւառների մէջ։

Շահ Աբբաս մեռաւ 1629 թ. Յունուար 7-ին (հիջրեթի 1038-ին) Ֆահրաբադ քաղաքի մէջ*)։

Շահ Աբբասի պատմութիւնը գրողները շատ են՝ պարսիկ, եւրոպացի և հայ։ Ասոնք, մինչ անոր կատարած գործերի նկատմամբ մեծաւ մասամբ կը համաձայնին, իսկ անոր վերայ ըրած դատողութեանց մէջ մեծապէս կը զանազանին։ Ոմանք տրամադիրէն հակառակ գաղափար կը յայտնեն, դատաստան կընեն ու վճիռ կը տան, այլոց տուածի ու յայտնածի դէմ։ Մինչ ոմանք անոր գործերը յիշելով, զայն անչափ կը գովեն, միւսներն անոր թերութիւնները թուելով՝ զայն վար կը զարնեն։ Երկու կողմերի համար ևս փաստեր ու ապացոյցներ պակաս չեն։ Ըստ իս, այս հակասութիւնն առաջ կը գայ գրողների հայեցողութեան տարբերութենէն։ Շահ Աբբասի պատմութիւնն ուշադրութեամբ կարդացած ատեն նա ընթերցողին կը ներկայանայ իրար հակառակ յատկութիւններով, երկու որոշ անձնաւորութիւններէ բաղկացեալ մէկը։ Ուստի անաչառութեամբ դատելու համար իրար խառնելու չէ այս երկու տարբեր անձնաւորութիւններն։

Սա իբր թագաւոր, ունէր շատ մը բարեմասնութիւններ։ Իւր քաջ ռազմագիտութեան ու արի ընթացքով նա յաջողեցաւ ո՛չ միայն ամբողջ Պարսկաստանն իւր իշխանութեան տակ բերել և զայն ժամանակի ներածին չափ բարւոք վիճակի մէջ պահել, այլ և օսմանեան հզօր տէրութեան ձեռքէն ետ առնել Ատրպատականն, իւր նախահարց նահանգն։ Իւր մեծ տաղանդով նա մէկէն ըմբռնեց այն ամէն օգուտներն, որ Պարսկաստան կրնար քաղել հայոց վաճառականական ու արուեստագիտական ձերքերէն ու հմտութիւններէն և այս օգուտներն իւր հայրենեաց տալու համար նա քաջութիւնն ունեցաւ ամէն բան յանձն առնելու։ Զինայեց ոչ ջանք, ոչ աշխատանք, ոչ ծախք, արհամարհեց ամէն նախապաշարում, ամէն արտաքին ձեւ, ծէս ու պատուէր։

ՇԱՀ ԱԲԲԱՍԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Շահ Աբբասին յաջորդեց իւր թոռը՝ Շահ Սէֆի, որ 13½ տարի թագաւորութիւն ըրաւ։ Ամէն բան ի հաշիւ առնելով, հայերն ասոր թագաւորութեան ժամանակ հանգիստ կեանք ունեցան։ Շահ Սէֆիէն ետքը՝ իւր որդի Շահ Աբբաս Բ. 1641-ին Պարսկաստանի գահը նստաւ։ Ասոր թագաւորութեան ժամանակ Ջուղայեցւոց աստղն աղօտանալ և ամէն հայերի համար դժուարութեան ու նեղութեան սերմեր ցանուեցան։

Եթէ մխիթարական բան մը եղաւ ասոր թագաւորութեան ատեն, այն է, որ Սպահանի վանքի առաջնորդ Խաչատուր վարդապետի ջանքովը հայ տպագրական գրերի յօրինումն և անոնցմով քանի մը գրքերի տպագրութիւն եղաւ։

Շահ Աբբաս Բ. 1665-ին մեռնելով, անոր յաջորդեց իւր որդին՝ Շահ Սուլէյման, որ թագաւորեց մերձ 26 տարի։ Ասոր ժամանակ Պարսկաստան գրեթէ միշտ խաղաղութիւն վայելեց։ Ջուղայեցիք թէև սոյն երկու վերջին թագաւորներէն այնպէս չխնամուեցան ու չպաշտպանուեցան ինչպէս Շահ Աբբաս Ա.էն, և շատ անգամ դժուարութեանց ու հարստահարութեանց ենթակայ եղան, սակայն իրենց վաճառականական շահերն այնչափ դիւրին ու առատ էին, որ կը փոխարինէին այս կորուստներն, և ընդհանուր կերպով եթէ չյառաջադիմեցին, զգալի յե-

*) Մալքոլմը Շահ Աբբասի մահը 1627 թուականին նշանակած է։

տաղիմութիւն ալ չունեցան։ Այս տեղները Նոր Ջուղա ըստ ոմանց 6,000, ըստ այլոց՝ 12,000 տուն[1]) հայ բնակիչ ունէր և գաւառի բնակիչներն ևս թւով այսչափ էին։

Շարդէն, որ առաջին անգամ Շահ Աբբաս Բ.-ի վերջին շրջանին և երկրորդ անգամ Շահ Սուլէյմանի ատենը Պարսկաստան այցելեց, և երկար ժամանակ այդ երկրին մէջ անցուց, թողեր է զանազան տեղեկութիւններ և նկարագրութիւններ Ջուղայեցւոց մասին։ Ասոնցմէ քանի մը հատուածներ թարգմանելով, ատ կը դնեմ, այն ժամանակի հայոց վիճակին ու կենցաղավարութեան վերայ գաղափար տալու համար։

Ան կըսէ. «Ջուղա աւանը գուցէ աշխարհիս ամենամեծ աւանն է։ Այն կը տարածուի գետի երկարութեամբ մերձ մէկ մղոն և մէկ մղոնէ աւելի լայնութիւն ունի։ Ջուղա կը բաժնուի հին ու նոր գաղթականութեանց։ Հին գաղթականութիւնը հաստատուեր է Շահ Աբբաս Մեծի օրօք, 120 տարիէ ի վեր, իսկ նորն Շահ Աբբաս Բ.-ի օրօք, 60 տարի չկայ[2])։ Նոր գաղթականութեան բնակավայրին փողոցներն աւելի լայն և ուղղաձիգ են և ամէնքը ծառերով զարդարուած, բայց բնակարաններն այնչափ գեղեցիկ չեն, ինչպէս հին գաղթականներինը։ Սրա պատճառն այն է, որ նոր գաղթականները ոչ այնչափ հարուստ են և ոչ այնչափ շոյուած ու յարգուած կառավարութենէն, ինչպէս հիները։ Այս աւանի փողոցներէն ձմեռը գիշեր ցերեկ ջուր կանցնէ, բայց ամառը շաբաթն մի քանի օր միայն։ Ջուղայի այս ամբողջ մեծ աւանը, թէ հինն և թէ նորը, կը բաղկանայ 5 մեծ զուգահեռական փողոցներէ, որք գետէն դէպի լեռն, արևելք ու արևմուտք կը ձգին և ուրիշ

1) Շարդէն 3000—3500 միայն կը հաշուէ տների թիւը, եւ կրսէ ամենազեղեցիկները ջրի եզրին վրայ են։

2) Այս կամ տպագրական սխալ է, կամ Շարդէնը թւականի մէջ կը սխալի, քանզի առաջինը երեք քսան եւ վերջինը մէկ քսան պէտք է լինի։

շատ մը միջափողոցներէ։ Ասոնց մէջ կան շուկաներ, հրապարակներ, բաղնիքներ, երկու փոքրիկ իշխանատուն, 11 եկեղեցի, մէկ վանք և ուրիշ փոքր և ոչ աղէկ շինուած տուն մը, որ կուսանաց վանք կը կոչի։

«Ինչ կը վերաբերի Ջուղայի նոր գաղթականութեանը, ան ունի չորս թաղ. ասոնցմէ ամենէն հեռու կը գտնուի այն թաղը, ուր արևապաշտ պարսիկներ կը բնակին. միւս 3 թաղերն՝ Շէյխ Սաբանա, Շամսաբաղ, Էրևանլու, բնակուած են քրիստոնեաներէ։ Եւրոպացիք Երևանցւոց թաղին մէջ կը բնակին և ջեզուիթների հիւրանոցն ևս այնտեղ է։ Ասոնք որչափ ջանք որ ըրեր էին, չէին կրցեր հռովմէական ուրիշ միսիոնարների պէս քաղաքին մէջ տուն ունենալ։ Ջեզուիթներն Պարսկաստան եկած են 1645 թուականին։ Հայր Ռիկարդին ասոնց գլխաւորն էր։ Սա ունէր յանձնարարական նամակներ Պապէն, Ֆրանսիոյ թագաւորէն և քրիստոնեայ շատ մը իշխաններէ, բայց նամակների հետ չէր բերած որևէ ընծայ, առանց որի մէկն երբեք լաւ ընդունելութիւն չի գտներ Արևելքի մէջ։

«Հայր Ռիկարդի, թուրք կայսրութեան վնասելու նպատակաւ, առաջարկեց մեծ ու անդորձադրելի մի դաշնակցութիւն Ֆրանսիոյ ու Պարսկաստանի միջև։ Այս դաշնադրութեան գլխաւոր պայմաններն էին.— Պարսից թագաւորին կնութեան պիտի տային օրիորդ Մոնփանէին,*) որին Քոնթէ իշխանը նաւատորմիղով մը, որի վերայ 20,000 մարդ պիտի լինէր, պիտի տանէր Հորմոզ։ Նոյն միջոցին ֆրանսական ուրիշ զօրք մը ևս պիտի յարձակէր Թուրքիոյ վերայ Սուրիոյ կողմէն և ուրիշ այսպիսի խօլ ու այլանդակ առաջարկներ, ո-

*) Հ. Ռիկարդիի կրօնական խանդը յոյժ գովելի է... Իբխանազուն օրիորդ մը կուզէր հարսնութեան բերել Պարսկաստան, առաքելութիւն մը հաստատելու չնչին արտօնութիւն ստանալու համար։

բոնց ամէնի փոխարէն բարի հայրն շատ բան չէր ուզեր, եթէ ոչ մի քանի աննշան արտօնութիւններ»։

Բռնութեանց մասին խօսած ատեն, Շարդէն հետևեալը կը պատմէ. «Հոկտեմբեր 12 (Ն. տ.) 1673 թ. տառապանաց օր մը եղաւ Սպահանի բոլոր քրիստոնէից, մանաւանդ հայոց համար, իրենց գլխաւորի կամ կառավարչի ապստամբութեամբ, որ Աղափերի կը կոչէր։ Նա Սպահանի մեծ արուարձանին (Ջուղա) քալանթարն էր*)։ Նա կէս ուսումնական էր. մահմեդական դարձաւ։ Յայն ժամ թագաւորը հրաւիրեց հայերը կրօնափոխ լինել։ Ասոնք պաղատեցին Շահն, որ զիրենք իրենց կրօնին մէջ թողու։ Ուրիշ պատճառների վերայ աւելցուցին, որ եթէ կրօնափոխ լինեն, այն ատեն իրենց գործակատարներն, որք Եւրոպա էին, ալ չէին վերադառնար, որով անսահման հարստութեան կորուստ պիտի պատճառէին տէրութեանը։ Նաև քրիստոնեայ իշխաններն չպիտի թողնէին որ Ջուղայեցիք իրենց երկրին մէջ առևտուր ընէին։ Այս պատճառները տուելէ ետքը, ալ հայերը չստիպուեցան կրօնափոխ լինելու»։

«Դեկտեմբեր 6-ին, 1674 թ. պարոնայք Սարհադեաններ, որք Պարսկաստանի ամենահարուստ վաճառականներն էին, գիս մեծ խնջոյքի մը հրաւիրեցին։ Անոնց ընտանիքը իրենց ազգին մէջ ամենահինը կը համարուի։ Անոնք հինգ եղբայրներ են. ամէնքն ալ հարուստ և յաջողակ վաճառականներ։

«Արևելցի քրիստոնէից ընտանիքները խիստ բազմանդամ են։ Սպահանի մէջ հայեր կան, որ 500 անձէ աւելի կը հաշուեն իրենց ազգականաց թիւը։ Սրա պատճառն այն է, որ

*) Քալանթարը Շահ Աբբաս առաջինի կարգադրութեամբ հայ դասաւոր էր, որի առջև կը բերուէին ջուղայեցւոց ամէն դատերը։ Նա այս դասաւորութիւնը կարգեր էր, որպէսզի հայերը նեղումէ ու զրկանքէ ազատ մնան։

ամէնքը կամուսնանան և ամուրի մնալու ու անզաւակ լինելու համար մեծ սարսափ կզդան։ Քիչ ծախք պէտք է ունուցանելու համար երեխաները, որք շուտով օգտաւէտ կը դառնան։ Աղջիկները պսակած ատեն, փոխանակ դրամական օժիտի, անոնց միայն զգեստներ կը տան։ Բացի այրիներէ, որք սովորաբար երկրորդ անգամ չեն ամուսնանար, ամէն ոք ամուսնացեալ է. և այսպէս, անոնց սերունդներն ամբողջ դարեր կը տեսեն։ Տեսականութիւնը ազնւականութիւն կը տայ անոնց, սակայն և այնպէս, ոչ ոք չի արհամարհեր պարապել հողագործութեամբ կամ վաճառականութեամբ։

«Անգլիական գործակատարն իւր բոլոր ընտանիքով հոն հրաւիրուած էր խնջոյքին։ Հրաւէրն անոր համար էր, որ կուզէին գործակատարին հաճելի ըլլալ և ապահովել անոր աջակցութիւնը մի գործի համար, որի մէջ հայերը կը յուսային շատ շահել։

«Միւս հրաւիրեալները, թւով 20 կամ 24 էին, որոնցմէ տասը տանտիրոջ յարգելի ազգականներն էին։

«Ես ժամը 11-ին հասայ խնջոյքին և տեսայ, որ արդէն սեղան նստեր էին։ Հրաւիրեալները նստած էին մի մեծ, վեցկողմեան սրահի մէջ, որ կը նայէր պարտիզի մը, որի մէջ շինուած էր սրահն։

«Սրահը ծածկուած էր գմբէթով մը, որ կը կենար չորս կամարների վերայ։ Այս կամարներն ևս կը բարձրանային կլոր գաղաթի մը վերայ, որն դրուած էր չորս նման պատերի վերայ, ամբողջը նկարուած, ոսկեզօծուած և կապոյտ գոյնով ներկուած՝ ըստ մաւրիտանական ոճի, խիստ պայծառ մի գործ էր, ինչպէս գիտեն շատ լաւ ընել այս երկրին մէջ։ Սրահը վերէն ի վար, զարդարուած էր փոքր խորշերով, փորուած պատի հաստութեան մէջ և կահաւորուած արծաթեայ ու յախճապակեայ ամաններով, որոնց մէջ դրուած էին ծաղիկներ։ Յատակը ծածկուած էր ազնիւ գորգերով, չորս կողմն ունենալով ոսկեզօծ դիպակներէ բարձեր։

«Սրահին ետևը կար մի մեծ նախադաւիթ, նոյնպէս զարդարուած ու կահաւորուած։ Սա երեք կողմէ կը բացուէր պարտէզների վերայ և մէջտեղն ունէր մարմարիոնէ երկու դեղեցիկ աւազան՝ ջրբուխներով, որք գիշեր ցերեկ կը հոսէին։ Ինձ համար տեղ մը պահեր էին տանուտէրի ձախ կողմն, որ նստեր էր վերի ծայրը, պատուոյ տեղը, իւր աջ կողմն ունենալով անգլիական գործակատարն։

«Արևելքի քրիստոնէից սովորութիւնն է, որ խնջոյքի տէրն երբ հասակաւոր ու մեծարոյ մի մարդ է, կը նստի բարձր ծայրը և իւր որդիներն ու եղբայրներն սպասաւորութիւն կընեն։ Սեղանի սպասները դրուեր էին երկու մեծ ծածկոցի վերայ, որք ոսկէ, դիպակէ էին, կարմիր ու կապոյտ տեղով և կանաչ սնդուսէ աստառով։ Սպասասեղանը սրահի վարի կողմն էր՝ ոսկեզօծ կաշիէ ծածկոցի վերայ։ Սա կը բաղկանար երեք կամ չորս դուզին շիշերէ, որոց ապակին նուրբ ու վանակնի պէս պայծառ էր։ Այս շիշերը գանազան տեսակ գինիով լի էին և ամէն մէկը փոխանակ խցանի, ծաղկի մի փունջ ունէր բերանին։ Պարսկաստան օդն այնչափ զով և մաքուր է, գինիներն այնչափ լաւ շինուեր են, որ չի վախցուիր թէ կաւրուին խցան չունենալու պատճառով։ Այդ բազմաթիւ ու բազմատեսակ շիշերի շարքին մէջ կը տեսնուէին ծաղկամաններ՝ խառնուած վանակնեայ, պարզ արծաթեայ, ոսկեզօծ արծաթեայ, ապակեայ ու յախճապակեայ բաժակների։ Ասոնց առջևը կար երկու մեծ կոնք, լի սառոյցի կտորներով, որք պարզ ու ջինջ էին՝ իբրև ջրի կաթիլներ։ Սառոյցի գործածութիւնը Պարսկաստանի մէջ այսպէս է. նախ կտոր մը կը դնեն բաժակին մէջ, ապա կը հրամցնեն և ետքը գինին կը լեցնեն անոր վերայ։ Այս սպասասեղանին նայիլը հաճոյք կը պատճառէր։ Անբաղդատելի ու պայծառ գոյնով ընտիր գինիների տեսքը մի վայելք է, զոր արևելցիները մեզմէ աւելի ունին իրենց խնջոյքների մէջ։

«Ես ըսի, որ երբ հասայ, արդէն առաջին կերակուրը դրեր էին։ Կերակուրը լեցուած էր ոսկեզօծեալ, ջնարակեալ ու նկարազարդ փայտէ կլոր ու քառակուսի մեծ ափսէների մէջ։ Ասոնցմէ ամէն մէկն իւր մէջ կը պարունակէր տասնևվեցէ տասնևութն յախճապակեայ փոքր ամաններ, չոր ու հեղուկ բանդակներով, մեծ մասամբ ախորժակը սրելու համար, վասընդի այս բանդակները պատրաստուեր էին կոճապղպեղէ, հասարակ ու մշկահոտ ընկոյզէ, fարsամոմէ (հիլ), գանազան տեսակ սալորէ, նարնջի ու կիտրոնի կեղևներէ և ուրիշ պըտուղներէ։

«Ասոնց հետ կային ևս նշաշաքար, պաքսիմատ ու համեմներ։ Հրաւիրեալներէ ամէն մէկն իւր առջևն ունէր սկուտեղ մը։ Երկու մատաղահաս և գեղադէմ պատանի, վայելչապէս հագնուած, շուրջանակի կը հրամցնէին ռուսական ու ֆրանսական օղի և իտալական վարդօղի։ Ժամ մը այս սեղանին վերայ մնացին, որպէսզի ախորժակնին բացի, քիչ կը խօսէին և իւրաքանչիւր ոք պատշաճութիւն կը պահէր։ Նաւագողների և երգողների խումբ մը, նախասենեակի մէջ նստած, կը զբաղեցնէր հիւրերը։ Պարսիկների նաւագածութիւններն այնչափ ներդաշնակ չեն որքան Եւրոպիոյ մէջ, բայց ուրախ, զբաղթ ու ազատաթռիչ են։

«Կէսօրին բանդակներն և դիպակէ ծածկոցները հաւաքեցին և վերջինների փոխարէն շատ ազնիւ դաջած (զալամքար) աստառով ու խիստ լայն ծածկոցներ փռեցին։ Ասոնց վերայ շարեցին հրաւիրեալների ամէն մէկի առջև մի անձեռոց, երկու արծաթէ պնակ՝ իրար վերայ դրած, մի դգալ, մի դանակ, պատառաքաղ, մի աղաման և մի պղպեղաման։ Այս սպասներն յատկապէս մեզ եւրոպացւոցս համար կը դնէին, քանզի ոչ հայերն, ոչ պարսիկներն և ոչ ալ ամէն արևելցիք այս բաները կը գործածեն սեղանի վերայ։ Կերակուրները միշտ արևելցւոց կը թուին աղէկ համեմուած. անոնք արագ և առանց խօսելու կուտեն և այնպիսի շնորհքով, որ ճաշի ատեն առանց երբեք ձեռքերնին սրբելու, ինչպէս մենք կընենք, սեղանէն վեր

կելնեն այնչափ մաքուր, որչափ նստած ժամանակնին։ Այս ըսածս մահմեդականների համար է և ոչ քրիստոնեաների, որք շատախում և շատակեր են, քան առաջիններն։

«Ցիրաւի, պարսիկների սեղանին վերայ դդալ կը դրուի, բայց միայն այն ատեն, երբ արդանակ կը տան, և այս դդալներն, որ խոր ամանների մէջ կը դրուին, մէկ ոտք երկայնութեամբ կոթ ունեն, որպէսզի հեռուէն հասնել կարենան։ Նախ մեզ բերին աղցաններն արծաթեայ պնակներով։ Ասոնց մէջտեղը դրեր էին փոքրիկ յախճապակեայ աման մը, որ կը պարունակէր շաքարի ու քացախի մէջ եփած սխտոր, խաղող, խնձոր և ուրիշ պտուղներ, իսկ ամանի շուրջը շարեր էին կարմիր բողկ, մանր կիտրոն, դալար սոխիկ, անանուխ և ուրիշ բարկ կանաչներ՝ ախորժակ գրգռելու համար։ Ամէն մէկ հրաւիրեալի առջև այս պնակներէն մէկը դրին, այնուհետև հաց, որ ունէր շատ տեսակներ՝ թուղթի պէս բարակ, մատի չափ հաստ և ուրիշն՝ աւելի հաստ։ Հացէն ետքը բերին երկու արծաթեայ սկուտեղներ, մէկը լի կարծր եփած ձուով, միւսը մանր խորոված։

«Այս խորոված՝ դառան մսի, լեարդի ու երիկամների կտորներ էին, զորս սոխի ջրի ու քացախի մէջ պահելէ և բոլորովին համեմելէ ու ախորժահամ ընելէ ետքը կը խորովեն փոքրիկ փայտէ շամփուրիկներով, այնպէս ինչպէս դուզին մը արտոյտներ։ Այս սկուտեղները մէկ մէկի ետևէ կարգաւ կը ներկայացուեն հիւրերին. ամէն ոք ինչ որ կուզէ՝ կառնէ։ Աբևելցի քրիստոնէից սովորութիւնն է, խնջոյքը սկսել կարծր եփած հաւկիթով։ Ասոր պատճառն այն է, որ երկարատև ու յաճախակի պահք պահելով, ձուն անոնց համար նորութիւն է։ Ոմանք ինձ ըսեր են, թէ այն պատճառով է, որ կարծրեփ հաւկիթը կարգիլէ գինին շուտով գլխուն երթալու։

Այս սկուտեղները հրամցնելէ քիչ մը ետքը բերին ուրիշ երկու աւելի մեծերն, որոնցմէ մէկին մէջ կային երեք դուզին խորոված շատ մեծ աղաւնիներ, միւսին մէջ տաս-

նութն խորոված ուսիկներ ոչխարի, իւրաքանչիւր հիւրի համար մէկը։ Այս սկուտեղները կը բերէին ճաշատունը, ծածկուած թերթանման հացով, որի վերայ դրուած էր ևս քառածալ ծածկոյթ մը, գրեթէ այնպէս, ինչպէս որ թարմ հաւկիթն ու շաղանակը կը բերեն մեր երկրին մէջ։ Սկուտեղները կը մատուցանէին նախ տանուտէրին, որ բանալով՝ կտոր մը կառնէր, ապա կը հրամցնէին անգլիական գործակատարին և ապա ինձ և ետքէն ուրիշ հիւրերին, կարգով, ինչպէս նստեր էին։ Անոնց մէջ երբեք անքաղաքավարութիւն չէ մեծ պնակի մէջէն ընտրել այն կտորն, որ կուզեն առնել, ոչ ևս եթէ աղաւնիի մը պոչիկ մը կամ ուրիշ կտոր մը որ առեր են, բայց ախորժելի չէ, մեծ պնակն վերադարձնել, ուրիշ մը առնելու համար։ Քառորդ ժամ մը ետքը բերին մեծ սկուտեղների մէջ խորոված ու թարմ ձուկ և ամենքը նոյն կերպով, ինչպէս առաջիններն և նոյնքան ժամանակ ետքը՝ խաշած միս։ Վերջինս կը բերէին կճուճաձև յախճապակեայ ամանների մէջ, որք սանների չափ մեծ են։ Այս ամանները դրեր էին մեծ ու տափակ սկուտեղների վերայ, ոմանք ծածկուած արծաթեայ կամ պղնձեայ կափարիչով։ Այս կճուճներէն մէկը լեցուած էր թթուաշ, համեղ արդանակով, միւսը արդանակով ու ոչխարի մսի կտորներով, ուրիշ մը ապուրով, ուրիշ մը հաւի մսով, ուրիշ մը եզի թարմ ու տաք և աղի ու պաղ մսով, ուրիշ մը յօշուած մսով՝ խառնուած սէրով, մաշով ու կանաչով, ուրիշ մը որթի տերևի խճողակներով, ուրիշ մը տապակած վարունգի խճողակներով և ուրիշ շատերն համադամ կերակուրներով, զորս երկու ժամի չափ բերին ու տարան։ Մէկ սկաւառակը միւսին կը յաջորդէր և ամէն մէկ կերակուրի ետևէն կը բերէին գեղեցիկ ու ջնարկեալ փայտեայ սկուտեղի մը մէջ երկու դուզին յախճապակեայ պնակներ իրար վերայ դիրած։

«Ասոնք կը դրէին ճաշարանի մէջ, սփռոցին վերայ, տանուտէրին դէմ առ դէմ, երկու սպասաւորների առջև, որք ծունկ չոքած՝ իւրաքանչիւրն ունէր ի ձեռին մեծ դանակ և

իրեն մօտ մի արծաթէ խոր և մի երկար կոթով տափակ դգալ։ Այս սպասաւորներն աչքներնին միշտ տանուտէրին վերայ պահած, անորմէ կստանային կերակուր բաժնելու նշանն և անմիջապէս յախճապակեայ պնակների մէջ կը դնէին և մատաղահաս պատանիներ կը տանէին հրաւիրեալներին։ Դժուարաւ կրնայ մէկը հաւատալ, թէ որչա՛փ կարդով և ինչ սքանչելի լռութեամբ այս գործողութիւնները կը կատարուէին. բառ մը չէր լսուեր և ոչ ամենևին պնակների ձայն, և քանի որ ճաշարանն առանց կօշիկի կը մտնէին, դորդերով ծածկուած լինելու շնորհիւ քայլելու ձայնն անգամ չէր լսուեր։ Տանուտէրը միշտ աչքը սոյն դանակաւոր սպասաւորների վերայ կը պահէր, որպէսզի հսկէր, որ մեծագոյն կտորներն աւելի նշանաւոր անձերի տանեն։

«Այս մսեղէն կերակուրներէն ետքը իւրաքանչիւր հրաւիրեալի առաջ դրին յախճապակեայ ամաններով երկու տեսակ օշարակ՝ քաղցր և թթու համով և տարբեր ճաշակով. ասոր մէջ կար փայտէ դգալ մը, որի կոթը մէկուկէս ոտք երկայն էր և գլուխն խոր ու այնչափ մեծ, որ տասն հասարակ դգալի չափ կրնար պարունակել։ Այս օշարակներն արևելցւոց ըմպելիքներն են իրենց ճաշկերոյթի ատեն, երբ ոգելիցներ չեն ուզեր խմել։ Ըսածս մահմեդականաց համար է, քանզի քրիստոնեայք Եւրոպայի հետ ունեցած յարաբերութեան և գինու համար զգացած յօժարութեան պատճառով կը սովորին կերած ատենը մեզ պէս ոգելիցներ խմել։

«Հուսկ յետոյ բերին փլաւներն տասն խիստ մեծ սկաւառակներով, որոնցմէ մէկը հազիւ մարդ մը կրնար տանել։ Փլաւը բոլոր Ասիոյ մէջ, մինչ Հնդկաստան, աշխարհիս մահմեդականների սովորական ու անուշահամ կերակուրն է։

«Այս մի կերակուր է, որի գլխաւոր կազմանիւթը բըրինձն է։ Ես անոր նկարագրութիւնը ըրեր եմ պարսից կերակուրների մասին խօսած ատեն և ըսեր եմ ի միջի այլոց, որ այս միշտ վերջին կերակուրն է, որով ճաշը կը վերջանայ։

Ան գինեթափ կընէ, կը կշտացնէ և սքանչելապէս կը սնուցանէ։ Ասորմէ այնչափ կուտեն, որ կը կարծէք պիտի խեղդուին, բայց կէս ժամէ ետքը չի գիտցուիր թէ ան ինչ է եղեր։ Դուք երբեք չէք զգար ստամոքսը ծանրաբեռնուած։ Այս խընջոյքի փլաւները ամէն գոյնով ու ճաշակով էին, պարզ, ճերմակ, գարիով սնուցած փոքրիկ վառեակներով, ճերմակ խառնուած սամիթով ու գառի մսով, ուրիշ մը դեղին՝ շաքարով ու քրքումով, ուրիշ մը՝ կարմիր նուռի ջրով, ուրիշ մը մանիշակագոյն՝ սև թութի ջրով, ուրիշ մը ծածկուած աղի ձուկով և մանրած մսով։ Շատ մը սկաւառակների մէջ երեք-չորս տեսակ փլաւներ կային, և այս ամէնի մեծագոյն մասը պատրաստուեր էին Հնդկաստանի այն ազնիւ բրինձէն, որ անուշահոտ բրինձ կը կոչեն, քանզի ան քաղցրաբոյր հոտ ունի, որ անուշահոտութեամբ կը լեցնէ օդն, և որն լաւ պատրաստուած ատենն աշխարհիս ամէն համադամներն արժէ։ Այնչափ տեսակ միս բերին, որ ի վերջոյ իմ առջևս մօտ երեսուն փոքր պնակ ու խոր պնակ կային։ Ասոր վանական ոճով օրապարէն կամ մի աւուր կերակրի բաժին կը կոչեն, և յիրաւի, ո՛չ միայն վանականների կանոններն, այլև կենցաղավարութիւնն այնչափ կը նմանին արևելցիների սովորութեանն, որ դժուար չէ գտնել թէ այն կանոններն իրենց սկիզբն անոնցմէ առեր են։

«Այսպէս, արևելցիներն սեղան կը նստին ամէնքը միևնոյն կողմը, մէկը միւսէ ետք, ընդ երկար շարուելով, առանց դէմ յանդիման անձ մը ունենալու։ Կերակուրը պնակների մէջ հետզհետէ կը բերեն։ Իւրաքանչիւր ոք ունի իւր սպասը զատ ու առանձին։ Սեղանին վերայ ամենևին չեն խօսեր, բայց կերած ատենը կը գոհանան պարզ կամ երաժշտական ընթերցմամբ մը, եթէ հնարաւոր է այսպէս կոչել այն վէպերն, որոնք կերգուին արևելցւոց խնջոյքների մէջ, գրեթէ ինչպէս կընեն օպերայի մէջ։ Սպասարկութիւնը կը լինի առանց ձայնի և ձեզ պատեհութիւն չեն թողուր ոչինչ ուզելու։ Այս համանմանութիւնն Եւրոպիոյ վանականների և արևելեան

ժողովուրդների միջև այն պատճառով է, որ Եւրոպիոյ վանականները հետևեր են արևելցիներին, որք առաջին միաբանակիցներն եղեր են։

«Դառնալով մեր խնջոյքին, սեղանի սպասը մեծաշուք էր, վասնզի բոլորն արծաթեայ էին կամ յախճապակեայ. վերջինն աւելի թանկագին է քան արծաթն։ Կային կանաչ յախճապակիներ, որոնցմէ մեծ սկաւառակները չորսէ հինգ հարիւր սկուտ արժեն։ Բան մը չկայ այնչափ յարմար լինի կերակուր ուտելու համար, որչափ յախճապակին. ամանները միշտ նորի պէս են։ Բայց մենք չենք կրնար դիւրաւ այս խնջոյքն Եւրոպայի մէջ ունենալ, քանզի մեր օդն շատ ցուրտ լինելով՝ միսը յախճապակեայ ամանների մէջ խիստ շուտ կը սառի. բացի ասկէ, մեզ ամաններ պէտք են, որոնց մէջ կարենանք միսը կտրել, քանի որ արևելցիներն կը բերեն միսը կտրատուած, բոլորովին պատրաստ, բերան տանելու համար, և այնչափ լաւ եփուած, որ երբեք դանակի պէտք չունին և միայն մատերով կտոր-կտոր կընեն։

«Ժամը երեքին տանուտէրը վստահ լինելով որ հիւրերն լաւ կերած ու խմած էին, մեզ նախասենեակը տարաւ։ Գինին ամէնքի զարթութիւնը գրգռեր էր և խօսակցութիւնն այնչափ լաւ տաքցեր էր, որ այլ նւագին ուշք չէին դարձներ, ուստի զայն դադրեցնել տուին։ Մենք նախասենեակի մէջ գըտանք աղանդերն պատրաստ դրուած մետաքսէ ու ոսկեթել դիպակէ սփռոցների վերայ, շարուած երկու հարիւր յիսունէ աւելի պնակների մէջ. կը բաղկանար չոր ու թարմ պտուղներէ, բանդակներէ, խաւիարէ, Կասպից ծովի և Պարսկաց ծոցի աղուած ձուկերէ, կարագէ, կաթնեղէններէ, փուռի մէջ եփած կարկանդակներէ և ուրիշ խմորեղէններէ։ Անդ կային ևս շատ տեսակ խնձոր ու տանձ, ճերմակ, դեղին, հինգ վեց տեսակ խաղող, կարմիր ու կանաչ սեխ, բոլորն ալ խիստ ընտիր։ Պարսկաստան պտուղները ստորերկրեայ շտեմարանների մէջ կը պահեն, ուր տեղի մեծութեան համեմատ երկու կամ երեք

փոքրիկ ճրագ կը վառեն, որն պտուղների սառելն կարգիլէ։ Թագաւորների, վաճառականական ընկերութեանց և մեր մեծագոյն բարեկամների կենացն այնքան գինու բաժակներ պարպեցին, որքան որ ոյժ ունէին բերան բանալու, որմէ ետքը ամէն մէկը կրցածին պէս կծիկը դրաւ։ Ես փախայ ժամը եօթին և գնացի ննջել իմ բարեկամներէս մէկի տունն, որ սոյն թաղի մէջ կը բնակէր, որովհետև տանուտէրը զմեզ աւելի երկար պահելու համար մեր ձիերն ախոռի մը մէջ դնել տուեր էր և մեր ծառաներն ալ սրահի մը մէջ առատապէս կերակրել տուած էր։

«Սրահի ու նախասենեակի նկարագրութիւնը բրած ատեն մոռցայ պատմելու, թէ ինչպէս զանոնք տաքցուցեր էին, մեծ հրակալներ դնելով։ Պարսիկները սովորապէս կրակարան չեն գործածեր և ուր որ անոնցմէ կայ, շատ փոքրիկ ու վառարանի ձևով են, բայց մեծ ժողովների ատեն հրակալ կը գործածեն։

«Ամսի 20-ին լուր հասաւ, որ Զմիւռնիայէ թաւրիզ եկող կարաւան մը Հոկտեմբեր ամսի մէջ Կարինի մօտերը կողոպտուեր է, և հայոց անորմէ կրած վնասն երկու հարիւր հազար սկուտ էր*)»։

ՍԱՖԱՒԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շահ Սուլթան Հիւսէյին իւր հօր՝ շահ Սիւլէյմանի մահէն ետքը, 1694-ին, Սաֆաւեան գահը բարձրացաւ։ Շահ Աբբաս Ա.-ի մահովն Սաֆաւեան տէրութեան աճումն ու զարգացումն դադրեր էր և մասամբ իւիք նւազումն սկսեր էր, Շահ Հիւսէյ-

*) Շարդէնի յիշած սկուտը հաւանականաբար այժմեան 4 ֆրանք 80 սանթիմի չափ արժողութիւն ունէր։

նի օրօք տկարութեան նշաններն մէկէն երևան ելան և դահավէժ անկում ունեցաւ։ Այս թագաւորն թուլասիրտ էր, տէրութեան կարևոր գործերը թողնելով, ժամանցներով իր օրը կանցնէր։ Միաժամանակ, միտքը դրաւ իւր տէրութեան բոլոր այլակրօն հպատակները կրօնափոխ ընել։

Հայերի ստոր դասակարգէն քանի մը վատեր, ոմանք սպառնալիքներէ ահաբեկուած, ոմանք մեծամեծ խոստումներէ հրապուրուած և ուրիշներն իրենց ազգականներէն ժառանգութիւն առնելու յոյսով, կրօնափոխութիւն կեղծեցին։ Հաստատուած մի քանի անարդար որոշումների պատճառով հայերը մեծ տառապանաց ենթարկուեցան։ «Թովզէ թիլ Սաֆաի» հեղինակը փոխանակ պետութեան դահավէժ անկման բուն պատճառներն որոնելու, կը ճգնի այդ տարրերի կրօնափոխութեանը վերագրել այն, հետևեալ խօսքերով. «Այն ամէն վրացիներն ու հայերն, որք առանց ապացոյցի կրօնափոխութիւն կը կեղծէին, ճշմարիտ ու վկայեալ հաւատացեալների վերայ իշխան կարգուեցան և այս եղաւ անկման պատճառներէն գլխաւորը»։

Երկրի խառնակութիւնն սկսաւ Ղանդահարէն։ Շահ Հիւսէյն այս քաղաքին ու նահանգին կուսակալ կարգեր էր Գորգին խան Շահնաւազ մականունով վրացի մը։ Այս մարդը խիստ անիրաւ մէկն էր և անտանելի բռնութիւններ ի գործ կը դնէր։ Ղանդահարցիք անոր ձեռքէն բողոքելու համար՝ Ղըլիջայի ցեղէն Միրվէյս աֆղան պետ մը Սպահան պատգամաւոր ղրկեցին, իրենց ցաւերը թագաւորին յայտնելու և անորմէ ամոքում մը գտնելու յոյսով։ Միրվէյս հասաւ մայրաքաղաք և չկրնալով Շահ Հիւսէյնը տեսնել, դիմեց մեծամեծաց ու նախարարաց։ Ասոնք ալ ոչ միայն անոր խնդիրն ուշադրութեան չառին, այլ և շատ անգամ կծու ու հեգնական խօսքերով զինքը յանդիմանեցին։

Աֆղան պատգամաւորն ամէն կողմէ յուսահատ, շատ կաշառքով հրովարտակ մը ձեռք բերաւ, որ իւր Մեքքէ ուխտագնացութեանն արգելք չդրի։ Մեքէէ ուղղակի Ղանդահար

դարձաւ և Շահի հրովարտակն իւր գլխարկին վերայ բաց դարնելով, իրեն ընդառաջ եկող երևելիներին ու ժողովուրդին այնպէս իմացուց, թէ Շահն այն նահանգի կուսակալութիւնն իրեն շնորհեր էր։ Այս հնարքով նա իւր շուրջը շատ կուսակիցներ հաւաքեց և առանց ժամանակ կորսնցնելու, յանկարծ յարձակեցաւ նահանգապետ Գորգին խանի վերայ, որ պարտէզի մը մէջ անհոգ կը զարձանար, և զայն բռնելով՝ չարաչար սպանեց և ինքզինքը կուսակալ յայտարարեց։

Շահը մեծ զօրքով Քէյխոսրով խանը ղրկեց ապստամբութիւնն զսպելու։ Այս հրամանատարը գնաց Ղանդահար քաղաքը պաշարեց և երկար ատեն չկրցաւ առնել, ինքն ևս ի վերջոյ ապստամբներէ սպանուեցաւ։ Շահ Հիւսէյն կրկին անդամ զօրք ղրկեց, բայց չկրնալով քաղաքն առնել, զօրքը դարձաւ ու ցրուեցաւ։ Ասկէ ետքը Պարսկաստանի ամէն կողմերը կարող ու հզօր իշխաններն սկսան կեդրոնական կառավարութեանը չհնազանդել և իբր կէս ապստամբ տիրել իրենց նահանգին։

Միրվէյս ութ տարի տիրապետելէ ետքը մեռաւ։ Ասոր յաջորդեց իւր եղբայր Աբդիւլ Ազիզ, որն մէկ տարիէ ետքը իւր եղբօրորդի Մահմուդէն սպանուեցաւ։

Մահմուդ իւր իշխանութիւնն Ղանդահարի մէջ հաստատելէ ետքը՝ զօրք ժողովեց և Քերման քաղաքն առնելէ ետքը դէպի Սպահան յառաջացաւ։ Շահ Հիւսէյնը Մահմուդի մերձենալը լսելով՝ սպահանցիներէ հապճեպով զինուորութեան յարմար կարծուածներն ընտրեց և սպառազինելով՝ աֆղանների դէմ ղրկեց։ Ասոնց մէջ կային ևս 600 հայեր։ Երկու կողմի զօրքերը Գելուենաբադի դաշտին մէջ, որ Սպահանէ չորս ֆարսախ հեռու է, իրար հասան։ Զօրքն աֆղանների քիչուորութիւնն ու գէշ կերպով սպառազինուած լինելը տեսնելով՝ շատ ուրախացաւ, սակայն առաջին բաղխումէն մեծ կորուստ կրելով, ամէն բան թողաւ և մինչ մայրաքաղաք փախաւ։ Փախուստն այնչափ արագ էր, որ Ֆարահաբադ պալատի առջև եղող թնթա-

նութներն անդամ հետերնին չառին, այլ տեղն ու տեղը թողուցին։

Մահմուդ այսչափ դիւրութեամբ յաղթելուն վերայ զարմացաւ և երեք օր ճակատամարտի դաշտը կեցաւ, որպէսզի իւր հետևորդները զօրքի թողած աւարները հաւաքեն, և այնուհետև անարգել հասաւ Ֆարահաբադի արքունի մեծ պալատն, որ Զուղայէ երեք քիլոմեթր հեռու էր։

Շահ Հիւսէյն և իւր նախարարները զօրքի պարտութեան լուրն առածին պէս Թահմասեբ Միրզա արքայորդին թագաժառանգ անուանելով՝ Ղազվին ղրկած էին, որ զօրք հաւաքէ և մայրաքաղաքին օգնութեան բերէ և իրենք ալ քաղաքը պաշտպանութեան վիճակի մէջ էին դրած։ Զուղայեցի հայերը կառավարութենէն խնդրեցին, որ իրենք ևս մայրաքաղաքին մէջ առնին, բայց անոնց խնդիրքը մերժուեցաւ։ Միայն քանի մը հայեր շատ թախանձելով ու ընծաներ տալով, ընդունուեցան քաղաքին մէջ։

Ասկէ ետքը հայոց նկատմամբ տեղի ունեցած դէպքերն տարբեր կերպով պատմուեր են զանազան գրիչներէ, բայց ես կը նախընտրեմ թարգմանել Մալքոմի պատմութենէն, զոր ժամանակակից ու գրեթէ ականատես երկու եւրոպացիների (Հանովէյ և Քրուզինսքի) օրագրութիւններէն քաղելով, կը գրէ.

«Հայ գաղթականութիւնն աւելի մեծ յաջողութեամբ հասաւ Շահ Աբբաս Ա.-ի անմիջական յաջորդների իշխանութեան տակ, բայց Շահ Հիւսէյնի թագաւորութեան նոյն իսկ սկիզբն մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցաւ անոնց վիճակին մէջ։ Այդ բարեբարոյ, բայց թուլակամ միապետը չէր կրնար պաշտպանել իւր ժողովրդի և ոչ մէկ դասը, և հայերն հարուածման առարկայ դարձան... Հետևապէս պէտք չէ մենք զարմանանք, որ տկար արքունիքը վախցաւ վստահանալ հասարակութեան մը, զորն այնչափ խորապէս վիրաւորեր էր, և այս կասկածի անիրաւութիւնն այնպիսի վայրկեանի մէջ իր

արտայայտման եղանակովն աւելի ծանրացաւ։ Թագաւորն իւր մերձաւորների թելադրութեամբ հայերը կը հրաւիրեն հայ դունդ մը կազմել արքայական անձի պաշտպանութեան համար։ Զուղայի հայերը շողոքորթուած համարման մի այսպիսի դերազանց նշանով, այն ամէնքն որք կրնային սպառազինուել, հետևեալ օրն ի հանդէս շարուեցան պալատին առջև, բայց կառավարութիւնը փոխանակ զանոնք պաշտօնի անցնելու, զէնքերնին առաւ, իմացնելով որ անոնց վերայ վստահութիւն չունէր և թէ պետութեան պահապան զինուորների խումբ մը պիտի ղրկէ թէ Զուղան թշնամեաց դէմ պաշտպանելու և թէ արգիլելու այն վտանգներն, որք կրնային առաջ գալ։

Սակայն ոչ նախատինք և ոչ անիրաւութիւնք կրնային մղել հայերը դէպի այն մատնութիւնն, որի համար կը կասկածէին։ Վասնզի թէև անոնք դժգոհ էին մինչ այդ եղած հալածանքներէն, սակայն կը սարսափէին մինչև անդամ խորհել աֆղանների յաջողութիւններէն առաջ գալիք հետևանքների վերայ։ Ուստի իրենք առաջարկեցին պահել և կերակրել այն դունդերն, որք պիտի ղրկուէին իրենց քաղաքի պաշտպանութեան համար, և երբ տեսան որ զօրաց թիւը անհամեմատ քիչ էր, իրենք պատրաստուեցան իրենց միջոցներով պակասը լեցնել։

Մահմուդ Գոլունաբադի յաղթութենէն ետքը եկաւ Ֆարահաբադը դրաւեց, և մինչև Զուղա յառաջանալով, անմիջապէս յարձակեցաւ այս արուարձանին վերայ։ Երկու ժամուան բաղխումէ ետքը յաջողեցաւ միայն փոքրիկ արտաքին պատուար մը ձեռք բերել։

Զուղայի հայերն, որք մեծ արիութիւն ցոյց տուին այս դիմադրութեան մէջ, դիմեցին Շահ Հիւսէյնի զօրաց հրամանատարին և խնդրեցին իրենց հրազէն տալ՝ կուելու համար։ Անոնք առաջարկեցին յարձակիլ աֆղանների վերայ և զանոնք յետ մղել իրենց գրաւած դիրքէն։ Սակայն հրամանատարը չուզեց օգնել և նոյնիսկ արգիլեց Սուֆի Միրզա արքայազ-

նին, որն կուզէր ի նպաստ հայոց շփոթութիւն մը պատճառելու համար, խումբ մը ձիաւորներով երթալ թշնամւոյ կողմերէն մէկը գարնելու։

Հայերը գինաթափ ընելու այս ընթացքը, յառաջադոյն հնարքին հետ, շատերին կարծել տուաւ, որ հրամանատարութիւնը մտադիր է Զուղան մայրաքաղաքի ապահովութեանը գոհել, այն մտածումով, որ աֆղաններն Զուղայի բնակչաց հարստութեանց վայելումով իրենց վայրենի եռանդէն շատը պիտի կորսնցնէին։

Նախապարիսպը տիրելու հետևեալ իրիկունը թշնամին փոքրիկ անցք մը ևս բացեր էր Զուղան շրջապատող բարձր բայց ցեխաշէն պատին մէջ։ Փիղ մը մղելով այդ անցքէն, շուտով գայն լայնացուց և անցանելի ճեղքուածք մը դարձուց, որով և աֆղանները արշալոյսին քաղաքը մտնելու որոշումը տուին։ Սակայն հայերն կանխատեսելով անոնց մտադրութիւնն, առաջարկեցին պայմանադրութեամբ անձնատուր լինել։ Պայմանները շուտով որոշուեցան։ Զուղայեցիք համաձայնեցան կողոպտուելէ ազատ մնալու համար եօթանասուն հազար թումանի տուրք վճարել։ Այս ծանր հարկադրութեան վերայ՝ ուրիշ մը բնութեամբ աւելի նախատալից ու անագորոյն աւելացաւ Մահմուդէն։ Նա պահանջեց Զուղայի ամենազեղանի և ծնունդով ամենազնիւ կոյսերէն յիսունը անմիջապէս իրեն յանձնել։

Զոհերն ընտրուեցան ու ղրկուեցան իրենց ամենաճոխ զգեստներով Ֆարահաբադ պալատն, ուր աֆղան իշխանը կը բնակէր։ Նա անոնցմէ մի քանին ընտրեց իւր կանանոցի համար և մնացորդը բաժանեց իւր գլխաւոր հրամանատարներին։

Հայերն սովորեր էին ամենամեծ նախանձայոյզ ոգով նայել իրենց ընտանեաց պատուին վերայ և ոչինչ չէր կրնար դերազանցել այն սարսափն ու զարհուրանքն, որ այս հրապարակային բռնաբարութեան արարքն առաջ բերաւ։ Էրիկ

մարդիկ կերևնային խորասուզուած լռիկ թախծութեան մէջ, մայրերը կը ճչային խելացնոր վայրագութեամբ իրենց անպատուած աղջիկներուն վերայ և տխրալի զոհերն իրենք տեղի տուին յուսահատութեան մը, որ անոնցմէ շատերն ճողոպրեցին իրենց ճակատագրէն, իրենց կեանքին վերջ տալով։ Աֆղաններն որչափ ալ վայրագ էին, չկրցան առանց յուզումի այսպիսի տեսարանի մը հանդիսատես լինել. շատերն ազնուաբար վերադարձրին վշտալի կոյսերն, ուրիշներն ալ փոքրիկ փըրկանք մը առին, այնպէս որ նախկին թիւէն միայն մէկ քանիսն պահեցին, որոնք ևս ժամանակէ մը ետքը իրենց ցնորեալ ծընողաց վերադարձուեցան։

Պետական զօրքը որևէ ջանք չըրաւ անհանդիստ անելու աֆղաններն այս գործունէութեանց ատեն, և Մահմուդ քաջալերուած զօրքի անգործութենէն, իւր զինուորները հրաւիրեց աւելի կարևոր աշխարհակալութեան մը։

Մահմուդ Զուղան առնելէ անմիջապէս ետքը պաշարեց Սպահանը 1722 թ. Մարտ 20-ին (ն. տ.)։ Աֆղան պետն ըստ ոմանց ընդամենը 8,000 և ըստ այլոց 12,000 զինուոր ունէր։ Նկատի ունենալով Պարսկաստանի մայրաքաղաքի դիրքն ու տարածութիւնն և այն ժամանակի բազմամարդութիւնն, որ 6—700,000ը կանցնէր, դժուարաւ կրնանք ըմբռնել, թէ այսչափ սակաւաթիւ զօրքով ինչպէս կարելի է այնպիսի քաղաք մը պաշարել և սովամահ ընելով առնել։ Այսու ամենայնիւ իրականութիւնն այս է։

Այս տարօրինակ դէպքն ուրիշ կերպով հնարաւոր չէ բացատրել, եթէ ոչ այն ժամանակի զօրքի ամենամեծ վեհերոտութեամբը։ Քաղաքացիք ու զօրքը աւելի կը նախընտրէին օրէօր անօթութեամբ դառն ու սոսկալի տանջանքներ կրել և յամրաբար սովամահ լինել, քան թէ այրաբար քաղաքէն ելնելով մարտնչել, ազատուելու կամ մեռնելու համար։ Թէև յընթացս երկարատև պաշարման, կառավարութիւնն անդամ մը մտադրութիւն ունեցաւ աֆղանների բոլոր կէտերի վերայ

մէկէն յարձակում ընելու, թագաւորն ևս քաջալերուած հայոց ըրած առաջարկութենէն, որք կը խոստանային Ջուղայի պահապանների վերայ յարձակիլ, երբ ընդհանուր յարձակումն սկսէր, սակայն այս ամէն յոյսերը յօդս ցնդեցան նահանգապետի մատնութեան վախէն։

Զնայելով հայոց այսչափ հաւատարմութեանը ու անձնազոհութեանը, Շահ Հիւսէյն ուզեց մայրաքաղաքն ապաստանած հայերը կորսնցնել, պատճառաբանելով որ Ջուղայեցիներն աֆղանների հետ միացեր էին։ Սակայն նախարարներէն մէկն այս անարդար խորհրդի գործադրութիւնն արգիլեց, հաստատելով որ Ջուղայեցիներն անճարութենէ ստիպուած, աֆղաններին անձնատուր եղեր էին։

Սպահան 7 ամսի չափ ուտելեաց պակասութեան և անտանելի քաղցին դիմանալէ ետքը*) Մոհարրամ ամսի 12-ին, 1135-ի հիջրէթի (1722 թ. Հոկտեմբ. 12-ին) անձնատուր եղաւ Շահ Հիւսէյն անձամբ, իւր նախարարների հետ, Մահմուդի բանակը գնաց և քաղաքի ու արքունեաց բանալիներն յաղթողին յանձնեց։ Մահմուդ իւր զինուորներէն նախ 1000 հոգի զրկեց, որ երթան քաղաքն, արքունի գանձին և զէնքերին տիրեն և ինքն ալ երկու օրէ յետոյ մեծ փառքով Սպահան մտաւ։

Մահմուդ նախարարներն իրենց պաշտօնին մէջ վերակարգեց և ստիպեց, որ Շահ Հիւսէյնն իւր ձեռքով յաղթողի գլուխը թագ դնէ և զայն ճանաչէ թագաւոր Պարսկաստանի։ Այնուհետև ամէն մեծամեծների անունները գրի առնել տուաւ, իբր թէ անոնց նոր պաշտօններ պիտի տայ, բայց անմիջապէս անոնցմէ 114-ին սպանեց, որմէ ետքը ևս 31 հոգի բրուանելով, Սաֆաւեան ցեղը սրէ անցուց։ Պատմագիրների խօսքին նայելով, աֆղանները 15 օր անդադար կողոպտեցին քաղաքը, և ձեռքերնին ինկած մարդերն դերեցին, ամբողջ թաղեր գետնին հաւասար ըրին, նոյնպէս ևս Ֆարահաբադ մեծ պալատը կործանեցին։ Սպահանն այս հարուածէն չվերականգնեցաւ։ Տակաւին աւերակ մնացած ամբողջ թաղեր ու շուկաներ կենդանի վկաներ են աֆղանների աւերածութեանց։

Քաղաքը ապաստանած հայերը, Մահմուդի հրամանով, Ջուղա զրկուեցան զինուորներով, որ տուգանքի մնացորդը պատրաստեն ու վճարեն։ Այս անագորոյն զինուորներն ահռելի չարչարանքներ տուին հայերին և որպէսզի սոքա գումարը շուտով լրացնէին, չորս երեւելի հայի, այն է Քալանթար Խաչիկի, Խալդարենց Գրիգորի որդի Սայեադի, Սամբուրի Մանուկի և Կապախենց Ակոբջանի որդի Սայեադի գլուխները կտրեցին։ Հայերն աննկարագրելի դժուարութիւններով մնացորդ 53,000 թումանը լրացնելով, վճարեցին։ Բայց դարձեալ չարչարուեցան, քանզի պարտաւորուեցան բացի դրամէն տալ ևս կերպասեղէնի 50000 հազար կապոց։ Ջուղայեցիք ստացան ևս աֆղաններէ 7,000 հատ չկարուած կապայի և ուրիշ զգեստների կերպասներ՝ կարելու համար և բազմաթիւ վերմակի, անկողնի ու բարձի համար մետաքսէ ու ոսկեթել դիպակներէ կտորներ, որ կարել պատրաստելէ ետքը յանձնեն յաղթողի պաշտօնատարաց ու սպաներին։ Բացի ասոնցմէ, Ջուղայեցիները Մահմուդին տուին 600 հայ հրացանակիրներ, զորս նա միացրեց իւր զօրքի հետ։ Յաղթական բռնաւորն հայերէն ընտրեց ևս 60 երիտասարդներ և իւր մեծագումար գանձի համար պահապան կարգելով, զանոնք զրկեց Ղանդահար, անդ նրանց կրօնափոխ անելու վերջնական նպատակով։ Այսու ամենայնիւ, կերևի, որ մինչ մէկ կողմէ աֆղաններն կը չարչարէին Ջուղայեցիներն, իրենց վերայ գրուած տուրքը փութով ստանալու համար, այլապէս հայ երեւելիները աֆղան մեծամեծաց մօտ բաւական ազ-

*) Անգլիական գործակալի գրած նամակէն կը տեսնուի, թէ սովն այնչափ սաստկացաւ, որ մարդիկ սկսան մեռելների միսն ուտել, եւ եղան այնպիսի ծնողներ, որք իրենց զաւակներն խողխողեցին ու կերան։

դեցութիւն կը բանեցնէին*)։

Մահմուդ երկուս և կէս տարի մոլեգնաբար թագաւորելէ ետքը կատարելապէս խենթացաւ և սպանուեցաւ Աշրաֆի ձեռքով, որն ըստ ոմանց իւր եղբօր որդին էր, ըստ այլոց՝ հօրեղբօր որդին։ Աշրաֆ թագաւորական գահը նստաւ և Պարսկաստանի մի քանի նահանգներին ևս տիրեց։

Այս ատեններս աֆշար ցեղէն Նադեր անունով մէկն, որ յետոյ Նադեր Շահ կոչուեցաւ, հետզհետէ զօրացաւ և շատ տեղերի տիրեց։ Նախ Սեֆիանի մերձակայքը՝ Մեհմանդոստ կոչուած գետակի մը մօտ, ապա Մուրչախորի մօտ Աշրաֆի հետ մարտնչելով, չարաչար պարտութեան մատնեց վերջինիս։ Աֆղան բռնաւորն աճապարանօք դարձաւ Սպահան, ուր ամէն տեսակ աւեր, բռնութիւն գործելէ ետքը անցաւ Շիրազ, և այն տեղէ ալ փախաւ Ղանդահար, և անդ Մահմուդի որդու ձեռքով սպանուեցաւ։ Նադերն Աշրաֆի ետևէն Սպահան մտաւ 1142 թ. Ջեմադի-օլ-աւալ 8-ին (1729 թ.) և քաղաքի մէջ դտած աֆղաններն ու անոնց կուսակիցներն ամէնքն ալ ջարդեց, Ջուղայեցիներէ 6,000 թուման տուրք առաւ և մի քանի օր ետքը Շահ Թահմասպը քաղաք բերելով՝ թագաւոր պսակեց։

*) 1722 թ. Հոկտեմբեր 22-ին, Սպահանի Անգլիական Ընկերութեան գործակալն իւր նամակին մէջ կը գրէ. «Մենք աֆղան զինուորների առաջին անգամ խաղաղ մտած ատեն ամէն բռնութենէ ու գրկանքէ պահպանելուն համար բոլորովին պարտական ենք խոջա Մարգարի մեծական միջնորդութեան, որ այնչափ ազդու կերպով հոգ կը տանէ այն ամէն խնդիրներին, որ կը վերաբերին Ընկերութեան գործերին եւ նա այնչափ մեծ ազդեցութիւն ունի անոնց (աֆղանաց) վերայ»։

Ուրիշ անգամ եւս, մինչ աֆղան կառավարութեան բրած անակնկալ պահանջին համար սոյն գործակալը զինուորներէ երշապատելով՝ խիստ վտանգաւոր դրութեան մէջ կը գտնուէր, դարձեալ խոջա Մարգար վերայ հասնելով, զայն զինուորների ձեռքէն կազատէ, խանի օր ժամանակ առնելով։

Այս թագադրութեան ծախքի առթիւ նորէն Ջուղայեցւոց վերայ 2500 թուման հարկ դրաւ։ Ատեն մը ետքը Նադեր Խորասան գնաց և վերադարձին տեղեկացաւ, որ Շահ Թահմասպ օսմանցւոց հետ պատերազմելով յաղթուեր է և մի քանի նահանգ տալով՝ հաշտութիւն ըրեր է։ Նադերը թագաւորին յանդիմանեց, ըսելով որ Պարսկաստանի իրաւունքն ոտնակոխ ըրեր է, զայն գահէն վար առաւ և անոր մի քանի ամսական տղայի գլուխը թագ դնելով՝ Պարսկաստանի թագաւոր հրատարակեց։ Քիչ ետքը Նադերը Մեշէդ դրկելով Շահ Թահմասպը, ճամբան սպանել տուաւ, և անմիջապէս Թուրքիոյ դէմ պատերազմ յայտարարեց։ Նադերը օսմանցւոց վերայ յարձակեցաւ և պաշարեց Ղարսը։ Պաշարման միջոցին նախ Բայազէդի և Կաղզուանի կողմերն, և ապա մինչև Կարին ասպատակներ դրկեց, որք գնացին այս երկիրները աւերեցին և բազմաթիւ գերիներ բերին, մեծ մասամբ հայեր, զորս Խորասան քշեց։ Բացի ասոնցմէ, Նադերն Արարատեան երկրէն ևս մերձ 300 տուն հայեր Խորասան գաղթեցնել տուաւ*)։ Օսմանցիք Երևանի նահանգն և ուրիշ գաւառներ տալով, հաշտութիւն ըրին Նադերի հետ։

Այնուհետև Նադերը զօրքն հետն առած, գնաց Մուղանի ընդարձակ դաշտը և անդ բանակ դրաւ։ Նադեր մինչ Մուղան կերթար, մանուկ թագաւորը սպանուեց Սպահանի մէջ, որով Սաֆաւեան թագաւորութեանը վերջ դրուեցաւ։ Յայնժամ Մուղան ժողովեց Պարսկաստանի երևելիներէն շատերը և 1736 թ. Մարտ 9-ին յայտնելով մանուկ թագաւորի մահը, հրամայեց որ Պարսկաստանի գահին արժանաւոր թագաւոր մը ընտրեն։ Ժողովն ամէնէն արժանաւորը Նադերը գտաւ և այս-

*) Թէեւ այս գաղթականութեանց ու գերեվարութեանց յիշատակն Ջուղայի հայոց ողբերգական երգերի մէջ պահուած է, սակայն ոչ մէկ գրիչ որեւէ տեղեկութիւն չէ թողեր. զեր ես որեւէ բան չեմ գիտեր այս բազմաթիւ հայոց նակատագրի մասին։

պիսով Նադերը թագաւոր պսակեցաւ։

Ասկէ ետքը Նադերը մեծ զօրութեամբ Հնդկաստան արշաւեց և Դեհլի ու շատ ուրիշ քաղաքներ առնելով, անբաւ աւարով Պարսկաստան վերադարձաւ։ Այս հարստութեամբ ևս աշխարհակալի ագահութիւնը չյագեցաւ։ Ջուղայեցիք, ինչպէս և երկրի զանազան կողմեր բնակւող հայերը Նադերի տիրապետութեան ծանր տուրքերէն զերծ չմնացին։ Նադեր, ամէն տարի, Ջուղայեցիներէ բացի սովորական հարկէն, 20,000—40,000 թուման արտակարգ տուրք կառնէր իւր զօրաց վճարելու համար։ 1745-ին, մի մեծ գումար տուգանք ևս ձգեց Ջուղայեցւոց վերայ։ Այս անընդհատ հարկերի շատութենէն դիւրին է երևակայել որչափ մեծ են եղեր Ջուղայեցւոց հարստութեան և եկամուտների աղբիւրներն, որ այսպիսի տուրքերէն բացի կրցեր են այդքան մեծ տուգանք մը ևս տալ։

1747-ին, Նադեր սպանուեց և Պարսկաստան նորէն մեծ խռովութեանց մէջ ինկաւ։ Ամէն իշխան, ամէն կուսակալ, ամէն պետ, որ քիչ-շատ թիւով կուսակից կրնար իւր շուրջը հաւաքել, զէնք առնելով՝ իւր դրացւոյն վերայ կը յարձակէր։ Ամբողջ Պարսկաստան կուի, կոտորածի և աւարառութեան ընդարձակ դաշտ դարձաւ։ Հետզհետէ ասպարէզ ելան Ադել շահ, Իբրահիմ խան Միր Հասան, Աբուլֆաթհ խան, Ալի Մարդան խան և Ազաղ խան։ Ասոնցմէ ամէն մէկը փոքրիկ յաջողութեան պարագային ինքզինքը կը յայտարարէր թագաւոր կամ իշխան Պարսկաստանի, վաղանցուկ տիրապետութիւն կամ կուսակալութիւն մը կը վայելէր և փոքրիկ ձախորդութեամբ կանգրևութանար։

Այս ընդհանուր խռովութեանց և յարձակումների ժամանակ Պարսկաստանի հայոց և ի մասնաւորի Ջուղայեցւոց կրած ձախորդութիւններն անկարելի է ճշտիւ գրի առնել։ Անդամ մը որ Ջուղայեցւոց անունը հարուստ էր ելեր, ամէն նոր իշխանաւոր կամ յաղթող նոր զօրավար, նոր տուրք կը պահանջէր, և քանի որ անոնք աֆղանների յարձակումէն սկսեալ մինչ Նադեր Շահի սպանումն անդադար հարստահարութեանց և տարապայման հարկատուութեան ենթակայ եղեր էին, առանց նոր շահաբեր միջոց ունենալու, ալ անոնց մօտ կարող ու անկարող չէին մնացեր։ Ուստի իւրաքանչիւր նոր տուրքի պատճառով այր, կին, ծեր, երեխայ, սոսկալի ու անտանելի տանջանքների կը մատնուէին։ Անագորոյն հարկահաւաքներն իրենց ձեռք մատնուած զոհերէն մէկ քանին այնչափ կը դանահարէին, որ ուշաթափ կը լինէին. ժամանակ մը կը թողնէին, որ ուշքի գան և շունչ առնեն և ետքը նորէն կը ծեծէին, մէկ քանիսն գլխիվայր կը կախէին, ուրիշները տոպրակի մէջ գնելով՝ հերիւններով կը ծակէին։ Շատերը տանջանքի տակ կը մեռնէին. ապրողները մինչև պահանջած տուրքը տային կամ իսկապէս չունեցած ատենը շուտով փոխառութիւն գտնելու խոստում չընէին, չէին ազատուեր։

Այս վիճակը տևեց մինչ Քարիմ խան Զանդի միայնակ տիրապետութիւնը, 1757-ին։ Ասոր կառավարութեան տակ Պարսկաստանի ժողովուրդը քիչ մը շունչ առաւ, բայց ի մասնաւորի հայերն անոր խնամատարութեան ու բարերարութեան շնորհիւ հանգստութիւն վայելեցին։

Այս մարդասէր վեհապետի մահուամբն (ըստ ոմանց 1778-ին, ըստ այլոց՝ 1779-ին) Պարսկաստան նորէն շփոթութեանց մէջ ինկաւ, և հետզհետէ արքայական տիտղոս առին կամ միապետութեան թեկնածու եղան, որք էին՝ Զաքի խան, Ալի Մուրադ խան, Աբուլֆաթհ խան, Սադրզ խան, Ջաֆար խան։ Այնպէս որ կռիւներն ու թշուառութիւններն անպակաս եղան, մինչև որ Աղա Մահմադ խան տիրացաւ բոլոր Պարսկաստանի իշխանութեան։

Ջուղայեցիք, որք սկիզբները միայն վաճառականութեան համար օտար երկիրներ կը գնային և կրկին իրենց օթևանը կը դառնային, Շահ Սուլթան Հիւսէյնի թագաւորութեան ըսկիզբէն սկսան քիչ-քիչ ընտանիքով, այլ և այլ երկիրներ գաղ-

թել, այնպէս որ 1705 թուականին արդէն մերձ 160 տուն դատարկ և անբնակ դարձեր էր։ Այս իրական մի ապացոյց է, թէ Զուղայի ժողովրդի թիւը նւազման վերայ էր, քանզի գաղթողների տներն անբնակ կը մնային։

Այս պանդխտութիւնը հետզհետէ աւելի շատցաւ և Մահմուդի ու հետագայ խառնակութիւնների և ներքին կռիւների ժամանակ փախուստի կերպարանք առաւ։ Սկիզբները Փերիա գաւառի Շուրիշկան գիւղի Աւետարանին և ուրիշ ուխտավայրեր այցելելու պատրւակով Զուղայէն կը մեկնէին, տուն-տեղ նոյնութեամբ թողնելով, և միայն թանդակին և թեթեակշիռ իրերը իրենց հետ տանելով։ Բայց երբ այս կերպը անբաւական ու անընդունելի դարձաւ, յայնժամ գաղթողներէն հարուստները թէ Զուղայի քալանթարը և թէ քաղաքի վերակացուն կամ քաղաքապետն և ճանապարհի պահպանները կաշառելով, կը մեկնէին, իսկ ոչ հարուստները քառապատիկ վարձ վճարելով կարաւանապետներին և ամէն վտանգ աչքի առաջ առնելով, դիշերով կը փախչէին և արագութեամբ կը ճամբորդէին, որպէսզի իմացւելով չբռնւէին, վասն զի գաղթողներէն բռնւածները ծանր տուգանքների կենթարկւէին։ Գաղթողները մեծաւ մասամբ Փերիա կամ Շուշտար, ուրկէ ալ Բասրա կամ Բաղդադ կերթային, մասամբ ալ Շիրազի և Բուշերի վրայով Հնդկաստան և այլուր. փոքրագոյն մասն ալ Փերիայէն կանցնէին Համադան և կը գաղթէին Ռուսիա։

ԱՂԱ ՄԱՀՄԱԴ ՇԱՀ ՂԱՋԱՐ ԵՒ ՅԱՋՈՐԴՆԵՐՆ

Աղա Մահմադ Շահ, որմէ կոկի Ղաջար հարստութիւնը, թրքական Ղաջար ցեղի գլխաւորներէն մէկն էր։ Մանկութեան ժամանակ Ագըլ շահի հրամանով ներքինացւեր էր և ետքէն Քարիմ խան Զանդի մօտ իբր պատանդ կը պահւէր Շիրազի մէջ։ Վերջինի մահէն ետքը Շիրազէն փախաւ Մազանդարան, ուր իւր ցեղէն կուսակիցներ հաւաքելով, սկսաւ

աշխարհակալութեան, փոփոխական յաջողութիւններէ ու անյաջողութիւններէ ետքը կրցաւ հետզհետէ զօրանալ, իւր ամէն հակառակորդաց յաղթել և ի վերջոյ, 1796-ին, Թեհրանի մէջ թագադրւել։ Տարի մը ետքը Շուշի բերդի մէջ սպանւելով իւր երկու ծառաների ձեռքով, իրեն յաջորդեց Ֆաթհալի շահը։

Ֆաթհալի շահը թէև հայոց աւելի հաշտ աչքով կը նայէր, սակայն իւր կառավարութեան թուլութեան պատճառով Զուղայի և գաւառների հայոց վիճակը չբարելաււեց։ 1815—1818 և ինչպէս 1831—1834-ի վերջը երեքական տարիների սաստիկ սովի ժամանակ հայերը շատ նեղւեցան. բարեկեցիկ դասակարգը բոլորովին աղքատացաւ, իսկ աղքատների մէջ մինչև անգամ սովամահ եղողներ գտնւեցան։ Շատ մարդիկ Զուղայէն, մանաւանդ գաւառներէն, օտար երկիրներ և ի մասնաւորի Ռուսիա գաղթեցին։ 1823—24-ի ատենները Հաջի Հաշէմ խան անունով մէկը զօրանալով և իւր շուրջը յեղուզակներ հաւաքելով՝ մերձ երկու տարի Զուղայի բնակչաց և շրջակայ ապրող հայոց շատ չարիքներ հասցուց։

1825-ին, Ֆաթհալի շահ անձամբ Սպահան գնաց, անհոգ ու ապիկար կուսակալին պաշտօնանկ ըրաւ և բարբարոս Հաջի Հաշէմ խանին կուրացրեց, որով հայերի վիճակը թեթևացաւ։ Սակայն, թագաւորն Թեհրան դառնալէն յետոյ, նորէն Սպահանի մէջ անկարգութիւնները քիչ-քիչ սկսան և երթալով մեծցան ու շատացան։

Աւազակախմբեր կազմւելով՝ ամէն տեսակ բռնութիւններ կը գործէին և քաղաքացւոց կը կողոպտէին։ Վրանաբնակներն աներկիւղ կողոպուտ կընէին, կը յարձակւէին կարաւանների վերայ և սպանութիւններ կընէին։ Ասոնց համարձակութիւնն հասաւ այն աստիճանի, որ նոյնիսկ արքունի հարկն, որ Սպահանէն Թեհրան կը ղրկւէր, ճամբի վերայ խլեցին ու տարան։ Այս անկարգութիւններն և արքայորդի կուսակալի անհոգութիւնը պատճառ եղան, որ Ֆաթհալի շահ երկրորդ ան-

դամ Սպահան գնաց և անիշխանութեանց վերջ տաւ։ Սակայն, թագաւորի մահովը խառնակութիւնները նորէն սկսեցան։ Աւազակախմբերի և դատարկաշրջիկների խումբերն ոչ միայն քաղաքացիներն օր ցերեկով սկսան կողոպտել, այլ և նոյնիսկ արքունի բանակի վերայ յարձակելով, ամէն բան աւարի տալ։

Ասոնք քանիցս փորձեցին Ջուղան ևս կողոպտել, բայց Ջուղայեցիք իրենց առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսէ քաջալերուելով, քաղաքի դարպասներն և ուրիշ մուտքերն փակեցին, զինուելով քաջաբար դիմադրեցին և յարձակողներէն շատերը վիրաւորելով՝ յետ մղեցին։ Սպահան գտնուող յեղուզակների խմբերը տեսնելով Ջուղայեցիների դիմադրութիւնը, մտադրուեցան աւելի մեծ բազմութեամբ յարձակիլ, սակայն Յովհաննէս արքեպիսկոպոսի հնարագիտութիւնը, Սագինեան Դաւիթ խանի 3,000 հետևակ զօրքի մերձակայութիւնը և Իմամ Ջումա կրօնապետի բարի ու մարդասիրական խորհուրդները չարագործների դիտաւորութիւններին արգելք եղան։

Այս անկարգութիւնները մեղմացան, երբ Մահմադ Միրզան նստեց թագաւորական գահի վերայ և Խոսրով խան Սամուէլեանը 1836-ին կարգուեց Սպահանի կուսակալ։ Բայց տարի մը ետքը Իմամ Ջումայի և Խոսրով խանի միջև դժտութիւն ծագելով, ամբոխը յարձակեցաւ կուսակալի պալատի վերայ։ Զինուորները կուսակալին լքեցին, պատճառաբանելով, թէ չէին կրնար իրենց կրօնապետին դէմ պատերազմ մղել։ Խոսրով խան իւր մնացորդ 100-ի չափ հաւատարիմ զինուորներով և Սագինեան Դաւիթ խանի հրամանատարութեան տակ եղող 150 հայ զինուորներով նախ ամբոխին դէմ դրեց, ապա Սպահանէն դուրս ելնելով, Սէֆդաբադ պարսպաւոր պալատն ամրացաւ, իւր հետ տանելով 4 թնդանօթ ևս։ Ամբոխը 4 օր պալատը պաշարելէ և անընդհատ հրացան արձակելէ ետքը նահանջեց, հարիւրաւոր մեռեալ թողնելով։

Յաղթող ամբոխը իմանալով որ պաշարեալներն իրենց պաշարն դաղտնի կերպով կստանային Ջուղայեցիներէն, որոշեցին յարձակիլ Ջուղայի վերայ, սակայն Իմամ Ջուման հեռատեսութեամբ և խոհեմութեամբ այս որոշման գործադրութեանն արգելք եղաւ։ Խոսրով խան*) դիշերով Թեհրան մեկնեց և կռիւը դադարեցաւ։ 1840-ին Մահմադ շահ անձամբ Սպահան այցելեց և ապստամբներն ու չարագործները խստիւ պատժելէ և խաղաղութիւն վերահաստատելէ ետքը, կուսակալութիւնը յանձնեց Մանուչար խանին և ինքը Թեհրան վերադարձաւ։ Ասոր կուսակալութեան ժամանակ Ջուղայի ու գաւառների հայերը կատարեալ անդորրութիւն վայելեցին և հարուածներէն սկսան սակաւ ինչ շունչ առնել։

---

*) Խոսրով խան վրաստանցի հայ էր, ազնուական ընտանիքէ։ Պատանի տարիքի մէջ ռուսաց զինուորական ծառայութեան մէջ էր, իբր կրտսեր ազնուական, երբ գերի բռնելով՝ բերուեցաւ Պարսկաստան։ Շահն իւր անձնական ծառայութեան մէջ առաւ եւ զայն հանձարեղ ու հաւատարիմ գտնելով, հետզհետէ յառաջացուց եւ մինչեւ կուսակալութեան աստիճանի հասցուց։

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՋՈՒՂԱՑԻ ԱՆՑԵԱԼԻ ՎԵՐԱՑ

Նոր Ջուղայի, ինչպէս և Սպահանի կամ Պարսկա-Հընդկաստանի թեմի հայերն եօթն տարբեր շրջան ունեցեր են։

Առաջին շրջանը կսկսի իրենց Նոր Ջուղա գաղթելէն մինչև Շահ Աբբաս Բ.-ի թագաւորութիւնը։ Այս ժամանակամիջոցը հսկայաքայլ յառաջադիմութեան մի շրջան է, քանզի 30—35 տարուան պաշտպանութիւնն ու քաջալերութիւնն, որ Ջուղայեցիներն վայելեցին Շահ Աբբաս Ա.-էն և իւր յաջորդ Շահ Սէֆիէն, անոնց համար բաւական եղաւ Ջուղայի չոր ու անշէն գետինը բազմամարդ քաղաքի մը վերածելու. քաղաք մը՝ շինութեանց գեղեցկութեամբ, ապարանից հոյակապութեամբ, որ ոմանց համար Շարդէն պալատ կը կոչէ։ Նոր Ջուղան յայտնի դարձաւ նաև իւր բնակչաց յառաջադիմութեամբ, հարստութեամբ ու գործառնութեանց մեծութեամբ, որ կը գերազանցէր Պարսկաստանի ուրիշ քաղաքներն։

Ջուղայեցիք ոչ միայն իրենց բնակութեան համար մեծածախս տներ շինեցին, այլ և անհոգ ու անտարբեր չեղան կրօնական պաշտման համար ևս հոյակապ տաճարներ կանգնեցնելու, և ասոր մէջ հարուստներն աւելի իրար հետ կը մրցէին, քան թէ առանձին շինութեանց մէջ։ Հայկական քաղաք մը չկայ, որ եկեղեցիների թիւով կամ շէնքի հոյակապութեամբ կարենայ մրցիլ Նոր Ջուղայի հետ։

Ջուղայեցիները իրենց շինարարութիւնը չսահմանափակեցին միայն եկեղեցիներով, այլ եղան այնպիսիներն, որ

հանրօգուտ շինութեանց ևս ձեռնարկեցին, ինչպէս է Զայանդերուդ գետի վերայ շինուած կամուրջն, որ կը կապէ Սպահանը Ջուղային։ Մինչ մէկը մեծածախս կամուրջ կը պատրաստէր, միւսը կը հպարտանար կամուրջի աչքերէն մէկը արծաթով լեցնել և այսպէս արդիլել ջրի անցքն։ Եթէ ի նկատի առնենք հայերի Նոր Ջուղա հասնելու սկիզբը և մերձ կէս դար կեանքը, անվարան կարելի է ըսել, որ այս ժամանակամիջոցն արտակարգ յառաջադիմութեան շրջան մը եղեր է, և նմանը քիչ անգամ տեսնուեր է ազգաց պատմութեան մէջ։

Երկրորդ շրջանն, որ կէս դարի չափ տևողութիւն ունի, միջին շրջանն է։ Շահ Աբբաս Բ.-ի դահակալութեամբ Ջուղայեցւոց յառաջադիմութիւնն կսկսի յամրանալ ու ջլատիլ. մերթ ընդ մերթ հալածանքներ ի գործ կը դրուին։ Այսուհանդերձ, Ջուղայեցւոց գործառնութիւններն այնչափ ընդարձակ էին և շահերն այնչափ մեծ, որ կորուստների բացը կը ծածկէին։ Սակայն, բռնութիւններն ու հարստահարութիւններն հետզհետէ կը բազմանան և կը սաստկանան, տուրքերն կաճեն և կը բազմապատկուին[1]), որով յառաջադիմութիւնը դադարման կը մատնուայ և յետադիմութիւնն կը սկսի։

Շարդէն իւր առաջին այցելութեան ժամանակ հայոց մէջ 10-ի չափ անձինք գտաւ, որ 500,000 լիվը դրամ ունէին[2]), իսկ միջակ հարուստներն բազմաթիւ էին։ Երկրորդ անգամին պարզապէս կըսէ, որ երկրի հարստութիւնը կիսով չափ պակսեր էր, անշուշտ հայոց մէջ գտած տարբերութիւնն աւելի մեծ պիտի եղած լինէր։ Շահ Հիւսէյնի թագաւորու-

---

1) Շահ Աբբաս Ա.-ի ժամանակ ջուղայեցիք միայն 9000 Ֆրանք տուրք կը վճարեին, իսկ Աբբաս Բ.-ի մահէն ետքը՝ 50,000 սկուդի։

2) Ուրիշ տպագրութեան մէջ «երկու կամ երեք միլիոն» է, իսկ երկրորդ այցելութեան ատեն միայն «մէկ միլիոնէ աւելի», որով երեքը մէկի իջած կը գտնէ։

թեան սկիզբէն մինչ ոգեղանաց յարձակումն, մերձ 30 տարուայ ընթացքին, երրորդ շրջանը կը կազմէ, յետադիմութեան շրջանն է։

Չորրորդ շրջանը գահավէժ անկման շրջանն է։ Այս կը սկսի ոգեղանաց յարձակումով, 1722-էն և կը տևի մինչև Քարիմ խան Զանդի միահեծան տիրապետութիւնը 1757-ին։ Այս միջոցին Զուղա գահավիժաբար յետին աղքատութեան, սակաւամարդութեան և մեռեալ վիճակի կը մատնուի։

Հինգերորդ շրջանը Քարիմ խան Զանդի տիրապետութեան կը զուգադիպէ, երբ հայոց թշուառութիւնը կը թեթեւանայ, ամոքում մը կունենայ և ժողովուրդը կը սկսի շունչ առնել։ Նոր Զուղա, ըստ Քէմֆբրի, վերջինիս այցելութեան ատեն (17-րդ դարի վերջերը), 6,000 տուն կամ 30—50,000 հարուստ ու յառաջադէմ բնակիչ ունէր։

Սպահանի թեմին պատկանող ուրիշ տեղերն, ի բաց առեալ արտասահմանեան երկիրները, թէև ստոյգ տեղեկութիւն չկայ թէ որչափ հայեր կային, բայց ամէն հաւանականութեամբ ջուղայեցիներէ աւելի պէտք է լինէին, շուրջ 40—60,000, որով Սպահանի թեմի Պարսկաստանի մէջ ապրող ամբողջ ժողովրդի թիւը 100 հազարէն պիտի աւելի լինէր։ 19-րդ դարի սկիզբներն, երբ Սըր Զոն Մալքոլմը Նոր Զուղա այցելեց, կըսէ թէ Նոր Զուղան միայն 300 տուն բնակիչ ունէր, իսկ ամբողջ թեմը, ի բաց առեալ Հնդկաստանի, 12,383 հոգի։ Այս թիւն ևս մեծապէս պիտի նուազէր, եթէ գիւղացիք կարենային ընտանիքով գաղթել։ Թէև տղամարդիկ ազատ էին երթալ ուր կուզէին, սակայն կանանց ու աղջկանց իրենց բնակատեղէն մեկնել չէին թոյլատրեր, եթէ ոչ դժուարութեամբ ու մեծ ծախքով։

Վեցերորդ շրջանն կսկսի Աղա Մահմադ շահի գահակալութեամբ և կը տևէ մինչև Նասրէդդին շահի գահակալութիւնը, այսինքն կէս դարէ մի քիչ աւելի։ Քանի որ այս ժամանակամիջոցին մէջ հարստահարութիւններն բոլորովին չէին

վերջացած, այլ մերթ ընդ մերթ երևան գալով, նոր վէրքեր կը բանային, հայերը վերջին դարի վերջերը յետին թշուառութեան ու աղքատութեան հասեր էին, վաճառականութիւն, արհեստ, վստահութիւն աներևութանալու վերայ էին, ուստի անոնք չէին կրնար որևէ յառաջադիմական քայլ ընել և հազիւ հնդկահայոց առատաձեռն օգնութեամբ կրնային իրենց անկեալ վիճակը շարունակել։

Եօթներորդ շրջանը բարւոքման մի շրջան է։ 1848-ին Պարսկաստանի գահը բարձրացաւ Նասրէդդին շահն և այն ատենէ ի վեր սկսաւ ամբողջ երկրի բարւոքումն։ Սոյն իմաստուն վեհապետն արդարութիւնն ու անաչառութիւնն իրեն առաջնորդ ունենալով, այնչափ հոգ ու խնամք ունեցաւ իւր ոչ մահմեդական հպատակների նկատմամբ, որչափ իւր կրօնակիցների համար։ Համայն Պարսկաստանի ժողովուրդի այս հայրախնամ կառավարութենէն ջուղայեցիք ևս օգտուեցան։ Սպահանի թեմի ժողովուրդը մի ուրիշ բարեբախտութիւն ալ ունեցաւ Թադէոս եպիսկոպոս Բէգնազարեանի պէս առաջնորդ ապահովելով։ Առանց մանրամասնութիւններ պատմելու, այս անզուգական առաջնորդի գործունէութիւնն անգնահատելի կը դտնեմ և պարտք կը համարեմ ըսել, որ ջուղայեցիք պէտք է միշտ մեծ երախտագիտութեամբ անմոռանալի պահեն անոր յիշատակն։ Ազգ մը, ժողովուրդ մը, անհատ մը, որչափ վար ինկած լինի, այնչափ աւելի դժուար կը լինի անոր վերականգնումն։ Այսպէս եղաւ նաև ջուղայեցւոց և Սպահանի թեմի համար։ Անոնք այնչափ չքաւորութեան ու տգիտութեան յետին կարգը հասեր էին, որ այդ առաւելութիւններով հանդերձ, յամբաբար կրցան միայն իրենց տխուր վիճակէն ելլել։ Ջուղայեցիք այժմ թէև բաւականին յառաջադիմեր ու իրենց վիճակը բարւոքեր են, սակայն ճոխ ու նախանձելի դրութիւն ունենալէ խիստ հեռու են*)։

---

*) Գոհութեամբ կուզեմ աւելցնել, որ ինչպէս կիմանամ, այժմ (1899) ջուղայեցիք տարունակեր են 1874-էն ի վեր աւելի ա-

ՋՈՒՂԱՅԵՑԻՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հին Զուղայի վերայ խօսած ատեն տեսանք, որ անոր բնակիչներն իրենց վաճառականութեան համար ունեցած արտակարգ ձերքով յաջողեր էին այն արևակէզ, անբերրի և ժայռուտ վայրը հոյակապ շինութիւններով լեցնել և քաղաքը թանկագին ապրանաց մթերանոց ու կեդրոն դարձնել։ Անոնց վաճառականութիւնն անմիջական կամ սահմանակից նահանգների ու տեղերի հետ չէր, այլ շատ հեռաւոր երկրների։ Նոր Զուղայի պատմութեան հեղինակը կը յիշէ հայոց գերեզմանատան մէջ տապանաքար մը տեսած լինել, որ հայոց Ռ (Փրկչական 1551) թուականը կը կրէ։

Հայոց Սպահան գաղթելէ 11 տարի առաջ, Շահ Աբբաս Ա.-ի կողմէ Խոջա Նազարին շնորհուած մէկ հրովարտակէ կը տեսնուի, որ արդէն Հին Զուղայեցիք ընդարձակ վաճառականութիւն ունէին Պարսկաստանի մէջ, քանզի, ինչպէս այժմ, նոյնպէս և այն ատենները, հրովարտակ մը ձեռք բերելը բաւական ծախքի կարօտ էր։ Յարութիւն Տէր Յովհաննիսեան իւր Նոր Զուղայի պատմութեան մէջ ևս, նամակէ մը (որ հայոց 1038 Յուլիս 27-ին գրուեր է), առնելով, հետևեալ քաղուածքը մէջ կը բերէ. «Այս ութ տարի է, իմ եղբայր Սքեանդարն ի վաճառականութեան է գնացեր, գնչանն ի Լահօռայ երկիրն կուտանն»։

Այս գրուածքէն պարզ կերևի, որ Հին Զուղայեցիք Սպահան գաղթելէն առաջ Հնդկաստան կերթային։ Եթէ այդ երկրին մէջ ուրիշ հայեր չգտնուէին և Հին Զուղայի հետ յարաբերութեան մէջ չլինէին, ինչպէ՞ս կարելի էր Յովսէփ վարդապետի եղբօր ձայնը Լահօռի երկրէն առնել։

Սակայն, հայերը Նոր Զուղա հաստատուելով և թագաւորի ընծայած պաշտպանութեան ու քաջալերութեան շնորհիւ հոյակապ յառաջադիմութիւն ըրին և մեծ զարգացում տուին վաճառականութեան, այնպէս որ թէ իրենք արագօրէն անչափ հարստացան և թէ Նոր Զուղան, որ առաջ ամայի մի վայր էր, Հին Զուղայի փոխարէն ամէն տեսակ թանկագին ապրանքների մթերանոց դարձուցին, նպաստելով Պարսկաստանի յառաջադիմութեանն ու հարստութեանն։

Զուղայեցւոց վաճառականութիւնը մէկ կողմէ Հնդկաստանի բոլոր գլխաւոր քաղաքներն և Չինաստանի քանի մը նաւահանգիստներն[1]) և Կեդրոնական Ասիան[2]) ձգելու, միւս կողմէ Թուրքիոյ, Ռուսիոյ և Եւրոպիոյ բոլոր վաճառաշահ քաղաքները[3]) տարածուեցաւ։ Այսպիսով անոնք այն ատեն աշխարհիս ամենամեծ և ամենաառաջին վաճառականներն էին[4])

---

1) Ես հանդիպեր եմ գրուածքի մը մէջ, որի աղբիւրը այժմ չեմ յիշեր, որ 17-րդ դարի մէջ հայերն եկեղեցի ունէին Քանթոն քաղաքի մէջ։ Այս առաջին քրիստոնեայ եկեղեցին է եղեր Չինաստանի մէջ, բայց ետքէն անտերունչ մնալով՝ ուրիշներ գրաւեր են։

2) Շարդէն կրսէ. «Բալխի մեծ դեսպանը զիս շատ կը բախանձէր, որ իւր հետ Թաթարստան երթամ, ինձ խոստանալով որ Բալխի իշխանն ինձ շատ պատիւ պիտի տար եւ ինձմէ շատ ապրանք պիտի գնէր։ Սակայն, ինձ պատմեցին, որ քիչ տարիներ առաջ հայ վաճառականներ իշխանի տուած անցագրի վստահութեամբ Բալխ գնացած լինելով, սպանուեր էին եւ տակաւին անոնց գոյքերն ետ չէին տուած։

3) Ըստ Յարութիւն Տէր Յովհաննիսեանի, Կոստանդ վարժապետ վաճառականութեան վերաբերեալ գիտելիքներն իւր աշակերտաց սովորեցուցած ատեն, երկրագնդիս վերայ տարածուած բազմաթիւ քաղաքների անունները կը յիշեր իբրեւ հայոց վաճառականութեան տեղեր։

4) Ասոնց մէջ ականաւորներն էին՝ Սաֆրազեանք, Աղազարեանք կամ Ղազարեանք, Շահրիմանեանք, Վիլիջանեանք, Խալդարեանք, Քամալեանք, Աղաբաբեանք, Փարսդանեանք, Սարհադեանք, Թարխանեանք, Թաւաքալեանք, Թոփչեանք, Ղալանդարեանք, Աղամալեանք, Ղարամեանք, եւ այլն։

և Սպահան կամ Նոր Ջուղա երկրագնդիս ամենամեծ վաճառականներէն մէկն էր։ Ջուղայեցիք այս յառաջադիմութեան համար ոչ դիպուածի և ոչ ալ բախտի դարձուածքին պարտական էին, այլ իրենց ունեցած հմտութեանն, հաւատարմութեանն ու խնայողութեանը։ Հմտութիւնը կստանային շատ տարիներու համբերատար աշակերտութեամբ։ Վաճառական մը որչափ ինքը հարուստ ու փորձառու լինէր, անհրաժեշտ պէտք ու պայման կը համարէր իւր որդին յատուկ ուսուցիչներու ձեռքի տակ կրթելէ ու վարժեցնելէ ետքը ուրիշ վաճառականի մը քով աշակերտութեան դնել, անոր կատարեալ իրաւունք տալով որ իւր դաւակին հետ վարուի ինչպէս սոսկ ծառայի կամ աշակերտի մը հետ, որևէ անհոգութեան աչք չդոցէ և ընթացքին ու գործերին համար խիստ լինէ։

Այսպէս, երիտասարդը կը սովրէր ոչ միայն վաճառականութեան վերաբերեալ գիտելիքներն, այլ որ ինչ կարևորագոյնն է կը վարժուէր չափաւորութեան և կուսանէր գնահատել դրամի ու դրամագլխի իրական արէքը։*)

*) Միթէ զարմանալի չէ՞, որ 3–4 դար առաջ Ջուղայեցիք մասնաւոր ուսման առարկայ կընէին վաճառականութեան արուեստը, մանի որ այսչափ լուսաւորեալ ու յառաջադէմ ժամանակի մէջ Պարսկաստանի հայերն առանց որեւէ նախնական ուսման, պատրաստութեան ու աշակերտութեան, վաճառականութեան կը մտնեն։

Դժբախտաբար Պարսկաստանի եւ գլխաւորաբար Ատրպատականի հայոց մէջ ոմանք թէեւ շատ տարիներ մեծ աշխատութեամբ, համբերութեամբ եւ վերին ասիականի խնայողութեամբ կը յաջողեն դրամագլուխ մը կազմել կամ կարողութիւն մը ձեռք բերել, բայց անխոհեմաբար կը յանձնեն վարժարանէ նոր ելած եւ վաճառականութեան անտեղեակ իրենց զաւակաց՝ վաճառականական մեծամեծ գործողութիւններ, երբեմն ոչ միայն իրենց ամբողջ կարողութիւնն, այլ եւ ուրիշներինն եւս։

Այս պատանիներ պարզ երկրէ մը փոխադրելով աւելի քաղաքակրթեալ եւ ամէն տեսակ հրապոյրներով ու շռայլութիւններով լի երկիրներ, զերծ լինելով անմիջական հսկողութենէ ու համարակալութենէ, մանաւանդ չիմանալով իրենց հոր սենք առ սենք կամ ըստ ատրպատականցւոց բացատրութեանը՝ «բիսի–բիսի» շահած դրամի արժէքն եւ չկրնալով դիմանալ այդ երկիրներու շռայլութեանց, հրապուրանաց, կենքարկուին անոնց հոսանքին եւ ոմանք գահավէժ անկման մը կառաջնորդուին։

Ջուղայեցի վաճառականներն ընդհանրապէս չափաւոր ու խնայող էին, թէև խիստ հարուստներն մերթ ընդ մերթ շռայլութեան ցոյցեր կընէին։ Ջոն Ֆրայզըր, որ 1680-ական թուերին Սպահան այցելեց, հայոց վերայ խօսած ատեն վաճառականաց սակաւապետութիւնն ու ճարտարութիւնը հետևեալ կերպով կը գովէ.

«Ասոր համար է, որ հայերն առտնին տուր և առի ամէն կնճիռներու ու նրբութիւններու մէջ հմտացած լինելով, կրնան ճամբորդել մինչև ամենահեռու թագաւորութիւններն, անդ իրենց ազգականներու գործակատարները լինելով, իրենց ճարտարութեամբ կը դառնան մեծահարուստ մարդ։ Սակարկութեանց տեղեակ լինելով, կը խնայեն միջնորդաց վճարելի վարձը։ Տնտեսութեան ամէն արուեստներն ուսանելով, անոնք կը ճամբորդեն 50 շիլինով, մինչ մենք չենք կրնար նոյնը ընել 50 թումանով։ Ճամբայ կիյնան կարծրեփ հաւկիթներով ու տիկ մը գինիով, իբր պաշար, որն կը տէր Սպահանէ մինչ նաւահանգիստը։ Ամանագին դրաստ մը կը հեծնեն, զորն կամ կը վաճառեն ծովեզրն հասած ժամանակ, կամ նաև կը դնեն՝ առաջ երթալու համար, դրաստի կերն լինելով միակ ծախքն։ Առանց սպասաւորի կը ճամբորդեն և իրենց ծածկոյթը միաժամանակ իբր անկողին կը ծառայէ իրենց։ Վաճառականութեան ասպարէզը կը մտնեն բարերարի մը օգնութեամբ, որի դրամով հեռաւոր երկիրներ կերթան բախտ որոնելու, վերադարձին շահի 1/4-ը իրենց պահելով, Այսպիսի կէտէ սկսելով։ Երբեմն մեծ հարստութիւն կը դիզեն թէ իրենց և թէ բարերար տէրերի համար։

«Աստ (ի Զուղա) հայ քրիստոնեաները 6,000 ընտանիք է աւելի են (բացի գիւղերն ցրուած երկրագործներէ). բոլորն իրենց պատրիարքին կը հետեւին, քանզի այսպէս կարգադրած էր Շահ Աբբաս թագաւորն, որ զանոնք գրկեց իրենց իշխաններէն և ազատեց թուրքական գերութենէն։ Հանելով զանոնք Երեւանէն, Դավրէժէն և Ասորիքէն (*), իրենց բնիկ երկրէն, նա հայոց փոխադրեց ի Զուլֆա և հովանաւորեց թագուհի մօր պաշտպանութեան տակ, հաստատելով անոնց համար ևս իրենց իրաւունքներն ու արտօնութիւններն՝ գրաղաշտականների ունեցածէն աւելի բարձր կերպով մը, ի բաց առեալ փոքրիկ պարագաներն, որով անոնք դարձան ոչ միայն թշնամիներէ զերծ, այլ և բարձրացուցին Սպահանի փառքն իրենց անձանձիր աշխատասիրութեամբն։ Անդ այս ատեններն անոնցմէ շատերը վարկաւոր վաճառականներ էին, հարիւր հազար թումանի տէր (իւրաքանչիւր թումանը 3 1/3 անգլիական լիրա է)։ Այս տէրութեան (Սաֆաւեան) հովանաւորութեան տակ անոնք այնչափ հզօրապէս կաճին հարստութեամբ և ազատութեամբ, որ մինչ իրենք հանդիստ իրենց երկրին մէջ կը նստին, իրենց գործակատարները գուրսերէն, երկրիս ամէն կողմերէն, կը վերադառնան իրենց մեղւանոցները՝ մեղրով բեռնաւորուած։

«Այս գործառնութեանց իրենք վարժուելէ ետքը, կը կրթեն նաև իրենց զաւակները, փորձառու խնամակալների և վստահելի առաջնորդների խնամքի տակ, որք կը սովրեցնեն իրենց սաներին նախ ապրուստ շահել և ապա կը թոյլատրեն ծախք ընել... Անոնք աւելի հաստատուն են իրենց կրօնքին մէջ, քան թէ ազգային սովորութեանց մէջ... Անոնց կիները քիչ շփում ունին մարդերի հետ, այնպէս որ աստ աւելի քան ուրիշ որևէ տեղ կիները ճշմարտապէս կիներ են և ոչ այլ ինչ»։

Զուղայեցւոց գործունեայ և ձեռնարկող ոգին լրիւ գընահատելու համար պէտք է ի մտի ունենալ այն ժամանակուայ հաղորդակցութեան միջոցները։ Ճամբաներն ընդհանրապէս անապահով էին և չունէին արդի դիւրութիւններն ու արագութիւնը։ Ճամբորդութիւնը տարին մի անգամ և յատուկ կարգադրութեամբ կը լինէր։ Ճամբորդներն իրենց վաճառքներն իրենց հետ առնելով, որոշեալ տեղ մը կը հաւաքուէին, և ամէնքը միանալով՝ մեծ կարաւան մը կը կազմէին։ Բեռնատար գրաստների թիւը 2000-ը կանցնէր, իսկ ճամբորդների, ձիապանների և ուղեկից հրացանակիրների թիւն ևս այդ թիւին կը մօտենար։ Այս կարաւանի ղեկավարութիւնը կը յանձնուէր փորձառու անձի մը, որ կը կոչուէր կարաւանապետ։ Այս պետը կը տնօրինէր ամէն բան և կարաւանին մէջ ամէն ոք պարտաւոր էր ասոր հրամանին հնազանդիլ։ Կարաւանն ունէր նաև 2—3 շաւուշ, որք թէ ուղեցոյցի պաշտօն կը կատարէին և թէ կարաւանի մեկնելու և իջևանելու ժամն ու տեղը կորոշէին։ Կարաւանն իւր պահպանութեան համար կունենար հրացանակիրներ, որք կարաւանի առջևէն, յետևէն ու կողերէն երթալով, զայն կը պաշտպանէին աւազակաց յարձակման դէմ, և շատ անգամ մի ճամբորդութիւն առանց քանի մը արիւնահեղ մարտի չէր կատարուեր*)։

Այս կարաւանն Սպահանէ մեկնելով՝ կանցնէր հետզհետէ Մեշեդ, Հերաթ, Ղանդահար, և կը մտնէր Հնդկաստան, որ

*) Շարդէն կը պատմէ, թէ իւր Սպահան եղած ատենը լուր հասաւ, որ Սպահանի կարաւանը Հնդկաստանի սահմանագլխին 3 օր մնացած, աֆղանների յարձակման ենթարկուեր էր։ Աւազակներն, որք թիւով 500 էին, ամէնքն ալ հեծեալ ու զինուած էին։ Կարաւանն 200 ուղեկից պահապաններ ունէր։ Ամբողջ կարաւանն 2000 անձէ կը բաղկանար, մասամբ մը հայերէ, բայց մեծագոյն մասամբ հրնդիկներէ, որոնց գաւազան մը երկիւղ կը ներշնչէ։ Կուին մէջ 11 հոգի սպաներ էին։ Գողօնը մի քանի միլիոն կը հաւէին։ Թագաւորին ներկայացուած հաշիւը, զոր 60-է աւելի անձինք ստորագրեր էին, 13,500,000 լիվրի կը բարձրանար։ անոնք կը հաւաստէին, որ այս միայն կէսն էր։ Տգէs աւազակներն ոսկին ու արծաթը միասին խառնած, կշիռով իրենց մէջ բաժնած էին։

ճիւղերի կը բաժանուէր։ Այսպէս, Ջուղայեցի վաճառականները տանելով ամէն աշխատութիւն ու խնդրութիւն, յանձն առնելով ամէն վտանգ, շատ տարիների մեծ համբերութեամբ, յարատևութեամբ ու խոհեմութեամբ իրենց գործառնութիւններն առաջ տանելով՝ կապահովէին իրենց յառաջադիմութիւնը, որ թէ ասիացւոց և թէ եւրոպացւոց բարի նախանձը և զարմանքը կը շարժէր։

Ջուղայեցի վաճառականաց Պարսկաստանին տուած օգուտն և ըրած ծառայութիւններն ուրիշ կառավարութեանց ուշադրութիւնն ևս գրաւեցին։ Այսպէս, 1688-ին, հռչակաւոր Արևելեան Հնդկաստանի Ընկերութեան տնօրէնն ուզելով որ հայերը փոխարէն Պարսկաստանի և Ռուսաստանի կամ Թուրքիոյ վրայով իրենց վաճառքներն Եւրոպա փոխադրելու, անգլիական նաւերով փոխադրեն, մասնաւոր պայմանագրութիւն մը կնքեց քալանթար Խոջա Փանոսի հետ։ Այս պայմանագրութեամբ հայերը կը վայելէին անգլիացւոց հաւասար արտօնութիւններ և ազատ էին ինչ աւան, քաղաք կամ գօրքի պահականոց բնակելու, կալուածներ գնելու և վաճառելու, Ընկերութեան նաւով Հնդկաստանէ ուրիշ երկիրներ և այդ երկիրներէն Հնդկաստան երթևեկելու, Հնդկաստանի բոլոր նաւահանգիստները, հարաւային ծովերը, Չինաստան, Մանիլլա և ամէն տեղ մուտք գործելու և առուտուր ընելու, անգլիացւոց տուած հաւասար վարձով ու մաքսով, առանց արգելքի, իրենց հաւատը պաշտելու և քաղաքական պաշտօն ու աստիճան ընդունելու. տնօրէնը յանձն կառնէր պաշտօնի մէջ չպահելու այն կուսակալն, որ այս պայմանը չուզէր գործադրել։ Այս արտօնութիւնների փոխարէն հայերն ալ յանձն կառնէին իրենց վաճառքներն անգլիական նաւով Եւրոպա փոխադրել։

Այս արտօնութիւնները և ազատութիւնները գնահատելու համար պէտք է իմանալ, որ այս ժամանակ ո՛չ միայն ուրիշ ազգեր չէին կրնար մուտք գործել և առուտուրով զբաղ-

ուիլ Ընկերութեան իրաւասութեան տակ եղած երկիրների մէջ, այլ մինչև անգամ բացի Ընկերութեան վերաբերեալ անդամներէ ու գործակատարներէ, ուրիշ անգլիացիք ևս չէին թոյլատրուեր ազատօրէն վաճառականութեամբ զբաղիլ։ Այս պայմանագրութենէն և ուրիշ գտնուած հատ ու կտոր պայմանագրերէ դիւրին է իմանալ, որ հայերի Հնդկաստանի մէջ ունեցած վաճառականութիւնն որչափ ընդարձակ է եղեր, որպէսզի Արևելեան Հնդկաստանի Ընկերութիւնը, որ մեծ տէրութեան չափ հարստութիւն ու զօրութիւն ունէր, և որն քիչ ատենէ ետքն իրօք մեծ ու բազմամարդ Հնդկաստանի տէրը դարձաւ, ինքն առաջարկէր և ջանք ընէր հայոց հետ պայմանագրութիւն կընքել և այնչափ արտօնութիւններ և առանձնաշնորհումներ տալ։

Ոչ միայն Հնդկաստանի այլ և Ռուսիոյ մէջ, Ջուղայեցւոց գործունէութիւնն այնչափ տարածուեցաւ, որ այս երկրի իշխանների յատուկ ուշադրութիւնը գրաւեց, և 17-րդ դարի առաջին կէսէն սկսեալ այդ երկրի կայսրերը քաջալերելու համար հայերն, սկսան մասնաւոր հրովարտակներով առանձնաշնորհումներ տալ և զանոնք յարգելով, տօն օրերն իրենց ներկայութեանն ընդունել։

Կայսերաց կողմէ այս յատուկ ուշադրութիւնն ու արտօնութիւններն շարունակեցան, և Մեծն Պետրոս ուզելով միանգամայն Ջուղայեցիներն առ ինքն գրաւել, յատուկ հրովարտակով անոնց իրաւունք շնորհեց Ռուսիոյ հպատակ գրրուելու։ Ջուղայեցւոց վաճառականութիւնը ծաղկեցաւ ու աճեցաւ մինչև Շահ Հիւսէյնի թագաւորութեան սկիզբն, երբ Ջուղայեցիք շատ հարուածներ ստացան և հարստահարութիւններ կրեցին։ Այսուամենայնիւ անոնց վաճառականութիւնն անմիջական անկում չունեցաւ։ Հայ վաճառականաց բախտը միայն Պարսկաստանի մէջ ետ չգնաց, այլ Հնդկաստանի մէջ ևս անարդարութեան ու նախանձի առարկայ դարձաւ անգլիացիների կողմէն։ Այս լսենք բուն անգլիացւոյ մը բերնէն։ Ուի-

լիամ Բոլտ իւր «Խորհրդածութիւնք հնդկական գործոց վերայ» գրքին մէջ կըսէ. «Անոնք (հայերն) ամենամեծ կերպով օգտակար էին Արևելեան Հնդկաստանի Ընկերութեան գործակատարներին ու գործիչներին թէ արտածելի և թէ ներածելի ապրանաց գնման ու վաճառման համար։ Ընկերութիւնը յատկապէս հայի մը պարտական էր 1717-ին Բենդալի, Մադրասի և Սուրաթի վերաբերմամբ հրովարտակներ ձեռք բերելու համար»։

Այս պարզապէս կը տեսնուի թէ նոյն հրովարտակներէն, թէ մեծ վեզիրի հրամաններէն և թէ հայ վաճառական Խոջա Սահրադի Դելհի եղող գործակալներէն մէկի նամակներէն, որք ուղղուեր էին Ընկերութեան նախագահին ու ժողովին։ Ընթերցողին պէտք չէ ծանօթացնել, որ այդ հրովարտակներով շնորհուած արտօնութիւնները միայն հիմ դրին Ընկերութեան իբր վաճառականական մարմնի մը ապագայ յաջողութեան ու մեծութեան։ Հայերը, որ մեծապէս օգտակար եղած էին այդ Ընկերութեան, ամէնէն շատ ձախորդ վիճակի ենթարկուեցան նոյն Ընկերութեան կողմէ։ Բայց այն գրկողութիւններն, որոնց ենթարկուեցան հայերը, միայն առևտուրին չէին վերաբերեր։ Արդարութեան ամէն դուռ անոնց առջև փակուեցաւ Բենդալի մէջ»։

Այսու ամենայնիւ Ջուղայեցիք շարունակեցին և մնացին ժամանակ մը ևս աշխարհի վաճառականաց առաջին կարգի մէջ։

Սաֆաւեան տէրութեան կործանումն և հետագայ դէպքերը անոնց անկման, նուազման, և այլ երկիրներ, գլխաւորաբար Ռուսիա ցրուելուն և Ջուղայի վաճառականութեան կորստեան պատճառ եղան։

Ջուղայեցւոց վաճառականութեան այս համառօտ յիշատակութիւնը կը վերջացնեմ Քէր Փորթրի մէկ ճարտար նկարագրութեամբ, մնացեալը թողնելով Նոր Ջուղայի պատմութեան, ուրկէ ցանկացողները կրնան աւելի ընդարձակ տեղեկութիւն առնել։ Քէր Փորթր 1818 թուականին կաթուղիկոսէն

առած յանձնարարական նամակն Սպահանի եպիսկոպոսին յանձնելու առիթով կընէ հետևեալ խորհրդածութիւնները, որոնցմէ մէջ կը բերենք քանի մը հատուած.

«Մտանք Ջուլֆա. ոչինչ կարելի է ըսել աւելի բացատրիչ այս երբեմնի բազմամարդ վաճառատեղւոյն նկատմամբ, քան այն, որ անոր ճակատագիրն Սպահանի մէջ տեսածիս համառօտ բովանդակութիւնն է։ Անոր 10,000 բնակիչներն նուազելով՝ 300 թշուառ ընտանիքներ մնացեր են։ Պէտք չէ տարակուսիլ, որ այս աշխատասէր, հարուստ և ազատական հայերին պարտական եղաւ Սպահան իւր վաճառականական յաջողութիւնը և հետևապէս իւր ճոխութիւնը, շքեղութիւնը և զօրութիւնը։ Ցայտնի է, որ ուր առևտուրն շատ կը ծաղկի, այնտեղ երկիրն աւելի բազմամարդ, հարուստ ու երջանիկ է և ունի ամենամեծ իշխողութիւն ուրիշ ազգերի վերայ. բայց ուր որ վաճառականի, արհեստաւորի շահերը չեն ապահովուած, այնտեղ առևտուրն չի կրնար ծաղկիլ։ Ուստի ոչ մէկ կառավարութիւն կրնայ իսկապէս հարուստ լինել և հետևապէս զօրաւոր, եթէ հպատակների ստացուածքը պաշտպանելու համար օրէնքներ հաստատուած չեն մինչև անդամ ի՛նքն դէմ։

«Մեծն Շահ Աբբաս այս ըրաւ այն առանձնաշնորհումներով, որ ընծայեց հայոց և բարեբախտ արդիւնքը յայտնի եղաւ։ Այդ ժամանակէն մինչև Շահ Հիւսէյն, որն աֆղան արշաւանքի ատեն թէ զանոնք և թէ զինքն լքանել տուաւ, այս վաճառականներն առաջին կարգի առաւելութիւնները կապահովէին տէրութեան համար։ Ցիրաւի, աֆղանների առաջնորդ Մահմուդի կողմէ Սպահանի և իւր արուարձանների երկարաձգեալ և ահռելի պաշարման բոլոր ժամանակն այս դաղթականների ընթացքը պատշաճ էր քաջասիրտ ու ազնիւ ժողովրդի մը և մեզ խորհել կը տայ, որ եթէ դժբախտ միապետը ժամանակ մը իւր մայրաքաղաքին պաշտպանութիւնը այս երախտագէտ ու անվեհեր մարդոց վստահացած լինէր, հաւանական է որ Սպահան ազատուած լինէր և ոչ մի աֆղան չպի-

տի վերադառնար իւր երկիրն, եղած պարտութիւնը պատմելու համար։ Բայց թագաւորի խորհրդականները բռնւեր էին տկարութեամբ և նա անյաջողութեան կը մատնւէր իւր ամէն ձեռնարկներին մէջ։ Քաղաքի ժողովուրդը մատնւած էր հովին կամ սուրին, և Զուլֆայի արուարձանը այդ խորհրդատուների չար դիտումով զրկւած էր իւր զէնքերէն, որպէսզի իւր բնակիչներով առաջին որսը լինէր աֆղանների արիւնալից ու յափշտակող ձեռքերին մէջ։ Մահը յայնժամ խողխողեց աջ ու ձախ, և քանի որ ամէնէն ազնիւն ու լաւն միշտ ինքզինքին առաջ կը նետեն այսպիսի յարձակումների ատեն, յարգի դէմքերէն քիչերն ապրեցան՝ Զուլֆայի հայ վաճառականի հին բարի անունը պահելու համար։

«Մենք այժմ իզուր կը փնտռենք քաղաքի այս աւերակների և անոր ժողովուրդի մէջ վաճառականութեան ճշմարիտ ոգւոյ պէս բան մը։ Ամէն գործառնութեանց մէջ խաբէութեան ու խորամանկութեան թշուառ սկզբունք մը կերևի և քանի որ մարդ մը հազիւ կրնայ մէկ անդամէն աւելի խաբել, բայց միայն յիմար մէկը, իւր պատիւը և իւր խիղճը առևտուր ընող ողորմելին շուտով կը թաղւի սովամահ, կամ եթէ այդ նւաստ եղանակներով դրամ դիզէ, զայն կը վատնէ այնչափ անարժանաբար, որչափ շահեր է։ Բայց Սաֆաւեան տան անկումէն կամ դադարումէն ի վեր պարսկական հայոց յարգելիութեան մէջ տեղի ունեցած այս ընդարձակ փոփոխութիւնը պէտք չէ միայն աֆղաններէն կրած տանջանքներին վերագրել։ Յաջորդ բնիկ իշխաններէն ոչ մէկը փորձեց իւր տէրութեան մէջ այս պատւաստեալ հպատակներն իրենց նախկին օգտակար աստիճանին վերադարձնել և իշխանութիւն ունեցող անձերը շատ անգամ անհոգութեամբ չարիքի վերայ կաւելցնեն հարստահարութիւններն ևս։ Այսպիսի բարեկարգութեան հնարքներն ու միջոցներն և անոր լի ու լի հատուցանող հետևանքներն կարելի է նկատել այն ընթացքէն, որ ունեցաւ Շահ Աբբասը, երբ այս ժրաջան ժողովուրդը փոխադրեց իւր թագաւորութեան մէջ։

«Այն ատեն անոնք, որ խոհական անձնատուութեամբ ինքզինքնին կողոպուտէ ազատեր էին, իրենց զանազան արհեստներն և առևտուրն շարունակելու համար բաւականին ըստացւածք բերին իրենց հետ, իսկ անոնք, որք իրենց դրամագլուխը կորսնցուցեր էին, կամ անոնք, որք դրամագլխի յաւելման պէտք ունէին, աւելի ընդարձակ «սպեքիւլասիոններ» ընելու, այսպիսիներին առատաձեռն և քաղաքագէտ միապետը բացաւ իւր յատուկ գանձատունը և ազատօրէն չափաւոր տոկոսով անոնց փոխ տւաւ այնքան դումարներ, որք հարկաւոր էին անոնց գործի յաջողութեան համար։

«Այսպէս, իրենց շահածի անդորը վայելումի համար ապահովւած, իրենց գործառնութեանց պատիւը զուգընթաց եղաւ իրենց արժանաւորութեան հետ, և հայ վաճառականը Մեծն Շահ Աբբասի ատեն նկատւած էր ամենաարդիւնաւէտ գործակալը Ասիոյ և Եւրոպայի մէջ, հազւադիւտ ապրանքների և անոնց ոսկիով արժէքի փոխադարձ փոխադրութեան համար. կարճ ըսած՝ նա կրնար իրաւապէս առնել այն տիտղոսն, որ քաղաքակիրթ երկիրների մէջ յարգւած է իբր ամէնէն պատւաւոր պաշտօնը հասարակութեան մէջ։ Նա էր այն, ինչ էին Վենետիկի և Ջենովայի վաճառականներն, կամ Անգլիոյ վաճառականներն,— ամէն նկատումով ջէնթլմէն։ Բայց հարիւր տարու անցումը Զուլֆայի կործանման և անոր հաւատարիմ պաշտպանների գերեզմանների վրայէն, այնպէս անհետ ըրեր է այս յիշողութիւններն, որ Շահ Աբբասի հզօր գործակալների արհամարհւած սերունդները չեն համարձակեր իրենց աչքերն բարձրացնել դէպի անոր վեհափառ յաջորդներն։ Անոնք ոչ մէկ դաղափար ունին հանքի մը մնացորդ արժէքին վերայ, որ թէև ծածկւած աւերակով ու փլատակով, կը կարօտի միայն առաջւան պէս ազատական ձեռքով և վստահացող ոգիով բացւելու, որպէսզի ցուցնէ այն ոսկու վտակներն, որ տակաւին իւր երակների մէջ են»...

Այնուհետև Ք. Փորթը կը նկարագրէ հայոց աղքատութեան և սրա հետևանքով անոնց նկարագրի մէջ յառաջ եկած բացասական դիծերու մասին՝ խաբեբայութիւն, արբեցողութիւն, անբարոյութիւն, 12—13 մատաղ տարիքի աղջկանց մարդոց տալու սովորութիւն՝ դրամական հատուցումի փոխարէն, և այլն։

Ապա Ք. Փորթը ուրիշ մանրամասնութիւններ պատմելէ ետքը, զոր թարգմանելն աւելորդ կը համարեմ, բարոյականութեան անկման պատճառը մասամբ իւիք հայ կղերին կը վերագրէ, ըսելով որ հակառակ իւր պարտաւորութեանց, այս անկումին առաջքն առնելու համար ոչինչ չի ըներ և անտարբեր աչքով կը նայի անբարոյական կապերի հաստատման վերայ։

Արդարութիւնը մեզմէ կը պահանջէ դիտել, որ Պարսկաստան բնակող ընդհանուր հայերի բարոյականութեան անկման համար չենք կրնար համաձայնիլ սոյն երևելի համբորդին հետ։ Հաստատելով հանդերձ, որ իրօք առաջները մէկ երկու քաղաքների քանի մը աղքատ մայրեր կորսնցնելով իրենց նախնեաց անարատ բարոյական զգացումներն, երբեմն կը համապատասխանէին օտարական հեղինակի նկարագրութեան, սակայն ինչ կը վերաբերի ընդհանուրին, անոր դիտողութիւններն ճշմարիտ լինելէ անհունապէս հեռու են իրականութենէն։ Մատների վերայ համարուող աղքատ ընտանիքների բարոյականութեան անկման մէկ գլխաւոր պատճառն նոյնիսկ Եւրոպայի կարգ մը վատաբարոյ անհատները համարելու է, որք շռայլ լինելով, իրենց ճոխութեամբ կամ դիւրաշահ արծաթներով, մերթ կը յաջողէին աղքատ և դոյապրուստ հայթայթել չկրցող ծնողներ շլացնել և մոլորեցնել մայրական սուրբ վարմունքէ և ուղիղ համբայէ։

Գալով կղերական դասի անտարբերութեան, այս միայն ճիշտ կրնայ լինել մի քանիսի և ոչ ընդհանուրի նկատմամբ։ Անոնցմէ շատերն մերթ ընդ մերթ ջանացեր են արգելք դնել ապաբարոյ կապերի դէմ, սակայն պարտելով բարձրագոյն ու զօրաւորագոյն ազդեցութիւններէ, պարտաւորուեր են ետ կենալ իրենց բարի ջանքերէն։

Այս առթիւ կարելի՞է իրական դէպք մը նկարագրել։ Ատրպատականի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Սաթունեան, 1854-ին, ուզելով սանձել անբարոյական կապերի տարածումն, ըստ ասիական նախկին սովորութեան, հոմանի՞կիներէն*) մէկն առաջնորդարան բերել տալով, մազերն ածիլել տուաւ։ Անյաջողաբար այս կնոջ տարփածուն եւրոպացի՞մի բարձր պաշտօնեայ էր, որ անմիջապէս դիմելով Ատրպատականի կուսակալ Համզա Միրզա արքայազնին, զայն համոզեց, որ Առաջնորդի արարքն ոչ միայն քրիստոնեաների սովորութեան հակառակ է, այլ նաև առաջնորդի իրաւասութենէն դուրս է, որով և նոյն իսկ կառավարութեան իրաւասութեանը կը վնասէ։ Կուսակալն առանց ուրիշ քննութեան, Առաջնորդի փոխարէն հայերի քահանաներէն երկուքը և սպիտակամօրուք երևելիներէն երեքը ձերբակալել տալով, բանտարկեց։

Ասոնք մի քանի օր բանտը՞մնալէ ետքը, արձակման ուրիշ հնար չգտան, եթէ ոչ դարձեալ նոյն եւրոպացի պաշտօնեային դիմել և աղերսել, որ իրենց ազատման համար միջնորդէ։

Ես վստահ եմ, որ եթէ՞հռչակաւոր համբորդ հեղինակը ասոր նման շատ մը պարագաների ծանօթ՞լինէր, իւր պարսաւների մէկ մեծ մասն ևս պիտի՞ուղղէր՞եւրոպացի այն ցո-

*) Այսպիսի կիներ «պահծու» կը կոչին։ Այն տարբերութեամբ սովորական պահծուներէ, որ Պարսկաստանի մէջ պահծուն իւր տարփածուի տունը կը բնակէր եւ երբեմն այս ապօրինի կապը ետ տարիներ տեւելէ ետքը կը խակուէր եւ երբեմն օրինաւոր ամուսնութեամբ վերջ կը գտնէր։

փակեաց դասակարգին, որ պատճառ կը դառնայ խեղճ ու աղքատ մայրերի մոլորութեան և անմեղ կոյսերի սայթաքումին*)։

*) Ուրախ ենք աւելցնելու, որ Ք. Փորթրի նշած ժամանակէն ի վեր այս ապօրինի կապերն հետզհետէ նուազելով, այժմ այսպիսի դէպքեր խիստ եւ խիստ հազուագիւտ են։

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Ջուղայեցիք որչափ որ եկեղեցիներ շինելու մեծ փափագ ունեցած են, կրթական հաստատութիւններ կառուցանելու համար նոյնչափ հետաքրքրութիւն ցոյց տուած չեն։ Գուցէ ասոնց իրական կարևորութիւնն ևս չէին զգացեր։ Սկիզբները վանքի բակին մէջ հասարակ դպրոց մը միայն ունեցեր են և ետքէն մէկ երկուքն ևս աւելցուցեր են։ Մանկանց կրթութիւնն առհասարակ քահանայից թողուած էր, որք իրենց տների մէջ աշակերտաց կարդալ-գրել կը սովորեցնէին։ Սակայն, Սաֆաւեան տէրութեան անկումէն ետքը այս դպրոցները գոցուեր, կամ բոլորովին լքուեր էին։

Կանոնաւոր դպրոցի հիմնադրութիւնն կսկսի 19-րդ դարի երկրորդ քառորդի սկիզբներէն։

Մադրասի հայ երևելի վաճառականներէն պր. Գրիգոր Սամեան 1833-ին քսան հազար ռուփի (մերձ 2,000 անգլիական լիրա) կը կտակէ այն պայմանով, որ այս գումարը իւր առևտրական տան մէջ մնայ և անոր տոկոսով Նոր Ջուղայի մէջ իւր անունով դպրոց մը հաստատուի։ Տարի մը ետքը վարժարանը կը հիմնեն և քիչ ետքը Մեսրոպ Դաւիթ Թաղիադեանց գլխաւոր ուսուցիչ կը կարգուի։ Մերձ երկու տարի լաւ ընթացքով շարունակելով՝ բաւականին արդիւնք կը տայ և ապագայի համար մեծ յոյսեր։ Սակայն, Թաղիադեանցի մեկնելէն ատեն մը ետքը, 1839-ին, դպրոցը կը փակուի։ 1840-ին նորէն կը բացուի Յովհ. Զօրաբեանի գլխաւոր ուսուցչութեամբ,

այս անգամ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ բակին մէջ։ Այս կը տևէ մինչև 1853, երբ Սամեանք սնանկանալով՝ դրամագլուխը կը կորսուի, որով և դպրոցն ընդմիշտ կը փակուի։

Առաջնորդ Յովհ. Սարէնեան 1844-ին հոգևոր մի դպրոց հիմնեց ազգասէրների նպաստով և վանքի եկամուտն աւելցնելու վերայ վստահանալով։ Սակայն, 3 տարի ետքը մուտքի պակասութեան պատճառով կը փակուի։

1843-ին Կալկաթայի Աբգարեանց տան և ուրիշ հայրենասէր հայի մը մասնակցութեամբ, որք տարեկան 130 թուման նպաստ նշանակեցին, դպրոց մը բացուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ բակին մէջ, ուր 60—80 մանուկներ ընկլսան յաճախել։

1853-ին Թադէոս արքեպիսկոպոսի ջանքով ու յորդորանքով երկու զատ դպրոցներ ևս բացուեցան։ Առնցմէ մէկը Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ բակին մէջ, Բաթաւիա բնակող տիկին Մարիամ Յ. Յարութիւնեանի և իւր քոյր օրիորդ Թագուհի Մանուկեանի բարերարութեամբ, որով տարեկան 400 ռուփի իբր նպաստ սկսան տալ. երկրորդն հիմնուեցաւ Ս. Մինաս եկեղեցւոյ բակին մէջ, որի հիմնադիրն եղաւ ջաւայաբնակ պ. Մարգար Սուքիասեանն, տարեկան 300 ռուփի նպաստով։ Սոյն երկու դպրոցների մէջ մերձ 100 մանուկներ կը սովորէին ընթերցանութիւն, վայելչագրութիւն, քերականութիւն և թւաբանութիւն։

Գրիգորիս եպիսկոպոս 1873-ին բոլոր դպրոցների մուտքերն միացնելով, հեռաւոր թաղերի մէջ երկու դպրոցներ նախակրթարանների վերածեր էր և յառաջադէմ աշակերտներն Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցին մէջ ժողովելով՝ ասոր աւելի բարձր դիրք տուեր էր։

Այս դպրոցին մէջ, Նոր Ջուղա իմ այցելութեան ատեն (1874 թ.), կը սովորեցնէին հայերէն ընթերցանութիւն, վայելչագրութիւն, քերականութիւն, աշխարհագրութիւն, թւաբանութիւն, պարսկերէն ու անգլիերէն։ Աշակերտներն վերջին

լեզուի ուսման մէջ աւելի յառաջադէմ էին, քան թէ միւս առարկաների մէջ։

Այս թւականէն քանի մը տարի ետքը Ջուղայեցիք շատ մեծ ծախքով հոյակապ ու ընդարձակ շէնք մը կառուցին, որին Կեդրոնական Դպրոց անունը կարելի է տալ։

ԱՐՀԵՍՏՆԵՐ

Թէպէտ եւրոպացի ճամբորդներն Ջուղայեցւոց վաճառականութեան վերայ միայն խօսեր են և անոնց ձեռագործ արհեստների վերայ գրեթէ ոչինչ չեն հաղորդած, բայց տարակոյս չկայ, որ հայերը դէթ մի քանի արհեստների մէջ յառաջադէմ եղեր են։ Քաջ գիտենք, որ Սպահան գաղթող հայերի մէջ բազմաթիւ քարակոփներ կային, զորս Շահ Աբբաս Ֆարահաբադ դրկեց իւր պալատին համար քար տաշելու։ Անոնց ճարտարութեան օրինակներն դեռ կարելի է տեսնել Հին Ջուղայի դերեզմանոցների մէջ, ուր կերտուած են շատ մը դեղեցիկ տապանաքարեր, բաւականին ճարտարութեամբ։

Ջուղայի Ս. Փրկիչ եկեղեցւոյ կրօնական նկարները հայ արհեստաւորների գործ են և նոյնիսկ եկեղեցիների շինութեան ձևէն մակաբերելով, անհաւանական չէ կարծել, որ ճարտարապետաց մէջ հայեր ևս եղեր են։ 17-րդ դարի մէջ, երբ ռուսները նոր կը ջանային արհեստները ծաղկեցնել իրենց երկրին մէջ, հայերէն շատերը կը հրաւիրուէին և հրովարտակներով առանձնաշնորհումներ կը տրուէին անոնց, որ գործարաններ հաստատեն և ռուսներին արհեստներ սովորեցնեն։ Յատկապէս յիշատակութեան արժանի է մետաքս ներկելու արհեստը։ Լոնդոն, Սուրհ Քենսինկթրնի թանգարանին մէջ պղընձէ ձուաձև սկուտեղ մը կայ, որ խիստ գեղեցիկ էմայլով պատած է. տեղը ճերմակ է և կեդրոնը ծաղկեփունջերով զարդարուած. շրջապատը բոլորշի կերպով հետևեալ արձանագրու-

թիւնը կայ. «Շինեցաւ ի վայելումն Մելիք Յովսէփ իշխանին հայոց, ի թուին Փրկչին 1776»։

Այս գրուածքին շուրջը ևս ծաղիկներով զարդարուած է։ Էմայլի նրբութիւնը, ծաղիկների իրարու շղթայումն և գրերի պարզութիւնը յայտնապէս կը ցուցնեն հայերի այն աղմկալից ու անկեալ ժամանակի մէջ անդամ այս արուեստին մէջ ունեցած մեծ հմտութիւնը։

Սոյն սկուտեղի նման մէկ ուրիշն ալ տեսած եմ Փարիզ, պր. Մարթինօ Թօթքանիանի քով, սակայն մոռացմամբ վերայի արձանագրութիւնն չեմ օրինակած։ Բացի ասոնցմէ, քանի մը արոյրէ գաւաթների հանդիպեր եմ, որք բաւականին զեղեցիկ կերպով քանդակագործուած էին։ Ասոնցմէ մէկին վերայ գրուած էր. «Ի վայելումն Մօշա Յովսէփի... ի թուին 17...*)։

ՀԱՅ ԶԻՆԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Շահ Աբբաս Ա. ուզելով «ղզլբաշ» կոչուած զինուորների ազդեցութիւնը պակսեցնել և կոտրել, որք դարձեր էին խիստ անկարգապահ և աւելի ժողովուրդին ահ ու սարսափ կը պատճառէին, քան թէ թշնամեաց, անոնց թիւը 60,000 է 30,000-ի իջեցուց։ Անոնց պակասը լեցնելու նպատակով նոր զօրաբաժին մը կազմեց 10,000 ձիաւորէ և 12,000 հետեակէ։ Ասոնք իրենց թոշակն առանձնաբար արքունիքէն կստանային և կը գտնուէին այն սպաների հրամանի տակ, զորս թագաւորը պատշաճ կը համարէր կարգել։

Այս զօրաբաժնին պատկանող ձիաւորները «Ղօլլար» կը կոչուէին, թէև այս, ըստ բառական մեկնութեան կը նշանակէ usrուկներ, բայց ըստ էութեան մի պատուաւոր կոչում էր, քանզի ղօլլարները կը ճանաչուէին իբր արքայի անձնական

*) Կէտանիւ տեղերն աւրուած լինելով, գրերն անընթեռնելի էին։

պահապանները։ Հետեակները «բոնֆանիչի» (հրացանակիր) անունը կը կրէին և առաջինն եղան, որք Պարսկաստանի մէջ կանոնաւոր կազմակերպութիւն ստացան։ Կը կարծուի, որ Շահ Աբբասի գլխաւոր նպատակն եղած է անոնցմով դիմադրել Թուրքիոյ ենիչերիներին, բայց անոնք ուրիշ կերպով ալ օգտակար եղան, քանի որ անոնք կազմեցին միապետին համար պաշտպանութիւն իւր ազնուականների կամայականութեանց դէմ։ Այս զօրաբաժինը գլխաւորաբար կազմուած էր Վրաստանի և Հայաստանի գերիներէն, որք ի սրտէ կամ առերեսս կրօնափոխ եղեր էին, մեծ ատելութիւն կը տածէին Թուրք դնդերի դէմ։

Սաֆաւեան տէրութեան շրջանին մէջ այս զօրաբաժինը կար։ Անոր անկումէն ետքը, Նադեր Շահ ուրիշ դունդ մը կազմեց քրիստոնեաներէն և գլխաւորաբար հայերէն։ Գրութեանս թւականէն մինչև կէս դար առաջ հայոց խումբ մը կար, բաղկացած 200 հետեակներէ և 40-ի չափ թնդանօթաձիգներէ, որոնց սպաներն ու հրամանատարներն ևս հայեր էին։ Ասոնցմէ շատերն ըստ պահանջման, պետական զօրաց ևս կը հրամայէին։

1850 թ. Միրզա Թաղիխան Ամիր Նեզամն, որ այն ատեն նախարարապետ էր, ուզեց հայ զինուորների թիւը շատցընելով 800 հոգինոց «ֆոյջ» (վաշտ) մը կազմել։ Ընդառաջողներ չեղան, որով նախարարապետը զայրացաւ և եղածներն ևս զինուորութենէ հրաժարեցուց։

Այն թւականէն ի վեր թէև հայ զինուորներ չկան, սակայն հայ սպաներ և զօրապետներ պակաս չեն եղած պարսիկ զօրաց մէջ։

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՇԷՆՔԵՐ

Ըստ Յարութիւն Տէր Յովհաննէսեանի՝ Նոր Ջուղա ունեցեր է 24 եկեղեցի։ Ասոնցմէ 6-ը բոլորովին անհետացեր են, 6-ի ալ աւերակ հետքերը միայն կան, իսկ երկուքն աւերակ

դառնալու վերայ են և միայն 10-ն հաստատուն են, որոնց մէջ ժամասացութիւն կը կատարուի։ Կանդուն եկեղեցիների մէջ առաջինն և ամենագեղեցիկն է Ս. Ամենափրկիչ եկեղեցին, որ շինուեր է Զուղայի հասարակութեան նպաստով և Մոլա Սաֆրազի մասնաւոր աջակցութեամբ։ Հիմնադրութիւնն սկսեր է ՌՃԴ (1655) թուին և կառուցումն աւարտել ՌՃԺԴ (1664) թուին։

Կը կարծենք, հարտարապետը Ջանացեր է շեմքի և մանաւանդ կաթուղիկէի ձևը նմանեցնել Էջմիածնին։ Զորս մեծ և հաստախարիսխ սիւներ կը կրեն բարձրաբերձ, լայն կամարներ, որոնք իրար կցելով, իրենց ծայրերովը կը կազմեն տեսակ մը տափարակ կիսագմբէթ մը, որի վերայ կը բարձրանայ գլանաձև կամ լաւ ևս ձւաձև գմբէթ մը։ Գմբէթի շուրջը ծածկուած է ութ բացուածքով, որոնցմէ գլխաւորապէս լոյսը կը թափանցէ շէնքի մնացեալ կողմերը։ Գմբէթի ներսի կողմն, ինչպէս և շէնքի ուրիշ կողմերը զարդարուած են գանազան պատկերներով*)։ Նկարներէն շատերը բաւականին գեղեցիկ են և իրենց ներկայացուցած նիւթերի մանրամասնութեանց ճշտութենէն դատելով՝ պէտք է որ հայ նկարիչների գործ լինեն։ Եկեղեցին ամբողջը մէկէն առնելով, թէև վեհութիւն մը չունի, սակայն առանձին գեղեցկութիւն ու պարզութիւն ունի, որ դիտողին մտաց ամփոփումն ու ակնածութեան զգացումները կը

*) Այս պատկերների նկատմամբ Շարդեն հետեւեալը կը պատմէ։— Աւեսիք անուանով վանական մը, որ Իտալիա նամբորդեր էր, անդ զինքը համոզեր էին՝ եկեղեցիներն նկարել։ Այս վանականը Զուղա դառնալով, սկսաւ թախանձել առաջնորդն եւ վարդապետներն, որպէսզի անոր թոյլատրեն եկեղեցի նկարել տալ։ Եկեղեցին ի սկզբան մերկ էր համեմատ հայոց սովորութեան, որ չէին ուզեր ունենալ պատկերներ իրենց եկեղեցիների մէջ, բացի մէկէն, որ կը ներկայացնէ Ս. Կոյսն՝ Որդին իւր գիրկը, եւ այն կը դրուի սեղանին վերայ։ Շատ դիմադրութենէ ետքը հաւանութիւն տին վերոյիշեալ վանականի առաջարկին։

ներշնչէ։ Զոն Ֆրայզրը հետեւեալ կերպով կը խօսի սոյն շէնքին մասին.

«Զուղայի մայր եկեղեցւոյ փառաւորութիւնը չի բարձրանար այն գերազանցութեան, որ իւր շքեղութեամբ աչքեր դայթակղեցնէ կամ իւր ահագին շինութեամբ նախանձ ստեղծէ, ինչպէս աշտարակ մը Բաբելոնի, այլ կը պահէ միջինը այնչափ ճշմարտապէս, որչափ կը վայելէ միայնակ ճշմարիտ Աստուծոյ սպասարկութեան համար որոշուած տեղին։

«Եկեղեցին ունի բարձր ու գեղեցկաշէն զանգակատուն մը, որ շինուած է Զամալենց Յովհաննէսեանի ծախքով, եկեղեցւոյ կառուցումէն 35 տարի ետքը։ Այս շէնքերին մօտն է Ամենափրկիչ վանքն։ Այս, որ շինութեան կողմէ շատ երևելի չէ, գլխաւորապէս կը բաղկանայ երկու շէնքերէ, որոնց մէկին մէջ Սպահանի ու Հնդկաստանի թեմական առաջնորդն, իսկ միւսի մէջ վարդապետներ ու պանդուխտ քահանաներ կը բնակին, որոնց թիւը երբեմն կանցնէ 40-ը։

«Առաջնորդարանին մէջ նեղ մուտքով և ամուր լուսանցքով ու դռնով դետնայարկ մը կայ, որ գրատուն անունը կը կրէ։ Զուղա գաղթող հայերէ շատերն աւելի բարեկեցիկ լինելով՝ քան թէ Հայաստանի ուրիշ տեղերէն եկողները, անտեղի չէ կարծել, որ գաղթականներն իրենց հետ բերած լինեն բազմաթիւ մատեաններ, և անհաւանական չէ, որ ասոնց մէջ հազուագիւտ ու հետաքրքրական գրքեր լինէին։ Սակայն, ազգանների յարձակումէն ետքը տեղի ունեցած խռովութեանց ժամանակ կողոպտուելով, թանկագին գրքեր իբր չնչին թուղթ վաճառուած են կամ փչանալով անհետացած են։

«Իմ տեսած ժամանակ գրատան մէջ միայն կային քանի մը հարիւր գրքեր՝ թանձր փոշիով ծածկուած։ Ասոնց ամենամեծ մասը գրչագրեր էին և շատերը մագաղաթի վերայ գրուած։ Առհասարակ կազմին վերայ տիտղոս չունէին։ Բոլորը մի առ մի քննելը, ժամանակի կարօտ էր և ոչ դիւրին։ Իմ տեսած գրքերը եկեղեցական մատեաններ էին, որոնց մէջ կա-

յին 10-րդ դարի մէջ գրուած աւետարաններ, և եթէ ասոնց յիշատակարանները մասնաւորապէս քննուին, անհաւանական չէ որ հետաքրքրական դէպքերի յիշատակութիւններ գտնուին։[1])

«Միւս եկեղեցիներն ևս շատ-քիչ հոյակապ ու մեծաշէն են, և ձևի կողմէ, աւելի կամ պակաս կերպով, Ամենափրկչին կը նմանին, բայց ոչ մէկն եկեղեցական զարդերով ու զգեստներով անոր չափ հարուստ չէ։ Այս կանգուն մնացած եկեղեցիների մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի է Ամենափրկչէն ոչ շատ հեռու եղող մի եկեղեցի[2]), որի անունն այժմ չեմ յիշեր։ Սա իւր գմբէթի մեծութեամբ և ճարտարապետական արուեստովն բոլոր միւսներն մեծապէս կը գերազանցէ։

«Կիսաւեր եկեղեցիների մէջ երևելի է Ս. Բեթղեհէմ եկեղեցին, որ նոր կառուցած ժամանակ դուցէ Ջուղայի եկեղեցիների մէջ ամէնէն մեծն, բարձրաշէն ու հոյակապ եկեղեցին եղեր է։ Ս. Գէորգ եկեղեցւոյ պարսպին մէջ դեռ ցոյց կը տրուեն Շահ Աբբաս Ա.-ի հրամանով էջմիածնէն բերել տրուած քարերը»։

Մէկ այլ հաստատութիւն, որ Ս. Կատարինէ անունը կը կրէ, կը բաղկանայ միջակ մեծութեամբ, բայց խիստ գեղեցիկ եկեղեցիէ մը և 35—50 խուցերէ։ Ատ կը բնակի միաբանութիւն մը կոյսերի, որք ինքզինքնին հոգևոր կեանքի նուիրեր

1) Թւականիցս մեր կէս դար առաջ (1853 թ.) պր. Գալուս Շերմազանեան Սպահանի մէջ քանի մը յարգի գրչագիր մատեաններ ձեռք բերելով՝ Տփխիս տարաւ։ Ասոնցմէ միայն մէկը՝ Մովսէս Կաղնակատացւոյ պատմութիւնը տպագրութեան արժանացաւ։ Բայց դժբախտաբար, իւր քաղաքապետութեան ժամանակ տփխիսեցիք իւր դէմ գրգռելով, տան վերայ յարձակեցան եւ կահ-կարասեաց հետ ամէն ձեռագիրներն ու գրքերն ևս պատառոտելով փչացուցին։

2) Ըստ երևոյթին ակնարկը վերաբերում է Ս. Աստուածածին հոյակապ եկեղեցուն։ Ծ. խ.

են։ Անչափ խստակրօն են և չափաւոր. օրուան մէկ մասը ժամերգութեամբ ու աղօթքով կը պարապին, մնացորդն առտնին աշխատանքով։ Ասոնցմէ ոմանք սարկաւագութեան կարգ ստացած լինելով, եկեղեցւոյ մէջ սպասարկութիւն կը նեն։

Հաստատութիւնն ունի եկամուտի զանազան աղբիւրներ, որոնցմով ոչ միայն իւր պէտքերն կը հոգացին, այլ և շատ անգամ անպաշտպան ընտանեաց օգնութիւն կը տրուի։

ԹԵՀՐԱՆ

Սպահանի կամ Պարսկա-Հնդկաստանի թեմին կը պատկանէ Պարսկաստանի արդի մայրաքաղաքը՝ Թեհրան, որ կը գտնուի Շեմրան լեռների հարաւային ստորոտէն 15 քիլոմեթր հեռու, տափարակ դետնի մը վերայ, ծովի մակերևոյթէն 3800 ոտք բարձր և կրնայ համարուիլ Պարսկաստանի կեդրոնական ընդարձակ բարձրաւանդակի սկիզբը։ Թաւրիզէն հեռու է 92 և Սպահանէն՝ 68 ֆարսախ։ Թէև բաւականին հին, սակայն 18-րդ դարի սկիզբներն դեռևս շատ աննշան մի քաղաք էր, անառողջ օդով և հորի աղի համ ու դէշ ջրով։ Ամարային եղանակը սաստիկ տաք, իսկ ձմերայինը՝ մեղմ ու բարեխառն է։

Ղաջարական հարստութեան հիմնադիր Մահմատ Շահ գայն իւր տէրութեան մայրաքաղաքն ըրաւ, քանզի այն մօտ էր Մազանդարանին, իւր ընիկ նահանգին, ուր կը բնակին իւր ցեղն ու ազգականներն և ուրկէ կը քաղէր նա իւր գլխաւոր զօրութիւնը։

Այնպէս կերևի, որ Ֆաթհալի շահի թագաւորութեան ժամանակ այս նորոգ մայրաքաղաքը մեծ յառաջադիմութիւն չըրաւ, քանզի Ժոբեռը կը նկարագրէ, թէ 1806-ին, երբ այցելեց այս քաղաքը, տակաւին քիչ ծաղկած, ծուռ ու նեղ փողոցներով փոշելից մի քաղաք էր, միայն 30,000 բնակչով։

Թեհրան իւր իրական աճումն ստացաւ Նասրեդդին շա-

հի օրով և տակաւին կը շարունակէ յառաջադիմել։ Ջրերի առատանալովն և պարտէզներուն բազմանալովն՝ կլիման ևս հետզհետէ կը բարւոքի։ 1870-ի մէջ, ամէնէն տաք ամսի (Օգոստոս, նոր տոմարով), ամէն առաւօտ ժամը 9-ին առնուած ղիտողութեանց արդիւնքը հետևեալն է.

Ամենաբարձր՝ +47, ամենավար՝ +34, միջին՝ +39, Փետրուար (ն. տ., ամէնէն ցուրտ ամիս). ամենաբարձր՝ +13°, ամենավար՝ —1, միջին՝ + 4,9։

Քաղաքի հիւսիսային կողմը կը գտնուի Արք կոչուած դըղեակը, որ կը պարունակէ Շահի պալատն և արքունի ուրիշ շէնքեր, գեղեցիկ պարտէզներով, աւազաններով և շատրւաններով։ Արքի արևելեան հիւսիսային կողմը կուտակուած են նախկին պարսպամիջի տները, նեղ ու ծուռ փողոցներով, որք ամառ ատեն ծածկուած են փոշիով և ձմեռը տիղմով։ Վերջերս նախկին պարիսպը քանդելով և խրամը լեցնելով, շրջակայ գետինները քաղաքին աւելցուցին, ամէնքը նոր խրամով շրջապատելով։ Այժմ Արքն խրամաւոր քաղաքին կեդրոնին մօտերը կիյնայ։

Այս նոր մասերին մէջ եղող փողոցները լայն են և ուղիղ, և տները համեմատաբար աւելի լաւ շինուած։ Ամէնն ի միասին առնելով՝ կրնանք ըսել, որ Թեհրան արդի Պարսկաստանի գեղեցկագոյն քաղաքներէն մէկն է։

Թեհրանի արդի բնակչաց թիւը հաւանաբար 150,000-ը կանցնէ։ Ժողովրդի ամենամեծ մասը կը բաղկանայ ֆարսերէ, որոնցմէ ետքը կը գան ատրպատականցի Թուրքերն, որոնք ստուար մաս մը կը կազմեն։ Ներկայիս հրեաներուն թիւը 3250 է, հայերինը՝ 1500։

Զրադաշտական պարսիկներ 300, եւրոպացի՝ 300, արաբ՝ 300, աֆղան՝ 150, հնդիկ՝ 100։

Ըստ Թադէոս եպիսկոպոսի 1856-ին ընել տուած վիճակագրութեան՝ երկու թաղին մէջ կապրին 75 տուն կամ 310 հոգի հայեր (չհաշուած պանդուխտ օտարաքաղաքացիները)։

Դեսպանատներն, ըստ հնութեան կարգի, ասոնք են՝ Անգլիոյ, Ռուսիոյ, Թուրքիոյ, Ֆրանսիոյ, Աւստրօ-Հունգարիոյ, Միացեալ Նահանգաց, Գերմանիոյ, Իտալիոյ և Հոլանդիոյ։

Վաճառականութիւնը մայրաքաղաքին մէջ շատ յառաջադիմեր է և այժմ Պարսկաստանի երկրորդ վաճառաշահ քաղաքը կրնայ համարուիլ։

Թեհրանի հիւսիսային կողմը և Շեմրան լերանց ստորոտին կից են Շեմրանաթ կոչուած ծառաւէտ ու ջրառատ դիւղերը, ուր կանցնէ բնակչաց բարեկեցիկ մասն ամառ եղանակը։

Հայերի Թեհրան հաստատուելն կսկսի հաւանաբար 18-րդ դարի վերջերէն, երբ Քարիմ խան Զանդը Նոր Ջուղայէն մերձ տասը տուն հայ քարակոփներ բերել տալով, Դուլաբ կոչուած դիւղին կամ արուարձանին մէջ բնակեցուց։ Հայերի անդ ունեցած գերեզմանատունն այն ատենէ մնացեր է։

Այդ ժամանակէն առաջ եթէ Թեհրանի մէջ հայեր գտնուած ալ լինեն, պէտք է ճամբորդներ կամ առժամեայ գործով զբաղողներ եղած լինեն և ոչ հաստատուն բնակութեամբ եղողներ։ Ղաջար հարստութեան հիմնադիր Մահմադ շահը 1795-ին Վրաստանէն ու Հայաստանէն բերած գերիներուն խիստ փոքր մաս մը Թեհրան ղրկեց բնակութեան համար։ Ղարաբաղի նահանգէն ևս 5 տուն հայ չբերել տալով՝ բերաւ Թեհրան և տեղաւորեց Դարվազա Ղազին կոչուած թաղին մէջ, ուր արդէն տփխիսեցի երկու գերդաստանք կային՝ Յովսէփեան և Ստեփանեան անուանով։ Սոյն թաղի նախկին մատուռը գլխաւորապէս այս երկու ընտանեաց ծախքովը շինուած էր։

Երբ Ֆաթհալի շահն գահ նստեց, 1798-ին երկրի զանազան կողմերէն ևս հայեր սկսան Թեհրան գալ և հոն բնակիլ։ Նոյն թագաւորի հրամանով Նոր Ջուղայէն ու Թաւրիզէն ևս հայ արհեստաւորներ բերուեցան և հաստատուեցան մայրաքաղաքին մէջ։ Հայերը մեծաւ մասամբ Դարվազէ Ղազին թաղը կը բնակին, թէև Շահ Աբդուլ Ազիմ թաղի և քաղաքի զանազան կողմերն ուրիշ ազգերի հետ խառն բնակուող հայեր

ևս կան։

Շահ Աբդուլ Ազիմ թաղին մէջ Ս. Բարդուղիմէոս անունով մի մատուռ ունին, որի դաւթին մէջ թաղած են վերացուց թագաժառանգ Աղէքսանդրն և ուրիշ ականաւոր օտարազգիք։ Դարվազէ Ղազուին թաղին մէջ մի փոքր եկեղեցի ունին, Ս. Գէորգ անունով, որ հինի տեղը կառուցուեցաւ 1884-ին։

Թեհրանի ամենահմուտ ոսկերիչները միշտ հայեր են եղեր և այս արհեստին մէջ մրցակից չունենալով, ոսկերչութիւնը բոլորովին իրենց ձեռքն եղած է միշտ։ Սակայն, վերջին տարիներն պարսիկներն ևս այս արհեստին մէջ գգալի յառաջադիմութիւն ըրած լինելով, սկսեր են հայոց հետ մրցման մէջ մտնել, թէև գերազանցութիւնը դեռ հայոց կողմն է։ Թեհրանի լաւագոյն դերձակներն ևս հայերն են։ Հայերը կը պարապին նաև վաճառականութեամբ, գինագործութեամբ և գինեվաճառութեամբ։ Վերջինս թէև յարգի զբաղում մը չէ, բայց շահաւէտ գործ է, ուրիշ մրցակիցներ չլինելու համար։

Կառավարութեան թէ քաղաքական և թէ զինուորական ծառայութեանց մէջ անմասն չեն հայերը։ Թեհրանի հայոց մէջ, համեմատաբար իրենց թիւի սակաւութեան, աւելի ականաւոր ու բարձրաստիճան պաշտօնեաներ կը գտնուին, քան թէ ռուսահայոց ու տաճկահայոց մէջ։

Թեհրանի հայերը այժմ ոչ միայն զերծ են ամէն տեսակ հարստահարութիւններէ, այլ և կարելի է ըսել, որ արտասահմանի շատ մը տեղերի հայերէն աւելի ազատ են, և կենաց, պատուոյ ու ստացուածոց նկատմամբ աւելի ապահովութիւն կը վայելեն։

Գալով դաստիարակութեանը, 1870-է առաջ դպրոց կոչուելու արժանի հաստատութիւն մը չկար։

Այս թուականին դպրոց մը մը բացուեցաւ Դարվազէ Ղազուին թաղի եկեղեցւոյն կից շինութեան մը մէջ, աւելի օտարական հայերի ջանքով ու աշխատութեամբ։

Վեհափառ շահն ամենայն առատաձեռնութեամբ ու հպատակասիրութեամբ նոյն միջոցին սոյն հաստատութեանը տարեկան 200 թուման թոշակ շնորհեց, որն յետոյ 300-ի բարձրացուց։ 1884-ին վտանգի ենթարկուած եկեղեցապատկան գումար մը Թուրքիոյ մեծ դեսպան Ֆահրի բէյի միջամտութեամբ և բարեհաճութեամբ ձեռք բերուելով, հայերը յաջողեցան առանձին տուն մը գնել և անդ փոխադրել դպրոցը։

Երկու տարի ետքը, Հայ Ուսումնասիրաց Ընկերութեան ջանքերով ու աշխատութեամբ գումար մը ևս հանդանակելով, բաւականին լաւ շէնք մը ևս աւելցուցին, որով գնուած տունը դպրոցի կերպարանք ստացաւ։

Դպրոցը, բացի Վեհափառ Շահի շնորհած թոշակէն, ուրիշ հաստատուն եկամուտներ չունենալով, տնտեսական վիճակը խիստ անապահով էր և իր գոյութիւնը կը շարունակէր միայն Ուսումնասիրաց Ընկերութեան ջանքովն ու նուիրաբերութեամբն։

Աշակերտաց թիւն, որ շատ ելևէջի ենթակայ էր, 1884 թուին, միջին հաշուով 70 էր և տարեկան ծախքը 500-էն 700 թուման էր։ Ուսանելի առարկաներն էին՝ հայերէն, կրօնագիտութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, հայոց պատմութիւն և ընդհանուր պատմութիւն, պարսկերէն և ֆրանսերէն լեզու։

Եթէ նկատի առնենք այն կէտն, ուրկէ դպրոցն առաջին անգամ իւր ուսման ընթացքն սկսաւ, կարելի է ըսել որ Թեհրանի դպրոցը բաւականին յառաջադիմութեան մէջ է ներկայիս։

Սպահանի և Հնդկաստանի առաջնորդ Եսայի եպիսկոպոսն, 1890-ին, Ուսումնասիրաց Ընկերութեան անդամների թիւը 30-է 90-ի բարձրացուց և անուանեց Ազգային Ուսումնասիրաց Ընկերութիւն։ Սակայն, այս թուականէն ի վեր, անդամոց մէջ անհամաձայնութիւն ծագեցաւ, որն շուտով երկպառակութեան փոխուեցաւ։

1893-ի վերջերը նախկին անդամները բաժանելով՝ կազմեցին առանձին Ուսումնասիրաց Ընկերութիւն և բացին առանձին դպրոց մը։

Քանի տարի առաջ օրիորդաց դպրոց մը ևս բացուեցաւ, բայց եկամուտի պակասութեան պատճառով երկու տարի շարունակուելէ ետքը գոցուեցաւ*)։

Բացի ասոնցմէ, ամերիկեան բողոքական միսիոնարք ունին դպրոց մը, ուր 56 հայ աշակերտներ և 54-ի չափ աշակերտուհիներ կուսանեն։

Ֆրանսացի լազարիսթներուն դպրոցին մէջ ևս 40-ի չափ աշակերտներ և 38 աշակերտուհիք կուսանեն։

Թեհրանի հայերն ունին ընթերցարան մը, փոքրաքանակ գրքերով, որ հաստատուեր է 1878-ին, դպրոցն աւարտած աշակերտաց ջանքովը։

---

*) Այս բականից յետոյ Թեհրանի հայ համայնքը աղջկանց առանձին դպրոց չի ունեցել մինչեւ 1954 թ., երբ կառուցուց «Մարիամեան» օրիորդաց միջնակարգ դպրոցի հոյակապ տունը, թեհրանաբնակ գործարանատէր, ազգային բարերար Մարգար Սարգսեանի նիւթաւորութեամբ, ի յիշատակ իր վաղամեռիկ դստեր՝ Մարիամի։

Ազգային բարերար Մարգար Սարգսեանը ծնուել է Սալմասի Հաֆթվան գիւղում, 1891 թին։ Իր մահկանացուն կնքեց 1963 թ. Դեկտ. 21-ին, Թաւրիզում. դին փոխադրուեց Թեհրան եւ թաղուեց ազգային փառաւոր յուղարկաւորութեամբ, թողնելով յաւէտ անմոռաց յիշատակ։

Նրա հանրանուէր ճամբով են ընթանում նաեւ իր որդիները՝ ազգային բարերարներ պր. պր. Գուրգէն եւ Վազգէն Սարգսեանները, որոնց առաջնոյն նիւթաւորութեամբ կառուցուում է Թեհրանի Ս. Սարգիս հոյակապ եկեղեցին, ի յիշատակ իրենց հանգուցեալ հօր։

Նոյն բարերարները եկեղեցուն կից կառուցելու են նաեւ Առաջնորդարանի տունը, ի յիշատակ իրենց հանգուցեալ մօր՝ Խանում Սարգսեանի։

ՆԱՍՐԵԴԴԻՆ ՇԱՀԻ ՄԱՀԸ

Մինչ բոլոր Պարսկաստան կը պատրաստուէր 1896 թ. Ապրիլ 24-ին մեծ բերկրութեամբ տօնել Նասրեդդին շահի թագաւորութեան յոբելեանը և մինչ ամէն նահանգներէ ժողովուրդն յատուկ պատգամաւորներով ու ընծաներով կը փութար իր ջերմ շնորհաւորութիւնները մատուցանել ու անկեղծ երախտագիտութիւնը յայտնել արդարասէր արքային, ահա անիշխանական ու եղերական արկած մը եկաւ բոլորի ուրախութիւնը տխրութեան փոխել և ամբողջ Պարսկաստան սուգի մէջ ընկղմել։

Ապրիլ 19-ին, ուրբաթ օրը, Նասրեդդին շահ իւր աղօթքը կատարելու համար կերթայ Շահ Աբդուլ Ազիմ, որն Թեհրանէ երկու ֆարսախ հեռու, երևելի մի մեծ մզկիթ է, շատ մը աղօթատեղիներով ու սրահներով։ Աստ թաղուած է Աբդուլ Ազիմ Իմամզադէն, որի անունով կը կոչի այդ մեծ ուխտատեղին։ Շահն Իմամզադէի դերեզմանին վերայ աղօթելէ յետոյ ետ դարձած ատեն, նեղ անցքի մէջ իրեն կը մօտենայ Միրզա Ռեզա անունով մէկը, ձեռքը թուղթ մը բռնած, «Ղորբան, աղերսանք մը ունիմ» ըսելով և միևնոյն վայրկեանին աբայի (վերարկու) տակէն ատրճանակ մը հանելով կը կրակէ թագաւորին վերայ։ Գնդակը Շահի ձախ կողմէն մտնելով, սրտի վարի կողմը կը տեղաւորուի։ Շահը կը չոքի, ոտքի կելլէ ու նորէն ուշաթափ վար կիյնայ։ Ամին Սուլթան ու հետևորդները զինքը գրկելով, կառքի մէջ կը դնեն և ձիերն արագապէս քշելով՝ պալատ կը հասցնեն, ուր շահը կը փչէ իւր վերջին շունչը։

Պարտք կը համարեմ աւելցնել, որ դաշար հարստութեան միապետներն ընդհանրապէս հաշտ աչքով նայած են հայ հպատակներին։ Սակայն, բարեյիշատակ Նասրեդդին շահը իւր նախորդները գերազանցելով, միշտ իբր ճշմարիտ հայր ժողովրդի և իբր լուսամիտ թագաւոր երկրի, կառավարեր է իւր բազմակրօն ու տարացեղ հպատակներն, և երբեք խտրութիւն չի դրեր մահմեդականին և ոչ մահմեդականին մէջ։ Թէ իւր նախորդներն և թէ ինքն, ազնիւ գաղափարներով ու միտքերով տոգորուած, մինչև անգամ տէրութեան բարձրագոյն պաշտօններն, քաղաքական կամ զինուորական, մատչելի ըրեր են քրիստոնեաներին։

Անշուշտ, ժողովուրդն ընդհանրապէս, երկրի ամէն կողմերն անթերի արդարութիւն չի վայելեր։ Գաւառական կառավարիչներն և իրենց ստորադաս պաշտօնեաներն ի սկզբանէ անտի սովորած ու վարժուած լինելով՝ հարստահարել ժողովրդին առհասարակ, ինչ ցեղէ ու կրօնէ որ լինի, չեն կրնար և դժուար ալ կը թուի մէկէն իրենց սովորական եկամուտների աղբիւրները չորցնել և ամենայն արդարութեամբ կառավարել իրենց հոգատարութեան յանձնուած ժողովուրդը։

Յիրաւի, պատահած է, թէև խիստ քիչ անգամ, որ մեծ քաղաքների մէջ ևս, հայը զրկանաց ենթարկուեր է ընչաքաղց որևէ պաշտօնակալէ։ Սակայն, երբ հայը միջոց ու քաջութիւն ունեցեր է կրած զրկանաց ու ապօրինութեանց մասին իր բողոքը Վեհապետի դահին հասցնել, որն ընելու համար ամէն դուռ բաց է բողոքարկուին առջև և արդելքները տիրայաղթ, շատ անգամ արդարութիւն եղեր է անոր, և յանցաւոր բռնացողը շուտ-ուշ և մերթ շատ խստիւ պատժուեր է։

Երկրագնդիս վերայ տեղ մը չկայ, որ արդարութիւնն ամենայն կատարելութեամբ թագաւորէ, և այնպէս ամէն անհատ, առանց բացառութեան և դիւրաւ կարենայ միշտ արդարութիւն ձեռք բերել։ Ամէնէն քաղաքակիրթ երկիրների մէջ անգամ, ուր ամէնքը միևնոյն օրինաց տակ են և օրէնքների

ճշտիւ ու անաչառ գործադրութեանը կը նախագահեն յաճախակի անկողմնակալ ու արդարասէր դատաւորներ, այդպիսի երկիրների մէջ ևս, այն որ խեղճ է, կրթութիւն չունի, իւր պարտաւորութիւններն ու իրաւունքներն չգիտէ ու չի գնահատեր և անվեհերութեամբ իւր իրաւանց պաշտպան չի կանգներ, նա միշտ արդարութիւն չի ստանար, այլ երբեմն, գուցէ շատ անգամ, կը զրկուի իւր զօրաւոր և օրինաց կնճիռներին ու նրբութեանց հմուտ հակառակորդէն, և այս յաճախ անգամ հակառակ օրինաց տրամադրութեան և դատաւորաց արդարասիրութեան։ Մենք Պարսկաստանի հայերս, քանի որ ասիական ժողովուրդ ենք և քանի որ բախտն զմեզ սահմանադրական կարգերի արժանի չէ ըրեր, և քանի որ այլ միջոցներն կը պակսին, ուրիշ ճար չի մնար, եթէ ոչ միայն ու միայն կրթութիւնը, որպէսզի լաւապէս ճանաչենք մեր պարտաւորութիւններն ու իրաւունքներն, հմտանանք մեր բնակած երկրի լեզուին, օրէնքներին, սովորութեանց և արդարութիւն ձեռք բերելու միջոցներին, ամենայն անվեհերութեամբ և համեստաշխութեամբ պաշտպանելով մեր իրաւունքները։

Նասրեդդին արքայի մահուան լուրն երբ հեռագրով Թաւրիզ հասաւ, իսկոյն Անգլիոյ ու Ռուսիոյ և ետքէն Թուրքիոյ և Ֆրանսիոյ ընդհանուր հիւպատոսները դահաժառանգին ներկայանալով, իրենց կառավարութեանց կողմանէ նախ խորին ցաւակցութիւն յայտնեցին և ապա թագաւորելը շնորհաւորեցին։

Ապա անմիջապէս մեծամեծները հրաւիրուեցան գալ խորհել, թէ ինչ պիտի ընէին։ Երկար խորհրդակցութենէ ետքը հարկ համարուեցաւ որ թագաժառանգն անմիջապէս թագաւոր յայտարարուի և կարելի եղածին չափ շուտով մեկնի Թեհրան։ Հետևեալ առաւօտ (1896 թ. Ապրիլ 20-ին), կէսօրէ մի ժամ առաջ, տեղի ունեցաւ Սալամը խաս (ազնուականաց կամ ընտրանիի ընդունելութիւն), որին ներկայ էին արքայազները, կրօնապետներն և բարձրագոյն պաշտօնատարները։ Թագաժա-

ռանդն մտաւ ընդունելութեան սրահն, առաջին անգամ հագած արքայական նշանագգեստը՝ պարսկական «սերդարի»ն, որի կուրծքը, օձիքը, թեզանիքն և քղանցքը ոսկեթելով և ամենաազնիւ մարգարիտներով ասեղնագործած էին։ Նոր դահակալը կը կրէր նաև պարսկական և այլ տէրութեանց պատուանշանները։ Նախ կարճ աղօթք մը ըսեցաւ, ետքը չորս գըլխաւոր կրօնապետներ բռնելով իրենց բոյթ մատով ու ցուցամատով արքայական խորհրդանշանն, որ ամենազնիւ ակներէ կազմուած փետրաձև զարդ է, փակցուցին գահաժառանգի մորթիէ գլխարկին։ Ապա նոյն կերպով, առնելով գոհարազարդ թուրն, կապեցին մէջքին։ Այնուհետև նոր դահակալը բազմեցաւ ոսկեպատ բազկաթոռի մը վերայ։ Յայնժամ կատարուեց մաղթանք մը, որը վերջացաւ «Ահա՛ մեր արքան» բառերով, երիցս կրկնուած։ Իւրաքանչիւր անդամին բոլոր ներկայ եղողները գլուխները կը խոնարհէին ի նշան հպատակութեան և հաւատարմութեան։

Այս արարողութենէ ետքը նորընտիր դահակալ Մոզաֆերեդդին անցաւ ուրիշ սրահ մը, ուր տեղի ունեցաւ «Սալամը ռամի» (հասարակաց ընդունելութիւն)։ Աստ ևս, երբ իշխանը ոսկեպատ բազկաթոռի մը վերայ բազմեցաւ, պալատական բանաստեղծն արտասանեց գովասանական ու շնորհաւորական ճառ մը, որի մէջ դարձեալ երիցս կրկնուեցաւ «Ահա՛ մեր Արքան» խօսքը։ Նոյն միջոցին շեփորներն և թնդանօթների թնդիւնները ժողովրդին աւետեցին, որ Մոզաֆերեդդին շահը թագաւորեց։

Մայիս 6-ին Շահը Թաւրիզէ մեկնելով, երրորդ շաբաթը Թեհրան հասաւ և քիչ ատենէն հօր դահը նստաւ։

Մոզաֆերեդդին շահի լաւ յատկանիշներէն մէկն իր վերին աստիճանի գթառատութիւնն է։ Այս շատ մեծ մի առաքինութիւն է իշխանաց համար։ Արդէն առատաձեռնութեան, արդարասիրութեան ու հպատակասիրութեան ապացոյցներ տուեր է, ամէն յոյս կայ, որ իւր հօր շաւղին հետևելով՝ Պարսկաստանի բարի թագաւորներէն մէկը պիտի լինի։ Այսուհանդերձ, պէտք է աւելցնել, որ այսօր երկրի մը, տէրութեան մը վերաբերեալ խնդիրներն այնչափ բազմաթիւ, բազմակողմանի, այնչափ բարդ են, որ լոկ վեհապետի բարի կամքէն կամ նախարարի մը ջանքէն կախում չունին և ասոնցմէ որ մէկն ալ որչափ հայրենասէր, յառաջադիմասէր ու անձնազոհ լինի, մեծ բան մը չի կրնար ընել, եթէ ժողովուրդի մեծ մասը, կամ գէթ անոնք, որ ժողովուրդի վերայ ազդեցութիւն ունին կամ առաջնորդ կրնան լինել, հոգով ու սրտով չաջակցեն։ Սակայն, պէտք է ցաւօք ըսել, որ Պարսկաստանի հասարակ ժողովուրդն՝ խաշնարած, երկրագործ, արհեստաւոր, վաճառական, գրեթէ առանց բացառութեան, յառաջդիմական խնդիրների վերայ ամենևին չի մտածեր. ինչպէս կը խորհէր ու կը գործէր դար մը, երկու դար առաջ, նոյնպէս այսօր կը խորհէ, կը գործէ։

Կառավարող ու պաշտօնական դասն, աննշան բացառութեամբ, հետամուտ է ոչ այլ ինչի, բայց եթէ իր անձնական շահի ու արծաթասիրութեան։ Իրեն համար ուրիշ որևէ նպատակ չի յառաջադրեր, բայց միայն անձնականն, և այս նիւթէն դուրս ոչինչ անոր հոգս կը պատճառէ։

Արդ, եթէ Պարսկաստան չսթափի, չարթննայ, որևէ կերպով բարեփոխութեանց սկիզբ չդնէ և եթէ շարունակէ անցեալի պէս թմրութեան ու անշարժութեան մէջ մնալ, անտարակոյս, օրէ օր պիտի յետադիմէ, տկարանայ ու խոնարհի, և այդ վիճակը ուր կը յանգի, ոչ ոք կրնայ նախատեսել։

ԹԵՀՐԱՆԻՆ ՄԵՐՁԱԿԱՑ ՇՐՋԱՆՆԵՐ

ՎԱՆԱԳ

Մայրաքաղաքի մերձակայքը գտնուող հայաբնակ չորս գիւղերի մէջ գլխաւորն է Վանագը, որ ընկած է Թեհրանի հիւսիսային կողմը և անկէ մերձ 2 ֆարսախ հեռու է։ 35 տուն հայ բնակիչ ունի և մի մատուռ՝ մի քահանայով։ Վերջերս դպրոց մը բացուեր է, ուր 25 աշակերտք կարդալ ու գրել կը սովորեն։

ԽՈՐԴՈՒՆ

Վանագի արևելեան կողմը և անորմէ մերձ մէկ ֆարսախ հեռու է։ Աստ 22 տուն հայ կայ, որք պարսկաց հետ խառն կը բնակին։

ԴԱՐՈՒՍ

Թեհրանի արևելեան հիւսիսային կողմը և քաղաքէն մէկ և կէս ֆարսախ հեռու մի գիւղակ է՝ 12 տուն հայ բնակիչներով։

ԲՈՒՄԷՅԻՆ

Մայրաքաղաքի արևելեան հիւսիսային կողմը և անորմէ 4 ֆարսախ հեռու մի գիւղ է, ուր 11 տուն հայ կայ։

ՂԱԶԻԻՆ

Թաւրիզէն ետքը, 1548-ին, Սաֆաւեան տէրութեան մայրաքաղաքը դարձաւ այս քաղաքը, բայց քիչ տարիներէ յետոյ Շահ Աբբաս Ա. զայն թողնելով, Սպահան փոխադրեց իւր աթոռանիստը։

Այս քաղաքն կը գտնուի Թաւրիզէ Թեհրան ճամբային վերայ և առաջինէն մերձ 70, իսկ երկրորդէն 22 ֆարսախ հեռու է։ Ընդարձակ, հարթ դաշտի մը մէջ կը տարածուի, շատ ընդարձակ այգիներով։ Սաֆաւեան տէրութեան ժամանակ ծաղկեալ վիճակի մէջ էր, սակայն աֆղաններէ առնուելէն ի վեր սկսաւ յետադիմել։ Այժմ անկեալ վիճակի մէջ է և բնակչաց թիւն է 30—40 հազար։

Սպահան գաղթեցուցած հայերէն փոքրիկ մի մաս աստ թողնուեցաւ։ Շարդէնի ժամանակ 40 հայ ընտանիք կային։

Ըստ Ջէյմս Հրթթրնի, Մեծն Բրիտանիոյ թագաւոր Յակոբոս Ա.-ի կողմէ Շահ Աբբասի մօտ ղրկուած դեսպանն՝ Սըր Թոթմոր Քոթբնը Ղազինի մէջ մեռնելով (1628-ին), հայոց գերեզմանատան մէջ թաղուեցաւ։

Ռուս-պարսկական պատերազմին (1827—28) Ղազինի գրեթէ բոլոր հայերը Ռուսիա գաղթեցին։ Այժմեան հայերը, բոլորն ալ նորեկ են, ընդամենը 12 տուն։

ՄԱԶԱՆԴԱՐԱՆ ԵՒ ԳԻԼԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Շահ Աբբաս Ա. Հայաստանէն հանած հայերէն մէկ մեծ խումբ ղրկեց այս երկու նահանգները և այնտեղ հաստատեց։ Այս գաղթականների թիւը ոմանք 7,000 կը հաշուեն, ոմանք ալ մինչ 18,000-ի կը հասցնեն։

Շարդեն կը գրէ. «Մեծն Շահ Աբբաս Հայաստանէ և Վրաստանէ շատ մեծ թիւով ժողովուրդ փոխադրեց Մազանդարան։ Գաղթականութիւնը 3,000 քրիստոնեայ ընտանիքէ կը բաղկանար, միայն երկիրը բազմամարդ դարձնելու համար էր։ Այս շատ յարմար երկիր է քրիստոնէից համար, կըսէր Շահ Աբբաս. այս երկիրն այնչափ առատ է գինւով ու խոզով, որչափ որ անոնց պէտք է։ Անոնք կը սիրեն ծովով ճամբորդելն և առևտուր կընեն մոսկովների (ռուսերի) հետ Կասպից ծովով»։

Այս գաղթականների մէկ մեծ մասը օդի վատառողջութեանը չդիմանալով՝ խիստ քիչ ատենի մէջ ոչնչացաւ, մէկ մասն ևս այս ու այն կողմ ցրուեցաւ։ Թէև այս երկիրներն Շարդենի այցելած ժամանակ (1650—1675) այդ բազմաթիւ հայերէն միայն 400 ընտանիք մնացեր էր, սակայն ասոնք ևս քիչ ատենէ ետքը անհետացան։ Պր. Կ. Եղեանցի մի յիշատակութենէն կրնանք հետևցնել, որ հեռացողների մեծագոյն մասը ռուսաց իշխանութեան տակ եղող երկիրներն անցնելով, հոն բնակեցան։

1.—ՖԱՐԱՀԱԲԱԴ

Այս որ կը թարգմանի զարթութեան տեղ, մի քաղաք էր՝ շինուած Շահ Աբբաս Ա.-ի հրամանով, Գիլան նահանգի մէջ, ծովեզրէն ոչ շատ հեռու, Սֆիդրուդ գետի աջ ափին վերայ։ Գիլան և Մազանդարան ղրկուող հայերէ մէկ մասն ալ այստեղ բերուեցաւ։ Շարդեն այս առթիւ կըսէ. «Ֆարահաբադի եպիսկոպոսը բարի, ծեր մի կղերական է, որ բաւականին լաւ կը ճանչնայ այս երկիրը (Գիլան և Մազանդարան). շատ անդամ կը կրկնէր, թէ հողի բերրիութիւնը եթէ չլինէր, որ շրջականների ժողովուրդը կը քաշէ այստեղ, երկիրն անապատ կը դառնար, քանզի օդն անչափ դէշ է։ Ապրիլի վերջէն անտանելի տաքութեան պատճառով, որ մինչև անդամ մեծ դեռերը կը ցամաքեցնէ, պէտք է ծովեզրն թողուլ և լեռները քաշուիլ, որք 20—25 ֆարսախ հեռու են»։

Ֆրէյզրը այս կողմերն այցելած ատեն, 1826-ին, այս մեծ քաղաքի փոխարէն մի փոքրիկ գիւղ միայն գտաւ, շատ աւերակներով*) և բազմաթիւ հայ գաղթականների փոխարէն միայն մի նորեկ գտաւ, որի համար այսպէս կը խօսի. «Ֆարահաբադի աւերակներէ քիչ մը հեռու, ծովի կողմը կայ փոքրիկ կայան մը, շինուած թառափ ձուկ բռնելու ու պատրաստելու ռուսական շուկայի համար։ Այս կայանն այն ժամանակ կը պատկանէր Ստեփան անունով հայի մը, որն այն գետի (Սֆիդրուդ) և ուրիշ երկուքի ձկնորսութիւնը վարձու առեր էր տարին անուանական հարիւր թումանով կամ 55 ստերլինով (անգլիական լիրա), բայց իսկապէս ընծաներով եռապատիկը կը

*) Այս Ֆարահաբադը շփոթելու չէ նոյն անունը կրող ուրիշ գիւղի մը հետ, որ կը գտնուի Սարի գետի աջ կողմն եւ Կասպից ծովի եզրին վերայ եւ Սֆիդրուդ գետի վերայ եղող աւերակ քաղաքէն մօտ 60 Ֆարսախ հեռու է։

բարձրանար *)։

«Այս մարդն իւր հետ ունի 18 կամ 16 ռուս նաւաստիներ, որք շիներ են քանի մը փայտէ խղիկներ, որք կը ծառայեն իրը շտեմարան բռնելիք ձկանց։ Ստեփանն ինձ իմացուց, որ յաջող տարին 5—6 հազար ձուկ կը բռնէին երեք դետի մէջ և Աստրախան տանելով՝ փութը մէկ ռուբլի կը վաճառէին»։

2.—ՌԵՇՏ

Գիլան նահանգի գլխաւոր քաղաքն է։ Կը գտնուի Սֆիդրուդ դետի արևմտեան կողմն եղող ճահճային անտառի մը մէջ և Էնզելիէ մերձ 3 ֆարսախ հեռու։ Այս քաղաքը միշտ կեդրոն մը եղեր է շերամաբուծութեան և մետաքսի վաճառականութեան։ Հայերը շատ հին ժամանակներէ ի վեր հոն կը յաճախեն։ 17-րդ դարի մէջ մետաքսի վաճառականութիւնը գրեթէ ամբողջովին հայոց ձեռքն էր, և հաւանաբար անոնք էին այն ատենուան միակ մեծ վաճառականներն, որք այս ապրանքի առևտուրով կը պարապէին և մետաքսը Պարսկաստանէ ուրիշ երկիրներ և գլխաւորապէս Ռուսիա կը ներածէին։

1667 թուականին, ռուսաց Ալէքսանդր կայսրն մետաքսի ներածութիւնն ու գործածութիւնն իւր երկրին մէջ քաջալերելու նպատակով, Ստեփան Մ. Թամադուլոցեանն և Գրիգոր Մ. Կուսիկեանին (Նոր Ջուղայի վաճառականները) յատուկ հրովարտակ մը կը շնորհէր, որով զանոնք ազատ կը կացուցանէր այս ապրանքի համար մաքս վճարելէ։ Սոյն կայսրի օրինակին հետևեցան իւր յաջորդներէն ոմանք։ Անգլիացի վաճառականներէն ոմանք այս ատենները հայերէն արտօնութիւն կը խնդրէին և կստանային, որ մետաքսի առուտուրը հայ ընկերութեանց անունով ընէին, ինքզինքնին հայոց պաշտպանութեան տակ դնելով*)։

Կերևի որ մինչև 19-րդ դարի սկիզբները մետաքսի առուտուրը մնաց գլխաւորապէս հայոց ձեռը, քանզի Ֆրէյզըր, որ 1826-ին այս քաղաքն այցելեց, կըսէ.

«Հէդայաթ խանի օրով, որ Քարիմ խան Զանդի և Ղաջարական թագաւորութեան հիմնադիր Մահմադ Շահի ժամանակ Գիլանը կը կառավարէր, Ռեշտի մէջ կային՝ հայոց մի մեծ գաղթականութիւն, բազմաթիւ ռուսներ, շատ հնդիկներ ու հրեաներ։ Ասոնք ամէնքն ալ իրենց առանձին քարվանսարաներն կամ թաղերն ունէին բնակելու համար։ Այժմ բացի մի քանի հրեաներէ, միւսներէն որևէ մէկը չի մնացեր։

«Հէդայաթ խան մի լուսաւորեալ տեսութեան գլխաւոր էր։ Նա քաջապէս գիտէր հայ ժողովուրդը պաշտպանելու կարևորութիւնը, նկատի առնելով որ անոնք մեծապէս կը նպաստէին վաճառականութեան և երկրի հարստութիւնը կաւելցնէին։ Բայց Ռեշտի կարճատես տարրերը, իրենց գլխաւորի ազատական զգացմանց չմասնակցելէ բացի, այնչափ նեղեցին ու անարգեցին ամէն օտարականաց, մինչ նոքա մէկիկ-մէկիկ հեռացան քաղաքէն։

«Խոսրով խանի ժամանակէն առաջ անոնք (քրիստոնեաներն) գրեթէ բոլորովին անհետացեր էին, բայց այդ ազնուականն բաւականին խելացիութիւն ունեցաւ հետևելու իւր նախորդի քայլերին և փորձեց ամէն տեսակ շնորհներ ընելով՝ զանոնք ետ բերել։ Այս նպատակին մէջ այնչափ յաջողեցաւ,

*) Զկնորսութիւնն այժմ եւս ռուսիացի հայ մը վարձու առեր է, բայց 100 թումանի փոխարէն 20,000 թումանէ աւելի կը վճարէ տարին։

*) Դրութիւնն այժմ բաց փոխուեր է··· Անգլիացիք այժմ արժան չեն համարեր Պարսկաստանի մէջ հայերին բացի երկրորդական պաշտօններէ ուրիշ պաշտօն յանձնելու···

որ հայերէն ոմանք համոզուեցան վերստին գրաւել իրենց թաղն ու քարվանսարաներն։ Անոնք կառուցեցին նաև աղօտատեղի մը և բաղնիքներ շինելու վերայ էին, երբ ամբոխը ոտքի կանգնեց և Խոսրով խանի պաշտօնանկութիւնը պահանջեց՝ հայոց ընծայած իր շնորհաբաշխութեան համար... Հայերը հեռացան այս քաղաքէն, ուր այժմ ոչ մի հայ, ռուս կամ հնդիկ չկայ։ Տեղացի շատ վաճառականներ, որոնց հետ ես խօսակցեցայ այս մասին, մեծապէս կափսոսէին քրիստոնեաների բացակայութիւնն, և անոնց օգտակարութիւնը խիստ կը գնահատէին»։

Հայերն, որ մի քանի դարէ ի վեր Ռեշտի մէջ մետաքսի առևտուրով զբաղած էին, չկրցան այս առևտուրէն բոլորովին հրաժարիլ։ Նասրեդդին Շահի թագաւորութեան սկզբի օրէն սկսան նորէն Ռեշտ երթալ և ոմանք անդ բնակիլ։ 1867 թուականէն Ռեշտի մետաքսաբուծութիւնն սկսաւ նուազիլ շերամի ստացած տեսակ մը հիւանդութեան պատճառով։ Այս հիւանդութիւնն երթալով՝ աւելացաւ, այնպէս որ այժմ առաջուան ելած մետաքսի մէկ տասներորդն անգամ չի ստացուեր։ Կասպից ծովի վերայ շոգենաւերի կանոնաւոր երթևեկութիւնը հաստատուելով, Գիլանի բերքերի արտածութիւնը շատ աճեցաւ և Ռուսիայէ ներածութիւնն ևս շատ աւելցաւ։ Այսպիսով Ռեշտ իւր կարևորութիւնն ու վաճառականութիւնը պահեց։ Այժմեան բնակչութիւնը ըստ ոմանց 8,000, ըստ այլոց 14,000

*) Գիլաֆներն նախնեաց «գելին»ն են, որ Կասպեան ծովի հարաւային եզրին վերայ կը բնակէին· ասոնք «դիլեմիթ» եւս կոչուեր են· Իրենց անառիկ դիրքի շնորհիւ երբեմն յանկարծօրէն Պարսկաստանի մերձաւոր նահանգներն ասպատակելով՝ մեծ աւարով կը դառնային իրենց ամրութիւնները, ուր պարսիկ զօրքը դիւրաւ չէր կրնար թափանցել· Եթէ արիական ցեղ մը կայ Պարսկաստանի մէջ, որ միշտ անխառն մնացեր է, հաւաստեաւ գիլաֆներն պիտի լինեն։

տուն է։ Բնակչաց մեծամասնութիւնը կը բաղկանայ գիլաֆներէ*), որոնցմէ ետքը կը գան ֆարսերն և թուրքերն։ Հայերն 60 տուն են, մեծագոյն մասն վաճառականութեամբ, իսկ փոքրագոյնը զանազան գործերով կը պարապեն։ Ունին մի եկեղեցի, մի դպրոց և մի ընթերցարան։

3.—ԷՆԶԵԼԻ

Ռեշտի արևմտեան հիւսիսային և Կասպից ծովի հարաւային արևմտեան կողմը սարաւանդի մը վերայ հաստատուած փոքրիկ քաղաք է և Ռեշտին իբր նաւահանգիստ կը ծառայէ։ Աստ 10 տուն հայեր կան, որք գործակատարութեամբ կամ վաճառականութեամբ կը պարապին։

4.—ԲԱՐՖՐՈՒՇ

Այս քաղաքն կը գտնուի Կասպից ծովի հարաւային կողմն և ծովեզրէն մերձ չորս ֆարսախ հեռու փոքրիկ գետի մը վերայ, որ ծովը կը թափի։ Մեշեդսար ասոր իբր նաւահանգիստ կը ծառայէ։ Առաջները Բարֆրուշ հայեր չկային, բայց վերջին տարիներս վաճառականութեան պատճառով քանի մը ընտանիքներ հաստատուեցան այնտեղ։ 1880 թուականին մերձ 50 հոգի հայեր կային աստ։

5.—ԱՍՏԱՐԱԲԱԴ

Կասպից ծովի հարաւային արևելեան կողմն և ծովեզրէն մերձ 8 ֆարսախի վերայ է։ Աստ պարսկաստանցի և ռուսիացի մերձ քսան հայեր կան, որք վաճառականութիւն կընեն։

ՇԱՀՐՈՒԴ

Վերի քաղաքի հարաւային արևելեան կողմը և անորմէ մերձ 14 ֆարսախ հեռու կը գտնուի, որ նոյն անունով գաւառի կեդրոնատեղին է։ Աստ ևս զանազան երկիրներէ եկած մերձ տասն հայ վաճառականներ կան։

ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄԻՆ ԵՆԹԱԿԱՅ ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐ

1.— ԶԱՆՋԱՆ

Այս քաղաքն 25,000-է աւելի բնակիչ ունի և Թաւրիզէն Թեհրան տանող ճամբային վերայ է. առաջինէն 44, իսկ վերջինէն 50 ֆարսախ հեռաւորութեամբ։ Աստ կան մերձ քսան հայեր, որոնք գլխաւորապէս վաճառականութեամբ կը պարապեն։

ՍՈՒԼԹԱՆԻԷ

Այս քաղաքն կը գտնուի Զանջանի հարաւային-արևելեան կողմը և անորմէ վեց ֆարսախ հեռու, ընդարձակ, սիզաւէտ դաշտի մէջ։ Ալ-Զայթու (12-րդ դարի սկիզբն) այս քաղաքն, որ ըստ ոմանց Բաթինա անունը կը կրէր, նորոգելով՝ իւր մայրաքաղաքն ըրաւ, որին և Սուլթանիէ (արքունի կամ արքայական) անունը տուաւ։ Խողաբանդէի յաջորդների ժամանակ այս քաղաքն աւելի ծաղկեցաւ և վաճառականական կեդրոններէն մէկն եղաւ։

Այժմ այս քաղաքէն, բացի կանգուն մնացած երկու մղկիթներէ, ուրիշ հետք չի տեսնուեր։ Ասոնց իրարմէ ունեցած հեռաւորութիւնն կէս ֆարսախէ աւելի է, որմէ կարելի է հե-

տեսնել, որ անցեալին մէջ Սուլթանիէ շատ մեծ քաղաք է եղեր։ Մզկիթներէ մեծն, որ շինուեր է Ալ Ջայթուի հրամանաւ, արդի Սուլթանիէ կոչուած գիւղին մէջ է և հրաշակերտ կառոյց ունի։

Ըստ ոմանց՝ Սուլթանիէի մէջ 14—15-րդ դարերի ընթացքին բազմաթիւ հայեր կային։

2.— ՀԱՄԱԴԱՆ

Եկբատան կամ հարաւային Եկբատան, կը կարծուի լինել այն, զոր մեդացիներն ու պարսիկներն Եկբատանա, Հակմատան կան Հակմադանա կը կոչէին։ Բիսութունի արձանագրութեանց մէջ գործածուած ձևն Հաքմադանա կամ Հակմատան է։

Ըստ հին աղբիւրների՝ Եկբատան կը գտնուէր Զագրոսի լեռնաշղթային արևելեան կողմը։ Արդի քաղաքը կը գտնուի Որոնդէսի հիւսիսային-արևելեան, հիւսիսային կողմը և ստորոտէն մերձ կէս ֆարսախ հեռու, դաշտի մը վերայ։

Օդն շատ առողջարար է. ձմեռն խիստ ցուրտ է և ամառը բարեխառն։ Քաղցրահամ ջրեր Որոնդէսի ստորոտէն ելլելով, քաղաքն և իւր բազմաթիւ մեծատարած այգիներն ու արուարձաններն կոռոգեն։ Պարսկաստան քիչ քաղաքներ կան, որոնց անմիջական շրջակայ գետիններն ոռոգման ընդունակ և ըստ պահանջի ջրաւէտ ու բերրի լինեն, ինչպէս Համադան, որով այս քաղաքը շատ աւելի մեծ թիւով ժողովուրդ կրնայ սնուցանել։ Ուստի եւրոպացի ճամբորդներն և աշխարհագիր պատմիչներն միաձայն հաւանութեամբ կը կարծեն, որ արդի Համադան նախկին Եկբատանի դիրքը կը գրաւէ։ Աւելի առաջ երթալով, կարելի է ըսել, որ արդի քաղաքը նախկինի շարունակութիւնն է և Համադան անունը Հակմատանի աղաւաղումն է կամ կրճատումը։

Հերոդոտոս հետևեալ կերպով կը նկարագրէ մեդացւոց այս հռչակաւոր մայրաքաղաքն. «Այս իշխանը (Դիոդէս) ինքդինքը դահի վերայ տեսածին պէս, հարկադրեց իւր հպատակներն իրենց համար քաղաք մը շինել, զարդարել և ամրացնել, առանց հոգս ընելու ուրիշ տեղերի համար։ Մեդացիք հլու այս հրամանին, շինեցին այն զօրաւոր և անհունաբար մեծ քաղաքը, ճանաչուած այսօր Եկբատան անունի տակ, որի պարիսպները ներփակուած են մէկը միւսի մէջ և այնպէս շինուած, որ իւրաքանչիւր պարիսպ մերձակայ եղողէն կը բարձրանայ միայն ատամների բարձրութեամբ։ Տեղի դիրքն, որ բլուրի պէս կը բարձրանայ, անոր շինութեան միջոցները դիւրացուց*)։ Նաև բան մը աւելի ըրին. ընդամենը 7 շրջագիծ կար. վերջինին մէջ էին պալատն ու թագաւորի գանձը։ Ամենամեծ շրջանը կը հաւասարի գրեթէ Աթէնքի շրջագծին։ Առաջին շրջապարսպի ատամները ճերմակ ըրած էին, երկրորդը՝ սև, երրորդը՝ ծիրանագոյն, չորրորդը՝ կապոյտ, հինգերորդը՝ նարընջակարմիր։ Այսպէս, բոլոր շրջապարիսպների ատամները զանազան գոյներով զարդարուած են։ Գալով վերջին երկուսին, մէկի ատամներն արծաթօգօծած են և միւսինն՝ ոսկեզօծած։ Այսպէս էր պալատն, որ Դիոդէս շինել տուաւ իւր համար, և տներն, որոնցմով զայն շրջապատեց. ժողովուրդին մնացորդը հրաման ստացաւ պատնէշների ստորոտին վերայ հաստատուիլ»։

Ջ. Ռոլինսը Հերոդոտոսի սոյն պատմութեան վերայ կաւելացնէ հետևեալը.

«Այս ամբողջ նկարագրութիւնն անտարակոյս քիչ մը

---

*) Արդի քաղաքի կեդրոնին մօտերը մի հողաբլուր կայ կամ լաւ է ըսել փոքրիկ լեռ, որ այժմ Մուսալլա կը կոչուի։ Այս բլուրի գագաթը հարթ է եւ մերձ մէկ կիլոմեթր քառակուսի տարածութիւն եւ երկու կիլոմեթր երշապաս ունի։ Քաղաքի գետը ստորոտէն կանցնի։ Բացի այս բլուրէն, կան ուրիշ փոքրիկ բարձրաւանդակներ եւ աւերակի մնացորդներ քաղաքի հարաւային կողմերն։ Սակայն, ասոնցմէ որն որ մէկի տեղը կը գրաւէ, միայն կրնայ որոշիլ կարող անձերի մանրախոյզ քննութենէ ետքը։

առասպելական երևոյթ ունի և պարիսպների ատամները թանկագին մետաղներով պատելն արդի ընթերցողին կը թւի մասնաւորապէս անհաւանական։ Բայց այն ժողովուրդն, որ իւր պալատների տանիքներն արծաթեայ աղիւսով կը կազմէր և ներքին մասի մէջ տախտակ շինուածքը արծաթէ կամ ոսկիէ տախտակներով կը հանդերձէր, կրնայ բաւականին հարուստ եղած լինել շռայլութեան այսպիսի ցոյց ընելու համար, ինչպէս Հերոդոտոսն կը նկարագրէ»։

Սակայն, Դիոդէսէ կառուցուած կամ աւելի ճիշտ է ըսել մեծցուցած այս քաղաքը հետզհետէ զարգացաւ ու ծաղկեցաւ և Կիւրոսին յաջորդող պարսից հզօր արքայից արքաները զայն իրենց մայրաքաղաքներէն մէկն ընելով, հետզհետէ հոյակապ ու շքեղ շէնքերով զարդարեցին, այնպէս որ իրաւամբ Ասիոյ ամենամեծ և ամենազեղեցիկ քաղաքներէն եղաւ և մնաց այնպէս մինչ Մեծն Աղէքսանդրէն գրաւելն։ Այն ժամանակէ ի վեր կերևի որ սկսաւ նւազիլ ու անկում ունենալ։

Այսու ամենայնիւ Պողուբէոս, որ Քրիստոսէ 200 տարի առաջ կապրէր, հետևեալ կերպով կը խօսի այս քաղաքի մինչ այն ժամանակ ունեցած վիճակին վերայ. «Այս քաղաքի շինութիւնները կը գերազանցեն հարստութեամբ և մեծավայելչութեամբ աշխարհի մէջ եղող ամէն ուրիշներն և թագաւորի պալատի շուրջն 700 գրկաչափ է (մերձ 1300 մեթր)։ Թէև փայտէ շինուած մասերը մայրի ու նոճի ծառերէ էին, սակայն ատաղձի ամենափոքր կտորը չէր երևեր։ Կապերն ու գերաններն, առաստաղն ու սիւներն, որք կը կրէին գաւիթներն ու սրահակամարներն, պատած էին արծաթէ կամ ոսկիէ թերթերով։ Բոլոր կղմինտրներն արծաթէ էին։ Այս թանկագին նիւթերի մեծագոյն մասը յափշտակուած էին Մեծն Աղէքսանդրի հրամանատարութեան տակ եղող մակեդոնացիներէն և մնացորդը կողոպտուած էին Անտիգոնոսէն և Սիլևկիոսէն։ Այսու հանդերձ, երբ Անտիոքոս այս թագաւորութիւնը մտաւ, Ենա տաճարը տակաւին շրջապատուած էր ոսկեզօծ սիւներով, և

դինւորները անոր մէջ գտան բազմաթիւ արծաթեայ կղմինտրներ, քանի մը ոսկիէ և շատ արծաթէ աղիւսներ։ Այս ամէնը վերածուեցաւ դրամի՝ Անտիոքոսի պատկերով։ Ամբողջի գումարը բարձրացաւ 4,000 տաղանդի կամ մերձ 15,000,000 ֆրանկի (Bollin, VII, page 421)։

Այս քաղաքը երբեմն մեր հեղինակներէն Ահմատեան Շահաստան ևս կոչուեր է։ Սեբէոս կը պատմէ.

«Իսկ Շահեանն երթեալ հանդիպէր զաւրացն Յունաց, ի Կարին գաւառի։ Եւ արարեալ պատերազմ հարկանէր զնոսա սրով ու սուսերի և փախստական արարեալ՝ հալածական առնէր յաշխարհէն։ Իսկ յամին քսաներորդի առաջներորդի արքայի Խոսրովայ, հրաման ետ նմա՝ փոխել զբնակիչս ի Կարնոյ քաղաքէ և տանել բնակեցուցանել Ահմատեան Շահաստան, ընդ նոսին ըմբռնեալ և երանելի ծերունին կաթուղիկոսն Յովհան ի գերութիւն վարեցաւ հանդերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն։ Եւ անդէն վախճանեալ բերաւ մարմին նորա ի գիւղն Աւան, յեկեղեցին, զոր ինքն շինեաց։ Եւ ի նմին ամի վախճանեցաւ երանելին Աբրահամ կաթողիկոս։ Այս Խոսրով՝ որ կոչեցաւ Անուշրուան» *)։

Սակայն Հ. Զամչեանը Յովհաննէս կաթողիկոսէն և Ստեփան-

---

*) Սեբէոս, կերեւի որ անունները (աւելի մականունները) ոչոքեր է։ Ցիրաւի, Խոսրով Ա. Անուշիրուան մականուանուածը կամ Սեբէոսի Անուշրուան կոչուածը թէեւ 576 թւականին (Ք. յ.) Թէոդուպոլիսը (Կարին) պաշարեց, բայց չկրցաւ առնել։ Սակայն, Խոսրով Բ.-ի (Փարվիզ կամ Էփէրվիզ) ժամանակ երբ սկիզբները պարսիկները տիրեցին գրեթէ ամբողջ Փոքր Ասիային եւ մինչեւ արդի Սկիւտար յառաջացան, Շահէն, որ Խոսրովի հրամանատարներէն մէկը կը թւի ըլլալ, Թէոդոսուպոլիսն առաւ եւ ժողովուրդը գերելով՝ արքայի հրամանին համեմաս Ահմատեան դրկեց։ Այս դէպքը հաւանաբար 615-ին կամ 616-ին տեղի ունեցաւ, որ ըսելէ Թէոդուպոլսի առաջին պաշարումէն մերձ 40 տարի յետոյ։ Այս որոշ է, որ Շահէն՝ Խոսրով Բ.-ի հրամանատարներէն էր եւ ոչ թէ Խոսրով Ա.-ի։

նոս Ասողիկէն առնելով՝ նախ Կարինի գրաւումն հայազն Աշոտին կը տայ, որ հայ զօրքով Խոսրովին կաջակցէր։

Այս հայերն ի՞նչ եղան. արդեօք Հերակլի Պարսկաստան յարձակած ատեն անոր հետ միանալով՝ հայրենիք դարձա՞ն, թէ ետքէն մի առ մի փախչելով՝ ազատուեցան։ Արդեօք արաբացւոց Պարսկաստանին տիրած ժամանակը կրօնափոխ լինելով՝ ձուլուեցա՞ն, թէ՞ շարունակեցին իրենց ազգութիւնը պահպանել մինչև Շահ Աբբաս Ա.-ի ժամանակներն, ստոյգ տեղեկութիւն մը չկայ, դէթ ես չեմ կրցեր գտնել։

Ըստ պարսիկ պատմագրաց՝ Աբբասեանների խալիֆայութեան ժամանակ այս քաղաքը շատ ծաղկած ու բազմամարդ էր։ Իբրև ապացոյց կը բերուի, թէ երբ արաբներն զայն գրաւեցին ու աւերեցին, երկու խարվար մետաքսեայ խոնջան հաւաքուեցաւ սպանուողների վարտիքներէն*)։

Սակայն, երբ Սելջուկեանները զայն իրենց մայրաքաղաքը ըրին, նորէն ծաղկեցաւ ու մեծցաւ. բայց 14-րդ դարին մէջ այս քաղաքն իւր վերջնական մեծ հարուածն ստացաւ, երբ Լէնկ Թէյմուր զայն առնելով՝ երեսի ու հոյակապ շինութիւնները կործանեց, բնակիչները կողոպտեց և քաղաքն աւերակների կոյտերի փոխեց։ Այս հարուածէն ետքը ալ բոլորովին չվերականգնեցաւ։

Շահ Աբբաս 1603—4-ին Հայաստանէ հանած հայերի մէկ մասը Համադանի վրայով ու մօտերքով չուեցնելով, մի փոքրիկ թիւ ալ, որի քանակութիւնն ինձ կարելի չեղաւ ճշտել, այս քաղաքին մէջ բնակեցուց։ Այս հայերի մասին մինչ մէկ դար ոչ մի տեղեկութիւն տրուած չէ։ Սաֆաւեան տէրութեան անկումէն և աֆղան Մահմուդի Սպահանին տիրելէն քանի մը տարի ետքը, Աշրաֆի տիրապետութեան ատենները, կատաղի աֆղանների մէկ մասը Համադանի վերայ արշաւելով, զայն առին։ Այս վայրագները իրենց բանակը քաղաքէն դուրս հաստատելով, ամէն օր նրա մէկ թաղին վերայ կը յարձակէին, չափահաս մարդկանց ու հասակաւոր կիներն որք կանցնէին, տղաներն ու մանկամարդ աղջիկները կը գերէին, տներէ պէտք եղած ուտելիքները կը հաւաքէին և տանել չկրցած իրերը ջարդելէն ու այրելէն ետքը, թաղին մէջ տեղ մը կը խմբուէին և կսկսէին ճաշ պատրաստել և ուտել։

Ետքը նորէն նոյն թաղին մէջ շրջելով՝ առուան թերի թողած խժդժութիւններն կը լրացնէին, և ի վերջոյ, իրիկուան կերակուրը լափելէն ետքը, իրենց բանակատեղը կը վերադառնային։

Ասոնց բարբարոսութիւններէն զերծ չմնաց նաև հայերի թաղը։ Հաճելի է ինձ անյիշատակ չթողուլ հայուհւոյ մը արարքն, որն պատմեցաւ ինձ արժանահաւատ անձէ մը, և որն աւանդաբար հասեր էր անոր, ինչպէս և ուրիշներին։

Կիրակի առաւօտ մը, մինչ Թաչատուր անունով քահանայ մը պատարագ կը մատուցանէր և ժողովուրդի բարեպաշտ մասը եկեղեցին ժողոված՝ ջերմեռանդութեամբ կաղօթէր, որ այն դառն բաժակն իրենց և իրենցներին չխմցուի, արիւնարբու աֆղանները հայերի բնակած թաղին վերայ կը յարձակին և կսկսին իրենց սովորական խժդժութիւնները գործադրել։ Ասոնցմէ խումբ մը «Առէք կերէք»ի պահին եկեղեցին կը մտնէ, բոլոր աղօթողներն սրէ կանցնէ, որոնց մէջ նաև պատարագիչ քահանան, որն սրի քանի մը հարուած ընդունելով՝ արիւնթաթաւ, սեղանին վերայ կիյնայ, կը մարի։ Աֆղաններն եկեղեցին կողոպտելէն ետքը կը հեռանան։ Այս ժամանակ հայերէն ոմանք փախչելով՝ գետնափոր ջրանցքի մը մէջ ապաստաներ էին։ Քահանայի կինը՝ Մարիամ, իւր զաւակները հոն տարեր էր։ Այս անվեհեր հայուհին երբ նորեկ ապաս-

*) Այս չափազանցութիւն կը թւի, քանզի ասոր յիշած խարվարն մեծ 300 քիլոգրամ է։ Եթէ ամէն մէկ խոնջան իրար վերայ 15 գրամ կշռէ, 40,000 խոնջան կրնէ։ Եթէ մեսամսեայ խոնջան ունեցողների թիւը 40,000 լինի, հասարակ խոնջան ունեցողներինը առնուազն 400,000 հաւելու է...

տանողներէն կիմանայ որ աֆղանները եկեղեցին մտեր և այնտեղ եղողներն կոտորեր են, իսկոյն զաւակները մէկի մը յանձնելով՝ ապաստարանէն դուրս կելլէ, կը վազէ եկեղեցին և իւր կիսամեռ քահանայ էրիկն շալակն առնելով և բազմաթիւ վրտանգներէ հրաշքով ազատելով՝ կը վերադառնայ գետնափորն, ուր անոր վէրքերն կերպով մը կապելով և հնարաւոր ճարն ընելով՝ նորէն շունչ կը տայ։

Աֆղանները քանի որ շարունակեցին կոտորածն ու կողոպուտն, գետնափորին մէջ ապաստանած հայերը դուրս չելան և արիասիրտ Մարիամ, քանի մը քաջերի հետ, ամէն իրիկուն աֆղանների քաղաքէն հեռանալէն ետքը, ջրանցքէն դուրս ելլելով, անտէր ու կիսաւեր տներն և շատ անգամ աֆղանների ճաշած տեղն կերթար և գտած ուտելիքները հաւաքելով՝ գետնափորը կը տանէր և անդ եղողներին կը բաշխէր։

Քիչ ժամանակէն ետքը օսմանցիներն Ահմադ փաշայի հրամանատարութեամբ աֆղանների ձեռքէն առին այս քաղաքն և անոնց պակաս թողածը լրացուցին, զայն դարձեալ կոտորածի ու կողոպուտի ենթարկելով, և բազմաթիւ գերիներ, գլխաւորաբար հայերէն, առնելով՝ ղրկեցին Թուրքիա։

1730-ի ատեններն Նադեր շահ օսմանցիներին յաղթելով՝ տիրեց նաև Համադանին։ Այս շահի մահէն յետոյ Պարսկաստան ինկաւ նորէն խռովութիւնների մէջ, որք շարունակուեցան քիչ բացառութեամբ, մինչև զաջարաց Մահմադ շահի թագաւորելը։

Այս աղէտներին ամէնէն շատ ենթարկուեցան հայերն, որոնց թիւը կոտորածի, գերեվարութեան ու գաղթականութեան պատճառով շատ նուազեցաւ։

Այսու հանդերձ, Մօրիէ, որ դարիս սկիզբներն և Քեր Փորթըր, որ 1818-ին այցելեցին այս քաղաքը, հայ ընտանիքների թիւը մերձ 600 տուն դտան։ Իսկ Հ. Լայըրդ, որ 1841—42-ին այցելեց այստեղ, կըսէ. «Քաղաքն ունի բազմաթիւ հայ ընտանիքներ, որք առանձին թաղի մը մէջ կը բնակին»։ Անկէ

ետքը անոնց թիւը երթալով պակսեցաւ և 1871-ի սովը Համադանի մէջ գուցէ ամէնէն սաստիկն եղաւ և որը նորէն հայերի ցրումին պատճառ դարձաւ։ 1877-ին ինձ բլուր մը ցոյց տուին, որի վերայ սովէն առաջ 100-ի չափ պարսիկ աղքատ ընտանիքներ կը բնակէին, բայց այժմ անոնց տների աւերակները միայն կը տեսնուէին։ Քաղաքի մէջ դեռ անբնակ տներ կային։ Արդի բնակչաց թիւը 30,000-ը կանցնէ։ Ասոնք կը բաղկանան պարսիկներէ ու թուրքերէ, գրեթէ կէս առ կէս համեմատութեամբ և երկու լեզուն ևս անխտրաբար կը խօսուի։

Համադանի մէջ կը բնակին նաև մերձ 3—400 տուն հրէայք, որոնք շատ հին ժամանակներէ եկած կը կարծուին։

Աստ պատրաստուած կաշին Պարսկաստանի մէջ ամենալաւ որակն ունի. կաշեգործարաններ շատ կան, որք քաղաքին մէջ լինելով, մէկ թաղը գարշահոտութեամբ կը լեցնեն։ Բացի ասկէ, շատ մը արտաքնոցների ոտքերը մօտակայ փոսերի մէջ վազելով, կարելի չէ գնալ մէկ քանի փողոցներէն, սաստիկ գարշահոտութեան պատճառով։

Զարմանալի է, որ այսչափ աղտեղութիւններով հանդերձ, տարափոխիկ հիւանդութիւններ չկան։ Այս պիտի բացատրել Համադանի դիրքի բարձրութեամբ և օդի աղէկութեամբ։

Պարսկաստանի գինու տեսակների մէջ երրորդ տեղը կը բռնէ Համադանի գինին, որ մեղմ ու հաճելի ըմպելիք է։ Բաւականին գեղեցիկ գորգ և ուրիշ հիւսուածեղէններ կելլեն այս քաղաքէն։

Շինութեանց մէջ անուանի է Գոմբադը Ալեւիան, որ մի հին ձեռակերտ է։ Քաղաքին մէջ, մեծ մզկիթի մօտերը, գմբէթաւոր փոքրիկ շէնք մը կայ, որի համար հրէայք կըսեն, թէ Եսթերի և Մուրթքէի գերեզմանները կը պարունակէ։ Քարէ դռնակէ մը մտնելով, նախ փոքրիկ սենեակ մը կայ, ուրկէ կը մտնէք ուրիշ քառակուսի սրահիկ մը, որ գմբէթով ծածկուած է։ Այս սրահիկին մէջ երկու իրարմէ քիչ տարբեր մե-

ծութեամբ դամբան կամ լաւ է ըսել տապանակ կայ, ազ-
նիւ փայտէ շինուած։ Տապանակներուն չորս կողմի շրջանակները
քանդակուած են։ Քանդակներն կը պարունակեն Սաղմոսէն
քաղուածքներ՝ եբրայեցերէն լեզուով և դուրս ցցուած գրերով։ Այն
խախամն, որ 200-րդ որդիէ որդի յաջորդութեամբ սոյն շէնքի
պահպանութեան պաշտօնն ունէր, կըսէր, որ այս գրուածքի թուա-
կանը 1000 տարիէ աւելի հնութիւն ունի։ Փայտն ու քան-
դակներն շատ հին կերևէին, սակայն այնչափ հին լինելը չկըր-
ցայ ճշտել։ Տապանակներէն մեծն, ըստ աւանդութեան, կը
ներկայացնէ Եսթերի (Ասուերոսի թագուհւոյ*)) շիրիմն, իսկ
փոքրը՝ Մուրթքէինը։ Շրջակայ պատերի վերայ գաճով դուրս
ցցուած գրուածքներ կան, որք ըստ նոյն խախամին, Մուրթքէի
ազգաբանութիւնն մինչ Աբրահամը կը հասցնեն։ Արևելեան
պատին վերայ մարմարիոնէ փոքրիկ յիշատակարան մը կայ,
որի համար խախամն կըսէր, թէ 2000 տարուան էր։ Սոյն սրահիկին
կից ուրիշ սենեակ մը կայ, որ սեղանը կամ աղօթատեղին է։

Քաղաքի հարաւային կողմը, կէս ֆարսախ հեռաւորու-
թեան վերայ, կը գտնուին «Գնանջնամէ» կամ լաւ է ըսել
«Զանգնամէ» կոչուած բևեռագիր արձանագրութիւններն։

Որոնդէս լեռներէն մէկի կուրծքին վերայ, որ նոյն
լեռնաշղթայի հիւսիսային արևմտեան և քաղաքի արևմտեան
կողմէ հոսող գետի աջ կողմն է, տաշուած են երկու տախտակ՝
$2^3/_4$ քառորդ մեթր լայնութեամբ և երկու մեթր բարձրու-
թեամբ։

Այս տախտակներէն իւրաքանչիւրը 3 սիւնակի բաժնը-
ւած է. առաջին սիւնակը $1^1/_4$ մեթր, իսկ երկրորդը և երրոր-
դը 75 սանթիմեթր լայնք ունին։ Սիւնակներէն իւրաքանչիւրն
20 տող գրուածք ունի և տողերն իրարմէ անջատուեր են դիծով
մը։ Սիւնակների տողերն ու դիծերը հորիզոնական ուղղու-

*) Հաւանաբար Արտաշիր Երկայնաբազուկի թագուհին լինի։

թեամբ իրար կը համեմատեն։ Առաջին սիւնակի բևեռագրերն
ուղղաձիգ են, երրորդինը հորիզոնական, իսկ երկրորդինը
տեղ-տեղ առաջինի և տեղ-տեղ երրորդի գրերին կը նմանին։

Այս արձանագրութիւններն երեք լեզուով են. գրուած
են պարսկերէն, բաբելական և մարական լեզուներով։ Այս
բևեռագրերը կը պարունակեն Դարեհ Վշտասպեանի և իւր
որդւոյ Քսերքսէսի անուններն և տիտղոսներն, Որմիզդին ու-
ղղուած մաղթանքների հետ։ Այս արձանագրութիւններն մաս-
նաւորապէս հետաքրքրական են բևեռագիր գրուածքներին մեկ-
նաբանութեան առաջին բանալին ընծայած լինելուն համար։

1877-ին, այս քաղաքն իմ այցելութեան ժամանակ, ա-
մերիկացի միսիոնարները դեռ նոր հաստատուած լինելով, յա-
ջողեր էին հայ ժողովուրդի միայն կէսն բողոքական դաւա-
նութեան դարձնել։ Այս պատճառով բողոքական ու լուսաւոր-
չական հատուածներին մէջմատուռի ժառանգութեան վերայ վէճ
ծագած էր, բայց ի վերջոյ, տեսակ մը լռելեայն համաձայնու-
թեան եկեր էին, որ առաւօտեան հայ քահանան ժամասացու-
թիւն կը կատարէր ըստ առաքելական եկեղեցւոյ ծէսի, որմէ
ետքը պատուելի միսիոնարը կը մտնէր, քիչ-շատ փոփոխու-
թիւն ընելով՝ մատուռը ժողովարանի կը վերածէր և քարո-
զութիւն կընէր։ Այս տեղի հայոց բողոքական լինելն աւելի
իրենց անգիտութեան ու աղքատութեան հետևանքն է։

Գրիչս ժամանակին (1877 թ.) մասնաւոր նամակով
Էջմիածնի ուշադրութիւնը հրաւիրեց իրաց այս վիճակին վե-
րայ, բայց հարկ է ցաւօք կրկնել, որ ամէն ազդ, տեղեկագիր
ու բողոք ապարդիւն էր ժամանակի թմբեալ միաբանութեանը
յուզելու և գործունէութեան մղելու։

1889-ին, երկրորդ անգամ այս քաղաքէն իմ անցած
ատեն տեսայ, որ միսիոնարք շինած էին բաւականին մեծ ժո-
ղովարան մը, որին քիչ-շատ հայկական եկեղեցւոյ ձև տալու
համար մի փոքրիկ դմբեթ ալ աւելցուցեր էին, և քաղաքի 40 տուն
հայերէն 34 տունը բողոքական ըրեր էին։ Մնացեալ 6 տունն,

որ դեռ իւրեանց նախահարց դաւանութեանը պինդ մնացեր էին, քահանայ չունէին և պէտք եղած ատենը մօտակայ Շաւարին գիւղէն բերել կը տային։ Մատուռն գոցած և սպասներն մի առանձին տան մէջ կը պահէին։ Թող մեր վարդապետները էջմիածնի մէջ պորտաբուծութեամբ միայն պարապեն...

Մատուռի շրջակայ գերեզմանաքարերէն շատերը չէին կարդացուեր. հիներէն մէկը, զոր ես կրցայ կարդալ, 1820 թուականը կը կրէր։ Միսիոնարներն 3 դպրոց, կամ աւելի ճիշտ է ըսել 3 զատ դասարանէ բաղկացած մի կրթական հաստատութիւն ունին։ Մէկին մէջ 34 հրեայ և 6 հայ տղայք կային։ Վերջիններս կը սովորէին հայերէն և մասնաւոր կերպով անգլերէն և պարսկերէն։ Երկրորդին մէջ 35-ի չափ հայ տղայք միայն ընթերցանութիւն կը սովորէին։ Երրորդը, որ գիշերօթիկ էր, 36-ի չափ աղջիկներ հայերէն ընթերցանութիւն կը սովորէին երկու գթութեան քոյրերի ձեռամբ։

*
* *

Համադան քաղաքէն 3 քիլոմեթր հեռու կը գտնուի ծառաւէտ ու ջրառատ Շաւարին գիւղը։ Աստ հաստատուած են 80 տուն հայեր, տեղացի պարսիկների հետ։ Գիւղն ունի մի քահանայ և մատուռ մը։ Ասոնք ամէնքն ալ 1877-ին լուսաւորչական էին, բայց այն ատենէ այս կողմ հինդ ընտանիք բողոքականութիւն ընդուներ են։

ԱՆԶԱՏ ԳԱՒԱՌՆԵՐ

Ստորև կը ներկայացնեմ Սպահանի և Հնդկաստանի թեմին ենթակայ քանի մը դաւառներ, որոնք հայաբնակ գլխաւոր կեդրոններէ հեռու ընկած լինելով, անջատ շրջաններ են, տարբեր նահանգների սահմանների մէջ։ Ասոնք հետևեալ շրջաններն կամ փոքրիկ դաւառներն են.

1.— ՂԱՐԱՂԱՆ

Այս դաւառը կը գտնուի Թեհրանի հարաւային, հարաւային արևմտեան կողմը և անորմէ կարաւանի չորս օրուայ ճամբայ կամ մերձ 20 ֆարսախ հեռու է։

Գիրքը քիչ-շատ լեռնային է, ունի առատ ջուր, լաւ արօտատեղիներ և շատ մրգաստաններ, ուր մեծ թիւով ընկուզենիներ կան։ Ղարաղանի միայն 5 գիւղերի մէջ հայեր կան, որոնք պարսիկների հետ խառն կը բնակին։ Հայաբնակ գիւղերն հետևեալներն են.—

Լառ, որ 65 տուն հայ բնակիչ ունի։

Զանախչի, Լառէն 1/4 ֆարսախ հեռու է և 70 տուն հայ բնակիչ ունի։

Զամբար, որ Զանախչիէ մէկ ֆարսախ հեռու է և 35 տուն հայ բնակիչ ունի։

Ենգիղալա, որ Լառէն քիչ մը հեռու է և 20 տուն հայ բնակիչ ունի և մի փոքրիկ եկեղեցի, առանց քահանայի։

Բարգուշաս, որ Լառէն ½ ֆարսախ հեռու է, և ուր կան

փոքրիկ եկեղեցի մը, քահանայ մը և 20 տուն հայ բնակիչ։[1])

2.— ՄԱԼԱՅԵՐ ԿԱՄ ՄԱԼԱՅԻՐ

Այս գաւառն, որ Համադանի հարաւային կողմն և անորմէ մերձաւորապէս 10 ֆարսախ հեռու է, ունի երեք հայ գիւղ։[2])

Անուաշ կամ Անուշ, որ ունի 61 տուն (190 արական և 151 իգական) հայ բնակիչ։ Ըստ ուրիշ տեղեկութեան մը՝ միայն 40 տուն ունի։

Ղասումաբադ՝ 24 տուն (71 արական, 69 իգական)։

Դեյզուանա՝ 3 տուն (11 արական, 9 իգական), ընդամենը 88 տուն կամ 501 բնակիչ։

3.—ՔԵԱՋԱՋ ԿԱՄ ՔԵՋՋԱՋ

Համադանի հարաւային արևելեան կողմը և անորմէ 20 ֆարսախ հեռու է, իսկ Սուլթանաբաղ քաղաքի արևմտեան, արևմտեան-հարաւային կողմը և անորմէ երեք-չորս ֆարսախ հեռու է։

1) Ըստ Թադէոս եպիսկոպոսի վիճակագրութեան՝ Լառի մէջ՝ 50, Ջանախչիի մէջ 32, Ջամբարի մէջ 14 տուն հայ բնակիչ կայ, իսկ Ենգիղալա եւ Բարգուեաս այդ վիճակագրութեան մէջ յիշուած չեն, այլ Ջարհաս անունով գիւղ մը կը յիշուի 6 տուն կամ 47 բնակչով։

2) Հարկ կը նկատեմ յիշել, որ ստորեւ բերուած գաւառներն ու գիւղերն ոչ տեսեր եմ եւ ոչ այնպիսի լաւատեղեակ անձերի հանդիպեր եմ, որոնք անձամբ տեսած լինելով, կարենային ստոյգ տեղեկութիւն տալ, ուստի պարտաւորեալ Զուղայի պատմութենէն կը քաղեմ վիճակագրութիւնն, զոր Սպահանի առաջնորդ Թադէոս եպիսկոպոս ընել տեր է 1856 թւականին։ Տեղ-տեղ աւելցուցած եմ բնիկ գեղացիների ինձ տուած տեղեկութիւնները։

Այս գաւառակն ունի 9 հայաբնակ գիւղ, որք Քարին գետի և անոր ճիւղերի վերայ են։

Ըստ 1856 թւի վիճակագրութեան յիշուած են հետեւեալ գիւղերն.—

	տուն	արական	իգական
Դիլիսաւա	29	102	103
Քեալաւա	51	154	140
Ազնա	26	94	81
Գոլզար	27	70	62
Մարանդ	12	43	31
Ումբիան	6	18	16
Զգինաղ	6	18	16
Սէյդունա	13	30	27
Ղալա Շէյխ	8	32	29
Ամբարթա	11	38	36

Սակայն, ընիկ գիւղացիներէն ձեռք բերած իմ տեղեկութեանց համաձայն՝ վերի գիւղերն ունին հետեւեալ թիւով բնակչութիւն.—Դիլիսաւա՝ 60 տուն, մէկ եկեղեցի և մէկ քահանայ, Քեալաւա՝ 100 տուն, մէկ փայտաշէն եկեղեցի և 2 քահանայ. Ազնա՝ 60 տուն, մէկ փայտաշէն եկեղեցի և 2 քահանայ. Գոլզար՝ 60 տուն, մէկ փայտաշէն եկեղեցի և քահանայ. Մարանդ՝ 40 տուն, մէկ փայտաշէն եկեղեցի և 1 քահանայ. Ումբիան՝ 40 տուն. Զգինաղ՝ 20 տուն, մէկ փայտաշէն եկեղեցի և 1 քահանայ, ընդամենը 380 տուն։ Ըստ ոմանց այս գաւառակի հայ բնակչութիւնը կը կազմէ 425 տուն։

4.— ԳԵԱՓԼԱ

Այս գաւառակն կից է Քազազին և ունի 15 հայաբնակ գիւղ, ըստ հետեւեալի.

	տուն	արական	իգական
Զարթաղ	19	69	61
Օրթաչիման	37	109	99
Թոխմար	35	119	88
Մուղան	3	8	6
Ահմադաբադ	23	82	64
Հոսէյնաւա	38	113	93
Հաջիաւա	37	95	83
Շարաֆաւա	5	18	15
Փրչստան	32	114	102
Քամիան	11	44	36
Քերթ	87	287	237
Զառնա	39	123	117
Աբասաբադ	2	9	8
Բաղմովդի	40	130	126
Մազրա	5	16	9

Այս գաւառակի մէջ Զէշմէդարա և Աբբարիք հայ գիւղերն, որք 60 տունէ կը բաղկանային, կրօնափոխ եղած են 70—80 տարի առաջ, Նադր խան անունով մէկի հարստահարութենէն ստիպուած, բայց մինչ այժմ պահեր են քրիստոնէական յատկանիշներն, կը յարգեն որոշեալ պահքեր և հայ հոգևորականներն, գիտեն հայ լեզուն, երբեմն կը խոստովանեն և հաղորդութիւն կառնեն։

ՔԵԱՄԱՐԱ

Համադանի հարաւային-արևելեան կողմը և անորմէ մերձաւորապէս 6 օրւայ, իսկ Քեազազ գաւառակէն երկու օրւայ ճամբայ հեռու է։ Կը գտնւի Սուլթանաբադ և Գոլփայեգան քաղաքների միջև։ Այս գաւառակը կը պարունակէ հինգ հայաբնակ գիւղ.—

	տուն	արական	իգական
Դաւութաբադ	14	45	36
Քեանդլներ	24	75	61
Լիլիհան	54	170	154
Սաքի	10	38	23
Ղորչիբաշի	22	74	68
Գումար՝	124	402	342

Ըստ այլ տեղեկութեանց, այս գաւառակն ունի 8 հայաբնակ գիւղ և 350 տուն բնակիչ։

ԲՈՒՐՎԱՐԻ

Այս գաւառակը կը գտնւի Քեամարայի հարաւային և Գոլփայեգան քաղաքի արևմտեան կողմն։

Այս գաւառակն ունի 9 հայաբնակ գիւղ, ըստ հետեւ-

լի.—

	տուն	արական	իգական
Գովզ	31	115	107
Ղարաքահրիզ	11	31	37
Ֆարաջաբաղ	17	57	50
Ջանխոշ	65	171	123
Ջարբաղ	46	153	115
Շաւբաւա	19	63	43
Անուշ(°)	35	115	100
Փահրա	34	115	89
Դէհնով	5	9	9
Գումար՝	263	829	673

ՉՀԱՐՄԱՀԱԼ

Այս գաւառն կը գտնուի Բուրվարի գաւառակի և Գոլֆայեղան քաղաքի հարաւային կողմը. Համադանէ հեռու է մօտաւորապէս 40 ֆարսախ, իսկ Սպահանէ 14 ֆարսախ հեռու։ Չհարմահալի հայերն Շահ Աբբասի դաղթականութեան մաս կազմած են Բասենի շրջանէն։

Ըստ իմ յիշած վիճակագրութեան, Չհարմահալ ունի 5 հայաբնակ գիւղ, ըստ հետևեալի.

	տուն	արական	իգական
Սիրաք	64	277	245
Ահմադաբաղ	92	326	271
Գիշնիգան	43	125	114
Մամուռան	24	72	73
Լիվասիան	83	307	253
Գումար՝	306	1107	956

Ըստ իմ ունեցած մասնաւոր տեղեկութեանց, այս գաւառն ունի 9 հայաբնակ գիւղ՝ 550 տուն բնակիչք[1)]։

ՓԵՐԻԱ

Այս գաւառն, որ Սպահանէ մերձ 20 ֆարսախ հեռու է, ունի 21 հայաբնակ գիւղ, ըստ հետևեալ վիճակագրութեան.

	տուն	արական	իգական
Խոջիդալա	45	160	135
Հազարջրիք[2)]	99	334	311
Բոլորան	81	269	219
Ազնաւուլ	50	167	133
Հաղան	62	189	130
Նամակերտ	84	367	221
Դրախտակ	14	67	42
Միլակերտ	50	192	169

(Շարունակութիւնը տեսնել յաջորդ էջում)

1) Մեր ֆաղած տեղեկութեանց համաձայն՝ Չհարմահալ գաւառում, այդ թաղամասերին, գոյութիւն են ունեցել հայաբնակ 11 գիւղեր, ըստ հետեւեալի՝ Սիրաք, Ահմադաբաղ, Գիշնիգան, Մամուռան, Լիվասիան, Մամուռա, Սինագան, Աղբուլաղ, Ներին Քոնարֆ, Վերին Քոնարֆ եւ Հաջիաբաղ։

1946—47 թ. դէպի Հայաստան եղած ներգաղթից յետոյ այս գաւառի հայ բնակչութեան թիւը շատ նօսրացաւ, եւ միայն մի քանի գիւղերում մնացին փոքրաթիւ հայեր։ Ներկայիս հազիւ մի տասնեակ տուն հայեր բնակւում են Սիրաք, Հաջիաբաղ եւ Մամուռան գիւղերում։ Ծ. Խ.

2) Աստ առաջներն 600 տուն հայ եղած է եւ վանք մը, ուր առաջնորդ մը կը նստէր։ որ թէ այս գաւառին եւ թէ Համադանին կիսխէր։

	տուն	արական	իգական
Շուրիշկան[1])	44	134	111
Բժկերտ	21	66	70
Խունկ	40	141	104
Սանդիբարան	89	285	251
Խոյդան	73	273	228
Դաջան	36	100	99
Ղարղուն	49	181	175
Սըվարան	19	81	59
Մուղան	26	109	103
Ատիգիան	54	174	158
Նանադիկեան	42	135	121
Դարաբուրդ	16	58	44
Քրդերն	20	71	61
Ընդամենը՝	1014	3553	2964

ԼՆՋԱՆ ԵՒ ԱԼԻՆՋԱՆ

Այս գաւառակները կը գտնուին Սպահանի մօտերն։ Ժամանակին այս զոյգ գաւառակներում եղած են 18 հայ գիւղեր, բայց կերևի, որ այս գիւղերի ժողովուրդը Պարսկաստանի խառնակութեանց ժամանակ, գլխաւորապէս 18-րդ դարի վերջին քառորդին մէջ հարստահարութեանց դիմանալ չկրնալով, ցրուեցաւ և այժմ ոչ մէկ հայ կը գտնուի։

Թադէոս եպիսկոպոսի վիճակագրութեան մէջ կը յիշուի Շօրօրիար գիւղը՝ 13 տուն, 32 արական, 30 իգական բնակչութեամբ։

1) Աւս հոչակաւոր ձեռագիր աւնտարան մը կայ, եւ շաս ուխտաւորներ կերթան ուխտի։

Զաքարիա սարկաւագ, ի շարս այն տեղերի, ուր հայերը բնակուեցան Շահ Աբբասի օրօք, կը յիշէ նաև Գուլփէքան (Գոլփայեղան) և Քերման։ Տարակոյս չկայ, որ առաջներն Գոլփայեղան հայեր եղեր են, քանզի այս պատմագիրը Շահ Աբբասի Գոլփայեղան այցելելու մասին խօսած ժամանակ կըսէ, թէ մօրմէն լսած է, որ երբ Շահ Աբբասն հայերն գաղթեցրած է, իր մօր մայրը և հայրը տարած և հաստատած են Գոլփայեղան, բայց յետոյ, քանաքեռցի Մելիք Դաւիթն, որ եղած էր Կոտայքի գաւառապետը, անոնց տարած, բնակեցուցած է իւրեանց գիւղն՝ Արծնի, և այլն...

Սակայն, ուրիշ որևէ աղբիւրի մէջ յիշատակութիւն չեմ տեսած Քերմանի մէջ հայերի բնակութեան մասին։

ՇԻՐԱԶ

Երբ Շահ Աբբաս Հայաստանէն հանած հայերն Սպահան բերաւ, Ալլահվերդի խան, որ շահի զօրավարներէն մէկն էր, թագաւորէն խնդրելով, անոնցմէ 500 ընտանիք տարաւ Շիրազ և այդ քաղաքի շրջակաները բնակեցուց։

Հայ գրիչներ մասնաւոր տեղեկութիւններ չեն թողած հայ գաղթականութեան այս հատուածի մասին։ Եւրոպացի ճամբորդների թողած յիշատակութեանց մէջ ևս հատ ու կտոր ու հարևանցի տեղեկութիւններ կան։ Շարդէն հետևեալը միայն կը գրէ. «Ես պէտք չէ մոռնամ, որ Շիրազ կան հրեաներ, հայ քրիստոնեայ և լատին քարոզիչներ, որք Քարմիլեան կրօնաւորների դասին կը պատկանին»։

Ֆրայզերը, որ 1672-ի և 1681-ի ընթացքին այցելած է այս քաղաքն, հետևեալը կըսէ. «Պարսկաստանի ամէն քաղաքների, ինչպէս և ասոր մէջ (Շիրազ), հրէից ազգէն շատերը կան, նոյնպէս հայ քրիստոնեաներ և եւրոպացի հռոմէական կաթոլիկներ. ասոնք ամէնքը վաճառականութիւն կընեն։

Այս քաղաքէն մեկնած ատենը, մենք դուրս առաջնորդուեցանք այնպէս, ինչպէս ներս մտեր էինք։ Հայերը զմեզ պարտաւորեցուցին ճաշ մը ընդունել իրենց պարտէզին մէջ, ուր կային մաքուր ու գեղեցիկ պահուած շատ գերեզմաններ։ Բայց ամէնէն աւելի տարատեսիլը մի նոր գերեզման էր, որ շըրջապատուած էր նոճիներէ, որոնք այնչափ աղէկ յարդարուած էին, որ կը թուէին թուխ կանաչ հագած սգաւորներ լինէին. այնչա՜փ սիրուն սպասաւորներ, իրենց բրգաձև կերպարանքով, այնպիսի տխուր պաշտօնի մը համար»։

Ֆրէզըր, 1821-ին,[1]) այս քաղաքէն անցնելով, կըսէ. «Քուլերան անդ սաստիկ կոտորած կընէր, բայց դեռ հրէից ու հայոց թաղերը չէր մտած։ Տեղացի մոլեռանդները ըսելով որ քրիստոնէից խմիչք շինել, խմելու և վաճառելու պատճառով է այս ախտին ենթարկւեր քաղաքը, գրեթէ ամէն հրէի ու հայի տները բռնութեամբ խուժեցին և գտած գինու և օղու ամանները ջարդեցին։ Այս խեղճ ժողովուրդներն այս դէպքի պատճառով շատ մեծ վնասներ կրեցին և երևելի հայ վաճառական մը մեզ վստահացուց, որ միայն ինքն 3,000 ռուփի արժողութեամբ գինու կորուստ ունեցեր էր»։[2])

---

1) Այս Ֆրէյզըրը չպիտի շփոթել Ֆրայզըրի (նիւսը Ֆրայըր) հետ. առաջինը ճամբորդել է 1821—22 եւ 1825—26 թ. թ., իսկ երկրորդը՝ 17-րդ դարի երկրորդ կէսին։ Ծ. Խ.

2) Պէտք է յիշել, որ Պարսկաստանի գինիներուն մէջ ամենէն պատուականը Շիրազի գինին է. այսեղի գինու տեսակներուն մէջ համեղագոյնն «Ալի» կոչուածն է, զոր Քեմֆըր «Էրմիրաժ»ին կը նմանցնէ։ Այս գինիներն մեծ քանակութեամբ Պարսկաստանէ դուրս՝ ուրիշ երկիրներ կուղարկեն։ Շիրազ երբեմն երեւելի վաճառականներ ալ եղեր են։ Այս քաղաքը գտնելով Հնդկաստանի եւ Սպահանի երկու նամբաներուն մէկին վրայ, կը ծառայէր իբր իջեւան, եւ հայերն աստ հանգիստ առնելէ ետքը կը շարունակէին իրենց նամբորդութիւնը կամ դէպի Բուշեհր, ուրկէ կը նաւարկէին դէպի Հնդկաստան եւ կամ դէպի Սպահան։

1724 թ. Ապրիլին, ութամսեայ պաշարումէ ետքը, Շիրազ առնուեցաւ ոչ թէ զէնքերէ, որք իրենց սովորութեան համեմատ շատ խժդժութիւններ գործեցին։

Այս թւականէ ետքը Շիրազ և Շիրազի հայերն Սպահանի ամէն փոփոխութեանց մասնակից եղան։ Շիրազ այժմ 12 տան չափ հայեր կան, ունին մի եկեղեցի մի քահանայով։

ԲՈՒՇԵՀՐ ԿԱՄ ԲԱՆԴԱՐ ԲՈՒՇԵՀՐ

Պարսկաց ծոցին վրայ մի քաղաք է, և իբր նաւահանգիստ կը ծառայէ հարաւային Պարսկաստանին կամ Ֆարս նահանգին համար։

17-րդ դարի վերջերը, հայերը սկսան Բուշեհրի վրայով Հնդկաստան երթալ, և ոմանք այս քաղաքին մէջ հաստատուեցան։ Բայց կերևի որ օդի, նամանաւանդ ջրի գէշութեան պատճառով չբազմացան։ *)

Այժմ միայն 25 տան չափ հայեր կան, որք մեծամասամբ վաճառականութեամբ կը պարապին։

ԽՈՐԱՍԱՆ

Արդի Պարսկաստանի արևելեան հիւսիսային կողմը կիյնայ։ Արևմուտքէն կից է Մազանդարան նահանգին. հարաւէն Ֆարս, Եազդ և Քերման նահանգներին և Բելուջիստանին։

---

*) Այս քաղաքը բնակիչները թէ բնիկ եւ թէ օտարական, մերթ մակաբոյծ միջատ մը ունենալու ենթակայ կը լինեն. Այս որդը, որ մազի կամ ամենաւուրբ աղիի պէս է, ոչ գլուխ ունի եւ ոչ պոչ, մինչ մէկ մերթ երկայնութիւն ունի. Մարմնի ամէն տեղը, բայց ընդհանրապէս ոտի կոնդերի մօտերը կելլէ. Երբ կը սկսի բուսնիլ, պէտք է ծայրը կապելով փաթթել եւ այնպէս պահպանել, որ չկտրուի կամ չկոտրուի, որը յանախ վտանգաւոր կրնայ լինել։

Արևելքէն՝ Աֆղանստանին, իսկ հիւսիսէն՝ Թուրքեստան կամ Թուրքմանիա երկրին կամ արդի կոչմամբ ռուսական Անդրբ-կասպեան նահանգին, որմէ կը բաժանուի Աթաք լեռների և Քուրանդաղի շղթայով և Աթաք ու Գորգան գետերով։

Խորասանի բազմամարդութիւնը թէև Պարսկաստանի ուրիշ երկու-երեք նահանգներէն պակաս է, սակայն տարածութեամբ միւսները մեծապէս կանցնէ։ Սա իր մէջ կը պարունակէ Մեծ Աղի անապատը։

Զամչեան պատմագիրը, Յովհաննէս կաթողիկոսէն, Ասողիկէն կամ Սամուէլէն առնելով, կըսէ.— Երբ Սմբատ Բագրատունին Պարսից Խոսրով Բ.-ի (սովորաբար Փարվիզ մականուանուած) թշնամիներին յաղթեց, թագաւորն, Սմբատին վարձատրելու համար, զայն Հայոց և Վրկանայ աշխարհին մարզպան կարգեց։ Սմբատ, պարսիկ և հայ զօրքերով Վրկանայ երկիրն երթալով, անդ շատ հայեր գտաւ, որք յառաջագոյն պարսիկներէ գերուեր էին և Սագաստանի կողմերը կը բնակէին, մոռցեր էին Հայոց լեզուն ու գիրը և պարսկերէնով կը վարէին։ Իսկ Սմբատ Հայոց կողմերէ քահանաներ ու դպիրներ բերելով, լեզուի ուսուցիչներ կարգեց և Աբէլ անունով մէկը Վրկանայ եպիսկոպոս ձեռնադրել տալով Մովսէսէ, այն երկիրն, Հայոց կաթողիկոսի հոգևոր իշխանութեան տակ ձգեց։ Սագաստան, որ նոյն է արդի Սիստան գաւառին հետ, Խորասանի հարաւային արևելեան ծայրն, իսկ Վրկանայ երկիրն հիւսիսային արևմտեան կողմը կը գտնուին, իրարմէ մերձ 150 ֆարսախ հեռու են, և Մեծ Աղի անապատով և լեռների երկու կամ երեք շղթաներով կանջատուին։ Ուստի ամենևին հաւանական չէ, որ Սագաստան Վրկանայ պատկանած լինի և կամ Սմբատի մարզպանութեան մէջ պարունակուած։ Ինձ կը թուի, որ Զամչեան առանց քննութեան կամ լաւ ևս անուշադրութեամբ Թուրքեստանի փոխանակ Սագաստան դրեր է։ Սեբէոսի պատմածն աւելի ճիշտ և արդի պատմական քննութեանց համաձայն է։ Սա կըսէ՝ Սմբատ Վրկանայ երկրի մարզպան կարգուելով, երեք ապստամբ գաւառները Պարսից հպատակութեան մէջ մտցուց և իր մարզպանութեան ամէն երկիրը շէնցուց ու հաստատեց։ «Քանզի,— կաւելցնէ,— էր երկիրն աւերակ, կային յաշխարհին այնմիկ ազգն գերեալք ի Հայաստան երկրէն և նստուցեալ առ ստորոտով անապատին մեծի՝ որ Թուրքաստանի և ի Դիլհաստանի կողմանէ գլեզու իրենց մոռացան և դպրութիւնք նուազեալք և կարգ քահանայութեան պակասեալ։ Կային և անդ և ազգք կորդրեացն, որք գերեցան մերովք արամբք։ Կային անդ և յիշխանութենէ Յունաց, յԱսորաց կողմանէ ոչ սակաւք։ Հին ազգն Կորդրիացն անհաւատք, բայց ի վերայ քրիստոնէից ծագէր լոյս մեծ, հաստատէին ի հաւատս և ուսանէին դպրութիւն և լեզու և հաստատէին, ի կարգ քահանայութեան յաշխարհի անդ երէց ոմն ի նոցանէ Աբէլ անուն*)։

Այս հայերն կամ հայաստանցիք թէ ե՛րբ գերուեր էին, նախկին հեղինակաց մէջ որոշ տեղեկութիւն մը չկայ։

*) Վրկանայ երկիրն, որ հին պարսկերէն կը կոչեն Վէրֆանէ եւ յունարէն Հերքանիա, Շարդէն կրսէ՝ համարուած է իբր սահմանապուրիւն եւ կամփոփէր արդի Պարսկաստանի չորս երկիրներն։ Կերեւի որ Պարթեւաստանը Վրկանայ մէջ պարունակուած էր մինչ այն թւական, երբ պարթեւներն Պարսկաստանի իշխողներն եղան։

Վրկանայ երկիրը պարսիկներէ մի որոշ ազգութեամբ ժողովուրդ ունէր։ Շատ հին ժամանակներէ ի վեր իւր առանձին, բայց կէս անկախ թագաւորներ, իշխաններն ունէր։ Իր դիրքին շնորհիւ, որ Պարսկաստանի միւս նահանգներէն զատուած է անմատչելի լեռներու շղթայով, գրեթէ շարունակ ապստամբութեան մէջ էր եւ երբեմ բոլորովին նուաճուած ու հնազանդ չէր եղած։

Այս երկիրն Հայաստանի հետ Սմբատին յանձնելն աւելի այն նպատակով եղած պէտք է լինի, որ Հայաստան Փայտակարանի կողմէ Վրկանին մօտ լինելով՝ Սմբատ կրնար թէ Հայաստանը կառավարել, որ ընդհանրապէս խաղաղ էր, երբ իւր կրօնին չէին դպչեր, թէ Վրկանը հնազանդութեան մէջ պահել իւր հայազուն զօրքով եւ թէ միանգամայն հիւսիսականաց արշաւանքները զսպել։

Սա միայն գիտենք, որ Շապուհ Բ. Հայաստանէն շատ գերիներ տարաւ։ Անհաւանական չէ, որ ասոնց մէկ մասն այն ատենուան Խորասանի հիւսիսային սահմաններին վրայ, կամ ինչպէս Սեբէոս կըսէ, Թուրքաստանի մեծ անապատին ստորոտով, որ այժմ Քարա-Քում անունը կը կրէ, ղրկուած լինեն։ Սասանեան թագաւորները միշտ անհանդիստ եղեր են իրենց հիւսիսային դրացիներէ, որք յանկարծ Պարսկաստանի վրայ յարձակելով՝ շատ աւերներ կը գործէին, ուստի հաւանական է, որ Հայաստանէ հանուած գերիներն այդ սահմաններին վրայ բնակեցուած լինէին, թէ երկիրը բազմամարդ ընելու և թէ հիւսիսականաց ասպատակութեանց դէմ պահապան լինելու։

Հաւանականութեան սահմանէն դուրս եկած չենք լիներ, եթէ յայտնենք այն կարծիքը, թէ Պարթևաց տիրապետութեան ժամանակ թէ Հայաստանէն և թէ Ասորեստանէն մերթ ընդ մերթ փոքրիկ խմբեր ղրկուած լինեն այդ կողմերն, որ Պարթևաց բնիկ վայրերն էին, լեցնելու այն պակասն, որ միշտ տեղի կունենար պարթևների շարունակ Պարսկաստան և այլուր պատերազմի ղրկելովը։

Գուցէ 11-րդ դարէն սկսեալ մինչ 16-րդ դարի սկիզբը Հայաստանէն շատ անգամ հանուած գերիներէն մաս մը ևս ղրկուեցան այս կողմերը։ Վերջին ժամանակների հեղինակ մը կողքայ «Գերի գնամք Խորասան», թէև չի յիշեր ո՛ր դարի մէջ, բայց տարակոյս չկայ, որ հայոց Նոր-Ջուղա գաղթելէն ետքը տեղի ունեցած պիտի լինի այս գերութիւնը։

Ըստ Աբրահամ կաթողիկոսի, որ ոչ միայն Նադեր Շահին ժամանակակից էր, այլ յաճախ անոր բանակին հետեւելով կը միջնորդէր և հայերն անոր հարստահարութիւններէն կազատէր, Կարնոյ շրջականերէն, Զաւախէթու ու Զալդրան գաւառների հայերը գերուելով, նաև Արարատեան երկրէն 300 տուն հանուելով, Նադեր Շահի հրամանով տարուեցան Խորասան։ Հաւանականաբար Նադեր Շահ Հայաստանէ տարած գերիներն Աֆղանստան ղրկեց, այնտեղ մահմեդականացնելու կամ աֆ-

ղանների մէջ տարացեղ ու տարակրօն տարր մը քաղաքական դիտաւորութեամբ հաստատելու համար։

Իրարմէ խիստ հեռու ժամանակներով այս գերեվարուածներն ի՞նչ եղան. արդեօք տեղացի տարրի հետ խառնուելով ձուլուեցան ամենքը, թէ անոնցէ մէկ մասն որևէ կերպով ու միջոցով իրենց հայրենիքը դարձան, ամենևին տեղեկութիւն չկայ։

Այս հայ, հայաստանցի կամ ընդարձակ առմամբ քրիստոնեայ գերիներն ու գաղթականներն այսօր բոլորովին անհետացեր են Խորասանի նահանգէն։ Սակայն, անոնք թողեր են այնպիսի հետքեր, որք կը հաստատեն թէ երբեմն շատ քրիստոնեայ հաստատութիւններ ու մեծաթիւ ժողովուրդներ եղեր են։

Գնդապետ Սթիւարտ իւր 1880-ին Խորասան ըրած ճամբորդութեան ընթացքին հանդիպեր է քանի մը տեղեր, որք Քիլիսէ (եկեղեցի) անունը կը կրեն։ Սթիւարթ կըսէ Մահմուդաբադէն (Դէրադազ դաւառ) 12 անգլ. մղոն հեռու Ջուլֆան գիւղին մօտ թումբ մը ցոյց տուին ինձ, որ Թափէքիլիսէ կը կոչէր. Ջուլֆանի բնակիչները կըսէին ըստ աւանդութեան այն քրիստոնեայ գիւղ մը եղեր է, բայց Ճինկիզխանէն կործանուեր է 10-րդ դարին մէջ։ Իրենք (Ջուլֆանի բնակիչներն) որք քիւրդ էին, արևմուտքէն բերուեր էին կործանուած գիւղը մարդաբնակ ընելու համար։

«Դէյլի Նիւզ»ի թղթակիցը կը յիշէ իւր ճամբորդութեան մէջ, թէ 3 գիւղի պատահած է Խօջաֆիլիսէ, Ամմանաբ ֆիլիսէ, Ղաղախան ֆիլիսէ անունով։ Ասոնք Քահվա և Մէյնի գիւղերին մէջ կիյնան, որք Խորասանի հիւսիսային սահմանին վրայ են։

Ըստ նոյն Սթիւարթի՝ Սասանեան տէրութեան օրով Մերվ և Թուս (վերջինս Մեշէդի մօտ է) նեստորական եկեղեցւոյն պատկանեալ երկու արքեպիսկոպոսութիւնների պատկանեալ առաջնորդութիւններ էին։ Մինչ արաբների Մերվն առնելը (661 թ. Ք. ծ. յ.), այդ քաղաքին մէջ քրիստոնեայ ար-

քեպիսկոպոսութեան աթոռը հաստատուն էր։ Իսկ ըստ Հենրի Ռոլինսընի, մինչ 14-րդ դարը քրիստոնեայ շատ հաստատութիւններ կային Խորասանի մէջ։ Նեստորական տարեգրութիւնները լի են այդ երկրին մէջ եղած մենաստանների և առաջնորդական վիճակների ծանօթութիւններով ու տեղեկութիւններով։ Բայց ինչպէս վերն ըսուեցաւ, այս ամէն քրիստոնեայ գաղթականները, տարագիրներն ու գերիներն, ամէնքն ալ այսօր անհետացեր են, միայն իրենց զանազան բնակութեանց ու հաստատութեանց աստ-անդ թողուած հետքերը կը նշմարուին։ Իսկ քիւրդ գաղթականներէն ու գերիներէն դեռ որոշ թուով գիւղեր կը գտնուին Խորասանի նահանգին մէջ։

ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷ ԴՈՒՐՍ ՀԱՅԵՐԸ

Պարսկաստանէ դուրս եղող հայերի վերաբերեալ մեր ունեցած տեղեկութիւններն խիստ պակասաւոր են, անոնց բնակած երկիրներու հեռաւորութեան և յարաբերութեանց սակաւութեան պատճառաւ։

Անոնք Պարսկաստանի միջոցաւ այն տեղերը գնացած և Պարսկաստանի հայերէն լինելով, սոյն գրուածս թերի պիտի ըլլար, եթէ անոնց վրայ ալ քիչ-շատ տեղեկութիւնք չհաղորդուէր։

Կարելի է ըսել, ինչպէս Հին-Ջուղայի բնակչաց վրայ խօսած ատենը տեսնուեցաւ, անոնց յարաբերութիւնները Հնդկաստանի հետ ամենայն հաւանականութեամբ Սպահան գաղթելէ առաջ պիտի եղած ըլլայ։ Միայն, այս յարաբերութիւններն աւելի շատացան անոնց Նոր-Ջուղա հաստատուելէ ետքը։

Սակայն հնդկաբնակ հայերու թիւը մեծացաւ Շահ Աբբաս Ա.ի մահէն ետքը, և մանաւանդ Շահ Հիւսէյնի թագաւորութեան ատենն, երբ Ջուղայեցիք զգացին ու տեսան, որ այս վերջին թագաւորի թուլութեան ու կրօնամոլութեան պատճառաւ գործ դրուած հալածումներն և պաշտօնակալաց ընչաքաղցութիւնը յայտնի տրամադրութեանց կը վերածուէին։

Հայերն աւելի Հնդկաստանի արևելակողմերն երթալով, կը բնակէին արևմտեան սահմանների վրայ, ուր տակաւին մահմեդականներն էին տիրող տարրը։

Սկիզբները հայերը իրենց յարմարութեամբ և ուրիշ ձերքերով, մեծ յաջողութիւնք ունեցան ոչ միայն վաճառականութեան, այլ և հնդկական գանազան տէրութեանց ծառայութեանց մէջ, այնպէս որ, թէ մեծ հարստութիւններ կրցան դիզել և թէ բարձր պաշտօններու հասնել։ Եւրոպացւոց Հընդկաստան մտնել-հաստատելովը հայոց յառաջդիմութիւնը թէև չդադրեցաւ, բայց իւր արագընթացութիւնը կորսնցուց։

Հայերը թէև մեծամեծ ծառայութիւններ մատուցին բոլոր նորեկ եւրոպացիներուն և ի մասնաւորի անգլիացւոց, սակայն, քիչ ատենէ, սկսան անոնցմէ ճնշիլ և անարդարութիւններ կրել։ Նաև, շատ անգամ, եւրոպացւոց իրարու հետ ունեցած պատերազմին պատճառաւ մերթ մէկերէն, մերթ միւսներէն անխղճաբար, դուցէ քաղաքակրթեալ-ուխտեալ բարբարոս կերպով կողոպտուեցան։

Այսպէս, Հնդկաստանի հայերը հետզհետէ կորսնցուցին թէ իրենց բարձր դիրքը, թէ վաճառականութեան միջոցները և թէ հարստութիւնքը և այժմ իսկ աւելի անկման և նեղման կը հակին, քան թէ յառաջդիմութեան ու աճման։

Սոյն հակիրճ տեսութիւնը կը վերջացնեմ, դնելով աստ բարեխիղճ անգլիացւոյ մը նկատողութիւնները։

«Շատ ազգերու մէջ, որք մասնակցեցան վաճառականութեան ի Հնդկաստան,—կըսէ Ու. Բրլթս,—հայերը քիչ երևելի չէին։ Արդ երկրին պատմութեան ամենանախկին շրջանէն, անոնք են գլխաւոր վաճառականութիւն ընողները՝ Հընդկաստանի, Պարսկաստանի, Զուղայի և Արաբիոյ մէջ։ Վերջին ճամբայով, ի մասնաւորի արևելեան վաճառականք կը փոխադրբուէին Եգիպտոս, Թուրքիա և Միջերկրական ծովի եզրները... Անոնք (հայ վաճառականք) ըլլալով ամենաազդեցիկ վաճառականք Ասիոյ մէջ, գլխաւորապէս նպաստեցին այն

երկրների վաճառականութեանն ու բազմամարդութեանը, աճմանը, ուր անոնք առանձին կը բնակէին»։

Զկնի պատմելէ, որպէս տեսնուեցաւ Ջուղայեցւոց վաճառականութեան մասին, ու ինչպէս Արևելեան Հնդկաստանի Ընկերութիւնը պայմանագրութիւն մը կնքելով Խոջա Փանոսի հետ, հրապուրեց հայերը իրենց վաճառականութեան ճամբան յօդուտ անգլիացւոց փոխել և թէ ինչպէս հայոց միջոցաւ ձեռք բերուած ֆէրմանները հիմ դրին Ընկերութեան հաստատումին յաջողութեանն ու մեծութեանը, կաւեցնէ.

«Նախընթաց իրողութիւնք առատապէս կը բաւին տալ անաչառ ընթեցողին բաւական գաղափար Ընկերութեան պաշտօնեաների ընթացքին վրայ դէպի հայերն ընդհանրապէս։ Բայց եթէ սոյն տողերիս գրողը կրնայ համարձակիլ կարծիք մը յայտնելու այս նիւթին վրայ, անոնց (հայոց) հետ ունեցած շատ հաղորդակցութենէ և ծանօթութենէ ետքը, որչափ որ ոևէ անգլիական ընկերութեան պաշտօնական ունեցեր է, պիտի յանդգնի վճռել, որ Հնդկաստան եղող հայերը մի ողջախոհ, խոհական, աշխատասէր, հաւատարիմ ու խաղաղասէր վաճառականաց դաս են, որոնցմէ Ընկերութիւնը կրնար շարունակել քաղել ամենամեծ առաւելութիւններ, եթէ հայոց յաջողակ վաճառականներն իբր ամենալաւ գործնական վաճառականներ, անդ (Հնդկաստանին մէջ) միջամտած չըլլային Ընկերութեան գլխաւոր պաշտօնակալաց անձնաշահական դիտաւորութեանց, որով և անոնց նախանձն ու քէնը գրգռած»։

Կրթութիւնը 18-րդ դարին մէջ բաղդատմամբ աւելի տարածւեր ու աւելի յառաջացեր էր հնդկահայոց մէջ, քան թէ ուրիշ ոևէ տեղի հայերուն մէջ։ Այս հեռաբնակ հայերն անտարբեր չեղան ո՛չ իրենց ծննդավայր Պարսկաստանի և ոչ ալ իրենց բուն հայրենիք Հայաստանին նկատմամբ։

Հնդկաստան հաստատուելէ և յաջողութիւն գտած օրերէ սկսած, ամէն կերպով օգնած են թէ քաղաքացիներուն և թէ Սպահանի նահանգին մէջ և ուրիշ տեղեր գտնուած ազգային-

ներուն։ Նամանաւանդ, երբ ասոնք Սէֆէվեան տէրութեան անկումէն ետքը հարստահարութեանց ու տառապանաց ենթակայ եղան։

Այնուհետև ևս շարունակեցան իւրեանց առատ նուէրներով ու նպաստներով թէ դպրոցներ հաստատել ու պահպանել և թէ շատ կարօտեալ ու չքաւոր ազգայիններու ապրուստ հայթայթել։

Եղան այնպիսիներ ևս, որք լրջօրէն խորհեցան և Ջանացին Հայաստանի մէջ տեղ մը, երկիր մը իւրեանց դրամով գնելով՝ ազատ կէտ մը, անկիւն մը ստեղծել։

Մագրասաբնակ Շամիր կամ Շահմիր անունով հարուստ մը 18-րդ դարու վերջերը բանակցութեանց մէջ մտաւ վրաց Հերակլ Բ. թագաւորին հետ, անորմէ Լոռի գաւառակն գնելու։ Կերևի, որ Հերակլ հաճութեամբ ընդունեց Շահմիրի առաջարկութիւնը և յատուկ հրովարտակով մը զայն վրաց իշխաններու կարգը բարձրացուց։ Ստորև կը ներկայացնենք Հերակլ արքայի նամակն, որն առած ենք տպագրուած պատճէնէն*). —

Պայծառ Իշխան Շահմիր աղա,
մեր հաւատարիմ բարեկամ,

Յոյժ ծանրագոյն է ինձ պատմել զպատահմունս զայն, զորս ընկալաք ի յանքննելի դատաստանէն Աստուծոյ. ի յանակնկալ ժամու պարսիկ իշխող Աղա Մահմատխանն եկն և բազմաց ցանկալի քաղաքս այս Տրիլ(ի)սի, որ էր պարծանք մերոյն արքայութեան, նովիմբ եղև աւերեալ, դերեցեալ և այրեցեալ, անկանելով ի փառաց իւրոյ և եղեալ հովանի մրգապահաց որք այսոքիկ համբաւք թէպէտ ծանրագոյնք են վասն մեր պատմել, սակայն կարծեմ, թէ վասն ձեր ևս ծանրագոյն իցէ ի լսել, վասն զի այսպէս գիտեմք զձէնջ, զի և սակս ձեր ցանկալի է սա որ և ցանկայիք փառացն սորին, Քրիստոնէական հաւատոյ սորին և եկեղեցեաց պայծառութեան սորին և առ բնակիչս սորին, ի յԱրքայէ սորին մինչև ցհարկութեամբ բարեկամանալ և որովհետև այսպէս է, ուրեմն պարտ է ինձ ասել զայս ըստ մարգարէին, թէ ոչ յաւիտեան բարկանայ մեզ Տէր և ոչ յաւիտեանս..... ոխս։

Արդ, ձեռն այն, որ վիրաւորեաց զմեզ, նոյն և ողորմեցաւ և սփռեաց ի վերայ մեր և ժողովրդեան երկրին այսորիկ, զի շարժեաց զլոյս սիրտ Նորին Կայսերական Մեծութեան և Թագուհւոյն ռուստաց և մեծս ողորմութեամբ և մարդասիրութեամբ բացեալ զծոց իւրոյ պահպանութեամբ և ընկալաւ զմեզ իբրև մայր զթառատ, և առաքելեաց առ մեզ ի յաղթող և յարի զինուորական դասուց իւրոց, զզօրս և զօրապետս համայն յարմարութեամբ արտելիրականօք և ոչ եթէ առ մեզ և ի կողմանս մեր, այլ և ծովու և .....բացեալ զդանձս պատրաստեաց զմեծամեծ զօրս և զդերազանց ենելալ ֆերթմաշալ զօրապետներս, որք պարտին զՊարսից երկիրն ի ներքոյ ոտից կոխան առնել և զչար ներքինին այն, կարծեցեալ իշխողն Պարսից ըմբռնել խնամօք..... ն.....ըն զայն դառնաք չորս կողմեաց նա մեզ և երկրիս... և մեր ևս ի մեծի պատրաստութեան եմք. զ ..... խորհ... նոյնոյ չէզոքին և մեզ դրկիցք մերձաւորք հատուսցուք զհատուցումն եօթնպատիկ զոր նոքա մեզ հատուցին և ողորմութեամբն Աստուծոյ այս ոչ է տեսելոց յերկար միջոցս, այլ յուսամք փոքր ամանակաւ յայտնի լինիցի ամենեցուն։

Թողցուք մեք զայս, որով մեր հաւատարիմ գրագիր և թարգման Տէր Դաւիթ Տէր Յոհանեան երկրոյս.....է և ներկայ ժամս, զայս հարկաւոր համարիմ գրել քեզ և ասել զի

*) Ըստ հնդիկական գրած ծանօթութեան, այս հրովարտակի հայերէն թարգմանութիւնը կատարուած է վրացերէն բնագրից, պալատական թարգմանիչ Տէր Դաւիթ Տէր Յոհաննեանի ձեռքով։ Հրովարտակը գրուած է 474 թ. Մարտի 22-ին, ըստ վրաց տոմարի։ Ծ. Խ.

Տէր Դաւիթն արդ արար գմեզ զդիտաւորութիւն ձեր որ յաղագս Լօռոյ գաւառին, զոր շնորհեալ եմք պայծառութեան ձերում ի բոլոր սրտէ, որպէս և զգրեածս իմ ունիք ի ձեռս ձեր շնորհեալ եմ, մինչ զի զայս ևս ասեմ, եթէ դու և կամ զմի ի յորդւոց քոց և յորդւոց որդիսն քո դան առ մեզ, ես բաղում այլ ևս ձեզավայել ողորմութիւնս և զսէրս ցուցանիմ և շատ ամի շահեցող լինիմք և ողորմած...1)

Հերսելի որդի Գէօրգի(*) գրած մի նամակէն2) կարելի է հետևցնել, որ Լոռին իսկապէս Շահմիրին թողուեցաւ և անոր սեփականութիւնը դարձաւ, բայց չի գիտցուիր հայրենեաց ազատութեան այս բաղձացողն ինչո՞ւ անձամբ չգնաց իրեն սեփականացուած երկիրն տիրելու, այլ միայն ուղեց փոխանորդով զայն կառավարել։ Այս դարիս 2-րդ քառորդի սկիզբներից, երբ ռուսերն տէր դարձան Երևանի ու Նախիջևանի խանութիւններին, Բաթաւիացի հարուստ հայ մը ևս առաջարկեց Ռուսիոյ կառավարութեան սոյն երկիրներէ հայկական իշխանութիւն մը կազմել կայսեր հովանաւորութեան տակ, որի համար նա կը համաձայնէր Ջաւա կղզու մէջ ունեցած իւր

*) Այս նամակը գրուած է 1796 թ. Մայիս 10-ին, Թիֆլիսում եւ կրում է վրաց արքայորդու ստորագրութիւնը։ Այստեղ տպագրեցինք նամակի սկզբի մասը, որ վերաբերում է Լոռի գաւառը Շահմիր աղային յանձնելու պատրաստակամութեան մասին։ Բառերի փոխարէն դրուած կէտերը տպագրել ենք նոյնութեամբ։ Ըստ երևոյթին հեղինակն արտագրել է նոյնութեամբ, իր տրամադրութեան տակ եղած աղբիւրից։ Հեղինակը սոյն էջի ներքևում, իբրեւ ծանօթութիւն, գրել է, թէ կնիքը չի կարդացւում, իսկ ստորագրուած անւան մէջ կարդացւում են միայն ԲԻԼԱ տառերը։ Ծ. Խ.

2) Արքայորդի Գէորգիի 1796 Մայիս 10-ի նամակի թիւն է 1798 (Գ.)։

Իսկական նամակը, որ այժմ գրչիս ոով կը գտնուի, գրուած է վերջի տարիներս։ Վերը յիշուած Շահմիրի մի սերունդէն, որ այժմ Մադրասի մօտերն գիւղի մը մէջ կը բնակի, ոչ բարեկեցիկ վիճակով։ Սոյն նամակի հետ ձեռք բերուած է Լոռի գաւառակի քարտէզը կամ typographie-ն, որմէ վերջին առնողն չուզեց որեւէ պայմանով բաժնուիլ։ Այս քարտէզը, որ ոեւէ թւական չէր կրեր, այնչափ ճարտարութեամբ ու արուեստով գծուած է, որ կարելի չէ 18-րդ դարի գործ համարել եւ ինձ կարծել կը տայ, որ ընդօրինակուած լինի նախնական քարտէզէ մը, որ գուցէ Հերակլէ կամ Գէորգիէ ղրկուած էր Շահմիրին, երկրի տարածութիւնն ու դիրքը բացատրելու համար։

*) Հետագային եւս «Մադրասիական ձեմարան»ը մեծ դեր է կատարել Նոր-Ջուղայի երջանի ուսանողութեան համար եւ տուել է զգալի թւով մտաւորականներ ու հոգեւորականներ։ Ծ. Խ.

ամբողջ կալուածները, որոնց տարեկան եկամուտն 500,000 ֆրանկէ աւելի էր ռուս կառավարութեան բուբլով։ Աւելորդ է յիշել, որ այսպիսի առաջարկութիւններ քիչ անգամ ընդունելութիւն կը գտնեն երկրասէր տէրութիւններէ։

Սոյն դարին սկզբները հայոց թիւը Հնդկաստանի ու Ջաւայի մէջ կը համարուէր 7000, բայց այնուհետև շատ ու շատ նուազեցան։ Հնդկաստանի ու Ջաւա կղզու հայ բնակիչներու թիւերն, ըստ Բէկնազարեան Թադէոս եպիսկոպոսի 1856 թւի շնչագրութեան, հետևեալներն են.

Կալկաթա՝ 113 տուն, 345 արական, 297 իգական։ Բացի ասոնցմէ կան ևս 77 օտարական հայեր։ Ունին Նազարէթ անունով եկեղեցի մը, քաւականին մեծագումար հաստատուն եկամուտով, «Մարդասիրական»*) անունով դպրոց մը, որ առաջներն աւելի արդիւնաւէտ եղած կը թւի։ Կայ տպարան մը, ուր երբեմն գրքեր կը տպուին։ Կալկաթայի հայերն ունեցան ևս իրենց լրագիրն՝ «Ազգասէր» անունով, որը քաւական ժամանակ գոյութիւն ունեցաւ։ Կալկաթայի մէջ կան փոքր թւով նորեկներ, որք հայերէն կը սորվին և Հայոց եկեղեցին կը յաճախեն։

Ջանագար՝ 1 տուն, 4 արական և 2 իգական։

Ջիզրա՝ 6 տուն, 6 արական, 6 իգական, ունի եկեղե-

*) Սոյն նամակի հետ ձեռք բերուած է Լոռի գաւառակի քարտէզը կամ typographie-ն, որմէ վերջին առնողն չուզեց որեւէ պայմանով բաժնուիլ։ Այս քարտէզը, որ ոեւէ թւական չէր կրեր, այնչափ ճարտարութեամբ ու արուեստով գծուած է, որ կարելի չէ 18-րդ դարի գործ համարել եւ ինձ կարծել կը տայ, որ ընդօրինակուած լինի նախնական քարտէզէ մը, որ գուցէ Հերակլէ կամ Գէորգիէ ղրկուած էր Շահմիրին, երկրի տարածութիւնն ու դիրքը բացատրելու համար։

ցի՝ Ս. Յովհաննէս անունով։

Սէյդաբադ՝ 5 տուն, 14 արական և 9 իգական։

Դաքա՝ 24 տուն, 55 արական և 39 իգական, ունի եկեղեցի՝ Ս. Յարութիւն անունով։

Մադրաս՝ 20 տուն, 51 արական և 45 իգական, ունի եկեղեցի և դպրոց։ Հայերէն առաջին լրագրի հրատարակութեան պատիւը կը պատկանի Մադրասի հայոց, որք «Ազդարար» անունով ամսաթերթ մը սկսած են հրատարակել 1794 թուականին, Տէր Յարութիւն քահանայ Շմաւոնեան Շիրազցւոյ խմբագրութեամբ։ Ետքը հրատարակուեցաւ վաղանցուկ կեանքով «Բանասէր»ը (10-օրեայ, վիմատիպ, քաղաքական, դրասիրական և առևտրական, 1848—1849, խմբագրութեամբ Ս. Պ. Յովհաննէսի։

Բոմպայի՝ 17 տուն, 29 արական և 25 իգական, ունի մէկ եկեղեցի՝ Ս. Պետրոս տնունով։

Սուրաթ՝ 5 տուն, 19 արական և 17 իգական։

Սինգափուր՝ 8 տուն, 29 արական և 26 իգական։ Աստ 1849-էն «Ուսումնասէր» անունով 4 էջնոց թերթ մը հրատարակուեցաւ, «լրագիր քաղաքական, դրագիտական և առևտրական», խմբագրութեամբն Գրիգոր Գալստեանի, բայց չորս տարուան տպագրութենէն ետք դադրած է։ Ատկէ զատ «Սինգափոր» անունով թերթ մըն ալ հրատարակուած է 1847-ին, զոր կարճատև կեանք է ունեցեր։

Պինանկ՝ 4 տուն, 16 արական, 13 իգական։

Բաթաւիա (Ջաւա)՝ 7 տուն, 19 արական և 20 իգական, ունի եկեղեցի, Ս. Յովհաննէս անունով։

Զրիբոն, Թկալ եւ Բահամաս՝ 4 տուն, 6 արական և 10 իգական։

Ջպարա՝ 2 տուն, 13 արական, 6 իգական։

Սուրբայիա՝ 5 տուն, 11 արական, 12 իգական։

Սիմարանգ՝ 4 տուն, 10 արական, 8 իգական։

Ընդհանուր գումար՝ 225 տուն, 699 արական, 515 իգական։

Իսկ ըստ հետագայ տեղեկութեանց, Հնդկաստանի, Ջաւայի և Բիրմանիոյ հայ բնակիչների թուերն հետևեալներն են.

Կալկաթա	120 տուն	
Ջիզրա	2 »	
Սիրամփոր	1 »	
Սէյդաբադ	3 »	
Դաքա	2 »	
Մադրաս	15 »	
Բոնտիշէրի	1 »	
Մախուլիպատամ	2 »	
Բոմպայի	6 »	
Սուրաթ	3 »	
Պէկս և Հաւա	5 »	
Սինգափուր	8 »	
Պինանկ	3 »	
Բաթաւիա	8 »	
Սիմարանգ	5 »	
Ուրիշ գիւղեր	9 »	ունին Ս. Յովհաննէս Մկրտիչ անունով եկեղեցի մը, քահանայով։
Ռանգուն (Բիրմանիա)	15 »	Ս. Լուսաւորիչ անունով եկեղեցի մը ունի, շինուած 1862-ին։
Մանտալէ	13 »	

Ընդհանուր գումար՝ 221 տուն։

Ըստ Պ. Լազարևիչի ճանապարհորդական նկարագրութեան, Ակրայի մէջ կը բնակէր Պետրոսեան Յակոբ հայազգի մը, որ սովորաբար Քըրնըլ (գնդապետ) Յակոբ կը կոչէր և Աքբարաբադի իշխանին սպարապետն էր։ Այս զօրապետը

ցի՝ Ս. Յովհաննէս անունով։

Սէյդաբադ՝ 5 տուն, 14 արական և 9 իգական։

Դաքա՝ 24 տուն, 55 արական և 39 իգական, ունի եկեղեցի՝ Ս. Յարութիւն անունով։

Մադրաս՝ 20 տուն, 51 արական և 45 իգական, ունի եկեղեցի և դպրոց։ Հայերէն առաջին լրագրի հրատարակութեան պատիւը կը պատկանի Մադրասի հայոց, որք «Ազդարար» անունով ամսաթերթ մը սկսած են հրատարակել 1794 թուականին, Տէր Յարութիւն քահանայ Շմաւոնեան Շիրազցւոյ խմբագրութեամբ։ Ետքը հրատարակուեցաւ վաղանցուկ կեանքով «Բանասէր»ը (10-օրեայ, վիմատիպ, քաղաքական, դրասիրական և առևտրական, 1848—1849, խմբագրութեամբ Ս. Պ. Յովհաննէսի։

Բոմպայի՝ 17 տուն, 29 արական և 25 իգական, ունի մէկ եկեղեցի՝ Ս. Պետրոս տնունով։

Սուրաթ՝ 5 տուն, 19 արական և 17 իգական։

Սինգափուր՝ 8 տուն, 29 արական և 26 իգական։ Աստ 1849-էն «Ուսումնասէր» անունով 4 էջնոց թերթ մը հրատարակուեցաւ, «լրագիր քաղաքական, դրագիտական և առևտրական», խմբագրութեամբն Գրիգոր Գալստեանի, բայց չորս տարուան տպագրութենէն ետք դադրած է։ Ատկէ դատ «Սինգափոր» անունով թերթ մըն ալ հրատարակուած է 1847-ին, զոր կարճատև կեանք է ունեցեր։

Պինանկ՝ 4 տուն, 16 արական, 13 իգական։

Բաթաւիա (Ջաւա)՝ 7 տուն, 19 արական և 20 իգական, ունի եկեղեցի, Ս. Յովհաննէս անունով։

Զրիբոն, Թկալ եւ Բահամաս՝ 4 տուն, 6 արական և 10 իգական։

Ջպարա՝ 2 տուն, 13 արական, 6 իգական։

Սուրբայիա՝ 5 տուն, 11 արական, 12 իգական։

Սիմարանգ՝ 4 տուն, 10 արական, 8 իգական։

Ընդհանուր գումար՝ 225 տուն, 699 արական, 515 իգական։

Իսկ ըստ հետագայ տեղեկութեանց, Հնդկաստանի, Ջաւայի և Բիրմանիոյ հայ բնակիչների թիւերն հետեւեալներն են.

Կալկաթա	120	տուն
Ջիդրա	2	»
Սիրամփոր	1	»
Սէյդաբադ	3	»
Դաքա	2	»
Մադրաս	15	»
Բոնտիշէրի	1	»
Մախուլիպատամ	2	»
Բոմպայի	6	»
Սուրաթ	3	»
Պէկս և Հաւա	5	»
Սինգափուր	8	»
Պինանկ	3	»
Բաթաւիա	8	»
Սիմարանգ	5	»
Ուրիշ գիւղեր	9	» ունին Ս. Յովհաննէս Մկրտիչ անունով եկեղեցի մը, քահանայով։
Ռանգուն (Բիրմանիա)	15	» Ս. Լուսաւորիչ անունով եկեղեցի մը ունի, շինուած 1862-ին։
Մանտալէ	13	»

Ընդհանուր գումար՝ 221 տուն։

Ըստ Պ. Լազարեւիչի ճանապարհորդական նկարագրութեան, Ակրայի մէջ կը բնակէր Պետրոսեան Յակոբ հայազգի մը, որ սովորաբար Քըրնըլ (գնդապետ) Յակոբ կը կոչուէր և Աքբարաբադի իշխանին սպարապետն էր։ Այս զօրապետը

հայերէ կազմուած խումբ մը գինուոր ունէր, մերձ 100 հոգի, որք իշխանի ծառայութեան մէջ էին*)։

ՔԱԲՈՒԼ
(Աֆղանստան)

Ոչէ տեղեկութիւն չենք գտներ թէ ե՞րբ կամ ինչպէ՞ս դաղթեցին այստեղ այն սակաւաթիւ հայերը, որոնցմէ մէկ քանին մինչ վերջին տարիներս կապրէին այնտեղ։

Շահ Աբբաս Ա.-ի ժամանակներէն ի վեր, Աֆղանըստանի արևմտեան երկրներն իրենց գլխաւոր երկու քաղաքներով՝ Հերաթ ու Ղանդահար, Սէֆէվեան տէրութեան իշխանութեան տակ էին։

Այդ երկու քաղաքներէն մանաւանդ առաջինին մէջ բազմաթիւ պարսիկներ կային, որք ընդհանրապէս կառավարչական խմբին և վաճառականական ու արհեստաւոր դասին կը պատկանէին։

Այն ատեններն ևս Հնդկաստանի ու Պարսկաստանի մէջ եղող ճամբաներէն գլխաւորն ու բանուկն այն երկու քաղաքների վրայով էր։

Սպահանի ու Պարսկաստանի դանդաղն կողմերէ կարաւաններ մեկնելով, իրարու կը հանդիպէին Հերաթ, ուրկէ միացեալ կարաւան մը կազմելով, որ երբեմն 2000-է աւելի բեռէ ու ճամբորդէ կը բաղկանար, կը շարունակէին իրենց ճամբորդութիւնը Ղանդահարի վրայով մինչ Հնդկաստան։

Հաւանականութեամբ կարելի է ըսել, որ այս ճամբորդութեան ժամանակները հայերէ ոմանք վաճառականութեան ոգիէն մղուած, Քաբուլ, որ ճամբայէ շատ հեռու չէր, գնացեր և յաջողութիւն գտնելով՝ հոն հաստատուեր են։

Սակայն նոյնպէս գիտենք հայ ժամանակակից գրչէ մը, որ Մահմուդ Սպահանն առնելէ ետքը երեք անգամ դանձ

*) Աղբիւրների պակասութեան պատճառով հնարաւորութիւն չունեցանք 347—349 էջերում եղած բոլոր տեղանունների ստոյգ գրութեան ձևը ճշտել։ Ծ. Խ.

դրկեց Ղանդահար և իւրաքանչիւր անգամ երբ գացին գանձատարները, Մահմուդ բացի աֆղաններէ, անոնց ընկերացուց վաթսուն հայ երիտասարդներ, վերջիններս թէ գանձը պահպանելու և թէ Աֆղանստան հասնելէ ետքը մահմեդականութիւն ընդունել տալու նպատակով։

Գուցէ անոնցմէ ոմանք ևս Քաբուլ տարուեր, պահուեր են։

Ինչ կերպ ալ եղած ըլլայ, 19-րդ դարու առաջին կիսին դեռ սոյն քաղաքին մէջ 30 տան չափ հայեր կային։ Այս կիմանանք Մեսրոպ Թաղիադեանցի Հնդկաստանի պատմութենէն, ուր կըսէ.

«Հատուած ինչ ազգիս, 30 տանց, ի վաղեմի ժամանակաց հետէ բնակեալ ի Քապօլ, զամենայն հոգևորական պիտոյս իւր ընդունէր յառաջնորդէ Նոր-Ջուղայ մինչ ցկարապետ եպիսկոպոս։ Ապա օտարոտի և տգէտ եպիսկոպոսաց փոխանորդիլ յաթոռ տեղւոյ է որ անգիտութեամբ և է որ անհոգութեամբ զանց արարին առաքել առ նոցա մատակարարս աստուածային շնորհաց։ Նախախնամ ժողովրդեանն զամս յոլովս անկնունք պահելով՝ զմանկունս և անհաղորդ թողելով զմեռեալս իւրեանց, տակաւին ամբողջ պահէին զհաւատս զհարց իւրեանց յամի Տն. 1838։ Յորում արշաւել զօրաց Անգղիացւոց ի Քապօլ, յամբառնալ զՇահ Սուջա յաթոռ իւր, պատահեալ քահանայի բանակին և հրաւիրեալ յեկեղեցին, մատուցեալ էին զառաջեաւ չափահաս մանկունս աւելի քան քսան թւով, մկրտել զնոսա...»։

Վերջին տարիներս առնուած տեղեկութեանց համեմատ, այդ քաղաքին մէջ միայն 4—5 տուն հայեր կային և կերևի որ բարւոք վիճակ մը չունէին և օգնութեան կը կարօտէին այդ տեղէ Պարսկաստան կամ Հնդկաստան դաղթելու համար։

ՔԱՇԿԱՐ

Այս նոյն անունը կրող գաւառի գլխաւոր քաղաքն է։

Քաշկար գաւառն ևս, որ այժմ կէս անկախ է, երբեմն կը պարունակէր Չինաց Թուրքեստան կամ Թիան Շան նահանգին մէջ։ Անգլիական հանդէսի մը*) մէջ տպուած «Կեդրոնական Ասիա» վերնագրով յօդուածի մը մէջ թէև Քաշկար քաղաքի զանազան ազգէ եղող բնակչաց թուահամարը տրուած ատենը կը յիշուին ևս հայեր 325 թուով, սակայն այս յիշատակութիւնը կասկածելի կը թուի և ստուգելու պէտք ունի։

---

*) The Quarterly Review No. 240, October 1866, London, John Murray (Դիր Քուարթրլի Ռիվիու, թիւ 240, Հոկտեմբերի համարը, Լոնդոն հրատարակուած հանդէս, յօդուածագիրը՝ Ջան Մուրէյ)։

ՅԱՒԵԼԻԱԾ

ՑԱՆԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

«Իզմիրեանց» մրցանակաբաշխութեան քննիչը փափաք յայտներ էր երկիս մէջ կազմուած տեսնել ևս Պարսկաստանի թեմական առաջնորդաց ցանկը։ Պատուելի քննիչի ցանկութիւնը յարգելով, աստ կաւելցնեմ անոր ցանկացածն, ըստ կարելւոյն։

Ատրպատականի մէջ հնուց զանազան թեմական առաջնորդներ եղեր են, սակայն այժմ անձնական տկարութեանս և ժամանակի սղութեան պատճառով հնարաւոր չլինելով ասոնցմէ իւրաքանչիւրի յաջորդներն գրի առնել, պիտի բաւականանամ Սպահանի և Հնդկաստանի ամէն առաջնորդների և միայն վերջին երեք քառորդ դարին մէջ Թաւրիզ նստող վիճակաւոր առաջնորդներու և առաջնորդական փոխանորդներու ցանկը կազմել, աւելցնելով անոնցմէ ոմանց վրայ խիստ հակիրճ տեղեկութիւններ։

Ա.— ՑԱՆԿ ԹԱՒՐԻԶԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

Թաւրիզի թեմական առաջնորդութիւնն կը սկսի ռուսաց կողմէ այս քաղաքն առնուելէ ետքը։ Անկէ առաջ Թաւրիզ առաջնորդ չէր նստեր։ Այս կերևի 1781-էն մինչև 1827 թը-

ական կաթողիկոսներու ղրկած կոնդակներէն, որք ուղղած են կամ Թաւրիզի աւագ քահանային և կամ ժողովուրդին։

Ս. Աստուածամայր*) եկեղեցւոյ պատին մէջ եղած յիշատակարանին մէջ, ինչպէս տեսնուեցաւ, թէև կը յիշի Զաքարիա անունով վարդապետ մը, իբր առաջնորդ, բայց հաւանականաբար, այս վարդապետն Ս. Թադէոս Առաքելոց վանքին առաջնորդն էր, որի վիճակն եղեր է Թաւրիզ մինչ 1828 թուականն և որի առաջնորդներն երբեմն Թաւրիզ այցելելով, ժամանակ մը այս քաղաքը կը բնակէին։

Իսրայէլ եպիսկոպոս.— Ս. Բարդուղիմէոս վանքին վանահայրն էր. 1828-ից փոխարքայ Աբբաս Միրզայի հրաւէրով եկաւ Թաւրիզ և ինքնագլուխ սկսաւ թեմական առաջնորդի պաշտօն վարել մինչ սոյն գահաժառանգ կուսակալի այս քաղաքէն մեկնիլը։ Իսրայէլ եպիսկոպոս թէև քանիցս հրաւիրուեցաւ Էջմիածին, բայց չգնաց։ Աբբաս Միրզան Թաւրիզէն հեռանալէ առաջ կաթողիկոսին դիմելով, զայն վերստին հաստատել տուաւ Ս. Բարդուղիմէոս վանքի վանահայրութեան կամ յաւէտ առաջնորդութեան մէջ, որի վիճակն էր նաև Սալմաստ գաւառն։ Իսրայէլ եպիսկոպոս մինչ իւր մահը վարեց այս թեմակալութեան կամ առաջնորդութեան պաշտօնը և թաղուեցաւ Սալմաստի Հաֆթվան գիւղը։

Բարսեղ արքեպիսկոպոս.— Եփրեմ կաթողիկոսէ Թաւրիզ ղրկուեցաւ՝ 1828 թ. վերջերն, բայց սա կերևի ի ներկայութեան Իսրայէլ եպիսկոպոսի, ոչ մէկ իշխանութիւն չկրնալով բանեցնել, քիչ ատենէ Էջմիածին վերադարձաւ։ Սոյն Բարսեղ արքեպիսկոպոսն Յովհաննէս կաթողիկոս Կարբեցիի օծման հանդիսադիր արքեպիսկոպոսն էր 1831 թուականի Նոյեմբեր 6-ին և դեռ իւր վերայ կը կրէր «Թեմական Առաջնորդ Ատրպատականի» անունը։

Նիկողայոս վրդ.—Եփրեմ կաթողիկոս*) Հին Նախիջևանի Նիկողայոս վարդապետն եպիսկոպոս ձեռնադրելով, Ս. Թադէոս և Ս. Բարդուղիմէոս Առաքելոց վանքերի վանահայր կարգեց, միացնելով երկուքի առաջնորդութեան և վանահայրութեան պաշտօնները (որք մինչ այն ատենն առանձին վիճակ կը կազմէին), Թաւրիզ ղրկեց 1834 թ. Մայիսի մէջ, իբր Ատրպատականի թեմական առաջնորդ։ Սա երկար ժամանակ վարեց սոյն պաշտօնը և վախճանելով Թաւրիզին մօտակայ Մուժումբար գիւղը, թաղուեցաւ Աներևոյթ մատուռին առջև։ Տապանաքարն արձանագրութիւն չունի։

Խաչատուր եպիսկոպոս Վաղարշապատցի, 1838—1842.— Անխոհեմ ըլլալով, չի կրնար բարւոք կառավարել իւր հօտն, ուստի Ս. Սինոդին կողմանէ կանչելով՝ կը վերադառնայ Էջմիածին։

Յովհաննէս եպիսկոպոս Սուրէնեան, Ղրիմեցի, 1842—1848.— 1843-ին հիմնեց հոգևոր դպրոց մը, զոր մուտքի պակասութեան պատճառաւ յաջողութիւն չունեցաւ։

Սաքունեան եպիսկոպոս.— 1851-ին Ատրպատականի թեմին վիճակաւոր առաջնորդ կարգուելով, հինգ տարուայ չափ լաւ կառավարեց իւր հօտն և Թաւրիզեցւոց մեծ ծառայութիւն մատոյց։ Սալմաստ այցելութեան ելնելով, անդ առ Աստուած փոխուեցաւ 1856 թ-ին և Փայաջուկ գիւղը թաղուեցաւ։

Յակոբ վարդապետ Շահբազեան.— Իբր փոխ-առաջնորդ թեմին Հայոց Ատրպատականի՝ Թաւրիզ եկաւ և տարի մը ետքը վախճանելով, թաղուեցաւ Ս. Աստուածածին մատուռ-

---

*) Հեղինակի խօսքը վերաբերում է Ղալա թաղի կամ Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցուն։ Ս. Խ.

*) Ըստ Աղէքսանդր Երիցեանի, Յովհաննէս Կարբեցի կաթողիկոս օծուեցաւ Յովհաննէս Բ. անուամբ եւ գահակալեց 1832—1836 թ.

ին*) մօտ։

Գրիգոր վարդապետ.— Իբր փոխ-առաջնորդ, յաջորդեց Շահբազեանին, բայց քիչ մը ետքը դարձաւ Էջմիածին։

Աբել արքեպիսկոպոս.— 1859 թուի վերջերն Ատրպատականի Հայոց վիճակաւոր առաջնորդ կարգուելով, Թաւրիզ հասաւ, բայց քիչ ժամանակէ ետքը ետ կանչուելով՝ վերադարձաւ Էջմիածին։ Աբել արքեպիսկոպոս գրաբարին հմուտ, գործունեայ և աշխատասէր անձ մըն էր, իսկ խիստ տաք բնաւորութեան տէր լինելով, շուտով վէճի կը բռնուէր։

Գեորգ եպիսկոպոս Վեհապետեան.— 1861-ի սկիզբէն, իբրև Ատրպատականի վիճակաւոր առաջնորդ, Թաւրիզ եկաւ։ Փառահեղ դէմքով, քաղաքավար ձևերով, ծանրաբարոյ, բայց կեր ու խում սիրող և լաւ ապրող մէկն էր։ Գիտէր ըստ պատշաճի վարուիլ օտարներու հետ և իր արժանապատուութիւնը յարգել տալ։ 1865-ին Թեհրան գնաց և կառավարութեան կողմանէ շատ պատուով ընդունուեցաւ և յաջողեցաւ Վեհափառ Շահէն Թաւրիզի Ներսիսեան դպրանոցին համար տարեկան երկու հարիւր թուման թոշակ ստանալ և հրովարտակներ ու արտօնագրեր ձեռք բերել։ 1866-ին վերադարձաւ Էջմիածին, Սինոդին անդամ նշանակուած ըլլալով, բայց պահելով միևնոյն ժամանակ Ատրպատականի Հայոց վիճակաւոր առաջնորդի պաշտօնը։

Յակովբեան եպիսկոպոս.— Վեհապետեան Սրբազանին յաջորդեց Յակովբեան եպիսկոպոս, 1868 թ. Սեպտեմբեր 10-ին։ Շատ փայլուն յատկութիւններ չունէր։ Էջմիածին մեկնեցաւ 1874 Մայիս 16-ին։

Անդրէաս եպիսկոպոս.— Անոր յաջորդեց Անդրէաս եպիսկոպոս, որը պաշտօնի կոչուելով 1874-ի Մայիս 29-ին, Թաւ-

*) Մարալան թաղում գտնուող Ս. Աստուածածին մատուռն է։ Գոյութիւն ունի նաեւ ներկայիս, բարեզարդ վիճակում։ Մատուռի մօտ թաղուած են թաւրիզահայ ականաւոր դէմքեր։ Ծ. Խ.

րիզ հասաւ Յունիսի մէջ և մինչև 1878 թ. Յունիս 9-ը վարեց իր պաշտօնը, որմէ ետքը դարձաւ Էջմիածին, 1879 թ. Հոկտեմբեր 1-ին։

Բարդուղիմէոս վարդապետ.— 1878-ի Յունիս 8-ին, Բարդուղիմէոս վարդապետ կարգուեց առաջնորդական տեղապահ։ Տարի մը ետքը ան վերադարձաւ իր տեղը, 1879 թ. Յունիս 26-ին։

Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեան.— Բարդուղիմէոս վարդապետին յաջորդեց Գրիգոր եպիսկոպոս Մուշեղեան, որ Թաւրիզ ժամանեց 1879 Հոկտեմբերի սկիզբին։ Բարի և ազնուաբարոյ մէկն էր և խոհեմութեամբ վարեց իւր պաշտօնը։ Գաւառներն այցելութեան երթալով, 1882 Դեկտեմբեր 10-ին վախճանեցաւ Սալմաստ և թաղուեցաւ Փայաջուկ գիւղը։

Թադէոս եպիսկոպոս.— Մուշեղեանին յաջորդեց Թադէոս եպիսկոպոս, որը ժամանակ մը թեմական առաջնորդի պաշտօն վարելէ ետքը հեռացաւ։

Մնարոպ ծայրագոյն վարդապետ Ճերմակեան.— 1884-ին կարգուեցաւ վիճակաւոր առաջնորդ և մէկ տարի ետքը վերադարձաւ Էջմիածին։ Նա գիտէր, բացի հայերէնէ, իտալերէն և բաւականին ֆրանսերէն։ Շատ լաւ կը խօսէր օսմանեան Թրքերէնը և գրաւիչ քարոզիչ էր։ Խորագէտ էր և գործելու փորձառութիւն ունէր, միայն կուզէր աւելի բռնութեամբ վարել ժողովուրդն, քան թէ զայն սիրաշահելով և հայրաբար կառավարելով։

Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեան.— 1886-ին, ամառնամիջին, Թաւրիզ հասաւ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեան, իբրև Ատրպատականի հայոց վիճակաւոր առաջնորդ։ 1892 թ. Օգոստոս 2-ին քոլերայէ մեռաւ և Ղալա Թաղի Ս. Աստուածամայր եկեղեցւոյ աւագ դրան աջ կողմը, զանդակատան մէջ թաղուեցաւ։

Խաչատուր ծ. վարդպ. Կարապետեան.— Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչի վանուց միաբան Խաչատուր ծայրագոյն վար-

դապետ Կարապետեանը 1892 թուի Սեպտեմբերի սկիզբներին, իբրև առաջնորդական փոխանորդ, Թաւրիզ հասաւ Էջմիածնէն։ Վաթսուն կամ աւելի տարիքով անճարակ մարդ մըն էր, աղքատ մտքով, ժլատ ու արծաթասէր բնաւորութեամբ։ Հակառակ երկար ժամանակ Նոր-Զուղա և Հնդկաստան պաշտօն վարած ըլլալուն, շատ քիչ աշխարհային փորձառութիւն ստացեր էր։ Մեռաւ 1893 Ապրիլ 14-ին։ Շատ փառաւոր կերպով կատարուեցաւ իւր յուղարկաւորութիւնը. հիւպատոսներ, կառավարութեան զանազան պաշտօնեաներ և ամբողջ հայ հասարակութիւնն ընկերացաւ դագաղին մինչ Լիլաւա թաղի Ս. Սարգիս եկեղեցին, որի բակին մէջ թաղուեցաւ։

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան.— 1893-ի աշնան վերջերին կարգուեցաւ Ատրպատականի վիճակաւոր առաջնորդ և մինչ Էջմիածնէ Թաւրիզ կը դար, համբան քոլերայէ բռնուելով, ռուսաց Զուլֆա, Արաքսի եզրին հասած ժամանակ վախճանեցաւ և անդ բլուրի մը վրայ թաղուեցաւ։

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանց.— Աշխատութեանս հեղինակը՝ Նազար Գորոյեանց և Յովակիմ Ֆէնէրճեան Ատրպատականի կողմէ, Տ. Տ. Մկրտիչ Խրիմեանի կաթողիկոս օծուելու առթիւ իբր պատգամաւոր Էջմիածին ղրկուելով, Վեհափառէն խնդրեցին, համաձայն Ատրպատականի ժողովրդի ցանկութեան, Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանցին Ատրպատականի վիճակաւոր առաջնորդ նշանակել։ Վեհափառն հաւանութիւն տուաւ։ Սուքիաս Սրբազանը յայտնելով հանդերձ, որ ինքն միշտ իւր պետին հնազանդ եղեր է, որ եթէ մինչև անգամ գիւղ մը ղրկուելու լինի, յօժարութեամբ կերթայ, սակայն, քանի որ Երեմիա արքեպիսկոպոսի տեղապահութեան ժամանակ գինքը անիրաւութեամբ աքսոր ղրկել տուեր էին, ուստի կը ցանկայ նախ այն աքսորման խնդիրն քննուի և ապա ուրիշ տեղ նշանակուի։ Վեհափառն երբ Սուքիաս արքեպիսկոպոսի պահանջը իմացաւ, պատասխանեց. «Այդ քննութիւնը շատ երկար կը տևէ և այս պատճառաւ նախ Աղուանեանն նշանակեց

առաջնորդ, որ համբուն մեռաւ։

Ասոր մահէն ետքը, Ատրպատականէ նորէն խնդիրք երթալով, Կաթողիկոսն այս անգամ Սուքիաս արքեպիսկոպոսը նշանակեց, որը Թաւրիզ հասաւ 1894 Յունուար 2-ին և մեծ պատուով ընդունուեցաւ բոլորին կողմէ։ Բարձրահասակ, փառահեղ դէմքով անձ մըն էր, հմուտ և նախանձախնդիր եկեղեցական օրինաց։ Ծանրաբարոյ և խելացի, զօրաւոր կամքով և անվեհեր հոգւով։ Ազգային գործոց համար խանդով կաշխատէր։ Իւր առաջին քարոզին մէջ յայտարարեց, որ ամենայն յօժարութիւն և կամք ունէր իւր հօտին համար աշխատելու։

Բաւականին նիւթական կարողութեան տէր լինելով, կուզէր հաստատուելիք Կեդրոնական դպրոցի ծախուց առատաբար մասնակցիլ և իւր յիշատակ թողուլ Թաւրիզին մէջ։ Մտադիր եղաւ աւելի հոյակապ շէնքով առաջնորդարան ունենալ, բայց չյաջողեց։ Թաւրիզեցիք անոր առաջնորդութենէն շատ նիւթական և բարոյական օգուտներ կրնային քաղել, եթէ վարուելու կերպն իմանային։ Սակայն, մէկ-երկու ինքնակոչ ազգայիններ և ժողովուրդէն քանի մը անհատներ և գլխաւորապէս մէկը, որի խորհուրդներին Պարզեանց Սրբազան չէր հետեր, սկսան զինքը բամբասել և «Շաւիղ»ին մէջ անարգական յօդուածներ հրատարակել, գրպարտութիւններ ընել, Սուքիաս արքեպիսկոպոսն անիրաւաբար ամբաստանել այնինչ գործին յաջող ելք չունենալուն համար։ Այնչափ ըրին, որ մարդը ձանձրացաւ, և հակառակ իւր խոստման, ցանկութեան և որոշման, արձակուրդ ուզելով՝ մեկնեցաւ 1895 թ. Մայիս 15-ին և ալ չվերադարձաւ։

Յովսէփ վարդապետ Սարաճեան.— Պարզեանց արքեպիսկոպոսի մեկնած ժամանակ կը գտնուէր Թաւրիզ. յաջորդեց նրան իբր առաջնորդական տեղապահ։ Խելացի անձ մըն էր և բաղդատմամբ իւր երիտասարդ հասակին, որ դեռ 40 չէր մտած, գործերի բաւական փորձառութիւն ունէր։ Սակայն երբեմն, կէսօրէ ետքը, դատողութիւնը խանգարուած վիճակի մէջ

դապետ Կարապետեանը 1892 թուի Սեպտեմբերի սկիզբներին, իբրև առաջնորդական փոխանորդ, Թաւրիզ հասաւ էջմիածնէն։ Վաթսուն կամ աւելի տարիքով անճարակ մարդ մըն էր, աղքատ մտքով, ժլատ ու արծաթասէր բնաւորութեամբ։ Հակառակ երկար ժամանակ Նոր-Զուղա և Հնդկաստան պաշտօն վարած ըլլալուն, շատ քիչ աշխարհային փորձառութիւն ստացեր էր։ Մեռաւ 1893 Ապրիլ 14-ին։ Շատ փառաւոր կերպով կատարուեցաւ իւր յուղարկաւորութիւնը. հիւպատոսներ, կառավարութեան զանազան պաշտօնեաներ և ամբողջ հայ հասարակութիւնն ընկերացաւ դագաղին մինչ Լիլաւա թաղի Ս. Սարգիս եկեղեցին, որի բակին մէջ թաղուեցաւ։

Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան.— 1893-ի աշնան վերջերին կարգուեցաւ Ատրպատականի վիճակաւոր առաջնորդ և մինչ էջմիածնէ Թաւրիզ կը դար, ճամբան քոլերայէ բռնուելով, ռուսաց Զուլֆա, Արաքսի եզրին հասած ժամանակ վախճանեցաւ և անդ բլուրի մը վրայ թաղուեցաւ։

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանց.— Աշխատութեանս հեղինակը՝ Նազար Գորոյեանց և Յովակիմ Ֆէնէրճեան Ատրպատականի կողմէ, Տ. Տ. Մկրտիչ Խրիմեանի կաթողիկոս օծուելու առթիւ իբր պատգամաւոր էջմիածին ղրկուելով, Վեհափառէն խնդրեցին, համաձայն Ատրպատականի ժողովրդի ցանկութեան, Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանցին Ատրպատականի վիճակաւոր առաջնորդ նշանակել։ Վեհափառն հաւանութիւն տուաւ։ Սուքիաս Սրբազանը յայտնելով հանդերձ, որ ինքն միշտ իւր պետին հնազանդ եղեր է, որ եթէ մինչև անգամ գիւղ մը ղրկուելու լինի, յօժարութեամբ կերթայ, սակայն, քանի որ Երեմիա արքեպիսկոպոսի տեղապահութեան ժամանակ գինքը անիրաւութեամբ աքսոր ղրկել տուեր էին, ուստի կը ցանկայ նախ այն աքսորման խնդիրն քննուի և ապա ուրիշ տեղ նշանակուի։ Վեհափառն երբ Սուքիաս արքեպիսկոպոսի պահանջը իմացաւ, պատասխանեց. «Այդ քննութիւնը շատ երկար կը տևէ և այս պատճառաւ նախ Աղուանեանն նշանակեց

առաջնորդ, որ ճամբուն մեռաւ։

Ասոր մահէն ետքը, Ատրպատականէ նորէն խնդիրք երթալով, Կաթողիկոսն այս անգամ Սուքիաս արքեպիսկոպոսը նշանակեց, որը Թաւրիզ հասաւ 1894 Յունուար 2-ին և մեծ պատուով ընդունուեցաւ բոլորին կողմէ։ Բարձրահասակ, փառահեղ դէմքով անձ մըն էր, հմուտ և նախանձախնդիր եկեղեցական օրինաց։ Ծանրաբարոյ և խելացի, զօրաւոր կամքով և անվեհեր հոգւով։ Ազգային գործոց համար խանդով կաշխատէր։ Իւր առաջին քարոզին մէջ յայտարարեց, որ ամենայն յօժարութիւն և կամք ունէր իւր հօտին համար աշխատելու։

Բաւականին նիւթական կարողութեան տէր լինելով, կուզէր հաստատուելիք Կեդրոնական դպրոցի ծախուց առատաբար մասնակցիլ և իւր յիշատակ թողուլ Թաւրիզին մէջ։ Մտադիր եղաւ աւելի հոյակապ շէնքով առաջնորդարան ունենալ, բայց չյաջողեց։ Թաւրիզեցիք անոր առաջնորդութենէն շատ նիւթական և բարոյական օգուտներ կրնային քաղել, եթէ վարուելու կերպն իմանային։ Սակայն, մէկ-երկու ինքնակոչ ազգայիններ և ժողովուրդէն քանի մը անհատներ և գլխաւորապէս մէկը, որի խորհուրդներին Պարզեանց Սրբազան չէր հետեր, սկսան զինքը բամբասել և «Շաւիղ»ին մէջ անարդական յօդուածներ հրատարակել, գրպարտութիւններ ընել, Սուքիաս արքեպիսկոպոսն անիրաւաբար ամբաստանել այնինչ գործին յաջող ելք չունենալուն համար։ Այնչափ ըրին, որ մարդը ձանձրացաւ, և հակառակ իւր խոստման, ցանկութեան և որոշման, արձակուրդ ուզելով՝ մեկնեցաւ 1895 թ. Մայիս 15-ին և ալ չվերադարձաւ։

Յովսէփ վարդապետ Սարաճեան.— Պարզեանց արքեպիսկոպոսի մեկնած ժամանակ կը գտնուէր Թաւրիզ. յաջորդեց նրան իբր առաջնորդական տեղապահ։ Խելացի անձ մըն էր և բաղդատմամբ իւր երիտասարդ հասակին, որ դեռ 40 չէր մտած, գործերի բաւական փորձառութիւն ունէր։ Սակայն երբեմն, կէսօրէ ետքը, դատողութիւնը խանգարուած վիճակի մէջ

լինելու պատճառաւ, սխալներ կը գործէր։ 1898-ի գարնան վերջերն ստիպուեցաւ հրաժարական տալ և մեկնիլ Էջմիածին։

Սահակ եպիսկոպոս Այվազեան.— Նոյն տարին, ամառուան վերջերն, հասաւ Թաւրիզ, իբր վիճակաւոր առաջնորդ Ատրպատականի։ Իր խօսակցութեան մէջ շատ անզգոյշ մէկն էր, երբեմն խիստ անխոհեմ խօսքեր կը հանէր բերնէն, առանց խորհելու, թէ ըսածն ինչ կարևորութիւն կրնար ունենալ։ Մարդիկ սիրաշահելու կերպն չգիտէր, իւր հակառակորդներն ու թշնամիներն իւր բարեկամներէն չէր կրնար զատիլ, ոչ բարեկամներն կրնար պահել և ոչ ալ հակառակորդներն շահել կամ լռեցնել։ 1900-ի վերջերն իւր հրաժարականն ընդունելով Վեհափառէն, 1901 Օգոստոսին Թաւրիզէն մեկնեցաւ։

Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեան.— 1901 թուականի Հոկտեմբեր 13-ին, Թաւրիզ ժամանեց Եղիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեանը, իբր վիճակաւոր առաջնորդ Թեմին Հայոց Ատրպատականի։

Բ.— ՑԱՆԿ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ

ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ*)

Մեսրոպ վարդապետ.— 1605-ին կարգուեցաւ առաջնորդ Սպահանի և այդ պաշտօնը վարեց մինչև 1613 թուականը։

Խաչատուր վարդապետ Կեսարացի.— Էջմիածնէն Նոր Ջուղա դրկուելով, ժողովրդի խնդրանօք, 1620-ին առաջնորդութեան պաշտօն ստանձնեց։ Եռանդուն և ազդասէր մէկն էր, առաջինն եղաւ, որ տպարան մը հաստատեց Նոր-Ջուղայի մէջ։ 1646-ին վախճանելով, վանքին մէջ թաղուեցաւ։

Դաւիթ եպիսկոպոս Նոր-Ջուղայեցի.— Փիլիպպոս կաթողիկոսէն 1652-ին Սպահանի և Հնդկաստանի առաջնորդ կարգուելով, այս պաշտօնը վարեց մինչ 1683 թ., երբ կնքելով իր մահկանացուն, թաղուեցաւ Խաչատուր վարդապետի մօտ։ Յիշատակարան մը խիստ գոհունակութեամբ կը խօսի Դաւիթ եպիսկոպոսի վարքին ու բարքին վրայ և ժողովուրդի գոհունակութիւնը կը յայտնէ անոր ընթացքին նկատմամբ։ Հիմէ քանդելով Ս. Ամենափրկիչ վանքն ու եկեղեցին, նորոգ հոյակապ և ընդարձակ կերպով շինեց ժողովրդի աջակցութեամբ և հանդանակութեամբ։ Շատ աշակերտներ ունեցաւ, որոնց մէջ քսանևինն հոգի երևելի եղան իրենց ուսմամբն։

Ստեփաննոս եպիսկոպոս Նոր-Ջուղայեցի.— Դաւթին յաջորդեց իր ձեռնասուն աշակերտներէն՝ Նոր-Ջուղայեցի Ստեփաննոս եպիսկոպոս, 1684-ին, որը յաջողեցաւ շատ դրամ

---

*) Սպահանի եւ Հնդկաստանի առաջնորդաց այս ցանկը գլխաւորապես քաղուած է Յարութիւն Թ. Տէր Յովհաննեսեանցի Նոր-Ջուղայի պատմութենէն։

ծախսելէ և շատ յոգնութիւն կրելէ ետքը հրովարտակ մը ձեռք բերել, որ Շահ Սուլէյմանէ եկեղեցիների վրայ դրուած հարկերն չառնին։ Բայց հրովարտակն չգործադրուեցաւ մինչև Մովսէս թեմական առաջնորդի ժամանակն Ստեփաննոս եպիսկոպոս «Պապականաց դէմ հակաճառութիւն» անունով գիրքը հրատարակեց, որ ժամանակին շատ աղմուկ հանեց։ 1697-ին Էջմիածնի մի քանի եպիսկոպոսներէ կաթողիկոսութեան հրաւիրուելով, մեկնեց Էջմիածին, բայց Յաքէթ կաթողիկոսի չարախօսութեամբ, Երևանի իշխանէն բռնուելով, բանտ դրուեցաւ, և 1698-ի սկիզբներին վախճանեցաւ։

Աղէքսանդր եպիսկոպոս Կոստանեան Ջուղայեցի.— Ժողովրդի խնդրանօք, 1699 թուականին առաջնորդ դարձաւ և իր հօտն լաւ կառավարեց։ 1706 թուականին ազգէն կաթողիկոս ընտրուելով՝ գնաց Էջմիածին։

Մովսէս եպիսկոպոս Նոր-Ջուղայեցի.— 1706 թուականին առաջնորդ կարգուեցաւ։ Սա բաւականին յաջողակ ու խելացի կերպով կառավարեց իրեն յանձնուած հօտն։ Վանքին մէջ յատուկ առաջնորդարան մը շինեց։ 1715-ին, Ս. Էջմիածնի միաբաններէ հրաւիրուեցաւ կաթողիկոսական գահը գրաւելու, բայց յանձն չառաւ։ 1725-ին իր մահկանացուն կնքելով, վանքին եկեղեցւոյ հիւսիսային դրան սեմին մէջ թաղուեցաւ։

Դաւիթ Բ. եպիսկոպոս.— Ժողովրդի թախանձանաց դիմանելով, 1725-ին առաջնորդութեան աթոռը կելլէ։ Բարեկարգութեան և հոգևորականաց բարի վարուց նախանձախնդիր ըլլալով, զանոնք ուղղութեան կը կոչէ։ 1728-ին կը վախճանի և իր նախորդին կից կը թաղուի։

Աստուածատուր եպիսկոպոս Ֆախրաբադցի.— Կրօնասէր, հեզաբարոյ և խաղաղասէր մէկը։ Ջուղայեցւոց խնդրանօք թեմական առաջնորդի աթոռը կը նստի 1729-ին և 1745-ին վախճանելով, վանքի հիւսիսային գաւթին մէջ կը թաղուի։

Պօղոս եպիսկոպոս.— 1749-ին թեմական առաջնորդ կը դառնայ և 1752-ին, անձնական դատապարտելի գործի մը

պատճառաւ կը հրաժարեցուի թեմականութենէ։ Սորա առաջնորդութիւնն վանքին շատ վնասակար եղաւ և վանքն շատ ծանր պարտքերու տակ ինկաւ։

Գէորգ եպիսկոպոս.— 1752 թուին թեմական առաջնորդ կը կարգուի։ Սա ժամանակ մը ետքը այն ատենուան բռնակալներու անիրաւութիւններէն ու հարստահարութիւններէն անճարացած, վանքի արժէքաւոր անօթներն կառնէ, քանի մը երևելի միաբաններու հետ կերթայ Բասրա և այնտեղէ կը վարէ իւր առաջնորդութեան պաշտօնն մինչ 1763, երբ Սպահան և երկիրն քիչ մը խաղաղ վիճակ ստացած ըլլալով, կը վերադառնայ Նոր-Ջուղա, և 1768-ին վախճանելով, վանքի եկեղեցւոյ արևմտեան դրանը կը թաղուի։

Մկրտիչ եպիսկոպոս.— Ժողովրդի թախանձանօք 1769-ի սկիզբին թեմականութեան աթոռը կը նստէ։ Պարսկաստանի խռովութեանց պատճառաւ նա ինքն անչափ նեղութիւններ կը կրէ, տուգանքներու և հարուածներու կենթարկուի, եկեղեցիներն ու վանքն բռնակալէ կողոպտումին ժամանակ։ Հուսկ յետոյ Շիրազ կերթայ և ժամանակ մը անդ կը մնայ։ Քարիմ խանի ամբողջ Պարսկաստանը տիրապետելէ ետքը, անորմէ պատուի կարժանանայ, Նոր-Ջուղա կը վերադառնայ և 1781-ին մահկանացուն կնքելով, վանքին եկեղեցւոյ արևմտեան դրանը կը թաղուի։

Յակոբ եպիսկոպոս.— 1788-ին թեմական առաջնորդ կը դառնայ։ Ասոր համար կը պատմուի, որ 1—2 տարի լաւ կը կառավարէ իւր հօտն և սովի ժամանակ մեծատանց աջակցութեամբ կարօտելոց օգնութեան կը հասնէ։ Սակայն, այնուհետև ընթացքն կը փոխէ, կը սկսի շատ բռնութիւններ ի գործ դնել, Ջուղայեցւոց չարիքներ հասցնել, եկեղեցիներու սպասներն ու զարդերը կը կողոպտէ, կիւրացնէ և ծածուկ կերթայ Բասրա, ուր գտնուող Ջուղայեցիք վերստին իրեն իրմէ ետ առնելով՝ Ջուղա կը վերադարձնեն։ Յակոբ եպիսկոպոս Մադրաս երթալով, անդ կը վախճանի 1793-ին և իր ամէն գոյքն

կը կտակէ Ամենափրկչի վանքին։ Ոմանք նկատի առնելով նորա նախկին ընթացքը, այն դաղափարին են, որ նա եկեղեցապատկան գոյքերն աւելի բռնաւորների կողոպուտէն ազատելու համար Բասրա տարեր էր, քան թէ իր անձին սեփականացնելու։

Յարութիւն եպիսկոպոս.— 1801-ին կը կարգուի Դաւիթ կաթողիկոսէն իբր առաջնորդ, իրեն յաջորդ ունենալով Գէորգ եպիսկոպոս։ Ասոնք իրենց հօտը բարւոք կը կառավարեն։ Հնդկաստան և Ռուսիա նուիրակներ ղրկելով, հանդանակութիւն կը նեն, որով վանքն ծանր պարտքէ կազատին, որ այդ ժամանակ չորս հազար թումանի հասեր էր։ Յարութիւն Եպիսկոպոս 1810-ին վախճանելով, թաղուեցաւ վանքի հիւսիսային դաւթին մէջ։

Յովհաննէս եպիսկոպոս.— Սպահանի և Հնդկաստանի հայոց խնդրանօք՝ Տ. Տ. Եփրեմ կաթողիկոսէն 1813 թ.ին վիճակաւոր առաջնորդ կը կարգուի։ Ասոր ժամանակ, Սպահան սաստիկ սով եղաւ, որի պատճառաւ առաջնորդն շատ վիշտ ու նեղութիւն կրեց։ 1817-ին վախճանելով, վանքին գանդակատան մէջ թաղուեցաւ։

Կարապետ եպիսկոպոս Զուղայեցի.— 1818 թ.ականին կաթողիկոսին կոնդակով Նոր-Զուղա հասաւ։ Ատոր ժամանակ, Հաջի Հաշըմ խան անունով մէկը, իր շուրջը շատ մը սրիկաներ հաւաքելով, կը սկսի շատ բռնութիւններ ի գործ դնել, մանաւանդ հայոց վերայ։ Թեմական առաջնորդը կը շտապէ իւր պաշտօնէն հրաժարիլ։ 1831-ին Էջմիածին կերթայ։ 1842-ին նորէն Զուղա վերադառնալով՝ իբր միաբան, կապրի վանքին մէջ և 1853-ին կնքելով իւր մահկանացուն, վանքի՝ տաճարին արևմտեան դրան կողմը կը թաղի։

Յովհաննէս (Բ) եպիսկոպոս.— 1832-ին առաջնորդ կը կարգուի։ Իւր ժամանելէն առաջ նորէն սով սկսած լինելով, ուտելիք կը բերէ և կարօտեալներուն կը բաշխէ, որով ազգին աղքատներն սովամահ ըլլալէ կազատին։ Ֆաթհալի Շահի մահուան ժամանակ, 1834 թ.ականին, իր քաջասրտութեամբ, Նոր-Զուղան դադարկաշրջիկներու և բռնաւորներու ասպատակութենէն կը պահպանէ։ 1836-ին վախճանելով, կը թաղուի հասարակաց հանդստարանին մէջ, համաձայն իւր կտակին։

Խաչատուր եպիսկոպոս Վաղարշապատցի.— 1838 թ.ականին, թեմական առաջնորդութեան կոնդակով, կը ժամանէ Նոր-Զուղա։ Խոհեմութեամբ չկրնալով կառավարել, Ս. Սինոդի հրամանով, 1842-ին, կը վերադառնայ Ս. Էջմիածին։

Յովհաննէս եպիսկոպոս Սուրէնեան.— 1842-ին Նոր Զուղա եկաւ կաթողիկոսին կոնդակով։ Սա հիմնեց հոգևոր դպրոց մը, որը մուտքի պակասին պատճառաւ երկար չշարունակուեցաւ։ 1848-ին վախճանեցաւ և վանքին հիւսիսային դաւթի մէջ թաղուեցաւ։

Թադէոս եպիսկոպոս Բէկնազարեան.— 1851 թ.ին Տ. Տ. Ներսէս կաթողիկոսին կոնդակով ժամանեց Նոր-Զուղա։ Այս ազատական թեմական առաջնորդի ազդօրուտ գործերը շատ են և բազմատեսակ։ Իւր աշխատութեան և դիմումների շնորհիւ Սպահանի թեմի հայերն ազատեցան գինուորատուութենէ, որի պատճառաւ շատ կեղեքմանց ու հարստահարութեանց կենթարկուէին։ Զուղայեցւոց հարկատուութիւնն ու կալուածական տուրքերն չափաւորուեցան, հարստահարողներու և բռնակալներու հեղինակութիւնն ոչնչացաւ։ Թեհրան երթալով, յաջողեցաւ վեհափառ Շահէն ստանալ հրովարտակ մը, որով դաւառի հարկատուութիւնն թեթևացաւ, վաճառականներն և ուրիշ հայերն պարսկաց հաւասար տուրք միայն պարտաւոր եղան վճարել։ Սուքիասեան Մարգարի և Յ. Յարութիւնեանի տիկին՝ Մարիամի օժանդակութեամբ Նոր-Զուղային մէջ երեք դպրոց հաստատեց։ Այսպէս, շատ ժամանակ իմաստութեամբ, խոհականութեամբ և շրջահայեացութեամբ կառավարելով, կնքեց իւր բազմարդիւն կեանքը և թաղուեցաւ Ամենափրկիչ եկեղեցւոյ աւագ դրան մօտ։ Մահուան թ.ականը չյաջողուեց ինձ ըստուգել, բայց հաւանականաբար, 1860-է ետքը տեղի ունեցաւ։

Մովսէս եպիսկոպոս Վաղարշապատցի, որ յաջորդեց Բէկնազարեանին, բայց 1870-ի վերջերն վերադարձաւ Էջմիածին։

Գրիգորիոս եպիսկոպոս.— 1872 թուականին Սպահանի թեմական առաջնորդ կարգուեցաւ և մերձ տասնվեց տարի խոհեմութեամբ կառավարեց իւր հօտն և բաւականին լաւ գործունէութիւն ունեցաւ։ 1888-ին վերադարձաւ Էջմիածին և այնտեղէ ալ գնաց Կ. Պոլիս։

Եսայի եպիսկոպոս.— 1891 թուականին Նոր-Ջուղա ժամանեց Եսայի եպիսկոպոսը և 3 տարի կառավարելէ ետքը վերադարձաւ Ս. Էջմիածին։

Մաղաքիա եպիսկոպոս Տիգրանակերտցի.— 1898-ին հասաւ Նոր-Ջուղա և 2 տարի կառավարելէ ետքը վերադարձաւ Ս. Էջմիածին։

Այժմ, 1901 թուականին, թեմական առաջնորդութեան պաշտօնը փոխանորդաբար կը վարէ Բաղարատ վարդապետ Թաւաքալեան։

ՎԵՐՋ